Ա. Ա. ԽԱՉԱՏՅԱՆ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՍԱՄՈՒԼՆ ԻՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԻՆ

(1900–1922)

Ա. Ա. ԽԱՉԱՏՅԱՆ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՍԱՄՈՒԼՆ ԻՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԻՆ

(1900–1922)

Ի հիշատակ յիշատակարանիս չոխ գնացած հայ սերունդների, որոնք նոքա եւ այս գրքում նկարագրված մարդոց բնաւորութիւնն ու հնդիմանքներ:

132 3266

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա. Ա. ԽԱՌԱՏՅԱՆ

105494

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՄԱՄՈՒԼՆ ԻՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԻՆ

(1900–1922)

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
126

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
126

ԵՐԵՎԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
2015

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՏԴ 070 (091) (479.25)
ԳՄԴ 76.12
Խ 310

Գիրքը հրատարակության է երաշխավորել
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհուրդը

Գիտական խմբագիր՝ պ.գ.թ. Ս. Սարգսյան

Խառատյան Ալբերտ
Խ 310 Արևմտահայ մամուլն իր պատմության ավարտին (1900-1922) / Խառատյան Ա. - Եր.:
Պատմության ինստիտուտ, 2015. – 534 էջ + 16 էջ ներդիր:

Աշխատության մեջ վերարտադրվում են Կ. Պոլսում և Զմյուռնիայում հրատարակված հայկական ոչ կուսակցական մամուլի ազգային ու հասարակական բովանդակության հիմնական կողմերը: Դրանք այն հիմնահարցերն են, որոնք պետք է ծառանային այդ մամուլի ու հասարակական-քաղաքական մտքի առջև դարասկզբից մինչև առաջին աշխարհամարտ և հայերի ցեղասպանություն, վերաբերմունքը տերությունների դիվանագիտության և Հայկական հարցի նկատմամբ, Կ. Պոլսի և Զմյուռնիայի հայ գաղթավայրերի իրականություն, արևելահայ կյանք, ազգային գրականության զարգացման ընթացքի լուսաբանումներ և այլն: Առանձին պարբերականների հետազոտության և ընդհանուր տեսության ձևաչափով քննարկվում են շուրջ չորս տասնյակ հրատարակություններ, ցույց է տրվում դրանց տեղն ու նշանակությունը հայ մամուլի պատմության մեջ: XX դ. առաջին տասնամյակների մամուլն իր պատմության ժամանակաշրջանով հանդերձ, գիտական ուսումնասիրության առարկա է դարձել առաջին անգամ:

Աշխատությունը նախատեսվում է գիտական լայն շրջանների և լրագրության պատմության մեջ մասնագիտացող ուսանողության համար:

ՀՏԴ 070 (091) (479.25)
ԳՄԴ 76.12

ISBN 978-9939-860-08-4

© ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2015
© Ա. Խառատյան, 2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

ԳԼՈՒԽ I

ՄԱՄՈՒԼԸ 1900-1914 ԹԹ.

1. Մամուլը մինչև Առաջին աշխարհամարտը 23

2. Պարբերականներ Կ. Պոլսում և Զմյուռնիայում

«Հյուզանդիոն» (1896-1918) 60

«Հանրագիտակ» (1896-1908) 81

«Սուրհանդակ» (1899-1908) 108

«Մանզումեի էֆքյար» (1866-1913) 133

«Արևելյան մամուլ» հանդեսը (1871-1909) 162

«Մասիս» գրական շաբաթաթերթը (1900-1908) 180

«Ժամանակ» (1908-1914) 242

«Հայրենիք» (1891-1896, 1909-1910) 271

«Դաշինք» (1909-1914) 282

«Հայ գրականություն» (1911-1914) 320

«Մարմնամարզ» (1911-1914) 337

ԳԼՈՒԽ II

ՄԱՄՈՒԼԸ 1918-1922 ԹԹ.

1. Մամուլը զինադադարից հետո 359

2. Պարբերականներ Կ. Պոլսում և Զմյուռնիայում

«Վերջին լուր» (1921-1922) 389

«Արագած» (1919-1920) 430

«Արևելյան մամուլ» թերթը (1919-1922) 445

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ 483

THE DECLINE OF THE WESTERN ARMENIAN PRESS 490
Մատենագիտական ցանկ 495
Անձնանուններ 502
Տեղանուններ 522
Պարբերական մամուլ 529

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

XX դ. առաջին քառորդի արևմտահայ մամուլի պատմությունը ըստ էության, հայոց պատմության անդրադարձն է հայ պարբերական մամուլի էջերում և սերտորեն աղերսվում է նրա ընթացքին: Ըստ այդմ, այդ մամուլի պատմությունը կարելի է բաժանել երեք փուլի. 1. դարասկզբից մինչև Առաջին աշխարհամարտ (1900–1914), 2. մամուլն Առաջին աշխարհամարտի և ցեղասպանության տարիներին (1915–1918), և 3. մամուլը ղինադադարից հետո մինչև Թուրքիայի Հանրապետության հռչակումը (1918–1923): Նշված բոլոր փուլերում մամուլը կրել է որակական փոփոխություններ՝ կապված ազգային կյանքի տեղաշարժերի, Օսմանյան Թուրքիայի տնտեսական ու քաղաքական զարգացումների, Համիդյան բռնապետության և ապա երիտթուրքերի վարած ցեղասպան քաղաքականության հետ: Համիդյան դրաքննության պայմաններում խեղված կամ խեղդված հրապարակախոսությունը չէր կարող ապդեցիկ լինել առանց ազգային-քաղաքական հարցերի քննարկման, ուստի հրապարակախոսությունը մղվում է հետին պլան՝ կորցնելով իր առաջատար նշանակությունը մամուլի էջերում: Փոխարենը, առաջ է մղվում լրատվությունը, որն ընթերցողին առավել հասկանալի էր դառնում, երբ նրան տեղեկություններ էր տրվում Արևմտահայաստանի հայ բնակչության կյանքի, դպրոցի, նրա կենցաղի, բարքերի և այլնի մասին: XX դ. սկզբին այս իմաստով հատկապես աչքի էր ընկնում «Բյուզանդիոնի», «Արևելքի», «Հանրագիտակի», «Սուրհանդակի», «Արևելյան մամուլի», «Մաղիկի» և այլ պարբերականների նշանակությունը: Մամուլի էջերում զարգանում էր նաև գեղարվեստական գրականությունը: Դարասկզբին հանդես եկան Մ. Մեծարենցը, Ռ. Զարդարյանը,

Արտ. Հարությունյանը, Թլկատինցին, Տ. Զոկկույանը, Զիփթե-Սարաֆը, Դ. Վարուժանը, Ռ. Սևակը և ուրիշներ, ովքեր խոր ակոսներ բացի արևցին հայ գեղարվեստական մտածողության մեջ: Լրագրության ասպարեզում փաստական նյութի մատուցման նոր ձևեր մշակեցին այնպիսի տաղանդավոր գործիչներ, որպիսիք էին Բ. Քևէյանը, Հ. Դազանճյանը, Ա. Անտոնյանը, Տ. Արփիարյանը, Մ. Գոչունյանը, Հ. Մամուրյանը, Մ. Շամտանճյանը և ուրիշներ:

1908–1914 թթ., կապված Համիդյան վարչակարգի տապալման հետ, մամուլն ապրեց ակտիվացում՝ նախորդ տարիների տևական ընդարմացումից հետո: Երկրում սահմանադրության թևկուզ և դուտ ձևական վերահաստատումը և երիտթուրքական կառավարողների շռայլ ու շողոմքոր խոստումները ընդհանուր հայրենիքի, Օսմանյան Թուրքիայում բոլոր ազգերի ազատության ու իրավահավասարության մասին, նախապես լավատեսություն էին ներշնչում մտավորականությանը: Մամուլն ապրում էր քիչ առաջ հրաժեշտ տված Համիդյան անցյալից բաժանվելու վայելքը: Լրագրությունն իր ուշադրության կենտրոնն է սկսում դարձնել Արևմտահայաստանի իրական կացությունը, բռնություններով ու հարստահարություններով լեցուն նրա առօրյան, հուսալով, որ երիտթուրքական նորընծա իշխանությունները կարգուկանոն կհաստատեն երկրում: Մամուլն այս թմրությունից դուրս բերեցին Ադանայի ողբերգական դեպքերը (1909): Նախապես լրագրողները դյուրությամբ կուլ տվեցին երիտթուրքական ապատեղեկատվության խայծը՝ հավատալով, թե, իբր, Կիլիկիայում սանձազերծված նախճիրը Համիդյան հին հետադիմական վարչակարգի գործն է: Ջարդի իրական կազմակերպիչների՝ նոր իշխանությունների դիմակը պետք է պատռվեր այն բանից հետո, երբ նրանք ճիշտ Համիդյան ոգով, սպանդի ամբողջ մեղքը սկսեցին բարդել հայերի վրա՝ նրանց մեղադրելով հեղափոխական կոմիտեներ ստեղծելու, անկախ թագավորության երազանքներ փայփայելու և Օսմանյան Թուրքիան անդամահատելու «դավաճանական» ձգտումների մեջ: Դրանից հետո սկսվեցին իշխանությունների պատժիչ գործողությունները հա-

յերի դեմ, ամբողջ թափով պտտվեց երիտթուրքական «արդարադատության» մեքենան՝ ի դեմս զինվորական ատյանների, որոնք անմիջապես հայերին սկսեցին սպառնալ թուրք մարդասպանների հետ միասին՝ ընդհուպ մինչև մահապատժի վճիռների կայացում: Դրան հետևեցին «ժամանակի», «Արևելյան մամուլի», «Բյուզանդիոնի», «Մանզումեի էֆքյար», «Արևելքի» և այլ թերթերի իրական լրատվության վրա հենվող և մերկացնող հրապարակումները: Ականատեսների վկայությունների և անգամ դիվանագիտական զեկույցների տպագրությունը լրագրության էջերում, անվիճելիորեն բացահայտ էին դարձնում, որ ջարդերը կազմակերպված և հրահանգավորված են եղել երիտթուրքական կուսակցական ու պետական կառույցների կողմից, և որ դրանց իր մասնակցությունն է բերել թուրքական կանոնավոր զորքը:

Սկսած 1912 թ., արևմտահայ մամուլում դրսևորվել է հայ հանրության խորին մտահոգությունը Արևմտահայաստանում բարենորոգումների, դրա վերաբերյալ միջազգային քննարկումների ընթացքի համար: Այս բովանդակության նյութերը ևս ցույց են տալիս, որ XX դ. առաջին տասնամյակների արևմտահայ մամուլը կատարում էր ոչ միայն լրատվական ու մշակութային, այլև ազգային-քաղաքական դերակատարություն՝ իր գոյության ծանր ու հակասական մի ժամանակաշրջանում, ցեղասպանությանն անմիջապես նախորդող տարիներին:

Առաջին աշխարհամարտի մեջ Թուրքիայի մտնելը և հայերի ցեղասպանության սանձազերծումը, որ 1909-ից՝ Ադանայի դեպքերից ի վեր որոճում էին երիտթուրքերը, կործանիչ հարված հասցրեց Կ. Պոլսում, Զմյուռնիայում և Արևմտահայաստանի մի քանի կենտրոններում հրատարակվող հայ մամուլին: Ինչպիսին ժողովրդին վիճակված ճակատագիրն էր, նույնը նրա մամուլինն էր լինելու: Ցեղասպանության նախաքայլերը երիտթուրքերը սկսեցին նաև պոլսահայության մեջ: Մայրաքաղաքի հայությանը չլատելու նպատակով նախ զանգվածորեն բանակ զորակոչեցին տղամարդկանց, որոնց ճակատագիրն արդեն նախորոշված էր: Պատերազմ

Հայտարարվելուց ի վեր Կ. Պոլսից հեռացել էին Համաձայնության երկրների դեսպանները, որ դործելու ազատություն ապահովից երիտթուրքերին, իսկ Դարդանելի գործողության ձախողումը այլևս անկասելի դարձրեց հայությանը բնաջնջելու նրանց խնայողոր ծրագիրը: 1915 թ. գարնանը Կ. Պոլսի հայերի խառն ժողովը այցելից մեծ վեզիր Սայիտ Հալիմ փաշային և իր խորին մտահոդությունն ու տագնապը հայտնից կիրառվող բնաջնջման քաղաքականության առթիվ[1]: Փաստորեն արևմտահայությունը հռչակվել էր օրենքից դուրս: Պրոֆ. Հ. Հակոբյանը 1915 թ. հոկտեմբերի 15-ին գրում էր Կ. Պոլսից. «Պոլիս մարդ չկայ, փողոցները հայ չեք տեսնէր. Սղութիւն և չդոյութիւն ահաւոր են: Գաւառացիներու մեծ մասը Պոլսէն վտարուեցաւ»[2]: Խոսքը վերաբերում էր Կ. Պոլսում բնակվող պանդուխտ հայերին, որոնց տարագրությունը սկսվել էր ավելի շուտ՝ 1915 թ. օգոստոսին: Ամենայն հավանականությամբ, դրանից հետո հերթը պետք է հասներ բուն պոլսահայերին, ինչպես նկատում է ամերիկյան միսիոներ Ջեքսը[3]: Այս առթիվ Յո. Լեփսիուսը գրում էր, որ Կ. Պոլսում դեսպանների լուրջ դիմումներից հետո երիտթուրքերը «Հրաժարուեցին ընդհանուր տարագրութեան միջոցները տարածել նաև Պոլիսի եւ Իզմիրի հայ ազդարնակչութիւնների վրայ: Սակայն լռելեայն չարունակեցին Պոլիսի հայերի տարագրութիւնը: Ընդամէնը տարագրուեց 10 հազար հոգի, և ոչ մի տեղեկութիւն չկայ նրանց նոր բնակավայրերի մասին»[4]:

Իր հերթին, 1915 թ. դեկտեմբերի 7-ին Թուրքիայում Գերմանիայի դեսպան Մետերնիխը հաղորդում էր, որ դրանից քիչ առաջ Կ. Պոլսից աքսորվել էին 4 հազար հայեր, և որ աքսորվածների թիվը հասնում է 30 հազարի: Նա հարում է, որ «աստիճանաբար

---

[1] Զաէճ արքեպ., Պատրիարքական յուշեր, վաւերագիրներ և վկայութիւններ, էջ 98-100:
[2] Մալէզեան Վ., Ճամբուս ծայրը, հ. Բ, էջ 92:
[3] Геноцид армян в Османской империи. Сб. документов и материалов, под ред. Нерсисяна М. Г., II доп. изд., с. 398.
[4] Լեփսիուս Յո., Գաղտնի տեղեկագիր, հայ ժողովրդի ջարդերը, էջ 134:

պետք է իրականացվի օսմանյան մայրաքաղաքում մնացած 80 հազարի լրիվ հայաթափումը»[1]:

Պոլսահայերի մոտալուտ աքսորի նախապատրաստումն էր պատճառը, որ Համաճայնության պետությունների կողմից հայերին բնաջնջելու վերարերյալ հայտնի հայտարարությունը հերքելու իր փորձերում թուրքական Հավաս գործակալությունը մեծապես նվազեցնում էր պոլսահայերի թիվը՝ ավելի քան 200 հազարից այն իջեցնելով 77.836 մարդու[2]: 1916 թ. ապրիլին միայն երիտթուրքերը որոշեցին ձեռնթափ լինել Կ. Պոլսի հայությանը աքսորելու և ոչնչացնելու մտադրությունից: Մնում էին, սակայն, հայերի ազգային կառույցները, նրանց Ազգային սահմանադրությունն ու կրոնական ավանդական կենտրոնները, որոնց փլուզման վրա ուղղվեց երիտթուրքական տակավին չհագեցած խորշակը: 1916 թ. հերթը հասավ պատրիարքարանին: Կ. Պոլսի պատրիարքին ուղղված՝ հուլիսի 28-ի գրությամբ կառավարությունը հայտնում էր, որ «Թաքվիմ-ի վեքայի» պաշտոնաթերթի նույն օրվա համարում տպագրված «Հայոց կաթողիկոսության և պատրիարքության «Կանոնադրի» համաձայն, միացվում են Սսի և Աղթամարի կաթողիկոսությունները և դրանց են կցվում Կ. Պոլսի ու Երուսաղեմի պատրիարքությունները: Կ. Պոլսի հայոց պատրիարքությունը և Ազգային սահմանադրությունը վերացվում էին, նոր կրոնական ղլուխը՝ կաթողիկոս-պատրիարքը, ինչպես և հույների պատրիարքության համար էր սահմանված, գործելու էր երկու՝ կրոնական և խառն ժողովների գործակցությամբ, միայն կրոնական, դպրոցական և բարեգործական ոլորտում: Կաթողիկոս-պատրիարքի նստավայրն էր սահմանվում Երուսաղեմի Ս. Հակոբի վանքը: Այս կրոնական մար-

[1] Дадрян В. Н., История армянского геноцида, с. 291. Ռ. Գևորգյանը Կ. Պոլսից և Չանաքկալեից (Գելիբոլու, Դարդանելի շրջան) աքսորված հայերի թիվը հաշվում է 40 հազար մարդ (Gevorkian R., Soykırmın Ikinci Safhası, s. 32).

[2] Ձաւէն արքեպ., նշվ. աշխ., էջ 148:

մինը ամբողջովին անկախ էր լինելու էջմիածնի կաթողիկոսութ-յունից[1]: Զավեն պատրիարքը աքսորվեց Բաղդադ, ապա Մոսուլ:

1915–1918 թթ. արևմտահայ մամուլի գործողության սահմաննե-րի, բովանդակության և իշխանություններին հետ ունեցած փոխ-հարաբերությունների մասին կան ընդամենը կցկտուր տեղեկութ-յուններ, որոնց արժեքը առավել կարևորվում է այն իմաստով, որ հայրենական հավաքածուներում, ասենք, պոլսեր կրում նույնպես, չեն պահպանվել կամ գրեթե չեն պահպանվել այդ տարիների պոլ-սահայ կամ զմյուռնահայ թերթերը: Համենայն դեպս, առկա տվյալ-ները, որոնց համար այսօր պարտական ենք գնդապետ Թեո-դիկի «Ամէնուն տարեցոյցին» և Թ. Ազատյանի «Ժամանակ» թեր-թին նվիրված հայտնի աշխատությանը, թույլ են տալիս որոշ պատկերացում կազմել և անգամ եզրակացություններին հանգել ասվածի վերաբերյալ:

Այս տարիների արևմտահայ մամուլը չէր կարող ազդային զգացումներ արծարծող որևէ բովանդակություն կամ առհասարակ ընթերցողին հետաքրքրող լուրջ բովանդակություն ունենալ: Թեր-թերի ծավալն արդեն վկայում է դրանց չգոյության մասին: Այդ ակնհայտորեն երևում է մի քանի թերթերի հետ գոյատևած «Ժա-մանակի» ծավալային փոփոխություններում: 1914 թ. սեպտեմբերի 2 թվից սկսած՝ այս թերթը լույս է տեսել երկու էջով, որոնք լցվում էին Ե. Օտյանի երգիծական «Տոմսակներով» և անշուշտ, դրաքն-նության պարտադրած քաղաքական լուրերով: 1915 թ. հունվարին «Ժամանակը» վերականգնում է չորս էջի նախկին ծավալը, չքա-նում են Ե. Օտյանի «Տոմսակները», ինչպես և Ե. Օտյանի ու Մ.

---

[1] Տե՛ս Կանոնագիր Հայոց կաթողիկոսութեան եւ պատրիարքութեան, էջ 3, 14: Կանո-նագիրը փաստորեն ամրագրում էր Օսմանյան Թուրքիայում հայերի ցեղասպանութ-յան իրողությունը՝ սահմանելով, որ «Առաջնորդական շրջանակներ ի նորոյ պիտի կազմակերպուին առ նուազն 15.000 հայ պարունակելու պայմանով»: Ցեղասպանութ-յան ծրագիրն ինքնին բացառում էր այդչափ հայերի համախումբ բնակությունն Արևմտյան Հայաստանում կամ անգամ վերապրած բնակորների առկայության դեպ-քում՝ ցեղասպան պետության կողմից նոր առաջնորդություն ստեղծելու հնարավորութ-յունը (տե՛ս Գերմանիան և Հայաստանը 1914-1918, դիվանագիտական փաստա-թղթերի ժողովածու, հ. 1):

Կյուրճյանի «Թաղականին կնիկը» երգիծավեպը: 1916 թ. փետրվարի 21-ից «Ժամանակը» վերստին ամփոփվում է երկու էջի սահմաններում[1], հավանաբար, քառէջ ծավալին վերադառնալով զինադադարից հետո, 1918 թ. աշնանը: Պատերազմի տարիներին մամուլին փոխարինելու էր նկել երիտթուրքերի բացահայտ, ընթերցողի վրին փաթաթվող քարոզչությունը՝ թերթերի հավելվածների ձևով: Այդ չորս տարիների ընթացքում, գրում է Թեոդիկը, «փողոցը ցրուիչ տղոց ձեռքն էին թաց-թաց թերթեր եւ իլավէներ (հավելվածներ – Ա. Խ.)՝ առանց առաջնորդող յոդուածի, առանց գրականութեան եւ առանց խորհողութեան, անգոյն եւ անդրօշմ թուղթի կտորուանք, որոնք օրագիր ըլլալէ զատ ամէն բան էին»[2]: Թերթերն հատկապես լուրջյուն էին պահպանում ամեն մի այնպիսի լուրերի մասին, ինչպիսիք էին Օսմանյան Թուրքիայի ու նրա դաշնակիցների պարտությունները ռազմաճակատներում, Արևմտահայաստանում ջարդերն ու հայաթափումը, հայ պանդուխտների ու մտավորականների տեղահանությունները ու աքսորը Կ. Պոլսից, տեղեկատվությունը ամեն մի աղետի մասին: 1914–1918 թթ. դոյատևած «Վերջին լուր» թերթի աշխատակից Հ. Արամյանը գրում է, որ պատերազմի առաջին օրերից «խիստ գրաքննութիւն հաստատուեցաւ» և որ ողջ հայ մամուլն այդ օրերին «չատ վերապահ, զգոյշ և խոհեմ էր»: Նրա թարգմանությամբ 1914 թ. աշնանը «Վերջին լուրը» սոցիալ-դեմոկրատական «Ծորվերթս» թերթից տպագրել էր հակապատերազմական մի հոդված, և հետևանքն իրեն սպասեցնել չէր տվել: Երիտթուրքական մամուլի դիվանը չբավարարվեց թերթը փակելու սպառնալիքով: Պաշտոնազրկվեցին թերթի հայ գրաքննիչները, իսկ ոստիկանությունն ընկավ իր՝ Հ. Արամյանի հետևից. «Տիգրան Զաւէն (ճանաչված հրապարակախոս-լրագրող, խմբագրել է Կ. Պոլսի «Երկրի ձայնը», «Երկիր», «Ժողովուրդ» և այլ թերթեր – Ա. Խ.) զիս փրկեց, քիչ մնաց՝ ոտքի տակ պիտի եր-

---

[1] Ազատեան Թ., «Ժամանակ» քառասնամեայ յիշատակարան, 1908-1948, Կ. Պոլիս, 1948:

[2] Թէոդիկ, Ամենուն տարեցոյցը, Կ. Պոլիս, 1920, էջ 271:

թայի: Քանզի երկու ոստիկան զիս կը վիճտէին»[1]*,- գրում է Հ. Արամյանը:*

Երիտթուրքական ռազմական գրաքննութիւնը, իրոք, պատժիչ կառույց էր դարձել լրագրողների համար: Ավ. Փափազյանը այս առթիվ վկայակոչում է թուրք դործիչ Օսման Նուրիին, ըստ որի, «Այդ պահից սովորական երևույթ դարձաւ աքսորը»[2]*: Փոխարենը, թուրքական լրատվամիջոցները լեփ-լեցուն էին էժանագին և դռնհիկ հարձակումներով ընդդիմ թուրքիայի արտաքին և ներքին քաղաքականութեյանը հակասող որևէ երևույթի, սպառնալիքներով ու վրնժխնդրութեյան կոչերով ուղղված «ներքին թշնամիների» հայերի և հույների դեմ: Երիտթուրքական «Թասվիր-ի էֆքյար» թերթը հայհոյական բառախաղերով տեղեկացնում էր դեռևս 1914 թ. «Մեր կառավարութիւնը ճամբու կը դնէ հայ վալիները» (այսինքն Հոփին և Վեստենենկին)՝ առաջինին անվանելով «էոփ», իսկ երկրորդին՝ «Փեղևենք» (ղզվանքի և հայհոյական հորջորջումներ)*[3]*:*

Երիտթուրքերը գրեթե ոչնչացրեցին հայ մամուլը: Կ. Պոլսում 1914 թ. սկզբներին լույս տեսնող ավելի քան 30 թերթերից ու ամսագրերից նույն տարվա ընթացքում հրատարակվելուց դադարեցին 25-ը, որը ոչ այլ ինչ էր, քան լրատվամիջոցների ջարդ[4]*: 1910-*

---

[1] Արամեան Հ., Սեծ եղեռնի պատգամ. Հայոց տաճքէական, էջ 60-62: Գրաքննությունն իրականացնում էր նորաստեղծ Ռազմական դրության գրաքննչական («Դիվանի հարբի օրֆիյե»), որն իսկույն աչքի ընկավ մամուլի հանդեպ իր ահաբեկչական գործելակերպով: Դրա աչալուրջ հսկողության տակ բոլոր թերթերը զրկվեցին իրենց լրատվական ինքնուրույնությունից: Օրինակ, մամուլը պարտավոր էր գրել Գերմանիայի միայն հաղթանակների մասին, իսկ պարտության մասին լրատվությունը խստորեն հատուցվում էր առժամանակյա կամ մշտական դադարով: Այս կերպ պատժվեցին ՀՅԴ պաշտոնաթերթ «Ազատամարտը» և «Վերջին լուրը», որն, ի դեպ, Գերմանիայի պարտության մասին մի լուր էր տպագրել, սակայն, հավելելով, որ միևնույն է, Գերմանիան ի վերջո հաղթելու է (տե՛ս Çetinoğlu S., Exterminators Yok Ediciler ve Erdemli Müslümanlar, s. 166-167): Պետք է կարծել, որ այս շրջանում՝ 1914 թ. փակվեց Կ. Պոլսում հրատարակված հայկական թերթերի մեծագույն մասը:

[2] Փափազյան Ավ., Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, էջ 13-14:

[3] Թէոդիկ, նշվ. աշխ., էջ 69:

[4] Տե՛ս Հայոց պարբերական մամուլը, էջ 34-81:

ական թթ., մինչև պատերազմը Կ. Պոլսում տպագրվում էին յոթ առավոտյան թերթեր՝ «Ժամանակը», «Ազատամարտը», «Նոր աշխարհը», «Հայրենիքը», «Մանզումեի էֆքյարը», «Առավոտը», «Արևելքը», և երկու երեկոյան թերթեր՝ «Բյուզանդիոնն» ու «Բանբերը» (հետագայում՝ «Վերջին լուր»), ինչպես և մի կարճ ժամանակ հրատարակված «Լուսարձակ» օրաթերթը[1]: Պատերազմից առաջ և սկսվելուց հետո այս թերթերը դերազանցապես փակվեցին վարչական ու դրաքննական վայրագությունների պատճառով: 1915–1918 թթ. պոլսահայ թերթերից իրենց հրատարակությունը չարունակեցին, և այն էլ՝ կատարելապես զրկված մամուլի լրատվական ու բովանդակային հատկանիշներից, ընդամենը 4-ը՝ «Բյուզանդիոնը», «Ժամանակը», «Վերջին լուրը» և հայատառ թուրքերեն «Ձերիտեի չարդիյե»-ն[2]:

Պատկերը նույնն էր, բնականաբար, չատ ավելի փոքրաթիվ թերթերի առկայությամբ, Զմյուռնիայում: 1914 թ. այստեղ հրատարակվող 3 թերթերը՝ «Դաշինքը», «Աչխատանքը» և «Փնար» կիսամսյան, ինչպես և «Հայ գրականություն» ամսագիրը փակվեցին: Կարելի է կարծել, որ 1915–1918 թթ. Զմյուռնիայում հայերեն թերթ չի հրատարակվել, համենայն դեպս, հակառակի մասին վկայող որևէ տվյալ հայտնի չէ: Հ. Մամուրյանի «Դաշինքը», ինչպես և հետագայում նրան հաջորդած «Արևելյան մամուլը» ունեին ռամկավարական կամ վերակազմյալ հնչակյանական ակնհայտ ուղղություն, որ չէին կարող հանդուրժել առհասարակ հայ կուսակցությունների մամուլի նկատմամբ ծայրահեղ աստելությամբ լցված երիտթուրքական իշխանությունները:

Հայ մամուլի դեմ երիտթուրքական ոչնչացնող քաղաքականությունը չատ ավելի կտրուկ և միանշանակ եղավ բուն Արևմտահայաստանում և Թուրքիայի հայաբնակ այլ վիլայեթներում: Ցեղասպանությանը ընդհուպ նախորդող՝ 1914 թ., այդ տարածքներում (Վան, Խարբերդ, Սեբաստիա, Թոքատ, Էրզրում, Խոտորջուր,

[1] Ազատեան Թ., նշվ. աշխ., էջ 156-157:
[2] Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 271:

Երզնկա, Նիկոմեդիա, Տրապիզոն, Պարտիզակ և այլուր) հրատարակվող բոլոր 18 թերթերն ու հանդեսները փակվեցին:

Վերը նշվածը թույլ է տալիս ասելու, որ երիտթուրքերը հայ մտավորականությանը 1915 թ. ապրիլին և հետո զանգվածորեն ձերբակալելուց և կալանավորելուց մեկ տարի առաջ, 1914 թ. սկսել և ավարտել են նրան լռեցնելու և հասարակությունից մեկուսացնելու գործընթացը: Հայ հանրությունը և՛ Կ. Պոլսում, և՛ Զմյուռնիայում ու Արևմտահայաստանում, ինչպես և Թուրքիայի հայաբնակ մյուս վիլայեթներում 1915 թվականը դիմավորում էր զրեթե զրկված մամուլից և ուրեմն մտավորականության հետ հաղորդակցվելու հնարավորությունից:

Գրաքննությունն ու զինվորական իշխանությունները ամենից առաջ հարվածումներն ուղղեցին կուսակցական, ինչպես և երգիծական հրատարակությունների դեմ, անկասելի ելք տալով, ի դեպ, երգիծանքի ժանրի նկատմամբ առհասարակ թուրքական իշխանավորների ավանդականորեն հայտնի ատելությանը:

Երիտթուրքական կառավարողները փորձեցին ստեղծել նաև իրենց ձեռնասուն մամուլը՝ հավաքագրելով Ա. Մկրտչյանին և Հ. Հովասափյանին, որոնք Զ. Կյոզյուլյանից խլեցին «Տաճար» կրոնաթերթը՝ այն վերածելով «անկրօն օրկանի մը»: Սրանց կամ սրանց նման ազգուրացների ձեռքով զինադադարից ոչ շատ առաջ հրատարակվեցին «Հայրենիք» թերթը և էլ ավելի կարճ ժամանակ՝ «Մոտա» հանդեսը, որը «մեռաւ իրեն ծնունդ տուող խմբագրին հետ»[1],- գրում է Թնդրիկը:

Կուսակցական թերթերից Կ. Պոլսում 1915 թ. ապրիլին դադարեցվից դաշնակցության պաշտոնաթերթը «Ճակատամարտը» («Ազատամարտի» շարունակությունը, որ վերահրատարակվեց 1918 թ. նոյեմբերին՝ «Արդարամարտ» անվամբ): Դադարեցվեցին վերակազմյալ հնչակյան «Առաւօտ» թերթը և երգիծական բոլոր հրատարակությունները, այդ թվում և Ե. Թոլայանի «Կաւռոչը»: Հրատա-

[1] Նույն տեղում, էջ 272:

րակվող մի քանի թերթերը ննթարկվեցին խստագույն դրաքննութ-յան, որ իշխանութիւնները արդեն անում էին պատերազմից ան-միջապես առաջ և որը հասկանալի է դառնում հայ մամուլի նկատ-մամբ նրանց վերաբերմունքի համատեքստում: «Կառավարութեան տնօրէնին անհաշտ արտայայտութիւն մը, շփոթ լուր մը կամ իրողութեան մը սխալ արձագանգը յաճախ տեղի կուտային այս կամ այն թերթին առժամանակեայ դադարման»,- դրում է Թ. Ազատյանը[1]: Պատերազմից առաջ «ժամանակ» թերթն այս կերպ խափանվել է չորս անգամ՝ զինվորական դրաքննութեան կողմից[2]: Ավելացնենք, որ 1915–1918 թթ. Կ. Պոլսում երիտթուրքական դրաքննիչների հետ միասին դրաքննական գործառույթ էին իրա-կանացնում նաև գերմանական զինվորական պաշտոնյաները, որի հետևանքով այս տարինների մամուլն ընկավ երկակի՝ «թուրք և գերման դրաքննութեան մադիլներուն տակ»[3]:

Հայ մամուլը վերը նկարագրված դրութեան մեջ մնաց մինչև Մուդրոսի զինադադարը (1918 թ. հոկտեմբերի 30), որին հաջորդող ամիսների ընթացքում այն պետք է հայտնվեր վերածնութեան հույսեր ներշնչող պայմաններում, որոնք, սակայն, իրենց հակադ-րութեանը պետք է վերածվեին քեմալականների իշխանութեան գլուխ անցնելուց հետո:

*

* *

XX դ. առաջին քառորդի արևմտահայ մամուլը չի ուսումնա-սիրվել: Կան առանձին անդրադարձներ, դիտողութիւններ և գնա-հատականներ՝ տրված այս կամ այն լրագրին, հանդեսին կամ խմբագրին, որոնք, սակայն, դուրս չեն գալիս թռուցիկ լրատվա-կան շրջանակներից: Խորհրդային շրջանում, երբ գիտական լուրջ հիմքերի վրա դրվեց հայ պարբերական մամուլի ուսումնասիրութ-

[1] Ազատեան Թ., նշվ. աշխ., էջ 141:
[2] Նույն տեղում, էջ 141, 153-154, 157:
[3] Թէոդիկ, նշվ. աշխ., էջ 271:

յունը, հայ մամուլի պատմաբաններն իրենց ուշադրությունը բացառապես կենտրոնացրեցին անդրանիկ պարբերականից՝ «Ազդարարից» (1794–1796, Մադրաս) սկսած մինչև XIX դ. վերջերը լույս տեսած թերթերի ու ամսագրերի վրա, որ, թերևս, կարելի է բացատրել գաղափարախոսական խորհրդանիշերից խուսափելու նախապատրաստությամբ, ոչ կոմունիստական կամ ոչ սոցիալիստական մամուլը ուսումնասիրության ոչ կարևոր բնագավառ դիտելու քաղաքականացված մտայնությամբ: Հայ մամուլի պատմության հին շրջանը, մինչդեռ, ներկայանում էր իբրև զուտ մշակութային շերտ, հեռու կուսակցականությունից: Կար, սրա հետ կապված, բոլշևիկյան մամուլի պաշտոնական հմայքը, որի համեմատությամբ, այլ ուղղություն ներկայացնող թերթերն ու ամսագրերը գրաղեցնում էին շատ ավելի համեստ ու երկրորդական տեղ՝ մամուլի գիտական ուսումնասիրության վերաբերյալ պատկերացումներում: Հայ բոլշևիկյան մամուլի պատմությունը, հիրավի, մնում էր ուսումնասիրության նախընտրելի, այլև խրախուսելի ասպարեզ, որ և տվեց իր արդյունքները, ստեղծվեցին այդ հիմնահարցին նվիրված ուշադրավ աշխատություններ, որոնք կազմեցին կուսակցական պատմագրության (կամ գրականագիտության) բաղկացուցիչ մասը:

Այս ամենով հանդերձ, կան ժամանակակիցների բավական հետաքրքիր դիտարկումները դարասկզբի մամուլի և նրա գործիչների մասին: Հրապարակախոս և լրագրող Ենովք Արմենը (գրական «Մասիսի» երբեմնի խմբագիրը) համիդյան վարչակարգի տապալումից հետո հրատարակված մամուլը բնութագրում է որպես ծայրահեղությունների դրսևորում, որպիսին կարող էին լինել բռնակալությունից թալկացած և հանկարծակի ազատությունից արբեցած թերթերն ու հանդեսները: Ըստ նրա, «լրագրական ըմբռչամարտության»՝ բախումների ու բանակռիվների հիմքում ընկած էր «անձնական ատելութեան և մրցակցութեան թունալից նպատակը»[1]: Ծայրահեղ այս տեսակետը, որ անտեսում է XIX դ. վերջի և

[1] Ենովք Արմէն, Թրքահայ գրականութիւնը մամուլի ազատութեան թուականին, էջ 11:

XX դ. սկզբի հայ մամուլի հայտնի արժանիքները՝ ժողովրդի կյանքի և նրա միջավայրի լուսաբանումը, հայ գրականության, հատկապես գրաքննադատական մտքի զարգացմանը բերած նպաստները, ընթերցողին ժամանակի եվրոպական մշակութային ու գիտական արժեքներին հաղորդակցելը, լրագրական նոր ժանրերի մշակումը և այլն, շատ քիչ է մնդմանում այն իրողությունից, որ Ենովք Արմենը մնծարում է միայն «Բյուզանդիոնը»: Գնահատելի է, սակայն, որ թեև ժխտական կեցվածքով, այս հեղինակը մասամբ ճիշտ է նկատում դարասկզբի հայ մամուլի բերած մի էական փոփոխությունն ու նորույթը՝ այդ մամուլի լրատվական ուղղվածության կայացումը: «Պոլսահայ լրագրությունը,- գրում է նա,- ողողուեցաւ լուրի գրականութեան հեղեղէն, իբր բնական հետեւանք ժամանակին և ընկերային ու քաղաքական պայմաններուն... Գրականութիւնը վտարուեցաւ լրագրութենէն՝ իր տեղը տալով լուրի, դէպքի նկարագրութիւնը եղող լրագրութեան մը»[1]:

Ենովք Արմենի գիրքն աչքի է ընկնում նաև իր տեղեկատվական նշանակությամբ: Ուշագրավ է նրա բացատրությունն այն մասին, որ երիտթուրքական իշխանության հաստատման ժամանակից (1908) Կ. Պոլսում փակվեցին մի շարք թերթեր, «Լույսը»՝ Ա. Անտոնյանի խմբագրությամբ, «Բյուրակնը»՝ Ս. Զյոմլնքճյանի և Ա. Գալփակճյանի, «Հանրագիտակը»՝ Վ. Փափազյանի խմբագրությամբ՝ չդիմանալով տպագրական բազմապատկված ծախսերին[2]:

Թ. Ազատյանի աշխատությունը, որ քանիցս հիշատակել ենք վերը, կարծում ենք, թեման ուսումնասիրելու տեսակետից և առանձնապես ճանաչողական նշանակությամբ առանձնանում է խնդրո առարկա գրականության մեջ: Այս հեղինակը չի ամփոփվում

---

[1] Նույն տեղում, էջ 14:

[2] Նույն տեղում, էջ 30: Ենովք Արմենը այստեղ, չգիտես թե ինչու, մոռանում է իր իսկ խմբագրությամբ լույս տեսած «Մասիսը», որ նույնպես դադարել էր 1908 թ., հավանաբար, իր հոգեոր զավակին այդ կերպ փրկելով ժամանակի մամուլի դեմ ուղղված իր ոչնչացնող քննադատությունից: Փոխարենը, նա «մամուլի ազատության» թվականին, այսինքն, 1908 թ. դադարած թերթերի մեջ սխալմամբ նշում է Ս. Ալաճաճյանի «Փունջը», որն իրականում փակվել էր 1907-ին:

միայն «Ժամանակի» և նրա խմբագիրների ու տնօրենների բնութագրերով, այլ նոր ծալքեր է բանում մեր առջև ընդհանրապես XX դ. սկզբների արևմտահայ մամուլի պատմության մեջ: Մասնավորապես դնահատելի են նրա անդրադարձները ցեղասպանության, պատերազմի և հետագա տարիներին, որը քիչ է չոչափվել անգամ ժամանակակիցների կողմից: Միշտ ուշադրության կենտրոնում պահելով Մ. Գոչունյանի «Ժամանակ» թերթի չորս տասնամյակ անցած ուղին և նրա խմբագիր-տնօրենների գործունեությունը, Թ. Ազատյանը հիշարժան տեղեկություններ է տալիս նաև մյուս թերթերի՝ «Բյուզանդիոնի», «Սուրհանդակի», «Մանզումեի էֆքյարի», «Ժողովուրդի», «Ժողովուրդի ձայնի» և այլ թերթերի պատմության, աշխատակիցների, երիտթուրքական գրաքննության հետ ունեցած առնչությունների մասին: Թ. Ազատյանը, հակառակ Ենովք Արմենի, 1900–1908 թթ. մամուլի լրագրական նոր ուղղությունը դրականորեն է գնահատում, որ վկայում է մամուլի զարգացման նկատմամբ նրա շատ ավելի լայն հայեցակետի մասին: Դա նչանակում էր, որ նա լրագրությունը համարում է մասնագիտական գործ՝ իր առանձնահատկություններով հանդերձ, որ դուրս է եկել հրապարակախոսության սահմերի տակից. «Ուրիշ բան է հրապարակագրելը, ուրիշ բան՝ օրագրելը (Journalisme): Հրապարակագրությիւնը գործ մըն է, մինչ օրագրելը՝ արհեստ մը: Օրագրողը աւելի մեծ ուշիմութեան, արթնութեան և ճարտարութեան պէտք ունի: Քասիմի (Մ. Գոչունյանի – Ա. Խ.) մէջ ես միշտ հաւնած եմ օրագրողը»[1],- գրում է նա: Թեոդիկի հետ միասին Թ. Ազատյանը չոչափելի է դարձնում երիտթուրքական գրաքննության կողմից հայ մամուլի հալածված դրության պատկերը:

Թեոդիկի «Ամէնուն տարեցոյցը», անփոխարինելի տեղեկություններ է հաղորդում դարի առաջին տասնամյակների հայ մամուլի, խմբագիրների, գրաքննական ճնշումների և Կ. Պոլսի գրական-

[1] Ազատեան Թ., նշվ. աշխ., էջ 77:

լրագրական իրողությունների մասին[1], ինչը տեսանք վերը: Նա անդրադարձել է Առաջին աշխարհամարտի տարիներին այստեղ դոյատևած չորս թերթերի՝ «Բյուզանդիոնի», «Ժամանակի», «Վերջին լուրի» և Հայաստան «Ճերիտեի շարդիչ»-ի կլիսակենդան վիճակին՝ զրաքննական մտրակի տակ չլատված և սոսկ անվանապես դոյատևող, որպիսին դրանց համար նախատեսել էին երիտթուրքական իշխանությունները: Սրանք այդ թերթերի գոյությունը հանդուրժում էին զուտ քարոզչական նպատակով՝ ի ցույց դնելու Կ. Պոլսում հայերի կարծեցյալ ապահովվածությունն ու մշակութային լիարժեք կյանքը: Այդ մամուլը «զաքարիական պերճախոսությանն» պարտադրված՝ ամենևին չէր արձագանքում Թուրքիայի և նրա դաշնակիցների ռազմական պարտություններին, զավառներից հայերի տեղահանության, զանգվածային սպանությունների և այլ իրողություններին:

Թեոդիկը մատենադիտական բարեխղճությամբ թվարկում է 1910-ական թթ.՝ պինադադարից առաջ և հետո Կ. Պոլսում լույս տեսած հայկական թերթերը, այդ թվում և կուսակցական հրատարակությունները, հավելում հետաքրքիր մանրամասներ դրանց խմբագիրների մասին: Թեոդիկը սկզբնաղբյուրի արժեք ունեցող տեղեկություններ է տալիս նաև ցեղասպանության տարիներին Կ. Պոլսում լույս տեսած որոշ թերթերի և շատ ավելի ամբողջական՝ 1918–1920-ականի սկզբներին հրատարակված պարբերականների վերաբերյալ:

Ժամանակի հայ մամուլի պատմության տեսակետից արժեքավոր են Թեոդիկի տեղեկությունները պատերազմի տարիներին Կ. Պոլսից աքսորված (նաև չաքսորված) և աքսորից վերադարձած սակավաթիվ խմբագիրների մասին: Այս հեղինակը հայտնում է, որ աքսորից վերադարձել են Ե. Օտյանը, Ա. Անտոնյանը, Մ. Շամտանճյանը, Բ. Քեչյանը, Ե. Թոլայանը և Ա. Մյուբահաճյանը[2]:

---

[1] Թեոդիկ, Ամէնուն տարեցոյցը, Կ. Պոլիս, 1916-1920, 1921:
[2] Նույն տեղում, 1916-1920, էջ 115-117:

1910-ական թթ. մամուլի մասին արժանահավատ տեղեկություններ են հաղորդում իրենք՝ ժամանակի լրագրության դեմքերը իրենց հուշագրություններում: Ճանաչողական արժեք ունեն Ե. Օտյանի, Ե. Թոլայանի, Հ. Մառքի, Հ. Արամյանի, Հ. Սիրունու և այլոց հուշագրություններն ու նրանց վերաբերյալ անդրադարձները՝ թեև կցկտուր և հատվածական, բայց և փաստականորեն ճշմարիտ մանրամասներով[1]: Ե. Օտյանի ինքնատիպ չարագրանքը կասկած չի թողնում, որ ցեղասպանության հրեշավոր ծրագրի մեկնարկը երիտթուրքերը սկսել էին նաև մտավորականության, այդ թվում և մամուլի գործիչների զանգվածային ձերբակալություններով: Ե. Օտյանն իր պատումը սկսում է 1915 թ. ապրիլի 24-ին կ. Պոլսում ձերբակալված խմբագիր-լրագրողների ու այլ մտավորականների հետզհետե ավելացող անուններով՝ Բարսեղ Շահպազ, Ն. Տաղավարյան, Վ. Թորգոմյան, Ե. Թոլայան, Ա. Անտոնյան և շատ ուրիշներ: «Յետոյ հասկցանք, թէ դժոխային ծրագիրի մը, հայ ցեղի բնաջնջումին առաջին ահռելի դրուագն էր, որ տեղի կունենար»[2],- գրում է Ե. Օտյանը: Հայտնի է, որ ինքը՝ Ե. Օտյանը թաքնվել էր մի որոշ ժամանակ, բայց հետո ձերբակալվել և աքսորվել՝ զուտ պատահականությունների չնորհիվ անցնելով ցեղասպանությունը վերապրած սակավաթիվ մտավորականների շարքը:

1900–1923 թթ. արևմտահայ մամուլն այս կամ այն չափով վկայակոչել են խորհրդային և հետխորհրդային շրջանի հայրենական հետազոտողները, որոնց աշխատություններում մեզ հետաքրքրող հրատարակությունների մասին կան ուշադրավ դիտարկումներ, սակայն բուն իսկ այդ մամուլը, բնականաբար, դրեթե միշտ դիտվում է որպես հետազոտության աղբյուր: Դրանց մենք անդ-

---

[1] Օտեան Ե., «Իրիկուան տոմսակ», 1915 ապրիլ 11-12, «Վերջին լուր», 1921, 25 ապրիլի: Նույնի Անիծեալ տարիներ. 1914-1919 (անձնական յիշատակներ), Թեհրան, 2005: Թոլայեան Ե., («Կաւոշ»), 35 տարուայ բատերախմբագրական յիշողութիւններ, հ. Ա, Ե., 2008: Արամեան Հ., Անձ եղեռնի պատգամ. Հայոց տեղեկութիւնական, Պէյրութ, 1970: Սիրունի Յ. Ճ., Ինքնակենսագրական նոթեր, Ե., 2006: Անձարանք առ Երուանդ Տէր-Անդրէասեան, Փարիզ, (անթվակիր):

[2] Օտեան Ե., «Իրիկուան տոմսակ», «Վերջին լուր», 1921, 25 ապրիլի:

բաղարձել ենք այս աշխատության համապատասխան հատվածներում: Սփյուռքում ևս խնդրո առարկա թերթերն ու ամսագրերը դիտական քննության առարկա չեն դարձել:

Վերջում ավելացնենք, որ այս աշխատությունը ամենևին հավակնություն չունի սպառելու XX դ. առաջին քառորդի՝ մեր քննարկած հրատարակությունների արևմտահայ մամուլի պատմական կամ լրագրական խոշոր արժեքը: Մամուլն այստեղ ներկայացվում և բնութագրվում է իր բովանդակության առանձին կողմերով միայն, ընդհանուր ուրվագծերով և մի քանի հիմնահարցերի շրջանակներում: Ընդ որում, դրեթե ամբողջովին հետազոտության նյութ են դարձել դերազանցապես կ. Պոլսի և Զմյուռնիայի ոչ կուսակցական, այսպես կոչված ազատ կամ չեզոք թերթերն ու ամսագրերը, որոնք, կարելի է կարծել, առավել անկաշկանդ ու անկողմնակալ են լուսաբանել արևմտահայ իրականության կարևոր կողմերը: Գրքի հետազոտական շրջանակների մեջ չի մտել բուն Արևմտահայաստանում հրատարակված մամուլը՝ իր առանձնահատկություններին թելադրանքով: Բոլոր դեպքերում, այս աշխատությունն առաջին փորձն է՝ բացահայտելու արևմտահայ մի շարք առաջատար թերթերի ու ամսագրերի տեղն ու նշանակությունը հայ մամուլի պատմության մեջ, ուստի և հեղինակն ակնկալում է ընթերցողների լայնախոհ և ներողամիտ արձագանքը:

Ավելացնենք մի երկու հանգամանք ևս: Նախ, թերթերի ու ամսագրերի հրատարակության ժամանակի վերաբերյալ. դրանցից յուրաքանչյուրի վերնագրին կից նշված են հրատարակության սկզբի և ավարտի տարեթվերը, որոնք միշտ չէ, որ համընկնում են սույն ուսումնասիրության ժամանակագրական սահմաններին (1900–1922 թթ.): Այդ արվում է պարբերականների հրատարակության իրական ժամանակի կարևորությունը հաշվի առնելու և մատենագիտական չփոթից խուսափելու նպատակով: Այնուհետև, որոշ պարբերականների հրատարակության սկիզբը և ավարտը լրիվ համընկնում են վերոհիշյալ ժամանակագրական սահմաններին, բայց ամբողջ ծավալով չեն քննարկվում, որովհետև մեզ մատ-

չելի են եղել մասնակիորեն («Մանդումնի էֆքյար», «Վերջին լուր»): Այս դեպքում տողատակերում տրվում է անհրաժեշտ բացատրություն: Հղումները թերթերին և ամսագրերին՝ արվում են տեքստում, փակագծերի մեջ և մատչելի հապավումներով, իսկ համապատասխան գրականության հղումները՝ տողատակում:

ԳԼՈՒԽ I
ՄԱՄՈՒԼԸ 1900–1914 ԹԹ.

1. ՄԱՄՈՒԼԸ ՄԻՆՉԵՎ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԸ

Արևմտահայ մամուլի շուրջ տասնյակ և կես տարիներ ընդգրկող այս շրջանում, հատկապես երիտթուրքական հեղաշրջումից հետո, նկատելի են զգալի փոփոխություններ: Թերթերի մի մասը, ինչպես «Մասիսը», «Սուրհանդակը», «Ծաղիկը», «Երկրի ձայնը», «Հանրապիտակը» և «Լույսը», որոնք հեղինակավոր հրատարակություններ էին Կ. Պոլսում, ինչպես և Զմյուռնիայի «Արձագանքը» ու «Արշալույսը», 1908 թ. հետո չեն հրատարակվել: Փոխարենը, 1908 թ. և դրան հաջորդած մի քանի տարիներին լույս տեսան նոր թերթեր՝ «Ժամանակը», «Կավառչ», «Կառափնատ» և «Կիկո» ծաղրաթերթերը, «Սասուն» գրական ամսագիրը, վերակազմյալ հնչակյանների «Առավոտը», «Կոհակը», «Դաշինքը», «Աշխատանքը», մարզական հանդես «Մարմնամարզը», գրական հանդեսներ «Հայ գրականություն» Զմյուռնիայում, «Շանթը», «Ոստանը», «Մեհյանը» Կ. Պոլսում և այլն: Ակներև է թերթերի և ամսագրերի թվի ստվարացումը. եթե դարասկզբին, մինչև Աբդուլ Համիդի բռնապետության վախճանը, Կ. Պոլսում և Զմյուռնիայում դրանց թիվը հասնում էր երկու տասնյակի, ապա 1908–1914 թթ.՝ այդ թիվը ավելի ընդլայնվեց: Պատճառը, կարելի է կարծել, բռնակալության հետո հայ հանրության վերազարթնած հասարակական-քաղաքական մտքի և մշակութային-կրթական կյանքի աշխուժացումն էր՝ թևկուզ և երիտթուրքական երևութական լիբերալիզմի պայմաններում:

1908 թ. հետո նկատելի է նաև բուն Արևմտահայաստանում և Թուրքիայի հայաբնակ շրջաններում հրատարակվող պարբերական հրատարակությունների թվաքանակի չհաշտակի աճ: Մինչ այդ այս-

տեղ լույս տեսնող մոտ մեկ տասնյակի չափ հրատարակությունների դիմաց 1908–1914 թթ. այդ թիվն ավելացավ մի քանի անդամ:

Հայ հասարակական-քաղաքական մտքի և հասարակական կարծիքի զարգացման ընթացքը խթանում էր նաև ազգային ինքնագիտակցության վերելքը հայատառ թուրքերեն մամուլի օրինակով: XX դ. սկզբից մինչև 1915 թ. Թուրքիայի մայրաքաղաքում կտրուկ նվազեց այդ կարգի հրատարակությունների քանակը: Հակառակ դրան, դավառում (մասնավորապես Կեսարիայում և Կիլիկիայում) նկատվում է դրանց զգալի աճը:

1900–1908 թթ., մինչև Համիդյան վարչակարգի վախճանը, հայ մամուլն ու հրապարակախոսությունը խիստ ճնշումների ներքո զրկվել էին ազգային ու հասարակական կարևորություն ունեցող այն թեմաներից, որոնք, գրաքննության կարծիքով, կարող էին առնչվել ազատագրական կամ ազգային ինքնորոշման տրամադրություններին: Հրապարակախոսությունից չքացել էր քաղաքական հարցեր չոչափելու հնարավորությունը, հասարակական կարծիքը հուզող բազմաթիվ հարցերի վերլուծությունը: «Արևելքում», «Մանզումեի էֆքյար»-ում, «Բյուզանդիոնում» և «Մասիսում» տեղական-վարչական բնույթի քննադատական նյութերի կողքին մասամբ վերակենդանացավ բարոյախոսական հրապարակախոսության ժանրը, որ արևմտահայ մամուլը հիմնականում հաղթահարել էր դեռևս 1870-ական թթ.: Փոխարենը, զգալի զարգացում ունեցան զավառին վերաբերող հրապարակումները, այդ թվում և ճամփորդական նոթերն ու մշակութային-հոգևոր բնույթի անդրադարձները, որոնք լուսաբանում էին ժողովրդի կենցաղը, սովորույթները, կրթական ու տնտեսական իրողությունները: Տարածված թեմա դարձավ իր հոգևոր պարտականություններն անտեսող հոգևորականության քննադատությունը: Այս ժամանակաշրջանի մամուլը, որքան էլ տարուբերվեր վերացականի և որոշակիի սահմաններում, այսուհանդերձ, զգալիորեն մոտենում էր իրականությանն ու ժողովրդի կյանքին, ընդառաջում մտավոր նոր պահանջներին: Մամուլի և հրապարակախոսության մեջ կարևոր ներդրում

արեցին այնպիսի դեմքեր, որպիսիք էին Հ. Գազանճյանը, Զ. Եսայանը, Ա. Անտոնյանը, Մ. Գոչունյանը, Օ. Չիֆթե-Սարաֆը, Սիպիլը, Հ. Մամուրյանը, Տ. Արփիարյանը, Հ. Ալփիարը, Բ. Քեչյանը, Արտ. Հարությունյանը, Մ. Շամտանճյանը և ուրիշներ:

Արևմտահայ մամուլի նախընթաց և խնդրո առարկա փուլերի ուշագրավ կողմն են ներկայացնում նաև կրոնական պարբերաթերթերն ու հանդեսները: 1900–1914 թթ. հրատարակվում էին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու դավանանքը քարոզող «Լույսը» (1905–1907), «Տաճարը» (1909–1914), «Տաճար մանկանցը» (1913–1915), ինչպես և բողոքական միսիոներների «Ավետարերը» (1855–1915), կաթոլիկների «Կաթողիկե արձագանգը» (1911–1915) և այլ պարբերականներ: Դրանցում, ի տարբերություն նախորդ դարում հրատարակվող կրոնաթերթերի, թուլանում է դավանական անտագոնիզմը, շատ հրապարակումներ կրում են քրիստոնեական լայնախոհության և հանդուրժողականության կնիքը:

1908–1914 թթ. ազգային ու հասարակական բովանդակության նոր թերթերի հետ միասին հատկապես ծաղկում է ապրում երգիծական մամուլը: Միայն Կ. Պոլսում հրատարակվեցին երկու տասնյակին մոտ պարբերականներ, Զմյուռնիայում՝ երեքը («Չիկ-չակ», «Մաղիկ», «Կավուշ», «Ծրու-ֆրու», «Լիլա», «Խարազան», «Կառափնատ», «Զուռնա», «Կատակ», «Մոծակ» և այլն): Այս երգիծաթերթերն հիմնականում ունեին կենցաղային բովանդակություն, թեև առկա էին և իրենց դգացնել էին տալիս նաև քաղաքական երգիծանքի դրսևորումները: Դրանով, սակայն, չի կարելի բնութագրել այս տարիների հայ քաղաքական երգիծանքը. Մ. Գոչունյանի «Ժամանակին» և այլ թերթերի իր աշխատակցությունն էր բերում երգիծաբանության առաջատարը՝ Ե. Օտյանը, որի դիպուկ քաղաքական երգիծանքը իրավացիորեն բնութագրվում է «որպես արատավոր երևույթների ճշմարտացի, սպանիչ բնութագիր ու դատավճիռ»[1]*:*

---

[1] Մուրադյան Ս., Երվանդ Օտյան, էջ 163:

Վերոհիշյալ տարիներին մամուլն ապրում է աշխուժացման շրջան՝ համիդյան վարչակարգի պարտադրած երկարատև կաչկանդումներից հետո: Թերթերի էջերում մեծ քանակ էին կազմում «զուլում»-ի տարիների վերապրումները, տպագրվում էին հուշեր, անդրադարձներ, էսսեի բնույթի ակնարկներ՝ թարմ անցյալի դեպքերի իրապատում վերարտադրություններով: Նկատելի է նաև անհատի, անձնաքննության, ազդի թերությունները խորամուխ լինելու ձգտումը՝ այն դեպքում, երբ երկրորդական նշանակություն էր տրվում օրավուր ընդգծվող տնտեսական ու քաղաքական բռնությունները (գավառի դրության վատթարայում, օսմանյան խորհրդարանի ընտրություններում փոքրամասնությունների ընտրական իրավունքի կազմակերպված ոտնահարումներ և այլն): Ազգային աղետալի իրականությանը մամուլն անդրադարձավ Ադանայի կոտորածների ժամանակից (1909):

1912–1914 թթ. Հայկական հարցի վերարծարծման ժամանակ մամուլն իր ուշադրությունը կենտրոնացրեց գավառի աղետալի կացության վրա: Ժամանակի դրեթե բոլոր հայկական թերթերը մի քանի խորագրերի տակ պարբերաբար և բազմակողմանիորեն լուսաբանում էին Արևմտահայաստանի վիճակը, բռնությունների, թալանի և սպանությունների առօրյան, իշխանությունների հրահրիչ կամ անտարբեր կեցվածքը դրանց նկատմամբ: Առանց կուսակցի պիտք է ասել, որ այս տարիների մամուլն ու հրապարակախոսությունը արևմտահայության մեջ նախապատրաստել կամ հասցրել էին ձևավորել հասարակական կարծիք՝ սպասվելիք ընդհանրական կոտորածների վերաբերյալ: Գրեթե բոլոր հայաբնակ գավառների մեջ կատարվող աղետալի անցքերի մասին վկայող մեծաքանակ փաստերն ընթերցողին արդեն հուշում էին այն միտքը, որ դրանք պատահական չեն, այլ շարունակական բնույթ ունեն, և որ հայ ժողովուրդն իբրև խորթ ու թշնամական տարր է դիտվում իշխանությունների ու թուրքական միջավայրի աչքին: Զեզոք և օբյեկտիվ այս մամուլի լրատվական ուղղվածությունը, սակայն, ի զորու չեղավ նպաստելու ազգային կուսակցությունների՝ մեծ եղեռ-

նին ընդհուպ նախորդող շրջանի իրադարձությունների առավել սթափ գնահատականին և մասնավորապես, երիտթուրքերի քաղաքականության հանդեպ իրատեսական վերաբերմունքի դրսևորմանը:

XX դ. 2-րդ տասնամյակի՝ այս շրջանի մամուլը, այս ամենով հանդերձ, ճեղք էր բերել ազգային քաղաքական այնպիսի բովանդակություն, որ կարելի է բնութագրել մի քանի կարևոր ուղղություններով: Ամենից առաջ ընդլայնվել էր մամուլի հասարակական նշանակությունը: Հրապարակախոսությունն անմիջականորեն անդրադառնում էր արևմտահայ դավառի կյանքին և լուսաբանում նրա իրական վիճակը: Արժեքավոր էին Թուրքիայի քաղաքական կարգերի քննադատությունը, երիտթուրքական սահմանադրության զուտ ձևական բնույթի բացահայտումները՝ հատկապես Արևմտահայաստանի հայ բնակչության համատարած իրավազրկության ցուցադրումներով: Ըստ էության, այս բացահայտումները ոչ այլ ինչ էին, եթե ոչ երիտթուրքական վարչակարգի անուղղակի կամ բացահայտ քննադատություն: 1910-ական թթ. տևական թեմա են դառնում արևմտահայերի հողազրկման գործընթացի լուսաբանումը քրդական աշիրեթների և թուրք հողատեր վերնախավի, ինչպես նաև զաղթական մահմեդական տարրերի կողմից հողերը բռնազավթելու իրողությունները:

Մամուլում ընդլայնվում է թուրքական իշխանությունների կողմից հայ առևտրական խավերին բռնի կերպով ներքին շուկայից դուրս մղելու վերաբերյալ լրատվությունը: Այս տեսակետից հատկանշական են թերթերի այն անդրադարձները, որոնք վերաբերում են 1912–1913 թթ. Բալկանյան պատերազմների ընթացքում ներքին գործերի նախարար Թալեաթի՝ հույն առևտրականների դեմ կազմակերպած բոյկոտին: Թշնամական Հունաստանի դեմ ուղղված այս առևտրական պատժամիջոցը սահուն կերպով չրջվեց նաև հայերի դեմ՝ նրանց խանութների վրա կազմակերպված հարձակումների, նրանց հետ առևտուր անելու արգելքի, հայ առևտրականներից ապօրինի մաքսեր և տուրքեր պահանջելու ձևով: Հայ հասարակության տագնապն էին խորացնում թուրքական բանակ

զորակոչված հայ զինվորականների իրավազուրկ դրության բացահայտումները: Մամուլը բավականաչափ նյութեր է տպագրել՝ ցույց տալով զորանոցներում նրանց հանդեպ գործադրված բռնությունները թուրք սպայության ու զինվորների կողմից, բանակում այդ զինվորությանը իբրև թշնամական տարր դիտելու երևույթի բացահայտումները, այն վերաբերմունքը, որով նախապատրաստվում էր 1914–1915 թթ. հայերին հատուկ աշխատանքային գումարտակներում առանձնացնելու և զանգվածաբար բնաջնջելու ծրագիրը:

Թերթերում դրսևորվել է հայ հասարակական կարծիքի խորին մտահոգությունը Արևմտահայաստանում բարենորոգումների, ինչպես և այս հիմնահարցի միջազգային քննարկումների վերաբերյալ: Լրատվամիջոցներում այս խնդրի բարեհաջող լուծման նկատմամբ մի հայտնի չափով թերահավատություն, սակայն, տեղի էր տալիս չատ ավելի բազմաթիվ այն հրապարակումներին, որոնցում որակ են կազմում ակնկալիքները եվրոպական տերություններից և Ռուսաստանից՝ հատկապես 1912–1914 թթ.: Ոչ կուսակցական, ինչպես և կուսակցական մամուլի մի մասը (ամենավար սահմանադրականներ) բարենորոգումների հարցն առնչում էր Պողոս Նուբար փաշայի գործունեության հետ, թեև զգալի է նաև լուրջ ուշադրությունը Էջմիածնի կաթողիկոսի ակտիվ գործունեության նկատմամբ: Բոլոր դեպքերում, մամուլում արտացոլվել է նաև քննադատական կարծիքը վերը նշված իրողությունների վերաբերյալ: Հետևաբար, 1908–1914 թթ. մամուլը կատարում էր ոչ միայն լրատվական և մշակութային, այլև ազգային-քաղաքական դեր իր գոյության ամենադրամատիկ շրջանում՝ երիտթուրքերի ոճրագործության նախավերջին արարի տարիներին:

*
* *

1900–1908 թթ. ընթացքում այսինքն, դարասկզբից մինչև Աբդուլ Համիդի վարչակարգի տապալումը, Կ. Պոլսում հների կողքին չատ քիչ թիվ են կազմում նոր պարբերականները. յույս են տեսել

ընդամենը երկու-երեք կարճակյաց թերթեր («Նյութ» պարբերական մի քանի համարներ՝ 1900 թ., «Ֆոնոկրաֆ» տասնօրյա թերթը՝ 1901 թ. և 1903 թ.՝ «Ժողովուրդ» ամսաթերթը), Ամերիկայում երկուսը՝ «Արձագանք» ամսաթերթը և «Արշալույս» օրաթերթը 1907–1909 թթ.)[1]: Այսպիսի ժուժկալության համար, իհարկե, կային ինչ երկրորդական պատճառներ ևս, սակայն գլխավորը մնում էր այն, որ Համիդյան իշխանությունները խոչընդոտում էին հայ մամուլի զարգացումը: Ինչպես ասվեց, Կ. Պոլսում հրապարակի վրա էին մնում դեռևս նախորդ XIX դ. վերջերից հրատարակվող թերթերն ու հանդեսները՝ «Արևելքը», «Սուրհանդակը», «Մասիսը», «Հանրագիտակը», «Մանզումեի էֆքյարը», «Ծաղիկը», «Լուսյսը» և այլն: Իր բազմարնույթ և բովանդակալի հրապարակումներով և մանավանդ, ազգային կյանքի ստվերոտ կողմերի քննադատությամբ աչքի էր ընկնում «Արևելք» ազգային, գրական և քաղաքական օրաթերթը[2]: Օրաթերթին արծարծում էր Կ. Պոլսի և Արևմտա-

---

[1] Հայոց պարբերական մամուլը (կազմ. Լևոնյան Գ.), էջ 37-39, 50: Հայ պարբերական մամուլի մատենագիտություն, էջ 286: «Արշալույսը», սակայն, 1909-ին, շարունակվում էր հրապարակվել (տե՛ս «Արևելյան մամուլ», 1909, հուլիսի 21, էջ 720):

[2] 1900-1905 թթ. «Արևելքի» խմբագրությունը վարել են Ա. Անտոնյանը, Մ. Նաբանյանը, («Յուսակ» ստորագրությամբ), Արեւոը: Նույն տարիներին թերթի արտոնատերն էր Զ. Յուսուֆյանը, 1906-1911 թթ.՝ Գ. Պոյաճյանը: Մինչև 1910 թ. հուլիս խմբագրապետն էր Ե. Սրմաքեշխանլյանը (Երուխան), 1911-1912 թթ.՝ Ե. Օտյանը (տե՛ս ՀՀ Ազգային գրադարանում պահվող «Արևելքի» հավաքածուն): Ցավոք, ոչ լրիվ են այս թերթի վերաբերյալ Գ. Լևոնյանի մատենագիտական տվյալները (տե՛ս Հայոց պարբերական մամուլը, էջ 25), իսկ արդեն ոչ արժանահավատ (բացառությամբ մի քանիսի) Մ. Բարլոյանի նշած՝ թերթի արտոնատերերի ու տեր և տնօրենների ցանկը (տե՛ս Հայ պարբերական մամուլը, էջ 42):

Թերթը 1910-1911 թթ. ընթացքում հրատարակվել է այլ անուններով՝ «Չեզոք», «Լուսին», «Լրաբեր» և «Պայքար», և այս անվանափոխությունը վկայում է այն մասին, որ «Արևելքը» հաճախ հալածվել է իշխանությունների կողմից և պատժվել՝ ըստ սահմանված կարգի համապատասխան տուգանք մուծելուց հետո միայն իրավունք ունենալով վերստանալ նախկին անունը: «Արևելքի» պակասող համարները մեզ թույլ չեն տալիս կոնկրետ նշելու նրա դադարի պատճառները, բայց դրանք հիմնականում և գրեթե բացառապես նույնն էին՝ Արևմտահայաստանում հայության կեղեքումների ու հարստահարությունների մերկացումը (ինչը քանիցս վկայվում է «Ժամանակ», «Դաշինք», «Մանզումեի էֆքյար», «Հայրենիք» և այլ թերթերի օրինակով), որին երիտթուրքական գրաքննությունը արագորեն արձագանքում էր պատժիչ խափանումներով: Իսկ «Արևելքը» ազդեցիկ թերթ էր և թուրքական մամուլը ամեն կերպ ճգնում էր

Հայաստանի կրթական, եկեղեցական, մտավոր ու տնտեսական բազմաթիվ խնդիրներ: Մասնավորապես Ա. Անտոնյանի հրապարակախոսական փայլուն հոդվածները (1900-ականի սկզբներին նրա խմբագրականները տպագրվում էին, «Աչ ու ձախ» խորագրի ներքո) պարունակում են ոչ միայն քննադատական հիմնավոր մոտեցումներ, այլև խելամիտ առաջարկներ ազգային հաստատությունների, գավառական վարժարանների, պատրիարքարանի գործունեության, արևմտահայերի մշակութային զարգացման և այլ հարցերի վերաբերյալ: Արևմտահայաստանից և Փոքր Ասիայի հայաբնակ վայրերից «Արևելքը» չարունակաբար տպագրում էր հետաքրքիր և մտքեր շարժող թղթակցություններ, որոնք կարևոր տեղեկություններ, ազգագրական բնույթի իրողություններ և վիճակագրական տվյալներ են պարունակում ոչ միայն ազգային կառույցների, այլև տեղական աշխարհիկ ու հոգևոր մտավորականության և գործիչների մասին:

Առօրեական և գործնական նշանակություն ունեն «Արևելքի» տնտեսական հոդվածները, որոնք հետամտում են վարկի, ֆինանսների և առհասարակ առևտրաարդյունաբերական ոլորտում հայերի մասնակցության ու ներդրումների ընդլայնումը: Վարկային ընկերությունների, այդ թվում և օտարերկրյա վարկային հիմնարկների հնարավորությունների մեկնաբանությամբ «Արևելքը», ինչպես և այլ հրատարակություններ, փորձում էին կասեցնել վաշխառուների ավերիչ գործունեությունը հատկապես գավառներում (1902, 19 հնս., 3 հլս.): Մշտապես ուշադրության կենտրոնում պահելով գավառը, «Արևելքը» կարևորում էր նրա ազգային ու բարոյական պիմագծի պահպանության խնդիրները և այս առումով վերադառնում

հերրել այդ մերկացումները: Թուրքական ոչ անհայտ «Թանին» թերթը 1911 թ. սեպտեմբերի 22-ի, 24-ի և 28-ի իր համարներում հոդվածներ է տպագրել «Արևելքի» և Դաշնակցության պաշտոնաթերթ «Ազատամարտի» դեմ՝ նրանց մեղադրելով չափազանցված և հորինածո լուրերի տպագրության համար: «Թանին»-ը իր գոհունակությունն էր հայտնում, մասնավորապես, իշխանություններին՝ այդ մերկացումների պատճառով «Արևելքը» երկու անգամ դադարեցնելու համար (տե՛ս **Anadoluda Tanin**, Hazırlayan Çetin Börekçi. s. 333-345):

«ուսեալ և ըստ ամենայնի դարգացած նկեղեցականներ» պատրաստելու անհրաժեշտությանը՝ որպես օրինակ վկայակոչելով Արմաշի դպրեվանքը: Ա. Անտոնյանն առաջարկում էր դպրեվանքի շնորհալի շրջանավարտներից ոմանց, որպես քարոզիչներ, ուղարկել գավառներ, նախապատրաստել նրանց առաջնորդական վիճակներ ղեկավարելու դործին (1902, 6 հլս.): Կ. Պոլսի թաղային և մասնավոր վարժարաններին անդրադառնալուց զատ, «Արևելքը» դրվատում էր, մանավանդ, Կ. Պոլսի Մխիթարյան բարեկարգ վարժարանը, որ դարասկզբին ղեկավարում էր Գ. Մենեվիշյանը: Այդ դպրոցը՝ իր լուրջ և առողջ կրթական նկարագրով, «Արևելքը» հակադրում էր միապաղաղ ուսուցմամբ իրարից դրեթե չտարբերվող շատ վարժարաններին, որտեղ աչքի էր զարնում բանաստեղծ դառնալու համաճարակով բռնված «դալկադէմ պատանիներու» բազմությունը: Տ. Ա. ստորագրողը (հավանաբար, Տ. Արփիարյանը) այս առումով քննարկելի կարևոր խնդիր էր համարում ազգային դպրոցներում ֆիզիկական դաստիարակության զարդացումը, որպես վեր բարձրացող սերնդի մարմնական ու հոդևոր առողջության գրավական: Թերթի հրապարակումներից տեղեկանում ենք նաև, որ այս մարզում դարասկզբին նկատելի էին դարձել որոշ տեղաշարժեր: Նույն Մխիթարյան (Բանկալթի թաղամասում), ինչպես և Պերպերյան վարժարաններում և Ռոբերտ քոլեջում մտավոր կրթությունը զուգակցվում էր ֆիզիկական դաստիարակության տարրեր ձևերին ու մեթոդներին: «Արևելքն» ուշադրություն էր դարձնում նաև հարանվանական դպրոցների դրական կողմերին, միևնույն ժամանակ, հանրության ուշադրությունը հրավիրելով կաթոլիկական մանկավարժական գործունեության հոդի դրսևորումների վրա: Այս իմաստով ուշագրավ է թերթի մշտական աշխատակից Յուսակի (Մ. Նաթանյան)[1] «Ժեզուիթները» խմբագրականը (1902, 1 օգ.), որտեղ սուր քննադատության է արժանացել սրանց գործունեությունը Մարզվանի հայերի մեջ: Բավական հաջող և փաստերով ցույց է

[1] Տես Հովակիմյան Բ., Հայոց ծածկանունների բառարան, էջ 316:

տրվում լատին կրոնավորների կատարած քայքայիչ գործունեությունը Վանում և Սղերդում, հատկապես դավանափոխության ասպարեզում: Դրանց դիմակայելու, ինչպես և դավառական դպրոցների միջև անառողջ մրցակցությանը վերջ տալու համար «Արևելքն» առաջարկում էր միացնել և խոշորացնել այն դպրոցները, որոնք վաղուց էին ցուցադրել իրենց կրթական ցածր որակներն ու անարդյունավետությունը (1902, 6 սպտ.):

Գավառական կյանքի, բարքերի ու բարոյականության լայնահուն պատկերումներով, որտեղ ամենից ավելի երևում են խեղճությունն ու ստվերոտ կողմերը, «Արևելքը» ցույց էր տալիս նաև բնօրրանում ապրող հայերի տաղանդը և ընածին չնորհները: Լ. Սրապյանի «Սարգիս Նինէճանեան» հոդվածում ներկայացվում են Քղիում ապրած հայ մեքենագետի զարմանահրաշ դյուտերը: Տանը ծառայելու համար նա պատրաստել էր մեխանիկական սպասավոր, որը կարող էր ընդունել հյուրին և առաջնորդել հյուրասրահ: Գյուտարարը հորինել էր խնկացի փականք, որ ցնրնկն անջատվում էր, իսկ «գիշերը կը լարուէր»: Եվ երբ որևէ մեկը փորձեր դրսից հրել դուռը՝ բնակարանում հայտնվելու համար, ձեռքը կընկներ երկաթե թակարդի մեջ, որից հետո հանկարծ ճրագ էր վառվում և հնչում էր զանգակը՝ անկոչ հյուրի ներկայության մասին տեղեկացնելով քնից արթնացած տանեցիներին (1902, 19 օգ.):

1900-ականի առաջին տասնամյակին «Արևելքի» էջերում հարուստ տեղեկություններ են տրվում նաև Զմյուռնիայի և նրա շրջակայքի հայության մասին: Այս առումով աչքի է ընկնում Ատոմի ընդարձակ հոդվածաշարը 1902 թ. «Արևելքի» թվահամարներում «Իզմիրի Ս. Լուսաւորչեան հիվանդանոցը և իր տեղեկագիրը» վերնագրով: Այն ընդգրկում է զմյուռնահայ գաղթօջախի անցյալի և ժամանակակից պատմությունը, մշակույթը, տնտեսությունը, ազգային հաստատությունների և գործիչների անցած ուղին: Իր հետաքրքիր և փաստականորեն հագեցած չարադրանքով հոդվածաշարը և առհասարակ Ատոմի մյուս հրապարակումներն ունեն որոշակի պատմագիտական և ճանաչողական արժեք:

Դարասկզբի «Արևելքը» շարունակում էր դեռևս 1880-ականի 2-րդ կեսից իր ձեռավորված ավանդույթները արևելահայ իրականության վերաբերյալ կանոնավոր լրատվություն հաղորդելու գործում: Թերթում առանձնացված «Ռուսահայ քրոնիկ» խորագրի ներքո և դրանից դուրս տպագրվող բազմաթիվ թղթակցություններով արևմտահայ ընթերցողին տեղեկություններ էին տրվում արևելահայ կրթական ու մշակութային հիմնարկների, եկեղեցական ու մտավոր իրողությունների, ինչպես և դպրոցական կառավարման բնագավառում իշխանությունների կաշկանդող կամ գաղութային քաղաքականության մասին: Ի տարբերություն Կ. Պոլսի մյուս թերթերի, որոնք արևելահայ կյանքի լուսաբանումը սահմանափակում էին Թիֆլիսի, Երևանի կամ Մոսկվայի և այլ կենտրոնների հայության կյանքի վերհանումներով, «Արևելքը» թղթակցություններ և առհասարակ լրատվություն էր տպագրում նաև Ռուսաստանի հայաբնակ այլ վայրերից (Ղրիմ, Հյուսիսային Կովկաս): Թերթին հետաքրքրում էին նաև Եվրոպայում և արևելյան երկրներում բնակվող ազգակիցների առօրեական, ինչպես և հոգևոր ու մշակութային խնդիրները: Նրա էջերում, սակայն, առաջատար թեմաներից մեկն էր հայ գրականությունը՝ ազգային կյանքում իր ունեցած տեղի և նշանակության արժեքավորումներով, իր կրած ազդեցություններով և առկա վիճակով, որով «Արևելքը» ձայնակցում էր «Մասիսի», «Լույսի», «Հանրագիտակի», «Ծաղիկի» և այլ պարբերականների առաջադրումներին: Այս թերթը ևս պաշտպանում էր գավառական գրականության քաղաքացիությունն ստանալու տեսակետը՝ ելնելով դրա և պոլսահայ գրականության խելամիտ փոխհարաբերությունների կարևորությունից՝ երբեմն, սակայն, բանը հասցնելով ծայրահեղությունների: Այսպես, Գ. Անգրևասյանը պոլսահայ արձակ գրականության մեջ գնահատում է միայն Զոհրապի «Անհետացած սերունդ մը» վեպը և նովելները, իսկ մնացած այլ գործերում գրեթե չի տեսնում «նիւթի եւ տոհմայնութեան» արժեքները: Պոլսահայ արձակը նա համարում է հռետորություն, գաղափարների պակասի և ֆրանսիական ռոման-

տիկ գրականության ազդեցության արդյունք: Փոխարենը, Գ. Անդրեասյանը դրվատում է պոլսահայ պոեզիայի բարձր արվեստը, որ հատկապես ի հայտ է գալիս նրա «ոճին գեղեցկութենան մէջ» (1901, 3 հլս.): Գրեթե նույն տեսակետին էր, ինչպես կտեսնենք ստորև, Ա. Անտոնյանը: Այս հիմնահարցի վերաբերյալ թերթում հանդես են եկել Ա. Անտոնյանը, Ենովք Արմենը, Գ. Անդրեասյանը, Ռ. Զարդարյանը, Սիպիլը (Զապել Ասատուր) և ուրիշներ: «Արեւելքը» իր մասնակցությունը բերեց գավառական գրականության շուրջ «Մասիսում» և այլ պարբերականներում ծավալված բանավեճին և առհասարակ գրականության զարգացման վերաբերյալ քննարկումներին, որտեղ աչքի են ընկնում Զ. Նեմցեի, Գր. Մալխասի և Գ. Անդրեասյանի հրապարակումները (1901, 3 հլս., 1906, 7--8, 21 փետ. և այլն): «Արեւելքը» մասնավոր ուշադրություն է դարձրել հայագիտական հետազոտություններին, ներկայացրել Իզմիրյան և Սահակ-Մեսրոպյան մրցանակաբաշխությանը առաջարկվող գործերը: Խմբագրությունը կարևորում էր բարբառների ուսումնասիրությունը՝ իր խոսքն ասելով Թեոդիկի «Պոլսոյ հայեվար»-ի, Ն. Խաչյանի «Անգիր յիշատակարան կամ Համշէնի հայոց գաւառաբարբառը», Ա. Բահաթրյանցի «Բառագիրք Ղարապաղու գաւառական բարբառին» աշխատությունների վերաբերյալ (1905, 22, 24 հլս.): Այս կարգի հրապարակումներով «Արեւելքը» խթանում էր ժամանակի հայագիտության հետաքրքրությունները թեկուզ և այն իմաստով, որ գրական լեզվի հարստացման մտահոգությամբ բարբառագիտության հրատապ խնդիրների վրա էր հրավիրում հանրության ուշադրությունը: «Արեւելքում» իրենց ստեղծագործություններն էին տպագրում ժամանակի գրեթե բոլոր արևմտահայ գրողները՝ իրենց գործուն մասնակցությունը բերելով գրական ընթացիկ զարգացումներին: Ընդամին, թերթի ինքնուրույն գրականությունը առանձնանում է իրականության հրատապ խնդիրներին անդրադառնալու յուրահատկությամբ: Այս տեսակետից կարելի է առանձնացնել Սմբատ Բյուրատի «Զէյթունի հաւատքը կամ զօրանոցը» դրամատիկական երկը, Ե. Օտյանի «Ընտանիք, պատիւ,

բարոյական», Երուխանի «Ամիրային աղջիկը» վեպերը և այլն (1910 թ. թվահամարներում): 1912 թ. «Արևելքը» տպագրեց Ե. Օտյանի «Ապտիւլ Համիտ եւ Շէրլօք Հոլմս» և դրանից առաջ՝ (1908 թ.), Բաֆֆու «Սամվել» վեպերը: Ինչ վերաբերում է չափածոյին, ապա «Արևելքն» այստեղ գրեթե չի տարբերվում իր գրական քաղաքականությամբ՝ տպագրելով առհասարակ մամուլում հանդես եկող շատ առաջատար բանաստեղծների:

1900-ական թթ. «Արևելքը» տպագրել է (Թերթոնի բաժնում) թարգմանական բազմաթիվ վեպեր, հատկապես ֆրանսիական դրականությունից (Ժ. Բրադել, Լ. Էնո, Լ. Բուանար, Ժ. Մարի, Ա. Դյումա, դը Ռիշ, Ժ. Վերն և շատ ուրիշներ), որ պայմանավորված էր ֆրանսիական գրականության նկատմամբ արևմտահայ մտավորականության ավանդական կողմնորոշումով: «Արևելքում» ևս երիտթուրքական իշխանությունների վարած հայահալած քաղաքականության քննադատությունը սուր չեշտադրումներ ստացավ Ադանայի կոտորածից հետո: 1910 թ., Ե. Սրմաքեչխանլյանի (Երուխան) խմբագրապետության ժամանակ Թերթն անվերապահորեն պաշտպանեց Կիլիկիայի հայ տուժածների իրավունքն ընդդեմ այն ապահովագրական ընկերությունների, որոնք հրաժարվում էին փոխհատուցել նրանց կրած կորուստները: Հայցվորների դատը պաշտպանում էր փաստաբան Գ. Կյուլպենկյանը: Պետք է կարծել, որ տուժածների և ընկերությունների պայմանագրերում առկա է եղել այն կետը, ըստ որի, վերջիններիս իրավունք էր վերապահվում տուժած կողմին չփոխհատուցել, եթե նրանք իրենց գույքը կորցրել էին հեղափոխական իրադարձությունների հետևանքով: Կոտորածների կազմակերպիչ իշխանություններին ու կատարողներին նկատի առնելով, Թերթի խմբագրապետ Ե. Սրմաքեչխանլյանը գրում էր, որ նախընթաց արյունալի դեպքերը ոչ թե հեղափոխություն էին, այլ «խուժանական յառնում մը՝ կէտ նպատակ ունենալով երկրին մէկ տարրը ջնջել եւ տիրանալ անոր հարստութեանը» (1910, 5 փետ.): Եվ դարձյալ, երիտթուրքական հանցագործ կառավարողներից որևէ հաչիվ չպահանջող հայ մեբուսներին (օսմանյան

խորհրդարանի պատգամավոր) էր քննադատում «Արևելքի» հաջորդ խմբագրապետը՝ Ե. Օտյանը: Բացարձակապես ապիկար համարելով այդ՝ ըստ էության երիտթուրքական խորհրդարանը, Օտյանը սրա լուծարման առթիվ ծանակում էր նաև անմռունչ այն հայ երեսփոխաններին, «որոնցմէ այնքան բան կակնկալէինք, որոնց վրայ այնքան յոյսեր դրած էինք... ինչ մասալ (հնքլաթ – Ա. Խ.) պիտի կրնան պատմել իրենց ընտրողներուն, որպէսզի կարենան գոնէ քիչ մը պարտկելու իրենց նամեայ անճարակութիւնը»,- գրում է նա (1912, 6 հնվ.):

Ե. Օտյանի խմբագրապետության և, հավանաբար, թերթի հրատարակության վերջին տարիներին (1911–1912) «Արևելքը» հասցրեց անդրադառնալ Հայկական հարցի վերաբծարծման նոր, բարենպաստ պայմաններին՝ «Լուսաբեր-Արեւից» արտատպելով այդ ոդով համակված Լ. Մկրտիչյանի հոդվածը (նույն տեղում):

Փոխհսկական պարբերականությամբ և բովանդակային ուղղվածությամբ է առանձնանում դարասկզբի առաջին տասնամյակի «Մաղիկը» (հիմն. 1886 թ.): Սրանով էր պայմանավորված նաև խմբագիրների արագ հերթագայումը այս ժամանակահատվածում՝ Ղ. Բոլատ, Ա. Անտոնյան, Մ. Շամտանճյան, Հ. Մառք, Հ. Տեր-Հակոբյան և այլք: 1905–1907 թթ. «Մաղիկը» հրատարակվում էր «Կանանց յատուկ պատկերազարդ շաբաթաթերթ»[1], նույն թվականին ու հաճախականությամբ, «Տղոց եւ պատանիներու յատուկ» խորագրերով: Պարբերականին աշխատակցել է գրողների և հրապարակախոս-լրագրողների ընտրանին՝ Ա. Անտոնյան, Թլկատինցի, Մ. Մնձարենց, Ռ. Որբերյան, Տ. Զյոկյուրյան, Տ. Զրաքյան, Սիսիլ, Ռ. Զարդարյան, Արտ. Հարությունյան և ուրիշներ:

«Մաղիկը» հեղինակավոր հրատարակություն էր, որ բնորոշվում է նրա քննարկած հարցերի հրատապությամբ և բազմազա-

[1] Կանանց «Մաղիկ» շաբաթաթերթի հրատարակության գործում առավել քան գործուն մասնակցություն է ունեցել Մ. Գոչունյանը: Այդ պարբերականի հրատարակության, աշխատակիցների և այլ հանգամանքների մասին տե՛ս Հայկանոյշ Մառք, Կեանքն ու գործը, էջ 41–44:

նութեամբ, թեև առաջատարը մնում էին գեղարվեստական գրականութիւնն ու դրա զարգացման խնդիրները: Այս նախասիրութեամբ հանդերձ, «Մաղիկի» խմբագիր Ա. Անտոնեանը նկատում էր, որ պարբերականը «միմիայն գրականութեան սահմաններու մէջ չպիտի պարփակուի» և լուսաբանելու է նաև ազգային, մշակութային, մանկավարժական և բազմաթիվ այլ իրողութիւններ: Ի տարբերութիւն ժամանակի այլ հրատարակութիւնների, «Մաղիկը» համեմատաբար դուսպ էր թարգմանական (հատկապես ֆրանսիական) գրականութեան հարցում՝ այս վերապահումով հանդերձ հակվելով դեպի ռուսական, հունական, անգլիական կամ հունական գրական արժէքները: Հայ գրականութեան առկա վիճակը քննադատաբար գնահատելով, նկատելով նրա արվեստի չգոհացնող որակները, Ա. Անտոնեանը փորձում էր գտնել այս երևույթի նյութական և բարոյական պատճառները (1904, թիվ 1, էջ 14–15, թիվ 2, էջ 50–58): Նույն հայեցակետն ունի, և այս անգամ լրագրութեան կտրվածքով, Ենովք Արմենը (1905, թիվ 12, էջ 574–578, թիվ 19, էջ 312–318): Գրական նոր ուղղութիւնների, գրականութեան զարգացման նոր խնդիրների և հեռանկարների վերաբերյալ պատկերացումներում առավել քան մտահոգված ազգային որակների պահպանութեան խնդրով, ժամանակի հայ գրաքննադատները հակվում էին հոռետեսութեան վերածված տագնապով դիտելու նոր և անսովոր երևույթները ոչ միայն գրականութեան, այլև մամուլի տարածքում: Այս նկատառումներով «Մաղիկի» հեղինակները լուրջ ուշադրութիւն են դարձնում նաև օտար գրականութիւններին: Հունական գրականութեան տեսութեամբ հանդես է եկել, հենց իր՝ «Մաղիկի» պատվերով, Ա. Մելանիգրոսը («Արդի յոյն գրականութիւնը», 1904, թիվ 6, էջ 268–273, 1905, թիվ 12, էջ 312–318 և այլն): Այստեղ հայ ընթերցողին են ներկայացվում XIX դ. հունական գրականութեան ճանաչված դեմքերը (Պանայոտիս, Սուձո, Բերնարդակիս, Ռոիդիս, Բարասկոս և այլք), որոնց ստեղծագործութեան հետ ծանոթութիւնը, խմբագրութեան կարծիքով, «Մեկէ աւելի չահեկան կողմեր ունի մեզի համար»:

«Մաղիկն» արտացոլել է օրվա գրական կյանքի նշանակալի իրողությունները, տպագրել Ե. Տեմիրճիպաշյանի, Զ. Եսայանի, Մ. Արտ. Հարությունյանի, Թլկատինցու, Քասիմի, Ադ. Փանոսյանի, Անայիսի, Տ. Զոկկյուրյանի, Մ. Մեծարենցի, Վ. Թոթովենցի, Հ. Ասատուրի, Արշ. Թեոդիկի և այլոց արժակ ու չափածո գործերը: Մ. Մեծարենցն այստեղ է տպագրել իր «Ջուքերը» արժակ և «Մանիշակ ու մամուռ» բանաստեղծությունները (1908, 1 հնվ., էջ 50, 419): Հետաքրքիր են Մեծարենցի է. Ֆելդի երկու բանաստեղծությունների հիանալի թարգմանությունները անգլերեն ընտրյայ («Հոլանտական օրևր» և «Փոքրիկ կապոյտ տղան», 1907, թիվ 39–40, էջ 20, թիվ 49–50, էջ 80):

«Մաղիկի» մշակութային արժեքը ընդլայնվում է հայ կերպարվեստին ու նրա գործիչներին նվիրված նյութերի տպագրությամբ: Հատկապես ուշագրավ են նկարիչ Ումետ Հովհաննես Պեյզատի[1] (1809–1874) մասին հրապարակումները, նրան նվիրված Հ. Անդրեասյանի հոդվածը: Այս նկարիչը, գրում է «Մաղիկը», «ժթ դարու մեր փառքերէն մէկը եղաւ»: Պոլսեցի արվեստագետը (Միհնաս Ակնցի ամիրայի թոռը) Կ. Պոլսի հայկական մի շարք եկեղեցիների (Պալաթ, Քարակոմրուկ, Ս. Խաչ, Ս. Կարապետ և այլն) որմնանկարների հեղինակն է: Նա վրձնել է Հովհ. Այվազովսկու դիմանկարը և նվիրել նրան, իսկ վերջինս Պեյզատին է նվիրել Թեոդոսիան պատկերող իր մի կտավը (1908, հնվ. 1, էջ 5): Տ. Զոկկյուրյանն իր վերլուծական հոդվածում (նույն տեղում, էջ 12–21) նրան համարում է հայ Դելակրուա: «Մաղիկը» տպագրել է նաև նկարչին ձոնված Մ. Քյուրքճյանի բանաստեղծությունը (նույն տեղում, էջ 21–22):

«Մաղիկը» մնում է ժամանակի գրական-մշակութային զարգացումները առաջ մղող արևմտահայ լավագույն հրատարակություններից մեկը:

---

[1] Այս նկարչի կենսագրությունն ու ստեղծագործության մասին տե՛ս Մ. Ղազարյանի «Պեյզատ Հովհաննես» հոդվածը (Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 9, էջ 229):

1900-ական թթ. Կ. Պոլսում շարունակվում էր հրատարակվել «Լույս» կրոնական, քաղաքական շաբաթաթերթը: 1905 թ. պարբերականը սկսում է նոր շրջան Արտոնատերն էր Վ. Տեր-Մինասյանը (Վ. Պարտիզակցի), խմբագիրը՝ Բ. վարդ. Կյուլեսերյանը: Աշխատակցում էին Արմաշի դպրեվանքի վարդապետներն ու սարկավագները: Վ. վարդ. Պարտիզակցին հայտնում էր, որ այս պարբերականի հրատարակությանը ինքը ձեռնարկել էր 1895 թ. և որ «Լույսը» զուտ կրոնականի է վերածվել 1905–1907 թթ.՝ պատրիարք Մ. Օրմանյանի քաջալերությամբ (1907, թիվ 1, էջ 1–3): «Լույսը» տպագրել է կրոնաաստվածաբանական բնույթի նյութեր, տեսություններ, քարոզներ, ավետարանական սյուժեների մեկնաբանություններ, Հայաստանյայց եկեղեցու տոներին, ծեսերին ու արարողություններին նվիրված հոդվածներ: Պաշտպանում էր ազգային եկեղեցու ուղղափառությունը՝ միաժամանակ հետևելով պատրիարք Մ. Օրմանյանի առաջարկած՝ «դաւանական նրբութեանց մէջ չմանելու, այլ աւելի բարոյական ուղղութեան վրայ քալելու» սկզբունքին (նույն տեղում, էջ 4):

Շաբաթաթերթին ընթերցողին տեղեկատվություն էր տրամադրում Արևմտահայաստանի և Թուրքիայի այլ հայաբնակ վայրերի առաջնորդական վիճակների վերաբերյալ, լուսաբանում էջմիածնի Մայր աթոռի և Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի եկեղեցական փոխհարաբերությունները («Քրոնիկ» բաժնում): Նրա հրապարակումներում ընդգծվում են քարոզչության հիմնահարցը, քարոզչության արվեստն ու ծրագրերը: «Լույսին» հիմնականում աշխատակցում էին արմաշական հոգևորականները, Բ. Կյուլեսերյանի հետ միասին՝ Ղևոնդ, Կորյուն, Մեսրոպ վարդապետները և ուրիշներ: Այս պատճառով նրա էջերում իրեն զգացնել է տալիս եկեղեցու բարեկարգման խնդիրը: Պարբերականն ընդհանուր առմամբ խուսափում էր կաթոլիկ և բողոքական եկեղեցիների հետ կրոնադավանաբանական բնույթի վեճերից, թեև երբեմն, ազգային եկեղեցու պաշտպանության դիրքերից հերքում էր նրան ուղղված՝ հերձվածող լինելու մեջ մեղադրանքները այլ դավանանքների ջա-

տագովների կողմից: Փոխարենը, «Լույսն» արժեքավոր հոդվածներ էր տպագրում քրիստոնեական եկեղեցիների փոխհարաբերությունների վերաբերյալ՝ մեկնակետ ունենալով փոխադարձ հանդուրժողության և համագործակցության սկզբունքները: Կրոնաթերթը զուսպ, բայց և հետևողականորեն մերժում էր ընդհանրական եկեղեցու գաղափարը՝ պաշտպանելով ազգային եկեղեցիների անկախության և ինքնուրույնության ավանդութային տեսակետը (1905, թիվ 23, էջ 553–557): «Լույսը» բոնի կրոնական միությունների սկզբունքին է հակադրել քույր եկեղեցիների բարոյական, բայց ոչ վարչական կապերը հաստատող մոտեցումը: Այս հրատարակությունը եկեղեցիների միության հարցն ընկալում էր ոչ թե դրանց ազգային բնույթների (լեզու, նվիրապետություն, ավանդույթներ), միասնականացման, այլ դավանաբանական միության, քրիստոնեության հիմնական վարդապետության տեսակետից, որպիսին հատուկ էր քույր եկեղեցիներին մինչև Քաղկեդոնի ժողովը (1906, թիվ 6, էջ 134–138): Այս ուղղությամբ «Լույսն» անդրադարձել է հայ եկեղեցու պատմությանը՝ ընթերցողին ներկայացնելով եկեղեցու հիմնադիրների, հայրերի և սրբերի վարքն ու գործերը:

Հայագիտական արժեք ունեն պարբերականի էջերում զետեղված ձեռագիր ավետարանների նկարագրությունները («Եկեղեցական ձեռագիրք» խորագրով): Այս տեսակետից հետաքրքրողների համար ուշագրավ են հատկապես Կորյուն վարդապետի հրատարակած՝ Բալուի Ս. Աստվածածին եկեղեցու ձեռագիր ավետարանների, Տ. եպ. Պալյանի տպագրած՝ Կեսարիայի վիճակի վանքերի ու եկեղեցիների ձեռագրերի մատենագիտական նկարագրությունները: «Լույսը» տպագրել է նաև տոմարական աստվածաբանական բնույթի հոդվածներ, հայ հոգևոր երաժշտությանը, չարականներին և այլ ժանրերի երաժշտությանը նվիրված նյութեր: Տպագրում էր Ն. վարդ. Դանիելյանի, Ե. եպ. Դուրյանի, Թորգոմ վարդապետի, Գր. Հ. Գալուստյանի և այլոց կրոնաարարոյախոսական բնույթի չափածո գործերը: Տպագրել է Վ. Պարսիզակյան՝ կրոնական բովանդակությամբ համառոտ զրույցները մանուկների համար:

1907 թ. հուլիսից (թիվ 27) «Լույսը» վերածվել է կանանց հատուկ շաբաթաթերթի: Հրատարակիչների բացատրությամբ, պարբերականն իր բնույթը փոխել է այն պատճառով, որ «ոչ ձեռնհաս խմբագիր մը կրցանք գտնել... և ոչ ալ բաւական թուով բաժնորդ» (1907, թիվ 27, էջ 1):

Այսուհանդերձ, 1907 թ. հուլիսի 4-ից (թիվ 27) նորոգված «Լույսի» խմբագրումը ստանձնեց Հայկանուշ Մառքը, «Ծաղիկից» հետո գլխավորելով մյուս՝ «Կանանց յատուկ» խորագրով հաջորդ պարբերականը[1]: Խմբագրակազմը՝ կանայք, Հ. Մառքի հետ միասին տեղափոխվել էր «Ծաղիկից». նրանք էին՝ Ս. Տեր-Բարթողը, Մ. Փափազյանը, Ի. Էնքսերճյանը, Ա. Ղևոնդյանը, Ե. Խունկյանը, Ա. Մանուկյանը և ուրիշներ: Կինն ընտանիքում՝ որպես մայր և զավակներ կրթող, հասարակության մեջ և մշակույթում՝ որպես անփոխարինելի գործառույթ իրականացնող անհատ, նրա հոգեբանական առանձնահատկությունները և ներգործությունը միջավայրի վրա, ահա ոչ լրիվ ցանկն այն բնագավառների, որոնք հիմնականում փորձում էր վերհանել և լուսաբանել կանանց «Լույսը»:

Պարբերականը հետևում էր «չափավոր» ֆեմինիստական ուղղությանը՝ կանանց անհատական ու հանրային գործունության շրջագծում հաշվի առնելով նաև հայ կնոջ միջավայրի ու կենսապայմանների հոգեբանության ու վարքագծի բնորոշ կողմերը և խուսափելով կտրուկ հայցադրումներից: Ըստ այս մոտեցումների,

---

[1] «Կանանց յատուկ «Լոյսը» հրատարակվել է 1907 թ. հուլիսից մինչև տարեվերջ: Շաբաթաթերթի տնօրենը և պատասխանատուը մնում էին նույն անձինք՝ Հ. Գայսերյանը և Վ. վարդ Տեր-Սիմեոյանը: «Խմբագրական յայտարարութեամբ» հանդես է եկել Հայկանուշ Մառքը, հայտնելով, որ «կանանց յատուկ «Ծաղիկից» հետո ինքը ստանձնում է «Կանանց յատուկ «Լոյսի» խմբագրումը «վարչական կարգադրութեամբ մը» և որ փոփոխությունը միայն անվան մեջ է, «այսինքն՝ լոյս, փոխան «Ծաղկի» («Լոյս», 1907, 4 հուլիսի, թիվ 27, էջ 1): «Ծաղկի փոխան» ասելով Հ. Մառքը նկատի ունի ընդամենը պարբերականի բովանդակությունը՝ կանանց համար հրատարակվելը, և ոչ թե այն, որ «Լոյսը» «Ծաղիկի» շարունակությունն է: Հ. Մառքի «Կանանց յատուկ» ոտդվածությունից հետո «Ծաղիկը» շարունակել է հրատարակվելը՝ «Տղոց եւ պատանիներու յատուկ» խորագրով մինչև 1907 թ. վերջը, կանանց «Լոյսին» վուգահեռ, հետևաբար դրանք տարբեր պարբերականներ են և ոչ թե մեկը մյուսի շարունակությունը:

«Լույսն» իր նյութերը տրոհել է որոշակի բաժին-խորագրերի՝ «Ծեմինիսդ էջեր», «Առողջապահական», «Ամենին տնտեսություն», «Ընկերային հարցեր», «Մայրերուն», «Նորաձեւության բաժին» և այլն: «Լույսը» հատուկ ուշադրություն էր դարձնում ընտանիքում կնոջ ունեցած տեղին՝ զավակների կրթության ու դաստիարակության տեսակետից, այս կերպ ևս կարևորելով նրա մասնակցությունը ապագա հասարակության դիմագծի ձևավորման գործին: Անդրադարձներ կան նաև կնոջ ընտանեկան ու հանրային դերակատարության անցյալին: Ի. Էնքսերճյանի «Նշանախոսություն», Մ. Չիլճյանի, «Ինչ կրթութիւն տանք մեր զաւկներուն» հոդվածներում (թիվ 32, էջ 126–131, թիվ 32, էջ 137–139) քարձրացվում են քաղաքակրթության տարբեր փուլերում կնոջ բնութագրի վերաբերյալ փոփոխվող պատկերացումները և այս վերջինների կրավորական նշանակությունը հասարակության մեջ ղլամական հարաբերությունների ծավալման համեմատ: Ի. Էնքսերճյանը կողմնակից է այն հասարակությանը, որը ձգտում է ապահովել կնոջ հոգևոր և արտաքին գեղեցկության ներդաշնակությունը և որից կարող է չահել այդ նույն հասարակությունը:

«Լույսն» առաջադրում էր դպրոցներում վարժուհիների հեղինակության, ինչպես և իրավունքների ընդլայնման խնդիրը՝ այն հագեցնելով բարոյական կարճ պատմություններով ու զրույցներով: Կնոջ արժանապատվության, հասարակության կողմից նրա արժանիքներն ու չնորհները գնահատելու տեսակետից արդիական հարցեր էր առաջ քաշում Հ. Մառքը իր «Կինը ամուրի կնանքին մէջ» հոդվածում (թիվ 27, էջ 4–6): Գործնական ուղղվածություն ունեն «Առողջապահութիւն» բաժնի նյութերը, որոնք վերաբերում են երեխաների սնուցմանը, խնամքին, ընտանիքում մանկական հիվանդությունների կանխարգելման տարրական միջոցներին և այլն: Այս թեմաներն արծարծող իր հոդվածում «Ինչ պէտք է դիտնա մայրը» վերնագրով (թիվ 27, էջ 7–9), Մ. Փափազյանն անդրադառնում է դրանց առնչվող սոցիալական խնդիրներին, մանկան նկատմամբ ոչ բնականոն մոտեցումների հետևանքներին: Կանանց

հոգևոր արժանիքների ճշմարիտ գնահատմանն են հետամուտ «Լույսի» այն հրապարակումները, որտեղ ցույց են տրվում նրանց ներդրումները քաղաքակրթության զարգացման մեջ: Զ. Խաժակի «Իրոկրատի աշակերտուհիները» հոդվածում վերհանվում են կին բժիշկների ներդրումներն անտիկ աշխարհում և Հին Հռոմում, ինչպես և միջնադարի Եվրոպայում (թիվ 33, էջ 147–150), իսկ դրան հետևող հոդվածում լուսաբանվում է նշանավոր կանանց ունեցած տեղը արվեստի և գրականության մեջ՝ Մերիմեի «Կարմեն» ստեղծագործության հիման վրա Բիզեի գրած օպերայի հերոսուհու նախատիպի բացահայտումով (թիվ 33, էջ 151–154):

«Լույսը» տպագրում էր ինքնուրույն և թարգմանական գեղարվեստական ստեղծագործություններ. Առաջիններից մեջ հատկապես տպավորիչ են տաղանդավոր և վաղամեռիկ բանաստեղծուհի Հերանույշ Արշակյանի բանաստեղծությունները: «Լույսի» առաջին թվահամարներում տպագրվել են նրա «Մահուան մօտ», «Յուզման ժամեր» և «Կոյրին երգը» անչափ հուզիչ և հեղինակի մոտալուտ վախճանի ողբերգությամբ համակված բանաստեղծությունները (թիվ 27, էջ 18, թիվ 32, էջ 136, թիվ 33, էջ 160): Շատ հնարավոր է, որ հետագայում ևս այստեղ տպագրված լինեն Հ. Արշակյանի նաև այլ բանաստեղծություններ, որ չենք կարող հավաստել՝ պարբերականի մյուս համարները ձեռքի տակ չունենալու պատճառով: Համենայն դեպս, բանաստեղծուհու հոգևոր հարուստ աշխարհի ցուցադրումը ժամանակի ընթերցողին նույնպես համոզում էր «Լույսի» առարկայական ճշմարտություններից մեկը, այն, որ ազգային մշակույթում ևս հայ կինն ունի անհերքելի ներդրումներ:

Պարբերականը կենսախինդ հումորով է նայել կանանց կենցաղային թերություններին՝ տպագրելով մեծանուն երգիծաբան Հ. Պարոնյանի երգիծապատումը՝ «Ձվարթ նոթը» վերնագրի ներքո (թիվ 33, էջ 157–159): Հ. Պարոնյանն այն գրել է 1873 թ., թեման՝ օրվա նորաձևությանը տրված կանանց կիրքը այսպես կոչված «Թյուռնյուռի» (կանացի զգեստի ետևնոցը, որ մոդայիկ էր այն

ժամանակ և այժմ «վերածննդու վրայ է», ըստ խմբագրության) նկատմամբ: Տիկինը բռնված է մեծ նեղնոց ունենալու մոլուցքով, որ ցուցադրելու համար երգիծաբանը դիմում է շատ տպավորիչ գրոտեսկի. հերոսուհին իր շրջազգեստի տակն է դնում տան մեջ եղած-չեղածը, սակայն գոհանում է միայն այն ժամանակ, երբ ամուսնուն ևս տոպրակի մեջ դնելով միացնում է այդ ամենին և ձեռնոցները հագնելով դուրս է գալիս զբոսանքի: «Բնաւ չէի լսած, որ կին մը իր եռևնոցը իր էրիկովը պարդարէ: Գթութիւն, գթութիւն, ո՛ տիկնայք եւ օրիորդք»,- եզրափակում է երգիծաբանը (նշ. տ., էջ 158):

Հ. Մառքի կանանց հատուկ «Լույսը» ևս հրատարակվեց վեցամսյա մի շրջան՝ 1907 թ. հուլիս-դեկտեմբեր ամիսներին: Դրան փոխարինելու եկավ պարբերականի վերջին շրջանը (դարձյալ վեցամսյա, 1908 թ. հունվար-հունիս)՝ Արամ Անտոնյանի խմբագրությամբ: Դրանից հետո «Լույսը» չի հրատարակվել:

Ա. Անտոնյանի այս վերջին «Լույսը» ուներ գրական-բանասիրական ուղղվածություն: Այս շարաթաթերթը ևս լայնորեն տեղ է տվել ժամանակի արևմտահայ ժողովրդականության վայելող բանաստեղծներին և արձակագիրներին: Ազգային գրականության խնդիրների, ընթացիկ գրական գործընթացների և դրանց առնչվող հիմնախնդիրների քննարկմամբ հանդես են եկել Ա. Անտոնյանը, Գր. Զոհրապը, Հ. Ասատուրը, Է. Գոլանճյանը և ուրիշներ: «Լույսի» մնայուն էջերից են նաև Մ. Մեծարենցի «Նարեկացիին հետ» հոդվածը՝ միջնադարի մեծ հանճարի արվեստի բանաստեղծական, բայց և միաժամանակ մտավոր խորը ընկալմամբ և մեկնաբանություններով (թիվ 4, էջ 132–137): Եվ մեկ և մյուս դեպքերում Մեծարենցը բացահայտում է նաև իր սեփական ստեղծագործական նախասիրությունները և հոգևոր ժառանգական կապերը ազգային բանաստեղծության ավանդույթների հետ:

Այս շրջանի «Լույսում» նույնպես նկատելի են Ա. Անտոնյանի մտահոգությունները արևմտահայ գրականության ազգային բնույթի և ժողովրդայնության, ազգի առաջադիմության ըստ ամենայ-

նի նպաստելու տեսակետից: Այստեղից՝ խմբագրի բանավեճը արևմտյան դրական տիրապետող ուղղությունների, դրականության և արվեստի վերաբերյալ ըմբռնումների շուրջ: Ա. Անտոնյանը կարծում է, որ դրանց արժեքները պետք է ի սպաս դրվեն ոչ թե «ընտրեալներու սակաւաթիւ շրջանակի համար», այլ ընկալվեն որպես «իմացական ու ընկերային բարեշրջման աղդակներ»: Իր «Դէպի նոր հորիզոններ» խմբագրականում (թիվ 1, էջ 3) ազգային դրականության բնականոն զարգացումը Ա. Անտոնյանն առնչում է ազգի իրական կացության ու ձգտումների վերարտադրության և ներդաշնակության հետ: Մինչդեռ արդի դրականության և ժողովրդի հոգևոր պահանջմունքների միջև առաջացել է անխուսափելի խզում, նկատում է Ա. Անտոնյանը: Դրա պատճառը ժողովրդի կացությանն ու ձգտումներին անհաղորդ դրականությունն է, որն իր արտացոլումներով չի համապատասխանում ժողովրդի իրական տրամադրություններին՝ ստեղծելով պահանջարկի և առաջարկի հակասություն («Ներդաշնակութեան պակասը», թիվ 2, էջ 41–48): Դրա հիմքում ընկած է արևմտահայ դրականության՝ սակավ բացառություններով եվրոպական դրականությանը կույրզկուրայն հետևելը, հայ դրականության մեջ «օտար մտքի չրջափոխութիւնները նոյնութեամբ փոխադրելու» իրողությունը: Ըստ էության հայ դրականության ամլության վերաբերյալ իր դիտողություններով Ա. Անտոնյանը կարևորում էր դրականության և արվեստի ազգային արժեքները: Իրենց ենթատեքստում այս առարկումներն ուղղվում էին ժամանակի դեկադանսի ազդեցության տակ գտնվող արևմտահայ հեղինակների դեմ, որոնց նկատմամբ Ա. Անտոնյանն ուներ առավել քան ժխտական վերաբերմունք: Հարկ է նկատել, որ «Լուսյուսում» Ա. Անտոնյանն ավելի է խորացնում իր վերոնշյալ տեսակետը արևմտահայ դրականության՝ ամբողջովին օտար ազդեցությունների, և առավել ևս, ֆրանսիական դրականության ազդեցության տակ գտնվելու վերաբերյալ: «Տասը դրագետով տասը եւ աւելի դրական դպրոցներու արձագանգը եղեր... ենք»,- գրում է նա (թիվ 3, էջ 87): Ծայրահեղ այս մոտեցումը պետք է ամբողջա-

նար այն ընդհանրացմամբ, որ «Թրքահայ միտքը... ցեղին զարգացման գործը չեղեցուցած է բնական ընթացքէն» (նույն տեղում): Գրականության զարգացման նախորդ ընթացքի վերաբերյալ իր մտքերով Ա. Անտոնյանը չարունակում էր արձագանքել արևմտահայ գրականության շուրջ դեռևս դարասկզբին ծավալված բանավեճին՝ ակնհայտորեն արհնաստական և զուտ ազդեցության արդյունք համարելով ոչ միայն 1900-ականի, այլև 1880-ական թթ. դրական արտադրանքը: Նկատենք, որ արևմտահայ գրականության վրա օտար ազդեցությունների լուրջ դործոնը նկատի ուներ նաև Գր. Զոհրապը, երբ այն համադրում էր արևելահայ դրականության: Այսուհանդերձ, Զոհրապը չատ ավելի զուսպ է իր բնութագրումներում. Ռուսահայ գրականությունը, նկատում էր նա «լեռնային ծաղկի անծանուկ ու թարմ հոտովը բաւած է գմեզ համբելու համար, մերը՝ ջերմոցի մէջ հասած բոյս մըն է» (Թիվ 1, էջ 11–12):

Եվ Ա. Անտոնյանին և Գր. Զոհրապին ավելի կամ պակաս սուր հարցադրումներից անկախ մտահոգում էին հայ գրականության չեղումները ռեալիստական ընթացքից, որ պետք է խաթարեր ազգի մտավոր և հասարակական բարեշրջումը:

Օտար ազդեցությունները մերժելու առարկայական օրինակը «Լույսը» տալիս էր Մ. Պարսամյանի «Պատրանքի ծաղիկներ» ժողովածուի մասին Ե. Գոլանճյանի գրած չափազանց դրախոսականով: Գրախոսը այդ ժողովածուն համարում է պատրաստի և չապրված զգացումների ու ոճի «արագ դրականութենան տխուր նմոյշ մը», «անխնամ, անպատուղ թէ լեզուով, թէ խորքով», որտեղ տիրապետում է իրերի ընդամենը զգայական ընկալումը (Թիվ 8, էջ 129–132):

Գրականության առջև դրված խնդիրների, հետամտած բարոյական նպատակների և արվեստի արտահայտաձևերին էր վերաբերում «Վարագ» ստորագրող հեղինակի բանավեճը Ինտրայի (Տ. Զրաքյան) հետ, որում առաջինը թեև անհարկի չնչոը դնում է Տ. Զրաքյանի անձնական որակների վրա, բայց և չոշափում է վերը նշված գրական հիմնահարցերը:

Շատ ավելի լայնախոհությամբ էր մոտենում «Լույսը» 1850–1870-ական թթ. արևմտահայ մտավոր-մշակութային դեմքերին: Պարբերականը մեծարանքով անդրադառնում է Ստեփան Ոսկանյանին, Գր. Չիլինկիրյանին, Ա. Հայկունուն, Հ. Պարոնյանին և այլոց, բնութագրական խոսքից բացի, «Մարգարտէ մանեակ», «Հին ու նոր» խորագրերով նյութերում հատվածներ տպագրելով նրանց գրական կամ հրապարակախոսական գործերից (թիվ 2, էջ 59–65, թիվ 5, էջ 157–162, 168–171 և այլն):

Ազգային արվեստի արժեքները վերհանելու նպատակով «Լույսը» հատվածներ տպագրեց նաև Իզմիրյանց գրական մրցանակ չահած Ս. Թյությունճյանի «Թրքահայ դերասաններ» աշխատությունից (Գարագաշյան քույրեր, Գարեգին Ռշտունի, Պետրոս Ադամյան և այլք): Իր գրախոսականում Ա. Անտոնյանը առանձնացնում էր այդ աշխատության նորութային կարևոր արժանիքը՝ նշանավոր դերասանների արվեստի վերլուծությունը, մանավանդ որ «մեր մէջ թատերական քննադատութիւնը բնաւ գոյութիւն չէ ունեցած» (թիվ 4, էջ 115):

«Լույսում» իրենց ստեղծագործություններով հանդես են եկել Գր. Զոհրապը, Մ. Մեծարենցը, Ռ. Որբերյանը, Ե. Տեմիրճիպաշյանը, Անայիսը, Եվանրպեին, Թլկատինցին, Ալփասլանը, Ռ. Սևակը, Օ. Չիֆթե-Սարաֆը, Հ. Արշակյանը և ուրիշներ: Հերանուշ Արշակյանը, ի դեպ, ընթերցողին հայտնվում է ոչ միայն իր բանաստեղծական խորին թափանցումներով, այլև կենսախինդ տրամադրություններով: Հավատարիմ օտար գրական արժեքները տրամաբանական չափավորության սահմաններում ընթերցողին մատուցելու սկզբունքին՝ Ա. Անտոնյանը տպագրել է ուշադրավ հոդվածներ անգլիական, հունական և իտալական գրականությունների պատմության վերաբերյալ, կանգ առել առանձին ստեղծագործողների կենսագրության և միջավայրի պայմանների վրա: Իտալական բանաստեղծության գնահատական խոսքի մեջ «Լույսը» վերհանել է հայազգի բանաստեղծուհի Վիկտորյա Աղանուրի ստեղծագործությունը:

XIX դ. վերջերի և XX դ. սկզբների արևմտահայ մամուլի, նրա գործիչների, լրագրական բարքերի և առանձին պարբերականների մասին արժեքավոր տեղեկություններ են պարունակում Տ. Արփիարյանի «Յիշատակներ խմբագրական կեանքէ» ծավալուն հուշերը (թիվ 9, էջ 283–287, թիվ 10, էջ 327–330, թիվ 11, էջ 352–357 այլն):

Չնայած իր կարճակեցությանը Ա. Անտոնյանի «Լույսը» լուսավոր հետագիծ թողեց 1900-ական թթ. հայ մամուլի պատմության մեջ:

1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո Կ. Պոլսում լույս տեսած նոր հրատարակություններից էր «Հայրենիքի քնար» շաբաթաթերթը (1908 թ. օգոստոսից)՝ Տ. Այուրմեյանի խմբագրությամբ: Ուներ «Ազգային, գրական, ընկերական» ենթավերնագիրը: Ուշագրավ է նոր իշխանության եկած երիտթուրքերի քաղաքական շռայլ խոստումներին հավատացող խմբագրի անկեղծությունը «Խմբագրական զեկոյց»-ում, որտեղ շարադրված են «Հայրենիքի քնարի» նպատակները ու խնդիրները: Նշվում է, որ այն «պիտի պարունակի ազգին ցաւն ու տառապանքը պատմող զգայուն քերթուածներ: Յեղափոխական եւ անձնազոհ դիւցազներու վրայ ուսումնասիրութիւններ... ինչպէս նաեւ մանկավարժական ուսումնասիրութիւններ... Հայ եւ օտար մեծ մանկավարժներու վրայ» (թիվ 2, էջ 44):

Իր առջև դրված խնդիրները շաբաթաթերթը կարողացավ լուծել միայն մասամբ՝ ամենից առաջ կարճատև հրատարակության պատճառով: Փոքրիշատե տպավորությունը, որ կարող էր թողնել ընթերցողի վրա «Հայրենիքի քնարը», պոեզիայի նորագույն ներկայացուցիչների մի քանի բանաստեղծությունների տպագրությունն էր: Նրա էջերում տպագրվեցին Սիամանթոյի, Ռ. Սևակի, Մ. Մեծարենցի, Զ. Եսայանի, Տ. Զոհրապյանի առեղծագործությունները, Ավ. Ահարոնյանի, Ռ. Որբերյանի և այլոց արձակ ու չափածո գործերը: Պ. Դուրյանի «Մարտին Վարդանանց» անտիպ բանաստեղծությունը ևս պետք է առաջացներ ընթերցողի հետաքրքրությունը այս նոր հրատարակության նկատմամբ: Շաբաթաթերթի

խմբագրականներում ևս զգացնել են տալիս Տ. Սյուրմեյանի պրական հակումները, դրանք ավելի շուտ գեղարվեստական ակնարկներ են հիշեցնում իրենց հանդիսավոր և զգացմունքային ոճի գեբազանցությամբ: 1908 թ. հուլիսի 11-ը (երիտթուրքական իշխանության հաստատման օրը) խմբագիրը համարում է համիդյան բռնակալությունից ազատագրվելու, սարկական կյանքի վախճանի օր, թեև նկատում է նոր վարչակարգի թույլ տված բռնություններն ու անարդարությունները հատկապես գավառներում (թիվ 5, էջ 94–98):

Ներկայացնելով նորագույն բանաստեղծներին՝ չաբաթաթերթը փորձում էր տալ նաև նրանց ստեղծագործության բնութագիրը: «Բազմավեպից» արտատպված մի հոդվածում հեղինակը, ի դեպ, նույնացնում է սիմվոլիզմն ու դեկադանսը, նշելով, որ «խորհրդապաշտներու դպրոցը... մեծամեծ թերություններ ունի անկապաշտ կոչուելու չափ» (թիվ 1, էջ 14): Չնայած որոշ չափազանցություններին և քմահաճ մեկնաբանություններին, այս հեղինակը շատ բարձր է դնահատում Սիամանթոյին, նշելով նրա ստեղծագործության հատկանշական երկու կողմերը՝ ազդեցիկ պատկերների առատությունն ու թարմությունը և նրա մարտնչող բնույթը:

«Հայրենիքի քնարը» հետաքրքրություն է հանդես բերել հայ ազգային կուսակցությունների հանդեպ, լրատվություն հաղորդել Կ. Պոլսում հնչակյանների հանրահավաքների մասին՝ տալով նաև պրանցում հնչած ելույթների ամփոփումները: Նույն կերպ տպագրել է Դաշնակցության հրապարակային ատենախոսությունների բովանդակությունները: Ինքը՝ «Հայրենիքի քնարը», հակառակ իր վերոհիշյալ խմբագրականի խոստումների, ուներ առավել քան չափավոր ուղղություն, որը հաղիվ թե արժանանար ընթերցողի համակրանքին: Համենայն դեպս այդ են վկայում նրա բարեհպատակային մտքերն ու զգացումները: Շաբաթաթերթը չի հրատարակվել 1908 թվականից հետո: Փոխարենը, 1909 թ. մարտից Կ. Պոլսում Տ. Սյուրմեյանը ձեռնարկեց «Սասուն» պատկերազարդ ամսաթերթի հրատարակությանը, որպես տնօրեն-խմբագիր: Պարբերականն

ուներ «Գրական, բանասիրական, մանկավարժական և քաղաքական» ենթավերնագիրը, սակայն, գրական չնշված թեքումով: Աշխատակցում էին Ռ. Որբերյանը, Տ. Զոկկյուրյանը, Ա. Յարճանյանը, Ռ. Սևակը, Թլկատինցին և ուրիշներ: «Սասունը» հետևում էր ընթացիկ գրական կյանքի իրողություններին, տպագրում արևմտահայ գրողների գործերը, այլև գրանք արժեքավորող գրախոսականներ, գրաքննադատական հոդվածներ և այլն: Հետաքրքիր է Տ. Զոկկյուրյանի՝ Ինտրայի «Նոճաստան» ժողովածուն գնահատող գրախոսականը, որտեղ գրախոսը ելնելով սիմվոլիզմի գեղագիտական դրույթներից, հստակորեն առանձնացնում է գրաքննադատության նախասիրությունները կամ դավանությունը և տվյալ գրական գործի արժանիքները և, այսպիսով, գոյության իրավունք վերապահում գրական ամեն մի ուղղության, այդ թվում և սիմվոլիզմին:

Հայտնի չէ, թե մինչև երբ է «Սասունը» հրատարակվել, սակայն նրան աշխատակցող հեղինակների ներկայությունն իսկ ենթադրել է տալիս, որ այդ ամսաթերթը ապահովելու էր իրեն վերապահված տեղը արևմտահայ գրական կյանքի անդաստանում:

Աբդուլ Համիդի վարչակարգի տապալումից հետո Կ. Պոլսում լույս տեսած պարբերականների մեջ իր իրավական ուղղվածությամբ առանձնանում է «Միածան» շաբաթաթերթը (1909): Դրա խմբագրապետ և արտոնատեր Ա. Սուրենյանը ճանաչված մարդ էր հայ մամուլի անդաստանում. դեռևս 1860-ական թթ, նա խմբագրել էր նույնանուն՝ «Միածան» պարբերականը, որ պոլսահայ հանրույթյանը հայտնի էր սահմանադրական դաշափարների, ինչպես և Մ. Խրիմյանի գործունեության պաշտպանությամբ: Հենվելով երիտթուրքերի հռչակած սահմանադրական իրավունքի վրա, Ա. Սուրենյանը համառորեն քննադատեց նույն երիտթուրքերի երեսպաշտությունը՝ ազգայնամոլ և ճնշման քաղաքականությունը կայսրության հպատակ այլազգիների, այդ թվում և հայերի նկատմամբ: Շաբաթաթերթի էջերում լուսաբանվում էին Կ. Պոլսի ազգային վարչության, Կիլիկիայի և Արևմտահայաստանի տնտեսական

և իրավական դրությանը վերաբերող հարցեր, բացահայտվում երիտթուրքական կուսակցության և օսմանյան խորհրդարանի համաձայնցված քաղաքականության դրսևորումները՝ հպատակ այլակրոններին ճնշելու և նրանց մահմեդականություն պարտադրելու ծրագրերով հանդերձ: «Միածանն» արդարության սկզբունքներից ելնելով՝ հատկապես ընդարձակ տեղ էր հատկացնում Կիլիկիայի արյունալի իրադարձություններին՝ անվերապահորեն պաշտպանելով ջարդերի ենթարկված հայերի դատը և նրանց մարդկային տարրական իրավունքները: Պարբերականը հիմնավոր առարկություններ էր անում երիտթուրքերի ձուլման ծրագրերին նաև կրթական բնադավառում, որ ենթադրում էր ուսուցման միօրինակություն և թուրքական, և ոչ թուրքական վարժարաններում, պետական մննաչնորհ՝ ուսուցչական կազմը որոշելու հարցում և ոչ թուրքական դպրոցներում ուսուցման լեզուն թուրքերենը հաստատելու վերաբերյալ: Այս առթիվ «Միածանը» իրավացիորեն նկատում էր, որ «Օնոն թուրքերն են, որ այս հարցը մնջտեղ դրած են եւ կը յուսան, որ այս մասին իրենց յոյսերուն իրականացումը կամաց-կամաց ցեղային առանձնայատուկ կեանքը պիտի ջնջէ» (թիվ 1)[1]: Երիտթուրքական իշխանությանը «Միածանը» քննադատում է նրանց խորհրդարանին արված դիպուկ դիտողություններով, նրանց հրատարակություններին մերկացումներով և այլն: Պարբերականը բացահայտում էր օսմանյան խորհրդարանի անվերապահ համագործակցությունը իշխանությունների հետ՝ ինչպես այդ պատահեց Նիկոմեդիայի և Պրուսայի գավառներում հայերին պատկանող հողերը իսլամ գաղթականներին տրամադրելու դեպքում: Խորհրդարանը որոշել էր այդ գաղթականներին հատկացնել 90.000 ոսկի՝ ժողովրդից տուրքեր դանձելու միջոցով, ընդամին, այդ գումարի մեջ չմտցնելով նրանց տրվելիք հողի դինը: Իսկ այդ հողը նրանց տրվելու էր հայերի հողերի հաշվին (անժառանգ և կամ համայնքին պատկանող հողահանդակները) նկատում էր «Միածանը»:

---

[1] Հղումները «Ծիածանին» արվում են կամ թվահամարներով, կամ ամիս-ամսաթվով, ինչպես կան բնագրում:

Շարաթաթերթը պարզարանում էր, որ կառավարությունն այստեղ է բնակեցնում գաղթականներին՝ իսլամ ազգաբնակչության թվաքանակն ավելացնելու նպատակով (նույն տեղում): Այս իմաստով «Միածանն» ակնկալում էր հայ երեսփոխանների լուծոքող ելույթները, թեև ինքը՝ Ա. Սուրենյանն առհասարակ դժգոհ էր խորհրդարանում նրանց մեծ մասի հաշտվողական կեցվածքից:

«Միածանում» ուրվագծվում է XX դ. առաջին տասնամյակի արևմտահայ գավառի տնտեսական քայքայման գործընթացը: «Յառաջիկայ սովի վտանգը» հոդվածում ցույց է տրվում, որ տնտեսական անողոք պարտադրանքները մի քանի կողմից են խեղդում երկրագործին: Արդեն կալի մեջ ցորենի բերքի կեսից ավելին անցնում է մյուլթեզիմին (միջնորդը հողատիրոջ և վարձակալի միջև), որը սահմանվածից շատ ավելի տոկոսադրույքով էր դնահատում հարկը, և որին հետևում էին վարկատուները, ապա պաշտոնական հարկահավաքները, որոնք ցածր գնով բերքը վաճառում էին յուրային առևտրականներին: Խանութին իր անցյալ տարվանից մնացած պարտքերը մարելուց հետո գավառացուն գրեթե ոչինչ չէր մնում տնտեսության վերարտադրության համար (թիվ 3): 1909 թ. հայկական գավառներին ասպառնացող սովը, նզրակացնում է «Միածանը», իրական տեսք է ստանում նաև Թուրքիայի հողային օրենքի անկատարության պատճառով: Օսմանյան խորհրդարանը մերժել էր սովը կանխելուն ուղղված՝ կարոտյալ շրջաններին 100 հազար ոսկի տրամադրելու շուրջ առաջարկները, որին իսկույն համաձայնվել էին իշխանությունները: Այստեղ շարաթաթերթը նզրակացնում էր. «Ջարդերը դադրին՝ սովը սկսի, երկու կերպն ալ հայերը չնչելու քաղաքականության ազդու օժանդակներ են» (թիվ 3): Առհասարակ «Միածանը» հաճախ էր բացահայտում իշխանությունների և խորհրդարանի հակասահմանադրական ընթացքը և վերջինիս ուղղորդումը երիտթուրքերի կողմից՝ հիմնականում կանգ առնելով հայատակ ազդերի հանդեպ դրանց վերաբերմունքի դրսևորումների վրա: Խորհրդարանի որոշումներին առարկող մի հոդվածում ցույց է տրվում, որ սահմանադրությունը վերացրել է

«բեդելը ասկերիյն» (զինվորական հարկ, որ հավաքվում էր ոչ մահմեդականներից) հարկը՝ կայսրության բոլոր հպատակների համար սահմանելով ընդհանուր զինապարտություն, մինչդեռ այն չարունակում են գանձել (թիվ 4): Խորհրդարանի գործունեության արատավոր կողմերը վերհանելով՝ «Միածանը» ցուցադրում էր երեսփոխանների տգիտությունը, մոլեռանդությունն ու հետադիմությունը, որոնց հիմքում, նրա կարծիքով, ընկած էր մահմեդական կրոնական դերազանցության թյուր պատկերացումը՝ «յոռի ըմբռնուած կրօնական ոգի մը» (8 օգ.):

Օսմանյան երեսփոխանական ժողովի քննադատությունը չաբաթաթերթում հատկապես տպավորիչ չեչտեր ստացավ Ադանայի ջարդերի ժամանակ, երբ երիտթուրքական կուսակցության երեսփոխանները իրենց մամուլի քարոզչական սանձարձակ ելույթների ուղևկցությամբ ճդնում էին կողմերի հավասարակչռության պատրանք ստեղծել՝ հավասարեցնելով ջարդարարների և զոհերի կրությունները: Երիտթուրքական «Թանին» թերթը պնդում էր, թե, իբր, «երկու կողմն ալ խելայեղ՝ մէկզմէկու ջարդեցին» (թիվ 1), իսկ «Նեջաթ» թերթն ավելի էր խորացնում կեղծիքը՝ դրան տալով քաղաքական բնույթ և պնդելով, որ ջարդերի նախապատճառը անջատողական գաղափարներով լցված հայերն են (8 օգ.): «Միածանը» հերքում էր այս ամենը եվրոպական հյուպատոսական տեղեկագրերի հղումներով, ականատեսների վկայություններով և այլն: Ա. Սուրենյանը բողոքի ձայն էր բարձրացնում ռազմական դատարանների կողմից հայ «մեղավորներին» պատժող դատավճիռների դեմ՝ պահանջելով բացահայտել իրական մեղավորներին: Իրերի իսկական դրությունը «Միածանի» համար առավել պարզվեց այն օրերին, երբ հայտնի դարձավ Կիլիկիայից վերադարձած Հ. Պապիկյանի անաչառ տեղեկագիրը ջարդերի մասին: Իր հերթին չաբաթաթերթը հայտնում էր, որ Ադանայի ողբերգության ներշնչողն ու պատասխանատուները երիտթուրքական իշխանություններն ու զինվորականությունն են (թիվ 18): Այս առթիվ «Միածանը» հայտնում էր, որ նրանք ջարդարարներին արդարացնելու համար հար-

յուրաքանչյուր անպարտ հայերի են բանտարկել ու դատել, իսկ նրանցից վեցին էլ՝ կախել: Կիլիկիայի հայերի դիմադրական ոգին ցույց տալու համար չաբաթաթերթը ֆրանսիական «Մատեն» թերթից հոդված է արտատպել Դյորթ Յոլի հերոսական պաշտպանության մասին (թիվ 5): Իր՝ Հ. Պապիկյանի եղերական մահվան առթիվ «Միաբանը» սև շրջանակի մեջ տպագրեց մահախոսական՝ առավել քան կասկածելի համարելով նրա «անակնկալ մահը»: Թերթը կասկածի տակ էր առնում իշխանությունների ոչ պաշտոնական հայտարարությունը (որտեղ մահվան պատճառն էր համարվում «կուլծքի բորբոքումը»)՝ նկատելով, որ իրական պատճառի բացահայտումը կարող է գործի մեջ «անխոստովանելի գաղտնիք մը ննթադրել տալ» (8 օգ.): Հայերի դեմ իշխանությունների հալածական քաղաքականությամբ էր բացատրում «Միաբանը» այն, որ Ադանայի առաջնորդ Մուշեղ եպիսկոպոսը հանիրավի հեռակա կարգով դատվել և ցմահ բանտարկության էր դատապարտվել, Հաճընի առաջնորդ Ներսես վարդապետը՝ ամրաստանվել իբրև խռովարար, իսկ հարյուրավոր հայեր բանտերն էին նետվել (թիվ 4): Ուշագրավ է երիտթուրքերի արդարամտության հետ ոչ մի հույս չկապող Ա. Սուրենյանի բաց նամակը չեխ-ուլ իսլամին, որտեղ նա բողոքում է այն իրողության դեմ, որ Կիլիկիայում չերքի դատարանը շարունակում է մերժել ոչ մահմեդականի վկայությունը մահմեդականի դեմ, որի պատճառով թուրք մարդասպաններն ազատ են արձակվում և որ այս «դէպքերն ամէն ամիս հարիւրներով կը պատահին» (19 սպտ.):

Կիլիկիահայերի իրավունքները Ա. Սուրենյանը պաշտպանեց նաև ապահովագրական ընկերությունների հետ նրանց վճճի ընթացքում: Այդ ընկերությունները հրաժարվում էին վերահաստատել հայերի պայմանագրային գումարները, որոնք ստանալու համար ապարդյուն էին անցել ազգային վարչության ջանքերը: Իրենց առարկություններն ընկերությունները հիմնավորում էին նրանով, որ հայերի տները ճարակող հրդեհները ոչ թե տարերային ազետի կամ քրեական հանցանքի արդյունք են, այլ քաղաքացիական բա-

խումբների, որպիսիք նախատեսված չէին ապահովագրական պայմանագրերում: Հայտնի է, որ Գր. Զոհրապն «Ազատամարտում» առաջարկել էր դատի տալ նշված ընկերություններին, որ պաշտպաննց Ա. Սուրենյանը: Վերջինս հիմնավորում էր, որ Ադանայում հայերի տների հրկիզումները կապ չունեն քաղաքացիական ընդհարումների հետ, այլ ջարդարարական գործողությունների հետևանք են և պայմանագրերի համեմատ՝ նյութապես փոխհատուցելի: Նա հայերին կոչ էր անում բոյկոտել այդ ընկերությունները, մինչև որ դրանք գիտակցեն, որ իրենց ուժի դեմ այլ ուժեր ևս կան, որ պարտավոր են հաշվի առնել (հկտ. 3):

Կ. Պոլսի Ազգային ժողովում ընթացող իրադարձություններին «Միածանը» մոտենում էր ազատամիտ հայեցակետից՝ առարկելով այնտեղ «յեղափոխական կուսակցութեանց» մարդկանց հանդուգն վարքագծին ու պոռթկումներին, որ սպառնում էին ազգային վարչության արդյունավոր գործունեությանը: Շարաթաթերթը հորդորում էր ազգային կուսակցություններին՝ զուսպ լինել հանրային նշանակություն ունեցող գործողություններում, չէր թաքցնում իր առարկությունները հատկապես Դաշնակցությանը և օսմանյան խորհրդարանում նրա երեսփոխանների մեծամասնությանը՝ համակերպվող կեցվածքի համար (28 օգ., 19 սպտ.):

Հայտնի չէ՝ արդյոք 1909-ից հետո «Միածանը» չարունակել է հրատարակվել, թե ոչ: Սակայն հենց այդ տարվա ընթացքում իսկ այդ անկախ շաբաթաթերթը ուժերի նիհարծին չափով պաշտպանում էր արևմտահայության բռնադատված իրավունքները՝ հանրային գիտակցության մեջ ներարկելով նրա անհատական ու հավաքական շահերի գաղափարը: Երիտթուրքական հակահայկական քաղաքականության իր մերկացումներում «Միածանն» ակնհայտորեն ավելի արմատական էր, քան կուսակցական պարբերական որոշ հրատարակություններ:

Զմյուռնիայում. «Արևելյան մամուլի» կողքին 1907–1909 թթ. հրատարակվում էր «Արշալույսը»՝ տեղի հայության առաջին օրաթերթը, տպարանատեր Բ. Քեչիչյանի տնօրինությամբ: Օրաթերթին

աշխատակցում էին Հ. Մառքը, Վ. Թոշիկյանը, Թ. Ճերմակյանը, Բ. Կյուլեսերյանը, Մ. Նուպարյանը, Հ. Գարանֆիլյանը, Մ. Թոփալ-յանը և այլք: «Արշալույսը» տպագրում էր գրական, տնտեսական, պատմաբանասիրական, իրավագիտական, բժշկաառողջապահական և այլ բնույթի նյութեր, Զմյուռնիայի և նրա շրջակայքի, Կ. Պոլսի և Արևմտահայաստանի իրականությունը լուսաբանող հրապարա-կումներ:

«Արշալույսն» ուներ չափավոր ուղղություն, որչափով դրան հակառակ ընթացքի համար կարող էր թույլ տալ Համիդյան գրաքննություն: Թերթը կողմնորոշվում էր դեպի ընթերցողական լայն շրջաններ, բայց նրա շոշափած խնդիրները թույլ են տալիս ասելու, որ հատուկ ուշադրություն էր դարձնում առևտրական խավերին և նրանց գործունեության և տնտեսական վիճակի բարե-լավմանը: Նրա նախասիրություններն առավել կենտրոնանում են տեղական մանր ու միջակ առևտրական խավերի պաշտպանության վրա: «Իզմիրի առևտրական հրապարակը» խորագրով տպագրված նյութերից կարելի է պատկերացումներ կազմել հասարակության այդ մասի առևտրական գործառույթների, շրջանառության մեջ դրված ապրանքատեսակների (գերազանցապես գյուղատնտեսա-կան արդյունքներ) որակի, գների, վաճառքի չափերի և այլնի մա-սին: Հայ առևտրականների իրավագիտակցությունը զարգացնելու նպատակով «Արշալույսը» տպագրում էր առևտրաիրավական ոլորտին վերաբերող հետաքրքիր նյութեր: Այլ հրապարակումնե-րում թերթն ընթերցողին ծանոթացնում էր ԱՄՆ-ում տնտեսութ-յան կառավարման և կազմակերպչական ձևերին՝ իրազեկող հոդ-վածներ տպագրելով տրեստներին և սինդիկատներին, տնտեսութ-յան մեջ սրանց դրված տեղին ու գործունեության հետևանքնե-րին (1907, 27, 30 նոյ., 4 դկտ., 1908, 4 փետ. և այլն): Առևտրական-ների գործնական դիտելիքներին են նվիրված նաև տնտեսական ու ֆինանսական համակարգի թեմաներով նյութերը՝ թերթի 1907 թ. համարներում: Ակներևաբար, զմյուռնահայ դրդադործական ար-տադրության հետաքրքրություններին էր տուրք տալիս «Արշա-

լույսը», երբ ուշադրություն էր դարձնում Ֆյոթահիայի նրանց արհեստակիցների տնայնագործական արտադրությանն ու աշխատանքի կազմակերպական նղանակներին: Նշվում է, որ այդ արտադրության մեջ են ներգրավված տներում աշխատող հարյուրավոր աղջիկներ, որոնք դրա շնորհիվ իրենց ընտանիքների «թշուառութիւնը վանող տարրեր դարձած են» (1908, փետ. 3): Թերթն արձանագրում էր այն տխուր իրողությունը, որ Զմյուռնիայում գործող գորգի սինդիկատը, որ տնօրինում են օտարները, ցած ու ցրիվ աշխատող հայ գորգագործների ձեռքին «նախանձելի չահ մը թողուցած չէ»:

«Արշալույսը» հաճախ է լուսաբանել տեղական համայնքային կյանքը, լրագրական տարբեր ժանրերով լուսաբանել ազգային տարբեր խնդիրներ: Այս անդրադարձները վերաբերում էին կրթական-բարեսիրական ընկերությունների, համայնքային հաստատությունների (դպրոց, եկեղեցի, հիվանդանոց, որբանոցներ) նրանց գործունեության թերությունների և այլն: Թերթը հանրության ուշադրությունն էր բևեռում դրանց աշխատանքների բարելավման վրա: Բարեսիրական աշխույժ գործունեությամբ, ի դեպ, աչքի էին ընկնում հատկապես զմյուռնացի կանայք: 1900-ական թթ. սկզբներից Զմյուռնիայում գործում էին «Հռիփսիմյան», «Կրթասիրաց» և «Մեսրոպյան ընկերասիրաց» ընկերությունները, որոնք ստանձնել էին մանկապարտեզների, դպրոցների և որբանոցների նյութական ապահովման գործը: Կանանց ընկերությունները, ի դեպ, քաջալերվում էին թերթի գործուն աշխատակցուհի Հ. Մառքի կողմից, ով նրանց հուզող խնդիրների քննարկմամբ հաճախ հանդես էր գալիս թերթում: Նա ուշադրություն էր հրավիրում կանանց սոցիալական անմխիթար վիճակի, հասարակության մեջ անտեսված լինելու իրողության վրա՝ մեղադրելով այդ նույն հասարակությանը կնոջ հանդեպ այդ վերաբերմունքի համար: «Արշալույսն» ուներ «Կանանց յատուկ» խորագիրը, որի ներքո հաճախ հանդես էր գալիս Հ. Մառքը՝ աշխույժ բանավեճերի մեջ մտնելով իր ընթերցողների հետ: Ուշագրավ է, որ նրա ֆեմինիս-

տական «ծայրահեղութիւններին» իր առարկութիւնները հայտնեց կին ընթերցողներից մեկը, պնդելով, որ «մեր թերուս ու թերակիրթ բարքերուն մէջ» ճիշտ չենն կարող ընկալվել կնոջ իրավունքների, նրա անհատականութեան վերաբերեալ գաղափարները (1907, 28 նոյ.)։ Այլ հեղինակներ ևս միջամուխ նղան այս բանավեճին, որից հետո թերթը մտքերի փոխանակութիւնն ուղղում է «եւրոպականացեալ կեղծ բարքերու ու սովորութիւններու» դեմ՝ պաշտպանելով կանանց կրթութեան ու դաստիարակութեան ազգային սկզբունքները, հատկապես բարքերի անաղարտութեան մտահոգութեամբ (1907, 3, 12 դկտ.)։

Կարելի է կարծել, որ Հ. Մառքի առողջ հարցադրումները (այդ թվում և կնոջ ու տղամարդու բարոյական փոխադրելութիւնների վերաբերեալ) ունեցան իրենց դործնական հետևանքները այն բանից հետո, երբ «Հայ ընթերցասան» (հիմն. 1869 թ., Գ. Բաբագյանի նախաձեռնութեամբ) վարչութիւնը հայտարարեց, որ այդ ընթերցասրահը կանանց կտրամադրվի առայժմ հինդշաբթի օրերը՝ օրվա երկրորդ կեսին և որ «էրիկ մարդոց համար բացարձակապէս սրդիլեալ է յիշեալ ժամուն ընթերցատուն յաճախելը» (1907, 12 դկտ.)։

Իր ոչ տևական հրատարակութեան ընթացքում «Արշալոյսն» արտացոլել է նաև Զմյուռնիայի հայաբնակ մերձակայքի նյութական, բարոյական ու կրթական իրողութիւնները։ Այդ հրապարակումներում (ակնարկներ, թղթակցութիւններ և այլն) լուսաբանվում են տեղի հայերի առօրյա կյանքը, ազգային հիմնարկների կացութիւնը՝ դրանք բարելավելու ձգտումով։ Այս կերպ թերթի էջերում ներկայացվում են Մանիսան, Մենեմենը, Սյոքևն, Քուշադան, Գնըքը, Պերկաման, Քրքաղաչը, Էյդեմիշը և այլ բնակավայրեր։ Այսօրվա հետազոտողին կարող են հետաքրքրել այս հրապարակումներում առկա ժողովրդագրական տվյալները, դրանցում կատարված տեղաշարժերը, հայ բնակչութեան թվաքանակը, ազգային հաստատութիւնների որակները և այլն։ Դրանցից պարզվում է նաև, որ երբեմնի խոշոր բնակավայրերը լավատեսութիւն չէին ներշնչում՝ մասնավորապես հայ բնակչութեան թվաքանակի

նվագման տեսակետից: Մանիսայում պահպանվել էին հայերի երկու թաղամասերը (Վերի և Վարի)՝ շուրջ 600-ի հասնող բնակչությամբ: Նշվում է, որ նրանք ունեն իրենց առանձին եկեղեցիներն ու վարժարանները և որ զբաղվում են մանուածագործությամբ (ջուլհակագործություն) և այգեգործությամբ (1908, 28 դկտ.): Մանիսայի թաղական խորհրդի անդործության պատճառով անկում են ապրել դպրոցն ու եկեղեցին, չեն հոգում անգամ ուսուցիչների աշխատավարձը: Մեկ այլ թղթակցության մեջ ցույց է տրվում, որ նյութական սուղ պայմանների հետևանքով ծնողներն իրենց երեխաներին հանում են դպրոցներից և տալիս արհեստագործության: Զգալի է հայ հարուստների ազգասիրության պակասը, դիմում են օտար վարժարաններ՝ անտեսելով ազգային դպրոցները (1908, 17 հնվ.): Նվազել են նաև Մեննեմենի, Սյոքեի և այլ բնակավայրերի հայերի՝ ազգային կյանքով լիարժեք ապրելու հնարավորությունները: Հիմնականում անտեսելով դրա սոցիալական դրծոնները, «Արշալույսը» պատճառները որոնում է նույն՝ ազգասիրության պակասի մեջ, որպես դրան հակառակ օրինակ բերելով էյդինմիչի համայնքը, որտեղ տեղարնակ Գ. Դավիթյանը հիմնել էր մանկապարտեզ, մատենադարան, թատերասիրաց և այլ ակումբներ (1908, 25 հնվ.): Բարերարներից ունեցած ազգային առաքելության ակնկալիքները, բայց նրանց աղետալի պակասը մշակույթի և կրթության ոլորտներում՝ այն եզրակացությունն էր, որին հանդում էր «Արշալույսը»՝ հայ իրականության թերություններին անդրադառնալիս:

2. ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ Կ. ՊՈԼՍՈՒՄ ԵՎ ՋՄՅՈՒՌՆԻԱՅՈՒՄ

«ԲՅՈՒԶԱՆԴԻՈՆ» (1896–1918)

1894–1896 թթ. արևմտահայ գավառներում, ինչպես և Կ. Պոլսում սանձազերծված՝ հայերի կոտորածներից հետո Օսմանյան Թուրքիայում մամուլն ընկավ ավելի ծանր հսկողության տակ: Հատկանշական է, որ կոտորածների վերջին տարում միջազգային հանրության կարծիքը և տերությունների ուշադրությունը հայկական սպանդից հեռացնելու նպատակով, մամուլի հանդեպ միշտ անվստահ տրամադրված Աբդուլ Համիդը 1896 թ. միանգամից թույլ տվեց հայկական հինգ պարբերականների (1893–1895-ին՝ Կ. Պոլսում, 1-ականի դիմաց) հրատարակությունը[1]: Դրանց մեջ էր Բ. Քեչյանի արտոնատիրությամբ և խմբագրությամբ լույս տեսնող «Բյուզանդիոն» օրաթերթը: Թերթը 1896–1911 թթ. խմբագրել են Բ. Քեչյանը, ապա 1911–1918 թթ.՝ Պ. և Ա. Քեչյանները, վերջում՝ Ա. Ալպոյաճյանը[2]: Ուներ ազգային, գրական և գիտական բովանդակություն, այսինքն, այն ծրագիրը, որ պարունակում էր նրա հասարակական ու մշակութային ուղղվածությունը:

«Բյուզանդիոնի» առաջին տարիների հրապարակախոսական հոդվածներում զգալի է բավական զուսպ վերաբերմունքը օսմանյան իշխանությունների, ազգային մարմինների, գավառական կյանքի և այլնի նկատմամբ: Առավել քան աչքի է զարնում թերթի միտումը՝ լավատեսություն և հույսեր ներշնչելու գավառահայ բեկված բազմություններին և Կ. Պոլսի հայ հանրությանը: Դեռևս 1896 թ. նոյեմբերի 11-ին, երբ թարմ էին կոտորածների վերքերը, թերթն ավելի չուտ այս ձգտումից, քան իրականությունից ելնելով, գրում էր, թե «Ամենուրէք մեղմացում մը կը տեսնուի, որ աւե-

[1] Հայ պարբերական մամուլը, էջ 48–50:
[2] Նույն տեղում, էջ 34:

լի հիմնական բարուրքումներու յոյսեր կու տայ» և որ «մեք վստահութիւն ունինք այս գնդեցիկ երկրին ապագային վրայ, որ մեր հայրենիքն է»:

Իրավացի էր Գր. Զոհրապը, երբ դեռևս 1892 թ. Բ. Քնչյանին բնութագրում էր որպես «բարոյականի և պահպանողական գաղափարներու... համոզիչ չատագովի»[1]: «Բյուզանդիոնում» ևս Բ. Քնչյանը չարունակելու էր այս ընթացքը:

1890-ականի վերջերին թերթը հիմնական խնդիր է համարում Արևմտահայաստանի և Կ. Պոլսի հայ դպրոցների, ազգային հաստատութիւնների բնականոն գործունեութեան վերականգնումը, որպես «վերջին ողբալի անկարգութիւններուն և վշտալի պատահարներուն ամենէն կսկծալի հետեւանքներ» (1896, 12 նոյ.): Դրանք վերացնելու միջոցը Բ. Քնչյանը տեսնում էր բարեգործութեան, և որոշ վարանումով, կառավարութեան ձեռնարկելիք քայլերի մեջ: Այս գործում, նրա կարծիքով, լուրջ խնդիրներ ունեին պատրիարքարանը, ինչպես և առաջնորդարանները, նկեղեցինները և թաղային խորհուրդները: Մասնավորապես, Մ. Օրմանյանի պատրիարք ընտրվելու պահից ի վեր (1896, նոյեմբեր) «Բյուզանդիոնը» պաշտպանում էր նրա անաղմուկ և զուսպ ջանքերը՝ աջակցելու ազգային կյանքում անտերունչ և անուշադ մնացած կրթական խնդիրները կարգավորելու, հասարակական կյանքն աշխուժացնելու առաջարեգում: Թերթը Մ. Օրմանյանի ուղեգիծը հիմնավորում էր նրանով, որ այդ եկեղեցականը հավասարապես ընդունելի է և՛ ազգի, և՛ Բ. Դռան համար և որ տվյալ պահին հայ հանրութեյանը հարկավոր է այդպիսի չրջահայաց և լայնախոհ հոգևորականը: Իր՝ «Բյուզանդիոնի» ընթացքը լիովին համապատասխանում էր պատրիարքի խոհեմ կեցվածքին: «Ողջամիտ չափավորութիւն մը, թէ՛ հանրային գործերու, թէ՛ ընկերական եւ իմաստասիրական հարցերու եւ թէ՛ գրական խնդիրներու մէջ մեզ առաջնորդ եղած են եւ ասկէ ետքն ալ պիտի ըլլան»,- այսպես էր

[1] Զոհրապ Գր., Երկեր, հ. Ա (աշխատասիրութեամբ Ա. Շարուրեանի), էջ 451:

ձևակերպում իր ուղղությունը «Բյուզանդիոնը» (1896, 16 նոյ.): Իր խմբագրության տարիներին (1896–1911) Բ. Քնչյանը հետևել է Մ. Օրմանյանի ողջամիտ ուղեգծին՝ ծայրահեղություններն ու միջկուսակցական չդադարող ընդհարումները լրատվորեն դիտելով իբրև չարիք՝ ուղղված ազգի միասնության դեմ:

Հայտնի է, որ 1890-ականի կոտորածներից հետո Կ. Պոլսից և Արևմտահայաստանից ծայր էր առել դաղթականների հոսքը դեպի Եվրոպա, Ռուսաստան, և մասնավորապես, Եգիպտոս, Բուլղարիա, Ֆրանսիա, Ռումինիա և ԱՄՆ: Արևմտահայաստանը մարդաթափ անող այս երևույթի չափերն ընդլայնվում էին օսմանյան իշխանությունների խտրական բիրտ քաղաքականությամբ, կրոնական ու ազգային մշտական հալածանքների պայմաններում: Ինչ-որ չափով դրա դեմն առնելու քարոզչության մեջ «Բյուզանդիոնը» առաջ է անցնում իրականությունից կտրվելու չափ, դունազարդելով այդ իրականությունը և, ակնհայտաբար, ոչ առանց օսմանյան դրաքննական մարմինների ներշնչումների: Թուրքական «Իքդամ» թերթից արտատպված մի հոդվածը, այս իմաստով պետք է, որ հարուցեր «Բյուզանդիոնի» ընթերցողի հեգնանքը. այստեղ հավաստիացվում է, թե, իբր, դավառներում իրականացվել է բարենորոգումների ծրագրի մեծ մասը, Խարբերդի և Դիարբեքիրի վիլայեթներում վերակազմվել է ոստիկանությունը, վեց դավառներում, այդ թվում և Վանում, փոխվել են նախկին հարկահավաքները, որ այնտեղ ոստիկանները նշանակվում են առանց ազգի ու կրոնի խտրության (ըստ բնակչության թվի, ինչպես խորամանկորեն հարում էր «Իքդամը») և այլն (1896, 18 նոյ.):

Այս կարգի պարտադրված և կեղծիքներով լեցուն հրապարակումներին ի հակադրություն և դրանց կողքին, «Բյուզանդիոնը» արժեքավոր լրատվություն էր տալիս Արևմտահայաստանում թուրք չարդարարներին ընդդիմացող հայերի հաճախակի ձերբակալությունների, «զինված հայերին» առանց դատ ու դատաստանի բանտարկելու և իշխանությունների այլ բռնությունների մասին: Պետք է կարծել, որ գրաքննությունն արգելել է նման հրապարա-

կումները, որովհետև դրանք չեն երևում թերթում 1896 թ. նոյեմբերից հետո[1]:

Միաժամանակ, 1896–1897 թթ. «Բյուզանդիոնը» բազմաթիվ նյութեր է տպագրել փախստական հայերի վերաբերյալ: Թերթը Արևմտահայաստանից և Թուրքիայի այլ վայրերից կ. Պոլիս փախած հայերի թիվը հաշվում է 20–30 հազար մարդ (1896, 28 նոյ., 1897, 25 հնվ.): Սրանց մի ստվար մասը գաղթել էր Շումլա, Ռուսչուկ, Բուրգաս, Աթենք, Մարսել և Ալեքսանդրիա: Թերթը հորդորում էր նրանց վերադառնալ Թուրքիա, տեղեկացնելով նաև, որ օսմանյան իշխանությունները կարճ ժամկետ են տվել վերադառնալու համար և որ ժամանակն անցնելուց հետո նրանց սպասելու է սնիկանություն և կայքից զրկվելու ծանր վիճակը: Հայ գաղթականների կյանքը պատկերող հոդվածները և թղթակցությունները ներկայացնում են նրանց դժվարին կացությունը օտար միջավայրում: Ուշագրավ է, որ վերադարձած որոշ հայերի համար արդեն կատարված փաստ էր իրենց սեփականազրկումը իշխանությունների կողմից: Այս վերադարձած հայերին իրավական օգնություն ցուցաբերելու նպատակով «Բյուզանդիոնը» բաց էր արել «Իրավաբանական» բաժինը՝ տպագրելով օրենքների մեկնաբանություններ, առանձին հոդվածների պարզաբանումներ և այլն (1896, 23 դեկ., 1897, 17 ապր.): Թերթի այս հրապարակումներն ունեն գործնական նշանակություն՝ դժբախտության մեջ հայտնված հայրենակիցների համար: Նաև ճանաչողական արժեք ունեն

---

[1] Գրաքննության արգելանքներն ուղեկցվում էին իշխանությունների հալածանքներով: Այս առթիվ Ե. Թոլայանը գրում է. «Բ. Քեչեանը բացատրութեան մը համար ոստիկանատունէն հրաւիրեին՝ հետեւեալ կտակը կըներ իր տղոցը տպարանէն մեկնելէ առաջ.

- Աշոտ, Պարոյր, Արշակ, երէ շատ ուշանամ, մի մոռնաք ետեւէս անկողինս բանտ ուղարկել:

Խմբագրատան մէջ անկողին եւ վերմակ ունէր միշտ պատրաստ, իբր նախատեսող մարդ:

Հայ խմբագիր կոչուած խեղճ մահկանացուն կապրէր Պոլսում բանտի կամ աքսորի յաւիտենական մղձաւանջին մէջ՝ առանց ոեւէ մեղք ունենալու խղճին վրայ...» (Թոլայեան Ե. (Կավոշ), 35 տարուայ բաւերախմբագրական յիշողութիւններ, հ. Ա, էջ 112–113):

տպագրված թղթակցություններն ու հոդվածները, դրանց պարունակած վիճակագրական տվյալները արհեստների վերաբերյալ (1896, 14 օգ., 9 դկտ., 1897, 20 մյս.):

«Բյուզանդիոնում» ուրվագծվում է գավառահայերին հողագրկելու, նրանց սեփականությունները բռնագրավելու և առհասարակ, տնտեսությունից դուրս մղելու համիդյան նպատակադրված քաղաքականությունը: «Փոքր Ասիոյ վաճառականությիւնը» հոդվածում թեև ղդուշորեն, բայց և հստակ, թերթը հայտնում է, որ նույն իրողությունը կատարվում է առևտրական ասպարեզում: Առևտրից դուրս մղված հայերի փոխարեն Կ. Պոլիսը լցվել է փոքրասիական չրջաններից տեղափոխված իսլամ վաճառականներով (1896, 28 մյս.): Մալկարացի հայերի տնտեսական կորուստներն են ցույց տրվում Կարպիսի «Կեանքը դաւառին մէջ», Սմբատի «Մշոյ վարժարանները եւ «Միացեալ ընկերութիւնը» և այլ հոդվածներում (1897, 17 հնվ., 4 փետ.): Թերթը ցույց է տալիս հայերի տնտեսական դերի նվազումը Ուրֆայում, որտեղ փոխարենը բարդավաճում են «իսլամ հայրենակիցները» (1897, 2 մրտ.): Բ. Քեչյանը հատուկ ուշադրություն է դարձնում գավառներում հայերի տնտեսական վիճակի, արհեստագործության և առևտրի անկման դեմն առնելու հարցերին: Վանից, Խարբերդից, Արաբկիրից, Պրուսայից և այլ վայրերից ստացված թղթակցությունները թերթն ամրապնդում է հմտալի հոդվածներով («Տնտեսական հարցեր» խորագրով)՝ նվիրված առևտրատնտեսական նոր մեթոդների յուրացմանը, երկրագործության և վաճառականության արդյունավետ եղանակներին, այս ասպարեզներում ավանդական թերությունները վերացնելուն: Ուշադրավ է հայ արհեստավորության գործունեության լուսաբանումը նրանց նոր բնակավայրերում: «Բյուզանդիոնի» մի հրապարակումից երևում է, որ գաղթական ոսկերիչները, փորագրիչները, ասեղնագործողները գործ են գտել Եգիպտոսում, դերձակները, խոհարարները՝ Վառնայում, կոշկակարները՝ Բուխարեստում, գարբիննները և երկաթագործները՝ Ֆիլիպեում (Պլովդիվ), դորպագործները՝ Ամերիկայում (1900, 4 հնվ.):

Ազգային երկրագործության զարգացումը Բ. Քեչյանն առնչում է ոչ միայն կապիտալ ներդրումների, այլև ուսման, կրթության և քաղաքակրթության զարգացմանը: Խմբագիրը հիմնավորում էր, մասնավորապես, ցորենի մշակության զարգացման հրատապությունը հայերի տնտեսության մեջ: Ուշագրավ է, որ Բ. Քեչյանը բանավիճում է Հ. Մրմըրյանի հետ՝ հողագործության վերաբերյալ նրա ոչ իրատեսական հոդվածի առթիվ: Նա իրավացիորեն կարծում է, որ Մրմըրյանը անտեսում է հողի մշակության հետ կապված դժվարությունները, հողը լքելու՝ գյուղացուն դրդող պատճառները: Եթե հայ երկրագործը չահ ստանար իր զբաղմունքից՝ չէր գաղթի: Նա առաջադրում է երկրագործության արդիական զարգացման պայմանները, հատկապես գյուղատնտեսության մեքենայացման, գիտական մեթոդների ներդրման խնդիրները՝ անդիտանալով, սակայն, հայ գյուղի քայքայման նախ քաղաքական, այնուհետև սոցիալ-տնտեսական պատճառները (1899, 26 դկտ.):

Հայերի տնտեսական վիճակի վերլուծության, ինչպես նաև առհասարակ Օսմանյան Թուրքիայի տնտեսական խնդիրների դնահատման հարցում առանձնահատուկ նշանակություն ունեն Բ. Քեչյանի տնտեսագիտական հմտալի հոդվածներն ու հրապարակումները: Նրա «Ինքնօգնություիւն, թէ փոխադարձ օգնություիւն» հոդվածում առաջադրվում է ազատ մրցակցության պայմաններում կապիտալի և չուկայական հարաբերությունների զարգացման հիմնահարցը: Արդյունաբերության զարգացումը, ըստ Բ. Քեչյանի, ուղեկցվում է արհեստագործության քայքայման և հարստության բևեռացման իրողություններով: Հասարակության լայն խավերն այս պայմաններում իրենց սոցիալական գործառույթը կարող են իրականացնել խոշոր կապիտալից անկախ՝ փոխօգնության տարբեր և արդյունավետ ձևերի (խնայողական, ընտանեկան գանձարկղներ, փոխատվական ընկերություններ և այլն) կիրառմամբ: Ուշագրավ է, որ հեղինակն ընդունելի է համարում հանրային կյանքի սոցիալիստական կազմակերպման որոշ սկզբունքներ, ինչպես հանգստի իրավունքի, կենսաթոշակի, ձրի կրթության և առողջապա-

հության վերաբերյալ օրենքների անհրաժեշտությունը: Հեղինակը կարևորում է փոխօգնության ձևերի կիրառումը Կ. Պոլսի և Արևմտահայաստանի հայության մեջ, խրախուսում ազատ մրցակցությունը (1902, 29 նոյ.): Հայերի տնտեսական աննախանձելի վիճակը՝ նրանց նկատմամբ պետության անբարյացակամության և բռնության պայմաններում, թերթի տնտեսագետներին մղում է վերստին անդրադառնալ տնտեսական փոխօգնության գաղափարին: «Հրէայք յԱրեւելս» հոդվածում լուսաբանվում են հրեաների տնտեսական կշիռն Ադրիանուպոլսում և Սալոնիկում (1902, 22 դկտ.): Այստեղ, մասնավորապես, գնահատվում են հրեական դործակցական (արհեստակցական) ընկերությունը և սրա կիրառած փոխօգնության ձևերը՝ հօգուտ իր անդամների: Նշված սկզբունքը թերթի տնտեսագետը ընդունելի էր համարում նաև հայերի համար:

«Բյուզանդիոնում» առանձին խումբ են կազմում բանկերին, բանկային գործառնություններին, արժեթղթերին, դրանց գներին անդրադարձող՝ մասնագիտական փայլով գրված ինքնուրույն և թարգմանական հոդվածները: Եթե սրանց ավելացնենք Ռևժիի ծխախոտի ընկերության, Օսմանյան բանկի, Իզմիր-Գասապա և հարակից երկաթուղագծերի տնտեսական նշանակությանը նվիրված տնտեսագիտական վերլուծությունները, ապա կարելի է ասել, որ Թուրքիայի տնտեսության արժեքավորման ասպարեզում «Բյուզանդիոնը», անկասկած, առաջատար հրատարակություն էր: Ռ. Քեչյանը ընթերցողին ծանոթացնում էր ժամանակակից տնտեսագիտական մտքի արժեքներին: Նրա թարգմանությամբ թերթը տպագրել է տնտեսագետ Լ. Կարնեգիի «Ինչպէս հարստանալ» և «Հարստութիւնը եւ իր գործածումը» հոդվածները (1903, 22–23 դկտ.): Հասարակական բևեռացման, կապիտալի և աշխատանքի հակասությունները մեղմելու տեսակետից, Ռ. Քեչյանը կարևորում էր հարստության, եկամուտների բաժանման սկզբունքը սեփականատերերի հոծ խմբերի մեջ, կամ ազգային հարստության բաշխումը նրա անդամների միջև այն դեպքում, երբ պահպանում է կապիտալի բերած հավելյալ արժեքը, բայց մեծանում է աշխատանքի

վարձատրությունը: Բ. Քևչյանը ևս սրա մեջ է տեսնում աշխատուժի անզուսպ չահագործման հետևանքով սրված դասակարգային հակամարտությունները մեղմելու կարևոր միջոցը:

Արևմտահայաստանի տնտեսությունը ազգային կապիտալի, կոոպերացիայի և փոխատվության միջոցներով վերածնելու գաղափարը, որ վայելում էր Բ. Քևչյանը, թվում է, իրականացմանը մոտ էր 1914 թվականին, երբ այս ուղղությամբ պետք է գործեին Անդրկովկասի հայ դրամատերերը[1]: Այս առթիվ «Բյուզանդիոնը» նշում է, որ նրանք հավաքել են կես միլիոն ռուբլի և հիմնել «Փոքր Ասիայի ռուսական առևտրական բանկը», որը ցածր տոկոսներով վարկ էր տրամադրելու գյուղացիներին և առևտրականներին: Թերթն իր ակնկալիքները հիմնավորում էր դիտական վկայակոչումներով. մի հոդվածում հայտնվում է, որ այդ բանկի հիմնադիրների ժողովին է այցելել Պետերբուրգի համալսարանի ավագ դասախոս պրոֆ. Տոտոմյանցը, որն ասել էր, թե «Արեւելեան գաւառների (իմա՝ Արևմտահայաստանի – Ա. Խ.) տնտեսական պէտքերը չատ լավ հասկցուած են Կովկասի մարդոց կողմէ, այնպէս որ մեծ յոյս ունինք, թէ Բ. դրան բարեհաճութեամբ գործադրուելիք բարենորոգումները նաեւ տնտեսական բարօրութեան միջոցները պիտի աւելցնեն» (1914, 25 հլս.):

Իր համամտությունը հայտնելով դրան, «Բյուզանդիոնն» ավելացնում էր, որ Արևմտահայաստանը կարող է ոչ միայն վարչական ապահովության և արդարության, այլև դրամագլխի, որ միջոցով միայն կարող են արդյունավետ միանալ աշխատանքը, արտադրությունը և գործակցությունը:

1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո «Բյուզանդիոնը», ինչպես և առհասարակ հայկական մյուս լրատվամիջոցները, լավատեսությամբ լեցուն նյութեր է տպագրել Օսմանյան Թուրքիայում բռնակալության վախճանի, ազգերի իրավահավասարության ու համերաշխության, Արևմտահայաստանում բարեկարգում-

[1] Տե՛ս Թովմասյան Ն. Ռ., Թամրազյան Հ. Հ., Պապիկյան Գ. Թ., Հայ տնտեսագիտական մտքի պատմության ուրվագծեր, էջ 414–415:

ների և այլնի վերաբերյալ: Թևրիզն առավելապես ուշադրություն է հրավիրում դավառի տնտեսական և ուսումնակրթական վիճակի վրա, հիմնավորում վարչական առաջիկա բարենորոգումների անհրաժեշտությունը: Բ. Քեչյանին հատկապես հետաքրքրում է քրդական հարստահարություններին վերջ տալու հարցը[1]: Այս դեպքում խմբագրապետին, ինչպես և Ա. Ալպոյաճյանին նպատակահարմար է թվում քրդերին լուսավորելու, նրանց մշակութային կյանքի մեջ ներդրավելու և քաղաքակրթելու ծրագրերի իրականացումը: Ի դեպ, այդ ծրագրերը բավական տարածված էին ժամանակի հայ մտավորական գործիչների մեջ, մասուլն այն որոճում էր իբրև հրատապ թեմաներից մեկը, լույս էին տեսնում հայատառ քրդերեն այբբենարաններ՝ քրդերի համար, առաջ էին քաշվում հայ-քրդական միության հետ կապված հարցեր: Թվում է, ընդհանրական էր դարձել այն տեսակետը, որ հայերի վրա քրդերի բռնանալու և աւհասարակ, քրդական հարստահարությունների պատճառը Աբդուլ Համիդի հրահրիչ քաղաքականությունն էր և որ դրա վերացումը լայն հնարավորություններ է ստեղծում հայ-քրդական մերձեցման համար: Ա. Ալպոյաճյանը, օրինակ, չէր վարանում հայտարարել այդպիսի մերձեցման հավնչյալ պատճառ, որպիսին էր նրա համոզմամբ, քրդերի մի որոշ մասի մեջ իրենց՝ հայ լինելու մասին հարատևած հիշողությունը: Հայերի նկատմամբ քրդերը բռնություն են գործադրում ոչ թե նրանց՝ հայ լինելու համար, այլ «անոր համար, որ ինքն իրը անքաղաքակիրթ և կիսավայրենի ժողովուրդ՝ չունի հաստատուն և խաղաղ բնակչութիւն, և աւազակութիւնը, բռնի գրաւումը, կողոպուտն իր ապրուստին սովորական աղբիւրները կը կազմեն» (1919, 29 հլս.): Երիտթուրքական կառավարության հետ հույսեր կապող Թևրիզը, ինչպես և Ա. Ալպոյաճյանը, կարծում էին, որ նա կդինամիկ քրդերին և

[1] «Մասիսում» տպագրած իր հոդվածներում ևս, դեռևս «Բյուզանդիոնից» առաջ, Բ. Քեչյանը հայ գյուղացու տնտեսության համար կործանարար երևույթ էր համարում թուրք-քրդական «յելուզակաբարոյ ցեղերի» բալանի և կողոպուտի մշտական գործողությունները (և. տ., էջ 413):

կատիպի նրանց վարժվելու «հաստատուն բնակութեան եւ երկրագործութեան»: Այս առթիվ Ա. Ալպոյաճյանը հիշում է, որպես չիրականացված հնարավորություն, հայ-քրդական միություն ստեղծելուն ուղղված՝ ոչ վաղ անցյալում ձեռնարկված փորձերը հայերի կողմից: Նա արժեքավորում է հատկապես Մ. վարդ. Տիգրանյանի՝ «Հրաշագործ» հորջորջված այդ հոգևորականի[1] գործունեությունը 1840–1860-ական թթ.՝ Դիարբեքիրում և Կ. Պոլսում նրա հիմնած «Բարեկարգություն Արևելյան» ընկերությունը (1860), որի առաջնապետն էր Մ. Մոմճյանը, անդամակիցները՝ Հ. Մյուհենտիսյանը, Տ. Յուսուֆյանը և Հ. Սվաճյանը (1909, 29 հլս.):

Հայ-քրդական հարաբերությունների թեման, որ աչխուժորեն քննարկվում էր «Բյուզանդիոնի» էջերում, պետք է չքանար 1909 թ. Ադանայի ապրիլյան դեպքերի հորձանքի տակ: Թուրքական բռնակալության դեմ հայ-քրդական դաշինք ստեղծելու փորձերը այս անգամ ևս ձախողվեցին[2]: Թերթն իր ողջ ուշադրությունը կենտրոնացնում է այդ ողբերգության, նույնիսկ դրա մանրամասների վերլուծության վրա, տպագրում հոդվածներ, նամակներ, թղթակցություններ և այլն, բայց անում հատուկ խորագիր՝ «Կիլիկիոյ դէպքերը» վերտառությամբ: Հիասթափությունների և ուշաբերման դրաման էին ապրում հայ մտավորականության մի ստվար մասը, այդ թվում և «Բյուզանդիոնի» այն գործիչները, որոնց աչքերի առաջ հանկարծակի բացվեց երիտթուրքական կառավարության կործանիչ ծրագիրը՝ գործողության մեջ: Թերթն անդրադարձել է ջարդարարների գործելակերպին, խաղաղ բնակչության հանդեպ նրանց վայրագություններին, ընդամին, վերհանելով հայերի պաշտպանական կռիվները և դիմադրական ոգին: Հասանրեկ հայկական

---

[1] Ըստ Ա. Ալպոյաճյանի, Մյուհենտիսյան տպարանում Մ. Տիգրանյանը ընթերցարան է տպագրել դրոների համար (1860 թ.)՝ «Լապտեր լուսատու յորինեալ ի տէր Մկրտիչ վարդապետէ. Տիգրանեան յառաջնոյդէ Քուրդիստանի ի լոյս ընծայեցաւ. «Ընդայէ ըռոնի հախ չէ գրին, ԺԸ Սկրտիչ Տիգրանէ մըբռան մուրախասէ Քիւրտիստան պասմա պուռե» վերնագրով («Բյուզանդիոն», 1909, 29 հուլիսի): Նույն ժամանակներում Ասսվածաշնչի ընկերությունը տպագրել էր Ս. Գրքի հայատառ բրդերեն թարգմանությունը (նույն տեղում):

[2] Սիմոնյան Հր., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, էջ 220–221:

դյուղի երկօրյա դիմադրության առթիվ «Բյուզանդիոնը» տպագրել է մի բնակչի նամակն իր եղբորը, որտեղ նկարագրվում է գյուղացիների դիմադրությունը Ջարդարարների բազմապատիկ գերակշիռ ուժերին (1909, 6 մյս.): Նույն խորագրով ներկայացվում են Զոք Մարզվանի պաշտպանական կռիվները, հայերի հերոսական ընդդիմությունը և այնուհետև, Ադանայի ջարդը վերապրողների ծայր աստիճանի թշվառությունները (1909, 10 մյս.):

Ջալդերին զուգահեռ, այս օրերին ամբողջ թափով գործում էր իթթիհատական քարոզչությունը: «Սարահ» թերթը բերում էր ստահոդ տվյալներ, որոնց համաձայն, ջարդերից առավել տուժել են թուրքերը, որոնց կորուստներն, իբր, նշանակալիորեն գերազանցում են հայերի կորուստներին: «Բյուզանդիոնը» հերքում է այդ չինծու վիճակագրությունը՝ ցույց տալով, որ հայերի մեջ սպանվածների թիվը հասնում է մինչև 30 հազարի (Ն. տ.):

Իրենց վիճակագրական հորինած տվյալները թուրքերն ամրապնդում էին իրական պատժիչ գործողություններով: Եվ ինչպես միշտ և ամենուրեք, նրանք կոտորածի ամբողջ մեղքն ու պատասխանատվությունը բարդեցին հայերի վրա: Կիլիկիայում սկսվեցին հայերի հոծախումբ ձերբակալությունները, սկսեց գործել թուրքական «արդարադատության» մեքենան: Թուրքական մամուլը միահամուռ, սոսկ երանգային տարբերություններով էր ներկայացնում իրականության ճախուճուռ պատկերը: Նախապես իթթիհատական մամուլը հասարակական կարծիքի ուշադրությունը շեղելու տենչով բռնված՝ Ադանայի դեպքերի ամբողջ մեղքը գցում էր հին վարչակարգի՝ Աբդուլ Համիդի և նրա կողմնակիցների վրա: Նույն «Սարահը» պնդում էր, որ թերավարտ է մնացել 1908 թ. հուլիսի 11-ի հեղաշրջումը, որովհետև գավառներում տակավին գործում է հետադիմությունը: Ճիշտ այս ոգով էր դեպքերը մեկնաբանում օսմանյան խորհրդարանը, որը գրեթե միաբերան մեղավոր էր համարում իշխանությունից հեռացված Համիդին: Նույնն էին պնդում Սալոնիկի երիտթուրքական հրատարակությունները: Էքյուզիա Թևֆիքի՝ ինտրիգներում այդ ծնծկված և բազմափորձ իթթիհատականի «Թասվիր-ի էֆքյար» թերթը դանում էր, որ Ադանայի

դեպքերի համար «երկու կողմերն ալ հաւասարապէս յանցաւոր էին» և ինչպես իրավացիորեն Բ. Քեչյանն էր դիտում «վարպետորդի ոճով» (1909, 6 հլս.):

Կողմերի այս կիզծ հավասարակշռության թեղը նախապատրաստական այն քայլն էր, որից քիչ այն կողմ սկավելու էր այդ հավասարակշռության նժարն ամբողջովին ի վնաս հայերի թեքելու գործը: Թուրքական լրատվամիջոցների հարայհրոցների ուղեկցությամբ Կիլիկիայում սկսվեցին, իբր, ապստամբ և նախահարձակ հայերի ձերբակալությունները: «Շատ մը հայեր կան ձերբակալուած Ադանայի, Մէրսինի մէջ եւ այլուր,- գրում է թերթը,- իբր թէ Կիլիկիոյ մէջ յեղափոխութիւն յարուցած ըլլալու կամ իսլամաց վրայ յարձակելու ամբաստանութեամբ: Ակներեւ է, որ տեղական պաշտօնեութիւնն իր բացարձակ կողմնակցութիւնն ու մեղսակցութիւնն հերքելու կարծիքով տխուր եղելութեանց պատասխանատուութիւնն հայոց վրայ կը նետէ եւ Մէրսինի «Իթիհատ» անուն թերթն ալ շարունակ հայերի կամբաստանէ, իբր թէ անոնք են սկսեր ջարդը, անոնք կրակի տվեր են թրքաց կալուածները, անոնք կրակ ըրեր են գօրաց վրայ» (1909, 8 մյս.):

«Սանձարձակ հակահայ քարոզչութեամբ» առանձնացող այդ թերթի խմբագիր Իհսան Ֆիքրին, ի դեպ, կապված էր Ադանայի երիտթուրքական կոմիտեի հետ[1]: Անկախ դրանից Արշակուհի Թեոդիկը կոտորածից շատ չանցած՝ տալիս էր «Իթիդալի» խմբագրի ջարդարարական նկարագիրը. «Հրազէն ու դաշոյն... այնչափ աւէր չէին սփռած հոս, որչափ այդ մարդուն գրիչը»,- գրում է նա[2]:

«Կիլիկեան արհավիրքը» հոդվածում Ս. Պարթևյանը մերկացնում էր երիտթուրքերի քաղաքական երեսպաշտությունը, հայերին մեղադրելը իբրև «ապստամբ ու անջատական ձգտումներու դործիք» (1909, 10 մյս.): «Բյուզանդիոնը» մերկացնում էր Ադանայի մուֆթիի Մեհմեդ Լութֆիի թղթակցությունը Զմյուռնիայի

---

[1] Սիմոնյան Հր., Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ), էջ 33, 220:

[2] Թէոդիկ Ա., Ամիս մը ի Կիլիկիա, էջ 108:

«Խըմնեթ» թերթում, որտեղ նա ջարդերի նախաձեռնողն էր համարում հայ ֆիդայիներին (1909, 26 մյս.):

«Բյուզանդիոնին» հայտնի էին ոչ միայն թուրքերի նախահարձակումներն ու նպատակը, այլև այն, որ դրանք խնամքով նախապատրաստվել էին երիտթուրքական իշխանավորների կողմից: Մուֆթիի վերոհիշյալ թղթակցությանը ընթերցողին ծանոթացնելուց հետո, թերթը գրում է. «Մուֆթիին այս գիրքին ամփոփում ներկայացուցինք, հաստատելու համար, որ այս ջարդը և աղէտը պատահական բան մը չէր, այլ նախապատրաստուած ծրագրի մը վրա քալեր է՝ ու յետոյ իրենց փաստերն ալ պատրաստեր են ինքզինքնին արդարացնելու համար» (ն. տ.): Թերթը նկատում էր նաև, որ դրա գործադրման մեջ մեծ բաժին է ունեցել կուսակալ Ջևվատ բեյը՝ ջարդի առաջին փուլից (ապրիլի 1–3-ը) հետո, երբ իշխանությունները զենքը հավաքել էին հայերից, իսկ ապրիլի 12-ին, ջարդի 2-րդ փուլում, կոտորածը սկսվեց երիտթուրքական բանակի ստորաբաժանումների հարձակումով, որին միացավ թուրքական խուժանը (1909, 2 հնս.): 1909 թ. հունիսին թերթը բացահայտորեն հնչեցնում էր երտթուրքերի ապալրատուվությունն այն մասին, որ Ադանայի աղետի պատասխանատուները Համիդի կողմնակիցներն են:

Միաժամանակ, «Բյուզանդիոնը» քննադատում էր եվրոպական տերությունների հայեցողական ու անտարբեր կեցվածքը Ադանայի կոտորածի նկատմամբ: Այս տեսակետից հետաքրքիր է Հ. Ասպետի (Օ. Զիֆթե-Սարաֆ) «Հեռագրական զաւեշտը Կիլիկիոյ կոտորածներուն առթիւ» երգիծական նյութը. այստեղ ծաղրվում են եվրոպական քաղաքագետները, որոնք իրենց նավատորմիների հրամանատարներին հրամայիլ էին անկարելի մի բան՝ «զօրք ցամաք չհանուի բնաւ, բայց կարելի եղածին չափ պաշտպանուին քրիստոնեաները» (1909, 31 մյս.):

Ադանայի դեպքերը «Բյուզանդիոնին» մղում էին քննադատաբար գնահատելու նաև ազգային իրականության հանդեպ հայկական քաղաքական ուժերի պատկերացումները: Նրա էջերում կշտամբանքի և քննադատության խոսքեր են ուղղված ազգային

կուսակցությունն երին, որոնք ի սկզբանե չէին կռահել երիտթուրքական գործիչների նպատակները, հույսեր էին կապել նրանց, իբր, առաջադիմական առաքելության հետ և հավատացել սրանց միամտորեն: Մի հոդվածում թափանցիկ ակնարկ է արվում ՀՅԴ և Հնչակյան կուսակցությունների դյուրահավատության վերաբերյալ, «որոնք յուսացին ազատական ճոռոմաբանութիւններուն ու սնամէջ ճամարտակութիւններուն և բոլորովին բացուեցան... եւ բնաւ զգուշական միջոցներ ձեռք չառին եւ ուրախութենան ու ապահովութենան անուշ քունին մեջ ընկղմուած՝ ազատութենան, եղբայրութենան եւ հաւասարութեան անկարելի երազներ տեսան» (1909, 3 հնս.):

«Բյուզանդիոնը», այսուհանդերձ, կտրուկ էր իր քննադատության մեջ և ՀՅԴ ու երիտթուրքերի մերձեցման խնդիրը գնահատում էր զուտ հրապարակախոսական կրքոտությամբ, թեև նրան հաճախ չես զրկի հիմնավոր վերլուծության կարողությունից: Թերթի այդ հակակրանքը սկիզբ է առնում առհասարակ դաշնակցության գաղափարախոսության սոցիալիստական ծրագրի նկատմամբ ունեցած ընդհանուր հակակրական ոգուց: 1910 թ. և հետո իր ընդդիմությունը դաշնակցության հանդեպ «Բյուզանդիոնն» արտահայտում է արդեն այդ կուսակցության կոմիտեների և գործիչների չարունակական քննադատությամբ: Ակներևաբար, թերթը սաստրում էր սահմանադրական ռամկավարներին (Ս. Պարթևյան, Վ. Թևքեյան և ուրիշներ), որոնք դաշնակցությանը հակադրվում էին նախ Ադանայի դեպքերի, իսկ այնուհետև ազգային սահմանադրական մարմինների հանդեպ ունեցած գոլծելակերպի առթիվ:

«Բյուզանդիոնն» անվերապահորեն անցավ սահմանադրական ռամկավարների կողմը՝ ի պաշտպանություն Օրմանյանի, այն բանից հետո, երբ Դաշնակցությունը «ազգի դավաճան» հռչակեց պատրիարքին՝ մեղադրելով նրան Լա Հեի վեհաժողովին Համիդի բռնապետության վերաբերյալ զոհունակություն հայտնելու հարցում:

Երիտթուրքերի հետ դաշնակցության փոխհարաբերությունների, այդ կուսակցության օգտապաշտական ձգտումների և այլնի

վերաբերյալ «Բյուզանդիոնի» հեղինակների դիտողությունները երբեմն կրում են բանավիճային կրքի, հրապարակախոսական զգացմունքայնության կնիքը, որ ավելի շատ հատուկ էր ժամանակի կուսակցական բանակռիվներին՝ մամուլի հրապարակումների մեջ: Մյուս կողմից, դաշնակցության և նրա քննադատների իրոք կարևոր բանավեճը կարոտ է լուրջ և բազմակողմանի քննության, իսկ այստեղ միայն նշենք, որ թերթի դիրքորոշումը բավականաչափ հստակ ձևակերպում էր Ա. Ալպոյաճյանը, երբ անդրադառնալով «Թանին» թերթի էջերում դաշնակցության քննադատությանը, գրում էր. «Դաշնակցությիւնը օր մը պիտի լքանէ այդ մարմինները, եթէ երբեք օր մը կարենայ գրաւել իր հին դիրքը, ինչպէս օսմանեան քոմիտէն պիտի մերժէ ճանչնալ իր՝ դաշնակցութեան հետ կնքած համաձայնութիւնը, երբ անոր պէտքը դադրի» (1910, 15 օգ.): Դրա նշանները, «Բյուզանդիոնի» թղթակցի կարծիքով, արդեն կային, թեկուզ և այն իրողությամբ, որ «Թանինը» վերստին հրապարակ էր հանել «տիրապետող ազգի»՝ օսմանցիների, կայսրության մյուս ազգերի մեջ նախապատիվ լինելու երիտթուրքական հին հանկերգը:

Թուրքիայի քաղաքական իրադարձությունների նկատմամբ «Բյուզանդիոնի» ակտիվ դիրքորոշումը ցույց է տալիս, որ այս թերթը, արտահայտելով հայ բնակչության մի ստվար մասի տրամադրություններն ու խոհերը, ցանկանում է ստեղծել որոշակի հասարակական կարծիք՝ նույն այդ տրամադրությունների վրա ներազդելու համար: Այս իմաստով հետաքրքիր է նրա դիրքորոշումը 1911 թ., իթթիհատի և իթիլյաֆի հայտնի հակադրության նկատմամբ: Առավել ազատամիտ կեցվածք որդեգրած և իթթիհատին հակադրվող իթիլյաֆը, որպես կուսակցություն հենց այս հակադրության շնորհիվ, գրավել էր հինականում իթթիհատից դժգոհ թուրքական ազատամտող որոշ վերնախավային շերտերի, ինչպես և հայ ազատամիտների մի հայտնի մասի համակրանքը: 1911–1912 թթ. սկզբներին օսմանյան խորհրդարանի ընտրություններին շրջանում քաղաքական կյանքի մակերես ելած իթիլյաֆը՝ կազմված իթթիհա-

տի բազմաշերտ և բացահայտորեն ազգայնամոլ սոցիալական խմբերին հակադիր օսմանյան ազնվապետական (էշրաֆ) և ազատամիտ փոքրամասնությունից, սոցիալական որևէ հենարան չունեը գավառում, ուստի և խորհրդարանական ուժի վերածվելու իր ակնկալիքները կենտրոնացրել էր գլխավորապես Կ. Պոլսում: Գավառներում իր ակնհայտ թուլությունը, մի կողմից, նրանից վանում էր դաշնակցությանը (որ համագործակցում էր իթթիհատին), բայց և մյուս կողմից, տեղերին ինքնավարություն ապահովելու նրա սպասկենտրոն խոստումները՝ հակառակ իթթիհատի կենտրոնաձիգ ու չովինիստական հայացքների, գրավում էին բարենորոգումների հույսերով օրորվող և դաշնակցության դեմ պատրաստի առարկություններ ունեցող հայ մտավորականության մի մասին՝ Բ. Քեչյանին, Օ. Զիֆթե-Սարաֆին, Ն. Տաղավարյանին, Ս. Սպարթալյանին և այլոց: Վերջին երկուսը, ի դեպ, հակվել էին դեպի իթթիլյաֆը՝ սրա դոյության և գործունության մեջ տեսնելով իթթիհատի ազգայնամոլ, կայսրության այլահավատ ազգերի ինքնուրույնությանը բացահայտորեն սպառնացող քաղաքականության ընդդիմադիր ուժի (1911, 25 նոյ.): Այս ուժն էր, որից Բ. Քեչյանն ակնկալում էր կանխումն այն բանի, որ «բովանդակ տէրութիւնն իթթիհատի համար չահաստան մը» չդառնա (Ն. տ.):

Ոչ դաշնակցական ազդային գործիչներին իթթիհատից հեռացնում էր նաև այն հանգամանքը, որ այս վերջինը, ելնելով իր պանթուրքական նկրտումներից, ըստ հնարավորին սահմանափակում էր պատրիարքարանի քաղաքացիական իրավասությունները՝ հնարավոր համարելով ճանաչել նրա միայն կրոնական գործունեությունը:

«Բյուզանդիոնում», այսուհանդերձ, բացահայտվում են նաև իթթիլյաֆի սահմանափակությունները, հատկապես հակասականությունը նրա կղերամտության և ինքնավարական սկզբունքների միջև, անհետևողականությունն ու ոչ սկզբունքայնությունը իթթիհատի դիրքորոշումները գնահատելիս և այլն: Օ. Զիֆթե-Սարաֆը կռահում էր նաև այդ կուսակցության հետին նպատակները.

«Իթիլաֆը խօսքով ամէն բան կուտայ կոր, բայց գուցէ երբէք դործի գլուխ անցնելիք չունի եւ նթէ անցնէ իսկ առաջինին (իթթիհատին – Ա. Խ.) ճամբան բռնէ, ինչպէս նշաններ ալ կան եւ ինչպէս կը սիրեն հաւատացնել իթթիհատականները» (1912, 29 հնվ.):

Իթիլյաֆի հանդեպ համեմատաբար մեղմ մոտեցում ուներ Բ. Քեչյանը, անշուշտ, համեմված կասկածամտության մի հայտնի չափաբաժնով: Դաշնակցությունը և հնչակը, նրա կարծիքով, իթիլյաֆին վերաբերվում են կանխակալ կարծիքով, որովհետև վերջինիս քարոզչության մեջ նկատում են ազնվականական և կղերական տարրեր, բայց դրանք նախընտրելի են իթթիհատի ազգայնամոլությունից: Միաժամանակ, Բ. Քեչյանը կարծում է, որ իթիլյաֆը սոսկ «Որոշ բառերով աւելի կը նպաստաւորէ թէ՛ ազգայնութեանց պահպանումն ու թէ՛ ապակեդրոնացումը» (1912, 10 փետ.): Բ. Քեչյանը, սակայն, անդրադարձավ նաև իթիլյաֆի այն խոստմանը, թե իրենք արևելյան գավառներում (այսինքն՝ Արևմտահայաստանում) համաձայնություն են կայացրել քուրդ ցեղապետերի հետ՝ ապահովելու հայերի բնական իրավունքը, ինչպես և կարող են միջնորդել, որ հայերն ու քրդերը համաձայնության հասնեն հողային հարցը «բարեկամաբար» լուծելու համար: «Իյուզանդիոնի» խմբագրապետը դա համարում է իթիլյաֆի նախընտրական խայծը՝ հայերին հրապուրելու դատարկ խոստում (1912, 10 փետ.):

Իթիլյաֆի հանդեպ չատ ավելի լոյալ դիրքորոշում ուներ, ինչպես ասվեց, Ն. Տաղավարյանը, որն իր «Բաղդատական ուսումնասիրութիւն» հոդվածում մեկ առ մեկ քննարկում էր թուրքական երկու կուսակցությունների նախընտրական ծրագրերը և չնայած իր որոշ խորաթափանց դիտողություններին, հենվելով երկրորդական կարգի ծրագրային կետերի վրա, առավելությունը տալիս է իթիլյաֆին (1912, 20 մրտ.):

1912 թ. սկսած, երբ Հայկական հարցը դարձյալ սկսեց արծարծվել միջազգային դիվանագիտության մեջ, ընդհուպ մինչև առաջին աշխարհամարտը, «Իյուզանդիոնը» ուշադրությամբ հետևում էր դրա զարգացումներին: Այս հիմնահարցին թերթի մո-

տեցմանը դրեթե նույնանման հայացքներ էր արտահայտում պրոֆ. Կ. Թումայանը, որն, ի դեպ, «Բյուզանդիոնի» ակտիվ աշխատակիցներից էր: Այս հեղինակը Հարցի քննարկումը սկսում է ոչ վաղ անցյալից՝ 1890-ական թթ. հայերի կոտորածները դիտարկելով իբրև օսմանյան պետական քաղաքականություն: Հետաքրքրական է նրա «Սայիտ և Բէամիլ փաշաներուն յիշատակները» հոդվածը (1911, 21 նոյ.): 1895 թ. գավառների մեջ չարդը կատարվել էր Սայիդ փաշայի, իսկ 1896 թ.՝ Բյամիլի մեծ վեզիրության ժամանակ: Կ. Թումայանը նկատում է, թե չի կարելի պնդել, որ Բյամիլն անձամբ չարդերի կազմակերպիչ է եղել, սակայն իր հուշերում հաճախակի դործածվող «ապստամբութիւն», «հայերի ոտքի նյլելը» և նման այլ դարձվածները ցույց են տալիս, որ նա համիդյան շրջանի դաղափարախոսներից է, որոնք փաստորեն հիմնավորում էին այդ կոտորածները: Կարևորը, սակայն, փաշաների հին հորինվածքները չէին, այլ այն, որ Կ. Թումայանը համոզիչ փաստերից եղրակացնում է, որ Հայի, իբրև օսմանցի թուրքի թշնամու, տերությունների օդնությամբ անկախանալու ձգտող քայքայիչ տարրի կերպարը թուրքական քարոզչությունը սկսել էր թխել դեռևս 19-րդ դ. վերջին տասնամյակներին, Բեռլինի վեհաժողովից հետո:

1912 թ. «Բյուզանդիոնը» Հայկական հարցը հանգեցնում է Արևմտահայաստանում բարենորոգումների իրականացմանը և թերթում հայտնվում է «Բարենորոգմանց խնդիրը» խորագիրը՝ ամենատարբեր բնույթի նյութերով և լրատվությամբ, որոնց միավորում է թեմայի ընդհանրությունը: Հայկական հարցի վերարծարծման մեջ «Բյուզանդիոնը» տեսնում է ոչ թե ինքնավարություն, այլ Բեռլինի վեհաժողովի ուժով և 1895 թ. բարենորոգումների ծրագրով (մայիսյան ծրագիր) Արևմտահայաստանում բարենորոգումներ անցկացնելու նպատակը: Հենց այս իմաստով էլ նա մեկնաբանում է Պողոս Նուպար փաշայի, Եվրոպայի հայերի առաջնորդ Գ. Ություճյանի, Յաղուպ Արթին փաշայի, Մինաս Չերազի և Հ. Մոսուիչյանի անդամակցությամբ Փարիզում կազմված ազգա-

յին պատգամավորության գործունեությունը (1913, 29 մայ.): Բ. Քեչյանը կարծում է, որ բարենորոգումների շուրջ քաղաքական հակասությունները եվրոպական տերությունների և Ռուսաստանի միջև կարող են վերանալ տնտեսական շահերն ի մի բերող այնպիսի գործոնի շնորհիվ, ինչպիսին երկաթուղաշինությունն է: Թերթը նկատի ուներ Բաղդադի և Բասրայի, երկաթուղիները, որոնք, իբր, պետք է հաշտեցնեին գերմանական, անգլիական, ֆրանսիական և ռուսական տնտեսական, ուրեմն և քաղաքական հակամարտությունները այս տերությունների, և մյուս կողմից, սրանց ու Թուրքիայի միջև:

Արևմտահայաստանի բարենորոգումների հարցում «Բյուզանդիոնը» ուներ հույժ չափավոր մոտեցում՝ պաշտպանելով Կ. Թումայանի տեսակետը. դրանց իրականացման համար պետք է դիմել ոչ թե օտար տերություններին, որ կդրդռեր թուրքերին և փորձանք կդառնար ազգի գլխին, այլ ակնկալել Թուրքիայի «սահմանադրական կառավարության» արդարացի վերաբերմունքն ու գործունեությունը (1913, 12 դկտ.): Սակայն քաղաքական իրադարձությունները այլ ընթացք ունեին, և «Բյուզանդիոնը» բավական ծավալուն տեղ էր տալիս բարենորոգումների շուրջ ռուս-գերմանական բանակցությունների, դարձյալ զուսպ առաջադրումներով հայտնելով իր մոտեցումները: Դրա հետ միասին թերթը ուշադրություն էր դարձնում երիտթուրքական «Թասվիր-ի էֆքյարի»՝ հայերի դեմ տպագրած թշնամական նյութերին, ինչով առհասարակ, զբաղված էին նաև իթթիհատական մյուս հրատարակությունները: Այդ թերթերը («Թանին», «Իքդամ», «Ռնյան») ծայր աստիճանի հակառակ դիրք էին բռնել հայարնակ վիլայեթներում բարենորոգումների ամեն մի գաղափարի դեմ՝ չարունակ մերժելով «օտար վերահսկողությունը»: Քաղաքական անբարենպաստ իրադրությունն էր պատճառը, որ «Բյուզանդիոնը» չարունակաբար, բայց զուտ լրատվական բնույթի նյութեր էր տպագրում բարենորոգումների գործով սոսկ ֆիզիկապես Կ. Պոլսում հայտնված քննիչներ Վեստենենկի և Հոֆի առաքելության մասին, և հակառակ Զա-

վեն պատրիարքի ու Կ. Պոլսի ազգային վարչության՝ որևէ հույս չկապելով նրանց հետ[1]:

Առաջին աշխարհամարտի նախօրեին և մանավանդ, 1914 թ. առաջին կեսին և մինչև Թուրքիայի՝ պատերազմի մեջ մտնելը, արևմտահայությունը հայտնվեց թշնամական կրքերով չիկացած մթնոլորտում: «Բյուզանդիոնի» նյութերը հարուստ լրատվություն են պարունակում այս ժամանակաշրջանի հայ գավառի իրական կացության մասին: Թերթը տագնապով է ներկայացնում ամբողջ երկրով մեկ ծավալված երիտթուրքական ազդայնամոլ քարոզչության ազդեցությունը գավառների և մայրաքաղաքի թուրք զանգվածների վրա: Արևմտահայաստանում և այլ շրջաններում ամբողջ թափով ընթանում էր հայերի հողազրկման, առևտրի ու տնտեսական ոլորտից նրանց մեկուսացնելու քաղաքականությունը: Իշխանությունները առերևույթ դատապարտում, բայց իրականում խրախուսում էին ամբողջ երկրով մեկ 1914 թ. իսլամ բնակչության կողմից հայերի և հույների առևտուրը բոյկոտի ենթարկելու գործողությունները, որ սկիզբ էր առել Սալոնիկում և ապա տարածվել երկրի ասիական մասերում: Չնայած իր զգուշավորությանը, «Բյուզանդիոնը» գրում էր, որ հայ և հույն առևտրականներին հալածելու, նրանց առջև չուվալ բռնի փակելուն ուղղված այդ «չարժումին նշանը Պոլիսէն տրուած էր և իր յետին մանրամասնութեանց մէջ Պոլիսէն էր, որ կը ղեկավարուեր այդ չարժումը» (1914, 6 հլս.):

«Բյուզանդիոնը» հայտնում էր, որ Ռոդոստոյի հայ վաճառականության կողմից Կ. Պոլիս ևկած պատվիրակությունը «պատրիարքին գանգատէր է թուրք և հրէայ խմբակի մը կողմէ հայե-

---

[1] Առաջնորդներին ու գավառական վարչություններին ուղղած 1914 թ. փետրվարի 17-ի իր շրջաբերականով Զավեն պատրիարքը հարկ էր համարում անգամ բնութագրել այդ քննիչներին. «Վէսբէնէկը վարչագէտ, կորովի եւ փորձառու անձ մը կերեւի, նկարագրով քիչ մը կասկածամիտ եւ զգոյշ, բայց ազնիւ եւ անկաշառ: Պ. Հոֆֆը վիճուտրական է, վարչական գործերում կը թուի անփորձ ըլլալ, բնաւորութեամբ մեղմ եւ քիչ մը թոյլ անձի տպաւորութիւն կը թողու, բայց կը յուսանք, թէ բացուի քիչ առնէնէն եւ խելացի կառավարող մը ըլլայ: Անոր ազնուութիւնը եւս ամէն կասկածներէ վեր է»,- հայտնում էր պատրիարքը (ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 60, թ. 8):

րուն դէմ սաստկապէս պայքար ի գործ դրուելուն համար» (ն. տ.): Երիտթուրքական մամուլը զրդռում էր ամբոխի կրքերը և չարդերի սպառնալիք ուղղում «հայրենիքին խորթ տարրերի» հայերի դեմ: Այդ մամուլը, նկատում էր «Բյուզանդիոնը», հասարակական ամեն մի իրողութիւն մեկնաբանում է կրոնների հակամարտութեան տեսակետից՝ ելնելով չովինիստական մոլուցքից: Օսմանյան ընդհանուր զորակոչից հետո թերթը ներկայացնում է հայ զինվորի իրավազուրկ վիճակը բանակում, զորանոցային ծանր պայմանները և բռնութիւնները նրա նկատմամբ (1914, 16 հնվ.): Ոչ միայն «Բյուզանդիոնի», այլև առհասարակ 1912–1914 թթ. հայ մամուլի նյութերը բացահայտում են կոտորածներ նախապատրաստող սպառնալի մթնոլորտը, որ ստեղծել էին երիտթուրքերն ամբողջ երկրում՝ անմիջականորեն գործի դնելու ցեղասպան գործողութիւնները:

1909–1914 թթ. ընթացքում «Բյուզանդիոնը» իրականացրել է գրական-մշակութային հրատարակութեան իր խնդիրները: Նրան աշխատակցում էին ժամանակի հայ գրական և մտավորական լավագույն ուժերը՝ վ. Թևքելյանը, Օ. Չիֆթե-Սարաֆը, Բ. Կյուլևսերյանը, Ս. Պարթևյանը, Լ. Մկրտիչյանը, Լ. Բիւրիշճյանը, Անայիսը, Կ. Թումայանը, Ալփիարը և այլք: Այս ուժերի շնորհիվ է, որ «Բյուզանդիոնը» գրական ու գրաքննադատական բարձր մակարդակով առաջ է մղել և զարգացրել արևմտահայ գրականութիւնը: Ընթացիկ գրական գործընթացներից մինչև ժամանակակից հայ գրական կյանքն ու գործիչները, եվրոպական գրականութեան պատմութիւնից մինչև նրա արդիական ուղղութիւնները ու միտումները՝ այսպիսիք են գեղարվեստական գրականութեանը և գրաքննադատութեանը վերաբերող՝ «Բյուզանդիոնի» հրապարակումները: Թերթը բազմաթիվ նյութեր է տպագրել ազգային թատրոնի և երաժշտութեան, ընդհանրապես արվեստի մասին, որով և հանդես էր գալիս իբրև հայ ընթերցողի գեղագիտական ճաշակն ու միտքը կրթող հայկական ազդեցիկ հրատարակութիւն:

«ՀԱՆՐԱԳԻՏԱԿ» (1896–1908)

«Հանրագիտակը» «Բյուզանդիոնի» հետ միասին Կ. Պոլսի այն սակավաթիվ պարբերականներից է, որ լույս է տեսել 1894–1896 թթ. կոտորածներից հետո: Այս հանդեսն ուներ գիտահանրամատչելի բովանդակություն և առհասարակ, 1896-ից մինչև երիտթուրքական հեղաշրջումը օսմանյան մայրաքաղաքում հրատարակված թերթերն ու ամսագրերը հիմնականում ունեին գիտահանրամատչելի կամ գրական բնույթ, որ վկայում է Աբդուլ Համիդի վարչակարգի՝ ազգային հասարակական մամուլի հանդեպ անբարյացակամ վերաբերմունքի մասին:

«Հանրագիտակը» հավակնում էր ընթերցողին տալ հանրագիտական ծավալների գիտահանրամատչելի լրատվություն, որ հասարակական ալեկոծումներից զերծ ապահով հանգրվան էր երաշխավորում որևէ պարբերականի համար: Այս հանդեսը հիմնել է ժամանակի լրագրական միջավայրում դևռևս 1870-ական թթ. ճանաչված Արմեն Լուսինյանը, որը աշխատակցել էր Զմյուռնիայի «Արևելյան մամուլ» և «Արշալույս Արարատյան» հրատարակություններին:[1]

Բովանդակային առումով ևս «Հանրագիտակը» կրել է որոշակի փոփոխություններ: 1901–1902 թթ. այն վերածվում է առավելապես մանկական հրատարակության՝ պահպանելով իր գիտատեղեկատվական նախասիրությունները, իսկ 1903 թ. մանկական բաժինը փոխարինել է առևտրականով՝ ավելացնելով «Առաջնորդ վաճառականաց» խորագրով ծավալուն թողարկումը: 1905 թ. մինչև

---

[1] «Հանրագիտակի» ողջ հրատարակության ընթացքում այն խմբագրել են նախ Ա. Լուսինյանը (միշտ՝ արտոնատեր), 1897-1898 թթ.՝ Ղ. Բոլատը, 1899-1900 թթ.՝ Ե. Տեր-Անդրեասյանը, 1900-1901 թթ.՝ Բ. Պոզաճյանը, 1901-1906 թթ.՝ դարձյալ Ա. Լուսինյանը, Վ. Փափազյանը, Մ. Պապոնյանը, և վերջում, 1907-1908 թթ.՝ կրկին Վ. Փափազյանը: «Հանրագիտակը» լույս է տեսել փոփոխվող պարբերականությամբ՝ որպես շաբաթական հանդես, մի կարճ ժամանակ, 1896 թ., ամսաթերթ էր, 1901-1902 թթ.՝ տասնօրյա հանդես՝ ամիսը մեկ անգամ վերածվելով առևտրական հրատարակության և մյուս դեպքերում շարունակելով մնալ մանկապատանեկան հանդես: 1904 թ. մինչև վերջ՝ հիմնականում շաբաթաթերթ:

վերջ «Հանրագիտակը» ակնհայտորեն հակվում է դեպի երգիծական ժանրը՝ զգալի հետք թողնելով հայ երգիծական մամուլի պատմության մեջ:

«Հանրագիտակը» հայկական առաջին գիտահանրամատչելի պարբերականներից մեկն է՝ իր հատուկ նպատակադրմամբ և ծրագրի իրականացման ձևով ևս: Ընթերցողին այն ներկայանում է գիտության և հոգևոր մշակույթի տարաբնույթ բնագավառների վերաբերյալ համառոտ և շատ հետաքրքրական լրատվությամբ՝ քիչ տարածքը փորձելով ծածկել գիտելիքների հագեցած մատուցմամբ: Տպագրում էր փիլիսոփայության, մշակույթի, գրականության, մանկավարժության, տնտեսագիտության, արվեստի, բնագիտության և այլնի արժեքների վերաբերյալ բազմաթիվ նյութեր՝ իր անվանը համապատասխան:

Հրատարակության առաջին տարում, 1896 թ. «Հանրագիտակն» ընթերցողին ծանուցում էր իր մտադրությունների մասին՝վկայակոչելով աշխատարակ հանրագիտական հրատարակությունները: Պարբերականը հիշում է Դիդրոյի և դ՛Ալամբերի 35 հատորանոց հանրագիտարանը, որպես գիտությունները բովանդակող գանձարան: Ի սկզբանե «Հանրագիտակը» փորձում էր համակարգված ներկայացնել վիճխարի նյութը: Ի թիվս այլ գիտությունների, գյուղատնտեսական գիտելիքների բաժինը հատկապես բազմակողմանի զարգաձ Ղ. Բոլատի խմբագրության տարիներին: Այս խմբագիրը ավարտել էր Փարիզի երկրագործական վարժարանը և հայտնի էր «Բյուզանդիոնում» իր տպագրած հոդվածներով (1898, 7 մրտ.): Անշուշտ, իր նախասիրություններից ելնելով՝ Ղ. Բոլատը հայտնում էր ընթերցողին, որ մտադիր է նրան ծանոթացնել Հայաստանի յուրաքանչյուր գավառի տնտեսական նկարագրին, մշակովի հողերին ու բերքերին, անասնաբուծությանը, հաղորդակցել տնտեսավարման արդիական եղանակներին, գյուղատնտեսական արհեստներին և այլն (1898, թիվ 20, էջ 309–311):

«Հանրագիտակն» ինչ-որ չափով անդրադարձել է նաև ընթացիկ հասարակական կյանքին, երբեմն այս կամ այն ազգային հաս-

տատուրյան նկատմամբ սուր դիտողություններով, թեև ինքը՝ պարբերականի երբեմնի խմբագիրը և մշտական տնօրենն Ա. Լուսինյանը հույժ չափավոր հայացքներ էր դավանում և իր հերթական նյութերով (այդ թվում և երկարաշունչ ու ծանրումնած բանաստեղծական փորձերով) բարեհպատակային դգացումներից դենը չէր անցնում: «Հանրագիտակի» կարևոր արժեքը մնում էր նրա գիտահանրամատչելի բնույթը, որ նա պահպանեց իր գրեթե ողջ հրատարակության ընթացքում: Հնարավորության դեպքում «Հանրագիտակը» ուշադրություն է դարձնում գիտական գիտելիքների գործնական կիրառմանը: 1898 թ. չաբաթաթերթը հետաքրքիր տեղեկություններ է տալիս Մանիսայի հայ մանուսագործների մասին (ավելի քան 400 դազգահ) և առաջադրում այդ արհեստն ընդլայնելու խնդիրը, նշում այդ արտադրության մեջ զգալի՝ ներկերի պակասն ու միօրինակությունը (1898, թիվ 34, էջ 539–541): «Հանրագիտակը» տպագրեց Գ. Տևկճյանի «Ներկարարությունը» հոդվածը, որտեղ ներկայացվում էին ներկեր ստանալու եղանակները, ալիզարինի նշանակությունն այս գործում և այլն: Հեղինակը հայտնում է, որ իր նպատակն է «աւելի կատարեալ տեղեկութիւններով իրենց արուեստը կատարելագործութեան հասցնել (1898, թիվ 35, էջ 551–552): Նույնպիսի կիրառական բնույթ ուներին «Հանրագիտակի» շատ նյութեր՝ գյուղատնտեսական մշակույթի և արտադրանքի վերաբերյալ: Այդ նույն նպատակն էին հետամտում պարբերականի «Գիւտեր ու հնարքներ» խորագրով հրապարակումները, տնտեսագիտական լրատվությունը, հանճնարարականներն ու ուսուցողական բնույթի հոդվածները: Խմբագրությունն առանցքային էր համարում նաև պատմությունը (սկսած քաղաքակրթությունների պատմությունից) և գրականությունը: Շարաթաթերթը ծանոթացնում էր եվրոպական գրական ուղղություններին, գրողներին ու նրանց ստեղծագործություններին: Այս ուղղությունը «Հանրագիտակը» կարողացավ պահպանել մինչև 1901 թ., երբ փաստորեն վերածվել էր մանկապատանեկան հրատարակության: 1904 թ. «Հանրագիտակը» փոխում է իր բովանդակությունը

և վերադառնում է իր նախկին՝ հանրագիտական դիտելիքների լրատվության ձևին՝ «Լրագիր ազգային և միջազգային» ենթավերնագրով, բայց այս դեպքում ևս ձգտելով դեռահաս ընթերցողին տալ ամենաբազմազան դիտելիքներ: Հաջորդ՝ 1905 թ. մինչև վերջ, 1908 թ., «Հանրագիտակը» վերածվում է երգիծական հրատարակության՝ Վ. Փափազյանի խմբագրությամբ (բացառությամբ 1906 թ. հունվար – 1907 թ. սեպտեմբեր ժամանակահատվածի, երբ խմբագիրն էր Մ. Պապոնյանը):

Ե. Տեր-Անդրեասյանի խմբագրության ժամանակ «Հանրագիտակը» պահպանում էր իր չափավոր ուղղությունը՝ միշտ իր անքննադատ մոտեցումներով դեպի պատրիարքն ու ազգային վարչությունը և երբեմն իրեն թույլ տալով որոշ դիտողություններ գավառական առաջնորդների հասցեին: Ավելի կտրուկ էր «Հանրագիտակը» ազգային եկեղեցու դավանանքը պաշտպանելու հարցում: Կիլիկիայի կաթողիկոսական ընտրությունների ժամանակ պարբերականը հատկապես ուշադրություն էր դարձնում կաթոլիկ քարոզիչների քայքայիչ գործունեությանը: Ե. Տեր-Անդրեասյանին փոխարինած Բ. Պողաճյանը խմբագրական սուր լեզու էր բաննեցնում դպրոցական հարցերում կրոնական ժողովի անհոգության դեմ, անգամ նկատում չահամոզության մեջ խրված կղերի արհամարհանքը հասարակ ժողովրդի հանդեպ (1900, թիվ 81, էջ 1286–1288): Հետագայում ևս «Հանրագիտակը» քննադատական որոշ չեշտադրումներ է անում եկեղեցու, ազգային այլ մարմինների՝ դպրոցի և այլնի հասցեին, սակայն միշտ խոհեմության սահմաններում՝ մնալով «գիտելիքներ բոլորի համար» սկզբունքի շրջանակներում: Հասարակական կյանքի հանդեպ «Հանրագիտակի» զուսպ վերաբերմունքը, սակայն, փոխհատուցվում էր այն բոլոր դեպքերում, երբ նրա խմբագիրները ձգտում էին այդ գիտելիքներին տալ գործնական ուղղվածություն և իմաստ: Պարբերականի ուղղությունը դրեթե միշտ մնում էր դիտական գիտելիքների հանրամատչելի հաղորդումը և առաջիններից մեկը՝ բնագիտության: Տեղեկություններ են տրվում երկրաշարժների, աստղագիտության, երկրի կազ-

մութեան, դրա ընդերքի, բնական այլևայլ երևոյթների վերաբերյալ, ընթերցողը տեղեկացվում է մաթեմատիկայի, քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանութեան ու բժշկութեան բնագաւառում նորոյթների, դրանցում Եվրոպական արժեքաւոր ներդրումների ու դեմքերի վերաբերյալ: Ընթերցողի հետ փոխադարձ կապը ստեղծելիս «Հանրագիտակն» անցնում է հարցումների արդյունավետ ձևին: Դարավերջի «Հանրագիտակի» էջերում հայտնվում են գյուտերին ու հայտնագործութիւններին վերաբերող նյութերը, այնուհետև՝ «Բուսաբանական դասեր» խորագիրը: Հետաքրքիր է, որ արևմտահայ մամուլում «Հանրագիտակն» առաջիններից մեկն էր, որ առաջ մղեց գրախոսականի ժանրի զարգացումը: Ընդ որում, երբեմն գրախոսի հետ բանավիճում էր հեղինակը, որ սրում էր հետաքրքրութիւնը գրախոսվող գործի նկատմամբ: «Գիտական զբոսանք», «Բնագիտական հարցումներ», «Գիտական էջեր», «Գիտութեանց եւ արուեստից հանճարները», «Գիտական հրաշալի մանրալուրեր» և բազմաթիվ այլ խորագրերով հրապարակումներում «Հանրագիտակը» գրավում էր ընթերցողի ուշադրութիւնը տարիներ ի վեր՝ իրականացնելով իր հանրագիտական լրատուութեան ժողովրդականացումը: Այս ուղղութիւնը «Հանրագիտակը» պահպանեց մինչև 1902 թ., երբ վերածվեց մանկապատանեկան հրատարակութեան (հրատարակիչն էր Ն. Պերպերյանը): 1903 թ. հանդեսում ավելացավ «Առաջնորդ վաճառականութեան» բաժինը՝ առևտրական, հաշվապահական, բանկային-ֆինանսական գործերը ուսուցանող և լուսաբանող նյութերով, առավել քան բացահայտորեն ցուցադրելով հայ դրամատերերին գործնական գիտելիքներ հաղորդելու իր պատրաստակամութիւնը: Այս շրջանակներում իսկ հանդեսը չարունակում էր պահպանել իր հանրագիտական ուղղութիւնը: Միաժամանակ, «Հանրագիտակը» ամիսը մեկ անգամ ամբողջական համար էր նվիրում տնտեսական հարցերին՝ մնացյալ դեպքերում չարունակելով իր մանկապատանեկան ուղղութիւնը: Տնտեսական «Հանրագիտակում» հայտնվեցին «Առևտրական դիւտեր», «Առևտրական լուրեր», «Նոթեր քաղաքական տնտեսագիտութեան» և

բազմաթիվ այլ նեղ մասնագիտական խորագրեր: Պարբերաբար տպագրվում էին հաշվապահական, կոմիսիոն գործառնությունների վերաբերյալ դասընթացներ: Առևտրական իրավունքի (Թուրքիա և Եվրոպա) ոլորտը ևս դուրս չէր մնում «Հանրագիտակի» տեսադաշտից, որով ակներևաբար, հանդեսը սպասարկում էր արտասահմանում գործող հայ առևտրականներին՝ զինելով նրանց առևտրաիրավական անհրաժեշտ գիտելիքներով: «Հանրագիտակը» շոշափում էր նաև արդյունաբերական արտադրության խնդիրները, այնքանով, որքանով դրանք կապվում էին առևտրի, բանկերի և առևտրական ընկերությունների գործունեության լուսաբանումներին: Այս բնագավառներին վերաբերող նյութերը «Հանրագիտակը» քաղում էր եվրոպական, մեծ մասամբ ֆրանսիական ժամանակակից կամ ոչ վաղ անցյալի հրատարակություններից: Հատկապես արժեքավոր են 1900-ականի օսմանյան վիլայեթների, սանջակների, նահիեների և վարչական այլ կառույցների վերաբերյալ առևտրատնտեսական վիճակագրական բազմաթիվ տվյալները, աղյուսակները և այլն, որպիսիք ժամանակի Թուրքիայի, նաև Արևմտահայաստանի տնտեսության մասին բավական փաստեր են պարունակում: Ճանաչողական արժեք ունեն հայ մանրապրանքաարտադրողների վերաբերյալ տվյալները, այս հիմնահարցերով հրատարակված գրքերի մասին ծանուցումները, ինչպիսիք են «Գորգաչինութիւնն Ասիոյ մէջ», «Իզմիրի վաճառականութիւնը», «Մետաքս եւ մետաքսեղէնք» (1903, թիվ 11, էջ 226–227) հոդվածները: Հետաքրքիր է, որ «Հանրագիտակը» անդրադարձել է հայ խոշոր դրամատեր առևտրականներին, հատկապես վերհանել նրանց բարեսիրական գործունեությունը: Ամասիացի վաճառական եղբայրներ Իբրանոսյաններին է նվիրված «Հաճի Եփրէմ էֆենտի Իբրանոսեան» հոդվածը, որտեղ լուսաբանվում է նրա առևտրական գործունեությունը Ամասիայում, Տրապիզոնում, Կիրասոնում, Սերաստիայում, Նիկոմեդիայում, Էնկյուրիում և այլուր, ընդհուպ մինչև Անգլիայում (Մանչեստր): Հատկապես արժեքավորվում է Իբրանոսյանների բաց արած վարժարանն Ամասիայում՝ 40-ից ավելի

աշակերտներով, մեծ մասամբ՝ ձրիավարժ (1903, թիվ 2, էջ 25–26): Արտաքին առևտրում կարևորվում է Պատրիկ Կյուլպենկյանի առևտրական «աշխարհագրությունը» Պարսկաստանում, Թիֆլիսում և Նյու Յորքում, որտեղ այս անվանի ղրամատները ծավալվել էր ափիոնի, ներկի և գորգի առևտրում (1903, թիվ 11, էջ 223–224): Վերոհիշյալին է առնչվում Ակյուլինների (Խանդամուր Հայկազն) «Ամասիա» հոդվածը, որտեղ ներկայացվում է քաղաքի տնտեսական դիմանկարը, նրա չահեկան դիրքը աշխարհագրական ու տնտեսական տեսակետներից: «Հանրագիտակի» այս հրապարակումները կոչված էին դործնականում զորացնելու հայ առևտրականությանը, հագեցնելու նրա տեսական ու գործնական իմացությունը Թուրքիայում եվրոպական առևտրի և արտադրության հետ ծանր ու դժվարին մրցակցության պայմաններում: Ընդամին, այս բնագավառում նկատելի է սովորաբար չափավոր «Հանրագիտակի» թաքնված դժգոհությունը Թուրքիայում եվրոպացիներին տրված առանձնաշնորհումներից: Բ. Պոզաճյանն արտահայտում էր այս արամադրությունները իր «Մրցման ոգին» հոդվածում, երբ հենվելով նաև թուրքական մամուլի կարծիքների վրա, պնդում էր, որ մրցակցությունն է ծաղկեցնում առևտուրն ու տնտեսությունը՝ հակառակ մենաշնորհի բռնի ուժի և դրա հետևանքների (1900, թիվ 94, էջ 1455–1457): Ազատ մրցակցության այս չատագովը մենաշնորհի ավերիչ ազդեցությունը հայտնաբերում էր նաև մշակույթի զարգացումն արգելակող նրա ուղղվածության մեջ. «Մենաշնորհ մը սահմանուած է ապաննելու թէ ազատ վաճառականութիւնը, թէ արուեստից զարգացումը, և թէ յառաջդիմութեան ոգին»,- գրում է նա (ն. տ., էջ 1456): Բ. Պոզաճյանն առաջարկում էր կազմել առևտրական ու արտադրական ընկերություններ, միավորել ուժերը մենաշնորհով զորացած օտար ուժերի դեմ: Մինչդեռ, հարում էր նա, անջատ ու մեկուսի են գործում հայ արհեստավորներն ու վաճառականները, որը և նվազեցրել է նրանց դերակատարումը Թուրքիայի տնտեսության մեջ: Ուշագրավ են այս հեղինակի տեղեկությունները հայ գյուղաւի արտադրության և արտադ-

բանքի իրացման մասին: Կնսարացի հայ դորդագործները անխմաստ մրցակցություն են ծավալել իրար միջ՝ իջեցնում են գները, անվուլթ են որակը պահպանելու հարցում և դրանով իսկ նպաստում են չուկայում պարսկական դորդագործական արդյունքների բարձր վարկին: Մրցակցությանը հայերը չեն դիմանում, որովհետև ձգտում են «շատ արտադրել, շատ վաստկել» (1900, թիվ 95, էջ 1472): «Առաջնորդ վաճառականաց» վերնագրով թողարկման ընդարձակ նյութերում պարբերականն առևտրատնտեսական ոլորտում զբաղված ազգայիններին մատուցում է նաև բանկային ու հաշվապահական դասեր, վերլուծում ոչ միայն Թուրքիայի, այլև եվրոպական երկրների առևտրատնտեսական կացության հետ կապվող երևույթներ: Գործնական նշանակություն ունեն Թուրքիայի առևտրատնտեսական աշխարհագրությանը, վիլայեթների ու սանջակների բնակչության թվաքանակին և այլնին վերաբերող վիճակագրական տվյալները, հայ առանձին դրամատներին առնչվող նյութերը: 1904 թ. մեկ տարի անց, այս թողարկման չարունակությունն այլևս չենք տեսնում «Հանրագիտակում»: Հայտնվում է պարբերականի նոր ենթավերնագիր՝ «Լրագիր ազգային և միջազգային, դիտութիւնք, դպրութիւնք, արուեստ եւ օրալուրք»: Փաստորեն «Հանրագիտակը» վերադառնում էր իր նախկին հանրագիտական բովանդակությանը՝ հիմնականում հակվելով դեպի պատանի ընթերցողը: Հաջորդ՝ 1905 թվականից այն վերստին փոխում է այս ուղղությունը և վերածվում դրական պարբերականի՝ երգիծական թևքումով, որ չարունակվում է մինչև նրա հրատարակության ավարտը՝ 1908 թ.: Այսուհանդերձ, XX դարի առաջին տարիներին «Հանրագիտակում» զգալի է ուղղվածությունը դեպի գեղահասները, մշակույթի, գրականության և արվեստի արժեքների հիմունքների հաղորդումը: «Հանրագիտակը» քննարկում է դպրոցի և մանկավարժության հետ կապվող հիմնահարցեր, այդ թվում և մանկան հոգևոր ու բարոյական դաստիարակության խնդիրներ, դրան զուգահեռ տպագրելով մանկական գրականության բազմաթիվ նմուշներ: Այս բնագավառում պարբերականը հետևում էր նվ-

րոպական մանկավարժական հրատարակություններին: Ն. Պերպերյանը գրում էր, որ «Հանրագիտակի» մանկավարժական հրապարակումների ծրագիրը կազմվել է ֆրանսիական, անգլիական և ամերիկյան՝ մեկ տասնյակի չափ «դպրոցական թերթերու ուղղութեան վրայ» (1902, թիվ 26, էջ 415): Պարբերականը վերհանել է մանկավարժության պատմության դրվագներ, առաջադրել ուսուցման նորագույն մեթոդների հարցեր, փորձել եվրոպականը տեղայնացնել ազգային դպրոցներում: Դպրոցական գործի կազմակերպման, ուսումնական ծրագրերի միօրինականացման և ընդհանրական դարձնելու նպատակից ելնելով՝ «Հանրագիտակն» առաջարկում էր Կ. Պոլսի և Արևմտահայաստանի դպրոցներում ներմուծել դասավանդման նորագույն մեթոդներ, թեև ցավով էր նկատում, որ Կ. Պոլսի ուսումնական խորհուրդը շատ թույլ կապեր ունի գավառական խորհուրդների հետ և որ կրթական հրահանգները մնում են չգործադրված: Ա. Պոյաճյանը մանկավարժական մեթոդների վերաբերյալ իր հոդվածաշարը հասցեագրում էր նախակրթարաններին՝ աչքի առաջ ունենալով ֆրանսիական նորագույն հրատարակությունները, բայց և ձգտելով, որ ազգային վարժարաններում պահպանվեն «իրենց տոհմական և միջավայրի բարքերն ու սովորութիւնները» (1903, թիվ 1, էջ 14): Հեղինակը հենվում է դասական և ժամանակակից՝ ինտուիտիվ (հայտնատեսիկ), էքսպոզիտիվ (ցուցադրական), դիդակտիկ (ընծայական) և ինդուկտիվ (մակածական) մեթոդների վրա, պարզաբանում դրանց կիրառման նպատակներն ու հնարավորությունները ազգային դպրոցներում: Այս թեման նա շարունակում է «Մանկավարժական մէթօտները» հոդվածում (1903, թիվ 3, էջ 59–62)՝ հանգամանորեն քննարկելով գործնական ուսուցմանը միտված նախնական դաստիարակության հարցերը:

«Հանրագիտակն» ի սկզբանե ուշադրություն է դարձնում նաև ֆիզիկական դաստիարակությանը՝ ձգտելով դրա պարտադիր իրականացմանը արևմտահայ դպրոցում, տպագրելով հրահանգներ, մեթոդական հանձնարարականներ և այլն: Դաստիարակության վերաբերյալ պարբերականի բազմաթիվ հրապարակումների

մեջ կարելի է առանձնացնել «Բարոյական եւ դործնական դաստիարակութիւնը աղջիկներու վարժարանին մէջ» թարգմանական աշխատութիւնը (թարգմ. Ճ. Հազարապետյան), որ տպագրվեց «Հանրագիտակի» 1902–1903 թթ. համարներում: Շարադրանքը և հաջող թարգմանությունը աչքի են ընկնում մատչելիությամբ և դաստիարակության սկզբունքների հետևողականությամբ: Աղջիկների դաստիարակության հիմնահարցին պարբերականն անդրադարձել է նաև մանկավարժության պատմությանն առնչվող հրապարակումներում: «Ծննդյոն» հոդվածում Մ. Ոլբերյանը վերհանում է այս հեղինակի «Աղջկանց դաստիարակութիւնը» երկի արժանիքները՝ կարևորելով մտքի և կամքի ազատ դաստիարակության սկզբունքները աղջիկների անհատականության ձևավորման գործում, կրոնաբարոյական դաստիարակության հարցում Ֆենելոնի ըմբռնումները և այլն (1903, թիվ 22, էջ 471–472): Առհասարակ, «Հանրագիտակում» զգալի է կրոնաբարոյական սկզբունքների և գիտական մանկավարժության մոտեցումների համատեղումը: Նրա տպագրած ավետարանական բազմաթիվ ըրուչցները, իրատական նյութերը և գրական գործերը ցույց են տալիս, որ բարոյական դաստիարակության մեջ «Հանրագիտակը» բարոյական առաքինությունները լծորդում է կրոնաբարոյական դաստիարակության ավանդական արժեքներին: Հանդեսում տարբեր առիթներով վերհանվել են Ռ. Պերպերյանի, Ե. Անդրեասյանի, Հակոբ Գուրգինի և այլոց մանկավարժական, գրական ու խմբագրական գործունեության տարբեր կողմերը (1906, թիվ 5, էջ 91–92, թիվ 8, էջ 117–118, թիվ 9, էջ 131–132): Վերոհիշյալ Մ. Ոլբերյանը բնութագրում է ոչ միայն վարժապետներին, այլև այն դպրոցները, որտեղ նրանք դաստիանդել են կամ շարունակում են աշխատել: Այս կերպ ուսուցիչների շարքին նա ավելացրել է Հ. Ասատուրի, Ն. Թորոսյանի, Ս. Գաբամաճյանի, Ե. Տեվլեթյանի, Ս. Թղլյանի և այլոց դիմանկարները: Ակնարկաշարում մասամբ բացահայտված է նաև հայ ուսուցիչների բերած նպաստը թուրքական դպրոցին՝ օսմաներենի դասավանդման և այդ լեզվի դասագրքեր կազմելու գործում: Հեղի-

նակը հանգամանորեն կանգ է առնում այս առթիվ ճանաչված Պետրոս Կարապետյանի գործունեության վրա, նշում նրա օսմանապատական «անժխտելի կարողությունները» և մանկավարժական հմտությունները (1906, թիվ 17, էջ 259–260): Պ. Կարապետյանը գրել է «Նէւդեսթէ» վերնագրով օսմաներենի, նաև՝ արաբերենի ու պարսկերենի դասագրքեր, հայերեն-տաճկերեն բառարան, հնդինակել տասնյակ մանկավարժական ու բանասիրական բնույթի աշխատություններ: Ավելացնենք, որ հետագայում Պ. Կարապետյանը տպագրեց «Հնդդարեան յիշատակարան Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցւոյ» (Ստամբուլ, 1935) ուշագրավ աշխատությունը՝ հրապարակելով օսմաներեն մի շարք վավերագրեր, որոնք կարևոր նշանակություն ունեն XV–XVIII դդ. պոլսահայ համայնքի ազգային տնտեսական ու եկեղեցական կյանքի ճանաչողության համար:

«Հանրագիտակի» էջերում հիշվում են պոլսահայ հին վարժապետներ Գ. Սրմքեչյանը և Ա. Հայրիկյանը՝ դարձյալ օսմանագետներ, ընդ որում առաջինը հարստացրել էր թուրքական թարգմանական գրականությունը՝ ավելի քան 30 հատորով: «Հանրագիտակը» քանիցս առաջ էր քաշել հայ ուսուցչի տնտեսական անմխիթար վիճակը բարվոքելու խնդիրը, դատապարտել միջավայրի անհոգությունը նրա անձի ու կենսապայմանների նկատմամբ: Պ. Դուրյանի հանրահայտ «Տրտունջքի» նմանակությամբ գրված մի պարոդիայում՝ «Վարժապետին տրտունջքը» վերնագրով, վարժապետի կացության նկարագիրն ամբողջացվում է նրա հատկանշական ցանկությամբ.

Եւ. մահամերձս ալ կուզէ երկու բան.

Նախ քիչ մը դրամ, ետք՝ փոշի մ'իր վրան (1906, թիվ 9, էջ 136):

Դպրոցի, կրթության և դաստիարակության խնդիրներին է առնչվում «Հանրագիտակի» տպագրած մանկական գրականությունը: 1901 թ. հոկտեմբերից այն կիսով չափ վերածվում է մանկական հրատարակության. «Կէսը մանուկներու հրահանգիչ ու բարոյացուցիչ ընթերցման յատուկ գրուածներու, պատկերներու և նկարներու նուիրուած, կէսն ալ չափահաս, զարգացեալ ընթերցողներու

յատկացուած է», ինչպես հայտնում է խմբագրութիւնը (1901, թիվ 1, 1):

Այս «Հանրագիտակի» հրատարակիչն էր Նշան Պերպերյանը, իսկ մանկական բաժինը վաստորեն շարունակութիւնն էր 1882–1890 թթ. հրատարակված «Բուրաստան մանկանց» հանդեսի, որի հրատարակիչը եղել էր նույն Ն. Պերպերյանը: «Հանրագիտակում» շարունակվեցին տպագրվել բազմարովանդակ նյութեր արվեստի, պատմութեյան, աշխարհագրութեյան, բարոյախոսական և այլ թեմաներով, նաև հանելուկներ, բառախաղեր, մանկական խաղեր ուսուցանող հրապարակումներ և այլն: Այս բոլոր նյութերի մեջ բարոյական ու դեղագիտական դաստիարակութեյան գործառույթը հատկացված էր մանկապատանեկան գրականութեյանը: Մանկական արձակ և չափածո գործերով հանդես են եկել Լ. Սրապյանը, Ս. Դավթյանը, Ակյուլինեն, Տ. Զրաքյանը, Աղ. Փանոսյանը , Մ. Թուրյանը և ուրիշներ: «Հանրագիտակի» այս հեղինակներն օգտագործում են նաև ավետարանական թեմաներ, մանկանը մղում մտորելու ընտանիքի, դպրոցի, միջավայրի երևույթների մասին, ծանոթացնում բնութեյանը և այլն: Կրթված և բարոյական կողմնորոշում ունեցող անհատի ձևավորմանն է հետամտում «Հանրագիտակի» նույն բնութեյի թարգմանական գրականութեյունը: Ընթերցողին են ներկայացվել Վ. Հյուգոյի, Ժ. Վեռնի, Հ. Անդերսենի, Զ. Դիկկենսի, Ք. Մարմիևի, Ա. Դոդեի և շատ այլ հեղինակների ստեղծագործութեյուններ, որոնք ունեն բարոյախոսական չեչոված նպատակադրում: Այս վերջինի ազդեցութեյունը ակնհայտորեն երևում է «Հանրագիտակի» պատանի ստեղծագործողների՝ մեծ մասամբ թույլ և անարվեստ գործերում:

Պետք է արժանին հատուցել «Հանրագիտակի» լայնախոհ մոտեցմանը՝ Արևմտահայաստանի և երկրի հայաբնակ այլ շրջանների պատանի ընթերցողի մեջ գրական ճաշակ մշակելու ուղղութեյամբ: Հանդեսը տպագրել է բազմաթիվ պատանի հեղինակների՝ Ամասիայից, Կարինից, Ադաբազարից, Կեսարիայից, Տարենտոից, Զմյուռնիայից և այլն: «Հանրագիտակի» մանկական բաժինը չա-

րունակվեց մինչև 1904 թ., որից հետո այն ամբողջապես վերածվեց չափահասների հրատարակության:

1905 թ. «Հանրագիտակը» լույս էր տեսնում երգիծական ժանրի ակնհայտ նախապատվությամբ: Հաջորդ երեք տարիներին այստեղ տպագրվել են Սիպիլը, Հ. Աստուրը, Մ. Գոչունյանը (Քասիմ), Ազ. Փանոսյանը (Ալփասլան), Հ. Մառքը և ուրիշներ: Երգիծանքի ժանրը զարգացնում էին Վ. Փափազյանը (Լիլա), Հ. Ալվիարը, Ե. Թոլայանը (Կավռոչ), ինչպես և տարբեր ծածկանուններով ստորագրած բազմաթիվ երգիծաբաններ՝ ավելի կամ պակաս հաջողությամբ: Այսպիսով «Հանրագիտակը» 1904–1908 թթ. վերածվել էր գրական հեղինակավոր հրատարակության, որին աշխատակցում էին արևմտահայ տաղանդավոր բազմաթիվ գրողներ:

Հակոբ Պարոնյանը երգիծական «Հանրագիտակում» համարվում է դասական մեծություն: Մեծ երգիծաբանից չաբաթաթերթը տպատրել է մի քանի երգիծապատումներ, հումոր՝ կենցաղային թեմաններով, որպիսիք, ի դեպ, հոգևհարազատ էին «Հանրագիտակում» այդ ժանրով գրող հեղինակներին: Հ. Պարոնյանի այդ, ինչպես և հանդեսի տպագրած այլ նյութերով՝ ասացվածքներ, սրամիտ դատողություններ, աֆորիզմներ և այլն, պարբերականը ցանկանում էր ընդգծել իր հավատարմությունը դասական երգիծանքի ավանդույթներին: Շատ հաջող են հատկապես պարոնյանական դարձվածները ընտանիքի, ամուսնության և կանանց մասին: Ահա մեկ նմուշ դրանցից. «Այն մարդերը, որ առանց աշխատության հարստանալ կը փափաքեն, դրամով աղջիկ առնելու կը դատապարտուին» (1906, թիվ 3, էջ 38): Կամ՝ անձնանուններով երգիծող հետևյալ դատողությունը՝ «Պարոնյան անուններէն կը գուշակէ մարդը» վերնագրով. «Խոհեմութիւն չէ առանց ստակն առնելու ապրանք տալ այն մարդերուն, որ Ամբակում, Մարուքէ, Համբարձում, Կիրակոս, Աբիմելեք, Բարդուղիմէոս կը կոչուին» (Ն. տ., էջ 57):

«Հ. Պարոնյանի էջերէն» վերնագրի տակ տպագրվել է «Առանց օժիտի աղջիկ կարգել» ոչ մեծ երգիծապատումը՝ աղջիկ ամուսնացնելու դրամատն հալածահարած ծնողների հաջող գործողությունների

ցուցադրմամբ: Սրանք կազմակերպում են իրենց աղջկան վախցնելը, որից հետո, բնականաբար, օժիտի հարցը մնջտեղից վերանում է. «Եւ երիտասարդը տարի մը վերջը կը հասկնայ, թէ ինքը չէ վախցուցած աղջիկն, այլ աղջիկը վախցուցած է զինքն» (1907, թիվ 1, էջ 4):

«Հանրագիտակը» մնկ անգամ ևս անդրադարձավ Հ. Պարոնյանին՝ «Հին էջեր» խորագրի ներքո, «Տանը մէջ» երգիծական պատկերով (1908, թիվ 22, էջ 321–323, թիվ 23, էջ 342–343): Այս գործն ունի դաստիարակչական բնույթ և այս իմաստով առնչվում է Հ. Պարոնյանի խմբագրած «Թատրոն բարեկամ մանկանց» (1876 թ.) երգիծաթերթերի նյութերին[1]: Երեխայի առողջ դաստիարակության գործում Պարոնյանը կարևորում է ծնողների ոչ. իրարամերժ, այլ համաձայնեցված մոտեցումները, նրանց վարքագծով զավակին օրինակ ծառայելու խնդիրը: Այս չատ սրամիտ զվարճապատումը հայ ընտանիքների համար այսօր անգամ չի կորցրել իր թարմությունը, քանի որ ավանդութային ուժ ունեն ոչ միայն առաքինությունները, այլև մոլորությունները, որի մասին երգիծարանն ակնարկում է իր երգիծապատումի ավարտում.

«Երես տալու խնդրոյն գալով՝ կը յիշեցնեմ ձեզ առակին կապիկն, որ ձագն խղդեց չափազանց սիրելով և սղմելով:

Հարց ոմանց՝ «Թռչունն ինձ իմաց տուաւ»-ն ալ մէկդի դնելու է, եթէ չենք ուզեր, որ տղան ձեզի ըսէ օր մը.

- Սուտ կը խօսիս կոր, հայր:

Մեր նախնիք կըսէին.

- Տղուն քնացած ժամանակը համբուրելու և սիրելու է: Նախնիք իրաւունք ունէին (ն. տ., էջ 343):

1906 թ. «Հանրագիտակի» խմբագրությունը Մ. Պասոնյանին հանձնելուց հետո էլ Վ. Փափազյանը չդադարեցրեց իր աշխատակցությունը պարբերականին: Սա հաստատվում է դարձնում այն, որ 1907 թ., ինչպես տեսանք, Վ. Փափազյանը վերստին ստանձնեց

[1] Տես Հայ պարբերական մամուլի պատմություն, հ. 1, XVIII-XIX դարեր, էջ 569-575:

«Հանրագիտակի» խմբագրության դեմքը: Բոլոր դեպքերում, Վ. Փափազյանը մնում է «Հանրագիտակի» երգիծանքի ամենաազդեցիկ դեմքերից մեկը՝ XX դ. առաջին տասնամյակի հայ երգիծաբանների այն բույլից, որի գրական արժեքը սպասում է իր հետազոտողին:

Վ. Փափազյանը (հաճախ հանդես է եկել «Լիլա» ծածկանունով) «Հանրագիտակում» չարունակել է հայ դասական երգիծանքի կենցաղային թեմաները, որ սկզբնավորվում է Հ. Սվաճյանով և Հ. Պալոնյանով: Դա արդեն XX դ. սկզբի պոլսահայ ընտանիքի հոռի և միշտ ծիծաղելի կողմերի զավեշտական վերարտադրությունն է՝ սերտոնաժների գրեթե նույն նկարագրով, ընտանիքի հոր հակադրությունը կնոջ և հասունացած դստեր հետ, փորձելով դիմակայել նորաձևության նրանց տենչերին ու անընդհատ ծախսեր պահանջող սնափառությանը: Վ. Փափազյանը ևս դրության կոմիզմը ստեղծում է երկխոսությունների միջոցով՝ կառուցված պոլսահայ բարբառի վրա, որ հատկանշական էր ոչ միայն Հ. Սվաճյանի, այլև Գ. Այվազյանի «Մամուլ» երգիծաթերթին (1869–1882): Վ. Փափազյանի ռեալիզմը երբեմն բևեռացված է, առտնին պատկերների մեջ երբեմն նկրխուժում է բայառիկը՝ բարքերի այլասերումը խոշորացված մանրամասներով ցուցադրելիս: Այդպիսին է «Մեռելը չի պաղած» երգիծապատումը, երբ ընտանիքի մահամերձ հոր իրերը միմյանցից խլելում են նրա չահամոլ մերձավորները (1905, թիվ 12, էջ 201–205): Շարունակվում է աղջկան ամուսնացնելու առևտրական հին պատմությունը, դրամօժիտը դարձել է կատարյալ պատիժ՝ «միջակ դասակարգի» ընտանիքների համար, որոնց և հիմնականում պատկանում են Վ. Փափազյանի հերոսները: Այս դասի կանայք են, որ մոլեգին սեր ունեն «ալաֆրանկայի» հանդեպ («Ձմեռ, կին, դլխարկ», 1905, թիվ 45, էջ 729–732), ինքնամոռացության չափ տրվում են սկամբլիլին («Գիշերային զբօսանքներ, սկամպիլ» (1905, թիվ 49, էջ 794–798), երանություն են գտնում «սուտռենե-

րում» (երեկույթ) («Ճաֆճաֆի սուտուն»[1], 1908, թիվ 21, էջ 310–313) և այլն: Վ. Փափազյանը գտնում է նոր իրադրություններ, որ երբեմն ողբերգախառն բնույթ է տալիս նրա գավեշտին: Օրիորդական ռոմանտիկայի տերևաթափն է պատկերված «Ժողովրդական նամականի» զրույցում (1905, թիվ 15, էջ 248–251): Վ. Փափազյանի գործերում նորույթ են փեսացուների (ավանդական երգիծանքի հարսնացուների փոխարեն) կերպարները, երբ պատկերվում են Կ. Պոլսի տարբեր թաղերի փեսացուները՝ իրենց տարբեր նախասիրություններով («Նշանածներու կնանքէն», 1905, թիվ 24, էջ 392–396): Բարքերի անկման ակնհայտ դրսևորում է համարում այս երգիծաբանը թաղման հետ կապվող նոր ծախքերը, որի սնուցիչ հողը էժան չնստող ցուցամոլությունն է («Մեռելներուն սակաւինը», 1908, թիվ 31, էջ 482):

Իր հոգևոր կապը Հ. Պարոնյանի հետ շեշտելու նպատակով Վ. Փափազյանը երբեմն անմիջականորեն տուրք է տալիս նրա թեմատիկ նախասիրություններին: Հետևելով վերոհիշյալ՝ «Պարոնեան անուններէն կը գուշակէ մարդը» վերնագրով մեծ երգիծաբանի գավեշտական գաւտղուԹյուններին, Վ. Փափազյանը իդեական մի շարք անունների մեջ համապատասխան բնավորություններ է հայտնաբերում՝ դրանց տալով սոցիալական որոշակիություն: Այսպես, Ագապի անվամբ կանանց «գուլպաներուն տակը անպատճառ կարկտան կըլլա և կոշիկներուն յօքէէները մէկ կողմէն մաշած՝ ծուռ կը կոխեն, չիտակը կը խօսին», իսկ Բերուզիկները «դժբախտաբար ամուսիններին իրենցմէ առաջ կը մեռնի ու իրենք որբևայրի կը մնան սեւ քէրեներուն մէջ» («Անուններու բառարան» 1905, թիվ 34, էջ 555): Պարոնյանական երգիծանքն է հիշեցնում նաև Վ. Փափազյանի հեղինակային անմիջական խոսքը՝ ուղղված իր բարոյազուրկ հերոսուհիներին (1905, թիվ 5, էջ 91–93, 1906, թիվ 3, էջ 41–44):

---

[1] Ճոռոմախոսի երեկո (թուրք. և ֆրանս., խոսակցական ոճ):

«Հանրագիտակի» երգիծանքին նոր որակներ է տալիս դարասկզբին իր գործունեությունը սկսած և հետագայում լայն ճանաչում գտած արևմտահայ վերջին շրջանի չնորհալի երգիծաբաններից մեկը՝ Ե. Թոլայանը (Կավռոչ): 1905–1908 թթ. նա «Հանրագիտակում» հաճախ հանդես է եկել «Խօսուրտուք» և «Կավռոչապատում» խորագրերի տակ հրապարակված երգիծական քրոնիկներով, որտեղ երգիծաբանն արդեն ակնարկում է իր չոչափած խնդիրների բազմազբիմայնության մասին: Ե. Թոլայանի երգիծանքի առարկան մնում են նույն առօրեական, կենցաղային խնդիրները, ինչը հատուկ էր մամուլում տպագրվող բոլոր երգիծաբաններին: Սակայն և իր նկրքին ուղղվածությամբ, հասարակական տրամադրություններին տեղին ու ժամանակին արձագանքելու կարողությամբ ու երգիծվող թիրախը խոցելու ինքնատիպությամբ Ե. Թոլայանը իր ստեղծագործությանը տալիս է հասարակական հնչեղություն: Նրա քրոնիկների հերոսները հաճախ հենց պոլսահայ մտավորական շրջանակների մարդիկ են, իրական գործիչները և իրապատում սյուժեները նրա երգիծանքին տալիս են որոշակի առարկայական բնույթ: Նրա դործերում երթևեկում են օրվա ծանոթ դեմքեր՝ Ա. Անտոնյանը, Մ. Գոչունյանը, Մ. Պարսամյանը, Վ. Փափազյանը, Զիֆթճե-Սարաֆը, Մ. Մնծարենցը, Բ. Քևչյանը, Ինտրան և ուրիշներ: Այս կտրվածքով Ե. Թոլայանի ստեղծագործությունները տալիս են բարեհոդի ծաղրի ուշագրավ օրինակներ՝ ցուցադրելով այդ դործիչներին իրենց միջավայրում, իրենց մտահոդությունները, համակրանքները, առօրյան և այլն՝ միշտ ծիծաղելի կողմերով կամ բնութագրերով: Կավռոչի մուտքը «Հանրագիտակ», սակայն, սկիզբ էր առել անսկզբունք խմբագիրների քննադատությամբ, որ վկայում է նրա ոչ այնքան անվնաս երգիծանքի և հեդնանքի նրբության մասին (1905, թիվ 15, էջ 245–247): Ե. Թոլայանի հերոսները տարբեր խավերի մարդիկ են՝ միջինից սկսած և վերջացրած բարձրաչխարհիկ «Հայ լայֆ»-ի հաջողակներով: Կ. Պոլսի հայաբնակ թաղերի մեջ Ե. Թոլայանն առանձնացնում է բարեկեցիկ Բերան՝ իր թաղեցիներով ոչ այնքան զուսպ հավակնություններով, հարուստ և կրթված երևալու չմաքցրած ճիգերով և այլն: Բերայի նորելուկ

Հարուստները հատկապես չանախնդիր են բարձրաճաչակ երևալու օտարամոլությամբ, ազգային արժեքների հանդեպ ունեցած արհամարհանքով: «Բերացին մէկ օթեակին հինգ ոսկի տալով՝ Սառային մէկ խաղին կերթայ և բան մը չի հասկնար, և երեք մէճիտ չի տար երթալու համար Մնակյանին, ուրկէ բան մը կը հասկնայ»,- գրում է Ե. Թոլայանը (1905, թիվ 50, էջ 806): Կ. Պոլսի թաղերի և արվարձանների մարդկանց երգիծական դիմանկարներով Ե. Թոլայանը, ինչպես և Հ. Ալփիարը՝ չատ ավելի մեծ չափերով, չարունակում էր հին, բայց հարափոփոխ ու նորացող այն թեման, որ սկիզբ էր առնում «Պտույտ մը Պոլսոյ թաղերուն մէջ» պարոնյանական չարքից:

Ընթացիկ բարքերի հոռի կողմերը Թոլայանը երբեմն ընդգծում է կորսված արժեքներին ակնհայտ նախապատվություն տալով: «Երեկի կինը, այսօրուան կինը», «Նպաստաւոր նպաստը» քրոնիկներում (1908, թիվ 22, էջ 327–329, թիվ 23, էջ 337–341) նա հակադրությունը լուծում է երբեմնի առաքինությունների օգտին՝ մերժելով նոր բարքերի ու փոխհարաբերությունների ճղճիմությունը: Երբեմն այս հակադրությունը նրա գրչի տակ ստանում է սոցիալական սուր իմաստավորում. «Կավռօշապատումներից» մեկում վռնդում են հարուստ հանդուցյալի մոտ սպասու նկած դռնապանին՝ իր տեղը չէ, թող չափը ճանաչի (1908, թիվ 31, էջ 474): Հարկ է նկատել, սակայն, որ սոցիալական խնդրի արծարծումը որակ չի կազմում Թոլայանի ստեղծագործության մեջ:

Ե. Թոլայանն անդրադարձել է ժամանակի մամուլի էջերում բորբոքված գրական բանավեճերին՝ հատկապես սիմվոլիզմի չատագովների ու նրանց հակառակորդների բախումներին, ծաղրել առաջինների մոլեռանդությունը: Սրանցից մեկի երգիծական դիմանկարն ամբողջանում է նրա ծայրահեղության ցուցադրումով. նա «արգահատական նայուածք մը ունի ամբողջ մարդկութեան հասցէին, կարծես ուղելով ըսել անոր.

- Խմպըլներ[1], ինչ կապրիք կոր, երբ սէնսոլիսթ չեք» (ն. տ.):

[1] Հիմարներ (թուրք.):

Ինքը՝ Ե. Թոլայանը, սիմվոլիզմի հակառակորդներից էր և ըստ հարկին, չի թաքցրել իր բացասական վերաբերունքը թե այդ գրական ուղղության, և թե դրա հայ հետևորդների նկատմամբ (1908, թիվ 39, էջ 604):

Ե. Թոլայանը «Հանրագիտակում» տպագրել է երգիծական փոքրածավալ գործեր ևս՝ զավեշտական նոթեր, զրույցներ, դիմանկարներ, սրամիտ բառարաններ և այլն: Նրա ուշադրության կենտրոնում են նաև գրական բարքերը, գրչի մարդու նյութական անապահով վիճակը և հասարակության ոչ համարժեք վերաբերմունքը նրա նկատմամբ: Թոլայանը, ինչպես և իր գրչակիցները, ավելի լավ վիճակում չէին, քան իրենց հերոսները, ուստի հաճախ ծաղրում էին հենց իրենց՝ դիմելով երգիծանքի իրապատում և անհատականացված միջոցին, որ հատկանշական էր դարասկզբի երգիծական գրականության: Այս տեսակետից հետաքրքիր է Վ. Փափազյանի ստեղծած՝ Ե. Թոլայանի չատ հաջող երգիծական դիմանկարը: Դրամի սուր կարիք ունեցող Ե. Թոլայանը ծիծաղելի հիմնավորումներով անընդհատ դրամ է խնդրում իր «գրական օրթախից» (գործընկերոջից)՝ Վ. Փափազյանից: Ե. Թոլայանը, գրում է Վ. Փափազյանը, պարտք է չատերին, որոնք պատեհ-անպատեհ ներխուժում են խմբագրատուն՝ պահանջելով վերադարձնել դրամը (1905, թիվ 39, էջ 634–638): Թոլայանը ևս, ծաղրելով գրչի մշակների նյութական ողորմելի կացությունը, չի մոռանում իրեն և ուրվագծում է իր սեփական զավեշտական կերպարը «Երուանդ Թոլայեան, իր կեանքը, իր յաւագարութիւնները, իր խայտառակութիւնները» վերնագրով կենսագրականում (1908, թիվ 26, էջ 385–392): «Հանրագիտակի» երգիծարանների մեջ Ե. Թոլայանը առավել նկատելի և ընդգծված, չարունակում էր Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններին» հասարակական ու սոցիալական արհամարհված վիճակի ծաղրը՝ իրական անձանց զավեշտական ցուցադրումներով: Մերկ որոշակիությամբ, սակայն, այդ երգիծանքը չի կորցնում իր ռեալիստական և ընդհանրացնող արժեքը:

1906 թվականից «Հանրապետականին» աշխատակցել է, մինչև դրա հրատարակության ավարտը, Հ. Ալփիարը: Դրան նախորդող մի կարճ ժամանակ, 1905 թ., «Հանրապետականը» միացել էր երդիծաբանի դեմ ուղղված արշավին՝ արժեքից զրկելով նրա ստեղծագործությունը և այն համարելով մեզ արդեն ծանոթ բնութագրմանը՝ անպարկեշտ և բարոյազուրկ «վրան բաց» գրականություն: Բանը հասավ այնտեղ, որ Ալփիարին մեղադրեցին բանադողության մեջ: Ոմն Ստ. Երկանյան վկայակոչում էր ֆրանսիական «Մատեն» թերթի քրոնիկագիր Հալեւիից Ալփիարի բանադողությունը («Գրագետի տվայտանք» քրոնիկը, որ Ալփիարը տպագրել էր Զմյուռնիայի «Արևելյան մամուլի» 1905 թ. հոկտեմբերի 26-ի համարում): Ավելացնենք, որ մեղադրանքի հեղինակը միանում էր Ալփիարի հակառակորդներին, որոնք հարձակում էին սկսել նրա «անբարո» վավեշտական քրոնիկների դեմ: Հավանաբար այս ամենը կապվում էր «Հանրապետականի» շուրջ խմբված երդիծաբանների անձնական հարաբերությունների կամ ավելի շուտ, այդպիսիք պարզելու. իրողության հետ, որ հաճախ ավարտվում էր մռության ենթակա կամթոցներով: Համենայն դեպս, կարճ ժամանակ անց «Հանրապետականը» փոխեց իր վերաբերմունքը Ալփիարի նկատմամբ: «Տ.» ստորագրողը կարծեք մեղմում էր բորբոքված կրքերը, երբ Հ. Ալփիարին, Ե. Թոլայանին և Գ. Թորոսյանին համարում էր գրական նոր սեռ մշակողներ, որոնք ստեղծում են «ժամանցի գրականություն» (1906, թիվ 18, էջ 273): Այս հեղինակը ակնհայտորեն պաչտպանում էր Ալփիարին, երբ հակադրվում էր նրա գրականության արժեքը ժխտող «կեղծաւոր» քննադատներին: Այս վերջիններիի կեղծ բարեպաշտության դեմ ծառացավ ինքը՝ Ալփիարը, իր «Շոգ մոգ» խորագրով մանրապատումներից մեկում. «Պոլսոյ մէջ,- գրում է նա,- անդամ մը, շարաթ իրիկուն էր, չեմ մոռնար, ջոջ վաճառականի մը երկու ժամ տեւող խրատականով մը կը յորդորեր ինծի, որ վրան բաց գրականութիւն չընեմ և կիրակի օրը... քենին կը չփոթէր կնոջը հետ» (1908, թիվ 21, 308): «Բարոյախոսները» հոդվածում Ալփիարն իր քննադատներին հակադարձում էր «տիրացու» որակու-

մով և հայտնում, որ ճշմարտության ցուցադրումը դեռևս անբարո լինել չի նշանակում և որ ինքը իր պարտքն է համարում «ըսել բաները ինչպես որ են և պատկերացնել կեանքը եղածին պէս» (1908, թիվ 28, էջ 423):

«Հանրադիտակում» Ալփիարի պաշտպանությամբ հանդես եկավ Սմբատ Դավթյանը: Նա իրավացիորեն նկատում էր, որ Ալփիարը գրում է ժամանակակից ֆրանսիական ու անգլիական երգիծաբանների ոճով, հեռու է գռեհկամտություններից և միանգամայն ինքնուրույն՝ հայ միջավայրն ու բարքերը պատկերելիս (1908, թիվ 31, էջ 469–470):

Ալփիարի գործերում, հիրավի, ոչ մի անբարոյականություն չկա, և այս հարցում նման մեղադրանքի նախադեպը տեսնում ենք դեռևս տասնամյակներ առաջ, երբ հայ պահպանողականությունը Զոլային մեղադրում էր անբարո գրականություն ստեղծելու մեջ և որի հերքումով հանդես էր եկել Գր. Զոհրապը[1]: Ալփիարի երգիծանքը անսովոր էր իր համարձակությամբ՝ հատկապես հայ քաղքենու և երևսպաշտի համար, այն ընդամենը ուներ հրահրող նշանակություն, բարձրաձայն ասված մի բան՝ վարանոտ ու չշուկախոս հանրության ականջին: Եվ այս համարձակ ու անմեկին գրելաձևով Ալփիարի ստեղծագործությունը տարբերվում է ժամանակակից երգիծաբանների՝ Ե. Թոլայանի, Վ. Փափազյանի, Գ. Թորոսյանի և մյուսների ոճից՝ հայ երգիծանքի մեջ ներմուծելով եվրոպական երգիծական քրոնիկի գեղագիտական ըմբռնումները: Մյուս կողմից, թեմանների և հերոսների ընտրության մեջ Ալփիարը անում է նույնը, ինչ մյուս հայ երգիծաբանները: Նրա քրոնիկներում ևս նույն դեմքերն են՝ կանխակալ կանայք, անհամ վարժապետները, կնամոլ քահանաները, ամբարտավան հարուստները և այլն: Ալփիարը ևս պտտվում է Կ. Պոլսի թաղերում, այնտեղ հայնաբերում իր հերոսուհիներին՝ տալով երգիծական բնութագրի թարմ և ընդհանրացված օրինակներ: «Գումգաբուցի կինը» քրոնի-

[1] Տե՛ս Զոհրապ Գ.Ր., Գրականության մասին, էջ 127-130:

կում բավական սպառիչ տրված է աշխատավոր մի կնոջ սոցիալական ու հոգեբանական նկարագիրը՝ դորչ կենցաղով, նևղլիկ առօրյայով ու դրան համապատասխան հետաքրքրություններով: Ալփիարը նրան նայում է անչար հումորով՝ կնոջ կյանքում հայտնաբերելով ծիծաղելին ու անսովորը: Դրան հակառակ, Ալփիարը ներկայացնում է Բերայի և Գաւոը դյուղի հարուստ կանանց նկարագիրը: Բերացի կանայք հեռացել են հին բարքերից, բայց անչնորհք ու անճարակ են նորը յուրացնելու հարցում, որ նրանց դարձնում է անհաջողակ ընդօրինակողներ: Բերացի կանանց մեջ քիչ չեն այնպիսիք, որ «ֆրանսերէն կը խօսին դոր միայն խանութպաններն կը հասկնան»: Սրանց դիմանկարը երգիծարանն ամբողջացնում է պարադոքսալ դարձվածով՝ «ուզած ատեննին կը պառաւնան» (1908, թիվ 31, էջ 471):

Իր տեղում տեսանք, որ «Հանրապետակի» հեղինակներից Ե. Թոլայանը ևս Բերա թաղամասը բնութագրում էր գլխավորապես կանանց երգիծական կերպարներով: Արդյոք մրցակցություն էր մղել այս հեղինակներին՝ ձեռք զարկելու միևնույն թեմային, թե մեկ ուրիշ հանդամանք, սվյալ դեպքում կարևոր չէ: Ուշագրավն այստեղ այն է, որ զուգդ երգիծաբաններն էլ տալիս են բարքերի անկման, ազգային արժեքները քամահրելու իրողություն, որ հավասարաչափ դատապարտում են երկուսն էլ: Ավելացնենք, որ Ալփիարը սիրում է արտաքինի և ներքինի ծիծաղաշարժ հին հնարանքը, նրա դատողությունները սեղմ են, հաճախ՝ աֆորիզմի հասնելու չափ խտացված. «Վարժապետը կառք նստելու համար պէտք է, որ թաղին մէջ հարուստի մը յուղարկաւորութիւնը տեղի ունենայ»,- գրում է Ալփիարն իր մի քրոնիկում (1908, թիվ 30, էջ 456): Կամ՝ չարամիտ բամբասողի դիմանկարի վերջին վրձնահարվածը՝ ոչնչացնող սարկազմով. «Ինքզինքը ճանչցող ծաղիկ մը անոր դերեզմանին վրայ չի բուսանիր» (1908, թիվ 35, էջ 535):

Ալփիարը երբեմն տպագրել է երգիծական արժանիքներով չփայլող, թուլլ քրոնիկներ, որոնց վրա իր հետքն է թողել մամու-

լին աշխատակցող հայ երգիծաբանին մշտապես չարչրկող՝ թերթը լցնելու համար պատվեր կատարողի չտապողականությունը:

«Հանրագիտակում» բազմաթիվ երգիծարան հեղինակներ հանդես են եկել ծածկանուններով, որոնց վերծանումը կապված է հասկանալի դժվարությունների հետ: Դրանց թիվն անցնում է երկու տասնյակից, որպիսիք են «Մառկռիթ», «Թոթովիկ», «Սիմեոն ծերունի», «Շաքարեղեգ», «Երմոգ», «Դիտող», «Քոպռա», «Զազա», «Ռոմանոս», «Էնժեա», «Ներշապուհ» և այլն: Այս երգիծաբաններին հուզող թեմաները՝ ավելի կամ պակաս երգիծական սրությամբ ու արվեստով, գրեթե նույնն են, ինչ տեսանք «Հանրագիտակի» առաջատար երգիծաբանների ստեղծագործություններում: Որոշ ծածկանուններ հայտնի են դառնում տվյալ տեքստից. օրինակ, «Անմեռուկը» Վահան Փափազյանն է (1908, թիվ 21, էջ 315–316), Վաղինակը՝ Վաղինակ Փափազյանը (1906, թիվ 5, էջ 69–70) և այլն: Հանդեսի առաջատար հեղինակներից իր սրամտությամբ և թեմայի նշանակալիությամբ հետ չի մնում «Մառկռիթը», որի «Հուշատետրիս մէջէն» վերտառությամբ քրոնիկներում ծաղրի նշավակ են դառնում պոլսեցի հայ կանանց մոդայամոլությունը, խանդից նվաստացող տղամարդիկ, փողատեր դարձած «հայ լայֆլի» փնթի արտաքինն ու կենցաղը և այլն: Մտավորականության ծիծաղաշարժ թերությունների դրվագներ է ներկայացնում ինչպես միշտ տաղանդավոր Քասիմը (Մ. Գոչունյան): Նրա «Նորելուկ գրագետը» չատ հաջող պատմվածքում պատկերված է սկսնակ գրողը՝ իր հորինածները որևէ մեկի դլխին կարդալու անդիմադրելի ցանկությամբ, որ պոլսահայ մամուլի օրախնդիր հետաքրքրությունների մեկն էր (1906, թիվ 6, 84–86): Նոր սերնդի սնամեջ հերոսների, ասել կուզի՝ նոր բարքերի և բարոյական նորմերի բավական հաջող քննադատությամբ Քասիմը հանդես եկավ «Հոր մը սրտունջը» քրոնիկով, որտեղ կարծեք ուրվագծում է անհատական ու հանրային այլասերման ավանդական ընթացքը՝ ի դեմս երեք սերունդների համեմատական նկարագրի (1906, թիվ 14, էջ 212–214):

«Հանրագիտակը» տպագրել է նաև ավագ սերնդի երգիծաբաններից Հ. Հաճյանին, նույն այն անձնավորությանը, որը Հ. Պարոնյանի ժամանակակիցն էր և խմբագրել է մի շարք պարբերականներ:[1] Երգիծանքի վարպետի նրա գրիչն իրեն զգացնել է տալիս «Իրիկուան կեանքը... պինետուններուն մէջ» երգիծական պատմվածքում և «Խնդուք Հ. Հաճեանէ» խորագրով մանրապատումներում (1907, թիվ 21, 330–331, 1908, թիվ 21, 314):

«Հանրագիտակի» տպագրած երգիծական գործերը գերազանցապես արձակ են, բայց և հանդիպում են ավելի կամ պակաս հաջողությամբ գրված չափածո գործեր ևս: Իր ուժերը նաև չափածոյում է փորձել Հ. Ալփիարը՝ նույն ժանրով, «Բունահանդը» վերնագրով քառյակներում (1906, թիվ 1, էջ 8), ինչպես և Ե. Թոլայանը՝ գվարթ հումորով հագեցած «Ներշնչումներ» գործում (1908, թիվ 35, էջ 536–537): Չափածո երգիծական ստեղծագործությունները նույնպես ունեն կենցաղային բնույթ և որևէ նոր բան չեն ավելացնում պարբերականի երգիծանքին:

«Հանրագիտակում» տպագրվել են գրական նշանավոր դեմքեր, որ այն դարձնում է ժամանակի գրական հետաքրքիր հրատարակություններից մեկը: Այստեղ իր առաջին գրչափորձերից մեկն է արել Մ. Մեծարենցը, տպագրվել են Տ. Զրաքյանի, Սիսլիի, Հ. Մառքի, Մ. Գոչունյանի, Մ. Ածեմյանի, Ադ. Փանոսյանի, Ե. Գոլանճյանի, Լ. Շաթրյանի, Թեոդիկի և այլոց ստեղծագործությունները: Մ. Մեծարենցը հանդես է եկել Մ. Մեծատուրյան ստորագրությամբ. նրա առաջին բանաստեղծությունները, որ տպագրել է «Հանրագիտակը» «Փունջեր» վերնագրով, բանաստեղծը նվիրել է Գ. Շահինյանի հիշատակին (1903, թիվ 10, էջ 214): Դրան հետևել են «Յիշատակ (սիրերգ)» և «Տղու մը մահը» բանաստեղծությունները (1903, թիվ 17, էջ 361, թիվ 19, էջ 396): Այստեղ է տպագրվել

[1] Իր տաղանդի ուժով Հ. Հաճյանը, հարկավ, վիջում է մեծ երգիծաբանին, բայց և իր կարողությունների սահմաններում նպաստել է հայ երգիծանքի զարգացմանը: Հ. Պարոնյանից հետո նա է խմբագրել «Եփրատը» (1872), ապա «Սիմոս» (1875), «Շառիվառի» (1876), «Ծաղիկ» և «Մոզայիք» պարբերականները:

նաև Մ. Ծարենցի «Արևագալը» հանրահայտ բանաստեղծությունը՝ բնանկարի անկրկնելի գույներով և ցնծուն զգացումներով (1903, թիվ 28, էջ 579):

Տ. Զրաքյանը «Հանրագիտակում» տպագրել է իր «Գողը» հաջող պատմվածքը, որն իր լարված այուժեով և հեղինակի երգիծական հայեցվածքով հագեցած ինքնատիպ ստեղծագործություն է (1902, թիվ 20, էջ 312–316):

«Հանրագիտակի» կին գրողներն առանձնանում են իրենց բարոյահոգեբանական ուշագրավ վերլուծություններով և սուր հակադրությունները նրբորեն մատուցելու վարպետությամբ: Այդպիսին է Հ. Մաւքի «Սիփոփանք գրչին մէջ» նորավեպը: Այս հեղինակը նոր երանգներ է ավելացնում զգացումների և ավանդութայինի հին հակադրությանը՝ հոգեվիճակների հիմնավոր վերլուծությամբ: Արվեստի իսկական գործ է Սիպիլի «Երեւոյթները» բանաստեղծությունը, որտեղ հեղինակն ի հայտ է բերել չափի զարմանալի զգացում՝ ձևի և բովանդակության հին հակադրությունը բացահայտելիս (1905, թիվ 1, էջ 2): Լ. Շաթրյանի, Ե. Գոլանճյանի, Թեոդիկի, Ադ. Փանոսյանի (Ալփասլան) և այլոց չափածո և արձակ գործերն առանձնապես նոր բան չեն ավելացնում «Հանրագիտակի» գրական արժեքներին, բայց հետաքրքիր են պոլսահայ իրականության և անհատի տրամադրություններն արտացոլելու տեսակետից:

«Հանրագիտակն» ընթերցողին է մատուցել նաև թարգմանական նշանակալի գրականություն՝ խնամքով ընտրված նմուշներ ֆրանսիական, անգլիական, գերմանական և ամերիկյան գրողներից: Այս կերպ տպագրվել են Լամարտինի, Շատոբրիանի, Ֆեննելոնի, Հյուգոյի, Դոդեի, Լապուլեի, Զոլայի, Մարվիլի, Մոպասանի և այլոց ստեղծագործությունները, որով ակնհայտորեն ցուցադրվում են «Հանրագիտակի» հակումները դասական գրականության և անտարբերությունը ժամանակի դեկադանսի և սիմվոլիզմի նկատմամբ: Շիլլերից արված ծանրաչունչ գրաբարով արված թարգմանությունները, որ արել է Ռ. Պերպերյանը (1900, թիվ 77, էջ 1229–1231, թիվ 80, էջ 1279–1280), ինքնին խոսում է «Հանրագիտակի»

գրական պահպանողականության մասին: Ռ. Պերպերյանը գերմաներենից թարգմանել է նաև Ֆրայլիգրադի մեկ բանաստեղծությունը՝ դարձյալ գրաբարով (1900, թիվ 79, էջ 1261–1262): Գերմանական գրականությունից Ա. Ծարհատը թարգմանել է «Փուշ-վարդ» ավանդավեպը, որ Հոֆմանի մի հեքիաթն է, թեև հեղինակը չի նշված և խմբագրությունը կամ թարգմանիչն այն համարել են ազգագրական ստեղծագործություն (1903, թիվ 22, էջ 460–463): Բոլոր դեպքերում «Հանրապիտակը», ի տարբերություն ժամանակի մամուլի, որի էջերում ծավալուն տեղ էին զբաղեցնում թերթոն-վեպերը, նախընտրում էր ոչ մեծ չափերի գրական գործերը: Պատանի ընթերցողի հետաքրքրություններին ընդառաջելով՝ պարբերականը տպագրել է եվրոպական գրողների կենսագրությունները: Շարադրելով Ջեննելոնի կենսագրությունը, Ռ. Որբերյանն առանձնացնում է նրա «Աղջկանց դաստիարակությունը» երկի արժանիքները և ֆրանսիացի գրողի մանկավարժական ուրույն հայացքները՝ հատկապես մտքի ու կամքի ազատ դաստիարակության և կրոնական բարոյախոսության հետ վերջինիս առնչությունների տեսակետից (1903, թիվ 22, էջ 471–472): «Հանրագիտակի» թարգմանական գրականությունը գլխավորապես նախատեսված էր պատանի ընթերցողի համար: Նույն հասցեագրումն ունեին շարաթաթերթի 1900–1904 թթ. տպագրած բազմաթիվ մանկական ստեղծագործությունները՝ ինքնուրույն, թե թարգմանական:

«Հանրագիտակի» մանկապատանեկան արձակն ու չափածոն գլխավորապես բարոյախոսական բնույթ ունեն, դրանցում գերիշխում են առաքինության, աղնվության, մարդասիրության և այլ արժեքների քարոզչությունը, համոզիչ և առարկայական ցուցադրումները: Այս բովանդակության նյութերում հաճախ չլրջանառության մեջ են դրվում ավետարանական ճշմարտությունները, որոնց դաստիարակչական ուղղվածությունն ի հայտ է գալիս հեչտ ընկալվող սյուժեների մեջ կամ հերոսների վարքագծում: «Հանրագիտակը» սակավ բացառություններով պահպանում է կրոնաբարոյական դաստիարակության և կրոնամոլության միջև ընկած սահ-

մանը՝ հօգուտ առաջինի: Այս իմաստով բացառութիւններից մեկը կարելի է համարել այն փոքրիկ աղջկան, որն ի տարբերութիւն զարդարանքներ գնող իր ընկերուհիների, տոնավաճառում իր դրամը տվել էր աղօթապրքի (1901, թիվ 3, էջ 37): Քրիստոնեական բարոյական արժէքները՝ առօրյա կեանքում, կենցաղում, ուսման մեջ, հասակակիցների ու ծնողների հետ ունեցած հարաբերութիւններում, կարեկցանքը թուլլի հանդեպ և նրան օգնելու պատրաստակամութիւնը՝ սրանք են կազմում «Հանրագիտակի» մանկական ստեղծագործութիւնների կարևոր արժէքը: Պարբերականում ամենից շատ տպագրվել են Ակյուլինեի, Մ. Թուրյանի, Լ. Սրապյանի, Ադ. Փանոսյանի և Ս. Դավթյանի մանկական ստեղծագործութիւնները: Գեղարվեստական արժանիքներով առավել աչքի են ընկնում չափածո գործերը: Մանկական թարգմանական գրականութեան մեջ առավել հետաքրքիր են Ժ. Վեռնի, Զ. Դիկկենսի, Մարմոնտելի, Ֆ. Կոպեի, Ա.Դոդեի, Ք. Մարմիեի և այլոց ստեղծագործութիւնները: Ի դեպ, թարգմանութիւնները գլխավորապես արված են ֆրանսերենից՝ և ոչ միայն ֆրանսիական գրականութեան պարագայում: Հատկապես դերմանական գրականութեան արձակ էջերն այս կերպ թարգմանված են ֆրանսերենից: Այս գրականութիւնը, անշուշտ, զարգացման մղումներ է տվել հայ մանկագրութեանը: Ավելին, հանդես գալով իբրև «Բուրաստան մանկանց» պարբերականի շարունակութիւն՝ 1901–1903 թթ., «Հանրագիտակն» իրականացնում էր այդ տարիների միակ մանկական հրատարակութեան գործառոյթները արևմտահայ մամուլի պատմութեան մեջ:

«ՍՈՒՐՀԱՆԴԱԿ» (1899–1908)

Հրատարակվում էր Կ. Պոլսում, տեր և տնօրենն էր Տիգրան Ճիվելեկյանը: Նախապես չարաթաթերթ էր, ապա օրաթերթ ազդային, քաղաքական և տնտեսական: Տ. Ճիվելեկյանը ճանաչված գործիչ էր մամուլի և հրապարակախոսության ասպարեզում: 1870–1880-ական թթ. նա խմբագրում էր հայատառ թուրքերեն և բավական աղմկահարույց «Թերճեմանը էֆքյար» (1877–1885), որից հետո, դարձյալ հայատառ թուրքերեն «Ճերիտեի չարպիյե» (1885–1913), (հայտնի է թուրքական հետադիմական մամուլի հետ իր բանավեճերով) թերթերը: «Հայրենիքի» և «Արևելքի» հետ «Ճերիտեի չարդիյեն» ըստ հնարավորին ընդդիմանում էր Համիդյան գրաքննության կամայականություններին՝ չահելով ընթերցողի համակրանքը: Հավանաբար, 1882 թ. թուրքական մամուլի հետ «Թերճեմանը էֆքյարի» ընդհարումները սրել էին ոստիկանության ուշադրությունը Տ. Ճիվելեկյանի նկատմամբ, համենայն դեպս, նրա «Սուրհանդակի» կենսագրությունը սկսվում էր անախորժ միջադեպով: 1898 թ. ոստիկանությանը տեղեկացրել էին, թե, իբր, «Սուրհանդակի» հրատարակությունն ունի դրգռիչ նպատակներ, որ արտացոլվել է նրա վերնագրի մեջ (սուր հա՛ն, դա՛կ՝ «սուրը հանե, թաքմիշ ըրե»՝ այսինքն, սուրը հանիր և ծակիր)[1]: Գրաքննության այսպիսի էժանագին տեսակը՝ այնքան տարածված Համիդյան գրաքննության սնուցիչ պայմաններում, այնքան անմիտ էր, որ Տ. Ճիվելեկյանից, հավանաբար, բացառիկ ջանքեր չէին պահանջվել այն հերքելու համար: Համենայն դեպս, «Սուրհանդակը», ինչպես և ամբողջ օսմանյան կայսրության տարածքում հրատարակվող մամուլը, կրում էր այդ խայտառակ գրաքննության լուծը, «հիվանդ մարդը»՝ Թուրքիան, հիվանդ էր դարձրել նաև մամուլը, նրա բարքերն ու դործառույթի ձևերը: Այս պայմաններում հայ մամուլն ու հրապարակախոսությունը մշակում են համապատաս-

[1] Տե՛ս «Մշակ», 1898, 27 հոկտեմբերի:

խան գործնականով՝ բացահայտ և ուղղակի քննադատական խոսքը, որ այնքան կարևոր էր ընթերցողի վրա չտապ ներգործելու համար, փոխարինվում է առօրյա ուշագրավ նյութերով, թարմ լրատվությամբ և հանրությանը հուզող թեմաններով: Անվանի հրապարակախոսների և գրողների աշխատակցությունը «Սուրհանդակին»՝ նույնպես իր նշանակությունն ունեցավ նրա հաջողության մեջ: Թերթին աշխատակցում էին Ռ. Զարդարյանը, Օ. Չիֆթե-Սարաֆը, Հ. Ալիփարը, Ադ. Փանոսյանը, Ե. Թոլայանը, Ա. Ալպոյաճյանը, Մ. Ուղուրլյանը և այլք, որոնց աշխատակցությունն առհասարակ վայել էր տալիս նաև պոլսահայ մյուս թերթերին:

«Սուրհանդակի» առաջատար թեմաներն են արևմտահայ հասարակական կյանքի լուսաբանումը՝ նրա տնտեսական կողմերի չհշտադրությամբ, գավառական իրականությունը, Կ. Պոլսի հայ հանրության կրթական-մշակութային ու դրական իրողությունները: Այս մշտական հետաքրքրություններին թերթը միացնում էր քաղաքական լուրերն ու դրանց մեկնաբանությունները: Այս վերջինիս տպագրությունը կարծեք, լրագրական բարքերի դրսևորման մի ձևն էր, «լուրջ թերթ» երևալու հարկադրված և պաշտոնական կնցվածք, որ զրեթե ընդհանրական էր Թուրքիայում հրատարակվող թերթերի համար: Դրա հետ մեկտեղ, «Սուրհանդակն» ի հայտ էր բերում երկրի տնտեսությունը լրջմտորեն դիտարկելու, նրա կացությունը ընթերցողին լուսաբանելու կարողություններ, հատկապես երևույթի ստվերոտ կողմերի բացահայտումներով: Միայն Զմյուռնիայի առևտրատնտեսական կյանքին, նրա գյուղատնտեսական արտադրությանը և միջազգային առևտրում ունեցած մասնակցությանը վերաբերող «Սուրհանդակի» հրապարակումները, փաստական ու վիճակագրական բազմաթիվ նյութերը բավական են բավարար պատկերացում կազմելու այդ քաղաքի և նրա շրջակայքի տնտեսական նշանակալիության մասին: Այս կարգի հրապարակումներում ցույց են տրվում տեղական գործի արտադրությունը կաշկանդող պատճառները, խաղողի արտահանման չափերը նվազեցնող գործոնները, որոնց մեջ կարևորվում է օսմանյան մաքսա-

յին քաղաքականության աննպաստ ուղղվածությունը՝ ի վնաս տեղական արտադրողների: «Սուրհանդակը» հատկապես հետաքրքրություն է հանդես բերում երկրում գործադուլային պայքարի զարգացման հնարավորությունների նկատմամբ: «Օսմանեան գործիրու ճարտարարուեստն ու առուտուրը» հոդվածում (1900, 19 հլս.) ցույց է տրվում այդ զարգացումը խոչընդոտող էական թերությունը՝ հնավանդ և ցածր արտադրողականության պայմաններում գործածառելը և այս պատճառով տեղական արտադրողի մշտական կախումը օտար պատվիրատուներից: Տեղական առևտրականությունը ևս դուրս է մղվել միջնորդի ասպարեզից և այն զբաղեցրել են իրենք՝ օտարները: Սրանք հաստատվել էին Զմյուռնիայում և անմիջական կապերի մեջ մտնելով գործ արտադրողների հետ՝ իրենց դրամագլխի ուժով վերահսկողություն էին սահմանել արտադրության չափերի ու քանակի, ինչպես նաև գնի վրա՝ փաստորեն տնօրինելով արտադրության այս ճյուղը: Տեղերում եվրոպացիների այս մենաշնորհ վիճակը վերածվում էր արտաքին առևտրի մենաշնորհի. «Թուրքիայէն գործ գնող եւ Եւրոպա ղրկող վաճառականները չեն ուզէր, որ իրենց գործաւորներէն ուրիշ մարդիկ օսմանեան գործեր արտածեն Եւրոպա»,- խոստովանում էր անգլիական հյուպատոսը Զմյուռնիայի «Սպարթայի գործերի ընկերության» ներկայացուցչին (ն. տ.): Թերթը համամիտ է նրան, որ Լիվերպուլում և եվրոպական այլ կենտրոններում բացվեն օսմանյան արտադրանքը ներկայացնող ցուցահանդեսներ, վաճառատներ, որ հնարավորություն կտար նաև տեղական հայ արտադրողին՝ անմիջական կապերի մեջ մտնելու եվրոպական գնորդի հետ:

Թուրքիայի տնտեսության զարգացումը կասեցնող մյուս լուրջ խոչընդոտը, բացի մենաշնորհի վերոհիշյալ գործոնից, «Սուրհանդակը» համարում է պետության անհետևանելի մաքսային քաղաքականությունը, որի պատճառով տեղական հումքը դուրս է տարվում անարգել և չի մշակվում տեղում: Այնթափի մանուսայագործության և Կյուրինի չալագործության բնագավառներում առկա զգալի կորուստները «Սուրհանդակը» բացատրում է հենց այս իրո-

ղությամբ: Այս թեմայով ուշադրավ է Ա. Ալպոյաճյանի «Կիւրինի չալադործները» հոդվածը, որտեղ հայ արհեստավորների տնտեսական անհաջողութիւնների պատճառը համարվում է եվրոպական թանկ հումքի (մանածի) օգտագործումը, իսկ հիմնականում՝ եվրոպական չատ ավելի էժան և որակյալ ապրանքների «զօրաւոր» մրցակցութիւնը չուկայում: Ա. Ալպոյաճյանը իրավացիորեն նկատում է կյուրինցիների մեկ այլ թերութիւնը՝ ոչ ճկուն առաջարկը (ասլրանքատեսակը) պահանջարկի նկատմամբ (1900, 23 օգ.): Նույն թեման է շոշափում մեկ այլ հեղինակ, որը Կյուրինի չալագործների արտադրանքի էժանութիւնը հիմնավորված չի համարում նրա բարձր որակի համեմատութիւյամբ, պնդելով, որ այն գերազանցում է եվրոպականին: Թեև այս հեղինակը չփոթում է տնտեսական իրողութիւններն ու դրանց միջև եղած կապերը, սակայն նրա հոդվածը հետաքրքիր մանրամասներ է պարունակում հայ արհեստավորների տնտեսական գործառութիւնների և պայմանների մասին (1900, 9 օգ.), որ այսօր կարող է հետաքրքրել հայ արհեստագործութիյան պատմաբանին:

«Սուրհանդակը» մի տևական ժամանակ ուշադրութիյան կենտրոնում է պահել Զմյուռնիայի տնտեսական կյանքը, մասնավորապես խաղողագործութիյան և գինեգործութիյան բնագավառները, որտեղ, ինչպես հայտնի է, հայ դրամատերերը ձգտում էին մրցակցել հույների հետ: Թերթի այս կարգի հոդվածներում տնտեսական երևույթները քննարկվում են պաշտոնական վիճակագրական տվյալների հիման վրա՝ քաղված Կ. Պոլսի առևտրական գրասենյակի լրագրից: Զարմայրի «Գիննէչինութիւնն Թուրքիոյ մէջ» հոդվածում արծարծվում են գործնական նշանակութիյան հարցեր՝ հատկապես հայ գինեգործների համար (1900, 11 օգ.): Հեղինակը վերլուծում է համաշխարհային գինեգործական արտադրութիյան մեջ Թուրքիայի հետ մնալու (10-րդ տեղը՝ տարեկան 1 մլն 950 հազար հեկտոլիտր չափով) պատճառները՝ չնայած այդ երկրի բնակլիմայական պայմանների և երկաթուղային ցանցի ընձեռած բարենպաստ հնարավորութիյուններին: Առաջին պատճառը նա համարում է հար-

կային ծանր համակարգը, ապա տեղական այգեգործների՝ իրենց սպառած տնտեսավարման «պապենական» մեթոդները, որոնք չեն կարող դիմակայել եվրոպական արդիական և «գիտական և փորձառական» արտադրությանը: Գինեգործության և ոգելից ըմպելիքների առևտրին հայերը չէին մասնակցություն ունենին, այն գլխավորապես կենտրոնացել էր հույների ձեռքին, ուստի Զմյուռնիայի հայերի ուշադրությունը հրավիրում է արտադրության այդ եկամտաբեր ճյուղի վրա: Զմյուռնահայ ձեռնարկատերերին է ուղղված, անշուշտ, «Իզմիրի թուզն ու չամիչը» հոդվածը, որն ուշագրավ տվյալներ է պարունակում Զմյուռնիայի և դրան կից գյուղատնտեսական շրջանների (Էյդեմիշ, Նազիլլի, Կարաբունար, Կերմենճիք, Սյոքե) առևտրատնտեսական կապերի, արտադրանքի չափերի և այլնի վերաբերյալ (1900, 17 օգ.): Այս շրջաններում մշակվող սուլթանիե խաղողի, որթատունկերի, դրա հիվանդություններ (ֆիլոքսերա) դեմ միջոցառումների արտադրական նշանակության են նվիրված «Սուրհանդակի» այլ հրապարակումները՝ «Տնտեսական հարցեր» խորագրի ներքո: Խաղողի և անկուտ չամիչի արտադրության ու արտահանման բնագավառում 20-րդ դ. սկզբին հայերն ունեին զգալի տնտեսական կշիռ, ուստի թերթն իր վերլուծություններով հետ միասին բավական օգտակար և գործնական լրատվություն է տալիս խաղողի մշակության, դրա իրացման ներքին և արտաքին շուկաների վերաբերյալ (1906, 14 փտ.):

«Սուրհանդակն» ուներ «Տնտեսական կեանքը գաւառներու մէջ» խորագիրը, որի տակ, բացի Արևմտահայաստանի տարբեր շրջանների տնտեսական կացությունը լուսաբանող հրապարակումներից, տպագրում էր փաստականորեն հաղնցած նյութեր, տնտեսագիտական ուշագրավ վերլուծություններ: Գյուղատնտեսական արտադրության ոչ եկամտաբերության պատճառները քննարկող մի հրապարակման մեջ թերթն անում է հետաքրքիր եզրակացություններ առհասարակ ամբողջ երկրի մակարդակով: Այդպիսիք են համարվում տարեկան ծախսերի աճը՝ կենցաղային պահանջմունքների աճի պայմաններում, բացասական սալդոն՝ արտահանման և

ներմուծման հաշվեկշռի հարաճուն հակադրությունը ի վնաս արտահանման և որպես դրա արդյունք՝ փողի գնողունակության նվազումը: Ուշադրություն է գրավում մանր ու միջակ առևտրականության տնտեսական զարդացումն արգելակող այնպիսի գործոնների մատնանշումը, ինչպես մրցակցական պայքարում չհիմնավորված ցածր գների սահմանումը, ապառիկ վաճառքի սովորությունը, կեղծ անանկությունը և այլն (1908, 19 հնս.): Թերթը զգուշացնում է Թուրքիայում լայն տարածում գտած ապահովագրական խաբեբա ընկերությունների գործունեությունից, ողջունում է այդ ընկերությունները պետական վերահսկողության տակ առնելու իրողությունը: «Սուրհանդակը» հանրագումարի է բերում ապահովագրական (փաստորեն բանկային գործառույթ իրականացնող) ընկերությունների անմաքուր գործունեության բազմաթիվ օրինակները, ինչպիսիք էին բաժանորդներին ապահովագրվելը և հարկ եղած դեպքում վճարելուց հրաժարվելը, ավանդատուների խնայողությունները հավաքելու և ապա «կծիկը դնելու»՝ անորոշ ուղղությամբ չքանալու դեպքերը և այլն (1900, 2 սպտ.):

Եվրոպական առևտրի և արտադրության ընդօրինակելի սկզբունքներ «Սուրհանդակի» հեղինակները համարում էին անգլիականը: Մանչեստրից Մ. Քեչիշյանի ուղարկած տնտեսագիտական բնույթի հոդվածներում քննարկվում են անգլիական տնտեսավարման մեթոդներն ու մեխանիզմները, աշխատավարձի ձևերը, օրվա կարգուկանոնը և այլն (1903, 4 մրտ.): Հոդվածների մի այլ խումբ թերթը նվիրել է տնտեսագիտության պատմության ու տեսության հարցերին: Տ. Մուրատյանի «Տնտեսագիտութեան հայրը. Ատամ Սմիթի վարդապետութիւնը» ուսումնասիրության մեջ ուրվագծվում են Սմիթի տնտեսագիտական ուսմունքի մի քանի կողմերը, որ բնութագրում են նրան որպես տնտեսագիտության մեջ նոր ուղղության հիմնադրի: Փոխանակային արժեքի, դրամի և գնի փոխհարաբերության մեջ հեղինակը կարևորում է հարստության ակունքները՝ հողը և նրանում ներդրված աշխատանքը (1906, 15 մրտ.): Նույն հեղինակն իր «ԺԸ դարու տնտեսագէտները» հոդվա-

ծում ի հայտ է բերում բավական սթափ քննադատական կեցվածք՝ Մոնտեսքյոյի, Ռուսսոյի, Վոլտերի, Ռեյնալի՝ արդի տնտեսագիտության այդ նախահայրերի հայացքների նկատմամբ (1906, 18 օգ.)։ «Սուրհանդակի» խոհերն ու հանձնարարականներն առաջին հերթին ուղղված են «մինչին դասակարգին»՝ առևտրի ու արտադրության մեջ, ինչպես և արհեստագործներին, որոնց տնտեսական անմխիթար վիճակը բարելավելու կարևոր միջոցներից մեկը թերթը համարում էր երկրագործության զարդացումը։ Այս խնդիրները հաջողությամբ լուծելու համար «Սուրհանդակն» առաջարկում էր Արևմտահայաստանում և երկրի հայաբնակ այլ շրջաններում արմատավորել բանկային դործը։ Երկրագործական բանկերը այն համազարմանն էին, նրա կարծիքով, որ պետք է փրկեին գյուղացուն վաշխառուի հարատահարումներից, վարկ տրամադրելին նրան՝ մեքենայական հողագործության անցնելու համար։ Հողի, աշխատանքի, ֆինանսների և ի վերջո, արտադրության իրացման համակարդի հաջողությունները «Սուրհանդակը» տեսնում էր Թուրքիայում դերմանական արտադրության և արդյունաբերական հզորության օրինակով։ «Գերման վաճառականությունը Թիւրքիոյ մէջ» հոդվածում վերոհիշյալ գործոններով է բացատրվում գերմանացիների տնտեսական ամրակայումը Թուրքիայում, որին նրանք հասել են Թուրքական շուկայի լավ ճանաչողության, արտաքին առևտրական քաղաքականության ճիշտ կազմակերպման շնորհիվ։ Մեկ ու կես տասնամյակի ընթացքում, նկատում էր «Սուրհանդակը», դերմանական արտաքին առևտուրը Թուրքիայում հասել է այնպիսի ցուցանիշի, ինչպիսին այն, որ 1905 թ. արդեն Թուրքիա ներմուծված ապրանքների 50 %-ը դերմանական են (1905, 4 մյս.)։ Եվ հենց այս հաջողություններն են, որ տագնապով են համակում Թերթին՝ ազգային վաճառականության անհետանկար ապագայի նկատմամբ։ «Տալոր» առորագրությամբ հեղինակը պարզապես նշում է, որ եվրոպացիները արդեն յուրացրել են թե՛ մեծածախ և թե՛ մանրածախ առևտրի զգալի մասը, իսկ դեղորայքի, նպարեղենի և նորաձևության ու պերճանքի առարկաների առևտուրը տնօրինում

են ամրողջովին: Այս հնդինակը եզրակացնում է, որ առևտրական չրջանառության ընդլայնումը Թուրքիայում ոչ այլ ինչ է, եթե ոչ օտարականների առևտրական գործունեության հաղթարշավ (1900, 14, 25 հլս.): Ադրիանուպոլսի տնտեսական կյանքին նվիրված մի հոդվածում թերթը մատը դնում է ցավոտ և զրեթե ընդհանրական դարձած մի խնդրի վրա՝ հայ առևտրականները ասպարեզը զիջում են նաև տեղական հույն վաճառականներին ու կենտրոնանում են միայն «մանիֆաթուրայի» ավանդական ասպարեզում: Թերթն առաջարկում է դիմել կաշվի, բրդի և խոզակի արտահանմանը, չուկայից չերկնչել և մրցակցել այլազգիների հետ: Այդընի վիլայեթում ևս հայ վաճառականները չեն զբաղվում բամբակի արտածությամբ, մինչդեռ այդ վիլայեթում Սալիհլիի, Թիրեի և Մանիսայի բամբակագործական չրջաններում լայն գործունեություն ծավալած հույն վաճառականները մեծ չահույթ են ապահովում բարձրորակ բամբակի չնորհիվ: Այդընում հիմնվում են բամբակագործական նոր գործարաններ, որից հետու են մնում հայերը (1905, 30 սպտ., 23 դկտ.): Ստեղծված պայմաններում, եզրակացնում է թերթը, անհրաժեշտ է դառնում հայ առևտրականների դրամագլուխների միավորումը՝ մրցակցությանը դիմանալու համար: Այս ոգով էլ վերոհիշյալ հնդինակը «Թուրքիոյ վաճառականութիւնը» խմբագրականում հայ առևտրականներին առաջարկում էր թողնել բորսայի (սակարան) գործառնությունները, որ չի խրախուսում օսմանյան կառավարությունը, և միավորվել առևտրական ու արտադրական ընկերությունների մեջ: Ոչ առանց հիմքերի, նա կարծում է, որ ի վնաս Թուրքիայի առկա առևտրական հաչվենկչիռը կարնլի է մեղմել՝ ի հաչիվ արտադրության ընդլայնման (1900, 18 օգ.):

Չնայած գավառական իրականության վերաբերյալ լրատվության որոչ միօրինակությանը (տնտեսության հետ կապվող հարցեր), «Սուրհանդակը», այսուհանդերձ, առաջադրում էր ընթերցողին հետաքրքիր հարցադրումներ, փորձում ի հայտ բերել այդ իրականության ստվերոտ կողմերը: Ռ. Զարդարյանն իր «Գաւառի կեանքէն» հոդվածում առաջադրում է գավառական իրական կյանքի

պատկերի ցուցադրման խնդիրը՝ անպտուղ համարելով հայ մամուլի էջերում այնքան տարածված «առաջնորդական, քահանայական, մէկ խօսքով՝ տիրացուի խնդրով» ծանրաբեռնված հաղորդումները (1896, 16 ապր.): Հայ հասարակական կարծիքի ուշադրության առանցքը պետք է լինի գավառը՝ իր կարիքներով ու հոգսերով, կարծում է Թերթը, և այս խնդիրը նրա էջերում ստացել է ուշագրավ դրսևորումներ: Ճապաղջրին վերաբերող մի ակնարկում ցույց է տրվում, որ այս գավառակը զուրկ է մնում և՛ դպրոցից, և՛ քահանայից՝ Ս. Կարապետի մայրավանքի անտարբեր հայացքի ներքո (1900, 8 մրտ.): Մի այլ հոդվածում «Սուրհանդակի» վանի թղթակիցը ներկայացնում է ոչ միայն իրողությունը, այլև ելք է հուշում. Վան են եկել անտերունչ գաղթականները Շատախից, Խիզանից, Կարճկանից ու Նորտուզից, շատերը մուրացկանություն են անում: Թղթակիցն առաջարկում է գաղթականների համար հայթայթել սերմացու, ապրուստի միջոցներ, վերադարձնել նրանց տեղերը, իսկ քաղաքացի աղքատներին տնդում ապահովել աշխատանքով (1900, 22 մրտ.):

Ժամանակի ընթացքում «Սուրհանդակի» հոդվածները գավառական կյանքի մասին դառնում են առավել իրատեսական, գավառը ցուցադրվում է ոչ միայն իբրև անտարբերության, այլև սեփական կենցաղի արդյունք, թերություններն ու արատները հանդուրժող հետամնացության գոհ: Մ. Սպարթալյանը քննադատում է Արմաշի բարեկեցիկ այն հայերին, որոնք շատ ժլատ են բարեգործության մեջ, բայց չռայլ՝ սեփական պերճանքի և զվարճության համար: Խզճալի վիճակում է կրթական գործը: Քննադատվում է Արմաշի վանքի ուսումնական հնարավորություններն անտեսող ժողովուրդը (1906, 7 փետ.):

Ազգային իրականության մեջ կարևոր տեղ վերապահելով եկեղեցուն, գավառական կյանքի արատների համար «Սուրհանդակը» քննադատում է նաև հոգևորականությանը: Նույն Արմաշի վանքից առանձնապես ակնկալիքներ չունի նաև Ա. Անտոնյանը, որը պաշտպանում է հին սերնդի հոգևորականության՝ նորերի նկատ-

մամբ նախապատիվ լինելու տեսակետը (1905, 17 դկտ.): Նույն թեմայով մի խմբագրականում նա դատափետում է բարոյագուրկ որոշ կղերականների, որոնց անվայել վարքագիծը ստիպված էր քննել Կ. Պոլսի կրոնական ժողովը: Ա. Անտոնյանը պահանջում է խիստ միջոցներ ձեռնարկել՝ կանխելու հոգևոր դասի մեջ տեղ գտած այլասերման երևույթները (1905, 19 դկտ.): Հոգևորականության կոչմանը անհարիր՝ ընչաքաղցության դրսևորումներն է ցույց դնում Շ. Միսաքյանը՝ դատափետելով ծեսերն ըստ վարձատրության չափի կատարելու արատավոր երևույթը (1906, 8 մրտ.): Թերթը տեղ է տվել նաև հակառակ կարծիքների: Հռ. Արապյանի պնդումներն ի պաշտպանություն եկեղեցականների, նույնչափ հին էին, որչափ ինքը՝ հոգևորականությունը: Նրա կարծիքով, «միշտ պէտք է խորշիլ ամբոխին պարզելէ կղերին գայթակղութիւնները: Կղերը իր խորհրդաւորութեան մէջ բարձր և բանաստեղծական է՝ ընութեան խորհրդաւոր պատկերին պէս» (1906, 11 սպտ.): Դրան Շ. Միսաքյանն առարկում էր հիմնավոր փաստարկներով. «Վարդապետը դրամ դողդեր է. պէտք չէ հրատարակել. քահանան զազրելի չարագործութեան մէջ գլորիլ է, պէտք է լռել: Եպիսկոպոսը տմարդի ընթացքներու մէջ տրորվիր է՝ ծածկելու է» (Ն. տ.): Հետևաբար, պետք է անդիջում բացահայտել հոգևորականության թերությունները՝ նրան ուղղելու համար: Այս բանավեճի յուրօրինակ եզրափակումն է Արաքսյա Նավասարդյանի «Մտածումներ» հոդվածը, որտեղ հեղինակը եկեղեցական հոդի կազմակերպության արատները վերագրում է ամբողջ հասարակությանը: Դպրոց է կառուցվում՝ առանց մտավոր նախապատրաստության, որբանոց՝ առանց բարեսիրական ոգու, եկեղեցի՝ առանց բարոյական պատվանդանի: Դրան նա հակադրում է կարնեգիի հիմնադրամը, եվրոպական բարեգործների մարդասիրական առաքինությունը:

Արժեքավոր են գավառական կյանքի, նրա ժողովրդի բարոյականության, կենցաղի ու սովորույթների ծալքերին հետամուտ՝ «Սուրհանդակի» ազգագրական բնույթի հոդվածները: Թերթը տպագրել է

Արևմտահայաստանի տարբեր շրջանների հայութեան (Սեբաստիա, Վան, Էրզրում և այլն) ավանդութիւններին, տարազին, արարողութիւններին նվիրված հետաքրքիր ազգագրական նյութեր: Մուտհոդ դաղթօջախներում ազգապահպանութեան խնդիրներով՝ «Սուրհանդակը» երբեմն անդրադարձել է Ռումինիայի, Ավստրիայի, Ամերիկայի հայութեան կյանքին: Հատկապես ուշադրութիւն է դարձրել Ամերիկա գաղթած հայերի տնտեսական, մտավոր ու կրթական իրողութիւններին, ղրաղմունքին, բարքերին և այլն: Ուշագրավ են ամերիկաբնակ հայերի կենցաղային թերութիւնների բացահայտումները՝ Խարբերդից, Սեբաստիայից, Դիարբեքիրից, Էրզրումից և Բաղեշից գաղթած հայերի մեջ: Թերթը նկարագծում է նոր մեկնած գաղթականների կյանքի ծանր ու դժվարին պայմանները անհարմարավետ կացարաններում՝ այսպես կոչված «դայինդրում»-ներում, որտեղ մի կերպ խցկված ապրում էին նախաառավածից բազմապատիկ թվով ավելի մարդիկ: Այս պայմանների ցուցադրումը ինքնանպատակ չէր, այլ արտահայտում էր թերթի ծայր աստիճանի բացասական վերաբերմունքը գաղթի նկատմամբ: Այս վերաբերմունքն է արտահայտում Գր. Համբիկյանը «Պանդխտութեան վնասները» հոդվածում, գաղթականների հրահրիչ մղում համարելով արկածախնդրութիւնը կամ մոլորված լինելը (1905, 11 հլս.): Գաղթավայրերում ապառնալիքի տակ է հայ մարդու և՛ ազգային, և՛ սոցիալական ապահովութիւնը. հիմնականում այս ոգով են ներկայացվում Ռումինիայի և Սուչավայի հայերը: Սուչավայի հայերը, նշում է թերթը, սրանից 20 տարի առաջ (1880-ականին) կազմում էին 400 տուն, իսկ այժմ մնացել են ընդամենը 20–30-ը: Նրանք ռումինախոս են և չնայած իրենց վանքերին ու եկեղեցիներին, չքանալու վրա են, իբրև ազգութիւն (1899, 20, 31 մրտ.): Համեմատաբար ընդարձակ տեղեկութիւններ են տրվում Բուլղարիայի՝ Բուրգասի, Ֆիլիպեի, Ռուսչուկի, Բազարջըքի և Սոֆիայի հայերի ազգային ու կրթական կյանքի մասին: Սոֆիայի հայերը, մասնավորապես, արդեն հասցրել են խորանալ թաղականի և քահանայի կռիվների մեջ. ուշագրավ է, որ թերթը զանազանում է գաղթա-

կանների խմբերը. Բագարջըքի հայերը (հիմնականում Ադրիանուպոլսից եկած) տաքարյուն են և հյուրասեր, Ռուսչուկի հայերի մեջ զգալի է հակադրությունը լուսամտության և խավարամտության միջև (1903, 13 նոյ.): Բոլոր դեպքերում ի հայտ է գալիս թերթի բացասական դիրքորոշումը դաղթականների ազգային ապադայի հանդեպ: Դաղթականությունը համարելով չարիք և գավառի ու քաղաքի տնտեսապես անապահով բնակչությանը՝ միշտ հակամետ գաղթելու, «Սուրհանդակի» հեղինակները, որպես հակամիջոց, առաջարկում են այդ անապահովության մեղմումը կրթության միջոցով: Դպրոցական արդիական ծրագրերը, ուսուցման գործնական ուղղվածությունը, նրանց կարծիքով, հնարավորություն կտար ժողովրդական խավերին՝ արհեստների ու մասնագիտական կարողությունների չնորհիվ հաղթահարել կյանքի դժվարությունները: Այս առթիվ Գ. Բարսեղյանը «Ուսանողական գիտությունները նոր ծրագիրին մեջ» հոդվածում քննադատում է Կ. Պոլսի ուսումնական խորհրդին, որը երկրորդական վարժարաններում անտեսել էր հանրահաշվի և երկրաչափության ուսուցումը՝ հետևելով հին դպրոցի լեզվագիտական կողմնորոշումներին (1906, 29 փետ.): Դպրոցական անպտուղ ուսուցման, կենսական պահանջմունքներից դպրոցի կտրվածության խնդիրն է չոչափվում թերթի այլ հրապարակումներում: Մի հոդվածում վարժարանների անօդուտ ծրագրերի վերանայումը համարվում է տարիներ ի վեր քաշկռտվող և չլուծվող հարց, չնայած իր առաջնահերթ նշանակությանը (1900, 28 հնս.): «Սուրհանդակը» մատնանշում էր դպրոցի վերակառուցման նյութական միջոցները՝ այդպիսիք համարելով նախ վանքերի անխնամ կալվածքները, որոնց խելամիտ մշակության դեպքում կարելի էր զգալի եկամուտներ ստանալ՝ դրանք տրամադրելով դպրոցներին ու որբանոցներին: Ս. Օտապաչյանի հետաքրքիր հոդվածում քննարկվում է վանական հողերի արդյունավետ օգտագործման խնդիրը. դրանք կամ տրվում են վարձով, կամ մարդիկ են վարձում մշակելու համար և կամ էլ տրվում են կիսարարության: Բոլոր երեք դեպքերում էլ վանքերը չէին եկա-

մուտ են ստանում, մինչդեռ իրենց՝ վանականների ձեռքով մշակելու դեպքում հնարավոր էր միջոցներ գոյացնել և ստեղծել երկրագործական ու կրոնակրթական վարժարաններ (Ն. տ.):

Կանանց կրթության և դաստիարակության բնագավառում «Սուրհանդակը» հանդես է բերել որոշակի պահպանողականություն. կնոջ գործունեության հիմնական ասպարեզն է համարվում ընտանիքը և վկայակոչվում է ֆրանսիական պահպանողական մամուլը, որը կնոջ ինտելեկտուալ հմտություններից, անային ծախսերը կարգավորողի դերից և մանկան դաստիարակությանն առնչվող սահմաններից այն կողմ չէր անցնում: Վերադառնալով հայ իրականությանը, թերթն իրավացիորեն նկատում է, որ գավառներում աղջիկները չատ հաճախ զուրկ են մնում անգամ տարրական կրթությունից: Այս առթիվ «Սուրհանդակը» դրվատում է Ամասիայում Իբրանոսյան եղբայրների բարեսիրական գործունեությունը: Իրենց առևտրական վարժարանին կից նրանք բաց էին արել իգական կանոնավոր վարժարան: Թերթն այս դեպքում առանձնացնում է նաև առհասարակ կրթական միջավայրի դերը. Ամասիայում այդ ժամանակ գործում էին հայ բողոքականների մանկապարտեզը, կաթոլիկների երկսեռ դպրոցները՝ 450 աշակերտներով (1903, 3 ապր.):

Կողմնակից լինելով կնոջ չափավոր, նաև՝ գործնական կրթությանը, թերթի աշխատակիցները ամերիկյանից նախընտրում էին եվրոպական զուսպ, ավանդական սկզբունքներն այս բնագավառում: Հռ. Արապյանն արտահայտում էր այս կողմնորոշումը, երբ քննադատում էր ամերիկյան ծայրահեղ ֆեմինիզմը. ամերիկացի կնոջ դաստիարակության նպատակն է դարձել հարստության ձեռքբերումը և զվարճասիրությունը, այստեղից՝ նրա եսասիրությունն ու թեթևամտությունը: Հեղինակը մտահոգվում էր հայ դպրոցի համար՝ չշլանալ ամեն մի օտարոտի փայլով և զգուշորեն օգտվել քաղաքակրթության բարիքներից (1903, 3 հկտ.): Ոչ գործնական ուսուցման դառը պտուղները «Սուրհանդակը» տեսնում էր բուն պոլսահայ իրականության մեջ: Հայ երիտասարդները մնում

են անպործ՝ տնղ չգտնելով պոլսահայ առևտրական հրապարակներում, գրասենյակներում և առհասարակ, վարչատնտեսական ծառայության մեջ: Ա. Քիթաչճյանը հանդիմանում էր հայ վաճառականներին, որոնք չնչին ամսականով չահագործում են ուսումնավարտ երիտասարդներին, չեն սովորեցնում նրանց առևտրի կանոնները՝ երկյուղելով հնարավոր մրցակցությունից (1900, 14 մրտ.): Մ. Ուղուրլյանը անգործության պատճառներից մեկն էր համարում հարմար աշխատանք չգտնելը (1900, 3 հկտ.): Իրականում «հարմար աշխատանքի» պակասը ոչ թե պատճառ էր, այլ հետևանք, խոսքն այստեղ վերաբերում էր ավելի շուտ նպատակահարմար կրթությանը, որ և նկատի ունի «Սուրհանդակը»: Իր մի խմբագրականում Զարմայրը դիպուկ նշում էր այս վերջինի կարևորությունը, արհեստների և արտադրության մեջ հայերի համար նշանակալի տեղ ապահովելու հեռանկարով. «Զարկ տալ դործնական գիտութիանց՝ մեր մէջ ծառայելուն, հրաժարիլ վերացական ուսումները աւանդելէ մեր դպրոցներուն և դանոնք ի վիճակի դնել ձեռքերնէն չհանելու երկրին արհեստական եւ ճարտարագործական ասպարէզները» (1900, 27 հնս.),- գրում է Թերթը: Առհասարակ, «Սուրհանդակի» էջերում նկատելի են սուր հարցադրումները պոլսահայ իրականության լուսաբանության մեջ, որ կարծեք, հակադրվում էր օսմանյան գրաքննության կողմից մամուլին պարտադրված իոհևմ և դուսպ վարքագծի պայմաններին: Այս սրությունը, ի դեպ, ոչ միշտ էր աւկա, որ և «Սուրհանդակը» վոխհատուցում էր ազգային ամենատարբեր ասպարեզների մասին հետաքրքիր լրատվությամբ, ընդամին, չթաքցնելով նաև անհիսական կարծիքն այս կամ այն երևույթի հանդեպ: Թերթը անդրադարձել է ս. Փրկչյան հիվանդանոցին, քննարկել նրա տեղեկագրերը, Խասգյուղի Գալֆայան որբանոցին, դրվատել «Տիկնանց խնամակալ ընկերության» բարեսիրական դործունեությունն այդ որբանոցում (1903, 22 հնվ.) և այլն: «Հիւանդանոցին վիճակը» հոդվածն արդեն ունի թերություններն ի ցույց դնելու անսքող ձգտում. այստեղ ժամանակի մամուլի համար ոչ այնքան հատկանշական սրությամբ լուցահայտ-

վում են ս. Փրկչյան Հիվանդանոցի հոդի մատակարարման հետևանքները, մերկացվում զեղծումները, թեև ոչ որոշակիորեն (1903, 24 մյս.): Այս բնույթի հրապարակումները երբեմն ուղեկցվում են բարոյախոսական խորհրդածություններով՝ հասարակական կարծիքը նախապատրաստելով քննադատական վերաբերմունքի՝ կոնկրետ երևույթի նկատմամբ: Այդպիսիք են Ա. Անտոնյանի «Աչնան վարդեր» կրքոտ հոդվածը կեղծ հեղինակություննների, սուտ բարեպաշտների ու կեղծ բարերարների հանրային վնասակարության ցուցադրումներով (1906, 3 մրտ.): Շարունակելով այս թեման, նա անցնում է սոցիալական որոշակի հարցադրումների. նրա «Դևղձեր» խմբագրականում տպավորիչ քննադատության են ենթարկվել նորելուկ հայ հարուստները՝ «հայ լայֆի» (բարձրաշխարհիկ հասարակության) չտես ձևքձևքումներով, «այդ կեղծ ու անգուրուշած ազնուականությունը»՝ իր բարոյական անամնջ ու ընչասիրական կոմնորոշումներով (1906, 10 մրտ.): Ի դեպ, Ա. Անտոնյանը «Յակոբիկ աղա» հրապարակախոսական ակնարկում պատկերել է բարձրաշխարհիկ ընչաքաղցի դիմանկարը՝ նաև զեղարվեստական իրադրության մեջ:

Օսմանյան կայսրությունում մանրապրանքային արտադրության քայքայման գործընթացը խորանում էր օտար կապիտալի ներխուժումով, գյուղատնտեսական արտադրության վաղեմի հիմքերի փլուզումով և քաղաքային արտադրության հումքային ճգնաժամով: Եթե դրան ավելացնենք հայ գավառի հողագրկման, գյուղացիության և ազգային հաստատությունների սեփականազրկման երևույթը, որն օրինականացվում էր քրդական բեյերի և թուրքական իշխանությունների օգտին, ապա ուրվագծելի կդառնա այն, որ օսմանյան պետությունը (անկախ երիտթուրքերի իշխանության գալուց), 1900-ական թթ. սկզբներին նախապատրաստում էր հայերի ցեղասպանությունը՝ բնաշխարհում նրանց դանգվածային սեփականազրկման միջոցով: Հայ գյուղը և քաղաքային մանրումիջակ արտադրողներին անանկացնելու այս վայրենի խրախճանքին մասնակցում էին հայազգի տարբեր ազամաչափերի վաշխառուներ-

րը, բախտախնդիրներն ու ապազգայնացած անձինք՝ ծախելով ամեն ինչ և գնելով այն ամենը, որ հնարավոր էր՝ խառնակ ժամանակներից որևէ օգուտ պոկելու մոլուցքով: Կ. Պոլսում հայտնվեց նորելուկ հարուստների՝ «հայ լայֆ»-ին պատկանող հայերի մի ամբողջ խավ՝ իր խորին արհամարհանքով դեպի ազգն ու նրա կարիքները և դրան համարժեք թրքամոլ կեցվածքով: Շարունակելով այս նորահայտ խավի քննադատությունը, որին, ի դեպ, հաճախ էին դիմում ժամանակի պոլսահայ գրողներն ու հրապարակախոսները, Ա. Անտոնյանը գրում է. «Սա կնճռ, չարաւուռ, դաւիչտական հայ լայֆը... որ երեկուայ ապխտավաճառներէն, երեկուայ խուրտաւաթճիներէն (մանրավաճառներ – Ա. Խ.) կազմուած է» և որոնք «հարստացած եւ ջոջի կարգ անցած են ազգապատկան կալուածներ ու դրամներ իւրացնելով, որբերու և այրիներու իրաւունքը կուլ տալով, մանած կամ քէրէսթէ (փայտ – Ա. Խ.) ծախելով, խաղի մէջ դողնալով, վաշխառութեամբ եւ կամ խարդախ անանկութիւններ սարքելով» (1906, 28 ապր.): Նույն կերպ, իր «Միմոսին օրագիրը» երգիծական դործում Ե. Թոլայանը դիպուկ վրձնահարվածներով ամբողջացնում էր «հայ լայֆի» հերոսների հանրային վնասակարությունը, թուրքերենի տակ ճզմված սրանց գռեհիկ լեզուն և այլասերված ներաշխարհը (1906, 27 ապր.): Ե. Թոլայանը այս մարդկանց երգիծում էր քանիցս՝ հայտնաբերելով նրանց արատավոր նորանոր ծալքերը[1]:

«Սուրհանդակի» գեղարվեստական գրականությունը զարդացնում էին ժամանակի գրական հրապարակում հայտնի դեմքեր՝ Լ. Շաթրյանը, Ե. Գոլանճյանը, Ա. Անտոնյանը և ուրիշներ: Նրանք հիմնականում ստեղծագործում էին արձակի՝ նովելային ժանրի ասպարեզում՝ կրելով ժամանակի ֆրանսիական գրական ազդեցությունը: Նովելները (Մ. Ուզուրլյան, Լ. Շաթրյան և այլք) սիրո հենքի վրա արված բարոյահոգեբանական վերլուծություններ են, հա-

[1] Այս խավի սոցիալական նկարագիրը 1900-1914 թթ. իր ողջ բազմազանությամբ, ի դեպ, երգիծական դիպուկ գնահատականի է արժանացել նաև արևմտահայ մամուլում հանդես եկած Հ. Ալփիարի և Վ. Փափազյանի հրապարակումներում:

ճախ՝ սննդիմինտալ և վերացական տրամադրություններով, որ քիչ են առնչվում հայ մարդու իրական նկարագրին ու կացությանը: Բացառություն են կազմում, թերևս, Ա. Անտոնյանի նորավեպերը, ինչպես «Անունին նուէրը», «Յակոբիկ աղա» պոծերը, որտեղ դգացվում է միջավայրը առարկայացնող իրական անհատի դեմքը, նրա անհատականությունն ու նկարագիրը: Վերջին նովելում կենդանի գծերով հանդես է գալիս փող դիզելու տենչով բռնված «հայ լայֆի» այն հերոսը, որին այնքան դիպուկ ճաղկում էր Ա. Անտոնյանն իր հրապարակախոսական հոդվածներում:

«Սուրհանդակում» տպագրվել են Թլկատինցու «Ֆաղքցիի նամակները» խորագրով ակնարկները, Մերսեուսի (Ա. Անտոնյան) «Հին մարդիկ, հին բարքեր» վիպակը՝ հայ կյանքն ու իրականությունը ցուցադրող պատկերներով:

Բավական հետաքրքիր է «Սուրհանդակի» երգիծական դրականությունը: Երգիծաթերթ չլինելով հանդերձ, «Սուրհանդակը» անվիճելի ներդրում ունի 20-րդ դ. առաջին տասնամյակների հայ երգիծական դրականության զարգացման մեջ: Ուշադրավ են Թերթի անդրադարձները Հ. Պարոնյանին, որը «Սուրհանդակի» արդարացի գնահատմամբ, մնում է հայ երգիծանքի խոշորագույն դեմքն ու ուսուցիչը: Հ. Պարոնյանի հիշատակին Թերթը տպագրեց «Յակոբ Պարոնեան (երգիծաբան-դրագէտ)» հոդվածը Զ. ստորագրությամբ. կենսագրական համառոտ պատումում հայտնվում է, որ Պարոնյանը աշխատակցել է «Մանզումեի էֆքյար» և «Ճերիաեի չարդիյե» հայատառ թուրքերեն թերթերին (1900, 27 մյս.): Ինքը՝ «Սուրհանդակը», տալիս է Հ. Պարոնյանի՝ հանրությանը քիչ ծանոթ կամ ոչ ծանոթ գործերը տպագրելու օրինակները՝ ընթերցողին հրամցնելով նրա «Այգիներու հարցաքննութիւնը» (գրված 1886 թ.) ֆելիետոնը (1900, 30 մյս.), իսկ դրանից քիչ առաջ՝ «Ուսումնական խորհուրդէ յանձնարարուած դասագիրքեր» (գրված 1884 թ.) ֆելիետոնը (1900, 27 մյս.): Այստեղ Պարոնյանը ծաղրում է ազգային ուսումնական խորհրդին, որն առանց որևէ սկզբունքի կամ պատկերացման, դպրոցական միօրինակ դասագրքեր հաստատելու

փոխարեն, կանաչ ճանապարհ էր տվել մեկ տասնյակի չափ դասագրքերի՝ քառս ստեղծելով կարգուկանոնի փոխարեն: Ոչ մի հեղինակ մերժում չի ստանում, «Աստուծոյ համար Ուսումնական խորհուրդնիս աղեկ է, ամէնն ալ բարեսիրտ մարդիկ են, մեկու գէշութիւն չեն ըներ» (ն. տ.),- հեգնում է Հ. Պարոնյանը:

Նույն՝ «Մոռցուած էջեր» խորագրի տակ տպագրված «Այգինորու հարցաքննութիւնը» ֆելիետոնին կցած համառոտ ծանոթագրության մեջ խմբագիրը նշում է, որ Պարոնյանի այս մոռացված էջը «բացարձակ այժմէութիւն է» (1900, 30 մյս.): Այստեղ ևս Պարոնյանը ծաղրում է դպրոցների բարձիթողի վիճակը, դրանցում տիրող անամիջ ուսումնական մեթոդներն ու անգիտությունը: Շատ տպավորիչ է ֆելիետոնի սկիզբը. «Եւ որովհետեւ քանի մը տարիներէ յետէ ազգային վարժարանաց հարցաքննութեան հանդէսներն հունձքերու կը նմանեցնեն ազգային յոդուածագիրներն, պատշաճ համարեցինք եւ մենք այգեկութիւը հարցաքննութեան նմանեցնել:

Դպրոցակութիւքէն յետոյ այգեկութիւը» (ն. տ.):

Հ. Պարոնյանն անգերազանցելի է մնում դպրոցների տված կեղծ լեզվագիտությունը, աղքատամտությունը փքուն և չողչողուն դարձվածներով ներկայացնելու՝ ուսումնական այրերի ջանքերը մերկացնելիս: Ահա պարոնյանական սրամիտ հրկիզոսության մի նմուշ այդ թեմայով: Վաճառականը հարցնում է երիտասարդին, որին իր մոտ աշխատանքի է ընդունելու.

- Տղաս, ֆրանսերէն գիտե՞ս:

- Այո, տէր, ֆրանսերէն գրականութիւն ալ գիտեմ:

- Երկու տող նամակ մ'ունիմ գրելու Մարսիլիա, կրնա՞ք գրել ֆրանսերէն:

- Ոչ, բայց կրնամ հարիւր տող բերնուց ըսել ձեզ Վիքթոր Հիւկոյի «Էռնանի»-էն կամ Մոլիերի «Միզանթրոր»-էն (ն. տ.):

«Սուրհանդակը» տպագրել է Պարոնյանի «Քաղաքավարութեան վնասները»՝ 1903 թ. հունվար-փետրվար ամիսներին, հատվածներ «Այլակերպութիւն բառարանի»-ից, միշտ նկատի առնելով, որ մեծ երգիծաբանի ստեղծագործությունները չեն կորցրել իրենց

այժմեականությունը: Հետաքրքիր է Հ. Պարոնյանի «Բերովբէ ազատին պատյալը» «Սուրհանդակի» 1906 թ. մայիս-հունիսի թվահամարներում, որտեղ երգիծաբանը իրական գծերով ցույց է տալիս օժիտով ամուսնության դրամատիկ հետևանքները քաղքենի կնոջ համար՝ ամուսնությունից երկք տասնամյակ անցնելուց հետո էլ:

«Սուրհանդակը» տպագրել է Կավռոչի երգիծապատումները ու ֆելիետոնները: Հաղթահարելով ժամանակի երգիծանքի մի ընդհանուր թերությունը՝ աննկուղայնությունը (որը միշտ և ամեն տեղ իրենով է լցնում մեծ երգիծանքի պարապ մնացած տեղը), և թեև սրամիտ, բայց ինքնաբուխ, կարճ օրվա համար ստեղծված հումորը, Ե. Թոլայանը կարողացել է ստեղծել ընդհանրացումների երգիծանք: Հաջողված են նրա «Խօսքը մէջերնիս», «Երկու երկու ալ հինդ», և այլ երգիծապատումները, իրրև պոլսահայ բարքերի, մտավորականության, կենցաղի ծիծաղելի կողմերի երգիծական բացահայտումներ (1903, 5 մրտ., 5 ապր., 1904, 10 հնվ.):

Թարգմանական գրականության բնագավառում «Սուրհանդակն» առավելապես կողմնորոշվում է դեպի ժամանակի ֆրանսիական արձակը: Թերթն ուներ «Փարիզյան քրոնիկ» բաժինը, որտեղ թարմ լրատվություն էր տալիս ֆրանսիական արվեստի ու գրականության նորույթների վերաբերյալ: «Սուրհանդակը» տպագրել է ֆրանսիական ակադեմիայի անդամ Գ. Բառնիի, Լ. Նորվենսի, Հ. Ֆորժեի, Բ. Դըլաննի, Ք. Մոկլեի, Հ. դը Ռինիեի և այլոց արձակ ու չափածո ստեղծագործությունները: Անգլիագիր գրականությունից նա ընթերցողին ծանոթացրել է Ռ. Ստիվենսոնի, Հ. Ուելսի, Մարկ Տվենի, Ա. Կոնան Դոյլի, Օ. Շրայներրի և այլ հեղինակների պատմվածքներին ու վեպերին՝ մշտապես հակվելով դեպի լուրջ, գեղագիտական ու հասարակական արժեք ունեցող գրականությունը: «Սուրհանդակը» մերժում էր դեկադանսը և նորօրյա ծայրահեղությունները ու ավանգարդը: Այս առումով ուշագրավ է Ա. Անտոնյանի «Անկապաչտ գրագէտը» հաջողված հոդվածը՝ հասցեագրված պոլսեցի հայ դեկադենտներին: Անտոնյանը ծաղրում է սրանց պոզիայի ոճի ու ձևի ինքնանպատակ ծայրահեղությու-

նները (1905, 5 նոյ.): Այստեղ տրված է նմանակողների բավական հաջողված ծաղրանկարը:

«Սուրհանդակը» աշխուժորեն մասնակցել է ժամանակի գրական կյանքին, հարստացրել այդ կյանքը իր կարող և տաղանդավոր գրիչների շնորհիվ, այլև վերլուծաբար գնահատել այն: Թերթը պաշտպանում էր իրապաշտական ուղղությունը գրականության մեջ: Նրա էջերում դեռևս լսելի են տակավին 1880-ական թթ. արևմտահայ մամուլում տարածված՝ գավառական գրականության հիմնավորման առաջադրումները: Նրա հեղինակները ևս գավառական գրականություն հասկացությունը նույնացնում են իրապաշտական գրականության հետ: Զարմայրը իր «Գրականութենան ապակղրոնացում» հոդվածում ֆրանսիական գրականության օրինակով պաշտպանում է գավառական կյանքի գեղարվեստական պատկերման անհրաժեշտությունը, ցույց տալով, որ հայ իրականության համար ևս հասունացել է այդ պահանջմունքը (1900, 24 օգ.): Խորասուզվելով բանավիճային կրքերի մեջ, Զարմայրը գավառի՝ «վաղուան գրականութիւնը» ամբողջովին հակադրում է «աւելի քան կէս դարու պոլսահայ գրականութենան արտադրած տխեղծ» գրականությանը՝ անգիտանալով դրա կարևոր նշանակությունը հինգ նույն այդ «գավառական» հորջորջվող գրականության հայտնության համար[1]: Զարմայրը այս վերջինը պատկերացնում է իբրև իրապաշտական մոտեցման ամբողջություն, որին հատուկ են լինելու միջավայրի, հանրային ու տնտեսական իրականության բացահայտումը և պատկերումը: Այս ուղղության գրականությունը հիմնավորվում է նաև Հոփփսիմեի «Իրապաշտութիւնը եւ կին տիպարները» հոդվածում (1903, 26 հլս.): Բալզակի և Զոլայի կանանց կերպարներում նա առանձնացնում է այս հեղինակներին ընդհանուր՝ հոգեբանական վերլուծությունը: Սակայն, ըստ նրա, բուն այդ հոգեբանություն կրողներն իրենք տարբեր են,

[1] Լ. Սնապականյանը XX դարասկզբի մամուլում պոլսահայ նախընթաց գրականությունը մերժող այսպիսի մտայնությունը իրավացիորեն համարում է «անարդարացի ու միակողմանի», այլև գավառն ու Կ. Պոլիսը միմյանց հակադրող անպտուղ գաղափար՝ հայ գրականության զարգացման ուղիների շուրջ մղվող բանավեճի ծայրահեղ դրսևորում (տես Սնապականյան Լ., Հոդվածներ, ուսումնասիրություններ, էջ 17, 25):

նեն Բալշակի կանայք համակերպվող են, ապա Զոլայի երկերում ընդվզող: Հովիսիմեն ընդգծում է, որ նրանք երկուսն էլ գրում են իրենց «ժամանակներու փիլիսոփայութեան սկզբունքներու» համեմատ, առանց «վերացականութեան, մտածմանց չափազանցութեան»՝ գրականության զարգացումը խարսխելով մտավոր մշակույթի զարգացմանը:

«Սուրհանդակը» ազդիական հոդևրանության, միջավայրի ու մտածողության ցուցադրումը անհրաժեշտություն է համարում գրական ընթացիկ կյանքում: Շ. Միսաքյանը այս տեսակետից էլ պաշտպանում էր Հ. Ալիշարին, նրա ստեղծագործությունը մեծահարուստ Թավշանճյանի հարձակումներից: Նա պաշտպանում է ոչ միայն «իզմիրյան քրոնիկագրին», այլև Զոլայի, Զոհրապի, Միրբոյի գրականությունը՝ ելնելով իր ժամանակի սահմանումներից, որովհետև «անոնք կնոջ վրայ խօսած են, «բաց» գրած են, կեանքը նկատած են այնպէս, ինչպէս որ է՝ առանց ապուշ քողարկումներու, առանց ցաւագար վերապահումներու» (1906, 19 մյս.):

Իրապաշտական գրական ուղեգիծը «Սուրհանդակը» դուգակցում էր գրական ընթացիկ առօրյան լուսաբանող հրապարակումներով: Հետաքրքրական է Զ. Եսայանի ստեղծագործության վերաբերյալ Ա. Անտոնյանի և Զիֆթե-Սարաֆի բանավեճը՝ կիրճ և սկզբունքային, որտեղ դրսևորվել են նրանց ընկալումները և պատկերացումները գրական ազդեցության, դրա սահմանների և այլնի մասին (1906, 21, 26 ապր.): Առավել բևեռացված բանավիճային հոդված է գրել Գ. Բարսեղյանը Արտ. Հարությունյանի պոեզիայի գնահատականի շուրջ: Առարկելով Մ. Պարսամյանին, այս հեղինակը կտրուկ հակադրվում է բանաստեղծական այն ուղղությանը, որը միջակա տեղ էր գրավում դեկադանսի և մյուս կողմից, գավառական գրականության միջև՝ դործառելով ոճի արհեստական դեղնցկության, «եթերային ու ժանեկային» սիրո ներշնչումների չափումներում: Գ. Բարսեղյանը իրավացիորեն եզրակացնում է, որ Մ. Պարսամյանը չի նկատել Արտ. Հարությունյանի ստեղծագործության գյուղական գեղեցկությունները, հոգի աշխատավորի նուրբ

զգացումները: Հետագայում ևս Մ. Պարսամյանին և նրա գրչակից-ներին բնութագրելիս, գրականագետ Ա. Շարուրյանը դիպուկ նկա-տում էր, որ նրանք ամփոփվել էին սեփական ես-ի մեջ և «քիչ բա-ցառություններով երգում էին միայն մերժված սիրո վիշտը»[1]:

1900-ական թթ. «Սուրհանդակում», առաջիններից մեկը, արև-մտահայ մամուլում հայտնվում է նորույթ հետաքրքրությունը թուրքական ժամանակակից գրականության հանդեպ: Եթե 19-րդ դ. Թուրքիայում հրատարակվող հայ մամուլը ամբողջովին կամ գրե-թե ամբողջովին անտարբեր էր թուրքական գրականության նկատ-մամբ՝ (եթե չհաշվենք 1880-ական թթ. «Արևելք» թերթի թուրքիկ անդրադարձումները) սրա արխայիկ, հիմնականում կրոնական ու ավանդական բովանդակության պատճառով, ապա 20-րդ դարի սկզբին այս պատկերը փոխվում է: Թվում է, 1890-ականին հայերի կոտորածները, Աբդուլ Համիդի սանձազերծած ճնշումների ու հա-լածանքների չարունակական քաղաքականությունը ոչ միայն հա-կան ժողովուրդների, այդ թվում հայերի հանդեպ, թուրքական շո-վինիզմի անընդհատ պոռթկումները հպատակ ժողովուրդների ինքնության դեմ, այս ամենը էլ ավելի պետք է խորացնեին սեպը արևմտահայ և օսմանյան մշակութային շփումների ու կողմնորո-շումների միջև: Իրականում, գոնե հայ մամուլի վերաբերմամբ, նկատելի է նաև հակառակ երևույթը, կարծում ենք, հետևյալ պատ-ճառներով: Նախ, 1890-ականի վերջերից հայ մամուլի նպատակնե-րի ու բովանդակության մեջ կատարվող լուրջ տեղաշարժերը՝ ինք-նաքննության, շրջապատը մոտիկից ճանաչելու, Արևմտահայաս-տանի հայ բնակչության ու նրա դրացիների կյանքն ուսումնասի-րելու, նրա իրական կացության խնդիրները լուսաբանելու հետամ-տող ուղղությունը հայ մտավորականության մեջ: Միջավայրի ճա-նաչողության պահանջը, մասնավորապես, ենթադրում է այդ մի-ջավայրը կազմող մի այնպիսի բնութագրական գործոնի ճանաչո-ղությունը, ինչպիսին էր թուրքական մշակույթի և հասարակական

---

[1] Շարուրյան Ա., Սիսաք Մեծարենց, էջ 61:

մտքի դիտարկումը: Եթե հարյուրամյակներ շարունակ հայ միտքը և ստեղծագործական ոգին նպաստել էին օսմանյան մշակույթին (արհեստագործություն, դրամատուրգիա, թատրոն, ճարտարապետություն)՝ առանց հետաքննելու ընդունող մշակույթի բովանդակությունը կամ արժեքները, ապա 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբներին ինքնաճանաչողության ձգտումը տանում-հասցնում էր սեփական չրջանակներից դուրս գալու, օսմանյան իրականությունը բազմակողմանիորեն հետազոտելու՝ հայ մամուլի և լրագրության միտումը:

Կար նաև մյուս, առաջինից բխող երկրորդ պատճառը, որ հետաքրքրում էր հայ մտավորականությանը, մասնավորապես, իրապաշտական ուղղության հետևորդներին, որը անտարբեր չէր կարող լինել թուրք գրականության մեջ այդ ուղղության առկայծումներին, որոնք ի հայտ էին գալիս դարձյալ վերը նշված ժամանակաշրջանում: Նկատի ունենք «Սերվեթ-ի ֆյունուն» ամսագիրը Թեվֆիք Ֆիքրեթի խմբագրության տարիներին, որը քննադատական դիրք էր բռնել օսմանյան հետամնաց հասարակության և թունդ կղերամտության դեմ՝ նպաստելով թուրքական գրականության արդիականացման ձգտումներին[1]: «Սուրհանդակի» խմբագիրներից Զարմայրը ուշադրություն էր հրավիրում վերոհիշյալ ամսագրի շուրջ խմբված թուրք գրողների՝ Խալիդ Զիյայի, Հյուսեին Րահմիի, Ահմեդ Ռեսիմի և այլոց ստեղծագործական նոր ուղղությանը (1903, 30 հնվ.): Այս գրողները գերազանցապես հակվում էին դեպի ֆրանսիական գրականությունը՝ թարգմանելով Մոպասանի, Բուրժեի, Զոլայի, Դոդեի և այլոց գործերը, ուսումնասիրություններ գրում ֆրանսիական հեղինակների երկերի մասին: Ս. Թապագյանը իր «Թուրք գրականութենէն» հոդվածում ուշադրավ փորձ է անում բացահայտելու արաբական և պարսկական սրճեվայի՝ թուրքական սրճեվայի վրա թողած ազդեցությունները (1903, 25 մրտ.): Մասնավորապես, Ս. Թապագյանը նկատում է թուրք գրա-

[1] Желтяков А. Д., Печать в общественно-политической и культурной жизни Турции. с. 230.

կանութեան նորօրեայ տեղաշարժերը՝ ազատագրվելու Պ. Լոթիի և Մ. Պրեվոյի «ննթակայական գրականութենից» (նկատի ունի ռոմանտիկներին) և պատկերելու թուրքական հասարակութեան կեանքն ու բարքերը: Վերջին հանգամանքը, իրոք, չփման կետեր էր ստեղծում թուրքական գրականութեան և «Սուրհանդակի» հեղինակների գրական ըմբռնումների միջև: Սակայն այսպիսի չփումները եղրագծերից այն կողմ չանցան, համենայն դեպս, թուրք գրականութիւնը երկար ժամանակ չէր կարող մնալ հայ մամուլի հետաքրքրութիւնների ոլորտներում: Թուրք գրողների ճնշող մեծամասնութիւնը հպատակ ժողովուրդներից և նրանց մշակոյթից բաժանված էր պանիսլամիզմի և պանթուրքիզմի գաղափարախոսական խորխորատներով, սեփական ցեղի, կրոնի և նոյնիսկ մշակոյթի գերազանցութեան վաղեմի ընկալումների կաղապարներով: Այդ կաղապարները, մինչդեռ, ամբողջովին անընդունելի էին իրավաղրկութեան և խտրականութեան կարդախոսները մերժող ոչ մի այլ հայ, այլև կայսրութեան մյուս ոչ մահմեդական հպատակների համար: Երկու մշակոյթների հանդիպակաց ընթացքը պետք է խոտորվեր պանթուրքիզմի խրոխտանալուն համապատասխան չափերով, և կասեցնելու էր հետագա մերձեցումները:

«Սուրհանդակի» հեղինակները բավական հոգածութեամբ չաբունակել են հայ մամուլի նախասիրած թեմաներից մեկը՝ հայ թատրոնի թեման: Արդի ընթերցողին կարող են հետաքրքրել նրանց տեսակետները թատրոնի, որպես արվեստի լուսավորական և բարոյակրթիչ բնագավառի մասին, սակայն, թերևս, առավել կարևոր են հայ թատրոնի պատմութեանը վերաբերող հրապարակումները: Այդպիսին են հայ թատերական գործիչների՝ Մ. Մնակյանի, Ս. Թղլյանի, Ս. Հնքիմյանի և մյուսների կենսագրական դրվագները ներկայացնող նյութերը: Հպանցիկ, բայց տպավորիչ գծերով են պատկերվում Պ. Մաղաքյանը, Պ. Ադամյանը, Սիրանույշը, Հրաչյան, Պիննեմենճյանը և նրանց ժամանակակից դերասաններն ու թատերական գործիչները (1900, 10 օգ., 1903, 28 փետ.): Ուշագրավ են Ենովք Արմենի «Սիրանույշ» և Գր. Զոհրապի

«Սիրանոյշ և Կոթիկ» հոդվածները (1906, 29 մյս., 5 հնս.): Գր. Զոհրապը, մասնավորապես, ընդգծում էր դերասանուհու տազանդը՝ «կանքի ու սրտի պարտուղուքիւննները» մեկնարանելու ապարեզում, այդ համարիլով թատրոնի բուն կոչումը:

Արվեստի և արվեստի գործչի հանդեպ հասարակության անշնորհակալ վերաբերմունքը «Սուրհանդակը» պատապարտում էր նաև դերասան Ջավրաստի (Ջավրաստեանի) նյութական ծանր վիճակի բացահայտումներով: Ա. Անտոնյանի «Կնանք և միտք» հոդվածում, դրա հետ միասին, բարձր է գնահատվում այդ դերասանի արվեստը (1906, 1 սպտ.):

«Սուրհանդակը» դադարեց 1908 թ., հայ հրապարակախոսության ու լրագրության զարգացման լուրջ ադդակներ տալով հենց համիդյան բռնապետության ծանր տարիներին: Եվ զարմյալ, հայ ազատամիտ լրագրությանը միայն հատուկ պարադոքսով, դադարելով գրեթե նույն ժամանակ, երբ իր պատմության վերջին էջն էր փակում նույն այդ բռնակալությունը:

«ՄԱՆԶՈՒՄԵԻ ԷՖՔՅԱՐ» (1866–1913)[1]

Կ. Փանոսյանի հանրահայտ թերթը դարասկզբին ևս պահպանում էր իր ազատամիտ ուղղությունը: 1901 թ. այն հրատարակվում էր իբրև «օրաթերթի առավոտյան»: Թերթի տեր և տնօրենն էր Հովհ. Գայսերյանը: Հրատարակվում էր հայերեն և հայատառ թուրքերեն (1902 թվականից՝ հիմնականում հայերեն): 1896–1909 թթ. «Մանզումեի էֆքյարը» խմբագրել են Մ. Գոչունյանը, Ե. Տեր-Անդրեասյանը և Հ. Տեր-Հակոբյանը[2]: Նկատի առնելով համիդյան բռնակալության ներքո հայ մամուլի կաշկանդված վիճակը և լրագրական բարքերի անկումը, «Մանզումեի էֆքյարը» 1901 թ. խոստանում էր առաջադրել «լաւ եւ ողջամիտ սկզբունքներով վիճաբանութիւն՝ քննութեան ենթարկելով քարոզել... աղնուացնելու համար ժողովուրդին հոռի բարքերը, դէշ սովորութիւնները եւ բարձրացնել զայն իր բարոյական անկումներէն» (1901, 24 ապր.):

---

[1] Հայ մամուլի մատենագետները անճշտություններ են թույլ տվել «Մանզումեի էֆքյարի» հրատարակության հարցում: Գ. Լևոնյանը նշում է 1866-1917 թթ., Ա. Կիրակոսյանը՝ 1866-1919-ը, Մ. Բաբլոյանը՝ 1901-1909 և 1912-1917-ը (տե՛ս Հայոց պարբերական մամուլը, էջ 151: Հայ պարբերական մամուլի մատենագիտություն, էջ 132: Հայ պարբերական մամուլը, էջ 55): Իրականում թերթը լույս է տեսել 1866-1913 թթ., ՀՀ Ազգային գրադարանում պահպանվել է դրա հրատարակության առաջին տարվա՝ 1866 թ. հավաքածուն, իսկ դադարի տարին 1913 թ. հունիսն է և ահա թե ինչու. «Մանզումեի էֆքյարը», ինչպես և Մ. Գոչունյանի «Ժամանակը», տպագրել էր վարչապետ Սահմուդ Շևկեթին սպանողների մահապատիժը պատկերող լուսանկարը (որ արգելվում էր օրենքով): «Ժամանակի» արտոնատեր Ս. Գոչունյանը վճարում է տուգանքի գումարը՝ 500 ոսկի և վերստին իրավունք ստանում հրատարակել իր թերթը «Ժամանակ» անվամբ: «Մանզումեի էֆքյարի» տնօրինությունը, սակայն, չի կարողանում հայթայթել անհրաժեշտ փողը և փակվում է ընդմիշտ (տե՛ս Ազատյան Թ., «Ժամանակ» բառաւումնասէաց յիշատակարան 1908-1948, էջ 153, 157): Թեոդիկը ևս, ինչպես նշել ենք իր տեղում, առաջին աշխարհամարտի տարիներին Կ. Պոլսում հրատարակվող հայկական չորս թերթերի մեջ «Մանզումեի էֆքյար»-ը չի հիշում (տե՛ս Թեոդիկ, Ամէնուն տարեցոյցը, Կ. Պոլիս, 1920, էջ 271): Այստեղ դիտարկվում է թերթի 1901-1909 թթ. շրջանը:

[2] Թեոդիկ, Տիպ ու տառ, Կ. Պոլիս, էջ 118: Թ. Ազատյանը վերջին երկուսին չի հիշում խմբագիրների պաշտոնում և 1901-1908 թթ., որպես այդպիսին, համարում է միայն Քասիմին (տե՛ս Ազատյան Թ., նշվ. աշխ., էջ 76-77): Մինչև թերթի փակվելը (կարելի է կարծել՝ 1910-1913 թթ.) այն հրատարակվել է Սմբատ Բյուրատի և Ա. Անտոնյանի «յաջորդական խմբագրապետութեամբ» (տե՛ս նաև Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 118):

«Մանզումեի էֆքյարը» աչքի էր ընկնում լրատվական հարուստ բովանդակությամբ և քննարկած հարցերի լայն շառավղով՝ Կ. Պոլսի և Արևմտահայաստանի ազգային կյանք, տնտեսություն, նկարեցի, դպրոց, գրականություն, արվեստ և այլն: Թերթին աշխատակցում էին ճանաչված հրապարակախոսներ և գրողներ Ա. Անտոնյանը, Ե. Տեմիրճիպաշյանը, Թեոդիկը, Հրանտ Ասատուրը, Ե. Տեր-Անդրեասյանը, Հ. Գաղանճյանը, Ե. Թոլայանը և ուրիշներ: Այն առանձնանում էր քննադատական որոշ նպատակասլացվածությամբ, միջին խավերի տնտեսական ու մտավոր բարոյական դրության հանդեպ իր հետաքրքրություններով ու մտահոգությամբ: Այս հակվածությունը առավել քան ցայտուն դրսևորումներ ստացավ 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո, երբ թերթը տպավորիչ նյութեր տպագրեց հայ պատասում ծանրացող օսմանյան բռնակալության, քրդական վայրագությունների, երկրում առկա հետադիմական երևույթների վերաբերյալ:

Դարասկզբի «Մանզումեի էֆքյարը» իր հավատարմությունն էր հայտնում Կ. Փանոսյանի՝ այդ թերթի հիմնադրի և առաջին խմբագրի ավանդույթներին, երբ նախընտրում էր «լաւ եւ ողջամիտ սկզբունքներով վիճաբանութիւնը», լուսաբանում այնպիսի երևույթներ, որոնք հետամուտ են ազգի բարքերի և բարոյականության մաքրությանը:

Աբդուլ Համիդի դրաքննության պայմաններում թերթը չէր կարող քննության առարկա դարձնել Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքականության որևէ խնդիր, սակայն վերոհիշյալ սկզբունքները կիրառում էր հայ հասարակական շերտերի բարոյախոսական քննադատության ձևով, ինչը բավական տարածված երևույթ էր ժամանակի արևմտահայ մամուլում: Նրա քննարկումները հիմնականում պտտվում են դպրոցների, թաղական խորհուրդների, քահանաների ու պատրիարքարանի գործունեության շրջանակներում: Կան նաև ավելի լայն մտահոգման դրսևորումներ՝ թերթը մատնացույց էր անում հայ վաճառականության դիզելու տենչը, մեկուսանալը ազգային պահանջմունքներից, ինչպես և

բարեգործական ձեռնարկումներից: «Մանղումեի էֆքյարի» քննադատությանը միս և արյուն են տալիս նրա գավառական թղթակցությունները: «Պրուսայի առաջնորդը» հոդվածում «Թղթակից» ստորագրողը դատապարտում է և՛ առաջնորդի, և՛ թաղական խորհրդի վերաբերմունքը տեղի հայության եկեղեցական ու դպրոցական գործերի հանդեպ, որ անչարժության է մատնել Պրուսայի դրեթե մեկ տասնյակի չափ թեմերը (1901, 4 փետ.): Արևմտահայաստանի տնտեսական անմխիթար վիճակը չակելու համար թերթն ակնկալում էր ոչ միայն վաճառականության ապագասիրությունը, այլև գործնական քայլեր՝ գավառներում ստեղծելու «ապահովագրական սնտուկներ», որ նյութապես կսատարեր հողագործի աշխատանքը: Թերթի հեղինակներից Ա. Գալփակճյանը նկատում է, որ հենց վաճառականության ամրապնդումն ու եկամտաբերությունը կախված է գյուղատնտեսության զարգացման մակարդակից, ուստի և գավառին օգնելիս վաճառականությունը գործում է նաև հօդուտ սեփական բարեկեցության (1906, 27 հնս., 26 սպտ.): Նա աչքաթող չի անում նաև հայ վաճառականության սուբյեկտիվ բնույթի թերությունները, արևելյան ծուլությունն ու ճակատագրապաշտությունը, դրան հակազդելով ցանկալի որակներ, ինչպիսիք են աշխատասիրությունը, չափավորությունն ու ուղղամտությունը: Մյուս կողմից թերթը նկատում էր հայ առևտրական կապիտալը արտադրության ոլորտ տեղափոխելու ժամանակի պահանջները: Այս տեսակետից հետաքրքիր է Հ. Բագրատունու «Դրամատեարց դէմ բողոք» հոդվածը (1906, 10 սպտ.): Նա պնդում է, որ համեմատած արտադրության հետ, առևտուրը չնչին շահույթ է բերում (20–25 տոկոս՝ արդյունաբերականի 70–75 տոկոսի դիմաց): Այս հեղինակը քննադատում է նաև հայ դրամատերերի անվճռականությունն ու անհետևողականությունը հենց արտադրության ասպարեզում: Երիզայի լուցկու և Շիշլիի գուլպայի գործարանները (երկուսի տերերն էլ հայերը) փակվել են մասնագետների պակասի պատճառով: Առավել պնահատելով այս թեմայի լուսաբանումը, թերթը հանգամանորեն նկարագրում է Պրուսայի 1906 թ. արդյու-

նաբերական ցուցահանդեսը՝ առանձնացնելով Մանիսայի բրդեղենի արտադրությունը, իրավացիորեն ցույց տալով երկրում արհեստագործական արտադրության հետամնացությունը և այլն:

Իր մի շարք այլ հրապարակումներում «Մանզումեն» կշտամբում էր աղգային դրամատերերին հենց այն պատճառով, որ նրանք անտեսում են գյուղատնտեսական արտադրության համար գերազանց բնակլիմայական պայմանները, իսկ եթե փորձում են դործել, ապա հետամնաց արտադրության դործիքներով ու մեթոդներով: Թերթը վկայակոչում էր օտարների դործունեությունը Թուրքիայում, որոնք «ծխախոտի մշակութեան մենաշնորհը մեր ձեռքէն խլելով՝ մեծ հաջողություններ են հասել (1906, 26 սպտ.): Հայերի գյուղատնտեսական արտադրությանն անդրադառնալիս թերթը հետաքրքիր տվյալներ է բերում Զմյուռնիայի կից չրջանների այգեդործության վերաբերյալ: Սալիհլիից հիշվում են «նշանավոր այգեգործ» Կ. Երկանյանը, չամիչի աչքի ընկնող վաճառականներից՝ Էյմասյան եղբայրները, Սիմոնյանը և այլք (1906, 27 սպտ.): «Հարստութեան անսպառ աղբիւր մը Թիւրքիոյ մէջ» խմբագրականում «Մանզումեն» առաջ է քաշում չերամաբուծության՝ արտաքին առևտրի ոլորտ մտնելու նպաստավոր պայմանները: Ծրանսիական մետաքսագործական արտադրության մեջ զգացվում է տեղական հումքի պակասը և դրա համեմատ՝ ներմուծվող հումքի պահանջարկի աճը: Բերվում են նաև վիճակագրական տվյալներ՝ Թուրքիայից մետաքսի հումքի արտահանումը ընդլայնելու վերաբերյալ (1907, 20 փետ.): Այս, ինչպես և այլ հրապարակումներով թերթը ակտիվ դործունեության էր մղում հայ արտադրողներին:

Արտադրությունից ոչ պակաս չափով «Մանզումեն»-ին մտահոգում էր Արևմտահայաստանում և Թուրքիայի խոշոր քաղաքներում հայ արհեստավորների տնտեսական վիճակի հիմնահարցը: Արհեստագործությունը նույնպես ոչ եկամտաբեր է դարձել իր հետամնացության և հնամենի արտադրողականության պատճառով, որ հաստատում է Հ. Ինկիլիդյանը իր մի հրապարակման մեջ (1901, 26 մյս.): Ելնելով հողագործության, արհեստների և վաճառակա-

նուիրյան տնտեսական փոխկապվածութիւնից, այս հեղինակը սրանց զարգացումը հիմքից իսկ սկսելու նպատակով առաջարկում է տնտեսական գիտելիքների ուսուցումը սկսել դպրոցներից: «Յոյները ինչու կը յաջողին» խմբագրականում լուսաբանվում է այն իրողութիւնը, որ հայ արհեստավորները տեղական չուկայում իսկ անմրցունակ են հույն արհեստակիցների առջև: Իրենք՝ հայ սպառողները դերադասում են հույն արհեստավորների ավելի որակյալ արտադրանքը, որի պատճառներից է հայերի հետամնաց, իր դարն ապրած դործնեականը (1901, 9 հլս.): Հավանաբար, արդեն ոչ թուլլ առևտրի կամ արտադրութեան ոչ նշանակալի ծավալների, այլ դավառական կյանքի անշարժութեան և հետամնացութեան հետ էր կապում թերթը այն իրողութիւնը, որ հայ հարուստներն անտարբեր են ազգային խնդիրների, բարեգործութեան նկատմամբ: Մի հեղինակ, նկատի առնելով Սամսոնի, Տրապիզոնի, Մերսինի, Ադանայի, Կոնիայի հայ բազմաթիվ վաճառականներին, և թերևս, խտացնելով գույները, գրում է. «Եվ ասոնցմէ օր մը, օր մը լսա՞ծ ևք, որ տասը փարա տայ նպաստից յանձնաժողովին կամ ոևէ աղքատասիրական ձեռնարկի համար» (1902, 30 սպտ.):

«Մանդումե»-ում արտացոլվել է հին էսնաֆական կարգուկանոնի փլուզման և դրա հետևանքով որոշ արհեստների մեջ խորացող ճղնաժամի ու այլասերման երևույթը արևմտահայ գավառում: Այս առումով հետաքրքիր է վանում ոսկերչութեան և փորագրութեան որակի անկումը. աշակերտները, առանց խորանալու մասնագիտական հմտութիւնների մեջ, և՛ մեկ, և՛ մյուս բնագավառներում սկսել են ինքնուրույն գործել՝ «հակառակ առնաֆական օրէնքների»: Թերուս աշակերտ փորագրիչները իրենց անորակ արդյունքները անարգել վաճառում են ոսկերիչներին, շատ ավելի էժան, քան փորագրիչ վարպետները և տխուր հետևանքն իրեն զդացնել է տալիս այս երկու արհեստներում միաժամանակ (1902, 2 սպտ.): Թերթի հեղինակներից մեկը հայ արհեստավորների ոչ նկամտաբեր աշխատանքի պատճառներից մեկն է համարում առհասարակ Թուրքիայի տնտեսութեան հետամնացութիւնը: «Կոչկա-

կարութիւնը եւ կաշեգործութիւնը» խմբագրականում արժանին է հատուցվում հայ կոշկակարի հմտութիւններին, որոնց չնորհիվ նա կարող է մրցակցել օտարների հետ, սակայն ամբողջ երկրում չկան արտադրական կարողութիւններ՝ ո՛չ կաշեգործարաններ, ո՛չ էլ կոշիկի գործարաններ: Այս հեղինակը ևս կոշկագործության զարգացման հնարավորութիւնները կապում է գյուղատնտեսական արտադրութիւնների նորացման հետ (1907, 6 մրտ.):

«Մանզումեի էֆքյարը» համեմատաբար քիչ է լուսաբանել Արևմտահայաստանի սոցիալական իրականութիւնը: Գավառների վերաբերյալ նյութերը հիմնականում տեղագրական, մասամբ ազգագրական բնույթ ունեն և առհասարակ, հետամտում են ընդհանուր ճանաչողական նպատակներ: Առանձին հրապարակումներ նվիրված են կրթական և եկեղեցական խնդիրներին: Վերջին դեպքում թերթը ուշադրութիւն է դարձնում մանավորապես առաջնորդների գործունեութեանը, որից ակնկալում էր ժողովրդի կյանքի բարելավմանը ուղղված քայլեր: Նույնպիսի նշանակութիւն ունի Գ. Աշըգյանի «Թօզատ. հնաղիւտական, տեղագրական, հանքային և ընդհանուր արտադրութեան տեսակէտով» հոդվածը (1906, 10 ապր.): Այստեղ թերթը ընթերցողին է ներկայացնում տեղի բնական հարստութիւնները՝ ածուխ, երկաթ, պղինձ, ծծումբ, նկարագրում դրանց արդյունահանումը, նկատելով այն տեսանկյունից, որ ընդերքի չհագործմանը պետք է ձեռնամուխ լինեն իրենք՝ հայ դրամատերերը, եթե ձգտում կունենան բարելավելու և՛ իրենց, և՛ ազգակիցների տնտեսական դրութիւնը: «Մանզումեն» ևս արձագանքել է Արևմտահայաստանի հայ բնակչութեան բարքերի, բարոյականութեան, կենցաղի ու հոգեբանութեան լուսաբանման այն երևույթին, որ տարածված մտայնութիւն էր ժամանակի արևմտահայ մամուլում: Թերթն անդրադառնում է հայ գավառական ընտանիքին, դրանում կնոջ ունեցած դերակատարութեանը: Գյուղական բարքերի պատկերման առումով ուշադրավ է նրա քննադատական կեցվածքը կենցաղային հոռի երևույթների նկատմամբ: Ա. Սարգսյանի «Կնիկ ծեծող վնց տարեկան փեսաներ» հոդ-

վածում ցույց են տրվում անչափահաս երեխաներին տնտեսական նկատառումներով ամուսնացնելու սխալ երևույթները գավառական կյանքում (1907, 11 փետ.): Հաճախ, նկատում է հեղինակը, աղջիկներին ամուսնացնում են պարտքի դիմաց (հատուցելով աշխատող ձևոքով)՝ առանց հաշվի նստելու նրանց ցանկության հետ: Այս դեպքում ևս, բարքերի առողջացման, ազգային խախտված ավանդույթներին վերադառնալու և գավառական կյանքում քաղաքակիրթ արժեքներ ներմուծելու հարցում թերթը հույս էր դնում հարուստ ազգակիցների նյութական օգնության վրա, սակայն ոչ սակավ դեպքերում չէր թաքցնում իր հիասթափությունը նրանց անտարբերությունից: «Հարուստ քսակ, աղքատ սիրտ» խմբագրականում ծանակվում են եսամոլ ու անափառ, ազդին ոչ մի օգուտ չտվող մնծահարուստները: «Մանզումե»-ն առաջ էր քաշում մամուլի միջոցով սրանց հանդեպ բացասական հասարակական կարծիք ստեղծելու խնդիրը, խախտելու այդ անձանց այն պատկերացումը, թե իբր, հասարակական կարծիքը բացառիկ հարգանք ունի իրենց հանդեպ. «Սակայն ոչ այնչափ իրենցն է յանցանքը, որչափ այս կարգի սխմարութիւնները քաջալերողներուն»,- կարծում է Թերթը:

Հասարակական համապատասխան կարծիք ստեղծելու նույն ձգտումով Թերթն իր էջերում տեղ է տվել ընտանիքում և հասարակության մեջ հայ կնոջ տեղի և նրա գործունեության շրջանակներին առնչվող՝ կնոջ ազատագրության խնդիրներին: Վերջին հարցում ծայրահեղություններին դեմ հանդես եկավ Ի. Էքսերճյանը «Ան չէ՝ ֆէմինիզմը» հոդվածով (1906, 20 փետ.): Ֆեմինիզմը ոչ թե կնոջ անսահման ազատություն է ենթադրում, գրում է նա, այլ նրա մտավոր ու բարոյական խելամիտ դաստիարակությունը՝ կնոջ ազնիվ ձիրքերն ընտանիքում զարգացնելու, տղամարդուն հավասար իրավունքներով ու պարտականություններով օժտելու իմաստով: ԵՒյս հեղինակը նկատի ունի նաև կնոջ հասարակական գործունեությունը, երբ առաջ է քաշում նրան ազգայինի հետ եվրոպական դաստիարակություն տալու մտայնությունը: Նույն գաղա-

վարն է պաշտպանում նաև Զապել Ասատուրը իր «Անկեղծ ֆէմինիզմը» տրամախոսության մեջ, նշելով, որ հայ կնոջն անհարիր են ֆեմինիզմի ծայրահեղությունները. մինչդեռ, կինը պետք է ազատվի հնամենի կաշկանդումներից, ընտանիքում օգուվի փոխադարձ վստահության և սիրո հնարավորություններից (1906, 3 ապր.): Ս. Ակնունին իր հերթին, առաջադրում էր կնոջ կրթության և արհեստագիտական հմտությունների հիմնահարցը: Առանց դրա դրական լուծման, հատկապես աշխատավորական ընտանիքում, կինը չի կարող լինել լիարժեք անդամ (1907, 19 մրտ.): Քաղաքի բարեկեցիկ կանանց նկատի ունի Հ. Տեր-Հակոբյանը, երբ նկատում է նրանց խուսափելն ընտանեկան պարտականություններից և հակումը դեպի թեթև կյանքը: Դրությունը փրկելու միակ միջոցը նա համարում է «հզօր եւ գիտակից դաստիարակութիւնը»՝ եվրոպական առաջավոր մանկավարժության սկզբունքներով (1908, 26 մրտ.): Վերնախավի կանանց նկատմամբ «Մանզումն»-ի քննադատական կեցվածքն էր դրսևորում Գ. Թուղլաճյանը՝ փրանսիական արձակագրուհի Ժիրի ստեղծագործությունը գնահատելիս: Ժիրը ծաղրում էր ազնվապետական ընտանիքների կանանց, նրանց բարքերը, սովորույթները և հավակնությունները: Այս պատճառով, կարծում է հեղինակը, նրա երկերը չատ ժողովրդականություն ունեն Ֆրանսիայում և նույնիսկ հասարակ ժողովուրդը հաճույքով է ընթերցում դրանք (1908, 25 մրտ.):

Հայ աղջիկների, ինչպես և տղաների կրթության գործում «Մանզումն»-ն կարևորում է գործնական ուսուցման հիմնահարցը: Այս տեսակետից ուշագրավ է հոդվածների այն շարքը, որ տպագրեց Թերթը Կ. Պոլսի Կեդրոնական վարժարանի կրթական համակարգի վերաբերյալ: 1900-ականի սկզբներից Թերթը բացահայտում էր այդ վարժարանի ծրագրի թերությունները, դրա ոչ գործնական ու հետամնաց բնույթը: Մի հեղինակ արտահայտում է այս մոտեցումը, երբ առաջարկում է բանասիրականին գուգահեռ վարժարանին տալ մասնագիտական-առևտրական թեքում, ընդամին, այդ անհրաժեշտ համարելով նաև թաղային կրթարանների համար:

վարժարանը վերակառուցելու նպատակով նա առաջարկում էր փոխել նրա ոչ իրագիտ խնամակալ խորհուրդը, անձեռնհաս ուսուցիչներին հեռացնել և ուսուցումը հանձնել օտարազգի մասնագետներին (1902, 23 օգ.):

Նույն կերպ էր մտահոգում կեդրոնականի մասնագիտացման հարցին Հ. Հակոբյանը՝ առաջարկելով նախապես փոխել նրա ծրագիրն ու կանոնադրությունը: Այս հեղինակը մտահոգված էր աշխատավորական խավերի երեխաների սոցիալական հեռանկարներով. «Օտար, գոնէ մէկ լեզուի մը անսխալ տիրապետութիւն, առեւտրական կեանքի, տոմարակալութեան, վաճառականութեան եւ մատէմաթիքի չէնք չնորհք կարողութիւն մը, որպէսզի կարողանան մտնել ոեւէ վարչական հաստատութեան մէջ»,- գրում է նա (1902, 24 հլս.):

Սանասարյան վարժարանը ևս քննադատական լուսաբանումներ է գտել թերթի նյութերում: Ե. Անդրեասյանը իր «Օրուան խնդիրները» խմբագրականում նկատում է, որ նրա տեսուչները շեղվել են բարերարի մանկավարժական ու հասարակական նպատակներից և վատնում են վարժարանի միջոցները: Այս վարժարանի տեսուչներին նա հակադրում է Ռ. Պերպերյանին, որը թեև չունի առաջինի միջոցները, բայց իր անձնվեր ու լայնախոհ գործունեությամբ լուրջ գործ է արել դավառների համար ուսուցիչներ պատրաստելու ասպարեզում (1906, 18 մայ):

Մի շարք հեղինակներ արժեքավորում են դպրոցներում ոչ միայն գործնական, այլև բարոյական դաստիարակության նշանակությունը: Ուշադրություն է գրավում Արամ Անտոնյանի «Նկարագրի դաստիարակ մը» հոդվածը: Արևմտահայ դպրոցի խոշոր թերությունը նա համարում է անհատի բարոյական նկարագրի ձևավորման անտեսումը: Ընդհակառակն, իր ուսուցման եղանակով, կարգուկանոնով և ուսուցչական մեթոդներով դպրոցն անում է ամեն ինչ՝ այդ անտեսումը շարունակելու համար, հոռետեսական եզրակացության է հանգում Ա. Անտոնյանը (1902, 14 նոյ.):

Ազգային դպրոցների ուսումնակրթական վիճակի բարելավման նույն մտահոգությունն է առկա «Մանզումե»-ի այն հրապարակումներում, որտեղ լուսաբանվում է Զմյուռնիայի Ս. Մեսրոպյան և Ս. Հռիփսիմյան վարժարանների կացությունը: Երեմնի կրթական փայլուն որակներով և համազգային նշանակությամբ աչքի ընկնող այս վարժարանները տասնամյակներ շարունակ հետ են մնում հույներից, զիջում են նրանց նախակրթարաններին և «Էվանգելիքի» բարձրագույն դպրոցին: Հակառակ հայ վարժարանների, հույների՝ նշված դպրոցի վկայականը ընդունելի էր Անգլիայում և Ֆրանսիայում, այն աչքի էր ընկնում իր գործնական ուսուցմամբ՝ պատրաստելով գրագիրներ, հաշվապահներ, արհեստավորներ (1902, 26 օգ.): Նույն թղթակիցը ցույց էր տալիս, որ Զմյուռնիայի հայ դպրոցների հետամնացության պատճառը նյութական միջոցների պակասն է: Եթե երեսուն տարի առաջ դրանց վրա ծախսվում էր 1300 ոսկի, ապա այժմ 800 (դույլ վարժարանները միասին ունեին 394 աշակերտ՝ 12 ուսուցչով): Նա առաջարկում է դպրոցներին տրամադրել տարևկան ևս 3–4 հարյուր ոսկի և վերածել գործնական թեքումով ուսումնարանների (1902, 29 օգ.):

Զմյուռնիայի հայ համայնքի հանդեպ «Մանզումե»-ն ի հայտ է բերում քննադատական մոտեցում՝ նկատելով, որ տեղի հայերը անհոգ են դարձել ազգային կարիքների հանդեպ: Նրանք իրենց հիվանդանոցի, խեղճուկրակ դպրոցի և եկեղեցու պարտքի խնդիրներով են զբաղեցնում մամուլը, չանելով և ոչ մի «աղքատասիրական գործ», հայտնում է թերթը (1902, 30 սպտ.): Նույն ոգով Հ. Տեր-Հակոբյանը բացահայտում էր Զմյուռնիայի հայերի Ս. Լուսավորչյան հիվանդանոցի բարձիթողի վիճակը, բժիշկների անփութությունն ու անտարբերությունը, որին նոր երանգներ է ավելացնում Ստ. Երկանյանը՝ իր «Իզմիրի կյանքէն» հոդվածում (1902, 7 հկտ.):

Թերթի հետաքրքրությունը զմյուռնահայերի հանդեպ՝ պատահական չէր. նրա խմբագրապետ Մ. Գոչունյանը լավ գիտեր այդ համայնքի իրականությունը: Համենայն դեպս, «Մանզումե»-ի

քննադատական նկատմամբ զմյուռնահայ վարժարանների մասին՝ նպաստելով դրանց վերակառուցմանը: 1906 թ. Ս. Մեսրոպյանը վերածվեց գիշերօթիկի՝ հենվելով գործնական կրթության և արհեստագիտական ուսուցման վրա: Թերթը վկայում էր, որ նոր ծրագրի պահանջարկը այնքան է բարձրացել, որ վարժարանի տեսչությունը ստիպված էր եղել հայտնելու գիշերօթիկի սահմանափակ հնարավորությունների մասին (1906, 20 հկտ.): Այս իրազեկությամբ ևս կարելի է բացատրել այն, որ թերթը բավական լայն տեղեկատվություն է տվել զմյուռնահայերի տնտեսական ու մտավոր կյանքի խնդիրների վերաբերյալ:

1901 թ. ապրիլից հրատարակվելով «գրական և գիտական» ենթավերնագրերով, «Մանզումն»-ն զգալիորեն նպաստել է արևմտահայ գրական ու գրաքննադատական մտքի նոր հետաքրքրությունների: Քասիմի, Ա. Անտոնյանի, Թևոդիկի, Ռ. Պերպերյանի, Լ. Շաթրյանի, Հ. Դաղանճյանի և այլոց աշխատակցությունը թերթին տալիս էր մտավոր բարձր մակարդակ և հեղինակություն՝ ընթերցողների շրջանում: Նրա գրաքննադատների մի մասը պաշտպանում է իրապաշտ գրականության ավանդությունները, դրանց չարուսնակության մեջ տեսնում միջավայրի և մարդու ճշմարիտ պատկերման հնարավորությունները: Այստեղ տպագրվում են նաև ռոմանտիզմի պաշտպանները: Ուշագրավ է Ռ. Պերպերյանի «Ժամանակակից վէպն ի Ֆրանսա» հոդվածը, որտեղ նա ֆրանսիական իրապաշտական վեպի (Բալզակ, Ֆլոբեր, Զոլա) ճշմարտացիության ձգտումը գնահատելով հանդերձ, խոնարհվում էր ռոմանտիկների երազային աշխարհի առջև: Նա ինչ-որ տեղ բանավեճ է մղում իրապաշտության ջատագովների դեմ՝ նկատելով, որ ռոմանտիկ հեղինակը իր ընթերցողին «խլելով իր սովորական միջավայրէն ու դիւթական աշխարհի մը մէջ» փոխադրելով՝ ամենևին էլ չի ոչնչացնում իրականի զգացումը: «Ամէն առեն իրականը մասն եղած է արուեստին ու բնութեան ուսումնասիրութիւնը միշտ առաջին դպրոցը եղած է արուեստագիտաց: Ամենէն տեսլապաշտ (ռոմանտիկ — Ա. Խ.) հեղինակին քով մերթ ութպարներ կան ամենէն

խստապահանջ իրականութեամբը նկարագրուած, գոյներու ծայրահեղ բրտութեամբ մը յորինուած միջավայրի նկարագրութիւններ»,- գրում է նա (1902, 21 հկտ.):

Անշուշտ, քննադատը չի սխալվում, երբ ամեն մի արվեստի և գրական երկի հիմքում տեսնում է իրականությունը կամ դրա թելադրանքը: Սակայն իրապաշտությունը չէր սահմանափակվում սոսկ իրականի պատկերումով: Ռ. Պերպերյանն անդիտանում էր այդ իրականության և անհատի փոխազդեցության բարդ ու հակասական զարգացման ընթացքը, որի գեղարվեստական վերլուծությանն էին հետամտում իրապաշտական երկերը: Իրապաշտական վեպի սկզբունքներով է գնահատում Ե. Անդրեասյանը Մ. Գոչունյանի ստեղծագործությունը՝ «Քասիմ եւ իր վէպը» հոդվածում (1904, 1 փետ.): Վիպական ճկուն կառույցի միջոցով, նկատում է նա, գրողը ստեղծել է կենդանի միջավայրի պատկերը՝ ձգտելով բարվոքել հայ ընտանիքի բարոյական պատկերը: «Մանզումե»-ի հաջորդ թվերից մեկում էլ Տ. Ա. ստորագրողը (Հալանաբար, Տիգրան Արփիարյանը) արժեքավորում է միջավայրի գունեղ նկարագիրը, այլև դրա պարզ ու մատչելի մատուցումն ընթերցողին (1904, 8 փետ.): Ի տարբերություն եվրոպական ոճով գրված նորավեպերի, Քասիմը գրում է ժողովրդի միջին խավերի համար, եզրակացնում է այս հեղինակը, անտեսելով, սակայն, հայ դասական նորավեպի վարպետների (1880–1890-ական թթ.) մատչելիությունն ու կարևոր նշանակությունը ոչ միայն միջին խավերի, այլև ամբողջ ժողովրդի բարոյագեղագիտական ընկալումներն ընդլայնելու գործում: Քասիմի արձակ երկերը իրապաշտ գրական արժեքներին հակադրելը, մյուս կողմից, ցույց էր տալիս, որ «Մանզումե»-ի խմբագիրներն առարկություններ ունեն նորավեպի, հատկապես երգիծական նորավեպի դեմ: Այս տեսակետից հետաքրքիր է «Մանզումե»-ի հեղինակ Մ. Նալպանտյանի բանավեճը «Մասիսի» հետ՝ նորավեպի լուրջ բովանդակության, հանրությանը կրթելու հնարավորությունների շուրջ: Մ. Նալպանտյանը հարձակվում էր մասնավորապես Բրիզանթեմի (Հ. Ալիխար) երգիծական նորավեպերի վրա

և դույներ չխնայելով ընդգծում էր մամուլի անբարոյացնող ազդեցությունը ընթերցողի ներաշխարհում (1904, 8 հնս.): Պահպանողական այս հեղինակի դեմ հանդես եկան երկու օրիորդներ՝ Շուշանը («Սխալ ըմբռնումներ») և Շիղայը («Բարոյականը ուր փնտրելու է») (1904, 8, 27 հնս.): Նրանք թեև հանիրավի համահարթեցնում են Զոհրապի և Ալփիարի գործերը, սակայն համոզիչ են, երբ ցույց են տալիս Ալփիարի ստեղծագործության բարոյական արժեքը: Ինքը՝ խմբագիրը, համաձայն չէ այս հեղինակներին, որոնց առարկում է տողատակից. «Ահա երկրորդ մըն ալ... նորահաս օրիորդի մը կողմանէ ղրկուած է: Տեսնենք այս աւերիչ բարքերու ու թիւր համոզումներու հոսանքը ուր պէտք է առաջնորդէ զիրենք» (1904, 27 հնս.): Չնայած այս վերապահումներին, որ հիմնականում ուղղվում էին Ալփիարի՝ մտավորական ընթերցողին հասկանալի այս հեղինակի դեմ, «Մանզումե»-ն և նրա խմբագիրները պաշտպանում էին իրապաշտ գրական ուղղությունը: Արձագանքելով դավառի և պոլսական գրականության չուրջ մղվող բանավեճին, թերթը բարձր էր գնահատում Գր. Զոհրապի և Օ. Զիֆթեսարաֆի ստեղծագործությունները: «Մանզումե»-ն Ալփիարին և նրա հետևորդներին է հակադրում երիտասարդի մեծ վարպետի՝ Հ. Պարոնյանի ստեղծագործությունը: Դրա հետ մեկտեղ, արժեքավոր է նրա հրապարակումը՝ «Յակոբ Պարոնեան. քանի մը էջեր իր կեանքէն» վերնագրով (անստորագիր): Հեղինակը հետաքրքիր դիտողություններ է անում Հ. Պարոնյանի և նրա դաղափարական ու գրական նախորդի՝ Հ. Սվաճյանի ստեղծագործական առնչությունները բացահայտելու ուղղությամբ. «Ուրէմն, Պարոնեանը միակը եղաւ,- գրում է նա,- որ Սվաճեանի բացած դպրոցը չարունակեց եւ իր նիւթերը առնելով ուղղակի ժողովուրդի կեանքէն» (1904, 11 հնս.):

Ուշագրավ են նաև այս հեղինակի դիտարկումները, որ նա անում է համեմատելով Հ. Պարոնյանի՝ տաղանդով անհամեմատ «ստորին» երգիծաբան ժամանակակիցների և նրա միջև: Զուգահեռ հրատարակվող՝ Գ. Այվազյանի «Մամուլը» ձևքից ձևք էր հափշ-

տակվում, իսկ Պարոնյանի «Թատրոնը» դժվարությամբ էր իրացվում՝ «շատ քիչեր կղգային անոր գրչին բարձրությունը»: Հեղինակը նկատում է, որ դրա պատճառը Պարոնյանի անկախ դիրքն էր, նրա սկզբունքայնությունը և ուղղամտությունը: Հակառակ մյուս երգիծաթերթերի, «Թատրոնը» լրագրավաճառներին տրվում էր կանխիկ՝ Պարոնյանն ապրում էր առանց բարերարի, ընթացիկ վաճառքով: Մինչդեռ, նրա ճարպիկ մրցակիցները իրենց հրատարակությունները հանձնում էին ապառիկ վաճառքի՝ մամուլին դժկամությամբ վող հատկացնող պոլսահայ բազմաշերտ ու տարակարծիք հանրության մեջ: Այս էր պատճառը, նշում է հեղինակը, որ «Թատրոնը» տպվում էր 200 օրինակ, «Մամուլը»՝ 2.000 և անգամ ավելի: Հետաքրքիր է նաև Պարոնյանի մրցակիցների ակածախնդրական գործնականերպի բացահայտումը. «Տարեկան մը բաժանորդ գրուէ, որպէսզի սա յոդուածը չգրեմ քեզի», կրակին պ. խմբագիրները, բան մը, որ Պարոնեան իր կեանքին մէջ չըրաւ երբէք» (1901, 13 Հնս.):

Հրապարակման մեջ կան Պարոնյանի կենսագրական հետաքրքիր և դրեթե անհայտ բացահայտումները, ինչպես այն, որ նա աշխատակցել է «Մանզումեի էֆքյար»-ին և «Ճերիտեի չարդիյե»-ին՝ տպագրելով իր երգիծական ստեղծագործությունները (1901, 24 Հնս.): Պակաս հետաքրքիր չէ Ե. Տեմիրճիպաշյանի այն տեղեկությունը, որ 1883 թ. խմբագրելով «Երկրագունտը», Պարոնյանը «տարաբաղատաբար, ոչինչ հրատարակեց «Երկրագունտի» մէջ» (ն. տ.): Հ. Պարոնյանի և Մ. Մամուրյանի մասին ուշագրավ նկատումներ ունի «Մանզումեի էֆքյարի» խմբագիր Քասիմը: «Մամուրեան կը խօսէր սեղանին վրայ չարունակ ջինջ ջուրին մաքրութեան վրայ դմայլելով, իսկ Պարոնեան, որ «խիկարէն» դատելով պէտք էր դվարթ եւ զբօսեցուցիչ ընկերութիւն մը ուննար, ընդհակառակն, աւելի կ'ունկնդրէր, քան թէ կը խօսեր՝ չմոռնալով արագ-արագ լեցնել գինին»,- գրում է նա (1901, 4 Հկտ.):

«Մանզումեն»-ի գլխական քաղաքականության մեջ արժեքավոր սեւեռք է համարել նրա բացասական դիրքորոշումը դեկադանսի

ծայրահեղությունների հանդեպ: Պոլսահայ նորելուկ գրողների մի մասը հրապուրված էր իրականությունից կտրված, դեկադանսի խորհրդավոր ու տարապայման աշխարհի գայթակղություններով՝ ամենից առաջ տուրք տալով եվրոպական նորաձևությանը, քան գաղափարական ու ստեղծագործական անկեղծ մղումներին: Բռնազբոսիկ այդ գրականության քննադատության մեջ թերթն արձանագրում էր դասական, ազգային գրականության անգիտացումը, մեկուսացումն այդ գրականության ավանդույթներից: Ե. Անդրիասյանը «Դասական գրականութիւնը եւ անոր անմիջական առնչութիւնը կենդանի գրականութեան հետ» հոդվածում վերհանում էր դեկադանսի անշնորհք հայ հետևորդների ձևապաշտությունը լեզվական տեսակետից, հակումը չինծու բառերի և նույնքան չինծու իմաստների նկատմամբ (1906, 23 մրտ.): Նույն, ինչպես և Զոլայի անստաղանդ հետևորդների գրական ճարակները կանխելու մտահոգությամբ, «Մանզումա»-ն թարգմանաբար տպագրեց Հ. Սենկևիչի «Էմիլ Զոլա եւ իր «Տոքդոր Բասքալը» հոդվածը՝ ուղղված ֆրանսիական սիմվոլիզմի հայտնի դեմքեր Բուրժեի, Դեժարդենի, Ռեմբոյի և Մալարմեի «Հոռետեսական և ամուլ» գրականության դեմ (1902, 13-14 հկտ.): Ակներևաբար, թերթը հախուռն բացասումով համահարթեցնում էր սիմվոլիզմը և դեկադանսը, ոչ մի դրական արժեք չտեսնելով դրանց մեջ:

Դասական գրականության ավանդույթների չարունակականության մեջ՝ վերհանելով ուշագրավ զուգահեռներ և սրանց միջոցով՝ այս բանաստեղծների նմանությունները ու տարբերությունները (1908, 9 հլս.): Ազգային գրականության նոր որակներ է հայտնաբերում Ռ. Զարդարյանը Միամանթոյի պոեզիայում՝ այն համարելով «յայտնութեան մարգարէութիւն, որ կը բարձրանայ կատարածներու, նախճիրներու ծոցէն և ուրքի կը հանէ գետնամած տկարութիւնները՝ տալփողելով ոյժին վիառքը...» (1908, 1 օգ.):

Ազգային ճշմարիտ արժեքների ժողովրդականացման ուղեգիծը «Մանզումա»-ն չարունակում էր նաև հայ արվեստին տված իր

դնահատումներում: Հ. Տեր-Հակոբյանը բացահայտում էր հայ ճարտարապետների, քանդակագործների, նրաժիշտների ձիրքը՝ նկատելով նաև նրանց մեկուսացածությունը ազգայինից, սրված հակումները դեպի համաշխարհային ուղղությունները: Նա նրաժիշտներին ու նկարիչներին առաջարկում է «իրենց երկերուն նուազ օտար եւ աւելի տոհմիկ, տեղական գոյն մը տալ» (1904, 4 փետ.): Այս հեղինակը իրավացիորեն նկատում է, որ սրա պատճառներից մեկը հայկական միջավայրի անտարբերությունն է ազգային արվեստի ու արվեստագետների հանդեպ: Նա առանձնացնում է Սիմոն Հակոբյանին, որն անտեսված է ազգի կողմից և Բերայում մի լուսանկարչատան մեջ «եկեղեցական նկարներ գծելով կը սպառէ ժամանակը», մինչդեռ նրա արվեստը այնքան բարձր է դնահատվել Փարիզի դժվարահաճ սալոններում: Շրջապատի նուազնպիսի անտարբերությունն է վերհանում Թեոդիկը՝ Սիրանույշի մնծ տաղանդը գնահատելիս (1906, 9 հնս.): Հասարակական անտարբերությունն է պատճառը, կարծում է Թիրթիը, որ թշվառության մեջ են ընկել թատերական գործիչ Ռ. Սետեֆճյանը, հայտնի դերասան Զափրաստը: «Կ'ուզէք ծափահարուիլ եւ օրին մէկը անօթի մնանիլ: Արուեստագէտ եղէք»,- կարծում է Թերթի հեղինակներից մեկը (1907, 31 հնվ.): Ի դեպ, «Մանզումեն»-ն տպագրեց Զաւրաստի «Իմ կեանքս. թէ ով եմ ես» ընդարձակ կենսագրականը, որը հարուստ տեղեկություններ է պարունակում ժամանակի հայ թատրոնի ու նրա գործիչների՝ Մ. Մնակյանի, Պ. Մաղաքյանի, Ստ. Էքչյանի, Թ. Ֆասուլյաճյանի, Պենլյանի, Սիրանույշի, Դ. Թրյանցի և այլոց մասին (1907, 19 փետ.): «Մանզումեն»-ն ընթերցողին ծանոթացնում էր նաև հայ տաղանդավոր այլ արվեստագետների, որպիսին էր ճարտարապետ Հովսեփ Էմինը: Նրան նվիրված մահախոսականում նշվում է, որ կատարելագործվել է իտալական ճարտարապետական բարձրագույն վարժարաններում, նրա նախագծերով են կառուցվել Ռևժիի (ծխախոտի ընկերություն Թուրքիայում) շենքերը Ռումելիում, Սալոնիկում, Սամսոնում, Տրապիզոնում և այլուր, Պեպեքի ծովեղերյա ապարանքը, Հալքիի խոխլական ապարանքը, Ֆենների

բուլղարական եկեղեցին, Սկյուտլի (թաղամաս Կ. Պոլսում, Սկոպլեի թուրքական անվանումը), օսմանյան բանկի շենքը (1908, 13 հնս.): Նույնպիսի արժեք ունի Ա. Անտոնյանի «Ասուլիաներ, արուեստագէտի մը մահը» հոդվածը, որ նվիրված է գիպսի դրվագող Կարապետ Ճեպայիրլյանին (1902, 24 նոյ.): Այսպիսի նյութերը թերթը տպագրում էր գլխավորապես արվեստագետների մահվան առթիվ և դրեթե միշտ՝ հանդիմանելով անտարբեր հասարակությանը: Հավանաբար, թերթի մտահոգություններն այս հարցում շատ ավելի լայն արձագանքներ կունենային, եթե արվեստագետների թշվառությունը քննարկման առարկա դարձներ նրանց կենդանության ժամանակ: Թեև որոշ իմաստով «Մանզումա»-ն ևս միանում էր «գնա մեռիր, արի սիրեմ» ավանդական հանկերգի քննադատությանը:

Թերթի ինքնուրույն դրականության մեջ կարելի է առանձնացնել նրա երգիծանքը: Այս ժանրով գրում էին Ե. Թոլայանը, Գր. Թորոսյանը և Վարազը:[1] Ե. Թոլայանի թեմատիկ հակումների մեջ զգալի է Հ. Պարոնյանի ազդեցությունը: Թոլայանը հիմնականում ծաղրում է քաղաքի միջակ խավերի՝ արհեստավորների, գրագիրների, խմբագիրների, քահանաների, ուսուցիչների հոգեբանության ու գործնակերպի ստվերոտ կողմերը: Նրա երգիծական ակնարկները, զրույցներն ու քրոնիկները, այսուհանդերձ, աչքի են ընկնում այս խավերի հանդեպ սոցիալական համակրանքով: Անշուշտ, համիդյան դրաքննությունը արմատախիլ էր արել քաղաքական երգիծանքը Թուրքիայում հրատարակվող մամուլում: Բայց Ե. Թոլայանի կենցաղային երգիծանքն իսկ չի թափանցում նույն այդ կենցաղի խորքերը, դրան պակասում են լուրջ ընդհանրացումները: «Բերացի պարոնի մը օրագիրը», «Ըսի ըսաւ» և «Համմէ» խորագրերով իր նյութերում (1904–1908 թթ.) Ե. Թոլայանը ծաղրում է հաշվենկատ ամուսնությունը, ընտանեկան անկյալ բարքերը, որոնց

[1] «Վարազ» ծածկանունով մամուլում հանդես են եկել Շ. Միսաքյանը և Վ. Թեքեյանը (Հովակիմյան Բ., Հայոց ծածկանունների բառարան, Ե., 2005, էջ 327): Դժվարանում ենք կռահել, թե նրանցից ով էր թաքնված այս ծածկանվան ներքո:

մեջ նվաստանում են բարոյական բարձր զգացումներն ու մարդկանց արժանապատվությունը: Երգիծարանի դրչի տակ, այնուամենայնիվ, ի հայտ են գալիս ձևախեղվող հասարակական հարաբերությունները, դրանց արտացոլումը մարդկանց վարքագծի ու հոգեբանության մեջ: Արհեստավորները առնչվում համաձայն են հաճախորդի քմահաճ դիտողություններին, բայց մազաչափ անգամ չեն փոխում իրենց աշխատանքի արդյունքը: Կանանց աներևակայելի չռայլության դեմ պոռթկացող, բայց անզոր ամուսիններն, աղջիկներին ամեն դնով պսակել տենչացող մայրեր և այլն, այս ամենը ձգվում են դեռևս Հ. Պարոնյանի ժամանակներից, բայց Թոլայանը բարքերի այս անկումը ներկայացնում է ժամանակակից տեսքով, ձևավորմամբ ու մտածողությամբ, որ արդիական է դարձնում նրա երգիծանքը: Քաղքենի ընտանիքների աղջիկները ևս հույժ ժամանակակից են, նրանք Պոլ դը Կոկ են կարդում և ծխում հայրերից թաքցրած ծխախոտները, սլարահանդեսներն ամուլ են՝ աղջիկներն օժիտ չունեն և փեսացուները ստիպված են բավարարվել անպատուղ սիրահետումներով: Ժամանակակից այս երանդներն են, որ դրավում էին ընթերցողին և պայմանավորում Թոլայանի երգիծանքի ընդունելությունը պոլսահայ միջավայրում:

Ժանրային տեսակետից ուշադրավ են Կ. Ություճյանին, Մ. Նուպարյանին, Ռ. Պերպերյանին, Գ. Պուպլիին (Զմյուռնիայի «Ռևֆոըմ» ֆրանսերեն թերթի խմբագիրը) և այլոց երգիծական ընտրթադրերը՝ Ե. Տեմիրճիպաշյանի հեղինակությամբ (1907, 1 հնս.):

1906 թ. թերթում հայտնվում է «Մանդումե»-ի թերթիկը» երգիծական էջը, որի խմբագիրը երգիծաբան Գր. Թորոսյանն էր: Նրա դրչի թիրախ են դառնում դրական-լրագրական առօրյա իրողությունները, պոլսահայ մտավորական աշխարհը, մանր ու միջակ առևտրականությունը և այլն: «Հոսհոսի նոթերը» խորագրի տակ Թորոսյանը անդրադարձել է նաև իրական անձանց, ուրվագծել նրանց երգիծական պիմատուվերները:

Հաջող հատվածներ ունի Վարազը՝ մտավորականների կյանքի զավեշտական պատկերներով: Վարազը շոշափում է նաև հասարա-

կական, կրթական ու եկեղեցական խնդիրներ՝ «Իմ պզտիկ յուշատետրս» խորագրով:

Բավական տպավորիչ է «Մանզումե»-ի գեղարվեստական «լուրջ» գրականութիւնը: Թերթի էջերում տեղ են գտել Քասիմի արձակ երկերը (այդ թվում և Նարեկացու պոեմի թարգմանութիւնը գրական աշխարհարարով), Ա. Անտոնեանի, Ե. Տեմիրճիպաշեանի, Լ. Շաթրեանի, Հ. Աճեմեանի, Ս. Բիւրատի, Ավ. Ահարոնեանի արձակ նրկերը, Սիամանթոյի չափածո գործերը և այլն: Նրանց միավորում է թերթի որդեգրած գրական ուղեգիծը՝ ըստ հնարաւորին գեղարվեստական պատկերման նիւթ դարձնել ազգային իրականութիւնն ու միջավայրը: Թարգմանական էջերը՝ հիմնականում արձակ, մատուցվում են ժամանակակից ֆրանսիական գրականութիւնից՝ Զոլայի, Մոպասանի, Հ. Մոնեի, Մ. Մարիոյի, Ժ. Վեռնի, Ռ. Ծոսի, Լ. Սազիի և այլոց վեպերն ու պատմվածքները, որոնք տեղ էին գտնում թերթոնի բաժնում: Զգևնք է մոռանալ «Մանզումե»-ի լրատուական ու գեղարվեստական բաժինների հայատառ թուրքերենն նիւթերը: Ի դեպ, 1902 թ. սկսած, հայատառ թուրքերենով նիւթերը անընդհատ նվազել են:

1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո, հուլիսի 29-ից, «Մանզումե»-ն փոխում է իր ենթավերնագիրը՝ վերածվելով «Ազատական անկախ օրկանի»: Թերթը հայտնում է իր հավատամքը՝ «Հայրենիքին ու ժողովուրդին առջեւ պարտաւորութիւն ստանձնած կըլլանք ամենայն անկախութեամբ եւ ամենայն ազատութեամբ իրենց չահերը պաշտպանելու» (1908, 4 օգ.): Թերթի խմբագրութեան վարչութիւնը ստանձնեցին Ե. Տեր-Անդրեասյանը, Ա. Անտոնեանը և Հ. Տեր-Հակոբյանը: 1908–1909 թթ. «Մանզումեի էֆքյարի» նիւթերը ցույց են տալիս, որ այն գրեթե անվերապահորեն հետեւում է Հայ Հեղափոխական Դաշնակցութեան ուղեգծին՝ վատաորեն դառնալով նրա ոչ պաշտոնական օրգանը: Թերթը տպագրել է այդ կուսակցութեան հայտարարութիւնները, քարոզչական աշխատանք կատարել իրականութեան զարգացումների

նկատմամբ նրա վերաբերմունքն արտահայտելու և պարզաբանումների ուղղությամբ, հաճախակի արտատպումներ արել ՀՅԴ պաշտոնաթերթի «Դրոշակից» և այլն: «Մանզումե»-ն տպագրից օսմանյան սահմանադրության վերաբերյալ հարցը հյումայունը: Այն հռչակում էր կայսրության բոլոր հպատակների ազատություն և հավասարություն, օրենքի անվերապահ գերակայություն, անձի և նրա գույքի անձեռնմխելիություն, մի խոսքով, այն բոլոր փքուռուցիկ խոստումները, որ աջ ու ձախ չռայլում էին երիտթուրքերը՝ կայսրության հպատակներին խարելու համար: Նույն ոգով, վերացվում էր նախնական դրաքննությունը, հաստատվում ազատ երթևեկության իրավունք երկրի ներսում և դրա սահմաններից դուրս (Ն.տ.): Դաշնակցության ընդդիմախոսների հետ ծածուկ բանավեճ մղելով՝ «Մանզումե»-ն իր մի հոդվածում (1908, 19 օգ.) հիմնավորում է Համիդյան բռնակալության դեմ բուն իսկ Թուրքիայում (և ոչ թե արտասահմանի երիտթուրքական՝ «սկյուրից ու էֆենտիներից» կազմված կազմակերպություններում) դրծող «իսկական յեղափոխական կազմակերպությանը» հետ համագործակցությունը: Նույն թվահամարում «Մանզումե»-ն «Մուրակից» արտատպել է այդ կազմակերպության ծրագիրը: Օսմանյան հեղափոխական կազմակերպությունների մեջ «Մանզումե»-ն առանձնացնում է իշխան Սաբահէդդինի առավել ազատամիտ «Անհատական նախաձեռնութեան, ապակենդրոնացման եւ սահմանադրութեան Օսմանեան միաւնութիւնը», որը պաշտպանում էր կայսրության մեջ տեղական ինքնավարության սկզբունքը: Ակներև է, որ «Մանզումեի էֆքյարը» դաշնակցության ընդհանուր դաղափարական ուղեգիծը համակրելով հանդերձ, ձգտում է ձերբազատվել «իթթիհատի» հետ վերջինիս համագործակցության ռազմավարությունից՝ հակվելով դեպի ավելի ազատամտություն խաղացող օսմանյան քաղաքական կազմակերպությունները:

Նշված ժամանակաշրջանում «Մանզումե»-ն, ինչպես և արևմտահայ մյուս թերթերը, մասնավոր ուշադրություն է դարձնում

Համիդի երրևմնի պաշտոնյաների չարագործությունների, հայերի հանդեպ դաժանությունների և այլ ոճրագործությունների մերկացմանը: Այս թեմայով արտատպումներ են արված նաև եվրոպական մամուլից, որտեղ բացահայտվում են սուլթանի դրածոների և ֆավորիտների չարաշահումները, նրանց՝ կողոպուտի և կաշառքի միջոցով վիթխարի հարստություններ կուտակելը: Այս հրապարակումներում շրջանառում են սուլթանի քարտուղարներ Թահսինը, Իզզեթը, սեննեկապետ Բաղըպը, խոշոր հափշտակիչ, ռազմական պալրոյների տնօրեն Զևքի փաշան, մայրաքաղաքն ահաբեկած՝ սխրահռչակ ոստիկանապետ Ֆեհիմ բեյը և շատ ուրիշներ: Թերթն ուշադրություն է դարձնում հատկապես հին վարչակարգի հրեշներից՝ խաֆիեների (լրտեսների) պետ, ինքնասպան Զևրքեզ Մեհմեդի և Կում Կափուի ցույցի չարդարար ջյամիլի գործունեությանը: «Մանզումե»-ն քանիցս անդրադարձավ հայկական ջարդերի կազմակերպիչ Իզզեթ փաշայի անձին, սուլթանի պալատում նրա աջակիցների արյունալի մտահղացումների մերկացմանը: 1908–1909 թթ. այս թերթը աչքի է ընկնում նաև Համիդյան դրաքննության ապականված ծալքերը բացահայտելու հետևողականությամբ: Ա. Անտոնյանը հանդես է եկել Համիդյան գրաքննության գամփռ ոմն Սիսակ Ֆերիտ բեյի դեմ, որն «Արևելքում» հանդես էր եկել Ա. Անտոնյանի արարքները իշխանությունների առջև բացահայտելու սպառնալիքով: Ա. Անտոնյանը ցույց է տալիս, որ այդ հայազգի բեյի՝ տպագրական տնօրենի ջանքերով է երկու ամիս բանտարկվել «Մանզումե»-ի արտոնատեր Հ. Գայսերյանը: Նա մերկացնում է նաև մեկ այլ մատնիչ գրաքննիչի՝ Արամ Ատիլ բեյին (1908, 31 հլս.):

«Մանզումե»-ն իսկական մերկացնող արշավանք ծավալեց Համիդի ժամանակ լրտես կամ ազգավնաս այլ անձանց գործունեությունը ի հայտ բերելու ուղղությամբ: Ուշագրավ է նաև, որ թերթը հնարավորություն էր տալիս արտահայտվելու իր թիրախներին՝ «Ամբաստանյալները կը խօսին» խորագրի տակ: Այս, ինչպես տպագրված վարչակարգի ժամանակների «հերոսների» մասին

տպագրած իր հրապարակումներով թերթը ստեղծում էր հասարակական կարծիք՝ իր ակնկալած «պատուոյ ատեաններում» ամրաստանյալների գործերը նախապատրաստելու և ներկայացնելու նպատակով:

Հեղաշրջման առաջին շաբաթների էյֆորիան, որով համակվել էր «Մանզումե»-ն, ինչպես և արևմտահայ դրեթե բոլոր թերթերը, տակավ առ տակավ, սակայն, տեղի սկսք է տար իրականությունից սնվող կասկածներին: Նախ, տարակուսանք էր հարուցում երիտթուրքական իշխանությունների կատարյալ անտարբերությունը Կ. Պոլսում օրավուր կուսակվող՝ վերադարձած հայ փախստականների հանդեպ: Մինչդեռ, վերադարձած թուրքերը չրջապատվում էին ուշադրությամբ, նրանց անգամ նպաստ էր տրվում իշխանությունների կողմից: «Հայ գաղթականներուն կացութիւնը» հոդվածում թերթը բողոքում էր նման խտրական վերաբերմունքի դեմ: «Ամէնքս ալ վնասուած ենք հին ռէժիմէն, ինչու ամէն բան հիմայ դարձնալ մեզմէ կը սպասուի, որ ընենք, ասիկա ոչ արդարութիւն է, ոչ ալ ճշմարիտ հաւասարութիւն» (1908, 14 սպտ.): Ավելին, թերթը հավելում է, որ օգնության վոխարեն վերադարձած հայերին կանչում են ոստիկանություն և հարցաքննում, իբրև հանցագործների (1908, 26 օգ.):

Միաժամանակ, «Մանզումե»-ն արդեն սկսք է նկատեր, որ հատկապես գավառներում իրենց պաշտոնին են մնում տապալված վարչակարգի գրածոները՝ չարունակելով օգտվել նոր իշխանությունների բարեհաճությունից: Թերթը գրում է, որ Վանի կուսակալ, արյունարբու Ալի Րիզան «Վանայ կուսակալութեան ժողովուրդները վայրագօրէն կը զրկէ սահմանադրութեան բարիքներէն... եւ տակաւին կը մնայ իր պաշտօնին վրայ» (1908, 13 օգ.): Իր պաշտոնն էր չարունակում երգնկայում Դ զորաբանակի հրամանատար, հանցագործ Զեքի փաշան, հայտնի՝ հայերի դեմ գործադրած իր բռնություններով, և թերթը իր զարմանքն է հայտնում վարչապետ Քյամիլ փաշային՝ սրանց պաշտոնավարությունը հանդուրժելու համար (ն. տ.): 1908–1909 թթ. թերթի էջերը լցված են ոչ մի-

այն հին պաշտոնյաների հարատևման, այլև այնպիսի փաստերով, որոնք վկայում են ծանրագույն հանցանքներով դատապարտված նախկին պաշտոնյաներին բանտերից ազատ արձակելու մասին: Մինչդեռ, չարունակում էին բանտերում մնալ հին վարչակարգի զոհ հայ բանտարկյալները Արևմտահայաստանում և կայսրության այլ շրջանների բանտերում: Ի դեպ, ՀՅԴ Կ. Պոլսի պատասխանատու մարմինը այս առիթով դիմել էր Բ. դռանը՝ պահանջելով ազատ արձակել դավառների հայ բանտարկյալներին, ինչպես և տարածել հայտարարություն՝ ի նպաստ Թուրքիայում ազգերի ազատության և համերաշխության (1908, 19 օգ.):

«Մանզումե»-ում սկսում են հաճախակի հայտնվել քրդական հարստահարությունները վկայող փաստեր: «Հ3 Դաշնակցութեան նամակներ եւ քաղուածներ» խորագրի ներքո գավառներում արված որոշ բարելավումների հետ միասին նշվում է, որ Բաղեշում չեյխ Հասանը չի դադարեցրել իր բռնությունները հայերի հանդեպ, ինչպես նախկինում: Մուշում չեն մարում քրդական խժդժությունները, ընդսմին, հայկական դիմադրական ոգին ընկճելու նպատակով Մուշի թուրք զորահրամանատարը «ազատության և եղբայրության» պաշտոնական հայտարարությունից հետո պահանջել էր հայերից, որ զենքերը հանձնեն: ՀՅԴ ներկայացուցիչները առարկել էին դրան, նկատելով, թե քանի դեռ մահմեդականները, հատկապես քրդական համիդիեն, զինաթափված չեն, իրենք չեն կարող զենքը հանձնել (1908, 23 սպտ.):

Ինչ-որ տեղ «Մանզումե»-ն չափազանցում է տալիս այն իրողությունը, որ թուրք մամուլը հայերին և քրդերին միմյանց դեմ դրգռելու նպատակով անդրադառնում է գավառներում քրդական վայրագություններին: Այդ բնույթն ուներ թուրքական «Ջեյդը Հյուրրիեթ» թերթից «Մանզումե»-ի արտատպած մի հոդվածը, որտեղ պատասպարտվում են քրդերի վայրագությունները և, միաժամանակ, չոյվում հայերի ազգային զգացումները (1908, 29 օգ.): Դրան հակառակ, «Մանզումե»-ն լավ է նկատում թուրք մամուլի սադրիչ փորձերը՝ միմյանց դեմ հանելու հայերին ու հույներին և

խորացնելու բանավիճային կրքերը նրանց մամուլում: Հատկապես թուրքական «Իքդամը»՝ օգտվելով «Մանզումե»-ի և մի քանի հունական թերթերի բանավեճից, որ երբեմն հասնում էր քաղաքական մեղադրանքների, հաճույքով թարգմանում էր հենց այդ բովանդակության հոդվածները՝ ձգտելով ավելի խորացնել յարվածությունը: Այս առթիվ «Մանզումե»-ն գրում է. «Կը հրավիրենք մեր թիւրք պաշտոնակիցները, որ արձագանգ ըլլան մեր այս տողերուն (գաղթական հայերին օդնելու մասին – Ա. Խ.) եւ միմիայն հայ եւ յոյն եղբայրակցութեան՝ իրը թէ արատ բերող յոդուածները չթարգմանեն» (1908, 14 սպտ.): Դրանից ոչ շատ առաջ «Մանզումե»-ն տպագրել էր ՀՅԴ Կ. Պոլսի պատասխանատու մարմնի կոչը հայ մամուլին՝ հույների հետ տարաձայնությունները չխորացնելու և զուսպ կեցվածք որդեգրելու վերաբերյալ: Թերթն իր համամտությունն է հայտնում դրան և նշում, որ «Իքդամը» հույներին հայերի դեմ դրգռելու նպատակով վերջիններիս վերագրում է հակահունական գաղափարներ, որ ըլլպարտութիւն է: Ի դեպ, այս առումով սթափ դիրք էր դրավել թուրքական «Մեթին» թերթը, որը հնդքում էր հայերի ապստամբելու և առանձին թագավորություն կազմելու վերաբերյալ հունական որոշ թերթերի մեկնաբանությունները (1908, 3 սպտ.): «Մանզումե»-ն այս առթիվ տպագրեց պատրիարքական տեղապահ Ե. Դուրյանի շրջաբերականը, որտեղ նա դատապարտում էր «քոյր ազգերու մէջեւ» թշնամություն սերմանողներին և հորդորում ժողովրդին՝ «անվթար պահել իր համոզումը, թէ հայ եւ յոյն ազգերու մէջ բնաւ հակառակասէր ոգի մը գոյութիւն չունի եւ պէտք չէ երբէք ունենայ» (1908, 21 սպտ.):

«Մանզումե»-ն ՀՅԴ դիրքորոշումները պաշտպանել է նաև նախկին պատրիարք Մ. Օրմանյանի նկատմամբ վերաբերմունքի հարցում: Հիրավի, այսօր այդպիսի վերաբերմունքը իրավացիորեն համարվում է ծայրահեղ և միակողմանի, որչափով Օրմանյանը (և ով էլ որ լիներ նրա պաշտոնում) անզոր էր կասեցնելու ջարդարար սուլթանի գործողությունները: Թերթը «Դրոշակից» արտատպել է «Օրմանեան» հոդվածը, որտեղ նախկին պատրիարքը հանիրավի




Հ. Պարոնյան



Ե. Օտյան



Մ. Մեծարենց



«Վերջին լուր»-ի խմբագրական մարմինը
Ս. Տ. Հակոբյան, Ե. Օտյան, Լ. Շաքրեան,
Հ. Ասպետ (Օ. Չիֆթե Սարաֆ), Արտ. Գալփագճյան, Տ. Տեր-Հակոբյան,
Հ. Տեր-Ներսեսյան, Օ. Թելլալեան



Գր. Զոհրապ



Զ. եպ. Եղիայան,
Ս. պատրիարք հայոց Թուրքիո



Պողոս Նուպար



Բ. Քեչյան



Հրանտ Ասատուր



Տ. Արփիարյան





Տ. Չյոկյուրյան



Հ. Գայսերյան

Ստամբուլի հայ ժամանակակից մամուլ

















«Ս. Փրկիչ Ազգային հիվանդանոց» ամսաթերթի շապիկը



Ստամբուլ, Եոիգուլեի ծովեզերքն ու բերդերը



Ստամբուլ, Ս. Փրկիչ Ազգային հիվանդանոցի համալիրը



Ս. Փրկիչ մատուռը Ազգային
հիվանդանոցի տարածքում



Ս. Կարապետ եկեղեցին Կ. Պոլսում



Ս. Կարապետ եկեղեցու խորանը

մեղադրվում էր գավառահայերի հանդեպ անտարբերության, սովն ու գաղթականությունը չկանխելու, ինչպես և փախստական հայերի և աղգապատկան կալվածքների բռնագրավման դեմ չբողոքելու համար (1908, 31 հլս.): Ե. Տեր-Անդրեասյանը դրանց էր ավելացնում պատրիարքի կողմից դրամական միջոցների մասին հաշվետվություն չտալը, ինքնագլուխ և կամայական գործողությունները, կրոնական դեղծումներին նպաստելը և այլն (1908, 4, 10 օգ.): Մ. Օրմանյանի դեմ թերթը տպագրեց Հ. Ճանկուլյանի և իր ճոռոմաբանություններով դևուևս 1880-ականից հայտնի զմյուռնացի իրավարան Կ. Ստեփանյանի հոդվածը (արտատպված «Արևելյան մամուլից»): Առաջինը կրկնում էր արդեն հնչած մեղադրանքները, իսկ երկրորդը Մ. Օրմանյանից բացի, մեղադրում էր «Բյուզանդիոնի» խմբագիր Բ. Քնչյանին՝ իրավագետի ծանրումնծ կեցվածքով և ակնհայտ միտումով: Պետք է կարծել, այսուհանդերձ, որ Օրմանյանին ուղղված անձնական կարգի մեղադրանքները հիմնազուրկ և կրքոտ լինելով, ունեին քաղաքական բնույթ և դրանց առաջ քաշման գործում «Մանզումե»-ն հեռու էր ինքնուրույն մոտեցումից՝ կրկնելով սոսկ ՀՅԴ տեսակետը:

«Մանզումե»-ի հրապարակումների մեջ իր հագեցվածությամբ առանձնանում է Գր. Զոհրապի ընդարձակ ելույթը՝ «Օսմանեան սահմանադրութեան վերաքննութիւնը. փոփոխելի եւ ջնջելի կէտերը» վերտառությամբ (1908, 2 սպտ.): Այստեղ Զոհրապը, ելնելով եվրոպական առաջավոր երկրների սահմանադրական նորմերից, հիմնավորում է օսմանյան սահմանադրության վերաքննության և դրա իրականացման ձևերի վերաբերյալ իր տեսակետները: Նկատի առնելով 1876 թ. օսմանյան սահմանադրության անփառունակ վախճանը (սուլթանի բացառիկ իրավունքը՝ կախակայելու սահմանադրությունը, որից և օգտվել էր Աբդուլ Համիդը)[1], Զոհրապն առաջարկում էր գործող սահմանադրության մեջ հոդված մտցնել,

[1] Петросян Ю. А., Младотурецкое движение, с. 90-91.

որը կրացառեր «պետական նոր հարվածով սահմանադրական կառավարության դադարումը» (ն.տ.):

Առաջադիմական արժեք ունեն Զոհրապի այն առաջարկությունները, որոնք վերաբերում են Թուրքիայում ընտրական իրավունքի ժողովրդավարացմանը, կանանց ընտրական իրավունքին, օրենսդիր և գործադիր իշխանությունների փոխհարաբերություններին: Զոհրապը հատուկ ուշադրություն է դարձնում ազգերի տեղական ինքնավարության խնդրին, հանդես գալիս լայն ինքնավարության օգտին՝ փաստորեն իրավական ձևակերպումներ տալով արևմտահայության ինքնավարության վերաբերյալ ՀՅԴ քաղաքական ուղեգծին: Օսմանյան ոչ մի «հեղափոխական կազմակերպություն» և ամենից առաջ իթթիհատը, չպետք է համամիտ լիներին այս կարգի ելույթներին, թեև դրանց հիմքում ընկած էին, ինչպես տեսանք, իրենց իսկ հռչակած ազգերի ազատության և իրավահավասարության սկզբունքները: Երիտթուրքերին հարկավոր էր ազգերին խարել մինչև իշխանության հասնելը, որից հետո կարելի էր մի կողմ նետել կեղծ հեղափոխականի ձանձրացնող դիմակը և հանդես գալ բռնակալ հին թուրքի տեսքով: Երիտթուրքերը չհապաղեցին այդ անել, և առաջին հերթին՝ հայության նկատմամբ՝ ձևնարկելով Ադանայի կոտորածին:

Հայտնի է, որ Ադանայի ջարդը կազմակերպելով, երիտթուրքերը դրա ամբողջ մեղքը գցում էին հին՝ համիդյան վարչամեքի մնացորդների վրա: Այս կեղծիքը պաշտպանող երիտթուրքական մամուլն ըստ ամենայնի ձգտում էր ապակողմնորոշել և՛ հայերին, և՛ եվրոպական հասարակական կարծիքը: «Սաբահ» թերթը գրում էր, թե Ադանայում, իբր, գլուխ է բարձրացրել համիդյան հետադիմակամ շարժումը, որը հեղափոխությունից (իմա՝ երիտթուրքականը) հետո էլ պահպանել էր իր գոյությունը գավառներում: Ե՛վ երկրի ներսում, և՛ արտաքսահմանում այս քարոզչությանն էին լծվել երիտթուրքական պաշտոնական և անպաշտոն բազմաթիվ մարմիններ: Երիտթուրքական խայծին վրա պրծավ նաև եվրոպական մամուլը: «Կուրիեր դ՝Իտալիա» թերթը գրում էր, որ Ադանայի

ջարդերը սուլթանից են հրահանգավորվել, մինչեւ որում էր նույնիսկ հեռագրի տեքստը բառացիորեն՝ հայերին ոչնչացնելու մասին (1909, 27 մյս.): Հոդվածը, որ ակնհայտորեն գրվել էր երիտթուրքերի պատվերով, շարունակում էր կեղծիքը՝ պնդելով, թե Համիդը ջարդերի հրահանգ պարունակող գրություններ է հղել նաև երկրի այլ շրջաններ, սակայն «սահմանադրական վալիները ուժգնապէս մերժած ըլլալով հնազանդիլ» հնարավոր է եղել ջարդերի առաջն առնել (ն. տ.):

Այս մթնոլորտում հայ ազգային կուսակցությունները և նրանց հրատարակությունները, ինչպես և չեզոք մամուլը՝ «Բյուզանդիոնը», «Արևելքը», «Հայրենիքը», «Մանզումեի էֆքյարը», «Ժամանակը», «Ազատամարտը» և այլն, Ադանայի կոտորածը համարեցին հետադիմական շարժման արդյունք: Նույն կարծիքին էր նաև Կ. Պոլսի հայ ազգային երեսփոխանական ժողովը, որը մայիսին օսմանյան խորհրդարանի և բանակի հրամանատարությանն ուղղած իր հուշագրում ևս ամեն ինչ բարդում էր Համիդի վրա:

Հետագա իրադարձությունները ու լրատվական միջանցքի լայնացումը հայ մամուլի համար աստիճանաբար պետք է պարզեին իրողությունը: Թերթերում լայն քննարկման առարկա են դառնում կոտորածի հանգամանքները, դրան նախորդող քաղաքական իրադրությունը, թուրքերի և հայերի փոխհարաբերությունները, ընդհարումներն այդ շրջանում և այլն: Ընդամին, երիտթուրքական իշխանությունների ու նրանց մամուլի քարոզչության աննևաակայելի կեղծիքները Ադանայի կոտորածի վերաբերյալ՝ քիչ բանով չնպաստեցին հայ մամուլին հասկանալու, որ հենց երիտթուրքերն են սպանդի կազմակերպիչները: Այսպես, նույն «Սաբահ» թերթը բերում էր ջարդի բացահայտորեն կեղծ վիճակագրական տվյալներ՝ հայտնելով, թե Ադանայում զոհվել է 1924 և վիրավորվել 533 իսլամ, մինչդեռ հայերը տվել են ընդամենը 1455 զոհ և 382 վիրավոր: «Բյուզանդիոնը» հերքում էր այս տվյալները՝ նշե-

լով, որ Ադանայում հայերի կորուստները կազմում են 20–30 հազար մարդ[1]:

«Մանզումեի էֆքյարն» իր հերթին, կասկած էր հայտնում հին վարչախմբի մարդկանց կազմակերպչական դերի մասին, նկատելով, որ այս դեպքում գործող իշխանությունների կողմից կիլիկիայի հայերին հալածելու, նրանց խռովություններին մեջ հանիրավի մեղադրելու քարոզչությունը ինչպես կարելի հաշտեցնել նրանց հայտարարությունների անկեղծության ու ճշմարտության հետ (1909, 27 մյս.): Մայիսին (1909) դոնե ամբողջ հայ մամուլին հայտնի էր դարձել, թե ովքեր են դրա իսկական կազմակերպիչները: «Մանզումե»-ն և նշում էր, որ երիտթուրքերի հայտարարությունները հակասում են այն փաստին, որ Ադանայում իշխանությունները սկսել են հետապնդել հայերին: Երիտթուրքերի հայտարարությունը, թե այդ ամենը Համիդյան վարչախմբի ձեռքի գործն է, հնարավոր չէ «հաշտեցնել հայոց ներկայ ձերբակալությանն հետ» (1909, 27 մյս.): Իշխանությունների այն փաստարկը, թե դրա պատճառը հայերի զինված լինելն է, «Մանզումե»-ն հիմնավոր չի համարում՝ իսկ մեթե թուրքերը զինված չեն եղել. այդ հայերն են ծանր կորուստներ տվել, կորցրել հարազատներին, սեփականություն, տուն և «ամենաին կիմանանք, որ ձերբակալուածները կէս առ կէս հայ կըլլան»: Ադանայում ձերբակալվել է 150 հայ, իսկ կոտորածի հեղինակներին՝ «յարձակում եւ ջարդ ընողներուն բան մը չեն ըսէր», գրում է թերթը (Ն. տ.): Մայիս-հունիս ամիսներին իշխանությունները և արտաաահմանում օսմանյան դեսպանատները լուրեր են տարածում, թե Ադանայի ողբերգական դեպքերի պատճառը հայ հեղափոխական կոմիտեներն են: Ամեն ինչ վերագրվում էր հայերին՝ ձեռքերին ազատություն տալու օսմանյան ոճրապարտ արդարադատությամբ: «Մանզումե»-ն ըստ հնարավորին չրջանցում էր երիտթուրքական դրաքննությունը՝ իրերի իսկական դրության մասին արտաաոպումներ անելով եվրոպական մամուլից:

[1] «Բյուզանդիոն», 1909, 8 մայիսի:

Ե. Տեր-Անդրեասյանը այս օրերին բողոքում էր մամուլի վրա իշխանության բռնացումներից, որ օրինականացվում էր օսմանյան խորհրդարանում: Մասնավորապես, մամուլին հրահանգվում էր քննադատական դիտողություններ չանել օսմանյան խորհրդարանի գործունեության մասին, տպագրել միայն հավաստի լուրեր, չդրկել օտար երկրների քաղաքականության դեմ և այլն: Զավեշտականն այն էր, որ Հյուսնին Հիլմի փաշան հայտարարել էր, թե օսմանյան մամուլի օրենքն ավելի ազատ է, քան անգլիական և ֆրանսիական համապատասխան օրենքները, քանի որ «հոն տուգանքներն ավելի խիստ են»: Դրան Ե. Տեր-Անդրեասյանը իրավացիորեն առարկում է, որ այդ երկրներում մամուլի մեղանչումները հանձնվում են դատարան, մինչդեռ Թուրքիայում մեղանչող պարբերականը դառնում է իշխանությունների վարչական դատաստանի զոհ (1909, 1 հնս.): Դրանից առաջ՝ 1909 թ. մարտի 31-ին «Մանզումե»-ի արտոնատերը կանչվել էր ոստիկանություն՝ հարցաքննության: Պատճառը, ըստ քննիչի, Թրքի Բաբերդի թղթակցի «ընդհանուր վրդովում» պատճառող հրապարակումներն էին այն մասին, թե այնտեղ չարդերի երկյուղներ կան (1909, 1 ապր.):

«Մանզումեի էֆքյարի»՝ 1912 թ. մեզ մատչելի սակավաթիվ համարներում տագնապալի փաստեր կան Արևմտահայաստանում հետզհետե սպառնալի դարձող իրադրության մասին: Թերթը վերհանում էր հատկապես պաշտոնյաների և իշխանությունների թշնամական վերաբերմունքը հայերի հանդեպ և քրդական հարստահարությունների անպատիժ ծավալումը:

«ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԱՄՈՒԼ» ՀԱՆԴԵՍԸ (1871–1909)[1]

Մ. Մամուրյանի մահվանից հետո «Արևելյան մամուլի» խմբագրությունն ու տնօրինությունը ստանձնեց որդին՝ Հրանտ Մամուրյանը: Նրա խմբագրության ժամանակ «Արևելյան մամուլը» կարողացավ պահպանել իր ղրական և հասարակական նշանակությունը XX դարի առաջին տասնամյակի պարբերական հրատարակությունների մեջ: Գրաքննական խստությունների բերումով կիսամսյա հանդեսը ստիպված էր սահմանափակել իր սոցիոլոգիական ու քաղաքական բնույթի հրապարակումները և հակվել դեպի առօրյա, ընթացիկ թեմանների լուսաբանությունը: Այս տարիներին առավել նշանակալի տեսակարար կշիռ են ձեռք բերում «Արևելյան մամուլի» գրական, գրաքննադատական, ինչպես և բարոյախոսական նյութերը: 1903–1909 թթ. պարբերականը վերածվեց չաբաթական հանդեսի:

«Արևելյան մամուլին» աշխատակցել են ժամանակի լավագույն գրական ու հրապարակախոսական ուժերը՝ Ռ. Զարդարյանը, Թլկատինցին, Արտ. Հարությունյանը, Հ. Գաղանճյանը, Զ. Նազարյանը, Հ. Ալփիարը, Օ. Չիֆթճի-Սարաֆը, Ռ. Որբերյանը և ուրիշներ: Նրանց շնորհիվ հանդեսը պահպանեց իր հեղինակությունը ամենից առաջ գրական ու գրաքննադատական անդաստանում և հրապարակախոսության մեջ՝ Զմյուռնիայի և Կ. Պոլսի ազգային իրականությունը բազմակողմանիորեն ներկայացնելու գործում: Այս իմաստով պետք է նկատել, որ «Արևելյան մամուլի» էջերում հատկապես հանգամանալի է լուսաբանվել Կ. Պոլսի հայության ազգային ու մշակութային կյանքը, անգամ շատ ավելի ընդարձակ, քան զուտ տեղական զմյուռնահայ իրականությունը: Եվ այս հանգամանքը, իր հերթին, ավելի է կարևորում հանդեսի տեղական նյու-

---

[1] «Արեւելյան մամուլ» հանդեսը հիմնել է Մ. Մամուրյանը՝ 1871 թ., Զմյուռնիայում և խմբագրել մինչև 1901 թ.՝ իր մահը: Այնուհետև այն խմբագրել է որդին՝ Հ. Մամուրյանը, մինչև 1909 թ., հանդեսի հրատարակության ավարտը: Այստեղ քննարկվում է պարբերականի 1901-1909 թթ. շրջանի բովանդակությունը: Նույնանուն թերթին կանդրադառնանք իր տեղում:

թերի արժևքը, քանի որ «Արևելյան մամուլը» գրեթե մինչև այս տասնամյակի վերջը մնում էր Զմյուռնիայի միակ հարատևող և կանոնավորապես լույս տեսնող պարբերականը:

«Արևելյան մամուլի» էջերում լուսաբանվել են Զմյուռնիայի հայերի գավառական վարչության և ազգային այլևայլ հաստատությունների գործունեությունը: Հանդեսն առավելապես ուշադրություն է դարձրել Ս. Լուսավորչյան հիվանդանոցին, որին վերաբերող նյութերը գուրկ չեն նաև քննադատական ուղղվածությունից՝ ի շահ այդ հաստատության բարեկարգման: «Հիւանդանոց, թէ անկելանոց» հոդվածում (1901, թիվ 4, էջ 137–142) բացահայտվում է այդ հիվանդանոցի անմխիթար վիճակը, հոգաբարձության ձևական վերաբերմունքը դրա կարիքների նկատմամբ: Հեղինակը՝ հավանաբար Հ. Մամուրյանը, ցույց է տալիս դրա մի քանի պատճառները՝ դրամական անբավարար հատկացումները, բժշկական հսկողության բացակայությունը և այլն: Հանդեսը ուշադրություն է դարձնում աղքատախնամ ձեռնարկումների կարևորությանը, նկատի առնելով նաև, որ Ս. Լուսավորչյան հիվանդանոցում առավելապես պատսպարվում էին համայնքի չքավոր խավերին պատկանող մարդիկ: Գ. Պուպլին իր «Ճշմարիտ ողորմութիւնը» հոդվածում (1900, թիվ 23, էջ 918–920) հատկապես ուշադրություն է դարձնում Զմյուռնիայի «մորթաքիայի» (աղքատների համար կառույցված կացարան) «անկման վիճակին» և հասարակությանն առաջարկում է ընդօրինակել հրեա բարեգործներին, որոնք երկաթուժամկետ և մատչելի վարկով ազգակից աղքատներին բնակարան են հատկացնում և նրանց դարձնում սեփականատերեր: Պուպլին առաջարկում էր այդ նպատակով կազմել բարեգործական ընկերություն, որը տնակներ կպատրաստեր կարիքավորների համար: Այդպիսի ընկերություն ստեղծելու կոչը մնաց անարձագանք, ավելին, տեղական հայ հարուստների աղքատախնամ ջերմությունը չարունակում էր սառչել՝ դատելով հանդեսի նյութերից: 1901 թ. ապրիլին հիվանդանոցի հոգաբարձությունը հայտնել էր, որ այդուհետև պատսպարվելու են միայն բժշկի կողմից հանձնարարված

հիվանդները և որ ապաստան չի տրվելու «յիմար, ապուշ, ծեր և անկնալ անճանց» (1902, թիվ 8, էջ 24): «Արևելյան մամուլը» դարասկզբին հաճախ է անդրադառնում ազգային հիվանդանոցին: 1902 թ. նշվելու էր դրա 200-ամյա հորելյանը (նշվել է այդ թվականի մարտի 30-ին): Հանդեսը տպագրել է հորելյանական հանձնաժողովի տեղեկագիրը[1], որտեղ, ի դեպ, արժեքավոր տեղեկություններ կան զմյուռնահայ դաղթօջախի պատմության, հատկապես այդ ազգային հաստատության վերաբերյալ (1902, թիվ 8, էջ 383–385):

Հանդեսի էջերում կարելի է հանդիպել ուշագրավ լրատվության՝ Զմյուռնիայի ընկերությունների, մանկապարտեզի և այլ հաստատությունների մասին, ընդամին, այդ հրապարակումների մեծ մասը հագեցած է քննադատական լիցքով: «Անհարատեւութիւն» խմբագրականում ցույց է տրվում դործելու եռանդի պակասը զմյուռնահայերի մեջ, անկյալ վիճակում էր 1886 թ. հիմնված «Արևելյան ակումբը», նույն վիճակում էր մարզական «Թենիս» ակումբը, որն իր նպատակին չծառայելով՝ միայն «օտարներու ժամադրավայր մը եղած է» (1901, թիվ 21, էջ 857–861): Համայնքում ամեն մի ձեռնարկում կլոսաւո է մնում, եղրակայնում է «Արևելյան մամուլը», որովհետև չկա հետևողականություն: Սակայն հանդեսի որոշ նյութեր տալիս են նաև դրա հակառակ օրինակները: Խրախուսվում է կանանց «Կրթասէր» ընկերությունը, որի ջանքերով 1890 թ. Զմյուռնիայում հիմնվել էր մանկապարտեզ: Այստեղ ապաստանել էին 3–8 տարեկան երկսեռ երեխաներ, մեծ մասամբ՝ արհեստավորների ընտանիքներից: Մանկապարտեզում հաջողությամբ կիրառվում էր Ֆրեոբելյան ուսումնակրթական սկզբունքը՝ պարզից դեպի բարդն ընթանալու, մտքի կանոնավոր ու աստիճանական մշակման ուղիով: Գ. Պուպլին՝ զմյուռնահայ այդ հեղինա-

[1] Ուշագրավ է, որ «Արևելքի» էջերում հաճդես նկավ Ատոմը, որը բանավիճում էր Տեղեկագրի որոշ տվյալների առթիվ («Արևելք», 1902, 29 հունվարի): Հօգուտ Տեղեկագրի արժանահավատության, նրան առարկեցին Ն. Հարենցը և Գ. Բաբալյանը («Արեւելեան մամուլ», 1902, թիվ 5, էջ 256):

կավոր հրապարակախոսը, կոչ էր անում նյութապես սատարել «Կրթասէր» ընկերությանը՝ նրա ազգօգուտ գործունեության համար (1905, թիվ 6, էջ 189):

«Արևելյան մամուլը» խրախուսում էր հանրությանը օգտակար ամեն մի նվիրատվություն. նրա դրվատանքին էր արժանացել բժիշկ Սպարթալին, որն իր դրծընկեր Ա. Զելեպյանի օժանդակությամբ Զմյուռնիայի Հայնոց թաղում հիմնել էր կլինիկա՝ դարմանատուն, նորագույն բժշկական սարքավորումներով (1902, թիվ 23, էջ 995):

Այսուհանդերձ, համայնքի ազգային կյանքում «Արևելյան մամուլն» ամենից շատ ուշադրություն էր դարձնում վարժարաններին, այդ թվում և չրջակայքի ուսումնակրթական կացությանը: Հանդեսի հրապարակումներից պարզվում է, որ 1903 թ. Զմյուռնիայի վիճակում գործում էին 27 վարժարաններ՝ 2935 երկսեռ աշակերտներով, որոնց տարեկան ծախսը կազմում էր 35766 ղուրուշ (1903, թիվ 20, էջ 459):

Առհասարակ զմյուռնահայ դպրոցները մշտապես նեղվում էին նյութական սուղ վիճակից և այս պատճառով աշակերտների մեծ մասը հաճախում էր շատ ավելի բարեկեցիկ և մատչելի օտար վարժարաններ: Դրությունը ինչ-որ չափով մեղմելու համար «Արևելյան մամուլն» առաջարկում էր մշակել կանոնավոր ծրագիր՝ միջին ու բարձր դասարաններում. այն նկատառումով, որ չքավոր ընտանիքների երեխաները ավարտեին դոնն միջին դասարանը, ահմանվեր դպրոցական տուրք՝ 5–100 ղուրուշի չափով, ըստ կարողության: Նուրհան ստորագրող Հ. Մամուրյանը իր մի հոդվածում քննադատում էր զմյուռնահայ դպրոցների վիճակը, ուսումնական հնացած ծրագրերը: Նա լուսաբանում էր նաև խնդրի սոցիալական կողմը՝ դպրոցները նյութական միջոցներ չունեն, իսկ ուսուցիչներն իրավազուրկ են և արհամարհված: Նուրհանը արդարացի և լուրջ դիտողություններ էր անում ապազգայնացնող՝ Քարափի (Զմյուռնիայի հայ հարուստների նոր թաղամասը՝ ավանդական Հայնոց թաղից հետո) մեծահարուստներին, որոնք արհամարհանքով էին վերաբերվում չքավոր հայրենակիցներին (1904, թիվ 7,

էջ 169–172): Հանդեսը բացահայտում է խնդրի այս կողմի ծանր հետևանքները՝ դրամատերերը իրենց երեխաներին տեղավորում են հնդինակավոր և թանկ օտար վարժարաններ՝ քամահրելով ազգային դպրոցները: Այդպիսի դպրոցներից մեկին ծնողներին վճարում են տարեկան 2500 օսմանյան ոսկի, մինչդեռ ազգային վարժարանների նույնքան աշակերտների համար չքավոր ու միջին կարողության տեր ծնողները վճարում են հազիվ 100 ոսկի: Ազգային արկղը վարժարաններին հատկացնում է ընդամենը 1100–2000 ոսկի, որ չնչին դումար էր արդիական ուսուցման պահանջները բավարարելու համար (1904, թիվ 27, էջ 643–644): Իր մեկ այլ հոդվածում Նուրհանը գմյուռնահայ դպրոցների նյութական պակասը կապակցում էր օտարամոլության հետ: Ժողովրդի ստորին խավերի երեխաներին կրթության տալու մտահոգությամբ՝ նա առաջարկում էր գմյուռնահայ երկսեռ վարժարանները վերածել նախակրթարանի, որով և տարրական կրթությունն կատանային ոչ ունևոր խավերի զավակները (1900, թիվ 22, էջ 887–892):

1900-ական թթ. այս թեմայով «Արևելյան մամուլի» տպագրած նյութերը հետամտում են ազգային դպրոցի զարգացումը, հատկապես մեծահարուստների օտարամոլության բացահայտումը և աչքի են ընկնում աշխատավորական խավերի կրթության ու դաստիարակության համար գործնական առաջարկներով:

Մի հայտնի չափով «Արևելյան մամուլի» էջերում արտացոլվել է գմյուռնահայ համայնքի հասարակական կյանքը՝ գավառական ժողովի գործունեությունը, մարդկանց վերաբերմունքը տեղական ազգային կառույցների հանդեպ և այլն: Տեղական գավառական ժողովը իր ազդեցիկ և հարուստ ազգայինների կազմով, միօրինակ գործելակերպով ու չրջակա թեմերի հանդեպ անտարբեր կեցվածքով, տեղի էր տալիս «Արևելյան մամուլի» արդարացի քննադատությանը: Գմյուռնիայի գավառական ժողովում, նկատում էր հանդեսը, բացակայում է առողջ քննական ոգին, սկզբունքների և կարծիքների ընդհարումը, որից կշահեին համայնքի գործերը: «Այն խորհուրդն, ժողովն կամ մարմինն, որ իր մէջ ընդդիմադիր

կուսակցութիւն մը չունի, այն, որ խնդիր մը ծեծելու, պարզելու եւ քննելու համար վիճաբանութիւն չսիրէր, ժողով ըլլալ կը դադրի»,- գրում է «Արեւելյան մամուլի» հեղինակներից մեկը (1904, թիվ 8, էջ 196): Փոխարենը, այդ ժողովում գլուխ են բարձրացնում մասնավոր շահերը, բորբոքվում դրանցով սնվող երկպառակութիւնները, «փառասիրական ձգտումները» (1904, թիվ 11, էջ 266): Այսուհանդերձ, պարբերականը համեմատաբար քիչ է անդրադարձել ժմյուռնահայ հասարակական իրականութեանը և թերևս, սա պետք է համարել նրա բովանդակութեան թերի կողմերից մեկը: Տեղական լրատուութեունից և նյութից առավել «Արեւելյան մամուլը» նախապատուութեունը տալիս էր ժմյուռնահայ բարքերի բարոյախոսական քննադատութեանը: Զուտ բարոյախոսութեամբ են ներծծված Նուրհանի «Ճերմակ ու սեւ» խորագրով ակնարկները, որոնք, ըստ էութեան ժամանակի մարդկանց դիմաստվերներն են, զուրկ, սակայն, որոշակիութեունից: Այս ակնարկներում ընդհանրապես քննադատվում են քաղքենիական բարքերը, ընտանիքի, առօրյա հարաբերութեունների ստվերոտ կողմերը և այլն: Երբեմն Նուրհանն իր ակնարկաշարում անդրադառնում է կոնկրետ անձանց, ժմյուռնահայ կրթական ու բարեգործական հիմնարկներին, սակայն նրա չարաբրանքում դրևթե միշտ գերիշխում է բարոյախոսական պաթոսը: Հանդեսում քանիցս արծարծվում է ժմյուռնահայ հարուստ երիտասարդութեան մի մասի անմիտ ու ցոփ կենցաղը, ավելորդ զվարճասիրութեունը և այլն: Մ. Նուպարյանն իր «Ամուսնական խնդիրն իզմիրի հայոց մէջ» հոդվածում պատասխարտում է ամուսնութեունից խուսափելու՝ երիտասարդների ձգտումը: Ունևոր դասի երիտասարդներից չատերը, նկատում է նա, ամուսնութեունը դիտում են իբրև առևտուր և սակարկութեան առարկա, չահույթի միջոց (1902, թիվ 1, էջ 23–28): «Արեւելյան մամուլի» այլ նյութերում նույնպես ուրվագծվում է թևթևամիտ, բայց և չահամոլ երիտասարդութեան դիմանկարը: Ընտանիքի բարեշրջման գործում կրոնական և սոցիոլոգիական ուսումնասիրութեունների նշանակութեունն էր ընդգծում Հանդեսի աշխատակից Մուշեղ վարդապե-

տը (1903, թիվ 15, էջ 337–340): Խնդրի բազմակողմանի քննարկմանը նպաստեց Սիպիլն իր «Հարցում մը» առաջադրումով (ն. տ., էջ 341–344), որտեղ հարցում էր արվում և՛ կնոջը, և՛ տղամարդուն՝ որոշելու նրանց դնահատած հատկանիշները հակառակ սեռի մեջ: Սիպիլը հետևում էր ֆրանսիական «Լա ֆամի» պալրեկտականին, որը նույն հարցադրումով էր հանդես եկել դրանից մեկ տարի առաջ: Զմյուռնահայ ընտանիքների հոռի բարքերն էր երգիծում հանդեսի աշխատակից Հ. Ալփիարը՝ իր սրամիտ ֆելիետոններում:

«Արևելյան մամուլը» ժամանակակից բարքերի անկմանը հակադրում էր զմյուռնահայ ոչ վաղ անցյալի նշանավոր դեմքերին, ընթերցողին ծանոթացնում նրանց կենսագրությանն ու գործունեությանը: Այս կարգի նյութերն ունեն ճանաչողական որոշակի նշանակություն և այսօր էլ կարող են նպաստել դաղթօջախի ու նրա մշակույթի պատմության ուսումնասիրությանը: Այդպիսի հրապարակումներից է Արտ. Հարությունյանի գրական դիմաստվերը՝ նվիրված Գալուստ Կոստանդյանին: Զմյուռնահայ փիլիսոփան այստեղ ներկայացվում է որպես խոշոր մտածող, որի «Մենթոտին վրա» աշխատությունը համարվում է պոզիտիվիստական փիլիսոփայության երևելի երկասիրություն, «հաւատական ու տրամաբանական, և կամ աստուածաբանական ու բնաղանցական ըմբռնումներու աւերակներուն վրայ գրական կամ գիտական մաքին յաղթանակը հռչակող ու քաջալերող գործ մը» (1902, թիվ 8, էջ 389): Զմյուռնացի փիլիսոփայի գործունեության բնութագիրը լրացնում է Մ. Նուպարյանը իր «Գալուստ Կոստանդեան (անձնական յիշատակներ)» հոդվածով (1903, թիվ 9, էջ 401–411): Նա գրում է, որ Գ. Կոստանդյանն իր գրադարանը՝ 1540 կտոր գիրք, նվիրել է Զմյուռնիայի հունական ընթերցատանը, որովհետև, նվիրատուի կարծիքով, հույները հայերից ավելի շատ էին դնահատում ուսումն ու առաջադիմությունը: Նույնպիսի հրապարակումներ է նվիրել «Արևելյան մամուլը» Մ. Մամուրյանին, Գ. Շահինյանին և զմյուռնահայ այլ գործիչների: 1850–1860-ական թթ. զմյուռնահայ գործիչների դիմաստվերների մեջ հաջողված է հատկապես Տիգրան

Հարություն Տետեյանի մասին Մ. Նուպարյանի հոդվածը, որտեղ հեղինակը, նրա ժամանակակիցն ու բարեկամը, վերհանում է «տպագրասեւեռի» տպագրական ու թարգմանչական գործունեության համազգային նշանակությունը (1901, թիվ 3, էջ 97–104, թիվ 5, էջ 190–194): Սրա հետ կապված՝ Մ. Նուպարյանը արժեքավոր տեղեկություններ է տալիս ղմյուռնահայ թարգմանական դպրոցի՝ Մ. Մամուրյանի, Գր. Չիլինկիրյանի, Գր. Մսերյանի թարգմանությունների վերաբերյալ: Մ. Մամուրյանի գործունեությունը լուսաբանող մի այլ հոդվածում («Յետին մնծարանք առ Մամուրեան»)(1904, թիվ 1, էջ 12–16) Մ. Նուպարյանն անդրադառնում է 1850-ական թթ. ղմյուռնահայ իրականության, կրթական ու մշակութային կյանքի ուշագրավ իրողություններին, հատկապես աշխարհաբարի զարգացման և ուսուցման գործում ղմյուռնահայ համայնքի զգալի ներդրմանը:

«Արեւելյան մամուլը» մշտապես հարուստ և բազմակողմանի լրատվություն է տվել գրական ու մշակութային իրողությունների, ինչպես և մտավորականության մասին: Այս թեմայով հանդեսին կանոնավորապես թղթակցում էին «Շահնուրի բարեկամը» և «Վաղինակ»[1] ստորագրողները, ինչպես նաև «Սեթը» և «Ճարհատ Նորիսը»[2]: «Շահնուրի բարեկամը» քննադատական աւուղջ դիտողություններ էր անում Կ. Պոլսի ազգային հաստատությունների, Կ. Պոլսի պատրիարքության և Երուսաղեմի միաբանության փոխհարաբերությունների, այս վերջինի ինքնագլուխ կեցվածքի և դրանից բխող անվերահսկելի ծախսերի և այլնի վերաբերյալ: Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքը, գրում է նա, անտարբեր է ազգի

[1] «Շահնուրի բարեկամը» ստորագրում էր Բ. Կյուլեսերյանը, իսկ «Վաղինակ» ստորագրությամբ հանդես են եկել միանգամից լրագրական երեք գործիչներ՝ Ս. Դավթյանը, Հ. Շահրիկյանը (Աւոմ) և Ս. Չյոմլեքճյանը (տե՛ս Հովակիմյան Բ., նշվ. աշխ., էջ 423): Տվյալ դեպքում հնարավոր է, որ ծածկանունը պատկանում է Ս. Դավթյանին, որը ակտիվորեն աշխատակցել է «Արեւելյան մամուլին» (տե՛ս «Արեւելյան մամուլ» հանդեսի մատենագիտություն, էջ 189): Չի բացառվում, որ այդ ծածկանունով հանդես գար նաև այլ հեղինակ:

[2] «Սեթ»՝ Վ. Մալեզյան, «Ճարհատ Նորիս»՝ Խ. Քեշիշյան (տե՛ս Հովակիմյան Բ., նշվ. աշխ., էջ 395, 472): Երկուսն էլ տնակաորեն աշխատակցել են «Արեւելյան մամուլին»:

մտավոր ու նյութական կարիքների հանդեպ, իսկ նրա դոյացրած անվերջ պարտքը ծանրանում է ժողովրդի ուսերին (1903, թիվ 14, էջ 323–328): Նույն կարծիքին էր նաև Վաղինակը, որն իր «Պոլսոյ կեանքը» մշտական խորագրով նյութերում նկատում էր, որ ժողովուրդը Երուսաղեմի վանքի ինքնարաւ կացութիւնը հաստուցել է նրա 40 հազար ոսկու չափով պարտքը փակելով, որից հետո պետք է վճարի վերստին. հայտնված 15 հազար ոսկու հատնող պարտքը: Վաղինակը իրավացի է, երբ դրա պատճառն է համարում վանքի ինքնագլխութիւնը, ազգին հաշվետու չլինելու տխուր հետևանքը (1904, թիվ 34, էջ 832–833): Եվ Շահնուրի բարեկամը և Վաղինակը արժեքավոր դիտողութիւններ են անում պոլսահայ մամուլի վերաբերյալ, ցույց տալիս ժամանակի արևմտահայ լրագրութիւնը հատուկ մի քանի ընդհանուր թերութիւններ, ինչպիսիք էին թեմանների միօրինակութիւնը, կարևոր հիմնահարցերի պակասը դավառական թղթակցութիւններում, կատածելի տվյալներն ու կողմնակալութիւնը և այլն (1903, թիվ 23, էջ 591–595, 1904, թիվ 7, էջ 181–185): Ինքնատիպ են պատկերված Վաղինակի դրչի տակ ուրվագծվող՝ ժամանակի պոլսահայ մամուլի և հրապարակախոսութեան գործիչները՝ Բասիմը (Մ. Գոչունյան), Ե. Տեր-Անդրեասյանը, Վ. Թոշիկյանը, Ա. Այվազյանը, Ա. Ալպոյաճյանը, Դ. Խաչկոնցը, Բ. Քեչյանը, Բ. Պոզաճյանը, Ժ. Շիրակացին (Ս. Զյոմլիքճյան) և ուրիշներ (1904, թիվ 11, էջ 270–277): Վաղինակի «Պոլսոյ կեանքը» թղթակցութիւնները. կամ ավելի ճիշտ՝ քրոնիկները ունեն և մեկ կարևոր արժանիք. այստեղ բացահայտվում են 1900-ական թթ. պոլսահայ լրագրողների մի շարք ծածկանուններ, որոնք այսօր ևս կարող են հետաքրքրել հայ մամուլի պատմաբանին:

Հայ մամուլի պատմութեյան ուսումնասիրութեյան հայրողված փորձ է Ա. Ալպոյաճյանի «Կրօնական թերթերը մեր մէջ» ընդարձակ հոդվածը (1905, թիվ 13, էջ 351–353, թիվ 14, էջ 374–378, թիվ 15, էջ 399–403): Հեղինակը հետաքրքիր բնութագրեր է տալիս Հ. Տերոյենցի «Երևակին», «Հույս» և «Սիոն» թերթերին և այլն: Կարելի է չհամաձայնել Ա. Ալպոյաճյանին՝ ազգային եկեղեցու կրո-

նաթերթերի սկզբնավորման պատճառների հարցում, երբ նա ակնհայտորեն դերագնահատում է բողոքական մամուլի դեմ հայ եկեղեցու մղած պայքարը, սակայն և անվիճելի է, որ կրոնական մամուլի պատմության այս հետազոտությունը մեզանում մնում է իրրև եզակի օրինակ՝ առ այսօր:

Հայ մամուլի հանդեպ տրամագծորեն այլ, գրեթե ամբողջովին բացասական վերաբերմունք ունի «Արևելյան մամուլի» վաղեմի աշխատակից Կ. Ստեփանյանը: Մասնագիտությամբ այդ իրավաբանի հաճախադեպ և ծայր աստիճանի չարությամբ լեցուն հրապարակումները փաստորեն լուտանքներից այն կողմ չեն անցնում: Հայ մամուլը նա համարում է մամուլի ընդամենը անշնորհք ընդօրինակություն՝ զուրկ սեփական որևէ արժեքից: Նույն նիհիլիստական տեսակետն ունի զմյուռնացի այս տարօրինակ դրագետը հայ դրականության և դրաքննադատության, թատրոնի, երաժշտության, դպրոցի և այլնի մասին (1905, թիվ 28, էջ 705–710, թիվ 30, էջ 753–758): Գր. Զոհրապի նովելների («Մարապետ», «Փոթուրլըն») լիովին և ոճի վերաբերյալ նրա քմահաճ մեկնաբանությունները պետք է համարել մեծ դասականի ստեղծագործություններըթերագնահատելու ձախող փորձ (1900, թիվ 11, էջ 448–450, թիվ 13, էջ 515–519): Հր. Մամուրյանը ակնհայտորեն չէր ընկալել արդարացի քննադատության և ազգային մշակույթի հանդեպ ժխտական վերաբերմունքի տարբերությունները՝ իր հանդեսի էջերում տեղ հատկացնելով այս հեղինակին, որի անունը չրջանառվել էր, ինչպես տեսանք, նաև «Մանզումեի էֆքյար»-ի էջերում: Իր տաղանդավոր հեղինակների շնորհիվ հանդեսը ստացավ գրական ու դրաքննադատական լուրջ բովանդակություն, որ Մամուրյանհոր հանդեսի արժեքավոր ավանդույթների չարունակությունն էր նշանակելու: Ռ. Զարդարյանը նախապատվությունը տալիս է գավառական կյանքի դեղարվեստական պատկերմանը: Նրա «Պուտ մը ջուր», «Տէրտէրին հարսը», «Մրոտենց տղաքը» և այլ պատմվածքներում հանդես են գալիս ռոմանտիկ շնչով, բայց և դրամատիկական լարվածությամբ հատկանշվող իրական հերոսներ: Զգաց-

նել է տալիս հեղինակի տադնապն իր պատկերած անձանց, նրանց աշխատանքի ու միջավայրի միջև հակասությունների խորացման համար: Տագնապներով է լեցուն նաև Ռ. Զարդարյանի «Կարօտներ» արձակ քերթվածքը (1904, թիվ 38, էջ 925–928): Այստեղ կենսական չնչով լի փարթամ բնանկարին է հակադրվում ամայացող հայրենիքի համայնապատկերը: Թվում է, Ռ. Զարդարյանի բանաստեղծական խոհերը ակնարկում են Սասունի 1904 թ. ինքնապաշտպանության հետ կապված իրողություններըː

Արևմտահայաստանի բնության, միջավայրի և հայ մարդու ներքին ներդաշնակության, գյուղական կյանքի ղրվագներով է ուրվագծվում նաև Թլկատինցու պատկերած աշխարհը: «Տունդարձը», «Ճամփորդն ու ճամփեցնողները», «Ամառին արմատանը» և այլ պատմվածքներում Թլկատինցին բացահայտում է հայ գավառական կյանքի ծալքերը, դրանց խորքերում դժվարին իրականության դեմ-հանդիման կանգնածների ներաշխարհի հակասությունները: Իր գեղարվեստական և հրապարակախոսական գործերում Թլկատինցին անդրադարձել է պանդխտության չարիքին, հատկապես Ամերիկա գաղթող խարբերդցիների ճակատագրին: 1907–1908 թթ. հանդեսում տպագրած իր «Սխալ, սխալ», «Եկեք, տէր եղէք» ակնարկներում Թլկատինցին հայրենիք վերադառնալու, այն չենացնելու և վերածնելու ռոմանտիկական կոչ է անում հայրենիքից հեռացած պանդուխտներին ու գաղթականությանը: Ռ. Զարդարյանի և Թլկատինցու ստեղծագործությունները «Արևելյան մամուլի» գրականությանը տալիս են արդիական նկարագիր և, մյուս կողմից, ցուցադրում այսպես կոչված «գավառական գրականության» կայացումը՝ իրապաշտական բովանդակության և ձևի տեսակետից:

«Արևելյան մամուլի» էջերում չարունակվում էր հյուրընկալվել Ռ. Որբերյանն իր արձակ գործերով ու բանաստեղծություններով: Նրա պատմվածքներում առկա են ռոմանտիկական այժմեները ու զգացումները, բայց դրանցում հաճախ ներխուժում են իրական, գավառական կյանքի պատկերները: Նրա արձակ գործե-

րում կան և՛ անհույս սիրո («Նորէն նարկիլէն»), և՛ իրականի ու միստիկականի, պանդխտության ու ճակատագրական չարիքի («Օձու սէրը») մոտիվները (1900, թիվ 23, էջ 901–903, թիվ 24, էջ 940–943): Ռ. Որբերյանի բանաստեղծությունները հաջողված խոհական դրվածներ են, նաև՝ քնարական, որոնք վկայում են դարասկզբի հայ չափածոյի մեջ նրա ինքնատիպ և մնայուն ներդրման մասին: Իր բազմաբովանդակ հոդվածներում և ակնարկներում, որոնք չոշափում են հանրության կողմից լքված մտավորականների, ուսուցիչների և միջին խավերի մարդկանց հուզող խնդիրներն ու ցավքերը, Որբերյանն ի հայտ է բերել մարդասիրական խոր զգացումներ: Հետաքրքիր են նրա անդրադարձները Զմյուռնիայի և Կ. Պոլսի ազգային-հասարակական կյանքին, արվեստին առնչվող իրողություններին: Գավառական իրականության հարցերին Որբերյանն անդրադարձել է իր ճամփորդական նոթերում և ակնարկներում:

Շաբաթաթերթերին չարունակում էր աշխատակցել Հ. Ալփիարը՝ 1894-ից ի վեր դեևս Մ. Մամուրյանի ժամանակներից զառնալով հանդեսի դրծուն հեղինակներից մեկը: Ալփիարի երգիծանքը հատկանշվում է իր կենցաղային ուղղվածությամբ, սրամիտ ու անակնկալ շրջադարձերով և ավարտով, որ, այսուհանդերձ, հենվում է իրական ճշմարտությունների վրա: Ալփիարը գրում է թեթև ոճով, անշուշտ, ֆրանսիական երգիծանքի նկատելի ազդեցությամբ ու նրբությամբ: Նրա արտաքուստ զրքային ու աննկզոտային բնույթի հումորը թեկադրում է իր կենսականությամբ կաշառող զգացում, որովհետև հեղինակը հիանալի է ճանաչում իր շրջապատը, նրա հերոսներին ու հոգեբանությունը: Ալփիարի երգիծանքի մեջ սոցիալական տարրը խնամքով ծածկված է սրամտությունների աւօրեական հեղեղի տակ, բայց այդպիսի տարրը, այսուհանդերձ, կա և ավելին, ոչ քիչ դեպքերում ընկած է այս ինքնատիպ երգիծաբանի պատումների հիմքում: Մի երգիծական զրույցում ուրվագծվում են զմյուռնացի անօժիտ աղջիկները, որոնք բնականաբար, չեն ամուսնացել հենց այդպիսի կացության պատ-

ճառով: Երգիծաբանն առաջարկում է նրանց՝ գործի դնել իրենց հմայքները և «գլխէ հաննլ» վնասացուներին, բայց «որու կըսես»: Եվ եզրակացությունը. «Մարդ մը գլխէ չենն կրնար հաննլ... բայց անգամ մը, որ կը կարգուին, խաչ կը հաննեն զայն» (1902, թիվ 18, էջ 799): Յուրահատուկ վրեժ սոցիալական անբավարարվածության, ուրեմն և անարդարության դեմ: Ալփիարը բավական հաջողությամբ վերարտադրել է զմյուռնահայ կյանքի մի քանի կողմերը երգիծական թռուցիկ շեշտադրումներով՝ ծաղրելով երիտասարդության թեթևամտությունը, հասարակության որոշ մասի անփառությունը, տեղական բարքերը և այլն (1904, թիվ 3, էջ 91–95, 1904, թիվ 8, էջ 209–211): Ճանաչողական լիցք են պարունակում Ալփիարի այն գործերը, որոնք վերաբերում են տեղի մտավորականությանը, նրա լուսաւորական և ստեղծագործական գործունեությանը: Ուշագրավ է «Արեւելեան մամուլի» խմբագրատանը» երգիծական ակնարկը՝ հանդեսի աշխատակիցների երգիծական դիմանկարներով ու նրանց ծածկանունների բացահայտումներով (1904, թիվ 13, էջ 327–332): Պակաս ուշագրավ և սրամիտ չեն պոլսական տիպարներին Ալփիարի նվիրած երգիծական քրոնիկները: Քրոնիկները հավասար ուժով չեն գրված, երբեմն զգացնել են տալիս երգիծանքի ոչ առարկայականությունն ու վերացականությունը, որ Ալփիարի ծաղրը դարձնում է ինքնանպատակ և որպիսիք ոչ քիչ դեպքերում են հանդիպում նրա ստեղծագործության մեջ: «Պոլսական տիպարների» մեջ հաջողված են «Ռևոկիւտարցի կինը», «Գում գաբուցի կինը», «Գատը գեղցուհին» քրոնիկները: Բերացի հարուստ կնոջ նկարագիրն է տրված «Պոլսոյ բարիզուհիները» ակնարկում՝ հեղոսուհու քմայքներով ու օտարասիրությամբ:

Ալփիարը հաջողությամբ ծաղրել է պոլսահայ անուսաղանդ երգիծաբաններին, որոնք «ամենէն անհամ խեղկատակութիւնը ստեղծեցին Պարոնեանի դպրոցը չարունակելու պատրանքին տակ» (1904, թիվ 15, էջ 357): Նույն կերպ, նրա զրչի թիրախն են դարձել միմյանց հար և նման քրոնիկագիրները, գավառական լրագրողներն իրենց անճաշակ տնտեսաչոփով ու միապաղաղ թղթակցություն-

ներով, նմանակելու ճիգերով և այլն: Լրագրական հոդի բարքերի, քաղքենիական թեթևամտության ու տափակության սրամիտ երգիծումներով Ալփիարը, անտարակույս, արդիական տեսք էր տալիս հայ երգիծանքի ավանդական ուղղություններին՝ շրջանառելով հասարակականորեն ոչ լայն չառավիղների երգիծանքի սահմաններում: Նշենք նաև, որ «Արևելյան մամուլին» Ալփիարն աշխատակցել է իր հայտնի «Քրիղանթէմ» ծածկանունով:

1903–1908 թթ. «Արևելյան մամուլում» իր ստեղծագործությունները է տպագրել Զ. Եսայանը: Նրա ծավալուն արձակ գործերից այստեղ տպագրվել են «Կեղծ հանճարները», «Սկիւտարի վերջալոյսները», ինչպես և մի շարք նովելներ՝ «Սատարոֆ», «Աչքերը», «Հանելուկը», «Փոթորկի օր մը» և այլն: Հայ նորավիպագրությունը Եսայանը հարստացնում է իրապաշտական նոր գծերով և հատկապես հոգեբանական նոր շերտեր հայտնաբերելով միջավայրի ու անհատի փոխհարաբերություններում: Ժամանակի հայ գրաքննադատական մտքի խորացմանը տաղանդավոր գրագիտուհին նպաստեց 1905 թ. հանդեսում տպագրած «Գրական նոր ձգտումները Ֆրանսայի մէջ», «Խորհրդապաշտները և Ռընե Կիլ» գրաքննադատական հոդվածներում, որտեղ արժեքավորում էր ֆրանսիական գրական նորագույն ուղղությունները՝ հատկապես անդրադառնալով դեկադանսի ու սիմվոլիզմի դրսևորումներին և դրանց բանաստեղծական առանձնահատկություններին: Հայ գեղարվեստական արձակի, առավել ևս նրա զարգացման ընթացքը գնահատելու տեսանկյունից ևս Զ. Եսայանը ճևակերպում էր ժամանակակից հարցադրումներ՝ իր «Վիպական սեռի վրայ» հոդվածում:

Արևմտյան դեկադանսի և սիմվոլիզմի գեղագիտական արժեքի մասին «Արևելյան մամուլում» հանդես է եկել Արտ. Հարությունյանը: «Ֆրանսական գրականութիւն» հոդվածում (1903, 15 փետ., էջ 148–151) նա դեկադանսը համարում է «հիւանդագին ու նրբին զարգացման արտայայտութիւն, բարնշրջման ուշագրաւ փուլ մը» գրականության մեջ: Նկատի առնելով դեկադանսի հանդեպ հայ գրողների տեսական ու գործնական հետաքրքրասիրությունը,

Արտ. Հարությունյանը նրանց ուշադրությունն ուղղում էր դեպի այդ ուղղության տեսական հիմքերը: 1903 թ. այս բացը մասամբ լրացրել է ինքը՝ Արտ. Հարությունյանը, թարգմանելով Ֆրանսիական դրող և դեկադենտ Ռ. դը Գուրմոնի «Դիմակներու գիրքը»: Ժամանակի արևմտահայ դրականության ընթացքն ու բնույթը այս հեղինակը որոնող դրչով և լուրջ ընդհանրացումներով ներկայացրել է իր «Գրական դիմաստուերներ» հոդվածաշարում: Այստեղ նա արժեքավորել է Ե. Տեմիրճիպաշյանին, Թ. Թերզյանին, Ա. Անտոնյանին, Մ. Աճեմյանին, Ադ. Փանոսյանին և այլոց, որոնք, հիրավի «նոր ուղիներ բացող անհատականություններ» էին[1] և դրաքննադատի համար չատ կարևոր՝ ազգային արժեքները հարստացնելու տեսակետից: Պաշտպանելով սկզբունքայնության մեծ նշանակությունը դրաքննադատության մեջ, Արտ. Հարությունյանը դատապարտում էր կեղծիքն ու կոպմնակալությունն այս ասպարեզում: Սիպիլի «Ցոլքեր» ժողովածուի առթիվ նա նկատում էր, որ «կիրքը քննադատութենան մէջ պատուական է միայն գաղափարին, հաւատքին սպասարկութենանը համար» (1902, թիվ 18, էջ 786): Նույն կերպ, Արտ. Հարությունյանը իր համամտությունն էր հայտնում Հ. Մամուրյանին և Մարային՝ (Ա. Անտոնյան), որոնք քննադատում էին դաղափարազուրկ, հասարակական կարծիքից կտրված հայ մամուլն ու լրագրողներին: Արտ. Հարությունյանը որոշակիություն էր մտցնում այս քննադատության մեջ՝ դատապարտելով ժողովրդի նախապաշարումների ու տգիտության խորքերում գործառող բարոյազուրկ մամուլը (1902, թիվ 3, էջ 168–169): Դեկադանսի արվեստի անհատապաշտությունը ևս Արտ. Հարությունյանը ի վերջո ծառայեցնում է ազգային դրականության նկարագրին, «ցեղայնութենան և ինքնուրոյնութենան առողջ ու կենսունակ դաղափարին» (1902, թիվ 17, էջ 731)[2]: Այստեղից՝ դավառի

---

[1] Թամրազյան Հ., Բանաստեղծության հազարամյա խորհուրդը, էջ 213:

[2] Հիրավի, հիմնավոր է մերօրյա հետազոտողի այն եզրակացությունը, որ Արտ. Հարությունյանի հետամտած իդեալը «ինքնուրոյն հայրենիքի» իդեալն էր, «երե ոչ բա-

դրականության, «վաղուան գրականութեան» զարգացման լայն հեռանկարների համակողմանի պաշտպանությունը Արտ. Հարությունյանի քննադատության մեջ: Ռ. Զարդարյանի, Զ. Եսայանի և մյուս գրաքննադատների հետ միասին Արտ. Հարությունյանը «Արևելյան մամուլին» վերապահում էր առաջատար տեղերից մեկը՝ ժամանակի հայ գրական հանդեսների մեջ:

Հայ թատրոնի զարգացման մտահոգությամբ՝ Ա. Նավարյանը խորաթափանց գրախոսականներ է տպագրել Ֆրանսիական թատրոնի, Սառա Բերնարի, Մյունե Սյուլլիի և այլոց դերասանական արվեստի վերաբերյալ: Ռուս գրականությունը արևմտահայերին մատչելի դարձնելու իր փորձերում նա ուշադրավ մեկնաբանություններով է բացահայտել Լ. Տոլստոյի ստեղծագործության մի քանի կողմերը, հիմնավորել այդ գրողի հանդեպ Եվրոպայում ստեղծված մեծ հետաքրքրությունը, վերլուծել Մ. Գորկու «Վանյա» պիեսը և այլն:

Ֆրանսիական իրապաշտության և հատկապես Զոլայի ստեղծագործության հանդեպ «Արևելյան մամուլը» Մամուրյան-Հոր ժամանակներից ունեցած իր խիստ բացասական կարծիքը պետք է փոխեր՝ սկսելով Հ. Դադանճյանի ոչ հետևողական, դեռևս տատանվող մոտեցումով: Ըստ այս հեղինակի, Զոլան ոչ թե դրվատում (ինչպես կարծում էր Մ. Մամուրյանը), այլ դատապարտում է իր ցուցադրած կյանքի հոռի կողմերը, բայց ընթերցողը յուրացնում է ոչ թե դրանից բխող ճիշտ եզրակացությունը, այլ հենց այդ հոռի կողմերը (1902, թիվ 24, էջ 1005–1010): Այս մոտեցմամբ, ինչպես տեսնում ենք, փրկվում է Զոլայի, որպես գրողի մեծությունը, բայց ոչ ամենևին՝ նրա ստեղծագործության մեծությունը: Հակառակ Հ. Դադանճյանի, հանդիսի մի այլ հեղինակ՝ Ծարհատ Նորիսը քննադատում է Բ. Փիչյանի բացասական դիրքորոշումը Զոլայի «անբարոյիկ» գրականության և հայ ռեալիստական գրականության հանդեպ (1902, թիվ 12, էջ 542–547): Փաստորեն մերժելով Զոլային

ղարական, ապա պեր ժողովրդի հոգևոր ինքնորոշման իմաստով» (Մնացականյան Լ., Հոդվածներ, ուսումնասիրություններ, էջ 25):

մեղսագրված «անբարոյությունը», Ա. Նավարյանը նրա ստեղծագործությունը բնութագրում էր մարդասիրության, տառապյալի «ցաւն ամոքելու, անոր ճակատագիրը բարւոքելու» տեսակետից (1903, թիվ 5, էջ 101):

Ջոլայի բնապաշտության վերաբերյալ «Արևելյան մամուլն» իր հետաքրքրություններն ամփոփից յուրահատուկ վերջաբանով՝ տարիներ անց թարգմանաբար տպագրելով Ժ. Պելիսիեի «Էմիլ Զոլա վիպական» հոդվածը՝ նվիրված ֆրանսիական դասականի ստեղծագործության գիտական հիմքերին (1907, մրտ. 7, էջ 240–247):

1908 թ. սովորական չաբաթական թվահամարների հետ միասին «Արևելյան մամուլը» տպագրել է երեք նուամայա բացառիկ թվեր, որոնք զլխավորապես ունեն զրական և գրաքննադատական բովանդակություն: Դրանցում տպագրվել են նույն հեղինակները՝ Ա. Նավարյանը, Հ. Դադանճյանը, Սիպիլը, Մ. Պարսամյանը, Հ. Ալփիարը, Մ. Մեծարենցը, Հ. Մաւքը և ուրիշներ: Այդ նուամայանները փաստորեն հանդիսի զրական հավելվածներն էին, որոնք կոչված էին լրացնելու նրա զրական դիմագիծը և հաստատելու նրա տեղը հայ զրականության անդաստանում: 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո «Արևելյան մամուլը» դարձել է սահմանադրական ռամկավար կուսակցության դաղափարների քարոզիչը և տպագրել այդ կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունը՝ 1908 թ. նոյեմբեր–դեկտեմբերի թվահամարներում:

«Արևելյան մամուլը» ևս բավական հիմնավոր հերքեց Ադանայի կոտորածը սուլթանի կողմնակիցների վրա բարդելու երիտթուրքական քարոզչությունը: Մերկացնելով պաշտոնական վարկածը, չաբաթաթերթը ուշադրություն էր հրավիրում այս հարցում օսմանյան խորհրդարանի և կառավարության առնվազն տարօրինակ լռության վրա՝ նկատելով նաև, որ դեպքերի առթիվ ներքին գործերի նախարարը տվել է միայն «անհեթեթ ու կցկտուր բացատրութիւններ» (1909, թիվ 18, 510): Պարբերականը Ադանայի նախկին կառավարչին համարում է չարդերի կազմակերպիչ, որի գործողությունները հայերի դեմ մշակվել են նախապես և բացահայտորեն, ու չնայած դրան, «Օսմանեան խորհրդարանը կը վարանի այդ

սրիկան յանցաւոր նկատելու եւ դատի ենթարկելու» (ն. տ., էջ 511): Արեւմտահայ թերթերի մէջ «Արեւելյան մամուլն» աչքի է ընկնում իրադարձությունների չտապ արձագանքելու և իրազեկության իր կարողությամբ: Դեռևս 1909 թ. ապրիլին նա տպագրել է Մերսինի և Ալեքսանդրեթի օտարերկրյա տերությունների երկու փոխհյուպատոսների տեղեկագրերը կոտորածների վերաբերյալ՝ հավաստի տվյալներով: Այստեղ նկարագրվում են ապրիլի 1–4-ի՝ Ադանայի և Տարսուսի արյունալի դեպքերը: Բազմաթիվ հայերի հետ, ըստ Մերսինի փոխհյուպատոսի, այս քաղաքներում կոտորվել են նաև 500 հույներ: Նա հայտնում է, որ ջարդերը չարունակվել են այնքան ժամանակ, մինչև նավահանգիստ եմ մտել գերմանական, ֆրանսիական և անգլիական ռազմանավերը: Նրանց մուտքը ջարդարարներին կասեցնում է մի քանի օր, բայց ապրիլի 12-ին «Սելանիկ հասած 2000-ի չափ զորքերը (թուրքական – Ա. Խ.), որոնք իրրեւ թէ պիտի պահպանէին հանդարտութիւնը, կը յարձակին հայոց թաղին վրա նոյն կատաղութեամբ... հրդեհելով եւ թալանելով» (1909, թիվ 18, էջ 520):

Ալեքսանդրեթի փոխհյուպատոսի տեղեկագրով ևս «Արևելյան մամուլը» կարևոր տեղեկություններ է հայտնում դեպքերի մասին: Դյորթ Յոլի (Զոք Մարզվանի) գյուղերում ապրող 5.000 հայերը պաշարված էին 15.000 քրդերով և հարյուրավոր չերքեզներով[1]: Նրանց էին մյացել Բայասի բանտից ազատ արձակված թուրք քրեական հանցագործները: Իսկ եվրոպական ռազմանավերը ոչինչ չեն արել պաշարվածներին օգնելու համար, քանի որ, ըստ փոխհյուպատոսի, հրաման չունեին ոչ զորք ափհանելու և ոչ էլ շրջականները պահպանելու (1909, թիվ, 18, էջ 522):

«Արևելյան մամուլի» հանկարծակի դադարը, թերևս, կապվում է խմբագրական-հրատարակչական հանգամանքների կամ Հրանտ Մամուրյանի խմբագրական նախասիրությունների հետ: 1909 թ. հետո հանդեսն այլևս չի հրատարակվել:

---

[1] Ի վերջո, Դյորթ Յոլում կուտակվել էին «շրջակայքի հայ գյուղերից փախած ավելի քան 11.000 հոգի», որոնք միանալով տեղացիներին՝ մարտնչեցին ջարդարարների դեմ (տես Սիմոնյան Հր., Հայերի վանգվածային կոտորածները Կիլիկիայում, էջ 128):

«ՄԱՍԻՍ» ԳՐԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹԸ (1900–1908)

«Մասիսը» 1900 թ. սկզբներին հանդես եկավ որպես գրական հրատարակություն՝ կրելով «շաբաթաթերթ ազգային, քաղաքական, գրական» ենթավերնագիրը: Արտոնատերը դեռևս 1852 թ. այդ թերթը հիմնած Կ. Ուլոյճյանն էր, տնօրեն-խմբագիրը՝ Տիգրան Արփիարյանը (Արփիար Արփիարյանի կրտսեր եղբայրը): Վերջինս կարողացավ ըմբռնել դարասկզբի գրական ու գեղագիտական նոր պահանջները արևմտահայ հասարակության մեջ, այլև իր շուրջ համախմբեց գրական նոր բարձրացող սերնդի փայլուն ներկայացուցիչներին՝ Արտ.Հարությունյանին, Ա. Անտոնյանին, Օ. Չիֆթե-Սարաֆին, Ռ. Սևակին, Տ. Չոկյուրյանին, Ռ. Զարդարյանին, Հ. Գազանճյանին, Զ. Եսայանին և այլոց: Աշխատակցում էին նաև անվանի գրողներ՝ Գր. Զոհրապը, Ռ. Պերպերյանը, Ե. Տեմիրճիպաշյանը, Հ. Ալփիարը, Ալփասլանը, Ռ. Որբերյանը, Ա. Ալպոյաճյանը, Ենովք Արմենը, Մ. Մեծարենցը և ուրիշներ: Նորացված «Մասիսը» հրապարակ էր իջնում որոշակի ծրագրով ու նախասիրություններով՝ ըստ ամենայնի նպաստել հայ գրականության զարգացմանը, ընթերցողին շարունակաբար ծանոթացնել ոչ միայն ազգային գրական արժեքներին, այլև նրա ուշադրությունն ուղղել դեպի եվրոպական գրական ու գեղագիտական ուղղությունները՝ սկսած նախընթաց դարաշրջաններից և վերջացրած ժամանակակից գրականությամբ ու գրական դեմքերով: Առաջին անգամ «Մասիսն» էր, որ Կ. Պոլսի մամուլում այդօրինակ աննախընթաց ծավալով և աշխատակիցների ստվար խմբով ճեռնարկեց գրական ու գեղագիտական, գրաքննադատական գործերի, ինչպես և թարգմանական գեղարվեստական ստեղծագործությունների ու գրաքննադատական բնույթի նյութերի տպագրությանը: Ութ տարի շարունակ, մինչև 1908 թ., «Մասիսը» երբևէ չչեղվեց այս ուղուց՝ միշտ մնալով գրական առաջատար հրատարակություն ժամանակի մամուլի ասպարեզում:

Անշուշտ «Մասիսն» ուներ հետաքրքրությունների շատ ավելի լայն շառավիղ, քան զուտ դրական ու դրաքննադատական հետաքրքրությունն էր: Ժամանակի Կ. Պոլսի և Արևմտահայաստանի հանրային, մշակութային, գիտական ու տնտեսական խնդիրները ևս, ավելի կամ պակաս չափով, արծարծվել են շաբաթաթերթում՝ դրան տալով ընդհանրական ու հանրամատչելի բովանդակություն: Այդուհանդերձ, «Մասիսի» համար առաջնայինը մնում էր գեղարվեստական դրականությունը՝ իր զարգացման արդիական ընթացքով և մղումներով: Դրան համապատասխան, «Մասիսը» զգալիորեն խթանեց հատկապես դրաքննադատական հոդվածների ու դրախոսականի զարգացումը՝ սկսած ինքնուրույն դրականության վերաբերյալ դնահատանքի խոսքից և վերջացրած եվրոպական, ռուսական ու ամերիկյան դրականությունների թարմ ու նորովի բնութագրումներով: Պակաս կարևոր չէր նաև, որ «Մասիսը» մշտապես մոտեցում չի ցուցաբերել դրականության, դրա ձևի ու բովանդակության, իրականության հետ դրական երկի փոխհարաբերությունների և սրանց առնչվող այլ հարցերի նկատմամբ: Շաբաթաթերթը, հատկապես Տ. Արփիարյանի խմբագրության տարիներին (1900–1907) և ապա, հիմնականում նաև դրանից հետո, երբ խմբագրապետն էր Ենովք Արմինը (1907–1908), ցուցաբերել է դրական մտահոգություններից բխող կարծիքների բազմազանություն՝ ձգտելով արտացոլել դրական-գեղագիտական ըմբռնումների ընդհանուր պատկերը: Դրանով է բացատրվում, հավանաբար, դրական բանավեճերի շարունակությունը շաբաթաթերթի էջերում, որ, ի դեպ, ժամանակի պարբերականների մեջ ավելի զգալի ու տպավորիչ է «Մասիսում»: Այս իմաստով «Մասիսը» և՛ ավանդապաշտ էր, և՛ նորօրյա, գրական ուղղություններին ունկնդիր, այն անվերապահորեն չի հակվում տեսակետներից մեկի կամ մյուսի, այս կամ այն կողմը, այլ հիմնականում փորձում է, ըստ հնարավորին, ընթերցողին տեղեկատվություն տալ գրական ընթացիկ կյանքի և իրողությունների մասին:

Այս ամենի հետ միասին, «Մասիսը» հասարակական կարծիք էր ստեղծում ազգային գրականության նկարագրի մասին: Այս վերջինը հնարավոր չէր բացատրել սոսկ ժամանակակից հայ գրողների երկերի և դրանց վերաբերյալ գրաքննադատական նյութերի հրապարակումներով: Իորապես համոզված լինելով, որ ազգային գրականության դիմագիծը և առանձնահատկությունները սկիզբ են առնում դեռևս ազգի մշակույթի զարգացման սկզբնական ժամանակաշրջաններում, «Մասիսը» առավել ուշադրություն էր դարձնում անմիջապես նախորդող ավագ սերնդի, ասել կուզի՝ 19-րդ դարի 2-րդ կեսի հայ գրողների ու մտավորականների դիմանկարային վերարտադրությանը՝ փորձելով ցույց տալ դրանց նշանակությունը իր օրերի գրականության շարունակական ընթացքի համար: Նկատելի է նաև շաբաթաթերթի դպույշ մոտեցումը գրական նորաձևություններին, արևմտյան, հատկապես ֆրանսիական գրական դեկադանսի հայ հետևորդների ծայրահեղություններին (Տ. Արփիարյանի խմբագրության տարիներին): Սրանց հանդեպ «Մասիսը» շատ ավելի զուսպ վերաբերմունք ուներ Տ. Արփիարյանի խմբագրության շրջանում, թեև, ըստ հարկին, մերժում էր առհասարակ չափազանցություններ: Հատկանշական է, որ 1901 թ. մարտին «Մասիսը» տպագրեց Ե. Տեմիրճիպաշյանի «Ապրող գիրքը» հոդվածը «Հարմակ» ստորագրությամբ (1901, թիվ 9, էջ 135–137), որտեղ նա իրավացիորեն պնդում էր, որ հասարակական ազդեցություն չեն կարող ունենալ և հարատևել գրական այն երկերը, որոնք «խորունկ դաղափարի մը կամ հզօր զգացումի մը վրայ չեն խարսխուիր» (նշ., էջ 136): Ինքը՝ Ե. Տեմիրճիպաշյանը, իր անկապաշտական ու միստիկական պատկերներով լեցուն շատ գործերում կարծեք ճանապարհ էր հարթում և ըստ այդմ էլ փաստարկ դառնում ձևապաշտ նորօրյա բանաստեղծների համար: Տպագրելով դրան ամբողջովին հակասող և դեղագիտական տեսանկյունից միանգամայն հստակ ու հավասարակշիռ՝ նրա այս հոդվածը, «Մասիսը» փաստորեն ողջամտության էր մղում արևմտյան բոհեմով արբշիռ երիտասարդ ստեղծագործողներին:

Գրականության մեջ ձևի կարևորությունը, այսուհանդերձ, և դարձյալ ֆրանսիական գեղագիտական պատկերացումների ուժեղ ազդեցությամբ, չարունակում էր իրեն զգացնել տալ 1900-ական թթ. պոլսահայ բանաստեղծության մեջ, որ սկիզբ էր առնում դեռևս 19-րդ դ. 2-րդ կեսից՝ 1880-ական թթ. ռևալիստական շարժման պայմաններում, երբ, թվում է, ռոմանտիզմի դեմ երիտասարդ ռևալիստների («իրապաշտների») առարկությունները ամենից առաջ ուղղվում էին Հյուգոյի և ֆրանսիական ռոմանտիզմի այլ այլանների դեմ: «Մասիսում» արտացոլվել է նաև ձևին նախապատվություն տվող և ավանդական դարձած տեսակետը: Շաբաթաթերթի հեղինակներից Ե. Մնսյանը, որ բավական հաջող թարգմանություններ էր անում անգլերենից, հենվում էր անգամ Շեքսպիրի, այնուհետև Հյուգոյի որոշ ձևակերպումներին՝ հիմնավորելու ոչ միայն ձևի կարևորությունը, այլև առաջնայնությունը գրական գործում: Պետք է նկատել, որ բովանդակություն ասելով Մնսյանը հասկանում է երևակայությունը, բանաստեղծական գործի զգացական կառույցը: Նա հատկապես վկայակոչում է Հյուգոյին՝ «Կարելի չէ միտք ըսրել ոևէ գեղեցիկ ոտանաւոր՝ առանց նախ չափին ու հանգը յիշելու» (1903, թիվ 35, էջ 555): «Մասիսն», իր հերթին, ձևի առաջնահերթության այսպիսի պատկերացումներն ուղղում է նույն իսկ ձևի ընկալման նորամուտ չափազանցություններին դեմ: Նույն Ե. Մնսյանը կարծում էր, որ միայն գեղեցկությամբ մտահոգ բանաստեղծությունը նմանվում է ձեռնածության, որ կարող է հուզել տաղաչափական հաճույքը ամեն ինչից պնր ի վեր դասող ամբոխին: Դրանց հեղինակները օրախնդիր և օրական կյանքով ապրող սալոնական ստեղծագործողներ են՝ դուրկ բանաստեղծական ներշնչումներից (Ն. տ.): Այս հեղինակը ակներևաբար, նախապատվությունը տալիս է իմաստավորված արվեստին, որ հավասարապես գեղագիտական բավականություն է պատճառում թե՛ հոգուն, թե՛ իրական զգացումների դրսևորման ձևին կամ գեղեցիկին: Այս առումով նա առանձնացնում է Գր. Զոհրապի ստեղծագործությունը, որի մեջ գտնում է փիլիսոփայական,

հոգեբանական (իմաստ) և բանաստեղծական (ձև) սկիզբների համերաշխություն (1903, թիվ 36, էջ 566):

Արևմտահայ գրական ու հասարակական կարծիքը, թերևս, 1900-ական թթ. ներկայացնում էր կենսունակ պահպանողականության և միաժամանակ, գրական նորագույն հոսքերի մի զարմանալի համադրում, որ բխում էր պոլսահայ կյանքի հասարակական նկարագրի հակասականությունից: Աչքի է զարնում հին և պարկեշտ գրական ավանդույթների մեծարումը՝ հանուն ազգային բարոյական հիմքերի պահպանության, սեղական պայմանների ու միջավայրի ինքնաբավությունը և մյուս կողմից, գրական նորագույն ըմբռնումների ներթափանցումներն այդ իրականության մեջ, հատկապես կրթված երիտասարդության շրջաններում: Կարելի է կարծել, որ նշված հակասականությունն էր թելադրում, որ 1900-ականի «Մասիսի» էջերում շարունակվի դեռևս 1880-ականի «Մասիսի» մեջ ծայր առած անհաշտ բանակռիվը բարոյական և անբարոյական գրականության վերաբերյալ: Այս իմաստով շատ հետաքրքիր է, որ տաճնամյակների հնության՝ ռոմանտիկական գրականության բարոյական արժեքների պաշտպանությամբ հանդես եկավ դմյուռնացի գրամոլ Կ. Ստեփանյանը: Զոհրապի «Մարապևար» և «Փոթուրըն» նորավեպերը նա հռչակում էր անբարո դործեր, Տ. Արփիարյանի դիպուկ բնութագրմամբ՝ «յանուն բարոյականի, յանուն հայկաբանութեան... յանուն տխմարութեան» (1900, թիվ 28, էջ 370): Խնդրին այլ, կասկածամիտ ուղղություն տվեց «Մասիսի» հոդվածագիր Խ. Քևշիշյանը, նկատելով, որ հայկական միջավայրում ոչ անբարոյական գրականություն կա, ոչ էլ անբարոյական գրողներ, այլ «ամէն բան ունենք... բոլոր զաւզակութիւններու հետ մեկտեղ: Մերը ընդհանրապէս անօգուտ գրականութիւն է» (1903, թիվ 35, էջ 551):

Արևմտահայ գրական շուկան ողողած անտաղանդ նմանակությունները, մասնավորապես նորավեպի ժանրում դատապարտելով, խմբագիր Տ. Արփիարյանն առաջարկում էր դրանցից տարբերել ազգականության պատճառները քննարկող և ցուցադրող գրա-

կանությունը: Տ. Արվիլարյանը նկատում էր, որ անգամ քստմնելի պատկերների միջոցով շատ նորավեպեր ու վեպեր ներարկում են բարոյական առաքինություններ և, որպես օրինակ, հիշում էր Դյումա-որդու Մարգարիտ Գոթիեին (1901, թիվ 45, էջ 706): Այսպիսի մոտեցման չափանիշը կյանքից առնված ճշմարտություններն էին, ինչպես և դրանց առնչվող՝ հոգեբանական ու վերլուծական արձակ դործերը: Կնոջ հոգեբանական առանձնահատկությունների դեղարվեստական պատկերումը «Մասիսը» փորձում էր հիմնավորել գիտական ժամանակակից տեսություններով՝ անգամ դրանց ծայրահեղությունների մեջ որոնելով իրականության անդրադարձը: Թերևս, այս մտայնության էր տեղի տալիս շաբաթաթերթը, երբ տպագրում էր Մ. Նորդաուի «Կինը հոգեբանական եւ բնախօսական տեսակէտով» հոդվածը (1901, թիվ 48, էջ 762–764), որտեղ կնոջ կազմախոսության մեջ ժառանգականության հարատեւումը համարվում է բնական երևույթ, իսկ դրանից չեղումը՝ հիվանդագին դրսևորումների հիմք: Եվ դարձյալ, ինչ-որ տեղ այսպիսի տեսակետը հիմք էր դառնում Զոհրապի համար, երբ նա մերժում էր ֆեմինիզմը: Ֆեմինիզմի դեմ ուղղված իր առարկություններում Զոհրապը հաշվի էր առնում նաև այն, որ հայ իրականության մեջ կինը պատրաստ չէ հավասար իրավունքներ ու պարտականություններ բաժանել տղամարդու հետ: Այլ կերպ ասած, Զոհրապը հիմնավորապես դեմ էր Եվրոպային կապկելու այն արատավոր ու անհիմն մտայնությանը, որ այնքան հաճախ ծաղրված է մասնավորապես արևմտահայ երգիծական դրականության մեջ՝ սկսած Հ. Սվաճյանով ու Հ. Պարոնյանով և վերջացրած Ե. Օտյանով ու Հ. Ալիխանով:

Օսմանյան իրականության մեջ, որտեղ ոտնակոխ էին արվում հպատակ ազգերի տարրական իրավունքները, ընդամին, առանց սեռի որևէ խտրականության, երբ կինը տղամարդու հետ միասին, և այս դեպքում, ամենից առաջ օսմանյան թուրք ընտանիքի կինը, դամված էր մնում միջնադարյան դերության կապանքների մեջ՝ խոսել կնոջ քաղաքացիական իրավունքների և տղամարդու հետ

նրա իրավահավասարության մասին, կնշանակեր ծաղրել այդ նույն գերուհուն: Հայ գրականության մեջ այս խնդրին փորձեց լրջություն տալ Ս. Տյուսաբը՝ կնոջը սուբյեկտ դարձնելու ակնհայտ ֆեմինիստական մտադրությամբ, սակայն գրողի տաղանդը չէր կարող շրջանցել կենսական ճշմարտացիությունը և նրա ֆեմինիստական մտահղացումը տեղի տվեց հենց այդ ճշմարտությանը՝ նրա հերոսուհիները ի վերջո անօգուտ ու անդոր մնացին անողոք իրականության առջև:

Ջոհրապը ֆեմինիզմը հերքում էր այս վերջինի մոլի համահարթեցմանը (կնոջ և տղամարդու իրավունքների) հակադրվելով կնոջ հոգևոր աշխարհի նրբության ու խորհրդավորության գեղագիտական բացահայտումներով: Հ. Սվաճյանը, ապա չատ ավելի նպատակադիր ու բանավիճային հերքումներով՝ Հ. Պարոնյանը, Ե. Օտյանը և Հ. Ալփիարը այդ անում էին ծաղրով: Քաղքենի ընտանիքի և բարքերի պայմաններում կնոջ բացասական դերի ընդգծումը 19-րդ դ. 2-րդ կեսից ծայր առնող արևմտահայ երգիծական գրականության մեջ՝ մի հայտնի չափով ոչ այլ ինչ է, եթե ոչ բանավեճ՝ (թեկուզ և տարերային), հայ իրականության համար ժամանակավրեպ ֆեմինիզմի դեմ:

Կնոջ և առհասարակ ֆեմինիստական պատկերացումների վերաբերյալ Ջոհրապի մոտեցումներին կանդրադառնանք փոքր-ինչ ուշ ևս: Այստեղ նշենք նաև, որ «Մասիսի» էջերում Մաուի Հովհաննիսյանը (Մերուժան Պարսամյանի ծածկանունը) ձևակերպում էր հայ հեղինակների ոչ միանշանակ մոտեցումը ֆեմինիզմի նկատմամբ: Իր՝ Մ. Պարսամյանի նկատմամբ կնոջ հոգեբանական առանձնահատկությունների ճանաչումն է. նրա կարծիքով կանայք միայն գրականության մեջ կարող են առավել ամբողջականությամբ ցուցադրել իրենց ներքնաշխարհը (ն. տ., էջ 737), այսինքն՝ ազատությունը: Ֆեմինիզմի արդահատելի տիրույթներից Տյուսաբին դուրս հանելու նպատակով նույն Մաուի Հովհաննիսյանն աճապարանքով նրա մեջ առանձնացնում է պարզապես կին գրողին: Ա. Ալպոյաճյանի «Ուսումնասիրություն Սրբուհի Տիւսաբի» գրքի իր

դրախոսականում նա գրում էր, թե «Տիւսաբ ֆէմինիսդ չէ, այլ կին դրող մըն է» (1901, թիվ 32, էջ 511):

«Մասիսի» խմբագրությունը յուրովի մոտեցավ ֆեմինիզմի, կնոջ ներաշխարհի ու հոգեբանության վերաբերյալ իր հեղինակներ ի տարակարծություններին՝ անուսնելով գրականության մեջ հատկապես կնոջ գեղագիտական ընկալումների հիմնահարցը: Հանդեսի համար, որպես «կնոջական» գործոնի հերքում ծառայեց Մ. Պարսամյանի գրական «չարաճճիությունը»: Մ. Պարսամյանը, հայտնում է «Մասիսի» խմբագրականի հեղինակը, հավանաբար, Տ. Արփիարյանը, «Մասիսում» հայտնվել է իբրև անծանոթ օրիորդ, տպագրել բանաստեղծություններ, ապա արձակ՝ իր «մելամաղձիկ զգայումներով»: Ապա հանդես է գալիս Մ. Պարսամյանը և ինքնաբացահայտվում, խոստովանելով, որ ինքն է «Օրիորդ Մառի Հովհաննիսյան» ստորագրողը: Այս առթիվ խմբագրականի հեղինակը հիշեցնում է չոտլանդացի դրող Ու. Շարպի օրինակը, որը 1894 թվականից՝ բացի իր իսկական ստորագրությամբ գործերից, «միս Ֆայոնա Մըք Լաուդ» ստորագրությամբ գեղարվեստական ստեղծագործություններ է տպագրել անգլիական թերթերում, ընդ որում, լայն ընդունելության արժանանալով: Շարպը 11 տարի պահել է իր գաղտնիքը և անգամ բանավիճել ինքն իր հետ՝ հանդես գալով «Շարպն ընդդեմ միս Մըք Լաուդի» տրամախոսությամբ: Մ. Պարսամյանը, ափսոսանքով նշում է «Մասիսի» հեղինակը, նվազ համբերատար գտնվեց և իրեն բացահայտեց «Մառի Հովհաննիսյան» ստորագրելուց երկու տարի անց (1905, թիվ 37, էջ 577–579): Գաղտնիքն այլևս բացված էր, «սակայն «Մասիսի» համար հաւնուած աշխատակցուհի մը կը պակսէր եւ ընթերցողներուն համար՝ բանաստեղծ օրիորդ մը»[1] (ն. տ., էջ 579):

---

[1] Մ. Պարսամյանը հետագայում ոչ առանց սեթևեթանքի, գրում էր, որ Գր. Զոհրապը, հիացած երևութական օրիորդ Մառի Հովհաննիսյանի տպագրած ստեղծագործություններով, ցանկացել է ծանոթանալ նրա հետ, որ, բնականաբար, չէր կարող կատարվել, քանի որ ինքը՝ օրիորդի անվան տակ հանդես եկած Մ. Պարսամյանը, խուսափել է ինքնաբացահայտումից: Հիասթափված Զոհրապին մնում էր «անտեսանելի արարած» հորջորջել «օրիորդին» (Տե՛ս Գրիգոր Զօհրապը ժամանակակից-

Արդյոք խմբագրականի հեղինակը անուղղակիորեն մասնակցում էր ֆեմինիստական թեմայի շուրջ հայտնված տարակարծությունների խորացմանը՝ տղամարդու և կնոջ դեղագիտական տարբեր ընկալումների հարցը վիակելով և հանգեցնելով պարզապես կնոջ խարուսիկ ստորագրության (ինչը տեսանք վերը), թե տղամարդուն ունիվերսալ էր համարում ստեղծագործական հնարավորությունների տեսակետից՝ նրան վերագրելով նաև կանացի ուրույն զգացումներ ապրելու և արտահայտելու կարողություններ: Դժվար է ասել, համենայն դեպս, և մեկ, և մյուս դեպքերում «Մասիսի» այս հեղինակը հավատարիչ կասկած էր սերմանում, կարծում ենք, ֆեմինիզմի և պաշտպանների, և հակառակորդների դրույթների հանդեպ: Սակայն, անկասկած է մի բան, այն, որ «Մասիսն» առանձնահատուկ հոդածություն ուներ հայ կին ստեղծագործողների նկատմամբ:

Ֆեմինիզմի վերացական, հայ կյանքի համար արհեստական ու խորթ տեսակետների քննարկումից առավել «Մասիսում» ուշադրություն է դարձվում մի կենսական հիմնահարցի՝ հայ ընտանիքում կնոջ նշանակության ու տեղի, բարքերի փլուզմանը առնչ ընտանիքի միջոցով դիմակայելու խնդրին: Այս տեսակետից հարցը բավական լուսաբանվում է դավառական բարքերի վերաբերյալ Օ. Չիֆթեն-Սարաֆի և Հ. Գազանճյանի բանավեճում: Օ. Չիֆթեն-Սարաֆն առարկում էր Հ. Գազանճյանի այն կարծիքին, թե քաղաքակրթությունն է դավառի կանանց բարոյական կորուստների պատճառը (օղի խմելու և ծխելու մոլություններ, «դաղղիական ախտավորներ», որ հիշել էր Ռ. Զարդարյանը): Ընդհակառակն,

---

ների յուշերում եւ վկայութիւններում, էջ 154–155): Ինքը՝ Մ. Պարսամյանը, օրիորդական դիմակով հանդես գալու գրական իր հակումներով ամենևին էլ ինքնատիպ չէր, որի օրինակները տեսնում ենք ոչ միայն եվրոպական, այլև XIX դ. վերջի և XX դ. սկզբների հայ գրականության մեջ (տես Շարուրյան Ա., Սիսար Մնծարենց, էջ 81-82): Արևմտահայ գրականության մեջ, որքանով մեզ հայտնի է, առաջինը կանացի անվամբ էր հանդես եկել Ե. Տեմիրճիպաշյանը, ով դեռևս 1880-ական թթ. «Արևելքում» և «Մասիսում» իր տպագրած հոդվածները ստորագրում էր «Անլսնիա» և «Նուրանիա» իգական անուններով:

ըստ Զիֆթե-Սարաֆի, դյուղը տառապում էր քաղաքակրթության հետևորությունից, տգիտության պատճառով: Նա կնոջ և «ընտանեական կազմակերպությանը» սպառնացող վտանգների պատճառն էր համարում հասարակության ծայրահեղ արհամարհանքը կնոջ հանդեպ, որ դրսևորվում էր մի կողմից կնոջ անհատականությունը պահպանողական կղերի կողմից անտեսելու (ամուսնական ժամանակավրեպ ու հնացած օրենքներ), և մյուս կողմից՝ «կարգ մը չօվէններու» կեղծ քարոզչությամբ հայ կնոջը հրեշտակ հռչակելու անամոթ տեսակետով (1903, թիվ 34, էջ 529–535): Միայն կնոջ անհատականության, ընտանիքում և հասարակության մեջ նրա իրավունքների ճանաչումը, «Մասիսի» հեղինակների կարծիքով, կամրացնի ընտանիքի բարոյական հիմքերը:

«Մասիսի» ծրագրի մի ընդարձակ մասն է կազմում ընթերցողին ոչ վաղ անցյալի և ժամանակակից հայ գրողների կացությանը, հասարակության մեջ նրանց տեղի և ստեղծագործությունների արժեքին ծանոթացնելը: Հատկապես գրողների ու լրագրողների նյութական ու հասարակական վիճակի բացահայտման այսպիսի նպատակադրված՝ բազմակողմանի ցուցադրումը հայ մամուլում իրականացվում էր առաջին անգամ: «Մասիսը» հասարակության ուշադրությունն էր հրավիրում ստեղծագործող մարդու մեկուսի, համեստ և հաճախ՝ դժվարին կյանքի վրա: Գրողին և մտավորականին «ժողովրդականացնելու» այս միտումով չաբաթաթերթերը դրչի մարդկանց ուղղված հարցախույզ կազմակերպեց, որի հարցերի մեջ էին մտնում տվյալ հեղինակի առաջին տպագիր գործի, ժանրի, դրա հրապարակման թողած տպավորությունների վերաբերյալ հարցադրումները (1900, թիվ 11, էջ 163–165): Հարցարանին պատասխանեցին Սիպիլը, Ագ. Փանոսյանը, Կ. Ություճյանը, Վ. Մալեզյանը, Ռ. Որբերյանը և ուրիշներ՝ ավագ և երիտասարդ սերնդի գրողներից: Նրանց պատասխաններում վերակենդանանում են ժամանակն ու միջավայրը, լրագրական-գրական բարքերը, որի չնորհիվ ընթերցողը հնարավորություն էր ստանում տեղափոխվել իրեն անծանոթ կամ գրեթե անծանոթ՝ հոգևոր արժեքների ստեղծ-

ման ու դրանց ճակատագրի յուրօրինակ աչխարհ: «Մասիսի» հնղինակները մատը դնում են տաղանդավոր գրողների և հասարակութեյան հաղորդակցութեյան թոյլ կապերի վրա: Հ. Գազանճյանը հայ գրողների նյութական ծանր վիճակը բացատրում էր հասարակութեյան, հատկապես հարուստ դասի մարդկանց անտարբերութեյամբ, նկատելով նաև, որ վերջիններս չգիտեն՝ արժե, արդյոք, հովանավորել տվյալ գրքի տպագրութեյունը, թե ոչ, ընդամին, հաճախ հիմնավոր լինելով իրենց կասկածների մեջ: Իր «Առաջարկ մը» հոդվածում Հ. Գազանճյանը դրվատում էր բարեսիրութեյան եվրոպական սկզբունքները՝ ստեղծել հասարակական կարծիքի վստահութեյունը բավարարող մի մարմին, որին իրենց դրամները կհատկացնեին ոչ միայն հարուստները, այլև առևտրական-արհեստավորական դասերի մարդիկ: Նա կոչ էր անում Կ. Պոլսի Ուսումնական խորհրդին՝ սկիզբ դնել այդ գործին (1901, թիվ 1, էջ 12–14):

Դրա հետ մեկտեղ Հ. Գազանճյանը նոր ծալքեր էր հայտնաբերում գրողի կյանքին անհատորդ հասարակական վերաբերմունքի խորքերում՝ նպատակացնելով, որ չկա գրողին նյութապես աջակցելու հասարակական պարտքի գիտակցում: Հրատարակչական մարմինը, հայտնում է նա, հավաքված դումարներից ֆոնդ կազմացնի, որը կարելի կլիներ ներդնել շահութաբեր որևէ գործում, ինչպես արվում է Եվրոպայում և որը կայունութեյուն կմտցներ գրողների ֆինանսավորման գործում: Հ. Գազանճյանն առաջարկում էր ընդլայնել Իզմիրյան գրական հանճնաժողովի գործունեութեյան շրջանակները՝ նրան հանձնարարելով հրատարակչական մարմին ստեղծելու և կազմակերպելու խնդիրը (1903, թիվ 34, էջ 529–535):

Նույն թեմայով «Մասիսում» հանդես եկավ Անտոնյան-Մերսետեսը: Գրականութեյունը չի ապրեցնում գրողին, գրում է նա, մնում է սոսկ բարոյական վարձատրութեյունը, տվյալ դեպքում անարժեք մի բան, որովհետև, «անօթի մը երբեք դովեստով չի կրնար կշտանալ» (1902, թիվ 2, 19): Կա նաև գրողի հասարակական մեկուսացումը, նկատում է Մերսետեսը, իբրև օրինակ բերելով Ս. Տյուսարին: Գրողի անձնական կյանքին, կորուստներին և հոգեվի-

ճակին անհաղորդ հասարակությունը նրանից սպասում է նոր գործեր, մինչդեռ անձնական դժբախտությունից բեկված Տյուսարն ինքը կարող էր ակնկալել հասարակության համակրանքն ու ընկերացնքը (1901, թիվ 2, էջ 22):

«Մասիսի» քննարկումներին մասնակցեց Արտ. Հարությունյանը՝ «Թլկատինցիին երկասիրությունները» հոդվածով (1901, թիվ 4, էջ 59–61): Նա կարծում է, որ գրողի նյութական ծանր վիճակը նրան հատկապես հետապնդում է իր երկերը հրատարակելու ժամանակ: Արտ. Հարությունյանը առաջ է քաշում Թլկատինցու գործերից գնե մեկի տպագրության հարցը: Տալանդավոր գրողները գնահատվում են հետմահու, մինչդեռ, գրականությանն անտեղյակ միջավայրն է ստեղծում միջակ կարողության գրիչների «անրացատրելի» հաջողակությունը: Արտ. Հարությունյանը իրեն ևս զբաղեցնող հիմնահարցի առաջադրումն ու քննարկումը համարում էր լուրջ և դրականության զարգացումը խթանող գործոն. «Գրագիտական ճակատագիրը լուրջ ղրաղում մը կը հայթայթէ անկեղծ մխաքնրու»,- գրում է նա (ն. տ., էջ 60):

Խնդրին հայեցողաբար և անգամ համակերպվելով մոտեցավ Գր. Մալխասը: Հայ հասարակությունը, համոզում էր նա ընթերցողին, չի կարող ապրեցնել իր գրագետներին, ինչպես ֆրանսիացիները Բալզակին, Ժորժ Սանդին, Դյումային և այլոց, որովհետև ընթերցողների թիվը հայ իրականության մեջ սահմանափակ է՝ դրան համապատասխան նյութական հնարավորություններով (1905, թիվ 17, էջ 257–259): Մալխասը, սակայն, անգիտանում էր, որ վարձատրության չափը այս դեպքում ամենևին էլ պարտադիր չէր, որ հավասարվեր ֆրանսիական կամ եվրոպական այլ երկրի չափանիշներին, և որ քննարկվող խնդիրը վերաբերում է ոչ թե չափին, այլ գրողին վարձատրելու սկզբունքը հայ կյանքում արմատավորելուն:

Հայ գրողի նյութական անապահով վիճակին և այն մեղմելու խնդրին անդրադարձան նաև «Մասիսի» այլ հեղինակներ: Մ. Ուղուրլյանը վերստին մատնացույց էր անում գրողի ներքին, անհատական կյանքի ուրույն կողմերը հասարակական հոգածության

առարկա դարձնելու խնդիրը՝ ի չահ գրականության զարգացման: Գրողի սոցիալական անապահովվածությունը, իրավացիորեն եղրակացնում էր նա, ոչ բնականոն, անբավարար կացություն է ստեղծում նրա ներաշխարհի և ստեղծագործական հնարավորությունների համար:

Ա. Անտոնյանը ևս գրողների վարձատրության հարցին անդրադարձավ իր մյուս «Կյանք ու միտք» հոդվածում (1905, թիվ 20, էջ 307–311): Լրագրությունն ու հրատարակչական գործը, գրում է նա, եկամտի աղբյուր են դարձել մի խումբ մարդկանց համար, ստվարաթիվ են դարձել ընթերցողները, բայց գրողները անմասն են մնում եկամուտներից: Փոխարենը, խմբագիր-հրատարակիչները ամենուրեք ժժդոհում են, որ թերթերն ու գրքերը չեն սպառվում: Մինչդեռ, հայ օրաթերթերը, պնդում է Ա. Անտոնյանը, օրական սպառվում են 3–4 հազար օրինակ՝ պարբերականների (շաբաթաթերթ, երկշաբաթաթերթ, ամսագիր) 1000–1500 օրինակի դիմաց, ուստի առաջինների խմբագիրները լի վիճակի են վճարել հեղինակներին, որ չեն անում: Բացի սպառման քանակից, Ա. Անտոնյանը նշում էր մամուլի եկամտի կանոնավոր այլ աղբյուրներ՝ դռվազդ, ծանուցում, ազդեր և այլն, որպիսիք կարող էին ապահովել գրչի մշակների վարձատրությունը: Վերոհիշյալ հրապարակումներով, հիրավի, «Մասիսը» բարձրացնում էր մտավորականության նյութական սուղ վիճակը ինչ-որ չափով մեղմելու խնդիրը՝ թեկուզ և հասարակության աչքին կասկածելի դարձնելով լրագրողներին ու գրողներին անվճար աշխատեցնելու ժամանակավրեպ դարձած սովորույթը արևմտահայ իրականության մեջ:

Գրական գործչի դիմաստվերը «Մասիսը» հրամցնում էր ոչ միայն գրականության մեջ նրա վաստակը բացահայտելու, այլև անհատական կյանքն ու ինքնությունը ցուցադրելու իմաստով, որ արդեն առաջադրում է մտավորականի հանդեպ հասարակության պարտականության խնդիրը: Վերը քննարկված՝ գրողների գնահատման հարցադրումը, հասարակության մեջ նրա գրաված տեղի հարցը «Մասիսը» դիտարկում էր հենց վերոհիշյալ՝ փոխադարձ

պարտավորությունների սահմաններում: Մերսետեսը իրավացիորեն նկատում էր, որ դրողից, ի վերջո, չի կարելի ավելին սպասել, քան այդ թույլ են տալիս իր կենսագրական հանգամանքները (1901, թիվ 2, էջ 22): Ս. Տյուսաբի անհատական դրամայի (դևռատի դատեր կորուստը) վերաբերյալ դատողություններում Մերսետեսը հաշվի էր առնում դրողի անձի և հասարակության գեղագիտական պահանջմունքների միջև եղած առարկայական կապը, որը պետք է այս կամ այն չափով ապահովեր այս փոխհաղորդակցությունը: Դրողները ևս իրավունք ունեն, եզրափակում էր Մերսետեսը, «իրենց վիշտերը, իրենց ցաւերը ունենալ եւ տեսակ մը մասնակցութիւն, տեսակ մը միխիթարանք սպասել ամէն անոնցմէ, որոնց համար կաշխատին, որոնց համար կը տքնին» (ն. տ.): «Մասիսի» այս հարցադրումներն առկա են նաև Ս. Տյուսաբի մահվան առթիվ տպագրած մյուս հրապարակումներում: Ստ. Ոսկանյանի, դերասանուհի Ա. Փափազյանի և այլոց մասին «Մասիսի» նյութերում նույնպես մտորումների առանցք են դառնում հասարակության կողմից մտավոր ու հոգևոր արժեքներ ստեղծողների ճանաչման, նրանց հավուր պատշաճի գնահատելու խնդիրները:

Վերհիշյալ քննարկումները «Մասիսի» էջերում ձևավորեցին դրող-հասարակություն հիմնախնդիրը, որի հիմքում ընկած էին դրողի անհատականության և նրա հանդեպ հասարակության հետաքրքրությունն ու վերաբերմունքը, որ վերաճեց առհասարակ դրչի մարդկանց արժեքավորման հիմնախնդրի: Տոմինոն (Ռ. Սամիկյան) կարևորում էր դրականության ու մամուլի գործիչների ոչ միայն հանրային, այլև անհատական կյանքին ծանոթանալու հարցը, թեև հանդում էր նաև որոշ ծայրահեղությունների՝ գրելեն հավասարեցնելով դրողի անձը նրա ստեղծագործության հետ (1905, թիվ 9, էջ 129–131): Նրան հակադրվեցին, և դարձյալ ոչ առանց կրքոտության, Գրասերը և Տ. Արփիարյանը, որոնք առհասարակ մերժում էին գրելավարձի գաղափարը՝ պնդելով, որ ավագ սերնդի հայ մտավորականները երբեք «դրամական պահանջում» չեն ունեցել և դրել են զուտ նվիրումով (ն. տ., էջ 134–135):

Գրողի անհատական կյանքի, խառնվածքի և ստեղծագործական-բարոյական ու մտավոր կողմնորոշումների խնդիրը ևս տարակարծիք հրապարակումներում վերաճեց բանավեճի՝ «Մասիսի» հեղինակների միջև: Մ. Ուղուրլյանը հարցը դնում էր այսպես. արդյոք գրողի անձը պետք է ներդաշնակի իր քարոզած բարոյական ճշմարտություններին: Դրվատելով բարոյական ընտիր ճիրքերով օժտված ստեղծագործողի կերպարը, Մ. Ուղուրլյանը հակադրվում էր Տոմինոյին, երբ բնավ պարտադիր չէր համարում գրողի՝ իբրև անհատի և քարոզած արժեքների համապատասխանությունը: Գրողը, կարծում էր նա, կարող է լինել «ախտավոր», բայց միաժամանակ՝ տաղանդավոր և հանրությանը տալ արժեքավոր բարոյական ու հասարակական դաղափարներ (1905, թիվ 12, էջ 190): Իր հաջորդ հոդվածում Տոմինոն կասկածի էր ենթարկում առհասարակ գրողների բարոյական նկարագիրը և մասնավորապես, գրականությունն անաչառ դնահատելու նրանց կարողությունները: Գրական հղբայրակցությունը ցնցվում է ներքին պառակտումներից, անպտուղ և վոխադարձ հարձակումներից, որով և ավելի խորը անկում են ապրում գրողն ու գրականության հեղինակությունը (1905, թիվ 13, էջ 203–205): Մեկ այլ հոդվածում այս հեղինակը չարունակում է գրողների «չարանախանձ և հակառակորդ ոգու» վերաբերյալ նույն թեման, որ նոր բան չի ավելացնում նրա նախորդ հրապարակմանը (1906, թիվ 14, էջ 209–212): Անկախ հարցադրումների սրությունից կամ չափազանցություններից, «Մասիսը» գրական լայն բանավեճի առարկա էր դարձնում գրողի մասնագիտական ինքնուրույնության, նրա աշխատանքի հասարակական ճանաչման և հոգևոր ու նյութական դնահատականի խնդիրը, որ նրբևև չէր շոշափվել արևմտահայ իրականության մեջ: Գրողը, դրաքննադատը, մամուլն ու հրապարակախոսությունը «Մասիսի» հրապարակումների չնորհիվ դիտվում են որպես հանրության ու ազգի համար կարևոր բարոյական ու մտավոր գործոններ, որոնք արժանի են հասարակության ամենալուրջ ուշադրությանը: Սրա-

նում էր նաև կայանում «Մասիսի» բերած նորույթներից մեկը արևմտահայ մտավոր կյանքում:

Շաբաթաթերթը ազգային գրականության զարգացման կարևոր նախապրյալներից մեկն էր համարում գրողների նոր սերնդի պատրաստությունը, նրանց հանդես հասարակական ուշադրության պատվաստումը: Քաղաքացիական վերաբերմունքի սերմանումն այս բնագավառում «Մասիսը» պատկերացնում էր ավագ սերնդի փորձի և հմտությունների փոխանցման միջոցով, որ, ըստ էության, արևմտահայ գրական աշխարհում ի սկզբանե ունեցել էր պատահական բնույթ: Այս մտահոգությամբ «Մասիսը» կազմակերպում էր «նոր գրիչների» բանաստեղծությունների մրցանակաբաշխություն: 1903 թ. փետրվարին քնարական պոեզիայի մրցանակաբաշխության համար չարաթաթերթն առաջադրեց որոշակի թեմա՝ «Բաժնված սիրտեր» խորագրով: Մրցույթի հանձնաժողովի անդամներն («քննիչներ») էին Մ. Ահմայանը, Թ. Թերզյանը և Ադ. Փանոսյանը (1903, թիվ 8, էջ 113–114): Հաղթողի համար սահմանվել էր մրցանակ՝ «ոսկի գրիչ մը»: Մրցանակաբաշխության մասնակիցներից իրախուսվեցին 40 երիտասարդ ստեղծագործողներ, որոնց մեջ առաջին մրցանակի արժանացավ Գ. Խանճյանը (Ուրֆայից), երկրորդին՝ Հայկանուշ Մառքը (Կ. Պոլսից), և երրորդին՝ Մ. Մնծասուրյանը (Մ. Մեծարենց, Պոլսից)[1]: Դրանից առաջ, 1901 թ. «Մասիսը» մրցանակաբաշխություն էր հայտարարել լավագույն նորավեպի համար (1901, թիվ 49, էջ 777):

Անկախ այն բանից, որ Գ. Խանճյանի բանաստեղծությունն աչքի չէր ընկնում որևէ արժանիքով, ծանրամարս էր և երկարաշունչ, «Մասիսի» քննիչները հիմնավորեցին իրենց գնահատականները՝ չարունակելով այդ ոչ մեծ դասընթացը սկսնակների համար: Ի պատիվ «Մասիսի», պետք է ասել, որ այն ոչ միայն հայտնաբերեց, այլև հետագայում ևս չարունակաբար տպագրեց Մ. Մնծա-

[1] «Մասիսի» գրական այդ մրցանակն ուներ իրավարար մարմին, որի կազմում էին Զոհրապը, Ալփիարը, Ալփասլանը և Հ. Ասատուրը: Այդ մրցանակաբաշխության մասին տես Հայկանուշ Մառք, Կեանքն ու գործը, էջ 36-38:

բննդին՝ ժողովրդականացնելով նրա ստեղծագործությունները: Երիտասարդ հեղինակների համար «Մասիսը» 1904 թ. բայ արեց հատուկ էջ՝ «Նորերի բաժին» խորագրով, որտեղ տպագրվում էին չնորհալի երիտասարդ ստեղծագործողներ: Ավելին, հետագայում «Մասիսը» հայտնում էր, որ խմբագրության հանձնարարությամբ մի երիտասարդ բանաստեղծ այդուհետև իր կարծիքները պետք է հայտնի «սկսնակներու բանաստեղծական նախասիրաձերու վրայ»: «Քնար» ծածկանունով այս հիրավի, չնորհալի ուսուցիչն իր խոսքն ուղղում էր հատկապես գավառացի բանաստեղծներին, օգնում էր նրանց՝ ձերբազատվելու արհեստական զգացմունքներից, կրկնությունից ու միօրինակությունից, գնահատում էր անմիջական զգացողությունը և պատկերավոր մտածողությունը (1905, թիվ 14, էջ 221–222): Նույն նպատակով 1905 թ. «Մասիսը» «Բուբաստան» խորագրով տպագրում էր ուսուցողական բնույթի գրաքննադատական նյութեր՝ «Նորերուն» համար: Հետաքրքիր է Հ. Ճոլոյանի (ապագա Հ. Ճ. Սիրունին) մի բանաստեղծության տրված գնահատականը՝ «Բուբաստանի» նյութերի մեջ: Քննադատը կարծում է, որ այն ձևի ու զգացման տեսակետից բավական հաջողված է, «թէեւ տաղաչափական արուեստին դէմ մեղանչումներ չեն պակսիր հոն» (1905, թիվ 36, էջ 566): Երիտասարդ բանաստեղծին խորհուրդ է տրվում չաս կարդալ, քիչ գրել և այդ քչերի մեջ միայն լավագույնները հանձնել տպագրության, «ինչպէս կըննայ աւեն մը ձեր նախկին դասընկերներէն Միսաք Մնձուրնոց՝ երբեմն Շաւարսպ Միածան, որուն ոտանաւորները այնքան կը հաւնուին ու կը փնտռուին հիմակու» (նույն տեղում):

Սկսնակ գրողների ստեղծագործությունը դարձնելով իր հետաքրքրությունների առանցքներից մեկը, «Մասիսն» լրականացնում է հայ գրական պարբերականների մեջ մինչ այդ չտեսնված իր ծրագիրը՝ նոր գրական սերնդին կապել անցյալի հոգևոր ավանդույթներին, գրական գործընթացի մեջ ներգրավել նրան և նպաստել ազգային գրականության արդիականացմանը: Այս վերջինը դառնում էր «Մասիսի» գրական քաղաքականության առնա-

կարևոր ուղղությունը և հավանարար, դրանով է բացատրվում չաբաթաթերթի սևեռուն ուշադրությունը գրական ընթացիկ իրողությունների:

«Մասիսի» գրաքննադատական հոդվածներում, գրախոսականներում և այլ հրապարակումներում չրջանառվում են ժամանակի արևմտահայ ճանաչված գրողների՝ Գր. Զոհրապի, Զիֆթեն-Սարաֆի, Զ. Եսայանի, Ե. Տեմիրճիպաշյանի, Մ. Գոչունյանի, Ինտրայի (Տ. Զրաքյան) և այլոց ստեղծագործությունների վերաբերյալ կարծիքները, դրանք հիմնավորող վերլուծություններն ու ընդհանրացումները: Ընդ որում, «Մասիսը» գործող գրական սերնդին պնահատում է ոչ թե իրրև ինքնարավ, պարզապես ներկա գրականության պատկերը ներկայացնող միավոր, այլ անցյալի հայ գրականության, ինչպես և ժամանակակից եվրոպական գրականության հետ իր կապերի ու կրած ազդեցությունների ընթացքի մեջ: «Մասիսը» հայտաբերում էր ժամանակային առումով ամենատարբեր ուղղություններ՝ սկսած ռոմանտիզմից, ռեալիզմից ու նատուրալիզմից և վերջացրած դեկադանսի այլևայլ դրսևորումներով ու սիմվոլիզմով: Եվ ուղղությունների, և ժանրային տեսակետներից պարբերաբար գրաքննադատություն արտացոլում էր դարասկզբի արևմտահայ գրականության պատկերը՝ փորձելով վերհանել դրա և բովանդակային, և մատուցման ձևի առանձնահատկությունները: Ինչպիսին այդ գրականությունն էր, այնպիսին էլ, հիրավի, «Մասիսի» գրաքննադատությունն էր՝ տարամիտող, գրականության նշանակությունն ու գործառույթները հակասական անկյուններից ընկալող և բազմաշերտ, որտեղ նթե տիրապետող մի բան կա, այդ էլ բազմակարծությունն է: Այդ, միաժամանակ, հայ գրաքննադատական մտքի նշանակալի ձեռքբերումներից մեկն էր XX դ. սկզբին, և հենց սրանով է պայմանավորված բանավեճերի չոայլ առկայությունը «Մասիսի» էջերում, որ վերաբերում էր և աղգային, և եվրոպական գրականություններին, գրական ուղղություններին, առանձին գրողների ստեղծագործություններին և

այլն[1]*: Սրանց պետք է ավելացնել չաթաթաթերթի քննադատական ուղղվածությունը դրական չուկայի խոտանի նկատմամբ՝ ելնելով առողջ ու կենսունակ դրականության զարգացման շահերից, որի դրսևորումների մեջ հաճախ դժվար չէ նկատել նրա կողմնորոշումը հատկապես դեպի ռեալիստական արձակի ավանդույթները:*

1900-ականի սկզբներին նորավեպերի ռեալիստական կամ իրականության արտացոլման չուրջ նախորդ տասնամյակի բանավեճերն արդեն վերածվել էին ժանրի չուրջ մղվող տարակարծության: Լիարժեք, իրականության պատկերը ցուցադրող դրականության առողջ հարցադրումների հետ միասին Բաբգեն վարդապետը նոր հուն էր տալիս նորավեպերի դեմ ուղղված քննադատական ընթացքին, երբ պնդում էր, թե «վէպը չատ չապրիր» և առարկում էր նորօրյա վիպամոլության» (1902, թիվ 46, էջ 729, թիվ 47, էջ 744): Դրան հակադրվում էր «Մասիսի» խմբագիրը՝ վեպն ու նորավեպը արևմտահայ գրականության մեջ համարելով առաջատար ժանրեր և արժանին հատուցելով Քասիմ-Գոչունյանին («Մանգումեի կիթքյարի» խմբագրապետը), որը հայ մամուլում սկզբնավորել էր թերթոն-վեպի ավանդույթը (1904, թիվ 4, էջ 49–50):

Ըստ երևույթին, Բաբգեն վարդապետը նկատի ուներ բուլվարային, արվեստից զուրկ վիպագրությունը, որը թերթոնի ձևով զանգվածորեն թարգմանաբար տպագրվում էր պարբերական հրատարակություններում: Այն ընթերցանության ճարակ էր դառնում գնդագիտորեն չկողմնորոշված կամ արդեն ցածրարժեք ճաշակի հակամետ ընթերցողի համար: Այս կարգի վիպական արտադրանքը նկատի ուներ Զ. Եսայանը, որն իր «Վէպերը դրականութեան մէջ» հոդվածում չեչտը դնում էր դրանց առաջացրած բարոյական ավերածությունների վրա՝ իբրև մարդկանց ոճիրների, չարագործությունների ու բռնության նախապատրաստող ու հիմնավորող գործոնի (1907, թիվ 12, էջ 223–225): Մեկ տարի անց գրված «Վիպա-

[1] Այդ բանավեճերի գրական-գեղագիտական որակները լիջմիտ քննության են առնված Դ. Պետրոսյանի «Գրական բանավեճերը 20-րդ դարասկզբի հայ մամուլում» (Ե., 2007) մենագրության մեջ:

կան արուեստը մեր մէջ» հոդուածում (Օ. Չիֆթեճ-Սարաֆի «Միամիտի մը արկածները» վեպի առթիւ) Զ. Եսայանը վերստին անցնում էր ընթերցողի վրա վեպի ներգործութեան և առհասարակ հերինակ-ընթերցող հիմնախնդրին (1908, թիվ 12, էջ 239–243): Նա վիպական կերպարը բնութագրում է ռեալիստական գրաքննադատութեան մեկնակետից՝ առանձնացնելով միջավայրի և անհատի խառնվածքի, այլև դրանց համապատասխանութեան հանգամանքը. «խնդիրն այն է, թէ արուեստի տեսակէտով այդ տիպարը ներկայացուած պարագայներուն, գինքը նախապատրաստած միջավայրին, իր յատուկ խառնուածքին բնական արդիւնք է, թէ ոչ. մէկ խօսքով, պէտք է քննենք հեղինակային դիտաւորութիւնները եւ իր գործը դատենք իր իսկ առաջադրած պայմաններուն մէջ»,- գրում է Զ. Եսայանը (նույն տեղում, էջ 240): Նա այս չափանիշներով էր բնութագրում Չիֆթեճ-Սարաֆի վեպի գլխավոր հերոսին՝ առանձնացնելով հեղինակի դիտելու լայն կարողութիւնները:

«Մասիսում» առհասարակ բարձր են գնահատվում ռեալիստական արձակ ստեղծագործութիւնները: Օ. Չիֆթեճ-Սարաֆը, Թլկատինցին, Տ. Արփիարյանը, Զ. Եսայանը և մյուս հեղինակները անդրադառնում են 19-րդ դարավերջի ռեալիստ հեղինակներին, հատկապես Զոհրապին, Ա. Արփիարյանին, Տ. Կամսարականին և այլոց՝ իրրև լուրջ գրական ուղղութիւն ստեղծողների, տարբեր կողմերից ցուցադրում նրանց արվեստի նրբութիւնն ու ինքնատիպութիւնը: Պոեզիայում զգացմունքների խորութիւնն ու անկեղծութիւնը բարձր է գնահատվում «Մասիսի» գրաքննադատների կողմից: «Շ. Միածան» ստորագրութեամբ հանդես եկած Մեծարենցը Զոհրապի բանաստեղծութիւնների վերլուծութեան մեջ վերհանում էր նրա խորունկ զգացումները՝ կիրքը, տխրութիւնը, անհատի հոգեկան տվայտանքները: Միաժամանակ, նա նկատում է Զոհրապի ոճի «անխնամութիւնը», որ «մեծ բան մը չի պակսեցներ իր խիստ տաղանդալից արտադրութենանց արժանիքէն» (1905, թիվ 12, էջ 190): «Մասիսի» երիտասարդ գրաքննադատները բանաստեղ-

ծուխյունից ակնկալում են հարուստ ներաշխարհի և հոգու տեր անհատին ներդաշնակող արվեստ: Ինչպես Մեծարենցը, Ե. Մեսյանը նույնպես արժանին էր հատուցում ժամանակի պահանջներից ավելի վսեմություն ունեցող գեղեցիկի ճաշակը զորացնելուն, որը պետք է հաղթահարեր նյութականի առօրեական խնդիրները: Այս հեղինակը նույնպես կարևորում է բանաստեղծական ձևի նշանակությունը, որի շնորհիվ միայն բանաստեղծությունը կարող է «կեանք շնչել» (1903, թիվ 38, էջ 602): Ե. Մեսյանը, սակայն, հեռու է դեկադանսի՝ ձևի և ոճի կարևորությունը բացարձակացնող ծայրահեղություններից: Սիպիլի «Յոլքերի» և Արտ. Հարությունյանի «Լքուած քնար» ժողովածուներում իրավամբ նկատելով «արուեստի թարմ գեղեցկութիւն», այս հեղինակը, միաժամանակ, նշված գործերում նշմարում էր կենսասիրության՝ «բուռն բաղձանք արթնցնող տողերու պակասը» (1903, թիվ 33, էջ 523): Ե. Մեսյանն այս իրողության մեջ էր տեսնում ֆրանսիական պոեզիայի չհաղթահարված ազդեցությունը ևս բանաստեղծների գործերում: «Մասիսի» դրաքննադատները մշտապես ուշադրություն են դարձնում արվեստի մեջ ձևի և զգացման փոխհարաբերության խնդրին: Մ. Պարսամյանը նույնիսկ հակասականություն է տեսնում այս երկուսի տարրերության մեջ, այլև մշտական պայքար: Ֆրանսիական քնարերգու Շ. Գերնեի պոեզիայում զգացումի դիրակշռումը նկատելով հանդերձ, նա ընդգծում էր բանաստեղծի տողերի երաժշտական սահունությունը և ներդաշնակությունը: (1908, թիվ 8, էջ 160): Լ. Էսաճանյանը, իր հերթին, Ե. Տեմիրճիպաշյանի միստիկական ու խորհրդավոր բանաստեղծական աշխարհում արժեքավորում էր նրա պատկերն ու ինքնատիպ ոճը[1] *(ն. տ., էջ 163):*

---

[1] Ե. Տեմիրճիպաշյանի ստեղծագործության այս երկփեղկվածությունը շատ ավելի խորաթափանց էր վերհանել Գ.Ր. Զոհրապը՝ նկատելով, որ իր տաղանդի և «քաջ հայագէտի» արժանիքներով հանդերձ, «այս գրագէտի շատ մը ղարձուածքները, նորակերտ բառերը, գաղափարներու արտայայտութեանց ձևերը իրենց յանդգնութեան մէջ յաճախ այլանդակութեան կը յանգին» (Զոհրապ Գր., Երկեր հ. Ա, էջ 456-457):

Գրական ուղղությունների չուրջ ընթացող բանավեճին զուգահեռ, «Մասիսը» քննարկել է նաև ժամանակի դեկադենտական գրականության գնահատման հարցը՝ ցուցադրելով իր լայնախոհ մոտեցումները առկա տարաձայնություններին: Շաբաթաթերթի գրաքննադատները՝ լավատեղյակ եվրոպական գրական ուղղություններին, հատկապես ֆրանսիական գրականության մեջ տարածված նորագույն դեկադենտական պոեզիային, խնդիրը դիտարկում են ոչ թե այդ ուղղությունների մերժման կամ հաստատման, այլ արևմտահայ գրականության մեջ դրանց ազդեցության դրսևորումների շրջանակներում: Այս բնույթն ունի Արտ. Հարությունյանի «Երկունք» ժողովածուի՝ Տ. Զոկկյուրյանի գրախոսականը, որտեղ քննադատական չեչոը դրված է բանաստեղծական զգացումների դրսևորման ձևի վրա: Գրախոսն այստեղ նկատում է սոսկ նմանակելու ձգտում, որը, նրա կարծիքով, արժեզրկել է Արտ. Հարությունյանի բանաստեղծությունների անկեղծությունն ու անմիջականությունը: Հետագայի հայ գրաքննադատությունը ևս պետք է նկատեր «կրքի, ներքին ջերմության պակասը Արտ. Հարությունյանի այս ժողովածուում[1]»: Վերջինս, կարծում է Զոկկյուրյանը, «ազդուած կերեւա Պօտլէռէ, Վէռլէնէ եւ տէքատաններէն», որոնց նկատմամբ բարձրությանը չհասնելով, կորցրել է իր բանաստեղծական «թաքուն արժանիքները» և ինքնատիպության հակումները (1906, թիվ 15, էջ 229): Գրաքննադատը չի թաքցնում իր բացասական վերաբերմունքը դեկադանսի, հատկապես նրա անհատապաշտական չափազանցությունների դեմ: Դեկադենտ «ըլլալու» ձգտում է համարում այն, որ գրախոսվող հատորիկը «ծայրէ ի ծայր իր «ես»-ին փառաւորումն է, ինքզինքը, իր զգացողութիւնները, իր հոգիին ստացած ձգտումները մեզի ծանօթացնելու ահադին մարմաջ մը ունի» (ն. տ., էջ 228–229):

Այն, որ Տ. Զոկկյուրյանը ոչ պակաս չափով առարկումներ ուներ առհասարակ դեկադանսի դեմ, ակնհայտորեն երևան է գա-

[2] Գաբրիելյան Վ., Արևմտահայ բանաստեղծներ, էջ 77:

լիս Մ. Մենարենցի «Ծիածանի» մասին գրած իր գրախոսականում: Բարձր դնահատելով Մենարենցի բանաստեղծական «ճշմարիտ եւ արժեքավոր հատկանիշները», նրա «փափուկ» և ինքնատիպ պատկերները, Զոկկուրյանը նկատի ուներ նաև նրա կրած սիմվոլիստական բնույթի ազդեցությունները Մ. Պարսամյանից, Վ. Մարգյանից, Ինտրայից և Արտ. Հարությունյանից: Ավելին, Տ. Զոկկուրյանը ապավինում էր ավանդական պատկերացումներին, երբ առարկում էր սիմվոլիստական դունային համակարգի պատկերավորման հավակնություններին, նաև՝ բուն իսկ բանաստեղծական պատկերներին՝ Մենարենցի գործերում դրանց առկայությունը համարելով «անհմաստ սէնսօլիսմի մը նմանութիւն» (1907, թիվ 28–29, էջ 581–582)[1]:

Նույն ոգով Տ. Զոկկուրյանը, որի գրաքննադատական հոդվածներն աչքի են ընկնում իրենց վերլուծական խորքերով, գեկադանսը համարում է ժամանակի եվրոպական հասարակություններին հոռետեսական տրամադրություններին արտահայք: Ֆրանսիական դեկադանսին նա հակադրում է Ժ. Ռիբոյի ստեղծագործության բնույթը: «Իր գրականութենէն կը ծորին լոյսի, երջանկութեան աղբիւրներ: Իր վիպակները բացառիկ հատկութիւնը ունին ըլլալու պարզ, անոյշ զուարթութեան մը հոսանքով տոգորուած» — գրում է նա (1907, թիվ 6–7, էջ 127–128): Տ. Զոկկուրյանը, սակայն, դեկադանսը ամենևին չի նսեմացնում. վեպերի մեծությունը նա տեսնում է ձևի անսովոր դեղեցկության մեջ, որ համերաշխում է նրա տրամադրությունների մաքրությանը:

Որպես կանոն, «Մասիսը» սիմվոլիզմը գնահատում է ժամանակի հայ բանաստեղծության մեջ դրա ազդեցության կամ դրսևո-

---

[1] Տ. Զոկկուրյանը, սակայն, համահարթեցնում է սիմվոլիզմն ու դեկադանսը՝ բացարձակացնելով սրանցում առկա ընդհանրությունները: Ուշագրավ է այս իմաստով, Դ. Օբլոմինսկու մի դիտարկումը, ըստ որի, «Անսահման հոռետեսությունը աշխարհի նկատմամբ դեկադենտական վերաբերմունքի նախադրյալ է, բեն այն չի նույնանում դեկադանսին»: Վերջինիս համար բնութագրականը այս հեղինակը համարում է համակերպումը չարիքին, որ նույն այդ չարիքի հիմնավորումն է նշանակում (**Обломиевский Д.**, Французский символизм, с. 128):

բումների առթիվ: Ընդամին, շաբաթաթերթի դրաքննադատներն այս գործընթացում հղկում են իրենց վերաբերմունքը բուն իսկ սիմվոլիզմի և դեկադանսի նկատմամբ, բայց բոլոր դեպքերում պետք է նկատի ունենալ, հայ գրականության մեջ այդ ուղղությունների տարածման չափերը և իրենց իսկ՝ այդ գրաքննադատների վրա թողած ազդեցությունները: Ասվածն առավել առարկայորեն կարելի է տեսնել նշված ուղղությունների գնահատման հարցում Ռ. Սամիկյանի փոփոխվող դիրքորոշման օրինակով: Ինտրայի «Ներաշխարհի» իր դրախոսականում (1906, թիվ 20, էջ 308–311) նա սիմվոլիստական մտածելակերպը դիտում է իբրև անհրաժեշտ հիմք՝ հեղինակի բանաստեղծական նրբին և լայն ընդգրկումների համար: Խորհրդապաշտ ու սկեպտիկ» մեկնարկումով այս բանաստեղծը, նրա կարծիքով, հասել է պատկերների ու մտքի յուրօրինակ մի բարձունքի՝ «բիւրեղացնելով բոլոր դոյները, բոլոր նրբութիւնները իր վրձինէն, երկինքի մեծածաւալ նրանգապնակին վրայ» (ն. տ., 310): Արտ. Հարությունյանի հետ բանավեճում արդեն Ռ. Սամիկյանը սկզբունքային առարկություններ է անում սիմվոլիզմի պռեսիկային և մտածողությանը: Այս վերջինի մեջ հատկապես Ռ. Սամիկյանը չի տեսնում ամբողջականություն և դրսևորման հետևողականություն, որ կհակակշռեր այդ ուղղության ծայրահեղությունից բխող ոճի տարտամությանը: Ռ. Սամիկյանը վկայակոչում է սիմվոլիզմի ֆրանսիական քննադատ Գ. Մեդեսին և ընդգծում ոճի և ձևի միասնականության բացակայությունը այդ ուղղության մեջ, որ ի վերջո հարցականի տակ է դնում սիմվոլիզմի բուն իսկ դոյության իրավունքը: «Եւ որոնք եղած են, իսկապէս, սէնպօլիսթ գրողներու ջանքերը եւ ձգտումները՝ ոչ ոք չի պիտի կրնար վերջնական ձեւի մը մէջ պարզել, կազապարել զանոնք: Վէրհառէն Մօռեաս, տը Ռենիե կը մնան միակ դէմքերը ուշադրութեան արժանի, բայց ասոնք ալ չբարձրացան մինչեւ հոն՝ ուր 19-րդ դարու նշանաւոր բանաստեղծները կը կանգնին այսօր»,- գրում է նա (1907, թիվ 23, էջ 461): Ռ. Սամիկյանը պնդում է, որ սիմվոլիստները չեն կարողացել անգամ իրենք պարզել սիմվոլի՝

խորհրդանշի իմաստը, որ այն բնազդական արվեստ է, որ ազդում է ընթերցողի ենթագիտակցության վրա՝ նրա մեջ արթնացնելով «բերնով ու գրիչով դժուարաւ բացատրուելիք զգացումներ, երազներ ու յիշատակներ» (ն. տ., էջ 462): Նա եզրակացնում էր, որ սիմվոլիզմը, որպես ուղղություն, բանաստեղծության պատմության մեջ բարեփոխման, ապա և մոռացման ենթակա մի շրջափուլ է և ոչ ավելին:

Սիմվոլիզմի և դրա հայ հետևորդների դեմ կտրուկ քննադատությամբ հանդես եկավ Ենովք Արմենը՝ իրեն հատուկ «քննադատական պարզունակ էմպիրիզմով»[1] գրված «Գրականութեան տիպարներ» (1907, թիվ 3, էջ 53–61) հոդվածով: Նա սիմվոլիզմի մեջ տեսնում է միայն գրական նախընթաց ուղղությունների բացասումը՝ հանուն արտառոցի և բացառիկի: Թեև նա այս ուղղության հայ հետևորդների թիվը հինգ-վեցից ավելի չի հաշվում, բայց ակնհայտ է, որ նրան անհանգստացնում է առհասարակ սիմվոլիզմի ավելի քան լայն տարածման երևույթը: Նորահայտ բանաստեղծական ոճը նա համարում է «անամէջ ու փքուռոյց» մի բան, դուրկ «բանաւորութեան ու ճշմարիտ գեղեցկի զրոյմէն»: Ենովք Արմենը նկատի ուներ Ինտրային, երբ գրում էր, թե սիմվոլիստների հայ «գրական ակումբի պարագլուխը» մի բանաստեղծ է, որը «սէմպոլիսթ անունով կը ճանչցուի»: Հատկանշական է, սակայն, որ Ենովք Արմենի՝ «Ներաչխարհի» քննադատությունը չի անցնում նրա հեղինակի անհատապաշտության քննադատության սահմաններից այն կողմ, այն իմաստով, որ Ինտրան «փառաբանեց իւնքզինքը մինչև կիսաստուածի դերեր ու դիրքերը առնելու աստիճան» (ն. տ., էջ 277): Իր հախուռն քննադատության թիրախ է դարձնում Ենովք Արմենը Մ. Պարսամյանին, Մ. Մեծարենցին, Վահրամ Թաթուլին, Է. Գոլանճյանին և այլոց: Նա ամբողջովին և թունոտ կրքով է մերժում հատկապես Մ. Մեծարենցի «Նոր տաղերը», որը, իր կարծիքով, անճանաչելի է դարձրել «գեղեցիկ խոստումներով

[1] Տե՛ս Սարինյան Ա., Հայոց գրականության երկու դարը, վիրք երկրորդ, էջ 203:

«Միածանի» հեղինակը» (նույն տեղում, էջ 278): Մեծարենցի «հուլը» և «հացը» բանաստեղծությունները նա գնահատում է պատշաճությունից հեռու որակումներով, որ վկայում է, անշուշտ, «Մասիսի» վերջին խմբագրի բանավիճային կասկածելի մակարդակի մասին: Սիմվոլիզմը քննադատելիս Ենովք Արմենը վոքը ի չատե հիմնավոր լինելու համար կարող էր հենվել դրա ծայրահեղությունների վրա և ոչ ավելին: Մի կողմ թողած սիմվոլիզմի բերած նորույթները՝ աշխարհընկալման բացառիկ նրբություններն ու լեզվի ու ոճի նույնքան բացառիկ նրբագեղացումներով լեցուն դրվագորումները, Ենովք Արմենը դրա քննադատությունը հասցնում էր միակողմանիության՝ ամբողջ խնդիրը հանգեցնելով սիմվոլիստների կողմից, իբր, «գաղափարի ու նիւթի սկասը պարտկելու նպատակին» (ն. տ., էջ 282)[1]:

«Մասիսում», սակայն, լսելի էր նաև սիմվոլիզմի պաշտպանների ձայնը, որ ուշադրություն էր հրավիրում եվրոպական չափանիշների չրջանառումներով ու մեկնաբանություններով: Արտ. Հարությունյանը հանդես էր գալիս ֆրանսիական սիմվոլիզմի տեսական հիմքերի ու դրույթների վկայակոչումով և այս իմաստով ճանաչողական նշանակություն ունի նրա «Ճառանսական դրականութեան դէմքեր. Ռէմի տը Կուռմօն» հոդվածը (1907, թիվ 16, էջ 306–311): Սիմվոլիզմը, որպես ուղղություն, նա հակադրում է, մի կողմից, բնասլաչտությանը (ռեալիզմ), իսկ մյուս կողմից՝ արդիական դեկադանսին, մասամբ նաև հետ գնալով՝ պառնասականությանը: Սիմվոլիզմի ռահվիրաներին՝ Լ. դը Լիլ, Վեռլեն, Մալարմե, դը Ռենիե, Մորեաս, Մ. Մետերլինկ և ուրիշներ, նա համարում է նոր

---

[1] Սիմվոլիզմի հախուռն մերժումը նոր որակներ էր ստացել հայ խորհրդային մի շարք գրականագետների աշխատություններում: Ս. Աղաբաբյանը առավել քան ծանրանում է այդ ուղղության գաղափարաբարոյական քննադատության վրա՝ նշելով, որ այն դարձավ «անհատապաշտության ու միստիկական անարխիզմի դրոշակակիր» (Աղաբաբյան Ս., Եղիշե Չարենց, գիրք առաջին, էջ 33): Սիմվոլիստական գեղագիտության հանդեպ նրա վերաբերմունքը, սակայն, շատ ավելի ներողամիտ է, հատկապես այն դեպքում, երբ խոսքը վերաբերում է «հայ գրականության սիմվոլիստական հագեցմանը» (ն. տ., էջ 41), այսինքն, կամուրջներն, այնուամենայնիվ, չայրելուն:

գրական ուղղության շրջադարձը պայմանավորող դիմքեր, որոնք հրապարակ են իջնել մտքի և զգացողությունների նոր պահանջներով, այն ժամանակ, երբ «գրասէր հասարակարդը զղուած էր այլ բնապաշտութեան աղբանոցէն» (ն. տ., էջ 306): Արտ. Հարությունյանը սիմվոլիզմի բնութագրական հատկանիշներն է համարում արվեստի ազատությունը և «իմաստասիրական գաղափարապաշտութիւնը», ընդամին, այս վերջինը ամբողջովին ենթարկելով ստեղծագործող սուբյեկտի երևակայությանն ու մտքին: Նա չի մոռանում, որ սիմվոլիզմի տեսական ակունքների մոտ է կանգնած Շոպենհաուերը՝ կամքի, զգացումների անհատականացման սկզբունքները բացարձակ հռչակելու իմաստով: Լավատեղյակ ֆրանսիական սիմվոլիզմի գեղագիտական դրույթներին՝ Արտ. Հարությունյանը անցնում է այդ դրույթները ձևակերպողներից մեկին՝ Ռ. դը Գուրմոնին, ընդգծելով, որ «արվեստը՝ արվեստի համար» բանաձևման հիմքում նա դրել է արվեստի ձևի անհատական ընկալման հիմնախնդիրը: Այս բանաստեղծը, նկատում է նա, ոչնչապաշտ է և անբարոյապաշտ, «ինք կատէ արուեստին ժողովրդականացման նուաստացուցիչ գաղափարը, զոր խակ ու անմիտ կը գտնէ: Եւ ասիկա այն իրաւամբ, որ ժողովուրդը, որ արուեստի գործին մէջ առ առաւելն զգացումներ միայն կարող է տեսնել, աւելի կամ նուազ հասարակ ու անընդունակ է հասկնալու ձևը՝ իսկութիւնն իսկ արուեստի գործին» (ն. տ., էջ 309):

Իր հերթին, Ռ. Սամիկյանը, որ դեղերում էր գրական ուղղությունների նկատմամբ ունեցած իր համակրանքներում, համենայն դեպս, սիմվոլիզմի դեմ ամբարած քննադատական լիցքը մինչև վերջ պարպելու դնով կարող էր կասկածի տակ առնել գրական նախընթաց բոլոր ուղղությունները: Կարևի է կարծել, որ պատահական չէին ֆրանսիական գրաքննադատ Լ. Ֆաևկի կարծիքից նրա ընդարձակ վկայակոչումները («Կեղծիքը արուեստին մէջ», 1907, թիվ 34, էջ 680–683): Արվեստն առհասարակ, պնդում էր Ֆաևկն, անկախ իր ուղղությունից, չինծու և արհեստական հորինվածք է, մի դեպքում բարձրացնում է ու ազնվացնում կեղծ ու սարքովի

աշխարհ ստեղծելու միջոցով (ռոմանտիզմ), մյուս դեպքում դիմելով ոչ պակաս՝ համընդհանուր կեղծիքի և երևութական պատկերների՝ ունենալով իրականի հավակնություն (ռեալիզմ), քանի որ արվեստն ինքնին չի կարող իրական լինել: Ամբողջովին կեղծիք է նաև սիմվոլիզմի արվեստը, որը հետամուտ է «հոգիներ յուզելու եւ սրտեր խռնվելուն»՝ պատկերային կեղծ համակարգ ստեղծելուն, մոռանալով այն ճշմարտությունը, որ կյանքում արդեն կան այդպիսի հուզումներ ու խռովահարույց բազմաթիվ պատկերներ: Ակներև է, որ ֆրանսիական գրաքննադատը կեղծիքի միօրինակ ու ընդհանրական պիտակ-վակցնելով արվեստին, այդ թվում և գրական բոլոր ուղղություններին, չունի որևէ իրական մեկնակետ, որին հենվելով զանազանել կեղծը ճշմարտից, կամ բնութագրել կեղծիքը: Ուստի, դժվար չէ նկատել, որ նա ավելորդ է համարում ամեն մի արվեստ, այդ հիմնավորելով միակ ճշմարտացի սկզբի՝ կյանքի առկայությամբ: Բայց կյանքն ու իրականությունը, որքան էլ արվեստ ծնեն, դեռևս արվեստ չեն և արվեստն էլ դեռևս կյանք չէ: Այս հանգամանքն է, որ անտեսում են և Ֆակեն, և նրա տեսակետները անդրդվելիորեն վերարտադրող Ռ. Սամիկյանը: Եվ այս տեսակետից վերջինիս դիրքորոշման մեջ պետք է առանձնացնել նրա բանավիճային կիրքն ընդդեմ սիմվոլիզմի ու դեկադանսի:

Վերը տեսանք Արտ. Հարությունյանի՝ Ռ. Սամիկյանի մոտեցումից տրամագծորեն տարբերվող և սիմվոլիզմը հիմնավորող կարծիքը: «Մասիսի» հեղինակներից նրան սատարեց Զապել Եսայանը, որը միջամուխ եղավ Արտ. Հարությունյանի և Ռ. Սամիկյանի բանավեճին: Զ. Եսայանը իր համամտությունն է հայտնում Արտ. Հարությունյանին և սիմվոլիզմի ամենավայրուն շրջանի մեջ (հավանաբար, նկատի ունի 1850–60-ական թթ.) հայտնաբերում ըմբռստացում «իրերու ներկայ վիճակին դէմ»: Գրական այդ մեծ չարժումը, նկատում է նա, չի սահմանափակվում տնտեսական հարցի անձուկ սահմաններում, այլ իր ընդգրկումների մեջ է առնում մարդու, նրա զգացմունքների, մտքի ու կյանքի շատ ավելի լայն շրջաններ՝ «մեծ յեղաշրջում» բերելով դրանց մեջ: Այդ չար-

ժումը, հիրավի, իր դրոշմն է դրել համաշխարհային գրականության, արվեստների, անգամ արդի իմաստասիրական ու սոցիոլոգիական ըմբռնումների վրա, որ և ճգտում է նվազեցնել Ռ. Սամիկյանը: Միաժամանակ, Զ. Եսայանը տարբերակում է սիմվոլիզմը և դրան հաջորդող դեկադանսը, համենայն դեպս, առանձնացնում է սիմվոլիզմի դասական ներկայացուցիչներին՝ ի դեմս Մալարմեի և հետագա շրջանի սիմվոլիստների: Դեկադենտները, նկատում է նա, մինչդեռ, «գաղրեցան նոյն պայքարող, դիմագրավող եւ կեանքոտ դեր ունեննալէ» (1907, թիվ 27, էջ 546): Իր հետագա ընթացքի մեջ սիմվոլիզմը կորցրել է իր կենսունակությունը, կորցրել նշված որակները և վերածվել անցյալի: Ֆրանսիական պոեզիան, նկատում է Զ. Եսայանը, ներկայումս ապրում է անցման շրջան, որի հետագա զարգացումների մեջ առկա կլինեն սիմվոլիստական դպրոցի հեղաշրջող հետևանքները (նշ. տ., էջ 547):

Տեսական հարցադրումների հետ միասին և շատ ավելի հաճախակի, «Մասիսը» քննարկել է ժամանակի գրական կյանքի ընթացիկ խնդիրները: Գավառական գրականություն հասկացությունը ևս, որ շրջանառվել էր դեռևս 1880-ական թթ. «Արևելքի» և «Մասիսի» էջերում, ենթադրում էր նախ, որպես գրական երկի առարկա, ընտրել Արևմտյան Հայաստանը, նրա բուն ժողովրդի առօրյան, կենցաղը և իրավական վիճակը, հոգեբանությունը, բարոյական ըմբռնումները և այլն: Եվ երկրորդ, դեղարվեստական պատկերման խնդիրը, այդ իրական միջավայրն ու մարդը պետք է դառնային ռեալիստական գրականության առանցք: Մի հայտնի չափով այս մտայնությունը կապվում էր հայ իրականության մեջ խմորվող ազգային բաղձանքներին, որոնց սնուցման ու ծավալման համար էական նշանակություն ուներ հայրենիքի և հայ գավառացու ճանաչողության խնդիրը: Գավառական գրականությունը ենթադրում էր նաև բուն գավառացի գրողների ստեղծած գրականությունը՝ այն պոլսահայ գրողներին հակադրելու իմաստով, որ չափով գավառացի գրողներից էր ակնկալվում իրենց լավ ճանաչած միջավայրի և անհատի իրական պատկերումը: Այս նպատա-

կով «Մասիսը» առանձնացրեց «Գաւառական գրականութիւն» խորագիրը, որի ներքո տպագրում էր հույսեր ներշնչող ստեղծագործողներին: «Գրող ըլլալ» հոդվածում Ենովք Արմենը հանրութեան ուշադրութեանն էր հանձնում գավառի պատանի ստեղծագործողների գործերը, նկատի առնելով, որ այս հեղինակները դեռևս չունեն գրական լիարժեք ճաշակ, լեզվի նրբութիւն, բայց, իր կարծիքով, այդ որակները նրանք կարող են ձեռք բերել անհրաժեշտ հոդածութեան դեպքում (1905, թիվ 11, էջ 167–170): Նույն թեմայով իր մյուս հոդվածում՝ «Գաւառացի գրագէտները» վերնագրով, Ենովք Արմենը առավել քան գործնական մոտեցումներ էր ցուցաբերում այս հիմնահարցին, ցույց տալով, որ պոլսահայ գրաքննադատութիւնը քիչ է զբաղվում գավառական գրողներով և որի պատճառներից է համարում գավառացի գրողների սակավաթիվութիւնը (1906, թիվ 4, էջ 55–58): Ենովք Արմենը դրան է ավելացնում մայրաքաղաքից գավառի կտրվածութեան, առաջինի մտավոր ու գրական կյանքին անհաղորդ լինելը: «Մասիսի» այս գրաքննադատը լիովին անկեղծ էր, երբ հայտնում էր, որ գավառից խմբագրութեանն ուղղված չափածո գործերի վիթխարի քանակից ընդամենը մի քանիսն իրավունք ունեն բանաստեղծութիւն կոչվելու: Ռ. Զարդարյանը՝ գավառական գրականութեան թող որ քիչ, բայց փայլուն ներկայացուցիչներից մեկը, գավառական գրողներին խորհուրդ էր տալիս, որ նրանք «բարացուցական (համեմատական- Ա. Խ.) բազմակողմանի ուսումնասիրութիւններ ընեն» և որ «պէտք չէ, որ մասնակի դրուագներ ընդհանրացնեն եւ անով միակողմանի համոզումներ ունենան» (1903, թիվ 30, էջ 468): Մամուլում, մինչդեռ, պատկերն այլ է՝ գավառից ստացված անորակ թղթակցութիւնները, ի տարբերութիւն գրական գործերի, չարունակաբար տպագրվում են: Սակայն այս նորահայտ թղթակիցների թեմատիկան նեղ է և միօրինակ, նրանք գրիչ են շարժում բացառապես կրթական-եկեղեցական հարցերի շրջանակներում: Գավառական թղթակիցները չեն հասել հրապարակախոսութեան մակարդակին, ճիշտ այնպես, ինչպես բանասերները՝ գրաքննադատի: Վերոհիշյալ

հոդվածի չարունակության մեջ (1906, թիվ 5, էջ 72–76) Ենովք Արմենը փորձում էր ամեն կերպ հիմնավորել գավառական դրականության անհրաժեշտությունը ազգային դրականության զարգացման համար և թաթիանցիկ ակնարկներ էր ուղղում նորագույն դրական ուղղությունների հետևորդներին: Գավառական դրականությունը, կարծում է նա, իր հիմքում ունի գավառի կյանքի ու մարդու գեղարվեստական քննության անգերազանցելի հետանկարներ. «Այս ըմբռնումով գաւառական գիտակից գրականութեան մ՝արժէքը միշտ վեր է աշխարհաքաղաքացիական որեւէ գրականութեան արժէքէն, որոնցմէ առաջինը ըլլալով պատկերը այն կեանքին, որ գրէթէ անվթար մնացած է՝ գնդած արտաքին տարամուտ ազդեցութիւններէ, իսկ վերջինը՝ միշտ ենթակայ օտար նկամուտ տարրերէ պատուաստին» (ն. տ., էջ 72): Այստեղից արդեն պարզ է դառնում Ենովք Արմենի ծայր աստիճանի բացասական վերաբերմունքը դեկադանսի նորօրյա դրսևորումների, սիմվոլիզմի ազդեցությունների, անգամ, ինչպես տեսանք, Մ. Մեծարենցի «Նոր տաղերի» նկատմամբ: Այս հեղինակը կանդնած էր 19-րդ դ. 80-ականին արդեն ձևավորված ռեալիստական գեղագիտության ու դրաքննադատության դիրքերում և բացառում էր այն ամենը, ինչը չէր համապատասխանում իր դիրքորոշմանը: Ընդ որում, Ենովք Արմենը արհեստականորեն բաժանում էր արձակի և չափածոյի արժեքները. արձակից նա ակնկալում է իրական պատկերների վերարտադրություն (բնաշխարհ), իսկ չափածոյից՝ համամարդկային տրամադրություններ՝ հաջողված ձևի մեջ (նույն տեղում, էջ 72–73): Ե. Արմենը հովվերգական քաղցր-մեղցր պատկերացումներ ունի գավառական կյանքի, բնության, մարդկանց ու նրանց փոխհարաբերությունների մասին: Նա գավառական դրողներին գայթակղում է «գեղջուկի աւանդական անմեղ ըմբռնումներու», «կանանչորակ զմայլելի լեռներու և ծմակներու» կախարդիչ պատկերներով, «որոնց կուչտին վրայ լեռնցի չարքաշ հոտաղներ եւ ամօթխած խաւտուտիկ հովիւուհիներ իրենց սրինգին անոյշ խաղերը կը հնչեցնեն եւ գողունի սիրվըտուքներու դարպասները կը սպրքեն»

(ն. տ., էջ 74): Այսուհանդերձ, Ենովք Արմենը գավառական դրականության զարգացման ընթացքն աշխատում էր պահպանել դանդկացումից, երբ մերժում էր գավառաբարբառով գրված գրականությունը: Այդ գրականության նյութը և դրոշմը պետք է լինի միայն գավառական, իսկ լեզուն՝ պոլսահայ արդեն մշակված գրական աշխարհաբար, որով գրում են Թլկատինցին և նրա նման գրողները, կարծում էր նա (ն. տ., էջ 75–76):

«Մասիսի» բերած գրաքննադատական նորույթներից էր կին գրողների («կնոջական գրականութեան») ստեղծած գրականության հիմնահարցի առաջադրումը, որ եվրոպական գրաքննադատության ազդեցության ամրապնդումն էր ժամանակի հայ իրականության մեջ, կին գրողների հայտնության համար: «Մասիսն» իր ընթերցողին ծանոթացնում էր Զ. Եսայանի, Մարի Սրապյանի, Արշակուհի Թնդիկի, Սաթենիկ Հարությունյանի (Թլկատինցու դուստրը), Իսկուհի Մինասյանի և Մարիանե Տամատի (երկուսն էլ Ֆրանսադիր) ստեղծագործություններին, տալիս նրանց գրական վաստակի գնահատականը՝ միշտ իրախուսանքով, բայց առանց հաճոյախոսության: Ամենից հաճախ չաբաթաթերթը գնահատման օբյեկտ է դարձրել Զ. Եսայանի ստեղծագործությունը: Դամերից հետո (Դամերը Տ. Արփիարյանի ծածկանունն է),[1] որը բարձր էր գնահատել Զ. Եսայանի դրելաձևը և առհասարակ, ստեղծագործական խառնվածքը (1903, թիվ 14, էջ 217), գրողի երկերին անդրադարձան նաև Ռ. Սամիկյանը, Ենովք Արմենը և ուրիշներ: Հատկապես Սամիկյանն ուշադրություն էր դարձնում Զ. Եսայանի զգայուն և նուրբ ընկալումների և «մշակուած մտքի վրայ» վերջին դեպքում նրան բնութագրելով որպես հանրային կյանքի հանդեպ գործուն վերաբերմունք ունեցող մի գրողի, որը հետամուտ է ամոքելու այդ հանրության բարոյական ցավերը: Քննադատն այս տեսանկյունից է մոտենում Զ. Եսայանի «Սպասման սրահը», «Շնորհքով մարդիկ», «Իսկիւտարի վերջալոյսները» և այլ գործերի արժեքին (1907, թիվ

[1] Տես Շարուրյան Ա., նշվ. աշխ., էջ 84:

20, էջ 391–396): Ենովք Արմենն, իր հերթին, «Մասիսում» տպագրեց Զ. Եսայանի «Շնորհքով մարդիկ» արձակ գործի գրախոսականը: Չնայած քննադատական որոշ ոչ հիմնավոր դիտողություններին ու հակասական մտքերին, Ենովք Արմենը նկատում էր վեպի այնպիսի արժանիքները, ինչպես հոգեբանական խորությունը, տպավորիչ, բարձրարվեստ շարադրանքը և այլն (1907, թիվ 27, էջ 545–546):

Ուշագրավ է Ա. Ալպոյաճյանի կարծիքը զմյուռնացի կին գրող Մաուի Սրապյանի «Իմ իտէալը» վեպի մասին (1903, թիվ 10, էջ 147–150): Քննադատը հանգամանորեն վերլուծում է վեպի սյուժեն, կերպարները, բարքերի ուսումնասիրության կարողությունները և այլն: Ա. Ալպոյաճյանն այստեղ անում է մի հետաքրքիր դիտողություն՝ կյանքի ճանաչողության պակասը, որ, սակայն, չի աղարտում վեպի ընդհանուր հաջողվածությանը, առավել ևս կին գրողի համար, նկատում է նա: Ա. Ալպոյաճյանը, հավանաբար, վերջին քննադատներից մեկն էր, որի դատողություններում զգացնել է տալիս «կնոջական գրականության» արձագանքը: 19-րդ դ. վերջին տաննամյակների գրաքննադատության մեջ այս հասկացությունը ներառում էր կնոջ ապատագրման գաղափարը (սկսած Սրբուհի Տյուսաբից) և մյուս կողմից՝ աշխարհընկալման կանացի առանձնահատկությունները: Եվ մեկ, և մյուս դեպքերում, հատկապես 20-րդ դ. սկզբներից, նման ձևակերպման հարատևումը սպառնում էր գրականությունը բաժանել ըստ սեռային հատկանիշների և վերջին հաշվով՝ մեկուսացնել կնոջը գրականության մեջ՝ անհատականության հաշվին սահմանափակելով նրա ստեղծագործական հնարավորությունները ու թեմատիկան: Վերը տեսանք, որ «Մասիսի» գրաքննադատները Զ. Եսայանի ստեղծագործությունը դիտում են իբրև լիարժեք գրականություն՝ և բովանդակության, և կատարման իմաստով, բացառելով դրա «կնոջական» ամեն մի բնույթ: Ինքը՝ Զ. Եսայանը, իր «Նորեկները» հոդվածում (1905, թիվ 32, էջ 501–503) կարծեք հրաժեշտի խոսք էր ասում հին ձևակերպմանը, պնդելով, որ կին գրողի համար «վնա-

սակար բան մըն է իր մտաւորական ոյժերը սահմանափակել կնոջական գրականութեան մէջ» (ն. տ., էջ 502): Այս տեսանկիւնից է նա գնահատում Արշակուհի Թեոդիկի ստեղծագործությունը, որպես «գիտակից եւ հասուն» գրչի արտադրանք:

Վերոհիշյալ հիմնահարցը «Մասիսն» ընդլայնում է ժամանակի հայ կին գրողների վերաբերյալ հետաքրքիր տեղեկություններով: «Կին գրողներու չուրջը» հոդվածում Մ. Ուղուրլյանը կարծեք մոռացության մշուշի միջից փրկում է մի քանի տաղանդավոր ստեղծագործողների (1906, թիվ 6, էջ 84–86): Դրանց թվում նա հիշում է Ի. Մինասյանին, որը դեռևս 22 տարեկանից աշխատակցել է Փարիզի «Լա ֆամիյլ» հանդեսին, իտալերենից ֆրանսերենի է թարգմանել դ'Ամիչիս և դ'Անունցիո, ինչպես և պատմվածքներ տպագրել Կ. Պոլսի «Ստամբուլ» և «Լեվընդ Հերալդ» թերթերում: Մ. Ուղուրլյանը թարգմանել էր Ի. Մինասյանի մի պատմվածքը, որ կցել է խնդրո առարկա իր հոդվածին (ն. տ., էջ 86–87): Մ. Ուղուրլյանը հիշում է նաև մեկ այլ ֆրանսագիր գրողի՝ Մարիանե Տամատին:

*

* *

Իբրև գրական հրատարակություն, «Մասիսը» նոր ուղիներ էր հարթում հայ գրականության ընթացքի մեջ և ամենից առաջ՝ իր գրական լայն ընդգրկումների շնորհիվ: Նրա ծրագիրը, որ ավելի կամ պակաս չափերով հաջողվեց իրագործել 1900–1908 թթ., այսօր էլ զարմացնում է իր պատկառելի չափերով, ոչ միայն ազգային գրողների ստեղծագործությունների, այլև համաշխարհային գեղարվեստական գրականության, նորագույն գրական ուղղությունների պատկանող երկերի թարգմանություններով՝ հայ գրական միտքն ու ճաշակը արդիականացնելու մտահոգությամբ: Ավելին, «Մասիսը» այդպիսի արդիականացումը չէր ենթադրում այլ կերպ, քան ազգային գրականության ավանդույթների պահպանության և քարոզչության միջոցով: Այդպիսի ծավալուն ծրագիրը հնարավոր էր իրականացնել ստեղծագործական լուրջ ուժերի շնորհիվ

միայն, որ և արեց «Մասիսը»՝ իր շուրջ համախմբելով արևմտահայ գրողների, գրաքննադատների և այլ մտավորականների մի փայլուն ջոկատի: Նրանց մեջ գործում էին այսօր (և ոչ միայն այսօր) դասականացած հեղինակներ, որոնք հենց «Մասիսում» թողած մեծ ազդեցությամբ կանխորոշեցին հայ արձակի և պոեզիայի զարգացման մի քանի կարևոր ուղիները:

Այստեղ տպագրվեցին Գր. Զոհրապի ագանչելի նորավեպերը՝ «Փոթուրլըն», «Փոստալը», «Մյուսը», «Վերադարձը» և այլ արձակ գործեր, որով 20-րդ դ. սկզբի հայ գրականության մեջ նորավեպը պահպանում էր առաջատար ժանրի իր տեղը: «Մասիսը» տպագրեց Զոհրապի մի քանի բանաստեղծությունները ևս, որոնք իրենց զգացմունքների խորությամբ ու քնարականությամբ ամբողջացնում են մեծ գրողի գործերի ինքնատիպ արվեստը: Զոհրապը «Մասիսում» ընդունվում է որպես դրչի խոշոր վարպետ, արդեն վաղուց ճանաչված գրական մեծություն, որ ամրապնդում էր շաբաթաթերթի հեղինակությունը ընթերցողների շրջանում:

Բավականաչափ տարբեր էր Մ. Մեծարենցի ներկայությունը «Մասիսում», որի էջերում նա կայացավ իբրև բանաստեղծ: Մեծարենցը ևս մասնակցել էր «Մասիսի» գրական մրցույթին և ստացել մրցանակ՝ մասնակիցների համար ընդհանուր «Բաժնուած սիրտեր» խորագրի տակ հանդես գալով իր երեք բանաստեղծություններով (յուրաքանչյուրի առաջին տողերը՝ «Հնւքոտ չունչդ կու գան մանն», «Երազի մը պէս գացին» և «Երազանքներ դիս կօրլեն» (1903, թիվ 24, 377): Այնուհետև տպագրվեցին իրենց պատկերային համակարգով բացառիկ անկեղծ և անսովոր՝ Մեծարենցի մյուս բանաստեղծությունները («Ցայգն է պայծառ», «Ցայգային», «Աքասիաներուն չուքին տակ», «Սիրերգ», «Մտերմիկ տեսիլներ» և այլ բանաստեղծություններ): 1906 թ. հետո Մեծարենցը չի տպագրվել «Մասիսում» և սրա պատճառների մեջ կարելի է նկատել շաբաթաթերթի վերջին խմբագիր Ենովք Արմենի («Մասիսի» խմբագիրը Տ. Արփիարյանից հետո, 1907 թ. փետրվարի 3-ի թիվ 11-ից) հույժ կամայական վերաբերմունքը բանաստեղծի նկատմամբ, որի գործերը

«Միածանից» հետո Ենովք Արմենը համարում էր մերժելի սիմվոլիզմի դրսևորումներ: «Մասիսի» այս խմբագիրը անպատշաճ հարձակումներ էր գործում Մ. Մեծարենցի «Նոր տաղեր» ժողովածուի դեմ (տես նրա «Բապօթէննելը» հոդվածը, 1908, թիվ 14–15, էջ 273–282), որ ցուցադրում էր նրա անհանդուրժողականությունը սիմվոլիզմի հանդեպ: Ժխտական այսպիսի հախուռն վերաբերմունքից, զերծ մնաց «Մասիսում» ամենից շատ տպագրվող առօրեական հեղինակներից մեկը՝ Մ. Պարսամյանը, որին ևս Ենովք Արմենը սիմվոլիստ էր համարում: Մ. Պարսամյանն այստեղ հանդես է եկել արձակ և չափածո գործերով ու հրապարակախոսական ու գրաքննադատական հոդվածներով: Իր բանաստեղծություններում («Տարակուսանք», «Լուին պաշտում», «Հանգրվանս», «Մտերմիկ տեսիլներ» և այլն) Մ. Պարսամյանը ցուցադրում էր ռոմանտիկական պոեզիայից սիմվոլիստական վերացական պատկերների ոչ այնքան հաջող անցման երևույթը: Մ. Պարսամյանը պատկերում է սիրո զգացման տարբեր հոգեվիճակները՝ կարոտից ու կենսասիրությունից մինչև անհուսություն և տվայտանք, հպանցիկ դեղեցկությունից մինչև սիրո վեհություն: Իր պատկերայնության և զգացմունքների միօրինակությամբ, սակայն, Մ. Պարսամյանի չափածոն մեծապես զիջում է Մ. Մեծարենցի անկրկնելի խորությանն ու երանգներին:

Ինչպես նկատեցինք իր տեղում, Մ. Պարսամյանը «Մասիսում» հանդես է եկել «Մաուի Հովհաննիսյան» ստորագրությամբ, արձակ և չափածո գործերով, այդ թվում և «Աղջկան մի ծրագրէն քաղուած» քրոնիկների շարքով: Մ. Պարսամյանը տպագրել է մի քանի նորավեպեր ևս («Բարեկամուհի», «Որքան դիւրին է եղլը», «Վրէժ» և այլն), որոնց համար բնութագրական են սիրո զգացման ծայրահեղ բևեռացումը, դրան հաջորդող հոգևոր ամայացումը, անսպառասխան սիրո հետևանքով թրծված հոգու ուժը և այլն: Վերոհիշյալ քրոնիկների շարքով ևս («Մասիսի» 1904 թ. համարներում) Մ. Պարսամյանը նոր բան չի ավելացնում 19-րդ դ. վերջի

արևմտահայ քրոնիկագրությանը, որի անդիրազանցելի վարպետները մնում են Ա. Արփիարյանը և Ե. Տեմիրճիպաշյանը: Ավելին, չարագրանքի ոճով Մ. Պարսամյանը կրում է Ե. Տեմիրճիպաշյանի ազդեցությունը՝ հայտնապես ազդված վերջինիս «Ազգկան մ'օրագիրը» քրոնիկներից (որոնք տպագրվել էին դեռևս 1880-ական թթ. «Մասիսի» և «Արևելքի» էջերում)[1], ընդհանուր այուժետային դծի, բանաստեղծական ու խոհական մտորումների և ոչ վազ անցյալի մտավորականությանը անդրադառնալու տեսակետից: Այս իմաստով ուշագրավ են, սակայն, նշված քրոնիկներից մեկում Մ. Պարսամյանի ընդգծված զուգահեռները 1880-ականի և իր ժամանակի պոլսահայ մամուլի միջև: Իր ժամանակի՝ այնքան նկատելի լրագրական գրականության լրջության պակասին և դադափարազրկությանը նա հակադրում է Գր. Զոհրապին, Տ. Կամսարականի, Ե. Տեմիրճիպաշյանի և այլոց արձակ գործերի ու հրապարակախոսության հանրային խոր բովանդակությունը (1904, թիվ 28, էջ 442–445):

«Մասիսին» ժամանակի հայ դասական պոեզիայի հետ էր առնչում նաև Ռ. Սևակը (Չիլինկիրյան): Նա այստեղ տպագրել է մեկուկես տասնյակից ավելի բանաստեղծություններ, ընդ որում, մեկը թարգմանություն է Լըկոնտ դը Լիլից՝ «Յորնկ» վերնագրով (1907, թիվ 14, էջ 273): Իր՝ Ռ. Սևակի բանաստեղծությունները տպագրվել են «Մասիսի» վերջին շրջանում՝ 1907–1908 թթ.:

Ռ. Սևակի ստեղծագործության մեջ ևս դգացվում է սիմվոլիստական պոետիկայի և պատկերավորության ազդեցությունը: Նրա բանաստեղծական աշխարհին հատուկ են ներքին լարվածությունն ու դրամատիզմը՝ անընդհատ շարժման մեջ պատկերվող ապրումներով: «Հոգիս», «Գինով սէր», «Կարապները» և այլ բանաստեղծություններում ակնհայտ է մեծ կրքերի և դրանց բնականոն պատկերման ձևի ներդաշնակությունը: Նկատվանան Ռ. Սևակի համար սոսկ հայեցողական անդորը չէ, այլ պրեթե առարկայական՝

[1] Սողոմոնյան Գ., Նոր լրագրությունը Կ. Պոլսում 19-րդ դարի 80-ական թթ., էջ 110, 177-178:

Հախուռն կրքերը բանաստեղծական ձևի մեջ ամփոփելու և չոշափելի դարձնելու համար («Աքիա Մունի»): Այս նույն առարկայականության, ավելի շուտ դրա և վերացականության փխրուն սահմանագիծն են ուրվագծում Ռ. Սևակի մյուս բանաստեղծությունները ևս («Տրտում ոգի», «Էտլվայս»)՝ անրջանքի և իրականության սերտաճումով և բանաստեղծական չքեղ դրսևորումներով: «Էտլվայսը» տպագրելով, «Մասիսի» խմբագիրը տողատակում հայտնում է, որ Ռ. Սևակը «ընթերցողներուն ծանօթ բանաստեղծ մըն է, որ անմիջապէս համակրութենան եւ գնահատութեան նշաններով ողջունուեցաւ ընթերցողներէն» (1908, թիվ 9, էջ 181): Սևակը միայն զգացումների վեհության և միմյանց հերթագայող չքեղ պատկերների բանաստեղծ չէ. նրա գործերում գրեթե միշտ զգացնել է տալիս մնայուն գեղեցկության կամ գեղեցկության հավերժացման իրողությունը, որքան էլ այդ գեղեցկությունը խաթարվի մարմնավոր ձևերի մեջ կամ ներկայացվի միստիկական պատկերացումներով («Այդ գիշերը», «Զղջում», «Ժպիտ»): Ռ. Սևակի բանաստեղծական աշխարհը՝ զգացմունքային և գեղեցիկ սրոնումներով, կենսասիրական տրամադրությամբ է համակում նաև իր սոցիալական ակնհայտ ուղղվածությամբ («Պիտի սպասեմ»): Նրա տպագրած գործերն ի հայտ են բերում սիմվոլիստական պոետիկայի նրբությունները՝ հատկապես զգացման և դրա արտահայտաձևերի ինքնատիպ միասնության մեջ:

«Մասիսում» համեմատաբար քիչ են տպագրվել նրա մյուս բանաստեղծները՝ Մ. Աճեմյանը, Արտ. Հարությունյանը, Տ. Նազարյանը, Մ. Ուզուրլյանը, Ե. Գոլանճյանը և այլք, որոնց ստեղծագործությունն անպայման առնչվում է դրական նոր ըմբռնումներին և կրում է ժամանակի արևմտյան պոեզիայի ազդեցությունը:

Ավագ սերնդի բանաստեղծների մեջ «Մասիսն» ակնածանք ունի հատկապես Ե. Տեմիրճիպաշյանի նկատմամբ, որի ստեղծագործությունը հայ բանաստեղծության զարդացման դարավերջի ընթացքը ներկայացնելուց բացի, իր խորհրդավոր բնկված պատկերների հուշարկումներով կարծնք կամուրջ էր ստեղծում արևմտյան դեկադանսին առնչվելու համար: 1907–1908 թթ. «Մասիսը»

տպագրեց Ե. Տեմիրճիպաշյանի մի քանի բանաստեղծությունները («Թաչկինակն», «Վարդաչէք», «Եղջերուին երգը» և այլն), և մեկ ակնարկը («Մեր Պոսֆորը»), տպավորիչ՝ իր բանաստեղծական խոր ապրումներով (1907, թիվ 3, էջ 57–58): Միաժամանակ, կարծեք սահմանադատվելով Ե. Տեմիրճիպաշյանի ծայրահեղությունները, բայց և հաշվի առնելով տաղանդավոր գրողի արժանիքները, «Մասիսը» տպագրեց Գր. Զոհրապի «Եղիա Տէմիրճիպաշեան» հոդվածը (1907, թիվ 38, էջ 759–762), որտեղ ընդհանրացված ներկայացվում է հակասական գրողը, նրա լեզվական նուրբ զգացողությունը, որի դարձվածների ու նորակերտ բառերի մեջ Զոհրապը նկատում է և ինչպես տեսանք, այլանդակության չափ ծայրահեղություններ: Զոհրապը դրա, իսկ ամենից առաջ Տեմիրճիպաշյանի անդրաշխարհային իռացիոնալ պատկերների «յոռետես վարդապետութեան ու նրազատեսութեան» մեջ նկատում է իրական վտանգ՝ թողած ազդեցությունը նրա արժանիքները չունեցող երիտասարդ գրողների վրա (ն. տ., էջ 761): Ռեալիստ Զոհրապը հավատարիմ էր մնում բարոյական բարձր ու միաժամանակ, առողջ ու իրատեսական ըմբռնումներին, որ կարող էր գոհացնել դեկադանսի նկատմամբ իր հակակրանքները չթաքցնող «Մասիսին»:

«Մասիսում» նկատելի է դարասկզբի արևմտահայ երգիծանքի զարգացումների ընթացքը՝ ի դեմս չափածոյում Ադ. Փանոսյանի և արձակում՝ Հ. Ալփիարի: Ադ. Փանոսյանը (Ալփասլան) «Մասիսում» տպագրել է մեկ տասնյակի չափ երգիծական բանաստեղծություններ, որոնցից քչերն ունեն հասարակական հնչեղություն և աչքի չեն ընկնում հումորի և երգիծանքի լայն շառավղով: Ալփասլանը չափածոյի է վերածել անեկդոտանման այուժենները, առօրեական դավեշտական իրավիճակներ, որոնք ընթերցողին զվարճացնելուց այն կողմ չեն անցնում («Սէր», «Յանդապատում», «Տասնոցը» և այլն): Այնուամենայնիվ, Ալփասլանի երգիծանքը երբեմն հասնում է ընդհանրացումների, երբ շոշափում է դրական միջավայրին հուզող խնդիրներ, ինչպիսիք են դավառական դրամոլների ու թղթակիցների ստեղծագործական մարմաջի երգիծումը

(«Անօգուտ խօսքեր»), Քրիզանթէմին (Հ. Ալփիար) նվիրված սրամիտ բանաստեղծությունը («Խառնակ յանգեր» 1903, թիվ 18, էջ 115) և այլն: Եվ քանակով, և բովանդակությամբ Ազ. Փանոսյանի գործերը քիչ բան են ավելացնում «Մասիսի» երգիծանքին, եթե նկատի չունենանք, որ նա չաբաթաթերթի միակ երգիծարան բանաստեղծն է:

Խնդիրը բոլորովին այլ է Հ. Ալփիարի ստեղծագործություններին պարագայում: Այս հեղինակը բազմիցս տպագրվել է «Մասիսում», ինչպես և ժամանակի արևմտահայ շատ այլ պարբերականներում՝ մեզ արդեն հայտնի երգիծական քրոնիկի, նորավեպի, ֆելիետոնի, մանրապատումների ժանրերով: Հ. Ալփիարը «Մասիսում» ևս շարունակում է ստեղծագործել նույն թեմանների շրջագծում՝ կենցաղ, բարոյական հարաբերություններ սեռերի միջև՝ մնալով միշտ նույն զվարթ, սրամիտ, դիպուկ, երբեմն՝ գռեհկությունններում շրջանառող իր երգիծանքով: Ալփիարի երգիծանքում զգալի է ֆրանսիական գրական ազդեցությունը՝ թեթևամիտ, հպանցիկ ու նրբաճաշակ, բայց հենց այս հատկանիշների շնորհիվ էլ, որքան էլ տաղանդավոր՝ Ալփիարը կորցնում է իր ժողովրդայնությունը կամ դեմոկրատիզմը՝ հասու չլինելով ամենաբազմամարդ, միջին խավի ընթերցողներին: Ալփիարը կրթված, մտավորական նոր շերտերի երգիծաբանն է, որը չհասակացվեց անգամ այդ մտավորականության պահպանողական շրջանների կողմից, որոնք չհապաղեցին նրան հռչակելու «անրարոյական, վրան-բաց» երգիծանքի ներկայացուցիչ: Ուշագրավ է, այս իմաստով, դարասկզբի «Մասիսի» առաջին խմբագիր Տ. Արփիարյանի վերաբերմունքը Ալփիարի և նրա ստեղծագործության նկատմամբ: 1900–1905 թթ. Տ. Արփիարյանը անընդհատ տպագրել է Ալփիարի գործերը՝ հակադրվելով վերջինիս հակառակորդներին: Բայց վրա հասավ ընդհարումը. 1905 թ. «Արևելյան մամուլի» էջերում Հ. Ալփիարը ծաղրեց ամերիկաբնակ մեծահարուստ Հ. Թավշանճյանի դրական վորձերը «Բյուզանդիոն» թերթում, ինչպես և նրա հայտարարած հակաալկոհոլային թեմաններով մրցույթը մամուլում: Իր հերթին, արձա-

պանքելով պրան, Հ. Թավշանճյանը նշել էր Ալփիարի «գրչի ազատությունները», որին ի պատասխան, երգիծաբանը խոստացել էր այսուհետև միայն «մաքուր բաներ գրել», պայմանով, որ մեծահարուստը վճարի Զմյուռնիայի առաջնորդարանի պարտքերը՝ ավելի քան տասը հազար ոսկու չափով (1906, թիվ 12, էջ 178):

Դրանից հետո էր, որ Տ. Արփիարյանը կարուկ փոխեց իր վերաբերմունքը (ակներևաբար՝ ոչ առանց Հ. Թավշանճյանի հուշարկումների) Հ. Ալփիարի հանդեպ՝ հանդես գալով առաջինի պաշտպանութեամբ (1906, թիվ 3, էջ 33-34): Քիչ անց, Տ. Արփիարյանը նույնիսկ ուշացած խոստովանություն է անում «Ալփիարի «վրանբաց» գործերի հանդեպ իր մշտական հակակրանքի մասին և մտաբերում «Դևը իր (Հ. Ալփիարի – Ա. Խ.) այն քրոնիկներուն, զորս մերժած յետ դարձուցած եմ իրեն, որովհետև պատշաճութեան սահմանները ոտնակոխ կընէին բոլորովին» (1906, թիվ 11, էջ 163, տես նաև թիվ 12, էջ 177–178): «Մասիսի» խմբագրին ձայնակցեց Հ. Թավշանճյանը՝ իրատական ոճին դժվար հարմարվող իր գայլուկը թափելով «իզմիրցի քրոնիկագրի» գլխին (1906, թիվ 18, էջ 276–280): Դրանից հետո Ալփիարը խզել է իր կապերը «Մասիսի» հետ և միայն չաթաթաթերթի նոր խմբագրի՝ Ենովք Արմենի ժամանակ վերսկսել իր աշխատակցությունը (1907, թիվ 28–29, էջ 562–563):

Տ. Արփիարյանի նշված հուշերից առաջ, մինչդեռ, «Մասիսը» շատ ավելի լայնախոհ բնութագրեր էր տալիս Հ. Ալփիարին: Այսպես, Քրիզանթեմին նվիրված իր մի հոդվածում Գամեր-Արփիարյանը ժխտում էր այն մեղադրանքը, թե նա «դայթակղական բաներ գրող է» և ցույց էր տալիս, որ նրա ստեղծագործությունը կենսուրախ է, մարդամոտ և սրամիտ (1903, թիվ 15, 235): Հ. Գազանճյանը ևս դրվատում էր Ալփիարի երգիծանքի արժանիքները, դրա իրապատում բնույթը՝ «ընտանեկան կամ ընկերական կեանքի տեսարաններ կը ցուցադրէ հիանալի ճշդութեամբ մը» (1904, թիվ 2, էջ 20): Խնդրին առավել լայն կտրվածքով էր մոտենում Տոմինոն: Ալփիարին նա համարում է արևմտահայ երգիծանքի մեջ նոր դպրոցի հիմնադիր և ընդգծում նրա երգիծանքի չարժունակութե-

յունն ու միաժամանակ, ուրույն փիլիսոփայությունը, որի շնորհիվ «կեանքի ունայն մոլորանքներից ու դարչ տափակութիւններից» աղվաճ երգիծարանը մնում է միանգամայն անկեղծ ու անսեթևեթ (1905, թիվ 18, էջ 118): Հետաքրքիր է, որ Հ. Պարոնյանի և Հ. Ալփիարի միջև զուգահեռներ անցկացնելիս Տոմինոն առանձնացնում է առաջինի դասականությունը, երգիծական տիպեր ստեղծելու մեծ կարողությունը, մինչդեռ Ալփիարը, նկատում է նա, հալանցիկ և արդիական երգիծարան է, որի հերոսները որքան էլ պատահական, այսուհանդերձ, մնում են ընթերցողի մտապատկերում, ինչպես ցնորական, ծաղրական եւ այլանդակ մարդկանց ուրվագծեր (նույն տեղում, էջ 119):

Հիրավի, Ալփիարի երգիծանքն ունի անեկդոտային ամենատարրեր իրավիճակներ ու պահեր, նրա սրամտությունը ծայր է առնում ու տարածվում կենցաղի, ինչպես և հասարակական կյանքի ամենատարբեր ծալքերում, հայտնաբերում ծիծաղելին ու ծաղրելին: Բայց ինքը՝ զավեշտական իրավիճակների ու հերոսների արարողը, թվում է, իր ծաղրը հաճախ հանձնում է առօրեականությանը, նրան առավել հետաքրքրում է ծաղրի ու զավեշտի նոր թիրախը՝ թարմությունը, քան արդեն ցուցադրանքից ընդհանրության հասնելը, որին խանդարում է նույն այդ չտապողականությունը: Մեծ կրքերի ու բախումների անհատական ու հանրային կարևոր կոնֆլիկտների սլաքան է, որ դժգույն է դարձնում Ալփիարի երգիծանքը Հ. Պարոնյանի անսահման ընդգրկումների արվեստի առջև: Եթե Հ. Պարոնյանը երևսպաշտությունն ու կեղծիքը ցուցադրում էր բարոյական վեհ արժեքների համադրության մեջ, անկախ այն բանից, թե նա ակնարկում է այդ արժեքների մասին, թե ոչ, Հ. Ալփիարը շատ հաճախ նույն այդ երևսպաշտությունն ու կեղծիքը մերկացնում է առանց բարոյական դատավճռի՝ մնալով ծիծաղելի փաստից բխող սրամտաբանության սահմաններում: Սա արդեն անեկդոտային այն ոճն է, երբ գռեհկությունը մերկացվում է գռեհկությամբ և այս է, որ ծայրահեղության էին հասցնում Ալ-

փիարի քննադատները՝ նրան հանրաւալի մեղադրելով անպատկառութեան ու ցինիզմի մէջ:

«Մասիսում» Քրիզանթեմ-Ալփիարը երբեմն իր քրոնիկները տպագրել է «Շոգմոգ մտածումներ» խորագրով: Դրանք կամ երգիծական նորաւեպեր են կամ իրապատում սյուժէներ՝ մշակութային երեւոյթների, մտաւորականների, պատրիարքարանի և այլնի քննադատական խայթոցներ, բարքերի երգիծական գնահատումներ և այլն: 1907 թ. վերսկսելով «Մասիսին» իր աշխատակցութիւնը, Ալփիարը հանդէս էր գալիս «Ալփիարարանութիւն» խորագրի ներքո, որտեղ նրա երգիծանքը չարունակում էր պահպանել առօրեականութեան հանդեպ իր հակվածութիւնը, զվարթ ու սրամիտ ծաղրն ու հումորը՝ հաճախ անսպասելի և սրամիտ ավարտով: Կինը և նրա բարոյական կերպարը, ընտանիքում և հասարակութեան մէջ նրա դիրքն ու պահվածքը այս շրջանում ևս մնում են երգիծաբանի ուշադրութեան կենտրոնում: Քաղքենի հայ ընտանիքը, ապա միջավայրը կնոջ միջոցով բացահայտելու եղանակը Ալփիարի նախասիրած ձևերից է, որ ի դեպ, նա ժառանգել է հայ դասական երգիծանքից (Հ. Սվաճյան, Հ. Պարոնյան)՝ ներշնչումներ գտնելով նաև ֆրանսիական ժամանակակից դրականութիւնից: Կանանց թերութիւնների երգիծումը և առհասարակ, ընտանիքի և կնոջ բարքերի երգիծական ճևախեղումների սեփական համակարգը Ալփիարին հաջնում են դրանից բխող այն եզրակացութեանը, որ ֆեմինիզմը հայ հասարակութեան մէջ իրականանալու ոչ մի հիմք և հեռանկար չունի: Կնոջ հավասարութիւնը տղամարդուն, առաջինի հասարակական գործունեութիւնը նա ընկալում է ֆիզիկական բնութիւնից տրված՝ սեռերի տարբերութեան տեսակետից: Կնոջ հասարակական գործունեութիւնը Ալփիարը համարում է «խոլ վազք մը դեպի անկարելին, անտեղի մարմաջ մը եւ սխալ գաղափար մը, զոր առաջին անգամ տանը մնացած օրիորդ մը հղացած ըլլալու է» (1902, թիվ 46, էջ 719):

Նույն կարծիքն ունի ֆեմինիզմի և կնոջ հանրային գործունեութեան վերաբերյալ Գր. Զոհրապը: Նույն այս «Մասիսում» հի-

չատակելով Տյուսաբի «Մայոտա» վեպի առթիվ իր երբեմնի բանավիճը Ռ. Պերպերյանի հետ, Զոհրապը նշում էր. «Ես իմ արեւելքցիի համառութեամբս այդ դատին (ֆեմինիզմի — Ա. Խ.) դեմ կը մաքառէի եւ կը մաքառիմ՝ համոզուած, որ ատով կինը կը կորսնցնէ, քան թէ կը շահի իր չնորհին մէջ» (1901, թիվ 43, էջ 676):

Անկյալ հասարակական բարքերի և դրա հետ միասին բարոյական արժեքների կորուստը աղետալի մի բան էր թվում ռեալիստ Զոհրապին, որը կնոջ մեջ, նրա միջոցով ընտանիքի և հասարակության պահպանության վերջին հանգրվանն էր տեսնում: Փչացած բարքերի ու բարոյականության անկման այնպիսի վիհը՝ հասարակական կյանքը, որի մեջ կարող էր նետվել կինը ֆեմինիստների ենթադրած տղամարդու և կնոջ իրավահավասարության պատրանքային պայմաններում, Զոհրապին պատկերանում էր որպես վերջինիս բարոյական ու հոգևոր գեղեցկության, ուրիմն և անհատի ու հասարակության առավել խաթարման սպառնալիք: Նրա հերոսուհիները, որքան ստոր միջավայրում էլ գործեն, մեծապես բարձր են կանգնած այդ միջավայրից և անկախ իրենց դրամատիկական կամ ողբերգական ճակատագրից, կարծեք մնում են գեղեցկության և հուսո այն վերջին խարիսխը, որն անվտանգ ծովածոցում մնալու վերջին հնարավորությունն է տալիս աղգի հողմակոծ նավին, ինչպես և այն վարող տղամարդուն: Կարծում ենք, սրանում է թաքնված Զոհրապի առարկությունը ֆեմինիզմին և բանավեճը դրա հետ, որ մեծ գրողը, Ռ. Պերպերյանի հետ բանավիճային անմիջականությունից զատ, վարեց իր ամբողջ ստեղծագործության մեջ: Ավելացնենք, որ կնոջ նկատմամբ Զոհրապի այս հայեցվածքը նրա նորավեպերում առարկայանում է նույն այդ միջավայրում իր հերոսուհիների և հերոսների հույժ կենդանի, իրական հարաբերությունների ցուցադրմամբ: Այստեղ առկա է, իրոք, ռեալիստ Զոհրապը, բայց դրանից բխող նրա գնահատականը՝ կնոջ և տղամարդու փոխհարաբերության նրա գնահատականը կամ ընտանիքում և հասարակության մեջ կնոջ տեղի պատկերացումը ի հայտ է բերում նրա ռոմանտիզմը, որ պատրանքային է, ինչպես

գրականության մեջ կյանքի իրողությունների մասին ամեն մի կամային ու անհատական պատկերացում:

Հ. Ալփիարը, կարելի է ասել, դրեթե նույն մտայնության է հանգում, ինչպես վերը տեսանք, իր սեփական, երիտ ծանրային առանձնահատկությունների բերումով: Ալփիարը չունի Զոհրապի տրամաբանական և դեղագիտական մտադրությունների ներդաշնակ կառույցը և ֆեմինիզմը հերքում է արդեն իսկ ընտանիքում և հանրության մեջ կնոջ վերին աստիճանի բացասական ներդործության մտավախությամբ, նրանով, որ կինը, լինելով բարոյապուրկ հանրության արդյունքը, տղամարդու հետ իրավահավասարության պայմաններում ավելի կարագացնի և իր, և տղամարդու, այսինքն, ամբողջ հասարակության կործանումը: Ավելին, ֆեմինիստական սկզբունքները Ալփիարը համարում է անիրականալի, բանդագուշանքի պես մի բան, որի դեմ էլ նա ուղղում է իր երիտ ական սլաքները:

«Մասիսում» իր ստեղծագործական մնայուն հետքն է թողել Օ. Զիֆթեն-Սարաֆը (Հովհ. Աբիսողոմյան), իր նորավեպերով, ակնարկներով, դրաքննադատական նյութերով և խմբագրական հոդվածներով: Զիֆթեն-Սարաֆի նորավեպերը հագեցած են ճշմարտացի պատկերներով, կենցաղի ու բարքերի վերարտադրության մեջ նա հակում ունի դեպի մարդկային դրամատիկ լարվածության ու անկեղծ ապրումները նա պահպանում է նաև իր ակնարկներում, որոնք կարող են հատնել ողբերգական վախճանի («Ճերմակներով», 1901, թիվ 44, էջ 693–696, «Բարիզեան տոմսեր», 1903, թիվ 24, էջ 373–377): Հայրենասիրական դգացումներով է շնչում նրա «Արմանօ Երամ» ակնարկը՝ Ֆլորենցիայում բնակվող մի կույր հայ փաստաբանի մասին (1902, թիվ 48, էջ 757–763): Զիֆթեն-Սարաֆը ևս գավառական գրականության նախանձախնդիրներից է: «Շահարիկ» ստորագրությամբ նա «Մասիսում» տպագրել է «Գաւառացի կինը» հոդվածը և «Հարիւր ոսկի համար» նորավեպը (1903, թիվ 26, էջ 413–415, 1904, թիվ 32, էջ 508–511): Նա անդրադառնում է գավառում հայ կնոջ իրավազուրկ վի-

ճակին և առհասարակ հետամնաց բարքերին, որպիսիք պատկերում է կենսական իրողությունների հիմքի վրա:

Զիֆթե-Սարաֆը «Մասիսի» կազմակերպած գրական մրցույթի նախաձեռնողներից է: Շարաթաթերթի խմբագրությունն այդ մրցույթը համարում էր գավառական գրականությունը խթանող գործոն և հավատով էր լցված գիղարվեստի պահանջները բավարարող այդպիսի գրականության ապագայի նկատմամբ (տես 1902, թիվ 3, էջ 33–36): Գավառական գրականության զարգացումը ազգային ակունքներին վերադառնալու միջոցով էր պատկերացնում «Մասիսի» հեղինակավոր գրողներից մեկը՝ Թլկատինցին (Հ. Հաբությունյան): «Գեղի նամակներ» ակնարկում նա առանց գունազարդման, բայց և առողջ կենսազգացողությամբ արժանին է հատուցում դյուղացու բարոյական մաքրությանն ու աշխատանքին (1905, թիվ 21, էջ 201–203): Գավառական իրականության դրվագներ է վերարտադրում նաև նրա «Ուր փնտռել առաքինությիւնը» ակնարկը՝ «Մասիսի» 1906 թ. հուլիսի համարներում: Թլկատինցին այս նույն՝ գավառական գրականության ազգային ավանդույթների տարածումը նկատի ուներ, երբ «Մասիսում» սկսեց տպագրել Նաղաշ Հովնաթանի տաղերը («Գավառական բանաստեղծութիւն» խորագրով, չաբաթաթերթի 1908 թ. համարներում):

«Մասիսում» իր տաղանդին արժանի նորավեպերով, գրաքննադատական ու հրապարակախոսական հոդվածներով հանդես եկավ Զապել Եսայանը: Իր տեղում նկատել ենք, որ նրա հանդեպ, որպես կին գրողի, չարաթաթերթը դրսևորել է լայնախոհ մոտեցում՝ մեծապես դնահատել նրա տաղանդը: Այդպիսին էր Գամերի հոդվածը, որը բավական բանիմաց ու հմտորեն քննարկել է Զ. Եսայանի գրելաձևը, ստեղծագործական խառնվածքը, անգամ մարդկային հատկանիշները (1903, թիվ 14, էջ 217):

Զ. Եսայանի նորավեպերը չնչում են զգացմունքների թափով, անգամ անսովոր չափերի ու ցնցող դրվագներով («Ախտաւոր հոգիներ», 1903, թիվ 3, էջ 36–38) և նուրբ զգայնությամբ («Մոլորումը», 1907, թիվ 28–29, էջ 557–561, թիվ 32, էջ 633–636): Գրողը

դիմում է նաև սուր հակադրությունների՝ միայնակ հոգիների դրամատ մոտ տարածության վրա ցուցադրելու նպատակով, որ առավել հասկանալի է դառնում նրա մարդասիրական զգացումների տպավորիչ դրսևորումներով («Ապուշը», 1903, թիվ 7, էջ 104–106), անհատի ու միջավայրի տարընթաց չարժման ու ընկալումների չեշտադրումներով և այլն: Վերջին թեմաները Զ. Եսայանը շոշափում է նաև իր այլ նորավեպերում, ինչպես և «Էջ մը պալզաքի կեանքէն» հոդվածում (1905, թիվ 12, էջ 180–184): Այստեղ ևս առանձնացվում է ֆրանսիական դասականի՝ անհատի ներաշխարհի և առօրեական միջավայրի անհամատեղելիության հիմնահարցը, որ ողբերգական ելք է պարտադրում առաջինին: Օտար իրականությունը վերարտադրող այժմեականով կամ հերոսներին պատկերող հատվածներում Զ. Եսայանը չի հեռանում հայ գրականությունից և դրա ազգային նկարագրից: Անշուշտ, նրա արձակում զգացնել է տալիս ոճի ֆրանսիական սահունությունն ու նրբությունը, բայց այս ամենը՝ որոշակի սահմաններում: Եսայանի հերոսները գլխավորապես իր ժամանակի կրթված հայ մարդու գրական վերարտադրություններն են, նրանք ապրում ու գործում են ընթերցողին ծանոթ ու հասկանալի միջավայրում: Հազիվ թե այս առումով կարելի կլիներ համաձայնել Ենովք Արմենին, որը «Մեր կին գրողները» հոդվածում պնդում էր, թե Զ. Եսայանը «աւելի իբր ֆրանսացի կին մը դրէ, քան իբր հայ կին, իր ճաշակները, մտածելու եղանակը, բարքերու ըմբռնումները մարզուած ու հակած ըլլալով ֆրանսական ոգիին մէջ» (1905, թիվ 30, էջ 473): «Մասիսը» առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում Զ. Եսայանի ստեղծագործությանը և այս առումով բավական պերճախոս է Տոմինո-Սամիկյանի և Արտ. Հարությունյանի բանավեճը: Վերջինս չափազանցության էր հասցնում հերոսների հոգեբանական լարման և խոր ապրումների բնութագիրը Զ. Եսայանի ստեղծագործություններում, եզրակացնելով, թե «Տիկին Եսայեան ջղային մըն է, թէ խթէնիկ դրոշմ մը կայ իր ընդհանուր եղանակին մէջ» (1907, թիվ 37, էջ 753): Ռ. Սամիկյանը, կարծում ենք, շատ ավելի ճիշտ էր ընկալել գրողին,

որը, իրոք, իր «ջղուտ եւ ուժգին արտահայտութիւններով» հանդերձ, հանդարտ, զգաստ և վերապահ կեցվածքով վերահսկում է իր ստեղծագործությունը և որի մեջ հիվանդագին ոչինչ չկա (Ն. տ.):

«Մասիսի» գրաքննադատական նյութերը, անկախ այս բանավեճում արտահայտված տարակարծություններից, նպաստում էին հասկանալու ոչ միայն Զ. Եսայանի ստեղծագործությունը, այլև արևմտահայ գրականության զարգացման միտումները 20-րդ դ. առաջին տասնամյակին: Ճանաչողական նույն մոտեցումն էր ցուցաբերում «Մասիսը» եվրոպական ու ամերիկյան գրականության նկատմամբ՝ ձեռնարկելով մինչ այդ չտեսնված ծավալների հասնող օտար գրականության թարգմանություններին:

Եվ ոչ միայն թարգմանություններին, որ արևմտյան ու ռուսական գրական արժեքներին հայ ընթերցողին ծանոթացնելու սկիզբն էր «Մասիսի» համար, բայց ոչ ավարտը: Պակաս կարևոր չէր չարաթաթերթի հաջորդ քայլը՝ գրաքննադատական հրապարակումներով արժեքավորել օտար և արդիական գրական ուղղությունները, դեմքերին ու նրանց ստեղծագործությունները: Դրա շնորհիվ էր նաև, որ հայ ընթերցողը հասավ գրական ճանաչողական հերթական, բարձր աստիճանին, իսկ «Մասիսի» հեղինակները ոչ քչերը, իրենց ինքնությունը գտնելով գրական այդ միջավայրում, զարգացման լայն ուղիներ պետք է դուրս բերեին հայ գրականությունը:

«Մասիսը» թարգմանական ուրույն քաղաքականություն է վարել՝ իրականացնելով հայ ընթերցողին օտար գրականություններին հաղորդակցելու իր ծրագիրը: Ամենից շատ «Մասիսը» տպագրել է ֆրանսիացի հեղինակներին՝ հետևելով արևմտահայ գրողների ու գրաքննադատների ավանդական կողմնորոշմանը: Միայն ֆրանսիական գրականությունից «Մասիսը» տպագրել է կամ գրական գնահատականներ տվել շուրջ չորս տասնյակի չափ հեղինակների, որոնք ճնշող մեծամասնությամբ ժամանակակից գրողներ են: «Մասիսը» տպագրել է Մոլիերի, Ռիչբենի, Պ. Բուրժեի, Ֆ. Կոբևի, Ա. Թեորիեի, Ժ. Նորմանի, Ժ. Ռամոյի, Պ. Լոթիի, Լ.

Թենսոյի և այլոց արձակ ու չափածո գործերը: Անգլիական գրականությունից թարգմանվել են Բայրոնի, Ուայլդի, Ջոսերի, Շելլիի և ուրիշների, գերմանական գրականությունից՝ Ուլանդի, Շվաբի, Հայգեի, Ռոզեգրի, Լեսինգի, ռուս գրականությունից՝ Մ. Լերմոնտովի, Մ. Գորկու, Ա. Չեխովի, Լ. Անդրեևի, Դ. Մամին-Սիբիրյակի և այլ հեղինակների գործերը: «Մասիսը» թարգմանաբար ներկայացրել է նաև նմուշներ իտալական, ամերիկյան, նորվեգական, լեհական և այլ գրականություններից, պետք է կարծել՝ հիմնականում դրանց ֆրանսիական թարգմանություններից: Համենայն դեպս, կարելի է պնդել, որ լինագրից թարգմանվել են ֆրանսիական և անգլիական, նաև ամերիկյան հեղինակները: Օտար գրական երկերի թարգմանություններով ամենից շատ հանդես է եկել Չիֆթե-Սարաֆը, որին հետևում են Տ. Ելքենճյանը, Ենովք Արմենը, Ռ. Սամիկյանը, Հ. Նազարյանը, Ռ. Պերպերյանը, Մ. Մնծարևնցը, Մ. Պարսամյանը, Ե. Գոլանճյանը և ուրիշներ: Ֆրանսերենից արված թարգմանությունների թվական գերակշռությունը հանդեսում վկայում է, որ նրա հեղինակները ամենից շատ հետաքրքրվում են ֆրանսիական անցյալի և ժամանակակից գրական երկերով ու առհասարակ գրականության զարգացման ընթացքով:

Վերը խոսվեց ֆրանսիական սիմվոլիզմի և դեկադանսի հանդեպ «Մասիսի» ցուցաբերած հետաքրքրության մասին, որին հարկ է ավելացնել այն, որ ֆրանսիական գրական գեմքերը «Մասիսում» ներկայացվում են ոչ միայն թարգմանաբար, այլև վերլուծական հոդվածներով ու այլ հրապարակումներով: «Մասիսի» հեղինակները քննարկում են Գոնկուր եղբայրների, Բալզակի, Ա. Ֆրանսի, Շ. Վագների, Մ. Ռոլինայի, Ս. Պրյուդոմի, Օ. Միրբոյի, Ժ. Վեռնի, Մ. Պրևոյի և շատ ուրիշների գործերը: Ընդամին, «Մասիսի» գրաքննադատները նախապատվություն չեն տալիս այս կամ այն գրական ուղղությանը, այլ փորձում են բացահայտել տվյալ ուղղության և իրականության միջև առկա փոխհարաբերությունները՝ որոշ դեպքերում դիտարկման առաջնային առարկա դարձնելով գրական երկի բարոյական արժեքը: Մյուս դեպքերում քննա-

դատվում են այդ արժեքի գնդապիտական մատուցման կողմը, հատկապես ձևը կամ արվեստը: Նկատելի է նաև գրողի և միջավայրի առնչությունների, գրողի կենսագրական հանգամանքների՝ նրա ստեղծագործության համար ունեցած նշանակության վերհանումը, որ նորույթ է արևմտահայ գրաքննադատության մեջ և վկայում է եվրոպական գրաքննադատական մտքի նորօրյա միտումներին «Մասիսի» իրազեկ լինելու մասին: Հետազոտության այս կտրվածքով են առանձնանում Մեսայանի հոդվածները ֆրանսիական և անգլիական գրականությունների վերաբերյալ: Ա. Մյուսեին, Թենիսոնին Բայրոնին նվիրված իր վերլուծություններում Ա. Մեսայանը մեկնում է նրանցից յուրաքանչյուրի՝ սեփական միջավայրի առանձնահատկություններից: Այսպես, Թենիսոնի միջավայրը զուտ անգլիական է՝ «հանգստի մեջ սրբացած», վարվելակերպի մեջ՝ մեթոդիկ, ճաշակի նուրբ ընկալումներով, որից տարբերվում է ֆրանսիականը (1904, թիվ 10, էջ 145–147): Իր մյուս «Կէօթէ եւ լորտ Պայրըն» հոդվածում (ն. տ., թիվ 13, էջ 199–201) այս հեղինակը միջավայրի գործոնին է միացնում նաև ժամանակը՝ հաշվի առնելով գրականության զարգացման չրջանակները քաղաքակրթության որոշակի փուլերում:

Բանաստեղծական ձևի կարևորությունը «Մասիսի» գրաքննադատների նախամեծար սկզբունքներից է, սակայն ամենևին էլ ոչ միակը: Ձևը և մատուցման արվեստը գրականության առաջնահերթություններից է նաև Արտ. Հարությունյանի, Մ. Պարսամյանի, Զ.Ֆ.Ֆ-Սարաֆի, Ռ. Սամիկյանի և այլոց համար: Սակայն նրանք նույն այդ ձևի մեջ են դիտում նաև ձևի իմաստասիրությունը, որը ոչ այլ ինչ է, քան ձևի բովանդակային կողմ: Տոմինոն Օ. Միրբոյի ստեղծագործությունը բնութագրելիս այս իմաստասիրությունը նկատի ուներ, երբ գրում էր, որ արվեստի հիմքը իրականությունն է, և որ ռեալիստ լինելով հանդերձ, Միրբոն կյանքը սրբագրելու հավակնություն չունի և այս պատճառով նրա հերոսները իրապես «Հագթուած են կեանքի հզօր հոսանքէն» (1907, թիվ 17, էջ 334): Մ. Պարսամյանը ֆրանսիական մի այլ բանաստեղծի՝ Շ. Կերենի

պոեզիայում հայտաբերում է ձևի և զգացման մշտական պայքարը՝ տվյալ դեպքում զգացումն ընկալելով որպես բանաստեղծական բովանդակություն և ձևին հակադրվող սկիզբ (1908, թիվ 8, էջ 160): Պոեզիայի ձևի և իմաստասիրության հրկատումը մեկնակետ է նաև Հ. Գաղանճյանի վերլուծություններում: Իր թարգմանությամբ «Մասիսում» տպագրելով Ս. Պրյուդոմի «Երազ» բանաստեղծությունը, Հ. Գաղանճյանը հավելում էր, որ այն «իր պարզութեան մէջ կը պարունակէ ընկերային բարոյականի վճիռ իմաստասիրութիւն մը» (1908, թիվ 10, էջ 199): Ձևի և «իմաստասիրության»՝ ստեղծագործության բովանդակային կողմի շուրջ «Մասիսի» քննարկումները ևս ունեցան իրենց հետագա արդասավոր զարգացումը՝ նպաստելով, որ չատ ավելի ամբողջանա «կոնկրետ դեղարվեստական մշակութային ծրագրի» հայտնությունը 1910-ական թթ. «Նավասարդ» և «Մհեյան» պարբերականներում[1]:

Պոեզիայում ձևի և բովանդակության շուրջ «Մասիսի» հեղինակների տարբեր ըմբռնումները դրսևորվեցին գրական ուղղություններին յուցարերած մոտեցումների մեջ: Այս տեսակետից ուշագրավ է Գր. Մալխասի և Ռ. Պերպերյանի տեսական բանավեճը 1906 թ. «Մասիսում», որին մասամբ միջամտեց եղան Ենովք Արմենը և Ե. Անդրեասյանը «Մանզումեի էֆքյար» թերթում, և Տ. Ելքենճյանը՝ «Բյուզանդիոնում»[2]: Վեճի սլաշճառը Գր. Մալխասի թարգմանած՝ «Գոնկուր», եղբայրների «Դեւահաս միջակորեաբը» (միջակորեար՝ բուլժուա) վեպն էր, ըստ էության, ֆրանսիական ռոմանտիզմի և ռեալիզմի վերաբերյալ տարբեր մոտեցումները, ինչպես և լեզվաոճական մի շարք հարցեր: Ոճի հարցերում, որքան էլ կարուկ կամ ոչ հետևողական, Գր. Մալխասը Ռ. Պերպերյանին գերազանցում էր գրական ուղղությունների բնութագրման տեսակետից: Ռ. Պերպերյանը ռոմանտիզմի և դրա գեղագիտության համոզված պաշտպանն էր և այս տեսակետից առանձնապես վեր չէր

---

[1] Մնացականյան Լ. Հ., Գրական քննադատությունը «Նավասարդ» և «Մհեյան» պարբերականներում, էջ 13:

[2] Տե՛ս «Մանզումեի էֆքյար», 1906, 23 մարտի և «Բյուզանդիոն», 1906, 30 մայիսի:

բարձրանում Զոլայի և նրա նատուրալիզմի 1880-ական թթ. հայ ընդդիմախոսներից: Ռ. Պերպերյանը առհասարակ չի ընդունում «բնապաշտ» սահմանումը և պնդում է, որ և՛ բնապաշտները՝ Ֆլոբերը, Գոնկուրները և մյուսները, և՛ վիպականները (ռոմանտիկները) ի դեմս Հյուգոյի, միավորում են այս երկու գրական ուղղությունները: Ֆլոբերը, դատում է նա, պաշտպանում է Հյուգոյին և այս դեպքում մեծ նա վիպական (ռոմանտիկ) չէ և կամ այս երկու դպրոցներն էլ չի միացնում «իր անձին վրայ», կամ էլ մեծ Գոնկուրները հաճախ բանաստեղծական, ուրեմն վիպական չեն (1906, թիվ 5, էջ 67):

Ժամանակին Ե. Տեմիրճիպաշյանը «Արևելք» թերթում[1] Տ. Կամսարականին «վիպական» էր համարում այն հիմնավորումով, որ նա իր հերոսուհուն օժտել է, իբր, ռոմանտիկական վարքագծով: Բայց խնդիրը կնոջ, ընդամին, ոչ արտաքոց վարքագիծը չէր, այլ այն, որ Տեմիրճիպաշյանը ոչ հատկանշական օրինակի գնով չնջում էր ռոմանտիզմի և ռեալիզմի սահմանները՝ համահարթեցնելով դրանք, ինչպես Ռ. Պերպերյանը տվյալ դեպքում:

Շատ ավելի իրավացի էր Գր. Մալխասը՝ անկախ ռոմանտիզմի դեմ իր քմահաճ հարձակումներից (1906, թիվ 5, էջ 70): Անկախ բնապաշտ կամ իրապաշտ դպրոցի՝ վիպական ձևեր նախընտրելուց, նկատում էր նա, այդ դպրոցի հիմնադիրները, ի տարբերություն ռոմանտիկների, հետևել են խորհելու, դատելու և վճռելու տարբեր ուղղության, որ «հիմնուած էր իրականին վրայ, բնութիւնը դիտելու վրայ եւ չհեռանալու բնութենէն» (ն. տ.):

Փոխարենը, Ռ. Պերպերյանը ավելի համոզիչ էր Գոնկուրների լեզվաոճական որակների ու ներդաշնակության, թարգմանական որոշ սկզբունքների հարցում (1906, թիվ 10, էջ 145–148, թիվ 11, էջ 166–167):

«Մասիսում» ֆրանսիական գրականության չուրջ մղվող այս բանավեճը ոչ միայն արդիական, այլև ուսուցողական նշանակութ-

[1] «Արևելք», 1889, 9 մայիսի:

յուն ունեցավ արևմտահայ գրաքննադատության համար՝ գրական դպրոցների բնութագրի, դրանց առանձնահատկությունների, գրական ձևի և նպատակադրման և վիճահարույց այլ խնդիրներում մասնագիտական կողմնորոշումների համար: Արևմտահայ գրաքննադատության հաստնացման կամ բարձր մակարդակի արգասիքներից էին Տ. Զոհրապյանի հոդվածները ֆրանսիական գրականության և նրա տեսաբանների վերաբերյալ: Նա հատկապես ինքնուրույն և քննադատական մոտեցում է հանդես բերում Ի. Թենի գեղագիտական հայացքների նկատմամբ: Նա ամենայն իրավամբ Թենին դասում է Սենտ-Բյովի և Ռենանի շարքը, նկատելով,որ նա գրաքննադատությունը ենթարկել է գիտական որոշակի կանոնների, որոնք բխում են արվեստի գործերի գնահատման երեք մեկնակետերից՝ ցեղը, պահը և միջավայրը: Միաժամանակ, Զոհրապյանը նկատում է Թենի այս նուակոդմ սխեմայի սահմանափակությունը, այն, որ նա «մոռցած է այլեւս անհատականության դոյությիւնը արուեստին քով» (1906, թիվ 13, էջ 208): Անգլիական գրականությանը վերաբերող՝ «Մասիսի» գրաքննադատական հրապարակումներում չեչան առավելապես դրվում է գրողի և նրա կենսագրական հանդամանքների, ասել կուզի՝ գրողին ձևավորող միջավայրի իրատեսական վերլուծական ուղղության վրա: Տ. Ելքենճյանը «Անգլիական գրականութիւն. Շելլի» հոդվածում (1905, թիվ 14, էջ 214–218) նշում է անգլիացի բանաստեղծի դեռահաս տարիների ծողած կնիքը նրա ստեղծագործության նյութապաշտական հակումների վրա: Ըստ Ելքենճյանի, ոչ միայն Շելլի, այլև Զոսերի և Բայրոնի գործերում իրեն զգացնել է տալիս անգլիական հասարակության «քիչ մը կտակարանական» (իմա պուրիտանական) չունչը, որ մադրություն, որի ուժով բանաստեղծի ողբերգական մահը ճակատագրի վոխհատուցում էր համարևու հասարակական կարծիքը՝ ի տրիտուր Շելլիի ոչ ավանդական բարոյական վարքագծի: Իր տեղում նկատել ենք, որ գրողի անհատական բարոյականության և նրա ստեղծագործության աղերսները «Մասիսը» կարևորում էր գրականության հասարակական ազդեցության տեսակետից, և այս

մտայնությունն է, որ սնունդ է տալիս Ելքենճյանի ուսումնասիրությանը: Նույն հեղինակը «Մասիսում» տպագրել է Շեյխի «Խօսք ամպոյ» բանաստեղծության գրաբարի վերածած իր թարգմանությունը (1905, թիվ 16, էջ 248–249): Ելքենճյանը՝ ակնհայտորեն զուտ մտավորականության համար, գրաբարով էր թարգմանել Շ. Բոդլերի «Հոդի դինւոյ» և Լոնգֆելլոյի «Երգ գինըմպելեաց», Լամարտինի «Անմահութիւն», Բայրոնի «Գիր ի վերայ բաժակի որ էր կազմեալ ի կառափէ մեռելոյ» և այլ բանաստեղծությունները՝ «Մասիսի» էջերում: «Մասիսի» խմբագրությունը, մինչդեռ, անառարկելիորեն առավելություն տալիս էր աշխարհաբար թարգմանություններին. Բայրոնի՝ մեր նշած վերջին բանաստեղծությունը չաւաթաթերթը տպագրեց նաև աշխարհաբար, առանց թարգմանչին նշելու և հավելելով, որ աշխարհաբար մատուցմամբ այդ գործը իր գեղեցկությունից «բան մը չէ կորսնցուցած» (1906, թիվ 7, էջ 100):

Գրողի կենսագրության և ստեղծագործության՝ վերոհիշյալ նկրտին կապերից ելնելով, «Մասիսը» գրեթե միշտ թարգմանական գործերը ներկայացնում էր հեղինակի կենսագրության հետ միասին: Ենովք Արմենը ևս ամերիկյան դասական է. Պոյի «Ծովափին աղջիկը» բանաստեղծությանը (1901, թիվ 51, էջ 803) կցել է նրա կենսագրությունը: Ավելին, եթե կենսագրական հիմքն անհրաժեշտ է հեղինակին առավելագույնս ընկալելու համար, ապա այն կարող է դառնալ նաև ուսումնառության գլխոց: Ուշագրավ է, որ Տ. Ելքենճյանը ամերիկյան մեկ այլ դասականի՝ Լոնգֆելլոյի ստեղծագործությունը հայ գրողների համար գործոն էր համարում, հաղթահարելու ֆրանսիական պոեզիայի համատարած ազդեցության միակողմանիությունը՝ տեղի տալու, որ «ուրիշ ազդումներու եւ թարգմանիչներու աչքերն ուղղուէին քիչ մ'ալ ուրիշ կողմեր» (1905, թիվ 23, էջ 358): Ամերիկյան գրականությունը հայ ընթերցողին ծանոթացնելու գործում իր ներդրումն ունի Ենովք Արմենը: «Ամերիկայի բանաստեղծները» խմբագրականում նա ֆրանսիական «Լիւվյու դը դյու մոնդ»-ից վերաշարադրել է մի ակնարկ՝

ամերիկյան պոեզիայի մասին: Այստեղ բնութագրվում են Վ. Բրայենդը, Հուիթըրը, Լոնգֆելլոն և Պոն, Էմերսընը՝ իր խոհական և ճշմարտություն որոնող պոեզիայով (1907, թիվ 15, էջ 281): Այլ հրապարակումներում «Մասիսը» ծանոթություններ է տվել գերմանական, իտալական, լեհական, ռուսական, նորվեգական և այլ ազգերի գրականությունների մասին, միշտ նկատի առնելով գրական ու գրականագիտական տեղեկատվության նշանակությունը հայ գրականության մեջ արդիական արժեքներ ստեղծելու հանապարհին:

«Մասիսի» լրատվական քաղաքականության գլխավոր ուղղություններից մեկը, հատկապես Տ. Արփիարյանի խմբագրության տարիներին, մնում էր ոչ վաղ անցյալի ազգային մշակույթի, մամուլի և գրականության գործիչների վաստակի վերհանումը, մտավոր ու մշակութային շարունակական կապերի ապահովումը ժամանակի իրականության և այդ գործիչների միջև: «Մասիսը» քանիցս անդրադարձել է Հ. Այվազովսկու, Հ. Պարոնյանի, Մ. Մամուրյանի, Ստ. Ոսկանյանի, Կ. Փանոսյանի, Հ. Զամուռճյանի, Ղ. Պալդազարյանի, Հ. Հաճյանի, Կ. Ություճյանի և շատ այլ երևելի անձանց կենսագրությանն ու ստեղծագործական գործունեության այս կամ այն կողմին՝ միանգամայն ուրվագծելով նրանց միջավայրն ու ճևավորման ուղինքները: Հաճախ «Մասիսը» զուգահեռներ է անցկացնում տասնամյակներ առաջ հայ հանրության ու նրա գործիչների առջև ծառացած խնդիրների և իր ժամանակի իրականության միջև, կանգ առնում կենցաղի, բարքերի ու մտածելակերպի տարբերությունների վրա՝ ի նպաստ արդիականության առավելագույն ճանաչողության: Այդ նպատակն էին հետամտում նաև «Մասիսի» հարցարանները ուղղված ճանաչված մտավորականներին: Հարցարաններից մեկում անցյալը վերարտադրելու մտահոգությամբ առաջարկվում է հիշել, թե իր առաջին գործը ինչ հանգամանքներում է տպագրվել և ինչ հետևանքներ է թողել հեղինակի գործունեության վրա: Հարցմանը պատասխանել էին Մ. Աղաբեկյանը, Սիպիլը, Ագ. Փանոսյանը, Կ. Ություճյանը, Վ. Մա-

լեզյանը և ուրիշներ, որոնցից յուրաքանչյուրի պատասխանը բնութագրում է ոչ միայն իրեն՝ հեղինակին, այլև ժամանակի մարդկանց փոխհարաբերությունները և իրական կյանքը: Հարցումն ուներ նաև քննադատական ուղղվածություն: Տ. Արփիարյանի մի խմբագրականում («Հարցումի մը առթիվ», 1900, թիվ 11, էջ 161–162) առաջադրվում է դրողի նյութական դրության նկատմամբ հասարակության անտարբեր վերաբերմունքի հարցը, որ մենք քննարկել ենք իր տեղում: Տ. Արփիարյանը չոշափում է իր մշակույթի հանդեպ հայ հասարակության խորթացածության, բարոյական պարտքի բացակայության խնդիրը: Արփիարյանի չարագրանքից պարզ է դառնում, որ դրա պատճառները պետք է որոնել հանրային հոգեբանության մեջ, որի կրողն է նաև գրականությունը նյութապես զորացնելու ունակ հարուստ խավը: «Մասիսի» խմբագիրը ստիպված էր խոստովանել, որ այն պայմաններում, երբ գրողն օտարվում է հասարակությունից, միայն լրագրությունն է, որն իր շուրջ է համախմբում հին ու նոր գրական ուժերին:

Հայ գործիչներին ամենատարբեր առիթներով նվիրված նյութերն, անկասկած, ունեն ճանաչողական նշանակություն: Մ. Մամուրյանի մասին մի հոդվածում Ռ. Որբերյանը նկարագրում է 19-րդ դարավերջի զմյուռնահայ հանրության կյանքը, հասարակական ու մշակութային իրողությունները (1901, թիվ 2, էջ 23–25, թիվ 4, էջ 57–59): Իսկ Տ. Արփիարյանը (ինչպես միշտ՝ Տ. Ա. ստորագրությամբ) Մ. Մամուրյանի առթիվ գրած հոդվածում ևս բացահայտում է նրա խմբագրած «Արևելյան մամուլ» հանդեսի տեղն ու նշանակությունը հայ մամուլի պատմության մեջ, իր նյութը հարստացնելով նրա խմբագրի կենսագրական հանգամանքներով: Նա բացահայտում է 1850-ական թթ. հայ պահպանողականության մարտնչող նկարագրի մի կողմը. 1853 թ. «Մասիսը», որի խմբագիրն այն ժամանակ ինքը՝ Կ. Ուլյուճյանն էր, փորձել էր տպագրել Մ. Մամուրյանի թարգմանած՝ Վոլտերի «Զադիգ»-ը: Սակայն տպագրությանը խանգարել էր, ոչ առանց հարուստ ազգայինների աջակցության, Հովհ. Ջամուռճյանը, որը վկայակոչել էր Վոլտերի,

իրը, անկրոնության վտանգը հայ հանրության համար: Հայ մա-. մուլի պատմության համար արժեքավոր է նաև այդ հանդեսի եր-բնմնի աշխատակից, վաճառական-դրագետ Ղ. Վարպետյանի «Մա-մուրեանի կեանքէն» հոդվածը, որտեղ բացահայտվում են Մ. Մա-մուրյանի երկու ծածկանունները՝ Ապրսամ և Սիսակ, որ գործածել է այդ հրապարակախոսը երկար տարիներ: Ղ. Վարպետյանը նույն-պես չեշտադրում է Մամուրյանի հանդեպ ազդի անտարբերու թյու-նը, որ վկայվում է նաև այլ օրինակներով՝ ոչ Մամուրյանը մա-հարձան ունի, և ոչ էլ մշակութային մյուս խոշոր գործիչը՝ «Հէք Տիգրան Զուխաճյանը» (1904, թիվ 6, էջ 81–83):

Ուշագրավ տեղեկատվություն կա «Մասիսի» էջերում՝ ակա-նավոր հրապարակախոս Ստեփան Ոսկանյանի մահվան առթիվ տպագրված նյութերում: Գ. Պուպլին՝ Ոսկանյանի աշակերտը, «Մանկութեան ապագան» հոդվածում հետաքրքրական դիտողութ-յուններ է անում Ոսկանյանի մանկավարժական մեթոդի մասին (1901, թիվ 31, էջ 481–484): Պուպլին այդ մեթոդն անվանում է «ընտրողական»՝ մշակված ժամանակի ու միջավայրի «պէտքերուն համաձայն», նկատի ունենալով գործնական ուսուցման մեթոդը: Հիրավի, 1865 թ. սահմանելով Զմյուռնիայի Ս. Մեսրոպյան և Ս. Հռիփսիմյան վարժարանների տեսչի պաշտոնը (և գլխավորելով տեղի «Ուսումնասէր» ընկերությունը), Ստ. Ոսկանյանը հանդես էր եկել այդ վարժարանների դուռ բանասիրական ավանդական թեք-ման դեմ: Զմյուռնիայի պես վաճառաշահ քաղաքի համար, պնդում էր Ոսկանյանը, «աւելի վաճառական, վաճառատան պէտ-դիր ու արհեստաւոր պատրաստելու է» (ն. տ., էջ 481): Մինչդեռ, գրում է Պուպլին, Փարիզի «Լը թան» թերթը բոլորովին վերջերս գրախոսել է Ֆրանսիացի Ա. Ջյուլեի մի աշխատությունը («Ու-սուցման վերանորոգումը՝ իմաստասիրութեամբ»), որտեղ, իբրև արդիական խնդիր, շոշափվում է երկրորդական վարժարանների բարեփոխման պահանջը, այսինքն այն, ինչ դեռևս 36 տարի առաջ օրվա պահանջ էր համարել Ս. Ոսկանյանը: Բայց այստեղ հանդի-պում ենք «բախտին տխուր մէկ հեգնութեանը», նկատում է Պուպ-

լին, Սա. Ոսկանյանի մեթոդը մոռացվել է, իսկ Ցյուլեն գրավել է «Բովանդակ ուսուցչական աշխարհին ուշադրութիւնը» (ն. տ., էջ 482):

«Մասիսի»՝ գրականության և լրագրության զարդացման մտահոգություններին մեջ այս կերպ առանձնանում է նախորդ և ժամանակակից գրական սերունդների միջև բնականոն հաջորդայնության խնդիրը: Ինչ անց կտեսնենք, որ «Մասիսը» չանում էր պահպանել ազգային արժեքների հարատևումը ժամանակակից գրականության մեջ: Որոշակիորեն այս մտահոգությունը խորացնում էին նորօրյա եվրոպական ազդեցությունների ներթափանցումները մամուլ և գրականություն, էլ ավելի որոշակի՝ սիմվոլիզմի և առհասարակ դեկադանսի ճարակող ազդեցությունը ստեղծագործող երիտասարդ սերնդի վրա: Հակազդեցության միջոցներից մեկը «Մասիսը» դիտում էր ոչ վաղ անցյալի կամ ավագ սերնդի գրողների ժողովրդականացումը, նրանց կյանքի և ստեղծագործության ուսանելի օրինակի քարոզչությունը: Շարաթաթերթի գրական և գրական-դիմանկարային անդրադարձներն այս իմաստով ձևոք էին բերում ոչ միայն տեսական նպատակադրվածություն, այլև անմիջական կապ էին ստեղծում, այսպիսով, տարբեր սերունդների գրողների միջև, որ 20-րդ դարասկզբին կարող էր ընդհատվել արևմտյան ազդեցությունների չդադարող հոսքով: Ասենք, որ այդ սոսկ Տ. Արփիարյանի «Մասիսի» բերած նորույթը չէր. շաբաթաթերթը նրա խմբագրության տարիներին վերստին շրջանառության մեջ էր դնում 1880-ական թթ. առաջատար պոլսահայ հրատարակությունների՝ «Արևելքի» և «Մասիսի» ուղեգիծը, այն է՝ վերհանել ավագ սերնդի հայ գրողների ու այլ մտավորականների կենսագրությունն ու գործունեությունը, դուրս բերել նրանց մոռացության մշուշից և առնչել ներկայի պահանջմունքներին: «Մասիսն» այս նպատակն էր հետապնդում ամենատարբեր ժանրերի՝ հուշերի, նամականու, մահախոսականի և այլնի օգտագործումով: Այս կերպ նրա էջերում տպագրվեցին իր՝ «Մասիսի» հիմնադիր և բազմամյա խմբագիր Կ. Ություճյանի հուշերի մի դրվագը՝ «Մեծ պահքի յիշատակներ» վերնագրով (1900, թիվ 13,

էջ 204–205)՝ պոլսահայ քարոզիչների և ժամանակի պոլսահայ բարքերի մասին, Պ. Դուրյանի, Հ. Այվազովսկու, Հ. Պարոնյանի, Մ. Մամուրյանի, Ս. Ոսկանյանի, Հակոբ Ոսկանի և բազմաթիվ այլ գործիչների մասին հոդվածներ, տարբեր հրապարակումներ և այլն: «Մասիսով» սկսվեց հատկապես Պ. Դուրյանի ստեղծագործության նթե ոչ գիտական, ապա մասնագիտական ուսումնասիրությունը: Շաբաթաթերթերից տպագրեց Պ. Դուրյանի անտիպ նամակներից մեկը, որ տրամադրել էր Հ. քահ. Էքսերճյանը՝ հայտնելով, թե հրատարակության է պատրաստել Պ. Դուրյանի նամակները (1900, թիվ 14, էջ 216–217): Հ. Այվազովսկու մահվան տարելիցի առթիվ «Մասիսում» տպագրվեցին Միրսեոսեի «Այվազովսքիի մահը» և Տ. Արփիարյանի «Յիշատակ մը Այվազովսքիէ» հոդվածները (1901, թիվ 18, էջ 273–276, թիվ 19, էջ 286–288): Դրանցում ուշագրավ տեղեկություններ կան Այվազովսկու ստեղծագործության, նրա ազգային պատկանելության, 1894 թ. Կ. Պոլսում նրա գտնվելու և հանդիպումների, նկարչի խառնվածքի, կենցաղային իրողությունների և այլնի մասին, որոնք այսօր էլ կարող են հետաքրքրական լինել ընթերցողների և անգամ հետազոտողների համար:

Այս կամ այն առիթով «Մասիսի» հեղինակները դնահատանքի խոսք են ասել, ինչպես ասվեց, 19-րդ դ. 2-րդ կեսի այլ հեղինակների մասին, որ նշանակում էր նոր սերնդի ուշադրությունը հրավիրել արդեն հեռացած կամ հեռացող մտավորականության ստեղծած արժեքների վրա: Շաբաթաթերթերն առաջադրում էր նաև արդեն պատմականացած այս մտավորականների ստեղծագործության լրջմիտ և խորը ուսումնասիրության հարցը: Մեծարելով Հ. Պարոնյանին և բարձր գնահատելով նրա անզուգական երգիծանքը, Պադուայի ուսանող Պասմաճյանը «Բազմավեպում» ձեռնարկել էր նրա երկերի ուսումնասիրությանը: Սրան «Մասիսն» ավելացնում էր այն, որ Հ. Պարոնյանի երկերի արժեքավորումով զբաղվում է նաև Հրանտ Ասատուրը՝ երիտասարդությանը ճաշակ և գաղափար տալու մեծ երգիծաբանի վաստակի վերաբերյալ (1900, թիվ 196, էջ 200): Շա-

րունակելով այս թեման, «Մասիսի» խմբագիրը հայտնում է, որ 1902 թ. կարելի է արձանագրել որոշ հաջողություններ՝ «Լույս»-ում Ա. Ալպոյաճյանը տպագրել է Ա. Հայկունու կենսագրականը, իսկ Վ. Թորգոմյանը հայ բժիշկների կենսագրությունները հասցրել է մինչև Ն. Ռուսինյան: Ինքը՝ Տ. Արփիարյանը, դրվագներ է հիշում Ա. Հայկունու խմբագրական կյանքից՝ վկայակոչելով նրան ժամանակակից մի «գրչի» (1903, թիվ 2, էջ 17–19):

«Մասիսի» էջերում մամուլի գործիչների մասին հետաքրքրական հրապարակումներով հանդես է եկել Ա. Ալպոյաճյանը: «Էջ մը մեր հին լրագրութենէն» հոդվածում, որ նա գրել է Զմյուռնիայի «Արշալույս արարատյան» թերթի (1840–1884) առաջին խմբագիր Ղ. Պալդազարյանի հիշատակին, վերջինիս գնահատումն է իբրև Թուրքիայում հայ մամուլի սկզբնավորողներից մեկի և աշխարհաբար գրական լեզուն ու դպրոցը ժողովրդականացնողի: Այս գործիչն է, որ Տրիեստում բնակվող զմյուռնացի մեծահարուստ Պետրոս Յուսուֆյանին համոզել է ֆրանսերենի ուսուցում մտցնել Զմյուռնիայի Ս. Մեսրոպյան վարժարանում և հաջողել է «40 հազար ֆիորին կտակել տալ» նրան այդ նպատակով (1900, թիվ 22, էջ 345):

Ս. Ոսկանյանի, Մ. Մամուրյանի, Ղ. Պալդազարյանի և այլոց գործունեության ազգային նշանակությունը բացահայտելով, «Մասիսն» ընդգծում էր Զմյուռնիայի հայ գաղթօջախի մշակութային խոշոր արժեքը ազգային հոգևոր կյանքում: Ինքը՝ Ա. Ալպոյաճյանը հայ մամուլի պատմության համար արժանահավատ և ուշագրավ տեղեկություններ է տալիս նաև ի դեմս արևմտահայ մի շարք այլ գործիչների: Այսպես, առ այսօր շատ քիչ տեղեկություններ ունենք պոլսահայ երգիծական հրապարակախոսության հիմնադիրներից մեկի՝ Հակոբ Հաճյանի մասին և այդ քչի համար իսկ պարտական ենք Ա. Ալպոյաճյանին: Հ. Հաճյանը՝ Հ. Սվաճյանի և Հ. Պալոնյանի ժամանակակցի մասին Ա. Ալպոյաճյանը հայտնում է, որ նա գրել է «Բերայի գիշերները» և «Հեղինեն» վեպերը, որոնք

«բաւական հաւնըռւած են՝ իրական կեանքի պատկերները ցուցադրելուն համար» (1903, թիվ 16, էջ 246):

«Անհետացող դէմքեր» խորագրի տակ «Տիգրան Ճիվէլէկեան» հոդվածում Ալպոյաճյանը բավական տարողունակ տվյալներ է հայտնում հայատառ թուրքերեն հայ մամուլի գործիչ Տ. Ճիվիկեկյանի և նրա հետ միասին նույն բնույթի մամուլի մի այլ գործչի՝ Հովսեփ Վարդան փաշայի («Մեճմուայը Հավաստիս» թերթի խմբագրի, «Թերճեմանը Էֆքյար» թերթի աշխատակցի, «Ապապի» վեպի[1] հեղինակի) մասին: Մեզանում, ինչպես հարկն է, հայատառ թուրքերեն հայ մամուլը ուսումնասիրված է միայն մասնակիորեն[2], ուստի, այս առումով լրատվական արժեք ունեն Ալպոյաճյանի ոչ միայն այս, այլև մյուս տեղեկությունները XIX դ. վերջի և XX դ. առաջին տասնամյակների առաջատար հայատառ թուրքերեն թերթի՝ «Ճերիտեի չարգիյե»-ի վերաբերյալ[3]: Հայատառ թուրքերեն հայ մամուլի մի այլ խոշոր դործչի՝ Կ. Փանոսյանին է նվիրված Տ. Արփիարյանի «Հինէն ու նորէն» հոդվածը (1905, թիւ 6, էջ 91–93): Տ. Արփիարյանը բարձր է դնահատում նրա խմբագրական չիտակությունը, համարձակությունն ու առաքինությունը: Հիրավի, դեռևս 1862 թ. Զեյթունի ինքնապաշտպանության օրերին Կ. Փանոսյանը քննադատել էր օսմանյան իշխանություններին՝ հատկապես Զեյթուն արշավող Ադիլ փաշային, մեղադրելով նրան հայերի դեմ բարբարոսական գործողություններ համար: Ավելացնենք, որ Կ. Փանոսյանի «Մյունասիի էրճիաս» թերթն այս պատճառով փակվեց, իսկ Կ. Փանոսյանը կալանավորվեց և ազատվեց մի քանի օր անց՝ դրամական տուգանք վճարելով[4]: Տ. Արփիարյանը նշում

---

[1] Հ. Վարդանյանի «Ապապի» վեպի բարգմանությունը հայատառ թուրքերենից կատարել է Գ. Խ. Ստեփանյանը (տե՛ս Վարդանյան Հ., Ապապի, Ե., 1979:

[2] Ստեփանյան Գ. Խ., Հայատառ թուրքերեն հայ մամուլը, «Հայ պարբերական մամուլի պատմությունից», հ. 1, էջ 239-274: Ստեփանյան Հ. Ա., Հայատառ թուրքերեն պարբերական մամուլը (Ե., 1987) մատենագիտական աշխատությունը:

[3] Ա. Ալպոյաճյանը որպես այս թերթի խմբագիրների, հիշում է Անտոն Ալիքին, Լիմոնճյանին, Պ. Ադամյանին և Ս. Ամիրայանին, որոնք նշված չեն հայ պարբերական մամուլի մատենագիտություններում:

[4] Տե՛ս «Մասիս», 1862, 25 օգոստոս և 11 սեպտեմբերի:

էր Կ. Փանոսյանի վերջին թերթի՝ «Մանզումեի էֆքյարի» բացառիկ հաջողությունը ընթերցողների շրջանում (անկասկած, 1870-ական թթ. վերջերին, ռուս-թուրքական պատերազմի ժամանակաշրջանում և դրանից հետո), երբ նա «պահ մը օրական երկու թիւ հրատարակեց «առտըուան և իրիկուան հրատարակութիւններ»: Դարձյալ իրավացի է Տ. Արփիարյանը, որ նկատում է Կ. Փանոսյանի նոր, պահպանողական կեցվածքը 1880 թ., սկսած, երբ նա դադարեց ջոջերին քննադատելուց (ավելացնենք, նաև Հայկական հարցի հարուցումը վերագրելով արտաքին հրահրումներին) և սկսեց ճաղկել գրական նոր ճաշակներն ու ըմբռնումները գրականության մեջ, այսինքն, ռեալիստական գրականության պաշտպաններին:

Հայ մամուլի գործիչների դիմանկարային շարքը լրացնում են Ա. Անտոնյանի ուրվագծերը Հովհ. Ջամուռճյանի (1907, թիվ 14, էջ 265–272) և Ա. Ալպոյաճյանի հրապարակումը Հ. Ալաճաճյանի («Փունջի» խմբագիրը) մասին: Դրանցում սկզբնաղբյուրի արժեք ունեցող տեղեկություններ կան 1850–1860-ական թթ. հայ մամուլի և լրագրության վերաբերյալ:

Բուն իսկ «Մասիսի» շուրջ հիսնամյա պատմության պարբերականության և կրած փոփոխությունների մասին մատենագիտական արժեք ունի Ա. Ալպոյաճյանի «Յիսնամյակ մը» հոդվածը (1901, թիվ 5, էջ 65–69): Այստեղ սեղմ և ճշմարտացի բնութագրվում են պոլսահայ մամուլի զարգացման առանձին շրջանները, ժամանակը, միջավայրը և հրապարակախոսները:

Հայ մամուլի և նրա խմբագիրների, հրատարակիչների և առհասարակ լրագրության վերաբերյալ «Մասիսի» այլ լրջմիտ հրապարակումները նկատի առնելով, առանց վերապահության կարելի է պնդել, որ դրանք հող նախապատրաստեցին 20-րդ դ. հայագիտության այս բնագավառի հետագա ուսումնասիրությունների համար: Նույնը կարելի է ասել նաև ազգային մշակույթի այլ ճյուղերի՝ երաժշտության, թատրոնի, դպրոցի, թարգմանական արվեստի վերաբերյալ, որտեղ նույնպես պատկառելի երախտիք ունի 20-րդ դ. սկզբներին հրատարակված այդ գրական շաբաթաթերթը:

«ԺԱՄԱՆԱԿ» (1908–1914)[1]

Աբդուլ Համիդի վարչակարգի տապալումից հետո արևմտահայ իրականության մեջ, կապված Թուրքիայի քաղաքական կյանքի փոփոխությունների հետ, կատարվեցին որոշակի տեղաշարժեր: Իշխանության գլուխ անցած երիտթուրքերից հայ հասարակական ու քաղաքական մտքի ակնկալիքները երկրի ներքին քաղաքական կյանքի ազատականացման, հպատակ ժողովուրդների վրա ծանրացած լծի թեթևացման և դրանից բխող հետևանքների վերաբերյալ, այս ամենը նպաստում էին ազատական գաղափարների տարածմանը: Միայն 1908–1909 թթ. Կ. Պոլսում լույս տեսան չուրջ չորս տասնյակ հայերեն թերթեր ու հանդեսներ, որ վերը նշված իրողությունների արդյունքն էր, լրատվության ու հասարակական կարծիքի մերձեցման հայտանիշը:

---

[1] «Ժամանակ» օրաթերթը լույս է տեսել 1908 թ. հոկտեմբերին՝ դասական հրապարակախոս, գրող և խմբագիր Սիսաք Գոչունյանի խմբագրությամբ ու Սարգիս Գոչունյանի տնօրինությամբ, իբրև ոչ կուսակցական, անկախ հրատարակություն: Իր բընաղատական և անաչառ դիրքորոշման պատճառով հալածվել է երիտթուրքական իշխանությունների կողմից, հատկապես 1913 թ., որն, ի դեպ, ճակատագրական եղավ թերթի համար: Այդ տարի (մայիսի 15-ին) մահացավ Ս. Գոչունյանը, իսկ թերթը պետք է ենթարկվեր նոր փորձությունների՝ իր հրատարակության քառակի դադարներով, որով լռեցնում էր նրան ռազմական գրաքննությունը (հունվարի 23-ին, հունիսի 11-ին, օգոստոսի 29-ին և նոյեմբերի 23-ին: Տե՛ս Ազատյան Թ., «Ժամանակ» քառասնամեայ, էջ 141, 153, 154, 158): Առաջին երեք դադարներին թերթը երեք անգամ էլ, կարճ ժամանակով ստացել է նույն՝ «Հեռաձայն» անունը: Այնուհետև «Ժամանակը» դադարեցվեց ևս մեկ անգամ՝ 1920 թ. մայիսի 15-ի համարում՝ ի պատիժ դաշնակիցների երկոդիմի արտաքին քաղաքականության քննադատության (և. տ., էջ 181): Այս անգամ, երբ անդադրում տնօրենը՝ Ս. Գոչունյանը թերթը վերահրատարակելու միջոցներ էր որոնում, համաձայնում է «Ժողովուրդին ձայնը» ռամկավարական օրաթերթի վարչության՝ միավորվելու առաջարկին և 1920 թ. հուլիսի 15-ին լույս է տեսնում միացյալ՝ «Ժողովուրդին ձայնը-Ժամանակ» առավոտյան օրաթերթի անդրանիկ համարը (և.տ., 182): Այս համատեղ կեցությունը տևեց մինչև 1924 թ. հոկտեմբերի 23-ը, երբ «Ժամանակն» առանձնացավ իբրև քաղաքական և առևտրական երեկոյան թերթ (և. տ., էջ 188): «Ժամանակը» հրատարակվում է առ այսօր և Ստամբուլի հայ հանրության հանրահայտ ու հեղինակավոր լրատվամիջոցներից մեկն է:

Այս աշխատության սույն հատվածը վերաբերում է «Ժամանակի» 1908-1914 թթ. շրջանին:

Ազատական գաղափարներն իրենց դրսևորումները գտան Կ. Պոլսի «Ժամանակ» թերթում: Թերթի հիմնադիրներն էին Միսաք Գոչունյանը (Քասիմ) և Սարգիս Գոչունյանը (առաջինը արտոնատերն էր, երկրորդը՝ տնօրենը): Հատկապես Մ. Գոչունյանը հանրահայտ անձնավորություն էր լրագրության ասպարեզում, իրրև դրող, հրապարակախոս, խմբագիր և նաբեկացու «Մատյան ողբերգության» երկի առաջին աշխարհաբար թարգմանության հեղինակ: Մինչ այդ, Մ. Գոչունյանն աշխատակցել էր Կ. Պոլսի «Հայրենիք», «Արևելք», «Նոր դար», «Ճերիտեի չարգիյե», «Մաղիկ», «Մասիս», «Իյուզանդիոն» պարբերականներին, 1880–1890-ական թթ.՝ Զմյուռնիայի «Արևելյան մամուլ» հանդեսին (Քասիմ և Քասիմզուխտ ծածկանուններով), իսկ 1901–1908 թթ. խմբագրել էր Կ. Փանոսյանի «Մանգումե-ի էֆքյար» թերթը[1]: Ի դեպ, այս թերթում նա սկսեց իր «Օրուան մտածումներ» մշտական խորագրով հոդվածները՝ վերջինս շարունակելով «Ժամանակ» թերթում[2]:

«Ժամանակի» թիվ 1-ում Մ. Գոչունյանը ծանուցում էր ընթերցողին իր վերոհիշյալ՝ ազատական գաղափարներին հավատարիմ մնալու սկզբունքը. «Մեր ուղղությունը եղած է անհատականութիւնը զարգացնել, անձերը բարձրացնել, ինքնօգնութեան ոգին ներշնչել ու այսպէսով նիւթապէս ու բարոյապէս բարձր մակարդակի վրայ կանգնած համայնք մը ողջունելու բաղդին արժանանալ» (1908, 15 հկտ.):

Իր հրատարակությունը «Ժամանակը» սկսում էր, ինչպես Թուրքիայում հրատարակվող ամբողջ մամուլն այդ օրերին՝ համիդյան վարչակարգի խիստ քննադատությամբ: Անփառունակ անցյալից և բռնակալության լծից ձերբազատվելու պատրանքը սնում էր առհասարակ հպատակ ժողովուրդների ազգային հույսերը:

---

[1] Տե՛ս Ազատյան Թ., «Ժամանակ» բառասնամեայ յիշատակարան, 1908-1948, էջ 62, 73-74:

[2] Այդ խորագրով «Ժամանակում» Մ. Գոչունյանի տպագրած հոդվածները վերջերս «Ժամանակ» 100 տարի» մատենաշարով (թիվ 1) վերահրատարակվել են առանձին ժողովածուով՝ ի հավերժացումն ականավոր խմբագրի հիշատակի (տե՛ս Քասիմ. Միսաք Գոչունեան, Օրուան մտածումներ (1908-1913):

Մ. Գոչունյանն իր թերթին աշխատակցելու հրավիրեց հրապարակախոսական ու լրագրողական լավագույն ուժերին: Խմբագրական մարմնի մեջ մտան Ա. Գալփակճյանը, Ս. Ջոմլեքճյանը (Ժիրայր Շիրակացի), Ե. Օտյանը, Ա. Անտոնյանը, Ե. Տեր Անդրեասյանը, Հ. Տեր Հակոբյանը, Թեոդիկը և ուրիշներ[1]*: Շատ ավելի լայն էր հեղինակային շրջանակը՝ Գր. Զոհրապ, Ս. Պարթևյան, Վ. Թևքեյան, Զ. Եսայան, Ռ. Զարդարյան, Մ. Շամտանճյան, Հ. Ալփիար, Ալփասլան, Մուշեղ Եպիսկոպոս և այլք: «Ժամանակի» ժողովրդավարական ընթացքը ուղղորդում էր, մինչև իր մահը (1913) Մ. Գոչունյանը: Թերթում նա հանդես է եկել, ինչպես ասվեց, «Օրուան մտածումներ» խորագրով հմտալի խմբագրականներով, թերթի առաջին տարիներին՝ Ք ստորագրությամբ: Ամենայն հավանականությամբ, նրա գրչին են պատկանում նաև «Ժամանակի» այն խմբագրականները, որոնք անստորագիր են և քիչ թիվ չեն - կազմում դրա էջերում: Դրանցում նկատվում է Մ. Գոչունյանի հետզհետե աճող քննադատական վերաբերմունքը երիտթուրքերի կառավարման նկատմամբ: Հավատալով երկրի սահմանադրվելու իր ակնկալիքներին, Մ. Գոչունյանը հարձակումների թիրախ դարձրեց բռնակալական հին մտայնության դրսևորումները՝ երիտթուրքական կառավարման պայմաններում: Իր հոդվածներում նա արդեն 1908 թ. դեկտեմբերին նկատում էր այլադավանների իրավունքները ոտնահարող վերաբերմունքի հարատևումը հենց օսմանյան սահմանադրական մամուլում: Մ. Գոչունյանը նկատում էր «Հուքուքը ումումիյե» և «Թանին» թերթերի զարմանալի նմանությունը՝ «երկուքն ալ իրարմէ աւելի ազատական, իրարմէ աւելի չօվէն», որոնք վիրավորել էին հույների և ոչ միայն հույների արժանապատվությունը՝ ամբարտավանորեն նրանց նսեմ համարելով տիրող ազգի (միլլեթը հաքիմե) համեմատությամբ: Անստորագիր մեկ այլ հոդվածում խմբագիրը ցույց է տալիս, որ Կ. Պոլսի քաղաքապետ Զիյվեր պեյը գաւոզամտորեն դուրս է արել իրեն դիմած մի*

[1] «Ժամանակի» հիմնադիրների, աշխատակազմի և հետագա ընթացքի մասին համառոտ տե՛ս **Pamukciyan K.**, Istanbul Yazıları, Cilt I., s. 192.

չատ հարգարժան ու վաստակաշատ մարդու՝ բժիշկ Տոնճյանին, ոտնակոխ անելով հպատակների իրավահավասարության վերաբերյալ իշխանությունների երդումները: Այս ամենը դևռ սկիզբն էր, Գոչունյանը պետք է անցներ շատ ավելի կարևոր քողազերծումների, ինչպիսիք էին օսմանյան խորհրդարանի ընտրությունները, վարչակարգի մարդկանց խորհրդարանում և պաշտոնական աթոռներին տեղավորելը և այլն: «Անձրևէն փախանք՝ կարկուտի բռնվեցանք» հոդվածում Գոչունյանը բացահայտում է, որ գավառներում հայերի դլխին փորձանք դարձած բռնակալները քվեներ են կորզել ընտրողներից և այժմ, արդեն երեսփոխանի կարգավիճակով ավելի լկտի և բացահայտ, չարունակում են իրենց կամայականությունները հայերի նկատմամբ: Այդպիսի մեկի՝ Շապլին Դարահիսարից ոմն Մուստաֆայի դեմ նյութ էր ունեցել Զոհրապը խորհրդարանում առաջարկելով զրկել նրան երեսփոխանությունից: Մ. Գոչունյանը պաշտպանում էր Զոհրապին և հանդիմանում այն հայ երեսփոխաններին, որոնք «լուռ համակերպութիւն ձեւացուցին եւ մինակ դանդատուող հայ մեպուան ալ (Զոհրապին – Ա. Ի.) պզտիկ ձգնցին» (1908, 26 դկտ.):

Հին Չալդարարների մուտքը դեպի օսմանյան խորհրդարան փակելու և ժողովրդին սպառնացող այդ հարատևող վտանգը կանխելու համար Մ. Գոչունյանը եռանդուն գործողություններ էր մղում Ազգային երեսփոխանական ժողովին, որը պետք է արտակարգ հետևողականություն ցուցաբերեր այս հարցում և արտահայտեր հայ ազգի կամքը ընդդեմ բռնակալների երեսփոխանական ընտրության. «Եթէ չենք ուզեր, որ անձրևէն փախչելով կարկուտի բռնուինք, այսօր իսկ պէտք է բողոքող պատգամաւորութիւն մը ղրկենք օսմանեան խորհրդարանը ու պահանջենք որ... բռնապետական մեպուսները դուրս վտարուին խորհրդարանէն»,- գրում է «Ժամանակի» խմբագիրը (Ն. տ.):

Երիտթուրքերին ակնհայտորեն դուր չեկավ այս հոդվածը, այլև հակադարձության մղեց նրանց: Ուշագրավ է, որ դեռևս Աբդուլ Համիդի ժամանակներից (նաև երիտթուրքերի ժամանակ) կա-

ռավարական շրջաններին մոտ կանգնած «Իքդամ» թերթը մարգմանաբար տպագրեց Մ. Գոչունյանի վերոհիշյալ հոդվածը և բանավեճ սկսեց նրա դեմ երեսպաշտորեն պնդելով, թե խորհրդարանում պետք է լինեն տարբեր կուսակցություններ, որոնց տարակարծությունների մեջ է ծնվում ճշմարտությունը: Խոսքը, մինչդեռ, վերաբերում էր օսմանյան խորհրդարանում արյունկզակների անդամակցությանը: Եվ Մ. Գոչունյանը դրան պատասխանեց կեղծիքը բացահայտող տրամաբանությամբ. «Խորհրդարանը պէտք է ամբողջ սահմանադրական ազատականներէ բաղկանա եւ կուսակցութիւնները ազատականներէ կազմուին՝ տեսակէտի ու գաղափարի զանազանութեամբ միայն: Արդ, երբ կը տեսնենք, որ ազատականներու հատկացուած աթոռները բռնապետականներ կը գրաւեն, ինչպէս անտարբեր կը գտնուինք» (1908, 30 դկտ.):

Օսմանյան խորհրդարանի անդամ էին դարձել ոչ միայն Գոչունյանի հիշատակած Մալաթիայի, Խարբերդի, Շապին Գարահիսարի և Դիարբեքիրի հայակերները, այլև ոչ պակաս մոլեռանդ՝ Տրապիզոնի երեսփոխան Նեմլիդադեն, հայտնի՝ Տրապիզոնի հայերի կոտորածները կազմակերպելու մեջ: Դաշնակցության կողմից նրա դեմ ուղղված համառ բողոքների առջև խորհրդարանի նախագահ Ահմեդ Րիզան անդրդվելի մնաց, առարկելով, որ մեւլուանների վավերացումից հետո նրանց դեմ որևէ բողոք չի կարող ընդունվել (1909, 13 հնվ.):

Փոխարենը, հին վարչակարգի մարդկանց դեմ հուչական պայքարը երիտթուրքերն ուղղեցին հայ պաշտոնյաների դեմ՝ այսպես կոչված թենսիքաթի (վերակառուցման) լոզունգով և պաշտոնազրկելով նրանց: «Պետական հայ պաշտօնեաները ինչ չահեցան սահմանադրութենէն» հոդվածում «Ժամանակը» գրում էր, որ սահմանադրության հուչակումից հետո վեց ամիս է անցել, բայց իշխանությունները արդեն հասցրել են հայ պաշտոնյաների չարքից հանել տասնյակներին» (1909, 5 հնվ.):

Մ. Գոչունյանը հետևողականորեն քննադատում էր այն հայերեսփոխաններին, որոնք չէին հաղթահարել ասիական հին նախա-

պաշարումներն ու հոգեբանությունը՝ սուլթանական գահի հանդեպ հաճկատարության բարդույթը, երբ օսմանյան խորհրդարանի բացման առթիվ ճաշկերույթի էին գնացել Յղըզլի պալատ: Մինչդեռ նրանք մոռանում են, նկատում է Գոչունյանը, իրենց ազգակիցների նկատմամբ օրավուր սաստկացող ճնշումները (1909, 2 հնվ.): Այս առթիվ Ալփասլանը տպագրեց իր «Կայսերական ճաշացուցակը» վերնագրով սպանիչ պարոդիան՝ միանգամայն գոչունյանական ոգով:

Գոչունյան մտավորականը հանդես էր բերում իր չիտակությունն ու համարձակությունը, երբ դիմում էր օսմանյան խորհրդարանի նախագահ Ահմեդ Րիզային, ում, բացի երեսփոխանի աչխատավարձից, տրվելու էր հարյուր ոսկի ամսականի հավելում և ապարանք՝ բնակության համար: «Տհասկցություն մը օսմանյան խորհրդարանին նախագահ Ահմետ Րիզա պէյին հետ» հոդվածում Գոչունյանն առաջարկում է նրան հրաժարվել այդ ամենից և շարունակել նախկին համեստ ապրելակերպը. «Անգամ մը, որ ապարանքի կեանքին համն առնէք, պիտի ստիպուիք ծառաներու, հարճերու, ադախիններու ծանր բեռին տակ ընկճուիլ եւ դրամի պէտքը զգալ: Ու այն ատեն, երբ դրամ վինտռնէք, երեւակայեցէք՝ ինչ պիտի ըլլայ հետեւանքը: Դուք ալ ակամա գլտորած պիտի չըլլա՞ք երեսուն տարիէ ի վեր կառավարութեան գլուխը գտնուողներուն ինկած վիհին մէջ» (1909, 9 մյս.):

Մինչև 1910 թ. մարտ-ապրիլ ամիսները «Ժամանակն» իր ազատամիտ հայեցության հետ միասին ի հայտ էր բերում գաղափարական համակրանք՝ Հայ Հեղափոխական Դաշնակցության նկատմամբ: Ինքը՝ դաշնակցությունը, այն ժամանակաշրջանում փորձում էր արևմտահայության ազգային ինքնորոշման գաղափարն առնչել ակնկալվող բարենորոգումներին, երկրի եվրոպականացման ընթացքից հուսալով նաև Արևմտահայաստանում ղրական տնղաչարժերի հեռատեսները: Ի դեպ, սա միայն դաշնակցության կողմնորոշումը չէր, այլ բոլոր ազգային կուսակցություններինը ևս, որոնց ազգային ինքնորոշման ձգտումները եզրավորվում

էին տեղական ինքնավարության սահմաններով: Այսպիսի ուղեգիծը մի հայտնի չափով կորցնում էր իր հակադրության սուր եզրերը օսմանիզմի՝ դեռևս նախորդ դարակեսից առաջ քաշած ընդհանուր բարեկարգությունների կարգախոսի նկատմամբ և Արևմտահայաստանում անցկացվելիք բարեփոխումները դիտարկում էր ամբողջ Թուրքիայի վերակառուցման համատեքստում:

Առաջին տարիների «Ժամանակին» իր դործուն աշխատակցությունն էր բերում Ռ. Զարդարյանն իր հրապարակախոսական հոդվածներով: Նա հետևողականորեն պաշտպանում էր տեղական ինքնավարության սկզբունքը, որը, ի դեպ, երիտթուրքական հեղաշրջման առաջին ամիսներից ի վեր հերքելու էին ձգտում թուրքական մամուլն ու քարոզչությունը: «Տիրապետութեան ոգին» և «Կեդրոնական կառավարութիւն» խմբագրականներում Ռ. Զարդարյանն օսմանյան կայսրության աղետների մի կարևոր պատճառն էր համարում հպատակ ժողովուրդների իրավազրկության սրբագործումը, «կեդրոնացման» անդիջում սկզբունքը (1908, 14, 19 նոյ.): «Իրաւունքի պայքար» հոդվածում (1908, 26 նոյ.) նա հիմնավորապես քննադատում է օսմանյան խորհրդարանի ընտրությունների եղանակը, իբրև ժողովուրդների անիրավահավասարության դրսևորում: Հպատակ ազգերը, այդ թվում և հայերը, իբրև վիճքրամատնության, ցրված են թուրքական տարրերի մեջ և զրկված են արդարացի ներկայացուցչությունից: Զարդարյանն առաջարկում էր բարեփոխել ընտրության երկաստիճան համակարգը և խառն քվեարկության սկզբունքները: «Դատարաններուն վերակազմութիւնը» հոդվածում (1908, 18 դկտ.) նա դարձյալ ուշադրություն էր դարձնում համիդյան վարչակարգի վերապրուկների վերացմանը՝ դրա կարևոր լծակներից մեկը համարելով օսմանյան դատական համակարգը: Սահմանադրական իրավունքը, ըստ նրա, մի հայտնի չափով հենվում է այդ համակարգի վրա, մինչդեռ, հատկապես դավառներում, իրենց տեղերում հաստատուն նստած են հին վարչակարգի բազմաթիվ դատական պաշտոնյաներ, իրենց համբավված բոլոր արատներով հանդերձ: «Հին դայլերը, հին աղու-

էսները» հոդվածում (1909, 15 փետ.) Ռ. Զարդարյանը նկատում է, որ հայարնակ վիլայեթներում մնացել են հին բռնություններն ու բռնության ուխտյալ պաշտոնյաները, որոնց իշխանությունները հովանավորում են ակամա կամ էլ գիտակցորեն: Այս հեղինակը նշում է իրենց պաշտոնին մնացած մի քանի հանցագործների անուններ, ինչպես Բիթլիսի ոստիկանության կոմիսար Մուստաֆա Ռիֆաթը, սրանից ոչ պակաս անողորմ գործերով հռչակված՝ Մերսինի ժանդարմական բինբաշի Քիրիթլի Ահմեդը և այլն:

Հարկ է նշել համիսլամության դեմ ուղղված թերթի առարկությունները, որոնք հիմնավորում էին հպատակ փոքրամասնությունների ազգային ու կրոնական իրավունքները: Մի հոդվածում Ռ. Զարդարյանը քննադատում էր օսմանյան խորհրդարանի նախագահ Ահմեդ Ռիզա բեյին՝ կրոնական ու սահմանադրական սկզբունքները նույնացնելու (որ դեռևս 1860-ական թթ. ձևակերպել էին «Նոր օսմանները»), իսլամ և քրիստոնյա ժողովուրդներին հակադրելու անխոհեմ գործելակերպի համար (1909, 11 հնվ.): Նույն մտայնությունն է առկա Ռ. Զարդարյանի «Գահաճառին պատասխանը» հոդվածում (1909, 5 հնվ.), որտեղ նա նշում է, որ խորհրդարանին ուղղված ուղերձում սուլթանը ոչ մի խոսք չի ասում ազգերի իրավահավասարության և փոքրամասնությունների իրավունքների մասին և որտեղ չնշվում է պանօսմանական «օսմանյան ազգ» ձևակերպումը: Այդպիսի ձևակերպումը Ռ. Զարդարյանը հերքում է հպատակ ազգերի բուն իսկ գոյությամբ, որի դեմ մղած դարավոր պայքարն այսօր շարունակում են օսմանյան կառավարողները: Որպես դրա դրսևորում, նույն համարում թերթը տպագրել է վերոհիշյալ՝ «Պետական հայ պաշտօնեաները ինչ չահեցան «սահմանադրութենէն» հոդվածը, որ վերաբերում էր հայ պաշտոնյաների հեռացմանը օսմանյան պետական կառույցներից:

Առհասարակ Ռ. Զարդարյանը ներկայացնում էր ՀՅԴ այն գործիչների տեսակետը, որն առանձնանշվում էր կրիտիուրքերի մնծապետական կեցվածքի ու դաղափարախոսության քննադատությամբ: Ուշագրավ է նրա «Բնակարանի անձեռնմխելիութիւն»

հոդվածը (1909, 25 հնվ.), որտեղ դատապիտավում է երիտթուրքական իշխանությունների գործադրած հալածանքը թուրքական «Ծեդաքյարանը միլլեթ» («Անձնագոհ ժողովուրդ») կազմակերպության և «Հուքուքը ումումիյե» թերթի դեմ: Այդ կազմակերպությունը, որին անդամակցում էին նախկին քաղաքական բանտարկյալները, պաշտպանում էր երկրի բոլոր ազգերի սահմանադրական իրավունքները: Այն չցանկացավ ձուլվել որևէ կուսակցության՝ պահպանելով իր կազմակերպական անկախությունը, ուստի և հաճելի չեղավ իթթիհատական կոմիտեին, «որ համայնակուլ բարի ախորժակով մը կը ձգտի ամէն քաղաքական ոյժ, ամէն կուսակցութիւն ընկլուզել իր որովայնին մէջ, կլլել, մարսել» (ն. տ.):

«Ժամանակում» տպագրած իր վերջին հոդվածներից մեկում Զարդարյանը հերքում է թուրքիայում հայկական անջատականության վերաբերյալ ռուսական հետագիմ մամուլի նյութերի համակրական արձագանքները թուրքական թերթերում, քննադատում Հյուսնին Հիլմի փաշայի կառավարության ծրագրի վերացականությունը երկիրը կառավարելու գործում և այլն (1908, 25 հնվ.): Այս և այլ հրապարակումներում նա հանդես է գալիս կտրուկ հարցադրումներով, իշխանությունների և երիտթուրքական կոմիտեի հանդեպ սրացող ընդդիմության: Հազիվ թե ճիշտ կլիներ ասելը, թե այսպիսի կեցվածքը չէր համապատասխանում «Ժամանակի» մտայնությանը, թերթի այն չիտակ ուղղությանը, որ ներթադրում էին Գոչունյանները: 1910 թ. մարտից հետո, համենայն դեպս, Ռ. Զարդարյանը դադարել է թերթին աշխատակցելուց: Նկատենք միայն, որ «Ժամանակը» դաշնակցությանը հակադրվում է Կիլիկիայի հայերի կոտորածի առթիվ օսմանյան խորհրդարանում հետևողական ուղեգիծ չվարելու, ինչպես և եկեղեցու հանդեպ այդ կուսակցության քննադատական կեցվածքի համար: «Ժամանակի» աշխատակիցներից Ե. Տեր-Անդրեասյանը՝ իր չափավոր հայացքներով հայտնի մի հրապարակախոս, քննադատում էր Զոհրապին՝ ընկերվարության դաղափարները համակրելու համար («Զոհրապ և Դաշնակցութիւնը») (1910, 23 փետ.) և

առհասարակ, խնամքով պատվարվում այդ ուսմունքից: Այդ վարդապետությունը, նշում է «Ժամանակը», պառակտում կմտցնի նախ բուն հայ ժողովրդի մէջ՝ նրան կոտորակելով ըստ դասակարգային հատկանիշների, և ապա հայերի և դրացի ազգերի միջև, որոնք «հակառակ են այդ վարդապետութեանց» (1910, 11 փետ.): Ընկերվարությանը թերթը հակադրում էր ազատականությունը, իբրև հասարակական հարաբերությունների ու պետական կառուցվածքի հիմք, որը կոչված է ոչ թե սրելու, այլ հաղթահարելու դասակարգերի հակադրությունը՝ նրանց չահերը համատեղելու միջոցով: Միաժամանակ, թերթը միասնության կոչ էր անում ազգային կուսակցություններին՝ ժողովրդի դրությունը թեթևացնելու գործում այդ համարելով անհրաժեշտություն: Այստեղից՝ ընդհանուր առմամբ նրա ոչ կտրուկ դիրքորոշումը այդ կուսակցությունների նկատմամբ, անգամ այն դեպքերում, երբ դրանցից որևէ մեկի գործնկերությը հակասում էր իր տեսակետին: Նկատելի է, սակայն, թերթի ուղղության խստացումը Ե. Տեր-Անդրեասյանի աշխատակցության ժամանակ, 1910–1911 թթ.: Հայ մամուլի այդ ծանոթ գործիչը «Ժամանակի» էջերում բավականաչափ կամք ցուցաբերեց՝ ընկերվարության, Դաշնակցություն կուսակցության և Գր. Զոհրապի դեմ իր ամբարած հակակրանքը արտահայտելու համար: Անդրադառնալով Ե. Տեր-Անդրեասյանի՝ այդ հարձակումներին՝ Զոհրապի դեմ, ասենք, որ այդ հակակրանքը բխում էր ՀՅԴ նկատմամբ ունեցած ռամկավարական հետզհետե աճող անհանդուրժողությունից: Նախապես, «Ժամանակի» էջերում, երբ այդ թերթը չէր հակադրվում դաշնակցությանը, Զոհրապի դործունեությունը գնահատվում էր սթափ և համակրանքով: Թերթն անգամ տպագրել է նրա ընդարձակ մի ելույթը «դաշնակցական միթինկում» («Ինչ կը պահանջէ հայը օսմանեան խորհրդարանէն» վերնագրով, որպես խմբագրական (1908, 12 նոյ.): Ինքը՝ «Ժամանակը», Զոհրապին բնութագրում է որպես «Հայ դրականութենան ամէնէն կարկառուն դէմքերէն... որ նոյնքան մեծ տեղ կը գրաւէ օրէնսգէտներու եւ իրաւաբաններու պատուաւոր դասակարգի մը մէջ» (Ն. տ.): Զոհ-

բային իր ելույթում առաջ էր քաշել երեք հիմնական կետեր՝ 1. զուտ հայերին վերաբերող պահանջներ՝ համիդիե զորամասերի վերացում, խլված հողերի վերադարձ և հայ գավառներին օժանդակություն, 2. բոլոր ազգերի իրավունքների պաշտպանության իմաստով՝ նրանց թվաքանակին համապատասխան թվով երեսփոխանների տեղ և պաշտոն պետական ծառայության մեջ և 3. պահանջներ, որ վերաբերում էին պետության ամբողջական և ընդհանուր շահերի պաշտպանությունը:

Զոհրապը նշում է, որ այս ծրագիրը չափավոր է համարել նույնիսկ երիտթուրքական կոմիտեի օրգան «Շուրա-ի հյումմեթը», մինչդեռ որոշ հայեր ճգնում են այն որակել իբրև «ծայրայեղ ու վնասակար»: «Իրաւունք ունիմ հարցնելու, թե իրոք հայե՞ր են ասոնք, կամ լաւ եւս է ըսել՝ որ օր մը դոնէ իրենց կեանքին մէջ հայ զգացա՞ծ են ինքզինքնին», հավելում է Զոհրապը (ն. տ.):

«Ժամանակն» իր պաշտպանության տակ առավ Զոհրապին, երբ թուրքական թերթերից մեկը նրան մեղադրեց այն բանում, որ նա պաշտոն է ունեցել ռուսական դեսպանատանը (1908, 17 նոյ.): «Ժամանակը» գրում էր, որ Զոհրապն այդ արել է իր անձի անձեռնմխելիության համար՝ պաշտպանվելու իշխանության ոտնձգություններից:

Օսմանյան հետադիմությունը և նույն երիտթուրքական կոմիտեն չէր կարող հաշտ հայացքով նայել Զոհրապի սկզբունքային դիրքորոշմանը խորհրդարանում ի պաշտպանություն երկրում ազգերի իրավահավասարության և ընդդեմ համիդյան վարչակարգի ջարդարարներով խորհրդարանը լցնելուն: Հիրավի, այստեղ երեսփոխաններ էին ընտրվել, ինչպես տեսանք, նաև հայկական կուսակցությունների որոշ կազմակերպիչներ:

«Ժամանակում» տպագրվեց նաև Զոհրապի «Շուքի մը նամեան» հոդվածը, որտեղ նա կարուկ առարկում էր ծառայամիտ մարդկանց գոհունակություն պատճառող՝ փքուռուլյց կոչականների («պղնուաչուք», «վսեմաչուք») դործածությանը, հայտնելով, որ այս առարկությունն ինքը առաջ է քաշել դեռևս քսան տարի

առաջ՝ «Հայրենիք» թերթում (ի դեպ, դրանից էլ առաջ, 1870-ական թթ. նույն երևույթը ծաղրել էր Հակոբ Պարոնյանը): Այս առթիվ Զոհրապը քննադատում էր «Բյուզանդիոն» թերթի հաճկատար կեցվածքը իշխանավորների նկատմամբ, ցույց տալով, որ ինքը կատարելապես արհամարհում է այդ թերթի խմբագիր Բ. Քնչյանի բարոյական ըմբռնումները այս հարցում («ընկալեալ գաղափարներու ահագին պաշարը», ինչպես հեգնորեն նկատում է Զոհրապը) (1908, 8 դկտ.):

Ե. Տեր-Անդրեասյանը «Ժամանակում» հայտնվեց 1910 թ. հունվար-փետրվարին, համենայն դեպս, ազդեցության զգալի չափերով, որպեսզի բացահայտ հարձակումներ գործի Դաշնակցության և նրան հարող մտավորականների վրա: Պետք է կարծել, որ Ե. Տեր-Անդրեասյանը սևիական մեկնաբանություն էր տվել թերթի տնօրեն-խմբագիր Մ. Գոչունյանի՝ 1908 թ. վերջերից «Ժամանակում» չարունակաբար տպագրած «Կրակին մէջէն» վեպին, որտեղ պատկերված էին դաշնակցության մասնակցության դրվագներն ու դերը «Բանկ Օտոմանի» հայտնի իրադարձություններին: Կարելի էր սովորական և քաղաքակրթության չափ հին «գրական նախանձով» բացատրել Ե. Տեր-Անդրեասյանի բուռն ու անպատշաճ հարձակումը մեծ դրողի և ազգային գործչի դեմ (1910, 2, 23 փետ.), եթե չլիներ մեկ այլ հանգամանք՝ թերթում նրա հայտնվելուց հետո, 1910 թ., իր աշխատակցությունը դադարեցրեց Ռ. Զարդարյանը, որ դեռ 1909-ին էր ստանձնել ՀՅԴ «Ազատամարտի» խմբագրապետությունը: Հայտնի են նաև Ե. Տեր-Անդրեասյանի բանավիճային հոդվածները ՀՅԴ դեմ: Զոհրապի հանդեպ նրա վերաբերմունքը, ուրիմն, բխում էր նաև կուսակցական նախասիրություններից:

Համամիտ լինելով արևմտահայ անկախ մամուլի այն կարծիքին, որ Ադանայում հայերի ջարդը կազմակերպել են հին վարչակարգի կողմնակիցները, «Ժամանակը» ևս դիմում էր կառավարությանը՝ դեպքերին արդարացի գնահատական տալու համար,

պաշտպանում էր Կիլիկիայի հայերի իրավունքները և պահանջում կանխելու նման դեպքերի կրկնության միջոցները: Կիլիկիայի հայերին անկարգությունների մեջ մեղադրող իշխանություններին «Ժամանակն» առարկում էր ոչ միայն փաստարկներով, այլև հենց թուրքական մամուլի նյութերով: «Ժամանակը» տպագրեց «Թանին» թերթի Կիլիկիայի թղթակից Ահմեդ Շերիֆ բեյի հոդվածը, ուր ցույց էր տրվում, որ արյունալի իրադարձությունների ժամանակ հայերը դիմել են ինքնապաշտպանության՝ զարդերից փրկվելու նպատակով:

Մինչև Ադանայի դեպքերը և դեռ դրանից հետո էլ «Ժամանակը» հավատում էր Օսմանյան Թուրքիայի բարեփոխման, դրա հետ միասին՝ հայերի իրավական կացության ապահովման, առաջիկայում այդ երկրի բոլոր բնակիչների իրավահավասարության հնարավորության: Միաժամանակ, թերթի բազմաթիվ նյութերում լուսաբանվում են արևմտահայության հողազրկման, պաշտոնյաների չարաշահումների, վաչխատունների քայքայիչ գործողությունների և այլ ողբերգական իրողություններ: Թերթն առանձնապես ընդգծում էր հողազրկման երևույթը, որ սպառնում էր հայերին արմատախիլ անել հայրենի հողից: Տպավորիչ են այս թեմայով գրված թղթակցությունները Բալուից, Մուշից, Զարսանճագից և այլ վայրերից: Բալուի 40 գյուղերում, որտեղ հայերը մնծամասնություն էին կազմում, հողերի մնծագույն մասը զավթել էին քրդական բնակչերը, որոնք, իբրև հողի սեփականատերեր, ներկայացնում էին այդ հաստատող կեղծ թափու (վկայական) (1908, 18 նոյ.): Զարսանճագում 60 գյուղերի 25 հազարանոց բնակչությունը նույն կարգի բռնավորների ձեռքով զրկվել էր հողերից դեռևս 50–60 տարի առաջ: Շուրա-ի դևվլեթը (Պետական խորհուրդ), ինչպես նշում էր «Ժամանակը», վճռել էր, որ այդ հողերի սեփականատիրական իրավունքը պատկանում է քուրդ աղաներին (1910, 12 հլս.):

Հայերին սեփականազրկելու միջոցով անտեսապես քայքայելու՝ պետության որոշակի քաղաքականությունը խարազանվել կամ

մերկացվել է «Ժամանակի» աշխատակից Ե. Օտյանի կողմից: «Պոլսէն սկսենք արդարութիւնը» ֆելիետոնում նա անհեռանկար է համարում արդարության սպասելիքները իթթիհատին փոխարինած իթթիլյաֆական Ջյամիլ փաշայի կառավարությունից: Ջորս տարի է, նկատում է Ե. Օտյանը, էվքաֆի (վակֆային կալվածքների) նախարարությունը դատ է վարում հայ ազգի դեմ՝ ձգտելով ապօրինաբար խլել ազգային հիվանդանոցի մի կալվածքը: Նախարարությունն այն հռչակել է իբրև մահլուլ (անժառանգ կալվածք, որ ըստ օրինի անցնելու էր պետությանը), բայց, ինչպես նկատում է Օտյանը, այն դեռևս տասնհինգ տարի առաջ ձևակերպվել էր Պատրիկ Կյուլլենկյանի անվամբ, հետևաբար, կալվածքը անժառանգ չէր կարող դիտվել: Եթե ազգերի համերաշխության ու հավասարության անունից խոսող կառավարությունը բացահայտորեն ոտնակոխ է անում հայերի իրավունքները մայրաքաղաքում, ապա ինչպես կարող է ի վիճակի լինել բարենորոգումներ անցկացնելու Հայաստանում, եզրափակում է Օտյանը (1912, 12 դկտ.):

Ե. Օտյանը «Ժամանակին» կանոնավորապես աշխատակցել է 1911–1915 թթ.՝ գրելով նաև առաջնորդող հոդվածներ, ֆելիետոններ, երգիծական բնույթի բազմաթիվ նյութեր՝ օրվա ուշագրավ թեմաներով: Վերջիններիս մեջ ակնառու է քաղաքական սատիրայի վարպետ օգտագործումը մեծ երգիծաբանի կողմից: Այդպիսին է «Ֆիւրըտ օսմանցիի մը բաղձանքները» (1912, 15 դկտ.), որտեղ ծանակվում է Հայաստանում, իբր, բարենորոգումներով մտահոգ, իրականում դրանք վիժեցնելու հետամուտ կառավարությանը սատարող թուրք մամուլը: Նույն թեման է զարգացնում Ե. Օտյանն իր մյուս հրապարակումներում, հատկապես «Բարեկարգութեանց երգը» ֆելիետոնում, որտեղ ծաղրուծանակի է ենթարկում բարենորոգումների «թուրքական» ձևը. «Օրինակի համար, Պէնկազիի կուսակալ Օսման փաշա կաշառակեր է եւ Գոսովայի կուսակալ Հասան փաշան ալ՝ զեղծարար: Ժողովուրդը դժգոհ է, պէտք է դոհացում տալ, բարեկարգել: Օսման փաշա իբրեւ կուսակալ կը ղրկենք Գո-

սովա, Հասան փաշան ալ նոյն պաշտօնով կը փոխադրենք Պէնկազի, պրծաւ-գնաց» (1913, 11 Հնվ.):

Ե. Օտյանի՝ օրվա հիմնահարցերին հետամուտ երդիծական-հրապարակախոսական գործերը միևնույն ժամանակ գեղարվեստական բարձրարժեք ստեղծագործություններ են, որոնք համերաշխելով «Ժամանակի» ազատամիտ ուղղությանը, ի հայտ են բերում ամենից առաջ հեղինակի դիրքորոշումներն ու անհատականությունը: Քննադատվող առարկան կամ երևույթը նրա երդիծական կրակի ներքո տեսանելի է դառնում հասարակության համար անսպասելի կողմերով կամ հատկություններով, որ նպաստում է այս վերջիններիի իրական բնույթի ընկալմանը: Որևէ պատրանք չունենալով ո՛չ իթթիհատի և ո՛չ էլ իթիլյաֆի նկատմամբ, նա իրավացիորեն կարծում էր,որ ժամանակակից օսմանյան քաղաքական իրականությունը ի զորու չէ ձևավորել եվրոպականացած որևէ կազմակերպություն կամ կառույց: Ե. Օտյանը ծաղրում էր թուրք հրապարակախոս Լյութֆի Ֆիքրիին, ով հայտարարել էր իթիլյաֆի վերացման և եվրոպական քաղաքակրթությանը հետամուտ նոր կուսակցություն ստեղծելու մասին (1912, 12 դկտ.): Երդիծաբանի նույն վերաբերմունքին արժանացավ թուրքական քաղաքական մթնոլորտում ուրվագծվող՝ «Ասիական ընկերության» գաղափարը: Դրա նշանաբանն էր լինելու «Ասիան՝ ասիացիներին» ազգայնական ձևակերպումը (1913, 30 Հնվ.):

Այս շրջանում «Ժամանակի» աշխատակիցները, այդ թվում և Ե. Օտյանը, դիպուկ քննադատում էին թուրքական այն թերթերին, որոնք բարենորոգումների շուրջ ռուս-եվրոպական արթնացած ուշադրությանը հակադրում էին սադրիչ հոդվածներ՝ ընդդեմ հայերի և նրանց դեմ գրգռելով թուրքական հասարակական կարծիքն ու քրդերին: Թուրքական որոշ թերթեր, իրենց հերթին, ճդնում էին սատարել կառավարությանը՝ բարենորոգումների խեղաթյուրված պատկերացումներով և Արևմտյան Հայաստանի տարածքի անգուսպ անդամահատումներով: Այս տեսակետից չատ ուշադրավ է

Ե. Օտյանի «Թանկագին խոստովանութիւն մը» հոդվածը (1912, 25 դկտ.)՝ թուրքական մամուլի այդ նենգափոխումների դեմ, որպիսիք ակնհայտորեն ներշնչվում էին իթիլյաֆական կառավարության կողմից[1]: Նշված հոդվածում Ե. Օտյանը ծաղրում էր թուրք մամուլի մուսևցումները, թե, իբր, բարենորոգումները պետք է արվեն հայաբնակ չորս վիլայեթներում՝ Խարբերդ, Դիարբեքիր, Բիթլիս, Վան: Իսկ մնացածները, ասենք էրզրումի, Վանի հայ բնակիչները, չեն իմացել, որ ապրում են «տիպար նահանգներում», եզրափակում է երգիծաբանը:

«Ժամանակում» տպագրած իր մյուս նյութերում Օտյանը անդրադարձել է պատրիարքների, Ազգային ժողովի և կուսակցությունների գործունեությանը, Բալկանյան պատերազմներին և այլն՝ անգամ իր ցայտուն երգիծական գործերով սեփական լրջությունը հաղորդելով այդ թերթի ուղղությանը:

Որոշակի իրողություններ «Ժամանակը» վերլուծում և ընդհանրացնում էր տեսական հոդվածներով: Հետաքրքիր է Ա. Գալփակճյանի «Տևսութիւն մը Թուրքիոյ կալուածական օրէնքներուն վրայ» հոդվածը (1910, 21 հլս.): Այստեղ հեղինակն առաջ է քաշում կալվածային ու անշարժ գույքերի վերաբերյալ օրենքների խճճվածության խնդիրը, որ հնարավորություն էր տալիս օրինականացնել ապօրինի խլված հողերը: Անպատուշ պետք է մնային «Ժամանակի» հույսերը՝ կապված գավառներում գործող հանձնաժողովների գործունեության հետ: Մի որոշ ժամանակ անց, դրանում համոզվելով, «Ժամանակն» առաջարկում էր պաշտոն չունեցող անկախ քննիչների ընդգրկումը նման հանձնաժողովներում, որոնց անդամակցելու էին Ազգային ժողովի կողմից ընտրված առնվազն երկու հայեր (1908, 7 դկտ.): Սակայն ինքը՝ կառավա-

---

[1] Կաթողիկոս Գևորգին ուղղած նամակում (15 հլս., 1913) անդրադառնալով այս հարցին, Պողոս Նուպարը գրում էր, որ թուրք բերքերին ուղղորդում էր կառավարությունը, որ «կը ջանայ ամէն միջոցներով խափանել Հայաստանի բարենորոգումները, որուն հասնելու համար կը կարծէ, թէ լաւագոյն միջոցը սուտ զրպարտութիւններով վարկաբեկելն է» (ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 43):

բուլթյունը, անընդհատ ձգձգում էր հանձնաժողովներ կազմելու գործը: Այս առթիվ ևս թևրթը նշում էր, որ հանձնաժողովներում նշանակվում են այնպիսի մարդիկ, որոնք հայտնի են հայերի հանդեպ իրենց թշնամական վերաբերմունքով: Փաստորեն երիտթուրքերը քողարկում էին դավառներում կատարվող հալածահարությունները՝ կիրառելով նույն քաղաքականությունը, ինչ դրանից առաջ Յլդըզը:

Հավատարիմ մնալով Թուրքիայի բարեկարգման, հայատակնյալի հանդեպ երիտթուրքերի անհեռանկար քաղաքականության մասին իր ճիշտ պատկերացումներին, «Ժամանակը», մյուս կողմից, կառավարության ձախող գործնկերպով էր բացատրում Բալկանյան 1-ին պատերազմում (1912–1913) Թուրքիայի կրած պարտությունը: Մակեդոնիայում, նկատում էր թևրթը, այդ ոչ խելամիտ քաղաքականությունը (բուլղարացիների, սերբերի և հույների հողազրկումը՝ հօգուտ Բոսնիայից ընկած իսլամ զաղթականների) հասցրեց տնտեսական ու քաղաքական հակամարտության՝ առիթ տալով բալկանյան տերությունների զինակցությանը ընդդեմ Թուրքիայի: Թևրթը կարծում էր, որ Թուրքիայի՝ չբարնշտովվելու համառությունն է պատճառը, որ նրանից երես են թևքել բոլոր տերությունները՝ բացի Գերմանիայից: Մյուս կողմից, թևրթը բաժանում էր այն տեսակետը, որ բոլոր տերություններն իրենց քաղաքական շահերի համար դործիք են դարձրել Հայկական հարցը՝ այն օգտադործելով իրենց արտաքին քաղաքականության մեջ: 1910-ական թթ. «Ժամանակի» հայեցակետը բնութագրելու հարցում հատկանշական է Վ. Թևքեյանի ազատական-ռամկավարական ոգով համակված «Ով պիտի դարբնէ եւ ինչպէս պիտի դարբնուի հայ ազգի ճակատագիրը» հոդվածը: Վ. Թևքեյանը պաշտպանում է «Ժամանակի» ուղեգիծը՝ չափավոր և կշռադատված մոտեցում ցուցաբերելով ազգային խնդիրներին: Այս մոտեցումը հանդեցնում էր «ոչ ըմբոստութիւն, ոչ հուսալքութիւն» կարգախոսին՝ «Հայ ըմբոստական չարժումը,- դրում է նա,- այն հզօր պատճառաւ, որ

սխալ ու դէշ վարուած էր բացարձակ սնանկութեան մը յանգելով, յառաջ բերաւ ազգին բարոյալքուած վիճակը՝ օսմանեան սահմանադրութենէն առաջ եւ թէ անկէ վերջ» (1912, 7 փետ.): Առարկութիւնը վերաբերում էր դաշնակցութեանը, որը, Թեքեյանի կարծիքով, մի ժամանակ վարում էր «ըմբոստական չարժումը», իսկ այժմ որդեգրել է համակերպվելու քաղաքականութիւն: Թեքեյանն առաջարկում էր հայ լիբերալիզմի ավանդական սկզբունքները, ազգի ներքին կարողութիւնների կենտրոնացումը՝ նյութապես ու բարոյապես զօրանալու համար: Այս ուղին նրան պատկերանում էր կուսակցական տարաձայնութիւնների հաղթահարման և ազգի նյութական ու բարոյական արժէքները տնօրինող «բարձր» դասակարգի ուժերով ազգային լուրջ ծրագիր ստեղծելու ձևով: Ռամկավարական հավասարակշիռ գաղափարներով հանդես եկող Վ. Թեքեյանը «Ժամանակին» աշխատակցել է Թերթի հրատարակութեան սկզբից իսկ, ընդ որում, «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ» միացյալ թերթերի շրջանում, 1920–1922 թթ. վարել է այդ հրատարակութեան խմբագրապետի պաշտոնը (ստորագրելով «Ասուպ» ծածկանունով)[1]: «Ժամանակում» նրա տպագրած հոդվածներում շոշափվում են սոսկ ներքաղաքական հիմնահարցեր՝ Կ. Պոլսի ազգային ժողովի գործունեութիւնը, կացութիւնն Արևմտյան Հայաստանում, Հայկական հարցին վերաբերող իրադարձութիւնները 1912–1914 թթ. և հետագայում, հայ ազգային կուսակցութիւնների գործունեութեան գնահատականը և այլն: Վ. Թեքեյանը կողմնակից էր ազգային ինքնորոշման գաղափարին, որ նա անվանում է ազգայնութեան գաղափար և հակադրում այն միջազգայնականութեան և ընկերվարութեան խեղդող հեղեղին: Այս մեկնակետից էլ Վ. Թեքեյանը քննադատում է Դաշնակցութեանը՝ օտար գաղափարները ի հաշիվ ազգայնութեան յուրացնելու և այս վերջինը լքելու համար: Ընդամին, հրապարակախոսը կարուկ հերքում էր ընկերվարութեան և ազգայնութեան չփման ամեն մի ելք՝ պնդելով, որ առաջինը բա-

[1] Տես Ազատյան Թ., նշվ. աշխ., էջ 183, 187:

ցառում և անգամ ոչնչացնում է ազգայնության սկզբունքները: «Ազգայնութենանց գաղափարը եւ հայ ազգութիւնը» հոդվածում (1912, 14 դկտ.) դժվար չէ նկատել նրա անվերապահ համակրանքը վերակազմյալ հնչակյանների հանդեպ, որ ուղղվում էր ազգային զույգ ընկերվարական կուսակցությունների դեմ: Վերոհիշյալ մոտեցումը նա հիմք էր դարձնում՝ մերժելու նաև օսմանյան սահմանադրականներին՝ իթթիհատին, որ նոր սվևրմունքներ է գործել ազգայնության մտայնության մեջ:

Վ. Թևքեյանը ժխտական կեցվածք ուներ նաև Եվրոպայում ծավալված հայանպաստ շարժումների դեմ: «Կաւտսքիի վախճանը» հոդվածում, որտեղ նկատի է առնվում 1912–1913 թթ. բարենորոգումների շուրջ ծավալվող իրադարձությունների ընթացքը, Վ. Թևքեյանը սթափ եզրակացնում էր, որ Եվրոպայի հայանպաստ շարժումից պետք չէ դրական որևէ արդյունք ակնկալել (1913, 8 հնվ.):

«Պատմութիւնն ալ կը խնդաթիւրեն: Ի բերանէ քումմէ», «Կուսակցութիւններու բարիքն ու չարիքը», «Ռուսահայերը իրենց տիղին վրայ» (1912, 12 հնվ., 1913, 31 հնվ., 19 փետ.) և բազմաթիվ այլ հոդվածներում և խմբագրականներում ի հայտ է գալիս առաջադիմական և խորապես սկզբունքային Թևքեյան-հեղապետական-խոսքի գործունեությունը «Ժամանակ» թերթում, որ առավել չոշափելի և ամբողջական էր դառնալու պինդապատարից հետո ընկած մի քանի տարիների ընթացքում:

Իր միջակա դիրքերից թերթը հակադրվում էր նաև օսմանյան ծայրահեղությանը՝ իթթիհատին, դատապարտելով նրա չափազանց ազգայնամոլությունը: «Ժամանակը» նախընտրում էր կայսրության տիրապետող ազգի և հպատակ փոքրամասնությունների միջև կրոնական հավասարության վերացումը՝ սահմանադրական օրինականության հիման վրա: Օսմանյան քաղաքական գործիչներից շատ քչերն են, որոնք կրոնը դուս խզճի խնդիր են համարում, նկատում էր թերթը: Նա վկայակոչում էր նաև հայտնի սահման-

նաղրական էրյուզիա Թեվֆիկին, որն օսմանյան տարածքների կորստյան պատճառն էր համարել Թուրքական հոռի վարչությունը և խտրականության քաղաքականությունը: Ավելացնենք նաև, որ Թուրքային պատահած բոլոր նորագույն աղետները, պարտություններըը Բալկանյան առաջին պատերազմում, ներքին ցնցումները և առհասարակ հեղհեղուկ ներքին կացությունը, թերթը համարում էր երիտթուրքերի աղդայնամոլ քաղաքականության հետևանք, որ վանում էր Թուրքիայից Եվրոպային և փոքրամասնություն կազմող հպատակներին՝ կառավարությունից: 1913 թ. փետրվարին «Ժամանակը» սուր քննադատության ենթարկեց երիտթուրքական նոր կառավարությանը՝ երկիրը պատերազմի մեջ ներքաշելու, ի նպաստ պատերազմի՝ ժողովրդի մեջ հանգանակություններ անցկացնելու և հայրենասիրական հարայհրոցի մեջ սնփական քաղաքական նպատակները քողարկելու համար: Թերթի քաղաքական մեկնաբան «Նոր քաղաքագետը» (Ե. Սուզիկյանի ծածկանունը) դրում էր, որ հանուն հայրենիքի հանդանակության կամ նվիրատվության կոչը չի կարող արձագանք գտնել հայության մեջ, որը զրկված է իր ազգային ու քաղաքական իրավունքներից և մտահոգված է «կեանքի, պատուի և ինչքի ապահովութեան» խնդիրներով (1913, 4 փետ.):

Հոդվածի տպագրությունից երկու օր անց, փետրվարի 6-ին, օսմանյան մամուլի վերատեսչությունը հայտնում էր , որ «Ժամանակը» խափանվում է Ա. զորաբանակի հրամանատարության որոշմամբ, «միտքերը զրգռող» և ժողովրդի մեջ «անհամաձայնութիւն և թշնամութիւն» առաջ բերող մտքերի պատճառով (1913, 6 փետ.): Գործող գրաքննական կանոններով թերթն այլևս չէր կարող նույն անվամբ հրատարակվել, ուստի, ինչպես նկատել ենք ենք իր տեղում, վերահրատարակվել է «Հեռաձայն» անվամբ՝ 1913 թ. փետրվարի 8-ից մինչև 28-ը, որից հետո վերստացել նախկին «Ժամանակ» անունը (պատժաչափի ժամկետը լրացնելուց հետո): Արդեն սկսվել էր ռազմական հիստերիայի բորբոքումը՝ իշխանություն-

նը լիովին վերահսկող իթթիհատի կողմից: Ակտիվացել էին հատկապես մուֆթիները, որոնք կրոնական մոլուցքով լցված՝ թուրքերին գրգռում էին հայերի դեմ: «Հեռաձայնի» նյութերից պարզվում է, որ խրախուսվում է հայկական ազգային գույքի բռնագրավումը էվքաֆի մյութեվելիների (վակֆների կառավարիչների) կողմից: Այս կերպ, 1913 թ. սկզբին բռնագրավվել էին Եդիգուլեի ագարակը՝ 60 հազար ոսկի արժեքով, Ղալաթիայի նամակատան շենքը, որը ս. Փրկչյան հիվանդանոցի սեփականությունն էր և այլն: Այս առիթով թերթն առաջարկում էր դիմել ոչ թե ոչ արդյունավետ՝ թագրիրներ գրելու ավանդական եղանակին, այլ չերիի դատարանին, որը, նրա կարծիքով, կարող էր արդարացի վճիռ կայացնել (1913, 17 փետ.):

1913–1914 թթ. «Ժամանակը» հիմնականում իրատեսորեն է ներկայացնում հասարակական ու քաղաքական լարված մթնոլորտը, որ տիրում էր երկրում: 1913 թ. ապրիլի 29-ին պատրիարքը հայտնում էր վարչապետ Մահմուդ Շեվքեթ փաշային, որ «համատարած կոտորածի մը ընդհանուր սարսափը կը տիրէ» հայաբնակ նահանգներում, և պահանջում էր «ամենաարդիւ միջոցներ ձեռք առնուին հեռացնելու համար այդ վտանգը եւ պաշտօնական յայտարարութեամբ մը ճշդուի հայոց մասին թիւր դաղափարները» (1913, 13 մյս.): Վարչապետը խոստացել էր իր աջակցությունը՝ դարձյալ վկայակոչելով այնքան չարչրկված բարենորոգումների ծրագիրը: Այդ ծրագիրը թերթը շարունակելու էր քննարկել, բայց առանց որևէ ոգևորության, ամբողջ 1913 թ. ընթացքում, իր ընթերցողներին կոչ անելով միաբանել և թողնել ներքին երկպառակությունները՝ վերահաս աղետներին դիմակայելու համար: 1913 թ. կեսերից «Ժամանակն» ավելի հետևողական է դարձնում իր այս դիրքորոշումը: Մահմուդ Շեվքեթին ապարեզից հեռացնելուց հե-

տո երկրում արդեն հաստատվել էր երիտթուրքական եռապետությունը[1]*:*

«Ժամանակում» ևս, ինչպես գրեթե բոլոր հայկական թերթերում, արտացոլվել է 1912–1915 թթ. արևմտահայ կյանքին հատկանշական, առավել ևս ճակատագրական այս իրողությունը՝ Օսմանյան պետության և թուրքական հասարակական կարծիքի (իշխանություններին և կրոնական մոլեռանդությանը հումք ծառայող հասարակական կարծիքի) օրավուր անհանդուրժողությունն ու ագրեսիվ կեցվածքը հայության նկատմամբ: 1912–1913 թթ. Բալկանյան երկու պատերազմները, հատկապես առաջինը, երբ թուրքերը պարտություններ էին կրում իրենց դարավոր արհամարհված ռայաներից, անդամ պետության մայրաքաղաքին սպառնացող վտանգին, ասել կուզի՝ պետության փլուզման դեմ-հանդիման, այդ ագրեսիվ կեցվածքը վերածվեց մոլուցքի և հիստերիայի՝ ուղղվելով հայերի և ոչ պակաս չափով հույների՝ թուրքական ազգային դիտակցության մեջ դոյություն ունենալու իրավունքի դեմ: 1912–1914 թթ. Արևմտահայաստանում հայերի դեմ համատարած հալածանքը, բռնությունները, սեփականազրկումն ու սպանությունները հատան այնպիսի չափերի, որ դրանց համեմատ նախորդ դարաշրջանների ծանոթ, հարստահարություններն ու անիրավությունները նախավարժանքներ էին թվում: Բալկանյան առաջին պատերազմի շրջանում թուրքական իշխանությունները կտրուկ անցան հայերի և հույների կոտորածների գործնական նախապատրաստությանը, որին անդրադարձավ «Ժամանակը»: Թերթը տպագրեց Վ. Սերոբյանի (Արսլանբեկից) բաց նամակն ուղղված Նիկոմեդիայի մյուֆեսաըֆությանը՝ նշելով, որ իսլամ իշխանությունների կողմից իրենց տրամադրված զննքերը վաճառում են տեղաբնակներին, «պայմանաւ, որ գնողները իսլամ ըլլան»: Իսկ ինչո՞ւ միայն իսլամներին և ինչո՞ւ այս ամենը չտեսնելու է տալիս իշխանությունը, մանավանդ մեծ վտանգ է պարունակում «իս-

[1] Կիրակոսյան Ջ. Ս., Երիտթուրքերը պատմության դատաստանի առջև, հ. 2, էջ 196:

լամները կրկնակի զինելու հանգամանքը», հարում է հեղինակը (1912, 9 դկտ.): Թուրքական մամուլը մեծ մասամբ անցել էր հպատակ վոքրամասնություններից վրեժ լուծելու քարոզչական աշխատանքին: «Հեռաձայնի» վերանվանված թերթը Զմյուռնիայի «Ֆյոլլու» թերթից արտատպել է մի հոդված, որ բավական բնութագրական է այդ օրերի թուրքական խառնակիչ մամուլի համար: Հոդվածում այդ թերթը կոչ էր անում թողնել ամեն ինչ և ապավինել միայն վրեժխնդրությանը. «Վրէժը մեր սիրտը մաքրող և հայրենիքին հանդէպ հաւատ ներշնչող ազդակ մըն է... Ազգային կրթութենէ վրէժխնդիր ոգի արծարծելէ զուրկ գիտութիւնները ամէնքն ալ թող գետնին տակը անցնին»,- գրում էր «Ֆյոլլու»-ն (1913, 11 փետ.): Իրադարձությունների վրա շատ ավելի առարկայորեն էր ներգործում Կիլիկիայում հրատարակվող թուրք մամուլը, որի քարոզչության սաղրիչ մեթոդները (իշխանությունների հետ համագործակցելը, կրոնական մոլեռանդություն բորբոքելը՝ կեղծ ու ստապատիր փաստեր հորինելով, ամբոխի պղտոր զգացումներն ուղղորդելը ջարդերի հունով և այլն), հատկապես մշակվել էին դեռևս չորս տարի առաջ՝ Ադանայի ողբերգական իրադարձությունների ժամանակ: «Կիլիկեան արձագանգ» խորագրի տակ տպագրած մի լրատվության մեջ «Ժամանակը» գրում էր, որ 1912 թ. նոյեմբերի սկզբից, արդեն չաբաթներ չարունակ, Ադանայից ու Տարսոնից հեռանում են հայեր, հույներ, արաբներ՝ «հաւանական ջարդի մը սարսափին տակ»՝ թափվելով Մերսին նավահանգիստ: Պատճառը Տարսոնի «Թարսուս» թուրքական թերթն էր, որ ծայրահեղ չափերի էր հասցրել թուրք ազգաբնակչության մոլեռանդությունը (1912, 27 նոյ.): 1913 թ. ապրիլին պատրիարքարանը կառավարությանն էր հանձնել Հաճընից ստացված բողոք-հեռագիրը, որտեղ նշվում էին զինվորների անառիթ և չարունակական հարձակումները հայերի տների վրա և չուկայում: Հեռագրի հեղինակները գրում էին, որ ոչ մի վստահություն չունեն ոստիկանության և բանակի հանդեպ, և օգնություն էին խնդրում (1913, 17 ապր.): Կացությունը, ինչպես ակնհայտորեն երևում է «Ժամանակի» նյու-

թերից, ամենուրեք պայթյունավտանգ էր Դիարբեքիրում, Բիթլիսում, Վանում, Երզնկայում, Նիկոմեդիայում և այլուր: Սեբաստիայի վիլայեթում ոստիկաններն անարգել մտնում էին գյուղացիների տները՝ փախստական հայ զինվորներ հայտնաբերելու պատրվակով, ծնծուղարդի ենթարկում տանտերերին, ապա թալանում այն ամենը, ինչ ձեռքի տակ էր ընկնում՝ տնային կենդանիներ, գրաստ, մթերք: Ոստիկանները գոռում էին՝ «Թող Ռուսիա գայ՝ զձեզ մեր ձեռքէն ազատէ» (1913, 29 Հնվ.):

«Ժամանակի» այս և բազմաթիվ այլ նյութեր՝ տպագրված 1912–1914 թթ. ընթացքում, հաստնում են արևմտահայության ցեղասպանության նոր փուլին անմիջապես նախորդող՝ օսմանյան քաղաքական մթնոլորտին առնչվող և այն հետզհետե աղետաբեր դարձնող երկու գործոնների առկայությանը: Դրանցից առաջինը Բալկանյան պատերազմների ախտանիշն էր, որ առավել ընդգծվում էր Օսմանյան պետությանը սպառնացող եվրոպական ու ռուսական վտանգի պայմաններում, և երկրորդը, որպես առաջինի անմիջական հետևանքի հանրադումար իթթիհատի համար՝ հայկական բարենորոգումների հարցի վերարծարծումը միջազգային իրավական հարաբերությունների մակարդակով: Երիտթուրքերը հաջողեցին թուրքական հասարակության մեջ նշված երկու գործոնների ամբողջ մեղքը չրջել հայերի դեմ՝ նրանց ազգովին ոչնչացնելուն ուղղված հասարակական կարծիք ձևավորելով երկրի ներսում տիրապետող կրոնական մեծամասնություն կազմող թուրքերի մեջ: Հայ մամուլում, այդ թվում և «Ժամանակում», տպագրված նյութերը հայ բնաշխարհի և նրա բնիկ ազգաբնակչության վերաբերյալ՝ վկայում էին վերոհիշյալ գործընթացների նշանակության հայերի հանդեպ երիտթուրքական հանցավոր քաղաքականության հարցում: Հատկանշական է այս տեսակետից այն, որ երիտթուրքերն իրենց ներքին քաղաքականության մեջ ցեղասպանության նախապատրաստման ծրագիրը հենում էին կրոնական մոլեռանդության քարոզչությունը, հասարակական կարծիք ձևավորող մամուլը և իրենց՝ իշխանությունների գաղափարական ու գործնական

ջանքերը միավորելու վրա: «Ժամանակը» բացահայտում էր այս ամենը, երբ թարգմանաբար մեջբերում էր թուրքական «Իֆհամ» թերթի (թուրքական ազգայնական կուսակցության՝ Միլլի մնշրութիյեթի պաշտոնաթերթը) մի հոդվածի ընդարձակ հատվածը՝ հայերի, իբր, երկրի ու նրա իշխանությունների դեմ որդեդրած զրպարտչական քարոզչության համար և որտեղ կոչ էր արվում կառավարությանը՝ «արթուն դտնվել»: Այս թերթը գրում էր, թե «կեղծարարությեամբ աշխատողներ (Հայ մամուլի – Ա. Ս.) տեսնելով, որ իրենց արհեստը գործածելիք առիթը ներկայացած է, դիւրաւ ձեռք չպիտի քաշեն և չարունակ հարստահարուած պիտի ներկայացնեն Արեւելեան նահանգները (իմա Արևմտահայաստանը): Այսօր հայերուն ամէնն ալ սա կարծիքը ունին ու կըսեն, որ եթէ մենք այսպէս աշխատինք՝ աղեկ-դէչ քիչ մը կը հաջողինք անպատճառ» (1912, 18 դկտ.):

Այն, որ «Իֆհամը» դործում էր իշխանությունների հրահանգներով և դրանց հետ համագործակցած, ապացուցվում է «Ժամանակի» նույն թվահամարում տպագրված՝ թուրքական թերթի խմբագրի և ներքին գործերի նախարարի միջև հարցազրույցով: «Իֆհամ»-ի խմբագրի պնդմանը, թե թուրքական թերթերի զուսպ ընթացքի դիմաց հայկական թերթերը «դիտմամբ ալ աւելի բարձրագոչ կը պոռան», նախարարը պատասխանում է. «Հայ մամուլին ուղղութիւնն ու ընթացքը ընդհանուր է, հայերը խիստ վրան բաց կը չարժին կոր, իրենց նպատակն է ոչինչէն խնդիր հանել եւ իրենց գոյութիւնը զգացնել: Հայերը, կարծելով, որ առիթը խիստ նպաստավոր է՝ գրգռիչ հրատարակութիւններ ընելու ասանկ ընթացքի մը կը մղուին կոր: Թէեւ հոս ալ մեր ստացած տեղեկութիւններուն համեմատ՝ օտարահպատակներն են, որ հայերը համիմաստ կառաջնորդեն, բայց օսմանեան հայ մամուլն ալ ճիշդ անոնց գծած չաւիղէն կընթանա կոր»: Նախարարը հայտնում է, որ Արևելյան նահանգների ոչ մի խնդիր չկա, որ երկրում անդորրությունը կատարյալ է, իսկ պատրիարքարանի ահազանգերը համարում է ընդամենը «ճոխացած ու զարդարուած հասարակ դէպքեր»: «Իրերու այս

կացութեան մէջ,- եզրափակում է նա,- կրնաք հասկնալ, որ մենք ոչ թէ խնդրի մը դիմաց կը գտնուինք, այլ խնդիր մը հարուցանել ուզողներուն ձեռնարկին առջև կը գտնենք մենք զմեզ: Քաշուած հեռագիրներն ու հրատարակուած լուրերն այնչափ համիմաստ են, որ ասոնց ամէնուն մէկ գործարանի մը ապրանք ըլլալը եւ տրուած յանձնարարութեան համեմատ հետզհետէ ճամբա հանուած ըլլալը անտարակուսելի էր» (ն. տ.):

Հարցաղրոյցում աչքի է զարնում երկու հանգամանք, որ կազմում էին թուրքական վերոհիշյալ քարոզչության հիմքերը. նախ, հայերի դժգոհությունը երկրի, իբր «կատարյալ անդորրութիւնից», և ապա, արևելյան վիլայեթներում ոչ մի բունութիւն էլ չկա, իսկ հակառակի մասին վկայող հայերի և նրանց պատրիարքարանի բողոքները սոսկ կեղծիք ու զրպարտութիւն են: Նախապարը նշում է դրա հիմքերը՝ նրանք բողոքում ու զրպարտում են օտարահպատակների թելադրանքով: Հետևաբար, հայերը օտարի դործիք են և թուրքիայի թշնամիները: Թուրքական քարոզչութեան այսպիսի պարզունակ, բայց և լկտի ստերը, սակայն, խոր տպավորութիւն կարող էին թողնել թուրքական էլ ավելի պարզունակ ու ապերասան մամուլի և սրա միջոցով՝ մոլեռանդ ամբոխի վրա: Թուրքական մամուլի հակահայ քարոզչութեան կեղծիքների խոհանոցը, որ բերանկոխ լցվել էր դեռևս Ադանայի ողբերդութեան ժամանակներից, անհրաժեշտ էր թարմացնել նոր, էլ ավելի թունավոր բնամթերքով, որ և չհապաղեց անել երիտթուրքերին կրկնելով՝ նաև իթիլյաֆական կառավարութիւնը: Ուստի, նկատելով «Իֆհամ», ինչպես և «Ալեմդար» թերթերի սադրիչ և վտանդավոր նպատակները, Կ. Պոլսի հառն ժողովը բողոքի թաքրիր էր հղել Բ. դուռ (1912, 19 դկտ.):

Ուշադրավ են Թուրքիայի տնտեսական դրութեան լուսաբանումները «ժամանակի» էջերում: Երկրի տնտեսական կացութիւնը հիմնականում առնչելով նրա ներքաղաքական դրութեան, հպատակ ժողովուրդների դեմոկրատական ազատութիւնների հետ, «ժամանակը» հանդես է եկել իրրև ինքնուրոյն տնտեսական

զարգացման ուղեգծի պաշտպան: Եվրոպական երկրների տնտեսական կախվածությունից ազատվելու գործում թերթը կարևորում էր արդյունաբերական արտադրության ստեղծումը, առևտրից արդյունաբերության անցնելու խնդիրը: «Ժամանակի» թղթակիցներն ուշադրություն են դարձնում Թուրքիայի դարավոր հետամնացությանը՝ հումքն անտեսելու և արդյունաբերական արտադրանք ներմուծելու հանգամանքին, որպես տնտեսության թերզարգացածության չափանիշի: Նրանք առաջարկում են կիրառել մաքսային ճկուն և հիմնավորված քաղաքականություն, այն ամրապնդելով խրախուսող օրենքներով՝ հօգուտ տեղական արտադրության զարգացման, ընդգծում են եվրոպական ներդրումների կարևորությունը թեթև արդյունարերության զարգացման բնագավառում: Թերթի հեղինակներից մեկը՝ Ն. Եկավյանը, իրավացիորեն անմտություն էր համարում տարերային այն առևտրական բոյկոտը, որ սկսել էին խրախուսել իշխանությունները եվրոպական ապրանքների դեմ: Նա հիմնավորում է այն ճշմարտությունը, որ ներմուծումն անհրաժեշտ է Թուրքիային այնքան ժամանակ, քանի դեռ այդ երկիրը չի ստեղծել սեփական արտադրությունը: Ն. Եկավյանը բերում է, մինչդեռ, թուրքական թեթև արդյունաբերության անկյալ վիճակը ցուցադրող օրինակներ: Բացի Սիրիայի և Պուսայի ու շրջակաների և Ադանայի երկու-երկնք խոշոր մանարաններից, Թուրքիան ուրիշ, մանավանդ մնքևնայացված արտադրություն չունի: Ոստայնանկության արհեստադործությունը հենվում է նահապետական աշխատանքի գործիքների վրա, անորակ են Հերեքելի հուչակված, բայց հետամնաց կայսերական մանարանի արտադրանքները, արտադրությունը հագեցած է հին, բարոյապես մաշված դազդահներով (1909, 10 փետ.): Այստեղ ընդգծվում է տեղական հումքի վրա հենվող արտադրություն ստեղծելու կարևորությունը, ճիշտ այնպես, ինչպես Կ. Պալտատյանի «Տնտեսական ու սեղանաւորական խնդիրներ» հոդվածում (1909, 4 փետ.): Թուրքիայի տնտեսության անդարդացած վիճակով է նա բացատրում արտահանման և ներմուծման սալդոն՝ համապատասխանարար 16 և 21

մլն. ոսկու իրողությամբ, երբ այդ երկիրը կորցնում է, անդառնալի կնրպով, 5 մլն. ոսկի, ինչպես և շուրջ 15 մլն ոսկի՝ փոխառությունների, հանրային պարտքի և այլնի տոկոսների հաշվառման դեպքում: Եվրոպական անորակ ապրանքների հեղեղը կասեցնելու համար այս հեղինակը կարևորում է հումքի սեփական մշակման մաքսային մտածված քաղաքականության և տեղական արտադրությունը խրախուսող օրենքների խնդիրները: Իր այլ բազմաթիվ հրապարակումներում «Ժամանակը» որոշակի հարցադրումներ էր անում Թուրքիայում արտադրության ավանդական ճյուղերը զարգացնելու, արհեստագործական արտադրությունն արդիականացնելու, հայերի ազգային առևտուրը աշխուժացնելու և այլնի վերաբերյալ (1910, 19 փետ., 24 մյս., 1911, 3 մրտ. և այլն):

Արևմտահայաստանի տնտեսությունը բարվոքելու նպատակով թերթն անհրաժեշտ էր համարում նրան տնտեսական ազատություններ տրամադրելը, բանկերի և ընկերությունների միջոցով վաշխառուներին մեկուսացնելը գյուղացիական տնտեսություններից, մատչելի տոկոսադրույքներով գյուղացուն վարկ տրամադրելը: Երկրի տնտեսական զարգացման, դրա հեռանկարների հանդեպ ունեցած իր մտայնությամբ «Ժամանակը» հանդես էր գալիս իբրև առաջադիմական լուրջ հրատարակություն:

Օսմանյան Թուրքիայում հայերի՝ իբրև ազգության իրավունքների պաշտպանությունը «Ժամանակը» հիմնավորում էր այդ երկրի տնտեսությանը, վարչությանն ու մշակույթին նրանց մատուցած խոշոր ծառայություններին վկայակոչումներով: Ա. Անտոնյանի «Պալյանները և իրենց չինությունները» հոդվածում (1910, 1, 2, 8 դկտ.) բավական հետաքրքիր մանրամասներով բացահայտվում է Պալյան ամիրաների կարևոր դերը Թուրքիայի ճարտարասլետության պատմության մեջ՝ սկսած 17-րդ դ. երկրորդ կեսից մինչև 19-րդ դ. երկրորդ կեսը: Անդրադառնալով Պալյանների կառուցած Զրաղանի պալատի աղետալի հրկիզմանը, թերթը նկատում էր, որ այրվել են նաև արվեստի մեծ արժեքներ, այդ թվում և Այվազովսկու երեք ծովանկարները: Նույն նախասիրություններից

ելնելով, թերթը տեղեկացնում է Ֆրանսիայում հայազգի Հովհաննես Ալթընի գործունեության մասին, որ ժամանակին նա է արմատավորել այդ երկրում տորոնի արտադրությունը, և որ այդ հաշվի առնելով՝ ֆրանսիացիները Ավինյոնում կանգնեցրել էին նրա արձանը (1910, 19 ապր.): «Ժամանակն» անդրադառնում էր նաև ավելի հեռավոր անցյալին: Տպագրել է սուլթան Մուրադ Դ-ի (1623–1640)՝ հայերին տված ֆերմանի տեքստը, որի ուժով Զեյթունի հայերն ազատվում էին գլխահարկից և նրանց չնորհվում էր ինքնավար կարգավիճակ՝ կառավարվելու առանց արտաքին միջամտության (1910, 28 մրտ.):

Մինչև 1910-ական թթ. կեսը «Ժամանակին» աշխատակցել են անվանի հրապարակախոսներ, գրողներ ու լրագրողներ, որոնց թվում՝ Գր. Զոհրապը, Ա. Անտոնյանը, Վ. Թեքեյանը, Ռ. Զարդարյանը, Ե. Օտյանը, Հ. Ալփիարը, Տ. Արփիարյանը, Արշ. Թեոդիկը, Զ. Եսայանը, Ա. Գալփակճյանը, Ադ. Փանոսյանը և ուրիշներ: Նրանց հրապարակախոսական և գրական համաւթյունները, արծարծած հրատապ հարցերը և գրչի դասական փայլը ապահովեցին թերթի հեղինակությունը ընթերցողների չրջանում: Այսուհանդերձ, լինելով գլխավորապես հասարակական-քաղաքական հրատարակություն, «Ժամանակն» ընդարձակ տեղ չի տվել գեղարվեստական գրականությանը: Եղածը, սակայն, բավականաչափ տպավորիչ է. կարելի է առանձնացնել Ֆասիմի «Կրակին մէջէն» վեպը, Ե. Օտյանի «Տասներկու տարի Պոլսէն դուրս. 1896–1908» հուշագրությունը, Զ. Եսայանի, Ալփասլանի, Հ. Ալփիարի և այլ հեղինակների գործերը: Ամենայն իրավամբ այս չարքին կարելի է դասել Ե. Օտյանի երգիծական քրոնիկները, որոնք առօրեական իրադարձությունների ոչ միայն փաստական, այլև գեղարվեստական ընկալումներ են: Թարգմանական ոչ այնքան բազմազան գրականության մեջ աչքի են ընկնում Ետան-ի (Ե. Տեր-Անդրեասյան) Բայրոնից և Շեքսպիրից (սոնետներ) արած չնորհալի թարգմանությունները: «Թերթոն» բաժնում տպագրվել են Մ. Զեվակոյի երկ վեպերը:

«ՀԱՅՐԵՆԻՔ» (1891–1896, 1909–1910)

1909 թ. հուլիսին Կ. Պոլսում, Հ. Շահնազարի տնօրինությամբ վերահրատարակվեց դեռևս 1896 թ. դադարած «Հայրենիք» օրաթերթը[1]: Այն հիմնականում ուներ հասարակական-քաղաքական ուղղվածություն, որում առաջատար թեմաներ էին արևմտահայերի ժամանակակից կացությունը, իթթիհատի քաղաքականությունը նրանց նկատմամբ, Ադանայի կոտորածները և երիտթուրքական իշխանությունների հանցավոր գործունեությունը այդ ողբերգության իրականացման մեջ, ազգային հասարակական, կրթական-լուսավորական խնդիրներ և այլն: Օրաթերթը, անկախ իր կարճատև հրատարակությունից, հանդես էր գալիս որպես 1900-ականի վերջի լավագույն և ազդեցիկ հայկական թերթերից մեկը Կ. Պոլսում: Նրան աշխատակցում էին առաջադեմ և իրենց հրապարակախոսական ու գրական վարպետությամբ ճանաչված այնպիսի գործիչներ, ինչպիսիք էին Ե. Օտյանը, Վ. Թեքեյանը, Զ. Գալեմքյարյանը և Հ. Դադանճյանը, որոնք Հ. Շահնազարի հետ ապահովեցին օրաթերթի

---

[1] «Հայրենիք» բերթը մատենագիտական մշակումներում անվթար չի մնացել. նախ, բացի արտոնատիրության վիճակացումից (տե՛ս Օտյան Ե., Երկերի ժողովածու, հ. 4, էջ 23-24), այն ոչ մի կապ չունի 1889 թ. դադարած՝ Մ. Գափամաճյանի «Հայրենիքի» հետ, մինչդեռ Գ. Լևոնյանի և նրա հետնորդությամբ, մյուս մատենագիտություններում այս երկու տարբեր թերթերը, ելնելով նույնանունությունից, միացված են: Այնուհետև, այս «Հայրենիքը» հրատարակել է Հովհ. Շահնազարը՝ Ա. Արփիարյանի խմբագրապետությամբ, ոչ թե 1890, այլ 1891 թ. մինչև 1896 թ., երբ թերթը փակվել է գրաքննության կողմից: 13 տարի «Հայրենիքը» լույս չի տեսել, մինչդեռ մատենագիտություններում հայտնվել է գոյություն չունեցող «նոր շրջան»՝ 1901-1909 թթ., բնականաբար, իր նույնպես անգո խմբագիրներով (տե՛ս Հայոց պարբերական մամուլը, էջ 18, Հայ պարբերական մամուլի մատենագիտություն, էջ 121): Մ. Բաբլոյանը, իր հերթին, կրկնել է նշված զույգ «Հայրենիք»-ների միացման ոչ հիմնավոր սկզբունքը, սակայն, ուղղելով 1901-1909 թթ. վերաբերող «նոր շրջանի» սխալը (տե՛ս Հայ պարբերական մամուլը, էջ 36): Վերահրատարակված «Հայրենիքում» Հ. Շահնազարը նշում է, որ «Հայրենիքը» դադարել էր իշխանությունների կողմից՝ 1896 թ. հուլիսի 11-ին, այն բանից հետո, երբ Նաևսիում սովորող հայ աղջիկներից մեկի մոտ Կ. Պոլսի ոստիկանությունը գտել էր իր՝ Հ. Շահնազարի նամակը: Այստեղ նա խոսում էր «այն ատենի քաղաքական արիւնալի դէպքերուն (իմա հայկական կոտորածների) վրայ» («Հայրենիք», 1909, 19 հլս.): Շահնազարը ձերբակալվել էր, իսկ «Հայրենիքը»՝ փակվել:

ազատական ուղղությունը և ազդեցությունը ընթերցողների շրջանում:

Ադանայի եղերական դեպքերին քանիցս անդրադառնալով, «Հայրենիքը» հատակ փաստարկներով ընթերցողին էր հասցնում այն ճշմարտությունը, որ Ջարդերի կազմակերպիչները երիտթուրքական իշխանություններն են: Թերթն այդ ցույց էր տալիս Կիլիկիայում գործող զինվորական դատարանների կողմից հայերի նկատմամբ կայացրած անիրավ դատավճիռների, վերջիններիս ամենուրեք մեղավոր հռչակող թուրքական մամուլի, Ջարդերի վերաբերյալ կառավարական հանձնաժողովի կեղծ վկայակոչումների և այլն: «Հայրենիքը» ևս, ինչպես հայկական շատ հրատարակություններ, փաստական բազմաթիվ նյութերով ցույց է տալիս օսմանյան զինվորական դատարանի և կառավարական հանձնաժողովի ննդաձիոխումները, կոտորածների մեղքը, իբր, անաչառորեն և թուրքերի, և հայերի վրա կլսելու, «անկաուղական ձգտումների» մասին դատողությունների անանկությունը: Ուշադրավ է Տարսուսի ամերիկյան քոլեջի նախագահ Թ. Բրիսթիի, որպես ականատեսի կարծիքը Ադանայի կոտորածների առթիվ: Դատարանի վճռով կախված հայերից երեքը, ըստ նրա, բնավ մեղավոր չէին, որովհետև ինքնապաշտպանության էին դիմել, և որ նրանց հանցանքը ընդամենը իրենց աշխատասիրությունն ու հարստությունն էր: Այդ պատճառով թուրքերը, «որոնք առհասարակ ազքատ են իրենց ծուլության հետևանքով, ինչպես ակռա կը կրճտէին, կը նախանձէին ու առիթ կը փնտռէին այդ հարստությունը առանց աշխատանքի ձեռք անցընելու» (1909, 6 օգ.): Հ. Շահնազարն իր խմբագրականներում հերքում էր թուրքական «Նէջաթ» և այլ թերթերի անվերապահ պնդումներն ու հորինածո փաստերը՝ ապացուցելու, որ Ջարդերի պատասխանատուն և մեղավորը միայն հայերն են: «Նէջաթն» արտահայտում էր երիտթուրքական քարոզչությանը հետ թուրքական հասարակական կարծիքը, որը ծայր աստիճան դրդռվել էր վարչապետ Հյուսեին Հիլմի փաշայի դեմ այն պատճառով, որ նրա հրապարակած՝ կառավարության չրջաբե-

բականում հայերը մեղավոր չէին ճանաչվում Ադանայի դեպքերի առթիվ: Շահնազարին, ընդհակառակն, այդ շրջաբերականը չէր դոհայնում այն կարևոր փաստը լուսաբանելու համար, որ հայերը ստիպված էին եղել դիմելու ինքնապաշտպանության (1909, 12 օգ.): Իր հրատարակության դրեթե ամբողջ ընթացքում «Հայրենիքը» հանդամանորեն քննարկեց Ադանայի կոտորածներին առնչվող ամեն մի խնդիր՝ դատապարտելով այս ամենը կազմակերպած երիտթուրքական իշխանություններին, և որ ոչ պակաս կարևոր է, ցույց տալով, որ նշված դեպքերը այդ կուսակցության գաղափարաբանության դործնական դրսևորումներն են: «Հ.» ստորագրությամբ իր խմբագրականներում Շահնազարը մերկացնում էր երիտթուրքերի չովինիստական դիրքորոշումը ոչ մահմեդական ազգերի հանդեպ, նրանց թուրքերին ձուլելու կամ ջարդերի միջոցով ոչնչացնելու քաղաքականությունը: Օսմանյան Թուրքիայի բարեկարգման հնարավորությունները Հ. Շահնազարը տեսնում էր ոչ թե հպատակ ազգերի ձուլման, այլ նրանց ինքնավարության տրամադրելու քաղաքականության մեջ: Երիտթուրքերի գաղափարախոսությանը նա հակադրվում էր նաև բուլղարական վիրխովականների կուսակցության վկայակոչումով, երբ վերջինս կտրականապես դատապարտել էր երիտթուրքերի ձուլման նպատակները՝ դրանք կործանարար համարելով Թուրքիայի ապագայի համար (1909, 20 սպտ.): Այս պայմաններում, կարծում էր Շահնազարը, երկրի բարեկարգումների մասին երիտթուրքերի հայտարարությունները մնում են ընդամենը միջոցներ՝ նրանց ծայրահեղ ազգայնականությունը քողարկելու համար: Ոչ կրոնական, քաղաքացիական դործերով հպատակ ազգերի պատրիարքներին Բ. դուռ դիմելու արգելքը Շահնազարը համարում է առհասարակ բարեկարգումների դեմ ուղղված ձեռնարկում. ընդհակառակն, երկրի առաջընթացին ուղղված՝ պատրիարքների միջամտությունը հանուն արդարության և օրինականության, ինքնին կնպաստեր այդ նույն առաջընթացի ապահովմանը (1909, 3 սպտ.):

Ադանայի դեպքերը Շահնազարին մղեցին ինքնաուիսկ նզրա-կացութիւնների հանդելու թուրքական հանրային կարծիքի և կո-տորածների մեջ այդ կարծիքի նշանակութեան վերաբերեալ: Ազ-դայնականութեան և կրոնամոլութեան թուլնով վարակված գրեթե ամբողջ թուրքական մամուլը Շահնազարին որևէ կասկածի տեղիք չէր տալիս, որ այն արտահայտում է բուն իսկ թուրքական հանրա-յին կարծիքը՝ արդարացնելու հայերի բնաջնջումը: Երիտթուրքերի և թուրք հասարակութեան մեջ չարիքների արմատը հպատակ մյուս հանրութիւնների համեմատութեամբ իրենց կրոնի և ազգա-յին գերազանցութեան գգացումն է: Այդ զգացումն ունի ավանդա-կան խորքեր և արտահայտվում է հպատակ ազգերին կողոպտելու, նրանց ունեցվածքի ավարառութեան, սպանութիւնների ու չարդե-րի միջոցով ու դրանց հոգեբանական հիմնավորմամբ: Դեռևս պատ-րանքներ ունենալով իշխանութիւնների և թուրք հասարակութ-յան մեջ մտավոր ու բարոյական բարեշրջումներ իրականացնելու հնարավորութեան նկատմամբ, Շահնազարն առաջադրում էր և մեկի, և մյուսի վերադաստիարակութեան խնդիրը (1909, 12 օգ.): Նույն մտայնութեամբ, Շահնազարը կարճ ժամանակ անց հավելում էր, որ հայերի պարտքն է Ադանայի խնդիրը առիթ դարձնել «թուրք մտայնութիւնը փրկելու աւարառութեան կարծեցեալ իրա-ւունքէն, որու կուրօրէն կը հաւատայ» (1909, 11 սպտ.): Կ. Պոլսի հա-յոց պատրիարքին նա առաջարկում էր կառավարութեանն օրինա-դիծ ներկայացնել «ընդդէմ աւարառութեան», ըստ որի, որևէ քա-ղաք, գավառ, բնակավայր և այլն, պետք է հարկադրվեր հա-տուցելու թալանված բնակիչների վնասը՝ անկախ ավարառուների կրոնական պատկանելութիւնից (Ն. տ.): Այս առաջարկին պատ-րիարքը չարձագանքեց, բայց այն հարուցեց երիտթուրքական իշ-խանութիւնների զայրույթը. «Հայրենիքի» դեմ դատ բացեց զին-վորական դատարանը, նույն այն կառույցը, որի՝ Ադանայի չարդերի վերաբերյալ ստապատիր տեղեկագիրը և անմեղ հայերին դատապարտելու կամայական դատավճիռները քանիցս մերկացվել էին ամբաստանյալ թերթի էջերում: Այդ դատարանի կողմից «Հայ-

բենիքը» դատապարտվեց 100 ոսկու տուգանքի՝ «աւարառութեան դէմ օրէնքի» առաջարկի համար (1909, 16 սպտ.): Բայց դատավճռից հետո էլ «Հայրենիքը» չարունակեց իր երկրորդ էջում կանոնավորապես տպագրել «Աւարառութեան դէմ կը պահանջենք համերաշխութեան օրէնք մը» կոչը (գլխատառերով)՝ ավելի քան մեկ ամիս, 1909 թ. սեպտեմբերի 15-ից մինչև հոկտեմբերի 22-ը:

«Հայրենիքի» այդ դժվարին օրերին նրան սատարեցին ընթերցողները. «Պօլսոյ, նմանապէս Իզմիրի մէջ նուիրատուութիւններ կըլլան՝ ապահովելու համար «Հայրենիքի» հարատև հրատարակութիւնը»,- գրում էր «Արեւելեան մամուլը»[1]:

Հ. Շահնազարի հայեցողության մեջ ինչ-ինչ չափերով զգացնել են տալիս հասարակության մեջ տնտեսական փոփոխությունների սոցիալիստական մոտեցումների արձագանքները: Դրանք չատ զուսպ են, հեռու՝ չափավորությունը խախտող սահմաններից և վերաբերում են միայն ժողովրդի սոցիալական բարեկեցության խնդիրներին, որոնց դրական լուծումները, «Հայրենիքի» տնօրենի կարծիքով, կամրապնդեին հայերի դիմակայությունը ընդդեմ երիտթուրքական ճուլման կամ ջարդարարական քաղաքականության: «Հայրենիքի» տպագրած «Ընկերբանական երեւոյթներ» վերնագրով մի չրջաբերականում ասվում է, որ Եվդոկիայում հայերը կազմել են պասմաճի (չթագործ) արհեստավորների բանվորական միություն, որի նպատակն է պաշտպանել իրենց տնտեսական իրավունքները: Միությունն ունի 170 անդամ, նրանք կոչ են արել երկրի բոլոր արհեստավորներին ու բանվորներին՝ իրենց բնակավայրերում կազմակերպել նման միություններ (1909, 10 օգ.): Միությունը հայտնում է նաև իր որոշ հաջողությունների մասին՝ 14-ժամյա աշխատաժամանակը իջեցրել է 10-ի, հասել աշխատավարձի 20% հավելման: Միաժամանակ, Շահնազարը սկզբունքորեն առարկում էր բանվորների տնտեսական պայքարը քաղաքականի վերածելու սոցիալ-դեմոկրատական ծրագրերին: Իր «Արհեստական

[1] «Արեւելեան մամուլ», 1909, թիվ 37, էջ 888:

միութիւններու առթիւ» խմբագրականում Շահնազարը նկատում է, որ Եվրոպայում մի շարք արհմիութիւններ չեղվել են իրենց ուղուց՝ «յանուն փիլիսոփայական կամ քաղաքական յեղաշրջումի», որ խստորեն դատապարտելի է: Այս մեկնակետից էլ նա դրվատում էր վերոհիշյալ շրջաբերականի այն դրույթը, ըստ որի, միութիւնը հեռու է մնալու «այնպիսի տարադէպ եւ անխորհուրդ քայլերէ, որոնք կրնան լարել ժողովրդեան խաւերու յարաբերութիւնները» (1909, 11 օգ.):

Իր հրատարակութեան առաջին ամիսներից «Հայրենիքը» ցույց էր տալիս ազատական դաղափարների նկատմամբ ակնհայտ համակրոտիւթյուն: Վ. Թեքեյանի և Ե. Օտյանի աշխատակցութիւնը իր հերթին ապահովում էր այս ուղղութեան հիմնաւորումը թերթի դաղափարական ուղեգծում: Անկախ դաղափարական համակրանքներից ու հակակրանքներից, որպիսիք արտահայտելուն բավականաչափ տեղ և ժամանակ էր հատկացնում «Հայրենիքը» և ա, նրա հրապարակախոսների համար ցանկալի էր մնում ազգային-քաղաքական ուժերի համագործակցութիւնը՝ Օսմանյան Թուրքիայում ազգերի իրաւահաւասարութեան և նրանց տեղական ինքնավարութեան ապահովման, երկրում սահմանադրական սկզբունքների լիարժեք գործադրման, կրոնական ու ցեղային խտրականութեան բացառման հենքի վրա: Քաղաքական միակ կուսակցութիւնը, որի հետ այս խնդիրների կամ ավելի ճիշտ՝ դրանց չուրջ բանավիճում էր «Հայրենիքը», ազգային ազդեցիկ կուսակցութիւնն էր՝ Դաշնակցութիւնը: Պատահական չէ, որ այդ կուսակցութեան դեմ իր հակամիտումը թերթը սկսում էր ոչ թե իթթիհատի և նրա համագործակցութեան իրողութիւնից, այլ այդ ձևակերպող որոշ դրույթներից, Հ. Նորատունկյանի հանդեսլ դաշնակցութեան հակակրական վերաբերմունքի քննադատութիւնից և այլն: Նախապես և հիմնականում «Հայրենիքն» իր համամտութիւնը հայտնեց ՀՅԴ և իթթիհատի՝ «համագործակցական ծրագրին» (համատեղ հայտարարութեանը), որ արտատպել էր «Ազատամարտից»: Դրա պայմաններն էին սահմանադրութեան և երկրի բարեկարգման հիմ-

նահարցի երկուստեք պաշտպանությունը, համատեղ պայքարը հետադիմական չարժումների դեմ, օսմանյան կայսրության ամբողջականության պահպանությունը՝ «նահանգային իրավանց» (իմա տեղական ինքնավարության) ընդարձակման հետ միասին: Ընդմին, երկու կազմակերպությունների նպատակներից էր համարվում հասարակական կարծիքի մեջ ցրել «բռնակալ ըէժիմէն մնացած այն սուտ գրոյցները, թէ հայերը անկախութեան կը ձգտին» (1909, 7 սպտ.):

Բանավեճը սկսեց «Հայրենիքը»՝ մի քանի օր անց վերստին անդրադառնալով այդ համատեղ շրջաբերականին: Թերթը տպագրից գրա ֆրանսերեն տեքստը, որտեղ նշված համագործակցության գրույթներից մեկն է համարվում, իբր, «ընդհանուր ճուլումը», մի ձևակերպում, որը չկար «Ազատամարտի» տպագրած տեքստում (1909, 14 սպտ.): Կասկածից վեր է, որ Դաշնակցությունը չէր կարող սատարդրել ճուլման վերաբերյալ երիտթուրքական ազգայնական այդ ցնորամտության, ինչպես և Ադանայի ողբերգական դեպքերը «արյան տուրք» համարող գնահատականի (որ դարձյալ չկար «Ազատամարտի» բնագրում) տակ: «Հայրենիքը», սակայն, նշում է իր մեջբերած ֆրանսերեն տեքստի աղբյուրը՝ «Ժուռնալ դը Սալոնիկը», որը պետք է ասել նշված հավելումներն արել էր ակնհայտորեն սադրիչ նպատակներով: «Հայրենիքը» կուլ էր տվել նենգամիտ թերթի խայծը՝ հանդես բերելով անհարկի դյուրահավատություն: Բանավեճի մեջ ներքաշված «Ազատամարտը», սակայն, աչքի չընկավ առարկության համապատասխան լրջմտությամբ: Այդ թերթը անգամ կասկածի չենթարկեց սալոնիկյան այդ հրատարակության երկրորդական կամ միտումնավոր աղբյուր լինելու հանդամանքը: Փաստացի և համոզիչ հերքման փոխարեն՝ «Հայրենիքին» արված նրա առարկությունները ջղաձիգ էին և անաւարկայական, ուղղված առհասարակ Դաշնակցության հակառակորդների դեմ: «Հայրենիքի» հոդվածը «Ազատամարտը» համարում էր ընդամենը «նուաստացուցիչ և վիրաւորական գնահատու-

թիւն»[1]: Զույդ թերթերը երկուստեք տալիս էին դավառական անպտուղ և դրգռիչ խոսքակռվի սխուր օրինակը, որտեղ եթե մի բան է երևում, այդ էլ դիմացինին խոցելու ճիգն է՝ այնքան տարածված հատկապես ժամանակի կուսակցական մամուլում:

«Հայրենիքը» ՀՅԴ հետ բանավեճի մեջ մտավ նաև առևտրի և հանրային շինությունների նախարար Գ. Նորատունկյանի առթիվ, որին պաշտոնանկ լինելու առաջարկով դիմել էր ՀՅԴ գործիչ Արմեն Գարոն (Գ. Փաստրմաճյան)՝ «Բաց նամակ» տպագրելով «Թանին» թերթում (1909, 8 սպտ.): «Հայրենիքը» պաշտպանում էր Գ. Նորատունկյանին՝ Դաշնակցության հարձակումներից, հատկապես առաջինի գործունեության այն շրջանում, երբ նա զբաղեցնում էր վերոհիշյալ նախարարի պաշտոնը[2]: Դրա հետ միասին, «Հայրենիքն» արդեն չէր թաքցնում իր գաղափարաբանության կտրուկ կողմերը, երբ քննադատում էր, հատկապես Հ. Շահնազարի և Վ. Թեքեյանի՝ իրար լրացնող խմբագրականներով և այլ հոդվածներով, ՀՅԴ և «Ազատամարտի» սոցիալիստական դաղափարները և դրա հետ միասին՝ այդ կուսակցության և իշխանության գործակցության բուն իրողությունը:

Ե. Օտյանը (հաճախ ստորագրում էր երօտ, Ե. Օ.) և Վ. Թեքեյանը վերաբացված «Հայրենիքին» աշխատակցել են սկզբից մինչև վերջ՝ 1910 թ. սկզբները: Ե. Օտյանի երգիծական քրոնիկոնը հագեցած էին օրախնդիր, հրատապ տրամադրություններով՝ դրսևորելով հեղինակի քննական դիտարկումների ընդարձակ ու բազմաշերտ շառավիղը: «Շաբաթական քրոնիկ», «Պոլսական կեանքը», «Օրը օրին» և այլ խորագրերով իր հոդվածներում Ե. Օտյանն անդրադառնում էր արևմտահայ կյանքի տարբեր երևույթներին՝ Կ. Պոլսի ազգային ժողովի և պատրիարքարանի գործունեությանը, երուսաղեմի խնդրին, պոլսաբնակ հայ որոշ հարուստների մանրախնդրությանը, կրիտիկաբար իշխանությունների

[1] «Հրապարակին վրայ. կեղծ ըմբիշներ» խմբագրականը, «Ազատամարտ», 1909, 15 սեպտեմբերի:

[2] Sե'u Natanian B. Sivas 1877. Yayina hazirlayan Yarman A., s. 430-431.

իրականացրած՝ այլակրոնների նվաստացնող ու ճնշող ձեռնարկումներին, հայերի կոտորածներին և այլն: «Ազգային ժողովին չուրջը» հոդվածում Ե. Օտյանը իրեն հատուկ երգիծական բարձր արվեստով ծաղրում էր այդ ժողովի որոշ երեսփոխանների տխմար ճառերը, նույնքան անիմաստ հակումները ծեծկռտուքի նկատմամբ, որ ընթերցողին հույժ կասկածամտությամբ էր համակում այս անձանց ազգօգուտ գործունեության հանդեպ (1909, 16 օգ.): Այլ երգիծական քրոնիկներում («Անօրինակ մարդ մը», «Մաքրիգիւղի փոթորիկը») նա երգիծանքը կառուցում է կոնկրետ անձանց և իրողությունների հենքի վրա՝ առավել չոչափելի դարձնելով իր խոցած թիրախների առարկայականությունը (1909, 20, 28 օգ.): «Հայրենիքում» նկատելի է Ե. Օտյանի հրապարակախոսության մեկ այլ առանձնահատկությունը ևս՝ քննադատական լրջմիտ շարադրանքի և երգիծական մերկացումների համատեղ առկայությունը: Նրա հրապարակախոսությունը տալիս էր դրա վկայությունը, երբ խոսքը վերաբերում էր ազգային կուսակցությունների սոցիալիստական քարոզչության և իթթիհատի հանդեպ բարեմիտ վերաբերմունքի ու ակնկալիքների դրսևորումներին, որ միանգամայն համապատասխանում էր «Հայրենիքի» ուղեգծին: Սրան է առնչվում օսմանյան խորհրդարանի որոշ հայ երեսփոխանների ազգավնաս ընթացքի, ազգի կարիքների հանդեպ նրանց օտարվածության խարազանումը (1909, 26 նոյ.): Եվ ընդհակառակը, սրամտորեն և մեծ հարգանքով է Օտյանը ներկայացնում ավագ սերնդի ազգային ու մտավոր գործիչներին: Այդպիսիք են հիշատակի խոսքերը, որ նա նվիրել է Աբր. Այվազյանին և Հ. քահ. Մկրյանին (1909, 22, 29 սպտ.): «Հայրենիքում» Ե. Օտյանի տպագրած քրոնիկներն ու հոդվածները ինքնատիպ երանգներ են տալիս այդ թերթի բովանդակությանը և մասնավորապես իրենց երգիծական արվեստով զգալիորեն լրացնում գեղարվեստական գործերի զգացնել տվող պակասը:

«Հայրենիքի» ազդեցիկ մյուս հրապարակախոսն էր Վ. Թնքեյանը, ով, ինչպես Հ. Շահնազարն ու Ե. Օտյանը, իր հոդվածներով

ապահովում էր թերթի ռամկավարական ուղղությունը: Նրա հրապարակումներում ակնհայտորեն երևում է «հեղափոխական կուսակցություններին»՝ հնչակյաններին և դաշնակցությանը հակադրվող քաղաքական ուժերին ռամկավար դաղափարախոսության շուրջ միավորելու խնդիրը: «Հայ պահպանողական կուսակցութեան մը պէտքը» հոդվածում նա հիմնավորում է այդպիսի կուսակցության ստեղծումը՝ ազատական կուսակցությունների ծայրահեղությունները զսպելու համար: Կազմակերպվելիք այս կուսակցությունը պետք է ներկայացներ «հայ ազգին պահպանողական կուսակցութիւնը՝ ընդդէմ գէշ հասկցուած եւ գէշ գործադրուող հայ ազատականութեան»,- գրում է նա (1909, 16 սպտ.): Ազգը (և ոչ թե դրա մի մասի մտայնությունը) ներկայացնելուն հավակնող կուսակցությունների քաղաքական ու գործնական հնարավորությունները սահմանափակելու նպատակով Վ. Թևքեյանը նրանց առաջարկում էր ազգային ժողով մտնել կուսակցական ցուցանակի ներքո՝ սկզբունքային դաղափարական հայեցակետով և ոչ թե իբրև ազգի կողմից ընտրյալներ (1909, 25 սպտ.): Ըստ էության, Վ. Թևքեյանը նկատի ուներ ընտրությունների համամասնական և մեծամասնական սկզբունքը, երբ առաջարկում էր ընտրական ցուցակները կազմել ըստ կուսակցությունների, խմբակների և անհատների (1909, 30 նոյ.):

Ճանաչողական բարձր արժեքով և անկեղծությամբ աչքի է ընկնում Վ. Թևքեյանի «Յակոբ Պապիկեան» հոդվածը: Օսմանյան երեսփոխանական ժողովը, գրում է նա, Հ. Պապիկյանին նշանակել էր Ադանայի քննիչ հանձնաժողովի անդամ իբրև «ամէնէն թրքասէրը» հայ երեսփոխանների մեջ, իբրև իթթիհատի անդամ և խիստ չափավոր հայացքների տեր անհատի՝ համոզված լինելով, որ նա որևէ թուրքից ավելի չըջահայաց կլինի Ադանայի ջարդերի իր գնահատականում: Սակայն իրողությունները ճշմարտացի և իշխանությունների չարդարարական գործողությունները բացահայտող իր համարձակ տեղեկագրով Հ. Պապիկյանն ի դերև հանեց թուրք երեսփոխանության ակնկալիքները՝ հանգես գալով «իբրեւ

յանկարծական մէկ մարմնաւորումը ցեղին կորովին» (1909, 7 օգ.): Ի դեպ, Հ. Պապիկյանի ողբերգական մահվանից հետո «Հայրենիքը» հայտնում էր, որ Կ. Պոլսի խառն ժողովը որոշել էր նրա դեռահաս չորս զավակներին, իբրև ազգի որդեգիրների, «յարմար վարժարաններու մէջ տեղաւորել» (ն. տ.):

«Հայրենիքը» աչքի չի ընկնում դեղարվեստական երկերի տպագրութեամբ: Թարգմանական գործերից հիշարժան են Ա. Դյումայի «Անժ Փիթու» վեպը և Ա. Շենիեի, Շ. Բոդլերի ու Լ. դը Լիլի մի քանի բանաստեղծութիւնները Ա. Զոպանյանի թարգմանութեամբ:

«ԴԱՇԻՆՔ» (1909–1914)[1]

1909 թ. Հ. Մամուրյանի արտոնատիրությամբ Զմյուռնիայում սկզբնավորվեց «Դաշինք» օրաթերթի հրատարակությունը: Ինչպես «Արևելյան մամուլը», «Դաշինքն» արտահայտում էր Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության գաղափարները, հանդիսանալով վերջինիս ոչ պաշտոնական, այլ համակիր հրատարակություն:

«Դաշինքն» ազդեցիկ թերթ էր, այն չարունակում էր զմյուռնահայ մամուլի ավանդական դարձած՝ համազգային բնույթի հիմնահարցերի վերաբերյալ լրատվությունն ու դրանց գնահատականը: «Դաշինքին» աշխատակցում էին «Արևելյան մամուլի» վերջին երկու տարվա (1908–1909) դրեթե բոլոր աշխատակիցները՝ Հ. Մամուրյանը, Ս. Պարթևյանը, Լ. Մկրտիչյանը, Կ. Նավասարդը, Մ. Նուպարյանը և ուրիշներ: Խմբագիրներն էին նախ Ս. Պարթևյանը (սկզբից մինչև 1911 թ. օգ.), ապա Ա. Պեյլերյանը (Ավո, մինչև 1913 թ.), իսկ 1913-ից՝ տնօրեն խմբագիրն էր Հ. Մամուրյանը:

---

[1] Բավական հետաքրքիր է «Դաշինքին» նախորդող՝ 1907-1909 թթ. զմյուռնահայ օրաթերթերի պատմությունը: Այստեղ հրատարակվում էին, Բ. Քեշիշյանի արտոնատիրությամբ, «Արշալույսը» (1907-1908) և «Արծագանքը», որի արտոնատերը Հ. Մամուրյանն էր: 1908 թ. այս թերթերը խմբագրելու են հրավիրվում Վ. Թոշիկյան և Հայկանուշ Մառք ամուսինները՝ Կ. Պոլսից. «Քեշիշեանի հիմնած «Արշալոյս» եւ ապա անոր փակումէն վերջ Մամուրեան Որդիի «Արծագանգը» խմբագրելու համար, տակաւին նորապսակ՝ հրաւիրուեցանք Իզմիր»,- գրում է Հայկանուշ Մառքը (Հայկանոյշ Մառք, Կեանքն ու գործը, էջ 45): Բ. Քեշիշյանի «Արշալույսի» դադարից հետո, հավանաբար, նույն 1908 թ., սկսում է հրատարակվել Հ. Մամուրյանի արտոնատիրությամբ մեկ այլ «Արշալույս»՝ փոխարինելով «Արծագանքին»: Այն շարունակեց լույս տեսնել նաև 1909 թ.՝ հակառակ բոլոր մատենագիտությունների տվյալների, որոնք այդ թերթի հրատարակության ժամանակն են համարում միայն 1908 թվականը, մինչդեռ «Արևելյան մամուլի» 1909 թ. հուլիսի 21-ի համարում Վ. Թոշիկյանին, որպես «Արշալույսի» հեղինակի, բավական կտրուկ հանդիմանանքներ է տեղում Հ. Տեր-Հակոբյանը («Մանգումեի էֆքյար»-ի խմբագիրներից մեկը)՝ վկայակոչելով «Արշալույսի» 1909 թ. հուլիսի 257-րդ թիվը (տե՛ս «Արևելյան մամուլ», 1909, հուլիսի 21, թիվ 30, էջ 720): «Դաշինք» օրաթերթը ոչ թե «Արևելյան մամուլի» շարունակությունն է, այլ անմիջապես «Արշալույսի»՝ հրատարակվելով 1909 թվականից, կարծում ենք, «Արևելյան մամուլ» շաբաթաթերթի դադարից հետո:

Հայ սահմանադրական ռամկավարները ազատամիտ կուսակցություն էին: Նրանց քաղաքական ու հասարակական հայեցության հիմքում ընկած էին դրա բաղադրիչները կազմող սոցիալական խմբերը կամ դասակարգերն ու դասերը, որոնց միավորելու էր ազգային համերաշխության ու միասնության նպատակը: Հանուն այդ նպատակի, նրանք քննադատում էին ազգի սոցիալական տարբեր խավերի մեկուսացածությունն ու ինքնաբավությունը, սեփական շահերի առանձնացումն ու դասային նախասիրությունները: Սրանով պետք էրացատրել «Դաշինքի» գործիչների Ս. Պարթևյանի, Ավոյի, Լ. Մկրտիչյանի և այլոց հարձակումները «հայ պուրժուաններու» «անհատական կյանքի սահմաններում» ամփոփվելու, հայ հանրության ներքին պառակտումների և այլնի դեմ: Որպես համոզված ազատամիտներ, սահմանադրական ռամկավարները անհատի ազատությունից էին ակնկալում ամբողջ ազգի ազատությունն ու իրավական հավասարությունը, իսկ բազմազգ պետություններում, որպիսին նաև Օսմանյան կայսրությունն էր, ազգերի ազատությունն ու իրավահավասարությունը: Սակայն իրականությունը այդ նույն կայսրության մեջ և անցյալ պատմությամբ և ներկա զարգացումներով, հպատակ ազգերի ճնշումների ու ըոնադատումների մշտական առօրյայով նրանց հարկադրում էր ուշադրությունը բևեռել ազգի բուն իսկ գոյության հիմնահարցի վրա: Այս վերջին հանգամանքն էր, որ «Դաշինքին» մղում էր վերանայումներ մտցնելու իր հայեցության մեջ: Երիտթուրքերի ազգայնական գաղափարախոսությունն ու քաղաքականությունը իրենց որոշակի դրսևորումներով կապում էին օրաթերթի լրատվական ուղղվածության առանցքն ու վերաբերմունքի առարկան: Ժողովրդի դերիշխանության ընդհանուր ծրագրային դրույթը ռամկավար սահմանադրականների համար պետք է վերածվեր ազգի գոյապահպանության խնդրի, որը լրջորեն սասանելու էր օսմանյան պետության մեջ ազգերի միասնականության, նրանց համագործակցության, խղճի ազատության և այլնի վերաբերյալ սահմանադրական ռամկավարների (և ոչ միայն նրանց) մեկնակետերը:

Ադանայի ցնցող իրադարձությունները (1909) «Դաշինքի» գործիչների մեջ առաջացրեցին «օսմանյան համերաշխության» վերաբերյալ երիտթուրքական տեսակետները հերքելու անհրաժեշտությունը: Օսմանյան իրականության նորովի դնահատականի խնդիրը «Դաշինքի» և սահմանադրական ռամկավարների առջև ծառանում էր նաև անհատի իրավունքների, խղճի ազատության զանգվածային ոտնահարումները արձանագրելու դեպքում ևս: Մնացյալ դեպքերում «Դաշինքը» շարունակում էր պահպանել, ընդհուպ մինչև ցեղասպանությունը, ընտրական ու խորհրդարանական խաղաղ պայքարի սկզբունքն ու հեղափոխական-ազատագրական գործելակերպի մերժումը, որ բխում էր ազգային ինքնորոշմանը բարենորոգչական միջոցներով հասնելու ռազմավարությունից:

Հայ հանրության զարգացումը սահմանադրական ռամկավարները պատկերացնում էին դրան համապատասխան խաղաղ ընթացքով՝ հանրության շահերի պաշտպանությամբ, պետության կողմից մասնավոր արտադրության զարգացման իրավական հուսալի ապահովմամբ: Այս ամենը ի սպաս էր դրվելու ազգի խաղաղ զարգացմանը օսմանյան պետության ներսում: «Հայ ազգը,- գրում էր Թերթը,- ամեն բանէ առաջ օսմանեան սահմանադրական դրօշին ներքեւ մէկ բանի միայն պէտք ունէր, այն է՝ խաղաղ զարգացումի, լուռումունջ ինքնամփոփումի, որու շնորհիւ կարելի ըլլար իր անցեալոյն մէջ կամ թէ նիւթական եւ թէ բարոյական վնասներուն մասամբ մը դարման տանիլ ու տնտեսապէս ու մտաւորապէս ուժովնալ» (1910, 28 հնս.):

Սակայն այս «մասնակի դարմանի», ասել կուզի աստիճանական խաղաղ զարգացման գաղափարը ևս մթագնվում էր Արևմտահայաստանի հայ բնակչության սաստկացող հարստահարություններով ու բռնություններով, վայրենի կեղեքումներով ու հալածանքով, որպիսիք դարձել էին սահմանադրական Թուրքիայի մշտական հատկանիշներից մեկը: 1910 թ. «Դաշինքն» արդեն ցավով նկատում էր, որ կայսրության արտոնյալ ժողովրդի մեջ իսպառ բացակայում է մյուս ժողովուրդներին «հաւասար օսմանցի ճանչ-

նալու տարրական համոզումը» (1910, 23 հլս.): Միաժամանակ, ինչպես տեսանք, «Դաշինքը» ձերբազատվում էր այդ հավասարությունը ապահովելու հեղափոխական մտայնությունից՝ մերժելով նաև դասակարգային ներհակությունների գաղափարն ու սոցիալիզմը: «Մեր ազատականությունը,- պնդում էր Ս. Պարթևյանը,- դասակարգ չի ճանչնար, այլ ժողովուրդ եւ կը ձգտի ազգային ներքին համերաշխության ու ներդաշնակության իրագործումներու... Է՛ն հարուստ մենծ ազան, է՛ն բարձրաստիճան կղերականը կրնա գործակցիլ, ընկերակցիլ մեզի, եթէ կը բաժնեն մեր ազատական-ռամկավարական սկզբունքները» (1910, 16 հկտ.):

Այսուհանդերձ, «Դաշինքի» նյութերում աստիճանաբար ձևավորվում է նրա ընդդիմադիր դիրքորոշումը երիտթուրքերի կառավարման ծայրահեղ չովինիստական եղանակների ու գործելակերպի նկատմամբ: Հատկապես 1909 թ. Ադանայի կոտորածից հետո, երբ ակնհայտորեն պարզ դարձավ, որ երիտթուրքերը չարունակում են Աբդուլ Համիդի կիսատ թողած գործը: Թերթի քաղաքական հայացքները մի հայտնի չափով արտահայտվեցին 1910 թ. օգոստոսի վերջերին, երբ Ջմյուռնիա էր այցելել օսմանյան խորհրդարանի նախագահ Ահմեդ Րիզան: Նա ազդեցիկ երիտթուրքական գործիչներից մեկն էր, Աբդուլ Համիդի դեմ պայքար էր սկսել դեռևս 1890-ականի կեսերին՝ տարագրվելով Փարիզ և իր համախոհների հետ հրատարակելով «Մեչվերեթ» երիտթուրքական պաշտոնաթերթը: Հակվելով դեպի Օ. Կոնտի պոզիտիվիստական հայացքները դասակարգային հակասությունները մեղմացնելու և դրա միջոցով հասարակական հավասարակշռության հասնելու վերաբերյալ[1], Ահմեդ Րիզան այս մտայնությունը մեքենաբար տարածում էր Օսմանյան կայսրության ազգերի փոխհարաբերությունների վրա: Բայց այստեղ ենթադրվող համագործակցությունը նա չէր պատկերացնում այլ կերպ, քան տիրող թուրքերի գերակայության և ի վերջո, հպատակ փոքրամասնություններին նրանց մեջ լուծելու

[1] Желтяков А. Д., Печать в общественно-политической и культурной жизни Турции, с. 249.

ուղիով: Նա կտրականապես դեմ էր կայսրության մեջ որևէ ազգության, և առաջին հերթին, առանձին հայկական բարենորոգումներին և նույն կերպ դատապարտում էր հայերի ազատագրական պայքարը որ համարում էր երկրի միասնականության և ամբողջականության դեմ ուղղված սպառնալիք[1]: Ահմեդ Րիզան մի կողմից առարկում էր 1894–1896 թթ. հայերի կոտորածներին, իսկ մյուս կողմից, պաշտպանում «ընդհանուր հայրենիքի», «օսմանցիության» վաղեմի ուղեգիծը[2]:

Իր «Րիզա պէյ» խմբագրականում Ս. Պարթևյանը հայտնում էր, որ Փարիզում տարիներ առաջ «Մեչվերեթի» խմբագիրը Ջերազին, Զոպանյանին և իրեն ու հնչակյանության կողմից Փարիզ եկած Ա. Արփիարյանի հետ բանակցելիս (Հավանաբար, 1907 թ. կողմերը) ձգտել է համոզել նրանց՝ «վազ անցնիլ առանձին դատի մը հետապնդումէն եւ միանալ օսմանեան ազատագրական ընդհանուր շարժումին, որ մեզի համար անտեսանելի, մտացածին ու ցնորական բան մը կը թուէր այն ատեններըը» (1909, 26 օգ.): Միաժամանակ, Ս. Պարթևյանը Ահմեդ Րիզային առանձնացնում է մյուս «երիտասարդ թուրք» տարազիրներից, որոնք մի քանի հարյուր ֆրանկ ամսականի փոխարեն «իրենց համոզումներուն սակարկութեանը կը մանէին համիդեան դեսպան Միւնիր փաշային հետ» (ն. տ.):

Ահմեդ Րիզայի ելույթները օսմանյան հայրենակցության, հպատակների իրավահավասարության և երկրում կարգուկանոն հաստատելու մասին, նախապես ինչ-ինչ հույսեր էին ներշնչում հայ գործիչներին: Ժմյուռնահայ վիճաբան Գ. Պուպլին կարծեք արտահայտում էր այդ տրամադրությունները, երբ տեղի առաջնորդարանում Ահմեդ Րիզայի ընդունելության ժամանակ նրան էր ներկայացնում ազգային հաստատությունները արված նվիրատվությունների օրինականացման հետ կապվող խնդիրները (1910, 25 օգ.):

---

[1] Տե՛ս Կիրակոսյան Ջ., Ընտրանի, էջ 75:
[2] Желтяков А. Д., նշվ. աշխ, էջ 254:

Թուրքերը ոչ պակաս սպասելիքներ ունեին խորհրդարանի նախագահից. տեղի «Ջոյլու» թուրքական թերթը նրա ուշադրությունն էր հրավիրում մի ամբողջ շարք խնդիրների վրա, ինչպիսիք էին ավազակների աներկյուղ արշավանքները Իզմիրի վիլայեթում, ճանապարհազրկությունը, հարկերի և տուրքերի խառնաշփոթ ու. անկարգ գանձումները, պաշտոնյաների կամայականությունները և այլն (Ն. տ.):

Բնականաբար, թուրք բարձրաստիճան պաշտոնյային հայերի դիմումները մնացին անհետևանք: Սակայն «Դաշինքը» ավելի հաճախակի է անդրադառնում հայերի հանդեպ երիտթուրքերի կիրառած անարդարացի քաղաքականությանը: Թերթն իր դժգոհությունն է հայտնում ներքին գործերի նախարար Թալեաթից, որ օրինականության հիմնավորմամբ մերժել էր պատրիարքի դիմումը՝ Ադանայում մի խումբ անմեղ հայերի արձակելու համար (1910, 28 ապր.): Թալեաթը մերժել էր նաև Մուշեղ եպիսկոպոսին անպարտ ճանաչելու և նրա՝ Թուրքիա վերադարձը թույլատրելու դիմումը (եպիսկոպոսը մեղադրվում էր Ադանայի հուզումները, իբր, հրահրելու մեջ և. տարագրվել էր Ֆրանսիա): Այս առթիվ «Դաշինքը» մեղադրում էր կառավարությանը այն բանի համար, որ նա Ադանայի նախկին առաջնորդի գործին տվել է քաղաքական բնույթ (1910, 28 օգ.):

Երիտթուրքական կառավարության մեծապետական բնույթը «Դաշինքի» էջերում ցուցադրվում է օսմանիզմի դոկտրինաների անանկության բացահայտման հենքի վրա, որով սահմանադրական ռամկավարները հետամտում էին բացահայտել նրանց գաղափարական երեսպաշտությունը: 1911 թ. մայիսին նրանց «Ժեոն Թյուրք» («Երիտասարդ Թուրք») պաշտոնաթերթը ամբարտավան հարձակումներ էր գործել հույն և հայ պատրիարքների վրա, որոնք կառավարությանն էին դիմել այսպես կոչված եկեղեցական առանձնաշնորհումների խնդրով (այսինքն, կրոնապետների աշխարհիկ որոշ գործառույթների, որ նրանց էին վերապահվել դեռևս 15-րդ դ. 2-րդ կեսից): Երիտթուրքական թերթը պնդում էր, որ

դրանով պատրիարքները «պետութեան մէջ պետութեան հաւասկնութիւնը կիրականացնեն» (1911, 4 մյս.): Այս առթիվ Ս. Պարթևյանը գրում էր, որ կառավարությունը երկար տարի ի վեր թշնամական դիրք է բռնել ոչ իսլամների հանդեպ և օրինակ է բերում Վասպուրականի հայերի կեղեքումները, որի պատճառը սահմանադրական իշխանությունների ապիկարությունն է (Ն. տ.): Ի դեպ, առանձնաշնորհումների առթիվ կրոնի գործերով նախարարը հայտարարել էր, որ հայերը հատուկ համաձայնություն են կնքել հույների պատրիարքի և բուլղարների էկզարխության հետ և այդ այն դեպքում, երբ կառավարությունն իր առջև նպատակ է դրել խափանելու այդպիսի «երդուեալ համերաշխութիւնները» (1911, 31 հլս.):

Իր ծայրահեղ կենտրոնացված քաղաքականությամբ, տեղերում ոչ մահմեդականների իրավազրկությունը սահմանադրական դարձվածներով քողարկելու կառավարության գործելակերպը սպառնալի չեչտեր էր ստանում, երբ հայերը և հպատակ մյուս ազգերը դիմում էին ինքնապաշտպանական միջոցների: Ս. Պարթևյանը գրում էր, որ Տարոնում և Վասպուրականում հայերի «անարգել ու անպատիժ» սպանությունների դեմն առնելու համար հայկական կուսակցություններն առաջարկել են ինքնապաշտպանական զինված խմբեր կազմակերպել: Կառավարությունը, որ խրախուսում էր քրդերի վայրագությունները, ի պատասխան այդ առաջարկին, սպառնացել էր, որ ինքը «Հայոց պատրիարքարանը պատասխանատու պիտի բռնէ քօմիթէներու վերապրուած այդ կարգի գործունեութեան (ինքնապաշտպանական – Ա. Խ.) մը հետեւանքներուն» (1911, 28 հնս.): Նախազգուշացումն արել էր նոր, իթթիլյաֆական կառավարությունը, որի գործելակերպը ոչ իսլամների նկատմամբ ոչնչով չէր տարբերվում իթթիհատից: Միաժամանակ, «Դաշինքը» ուշադրություն էր դարձնում իշխանությունից հեռացած երիտթուրքերի ներքին, հանցավոր խմորումներին: «Իթթիհատը մութին մէջ» խմբագրականում Ավոն քննադատում էր այդ կուսակցությանը՝ իր հակառակորդներին ֆիզիկապես ոչնչացնելու գործում: Ումն Զեքի պեյի սպանության առթիվ նա գրում էր,

որ իթթիհատը դիմում է «գործնականորեն դժոխային դրութեան» ֆիզիկական հաշվենհարդար տեսնելով իր հակառակորդների հետ, և որ այդ կուսակցությունը երկիրը փլուզում է «իր հիմքերը ինքը պեղելով՝ իր զաւակներու ինքնակերութեամբ» (1911, 20 հլս.):

Հայտնի է, որ 1913 թ. սկզբին իթթիհատը վերստին անցավ իշխանության գլուխ, այն բանից հետո, երբ հունվարի 24-ին էնվերի և Ջեմալի պեյի գլխավորությամբ կայացած ցույցից հետո վարչապետ Քյամիլ փաշան սուլթանին էր ներկայացրել իր կառավարության հրաժարականը: Նոր իթթիհատական կառավարությունը գլխավորեց Մահմուդ Շեվքեթ փաշան, արտգործնախարար նշանակվեց Հյուսնին Հիլմի փաշան, ներքին գործոց նախարար՝ Թալեաթը: Իթթիհատականների հեղաշրջումն ավարտվել էր հաջողությամբ: «Դաչինքը» չէր թաքցնում իր քաղաքական հակակրանքները իթթիհատի վերադարձի առթիվ: Ավելն՝ թերթի խմբագիրը, սահմանադրական-ռամկավարների այսպիսի վերաբերմունքին էր միացնում իթթիհատի վտանգավոր պատրաստակամությունը՝ չարունակելու պատերազմը Բալկաններում: Յուցարարները, որոնք հանդես էին եկել իթթիհատի զորակցությամբ, չեն արտահայտել բոլոր հայտնակների, հատկապես ոչ իսլամների կամքը (1913, 28 հնվ.): Երիտթուրքական կառավարողների նոր, արդեն ընդգծված թշնամական դիրքորոշումը վերջիններիս հանդեպ՝ թերթը նկատում էր հույների դեմ ուղղված տնտեսական բոյկոտը հայերի վրա տարածելու և ազգայնամոլական քարոզչության մեջ: Ուշագրավ է, որ վերստին իշխանության անցնելուց հետո երիտթուրքերը խոստացել էին երևսփոխանական ժողովում հայերին հատկացնել 18–20 տեղ, որին չէր հավատում «Դաչինքը»: Միայն Զմյուռնիայում, նկատում է թերթը, ընտրություններն ավարտվել են, բայց ոչ մի հայ երեսփոխան չի ընտրվել, որովհետև նախկինում այստեղ հայերին հատկացված մեկ տեղը իթթիհատը որոշել է տալ հույներին (1914, 7 հնվ.): Որոշ ժամանակ անց, «Դաչինքը» հայտնում էր, որ կառավարությունը հատուկ ուշադրություն է դարձնում չորս հայ իթթիհատականների ընտրության հարցին, սակայն նրանց

չպետք է համարել հայերի ներկայացուցիչներ և, որ հարկ է ձևնպահ մնալ նրանց ընտրությունից:

1913–1914 թթ. «Դաշինքի» էջերում զգացվում է տագնապն առհասարակ հայության ճակատագրի հանդեպ, որ, սակայն, մեղմանում էր Հայկական հարցի վերարծարծման միջազգային իրողություններով: Դրա հետ էր կապում թերթը ազգի ճակատագիրը, ուստի նշված ժամանակաշրջանում այդ հարցի դրական լուծումը նրան պատկերանում էր իբրև փրկության միակ երաշխիք: 1910-ական թթ. առաջին կեսին տպագրած իր նյութերով «Դաշինքը» ուրվագծում էր այն ճշմարտությունը, որ հայերն ապրում են օսմանյան թշնամական միջավայրի ու քաղաքականության պայմաններում: Արևմտահայաստանի մռայլ կացությունից հուսաբեկ, «Դաշինքը» ապավինում էր միայն արտաքին ուժերին: Արևմտահայաստանի հայության կյանքի բազմաշերտ լուսաբանումներով թերթն իր ընթերցողին էր մատուցում որևէ այլ տեսակետ բացառող այս եզրակացությունը: «Դաշինքը» դրան հասել էր երիտթուրքական քաղաքականության կործանարար դասերը նկատի առնելով, որի առաջին, խորապես ցնցող, բայց և սթափեցնող դրսևորումը եղավ 1909 թ. Ադանայի կոտորածը, որին հետևեցին բռնությունների ծավալումները դավառում: «Դաշինքի» հեղինակներն այս առթիվ իրենց կարծիքն էին հայտնել դեռևս «Արևելյան մամուլ» հանդեսում և որին անդրադարձել ենք իր տեղում: Երիտթուրքական հակահայկական քաղաքականության չարունակությունը, հայերի հարստահարությունների սաստկացումը կառավարության խրախուսանքի պայմաններում, որևէ պատրանք չէին թողնում թերթի համար ակնկալելու անհուսալի իրականության որևէ փոփոխություն: «Դաշինքը» կառավարությունից խորապես հիասթափված էր նաև հողային հարցը բացարձակապես բարձիթողի անելու, այլև, այս ասպարեզում անօրինականությունները լիովին անտեսելու համար: Հողային հարցը արևմտահայ կյանքի վաղնմի կենճիռներից մեկն էր, այն ուներ դարավոր պատմություն՝ կազմելով կայսրութ-

յան ոչ մահմեդական ժողովուրդների, այդ թվում հայերի հարստահարությունների բազկացուցիչ մասը: Դեռևս 1877 թ., քննելով գավառական հարստահարությունների վերաբերյալ Մ. Խրիմյանի և Ն. Վարժապետյանի պատրիարքության ժամանակ կազմված տեղեկագրերը, Րաֆֆին նկատում էր, որ Արևմտահայաստանից հայերի գաղթելու հիմնական պատճառը նրանց հողազրկումն է, նրանց հողերը հափշտակելը քրդերի ու թուրքերի կողմից: «Հողային կամ կալվածական խնդիրը Տաճկաստանի հայոց հարստահարությունների մեջ ամենագլխավոր խնդիրն է: Այս խնդրի նշանակությունն այնքան բարձրանում է, որքան մենք մտածում ենք, թե տաճկաբնակ հայերի մեջ գաղթականությունը դադարեցնելու և ժողովրդին հայրենի հողի վրա ապահով կյանք վարելու միակ միջոցը հանգիստ երկրագործությունն է»,- գրում է նա[1]:

«Դաշինքը» քանիցս կարևորել է հողային հարցը նաև իրավական կտրվածքով՝ այս տեսակետից արևմտահայ պարբերականների մեջ ցուցաբերելով որոշակի հետևողականություն: Թերթը դատապարտում էր Թուրքիայում հայկական վանքերը հողային սեփականությունից զրկելու վայրենի սովորույթը: Օսմանյան օրենքներով, որոնք հարատևել էին մինչնադարից և շարունակում էին գործել նաև 1910-ական թթ., և որոնք ի զորու չեղան վերացնելու նաև Թանզիմաթի բարենորոգումները, վանքերը և այլ ազգային հաստատությունները սոսկ բարոյական օբյեկտ էին և ոչ իրավաբանական անձ, ուստի և դրանց տրված նվիրատվությունները մեքենաբար անցնում էին պետությանը՝ իբրև մահլուլ (անժառանգ կամ անտեր հող), կամ իրավատեր էր ճանաչվում որևէ իրավաբանական անձ: Այս առթիվ ևս Րաֆֆին նկատում էր, որ «Տաճկաց կառավարությունը վանքային կամ եկեղեցական կալվածք չէ ճանաչում, որովհետև կալվածատեր կարող են լինել միայն անձնավորություն ունեցող անհատները, իսկ վանքը և եկեղեցին, նրա կարծիքով, իրավաբանական անձնավորություն չէ, ուրեմն կալվածատեր լինել

[1] Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 449-450:

կարող չէ... Այս պատճառով վանքային կալվածները համարվում են որպես մահկալ, այսինքն՝ որոշ տեր չունեցող: Այդպիսի կալվածների տերն ինքը՝ պետությունն է լինում»[1]:

Նույն կերպ, սեփականատեր չէին ճանաչվում ազգային այլ հաստատությունները՝ եկեղեցիները, դպրոցները, արհեստանոցները, ուրեմն և դրանց տրված նվիրատվությունները, որովհետև ըստ օրինի, դրանք պետք է հասցեագրվեին կենդանի անձնավորության: Իսկ եթե այդպիսին չէր հայտնվում, կալվածքը համարվում էր մահկալ և ազգային հաստատությունը զրկվում էր իրեն հասած կալվածքից: Այս կերպ, օսմանյան պետությունը հայերի սեփականությունները թափուր էր անում (իրավականորեն ամրագրում էր) թուրք կամ քուրդ ազանների անվամբ և խնդիրը փակվում էր:

Բաֆֆու մեկնաբանություններից հետո անցել էր ավելի քան երեսուն տարի, սակայն արևմտահայության և նրա հաստատությունների սեփականագրկումը շարունակվում էր: Օսմանյան խորհրդարանի նախագահ Ահմեդ Րիզային դիմելիս գմյուռնահայ իրավարան Գ. Պուպլին այս անարդարությունը նկատի ուներ, երբ առաջարկում էր խորհրդարանում ազգային հաստատությունները ճանաչել ոչ թե իբրև «բարոյական էակ» (անձ), այլ իրավաբանական անձ, հետևելով «լուսավորյալ սուլթարհի օրինակին» (1910, 25 օդ.):

«Դաչինքի» հետագա նյութերը ցույց են տալիս, որ հայերի սեփականազրկման խնդիրը դերաճել է նրանց դեմ ուղղված պետական լայնածավալ քաղաքականության: Ա. Ճիզմեճյանի «Հողային խնդիրը արևելյան վալաուններու մեջ» հոդվածում լուսաբանվում է հիմնահարցի քննարկման վիճակը: Կազմվել էր քննիչ հանձնաժողով՝ հողային հարցն ուսումնասիրելու համար և ազգի, և կառավարության կողմից: Ազգային հանձնաժողովի տվյալներն ինքնին պերճախոս էին երևույթի չափերն ըմբռնելու համար, առկա էր 7 հազար հողային վեճ, որոնք Ա. Ճիզմեճյանը բաժանում է երեք խմբի՝ 1. այն հողերը, որոնք հայերից պարզապես խլվել են և

[1] Նույն տեղում, էջ 427:

չնչին գնով ծախվել փոքր պարտքերի կամ տուրքերի փոխարեն, 2. հողեր, որոնք վարչական կարգով առգրավվել են հայ սեփականատերերից, հիմնականում՝ 1895–1896 թթ. կոտորածների ժամանակաշրջանում (նաև Կովկաս անցած հայերից), 3. ազգապատկան կալվածքներ, որոնք իբրև մահկուլ առգրավվել են իշխանությունների կողմից: Հեղինակը ամենասրվածն ու կնճռոտը համարում է 2-րդ խմբի վեճերը (1910, 20 սպտ.): Ազգային վարչությունը կառավարությանն առաջարկել էր նշված բոլոր հարցերին տալ ընդհանուր լուծում, ընդամին, քրդերի զավթած հողերը հայ սեփականատերերին թագրիրներով (խնդրագրերով) վերադարձնելը արդյունավետ չէր համարում Ա. Ճիզմեճյանը՝ առաջարկելով խնդրին տալ օրենսդրական լուծում:

Ուշագրավ է հայերից անհատապես խլված հողերի հարցում երիտթուրքական կառավարության գործելակերպը: 1895–1896 թթ. Կովկաս անցած հայերի մի մասը պահպանել էր իր կալվածագրերը (թափու), մի մասը՝ ոչ: Նրանց հողը գրաված քրդերը, իրենց հերթին, նոր կալվածագրեր էին ձեռք բերել, այսպիսով, նույն հողակտորի համար ստեղծելով երկրորդ սեփականատիրական իրավունք: 1909 թ. դեռևս սահմանադրական և «ազատական» կեցվածք ձևացնող երիտթուրքական կառավարությունը չրջաբերական էր հղել գավառներ՝ հողային խնդիրը վարչական կարգով լուծելու համար, նկատի առնելով հետևյալ հնարավոր իրողությունները.

1. եթե երկու կողմերն էլ կալվածագիր ունեն, հողը մնում է հին տիրոջը, այն դեպքում, երբ նոր տիրոջ կալվածագրում նշված չէ, որ հողը փոխանցվել է հին տիրոջից: Նոր տիրոջը իրավունք էր վերապահվում դիմել դատարան,

2. եթե կալվածագիր ունի միայն մեկ կողմը, հողը մնում է նրան, իսկ մյուս կողմը կարող էր դիմել դատարան,

3. եթե երկու կողմերն էլ կալվածագիր չունեն, հողը մնում է նրան, ով վճարել է հողային տուրքերը, իսկ մյուս կողմը կարող էր դիմել դատարան (1910, 22 սպտ.):

Օսմանյան իշխանությունները մի քանի ամսվա ընթացքում՝ ցույց էին տվել խնդիրն անդամ վարչական կարգով լուծելու իրենց ապիկարությունը, իսկ քրդական տարրը դեռևս բավականաչափ ուժեղ էր Արևմտահայաստանում՝ կառավարության չընաթերականների կամ անպաշտպան հայերի առջև չընկրկելու համար: Համենայն դեպս, կառավարությունն այդ կերպ լարում էր քրդերին հայերի դեմ՝ հողային վեճերը աւավիլ խորացնելու նպատակով: 1910 թ. ապրիլին կառավարությունը նոր հրահանգներ ուղարկեց գավառական իշխանություններին, որով վարչական կարգով հարցի լուծումը համարվում էր ոչ սահմանադրական, ուստի և որոշվում էր վեճերը հանձնել դատարանների իրավասությանը: Խոստացվում էր հատուկ օրենք ընդունել սահմանադրությունից առաջ և հետո վերադարձողների հողերը նրանց հանձնելու կամ նրանց օժանդակելու նպատակով, որ այդպես էլ մնաց թղթի վրա:

«Դաշինքի» հեղինակը խնդրի լուծումը տեսնում էր այնպիսի օրենսդրական ամրագրումների մեջ, որոնք ենթադրելու էին և ազգապատկան, և անհատական կալվածքների վերադարձը: Խորհրդարանի հայ երեսփոխաններից նա ակնկալում էր համապատասխան օրինագծի մշակումը և այն ներկայացնելը: Երեսփոխանական ժողովը, սակայն, չէր էլ ցանկանում հարցին որևէ գործնական լուծում տալ. նախատեսվում էր Ռումելիայից եկող փախստական խալամներին Արևմտահայաստանում վերաբնակեցնելու խնդիրը, որին և ընդդիմանում էր «Դաշինքը»՝ պնդելով, որ փախստական ու գաղթական հայերի վերադարձն իսկ արդեն դժվարություններ է հարուցում այդ նպատակի իրագործման համար (1913, 11 մրտ.): Բոլոր դեպքերում և երիտթուրքերը, և իթիլյաֆը այդպես էլ հեռու մնացին Արևմտահայաստանում հողային հարցը լուծելու որևէ գործնական քայլից: 1913 թ. բարենորոգումների շուրջ բանակցությունների ժամանակ իթթիհատը վերստին ցուցադրեց իր ձևական պատրաստակամությունը՝ զբաղվելու հողային հարցով: Դարձյալ կազմվեց հանձնաժողով՝ Արևմտահայաստան ուղարկելու համար, որի առաքելությանը հավատացող՝ Զմյուռնիայի թուրքական

«Ահեկ» թերթը մի պահ պետք է դիմեր միամիտ անկեղծության: Այս թերթը դրում էր, որ կան շատ հայեր, որոնց մի մասը շատ էժան գնով վաճառել է իր հողերը, շատերն էլ հալածվելով փախել են, իսկ նրանց հողերն անցել են քրդերի ձեռքը: «Ահեկը» հավելում էր, որ խնդիրն այնքան բարդ է, որ քրդերի և հայերի հողային վեճերը կտևեն տարիներ՝ խորացնելով թշնամանքը նրանց միջև (1913, 24 մյս.): Վերոհիշյալ հանձնաժողովը, սակայն, գավառներ չմնկնեց: 1913 թ. մայիսի վերջերին արդեն հայտնի էր դարձել, որ դրան վերապահված գործունեությունը դրվել է վիլայեթներում կազմվելիք տեղական մարմինների վրա (1913, 28 մյս.): Տեղական մարմինները, մինչդեռ, շատ դեպքերում խաղալիք էին դարձել քրդական ազանների ձեռքին: Երբ Խարբերդի վալին փորձել էր քրդերից բռնագրավել հայերից նրանց խլած հողերը, հավաքվել էին 24 քուրդ ազաներ ու բնկկը՝ հարյուրավոր զինված մարդկանցով ու հարձակվել վալիի նստավայրի վրա: Քրդերի առաջնորդ Մեհմեդ բնկն ի վերջո ձերբակալվել էր, սակայն քրդերը ազատել էին նրան՝ շարունակելով մնալ դրության տերը (1913, 30 մյս.):

Հայերի հողազրկման իրականացումը, և այնուհետև, դրա արդյունքներն անփոփոխ թողնելը ոչ այլ ինչ էր, եթե ոչ ցեղասպանությունը նախապատրաստող գործոն, որ հավելյալ միջոց էր դառնալու երիտթուրքական կառավարության ձեռքին՝ նրանց տնտեսապես քայքայելու և նրանց թվաքանակը Արևմտահայաստանում նվազեցնելու համար:

«Դաշինքի» հրապարակումներում առաջատար հիմնահարցը մնում էր Արևմտահայաստանի կացությունը: Թերթը փորձում էր արտացոլել դրա քիչ թե շատ ամբողջական պատկերը, սոցիալական վիճակը, բնակչության զբաղմունքը, բռնությունների դրսևորումները և այլն: Դավառական իրականության պատկերը տրվում է իրական դծերով, հաճախ՝ գրված միջավայրն ու ժողովրդին լավ ճանաչող թղթակիցների գրչով: Այդպիսի շատ թղթակցություններ են տպագրվել Կեսարիայից, Կիլիկիայից, Մուշից, Վանից և այլ վայրերից, որոնց «Դաշինքը» միացնում էր արտատպություններ

հայ և թուրք մամուլից: Թղթակիցներն ուշադրություն են դարձնում նաև հայ հանրությունների ներսում առկա երկպառակություններին, միջկուսակցական տարաձայնություններին ու հակադրություններին, դավառական ժողովներում սրանց բորբոքած անիմաստ գզվռտոցներին և այլն: Կեսարիայում խորացող երկպառակություններին «Դաշինքը» տալիս էր իր ոամկավարամետ դնահատականը՝ քննադատական սլաքն ուղղելով հատկապես դաշնակցության դեմ: Դարձյալ Կեսարիայի օրինակով «Դաշինքը» ցույց է տալիս, թե թուրքերն ինչպես են հայերին դուրս մղում տնտեսական ոլորտից: Թերթի «Թուննուսցի» թղթակիցը տեղեկացնում է, որ Կեսարիայում երկրագործությունը ամբողջովին գտնվում է թուրք տարրի ձեռքին, իսկ այն հայերը, որոնք դեռևս փորձում են դործել տնտեսական ոլորտում, ուժով դուրս են մղվում: Նրանց դեմ դործադրվում են տարբեր մեթոդներ՝ զրկում էին հողը մշակելու հնարավորությունից, դիմում բռնությունների և այլն: Գասարճյան եղբայրները, որոնք տիրում էին 300 արտերի, ունեին լիճ, որտեղ ձկներ էին բուծում և իրենց նկամուտներով դրդռում էին թուրքերին, հարձակումների ենթարկվեցին: Ավերել էին լճի ամբարտակները, թալանել նրանց ագարակները՝ այս կերպ հաչվեհարդար տեսնելով նրանց հետ (1910, 26 մյս.):

1913 թ., երբ բարենորոգումների խնդրին միջամուխ էին եղել Ռուսաստանը և Գերմանիան, երիտթուրքերը վերստին դործի դրեցին քրդական հակազդող դործոնը, մի կողմից ընկճելու հայերի ըմբոստ տրամադրությունները, և մյուս կողմից՝ տերություններին ցույց տալու, որ բարենորոգումները պետք է տարածվեն ոչ միայն Արևմտահայաստանի, այլև ամբողջ կայսրության դավառների վրա: Քրդական սպառնալիքը օրավուր առավել իրական էր դառնում: «Դաշինքին» ուղղված մի հեռադրում նչվում է, որ Շատախի և Խիզանի մեջ ապահովությունը բացարձակապես խանդարված է, երթևեկությունները և երկրագործական աշխատանքներն ընդհատված են քրդական խժդժությունների պատճառով (1913, 23 մյս.): Նույն 1913 թ. բարենորոգումների պաշտպանության իր կեղծ

հավատիացումներով, բայց իրականում դրանք վիժեցնելու նպատակով կառավարությունը քրդերին գրգռում էր հայերի դեմ և խրախուսում նրանց ոճրագործությունները՝ «ավազակների դեմ պայքարի» կրեսպաշտական կարդախոսներով: Ավազակների դեմ ուղարկված ջոկատները, գրում է Թերթը, «զբօսապտոյտ մը կատարելու ելէր էին՝ դիւրացնելով տեղ-տեղ աւազակի փախուստն ու աւելի ազատ գործունեութիւնը եւ օդնէր էին անոր, որ աւելին ալ ընէ» (1913, 29 մյս.):

«Դաշինքը» հաճախ է անդրադառնում Կիլիկիայի իրականությանը, որ, ի դեպ, ընդհանուր երևույթ էր ժամանակի հայ մամուլի համար: Պատճառը, նախ, Ադանայի 1909 թ. կոտորածների մորմոքուն վերքն էր, որի սպիացմանը խանգարում էին ոչ միայն դեռևս թարմ հիշողությունները, այլև երիտթուրքերի չարունակվող ճնշումները տեղի հայ բնակչության նկատմամբ, որի նպատակն էր վերջնականապես քայքայել հայ տարրը և դուրս մղել նրան հայրենի տարածքներից: Ընդ որում, իշխանությունները սկզբից իսկ հանդես էին գալիս խնամքով մտածված գործելակերպով, որ, իբր, ուղղված էր կոտորածների հետևանքները վերացնելու նպատակին: «Դաշինքը» գրում էր, որ կառավարությունը ներման է արժանացնում և զոհերին, և այն իրականացնողներին, և իբրև օրինակ, նշում է Տրդատ եպիսկոպոսի կողքին ոմն Արդուլ Կադիրի, որոնք երկուսն էլ ազատվել էին բանտից, «Մին մարմնացեալ ոճիրն է՝ արիւնազանդ ու անագորոյն կերպարանքով ու միւսը՝ անիրաւուած, հալածուած անմեղութիւնը... Ու երկուքը մէկ շարքի վրայ կը դրուին, արդարութեան միևնոյն նժարով կը չափուին այս անուշիկ երկրին մէջ»,- գրում է Ս. Պարթևյանը (1910, 21 հլս.): Այս առթիվ նա քննադատում է Կ. Պոլսի Ազգային վարչությանը, պատրիարքին ու օսմանյան խորհրդարանի հայ երեսփոխաններին, որոնք այս անարդարությանն ի տես՝ «ուրիշ կատուններ խարազանելու զբաղած են» (Ն.տ.):

Հայերի շինծու դատավարություններին ձեռնարկելիս թուրքական իշխանությունները մեկ գնդակով երկու նպատակ էին

խփում. նախ, փորձում էին միջազգային հանրության առջև հանդես գալ որպես անկողմնակալ, արդարադատություն իրականացնող դատավոր և ապա, հայերին դատապարտելով իբրև «ջարդարարների», նրանց դեմ էին դրգռում Կիլիկիայի թուրքերին: Այս էր պատճառը, որ 1909-ից հետո Կիլիկիայում լարվածությունը չէր թուլանում հայ և թուրք ազգաբնակչության միջև և մինչև ցեղասպանության սանձազերծումը, այս տարածաշրջանը նմանվում էր վառոդի տակառի, որը պատրաստ էր պայթելու աննշմար իսկ կայծի դեպքում: Եվ այս իմաստով «Դաշինքի» համապատասխան նյութերը ունեն ճանաչողական արժեք: 1911 թ. սկզբին թերթն արդեն արձանագրում էր, որ Ադանայում թուրք ազգաբնակչությունը բացահայտորեն զինվում է, նրան շարունակ հրահրում են մոլլաները՝ անգամ գիշերային ազանով, իսկ հայերի տները մատնանշում են կարմիր գծերով՝ մոտալուտ ջարդի մտադրությամբ: Իշխանություններին «Դաշինքը» կոչ էր անում զորք մտցնել Ադանա՝ կանխելու նոր արյունահեղությունները (1911, 3 հնվ.): Ս. Պարթևյանը տպագրեց «Նորէն Ատանա» խմբագրականը, նշելով, որ կառավարությունը խրախուսում է ամբոխի ստոր կրքերը՝ անուղանելով նրա «արիւնախանձ հոգեբանութիւնը» (1911, 4 հնվ.): Տպագրվեց նաև Ավոյի «Ատանա» տագնապալի հոդվածը, որտեղ նա հստակ հարցադրումներով դիմում է Թալեաթին նոր արհավիրքի դեմն առնելու կոչով:

Կիլիկիայում դրությունն առավել սրվեց 1913 թ. գարնանը: «Կիլիկիոյ վիճակը» խմբագրականում բացահայտվում է այն լարված մթնոլորտը, որ ստեղծվել էր Հասան Բեյլիում, Պախչեում, Հաճընում, Մարաշում, Զեյթունում, Ադանայում և այլուր: Ընդհանուր հուզումը և կոտորածի սարսափը տարածվել է ամեն տեղ, ազատ գործում են ավազակախմբերը, մինչդեռ ձերբակալվում են անմեղ հայերը խռովություն հարուցելու մեղադրանքով: Խուճապահար հայ ազգաբնակչությունն այս վայրերից փախչում է Մերսին, Կիպրոս և այլ տեղեր, իսկ մի մասն էլ հարկադրված իսլամանում է (1913, 1 ապր.): «Դաշինքի» այս հեղինակը ուղղակի կատա-

վարութեանն է մեղադրում այսպիսի իրադրութիւն ստեղծելու և չարդեր կազմակերպելու մեջ: Ձերբակալված հայ կասկածյալներին իշխանութիւնները հանձնում են ռազմականատյաններին, «մինչ յայտնի նշաններ կան, որոնք կապացուցանեն, թէ այդ գործերը արդիւնք են պարզապէս այն ծպտեալ խռովարարներուն, որոնց համար կըսուի, թէ դինուորական քոմիթեաճիներ են՝ քաղաքային հագուստ հագած, գիւղէ գիւղ կը շրջին և թուրք հասարակութիւնը հաւաքած, իրենց չուրջ՝ զրդռիչ քարոզութիւններ կընեն» (ն. տ.): Ի դնալ, Ավոն ակնհայտ միամտութեամբ էր ցուցաբերում, երբ կարծում էր, թե իշխանութիւնները հայերին պետք է առաջարկեն զինվել, քանի որ իրենք զբաղված լինելով արտաքին թշնամիներով, չեն կարող հոգալ իրենց քաղաքացիների պահպանութեան գործը (1913, 2 ապր.): Այս զարմանալի պարզունակութիւնն արտացոլում էր ոչ միայն «Դաշինքի», այլև այլ պարբերականների ծայրահեղորեն միամիտ հավատը արդեն քանիցս իրենց եղեռնագործ մտադրութիւնները բացահայտած երիտթուրքերի նկատմամբ: Ըստ երևույթին, այսպիսի սպասումները ծնվում էին բարենորոգումների գործընթացի մեջ ներքաշված Թուրքիայի վրա Ռուսաստանի և եվրոպական տերութիւնների հնարավոր ներգործութեան հույսերից, առավել ևս Թուրքիայում իրադրութիւնը վերահսկելու նրանց հնարավորութիւններից: Մյուս կողմից, իրականութիւնը մղում էր թերթին ձեռնթափ լինել երիտթուրքերի բարյացակամութեան ամեն մի պատկերացումից: Ավելին, այդ իրատեսական մոտեցումը նրան հասցնում էր այն հետևութեան, որ կառավարութիւնը ինքն է կազմակերպում նմանը չտեսնված և սպասվող չարդերը: Թերթի «Ես» աշխատակիցը (Հրանտ Մամուրյանը), որին դժվար է մեղադրել մինչ այդ ցուցաբերած որևէ հանդգնութեան մեջ, գրում է. «Տիգրանակերտէ, Սղերդէ, Վանէ եւ վերջապէս ամեն կողմէ սպանութիւններու, առևանգումներու լուրեր կը հասնին, բացարձակ անիշխանութիւն է, ղոր կը տիրէ, եւ կեդրոնական կառավարութիւնը, բառին բուն նշանակութեամբ կամ անզոր է զանոնք կարգ հրաւիրելու և անոնց արժանի պատիժը տնօրինելու, եւ

կամ... ինքն ալ համակարծիք է հղածներուն եւ սխթէմատիք հալածանք մըն է սկսած հայոց դէմ՝ սխթէմատիք ջարդի մը անկարելիութեան առջեւ» (1913, 27 մարտ): Նրան լրացնում է Ավոն, որը ազգի փրկութեան միակ միջոցը տեսնում է զինված դիմակայութեան մեջ: Ավոն բացահայտորեն իր մտքերը հայտնեց հատկապես երզնկացի Սարգիս Գազանճեանի տան հետո կատարված միջադեպից հետո: Վերջինիս տանը կուտակված էր եղել զինամթերքի պաշար և ինչ-որ պատահարի հետեւանքով տունը ավերվել էր: Իշխանութիւնները և մամուլը դրանից հետո հարձակվեցին հայերի վրա՝ մեղադրելով ապստամբութեան նախապատրաստվելու մեջ և դրանով ավելի զրգռելով ջարդարարներին[1]: Ավոն այս առթիվ նկատում է, որ զննքի առկայութիւնը հայ մարդու տանը՝ ինքնին վկայում է, որ նա և իր ազգակիցները ապահով վիճակում չեն և մտածում են իրենց ինքնապաշտպանութեան մասին (1913, 22 ապր.): «Հայն ալ կամաց կամաց կը սկսի այն համոզումն ունենալ, որ առանց զէնքի, առանց ինքնապաշտպանութեան մենք մեր գլուխը պիտի չկրնանք անվնաս պահել»,- գրում էր Ավոն (1913, 23 ապր.): 1912–1913 թթ. «Դաշինքը» բռնում է սթափ և գործնական դիրք՝ ստեղծված անտանելի պայմաններում ժողովրդի ինքնապաշտպանութեան խնդիրը համարելով կարևոր գործ: Թևրիճն առաջադրում էր սպասվող արհավիրքներին ազգովին նախապատրաստվելու հարցը: Եվ այստեղ է, որ տեսնում է բազմաթիվ խոչընդոտներ, որոնք ըխում են ազգի, նրա ներկայացուցիչների տարբերթացութիւնից, ներհակ շահերը բացարձակացնելուց և առհասարակ, անմիաբանութիւնից: Հենց այս անմիաբանութիւնն էր պատճառը, որ, ինչպես նկատում է Զ. Կիրակոսյանը, «ճարպկորեն

[1] Թուրքական մամուլը չարախինդ մեկնաբանություններ էր տալիս այդ պատահարին՝ հայերին դիտելով իբրև սպառնալիք՝ պետության և իսլամ տարրի դեմ: Իսկ երբ այդպիսի մի միջադեպ եղավ Հաճընում՝ պայթյունը որոտաց Ութուրաք Ալիի տանը (սա ռումբ էր պատրաստել իր կնոջ հետ՝ հայերի դեմ գործածելու նպատակով), թուրքերը փորձեցին մեղքը բարդել հայերի վրա, պնդելով, թե նրանք ծխնելույզով են ռումբն իջեցրել Ալիի տուն: Հաճընում այս առթիվ ձերբակալվեցին մի խումբ հայեր (1913, 30 մյս.):

օգտագործելին երիտթուրքերը՝ իրականացնելու իրենց մահաբեր հակահայկական ծրագիրը»[1]:

Այսուհանդերձ, երիտթուրքերի չովինիստական գաղափարներն ու քաղաքականությունը առավել կտրուկ և հիմնովին դատապարտեց Ս. Պարթևյանը: «Դաշինքի» այս խմբագիրը ամենից առաջ մերկացնում էր երիտթուրքերի խոսքի և գործի հակասությունը, նրանց ամբոխավարությունը: Հպատակ ազգերի կեղծ համերաշխության ձևակերպումներով քողարկված՝ նրանք ամենուրեք հալածանք ու բռնություններ են կիրառում հայերի և մյուս հպատակ ժողովուրդների նկատմամբ (1910, 9 ապր.): 1910 թ. մարտին կամ դրանից ոչ շատ առաջ Ս. Պարթևյանը դրեց «Բանտուածները» խմբագրականը, որտեղ Ադանայի դեպքերը համարում էր երիտթուրքերի իսկական դեմքը մերկացնող իրադարձություններ, նրանց նկատմամբ կեղծ պատկերացումների ու պատրանքների վերացման պատճառ: Ջմյուռնիայի թուրքական իշխանությունները չկարողացան հանդուրժել հրապարակախոսի այս կարգի մերկացումները: Դեռևս պահպանելով «սահմանադրականի» դիմակը, նրանք դատի տվեցին խմբագիր Ս. Պարթևյանին և տնօրեն Հ. Մամուրյանին (1910, 21 ապր.): Մեղադրականի հիմք էին դարձել վերոհիշյալ խմբագրականի հետևյալ տողերը. «Սահմանադրությունը, սակայն, այդ պատրանքն ալ (արդարության – Ա. Խ.) չի ձգնց մեզի: Կիլիկեան զարհուրելի կոտորածներէն ետքը օսմանեան արդարութիւնը բանտերը հայերով լեցուց» (1910, 17 մյս.):

«Դաշինքի» փաստաբան Սերովբե Դավթյանը հմտորեն պաշտպանեց Ս. Պարթևյանին՝ շնշոը դնելով երիտթուրքական հեղաշրջումից հետո իրենց ակնկալիքները չբավարարած օսմանյան հպատակների քաղաքական ու հասարակական հուսախաբությունների վրա: Ադանայի դեպքերը ևս փաստաբանը ներկայացնում էր իբրև հին իսթիբդաթի (Համիդյան բռնակալության) և էշրաֆի (վերնախավի) հրահրած գործ, սակայն, իրականում նրանց վերագրելով

---

[1] Киракосян Дж. С., Младотурки перед судом истории, с. 164.

այնպիսի գործողություններ, ինչպես օրինակ, կանոնավոր գործերը հայերի դեմ հանելը, որպիսիք կարող էին կատարել միայն երիտթուրքական դևկավարները (1910, 18 մյս.): Դատավարությունը տևեց ավելի քան երկու ամիս, սակայն, որքան էլ մեծ լիներ «Դաշինքն» ամբաստանողների ցանկությունը, դատարանը կայացրեց արդարացման վճիռ: Դատավճռում ասվում էր, որ Ս. Պարթևյանի վերոհիշյալ հոդվածը «զրպարտիչ հանդամանք» չունի, սակայն «Օսմանեան արդարութիւնը բանտերը հայերով լեցուց» պարբերութիւնը անուանարկութիւն նկատելով տպագրական կանոնաց 28-րդ յոդուածին... համաձայն, վերոյիշեալները (թերթի խմբագիրը և տնօրենը – Ա. Խ.) մէյ մէկ օսմ. ոսկի տուգանքի և միևնոյն կանոնի 12-րդ յոդուածին համեմատ՝ ներկայ որոշմանագիրը իրենց թերթին մէջ հրատարակելու և 170 ղրչ. դատական ծախքը վճարելու կը դատապարտուին» (1910, 5 հլս.):

Ակներև է, որ այս դեպքում դատարանը փորձում էր մուսացության մատնել կիլիկյան դատական ֆարսերի մասին դևռևս թարմ հիշողությունը:

Ազգի անմիաբանությունը քննադատելիս «Դաշինքը» հանդես է բերում որոշակի ծայրահեղություններ, ինչպես՝ ազգային զգացումի զրեթե չգոյությունը նրա մեջ, փոխադարձ օգնության դիտակցման պակասը և այլն: Լ. Մկրտիչյանը ազգի ընդերքում հայտնաբերում էր «բարոյական աններելի թերութիւններ», իսկ «Հայ լրագրութեան դերը քաղաքական կեանքին մէջ» հոդվածում ընդգծում էր, որ «Հայ լրագրութիւնը չէ կրցած ունենալ հայ քաղաքական կեանքին, իրրեւ առաջնորդող» և որ, ի վերջո, «ցեղ մը կունենայ նոյն մամուլը, որուն արժանի է» (1911, 2 հնվ.):

Հոռետեսությունից ծնված այս մտքերը, թվում է, ոչ միայն արևմտահայության տագնապալի կացությունից էին բխում: Այստեղ նշանակություն կարող էին ունենալ հայ քաղաքական կյանքի հեղհեղուկ վիճակը, մինչև բամբասանքների մակարդակի հասնող երկխոսությունները և ապա զվռտոցները, որոնք չարունակ-

վում էին ազգային կուսակցությունների միջև. Զմյուռնիայի գավառական վարչությունում՝ դրա երեսփոխանների ընտրություններ ժամանակ և այլն: Հավանաբար, վերոհիշյալ կամ նման տեսակետները «Դաշինքում» ընդգծվելն էր պատճառը, որ սահմանադրական ռամկավարների «կեդրոնական ակումբի» անունից հանդես եկած Վ. Մալեզյանը հայտնում էր, որ իրենց կուսակցությունը որևէ պատասխանատվություն չի կրում այդ թերթում ոչ պաշտոնական նյութերի (այդ թվում և Երուսաղեմի խնդրի կարգավորման վերաբերյալ) հրապարակման համար (1911, 15 սպտ.): Այդ նշանակում էր նաև, որ սահմանադրական ռամկավարները մի հայտնի չափով սահմանազատվում էին «Դաշինքից»:

Համախմբված և միևնույն նպատակին հետամուտ ազգի գաղափարն էր պաշտպանում Ս. Պարթևյանը «Ազգաշինութիւն» հոդվածում, որտեղ, որպես չարիք, առանձնացնում է կուսակցությունների երկպառակությունները և միջկուսակցական չդադարող պայքարը: Կուսակցությունները, ըստ նրա, ձգտում են կառավարել ժողովրդին և ոչ թե առաջնորդել նրան (1910, 8 օգ.):

Ինքը՝ Ս. Պարթևյանը և նրա հետ «Դաշինքն» ու իր համախոհները միջկուսակցական ու պայքարի ակտիվ մասնակիցներից էին: Հայտնի են նրանց ընդհարումները Դաշնակցության հետ, թեև վերջինն էլ, իր հերթին, մտադիր չէր դադարեցնելու իր հարձակումները սահմանադրական ռամկավարների և հնչակների դեմ՝ ազգային քաղաքական ու գործնական հարթություններ գրեթե բոլոր ոլորտներում՝ սկսած ազգային կառույցներում գերակշիռ դիրքեր հաստատելուց մինչև օսմանյան խորհրդարանական ներկայացուցչություն և երիտթուրքական իշխանությունների հետ վերաբերմունքի ու գործելակերպի հիմնահարցեր: Գծվել էր կախարդված մի շրջան, որից որևէ կերպ ի զորու չեղան դուրս գալու ազգային կուսակցությունները. ազգային համերաշխությունը իդեալ դարձրած կուսակցությունները հատկապես գործնական հարաբերություններում քիչ չանքեր չէին թափում այդ նույն համերաշխությունը ընդամենը քամու տակ պարող դրոշ դարձնելու համար:

Այդ էր պատճառներից մեկը, որ Հայուհյունը 1912–1914 թթ. առարկայական դարձած ցնղասպանության նախանշանների ու սպառնալիքի առջև շատ ավելի անպատրաստ գտնվեց, քան կարելի է ենթադրել: Բոլոր դեպքերում «Դաշինքի» համար այդպիսի համագործակցությունը մնում էր երազականի հեռավոր սահմաններում և սա այն դառը եղրակացությունն էր, որ հաճախ էր չրջանառվում Զմյուռնիայի այս հրատարակության էջերում:

«Դաշինքի» հրապարակումներում առկա է վերոհիշյալից բխող՝ անհաշտ վերաբերմունքը պատրիարքարանի նկատմամբ, որը 1909 թ. հետո գտնվում էր Դաշնակցության զգալի ազդեցության ներքո: Դրանից ելնելով Ս. Պարթևյանը քննադատում էր պատրիարք Ե. Դուրյանի կրավորական ընթացքը այն ժամանակ, երբ պատրիարքը փորձում էր Կ. Պոլսի ընդհանուր ժողովում հաշտության մղել Դաշնակցությանն ու հնչակներին (1910, 11 սեպտ.): Նույն կերպ, Ս. Պարթևյանը, հենվելով թուրքական մամուլի հաղորդումների վրա, հարձակման թիրախ էր դարձնում Գր. Զոհրապին՝ նրան համարելով դաշնակցության անդամ և նկատելով, թե, իբր, նա հայությանը ներկայացրել է իբրև ազատության ու անդորրության և սահմանադրական վարչակարգում ապրող համայնք (1910, 16 հկտ.): Ս. Պարթևյանը, անկասկած, տաղանդավոր և ազդեցիկ այդ հրապարակախոսը, Զոհրապին դնահատելիս գործի էր դնում իր ներկապնակի քմահաճ ու թանձր դույները՝ չզսպելով կուսակցական իր կրքերը: Բանը միայն հույժ կասկածելի, թուրքական մամուլից արած մեջբերումները չէին. արդեն այն, որ Զոհրապը չէր թաքցնում իր քննադատական վերաբերմունքը կղերի կամ մեծ ազգության հետ դաշնակցող ազատամիտների նկատմամբ, Ս. Պարթևյանին մղում էին նրան դիտելու որպես անհաշտ հակառակորդի: Ինքը՝ Ս. Պարթևյանը, հերքում էր սահմանադրական ռամկավարների վրա Զոհրապի հիշատակած խավերի ազդեցությունը, նշելով, որ Զոհրապի ակնարկը դեռևս չի ապացուցում, որ իրենք հրաժարվել են իրենց ազատական սկզբունքներից (ն. տ.):

«Դաշինքը» հաճախ է միացնում պատրիարք Ե. Դուրյանի և Դաշնակցության դեմ ուղղված իր քննադատությունները՝ պատրիարքին համարելով այդ կուսակցության դրածոն, և մեկին, և մյուսին մեղադրելով ազգային գործերը անկարգ վիճակի մեջ թողնելու, դավաճի անտերունչ կացության համար: Թերթն «Արևելքից» արտատպեց այս ոգով գրված Ե. Օտյանի հոդվածը՝ «Պատրիարքը սկտոք է հրաժարի» վերնագրով (1910, 1 հկտ.): Նույն բովանդակությունն ուներ Լ. Մկրտիչյանի հոդվածը (1910, 4 հկտ.) և այլն, որ պետք է դիտել Դաշնակցության դեմ սահմանադրական ռամկավարների բանավեճի համատեքստում: Վ. Մալեզյանը՝ ռամկավարների մեջ հեղինակություն վայելող այդ գործիչը, իր հերթին հանդես եկավ Դաշնակցության դեմ՝ հատկապես նկատի ունենալով Կ. Պոլսի դաշնակցականների հարձակողական գործողությունները իրենց հակառակորդների դեմ (1910, 19 նոյ.): «Դաշինքում», սակայն, ՀՅԴ ամենահետևողական ընդդիմախոսը մնում էր Ս. Պարթևյանը, որն անդրադարձել է Կ. Պոլսի ազգային ժողովում դաշնակցականների և նրանց հակառակորդների ընդհարումներին, անշուշտ, առաջինների համար ոչ չահեկան դրվագներով ու դրանցից բխող եղրակացություններով հանդերձ (1910, 31 մրտ.):

Շատ ավելի արժեք ունեն «Դաշինքի» հրապարակումները, հատկապես բանավիճային և մերկացնող այն նյութերը, որոնք ուղղված են թուրքական մամուլի դեմ և նպաստում են ընկալելու այն իրողությունը, որ այդ մամուլն իր լրատվությամբ, քաղաքական ու գաղափարական ուղղվածությամբ նախապատրաստում էր թուրքական հասարակական կարծիքը հայերին կայսրության ու մահմեդականության թշնամի պատկերելու գործում: Թուրքական մամուլի հակահայկական հարձակումները նոր թափ ստացան Ադանայից և հատկապես միջազգային դիվանագիտության մեջ Հայկական հարցի վերարծարծումից հետո, 1912–1913 թթ.: Թերթն արձագանքում էր Զմյուռնիայի թուրքական մամուլի՝ «Քյոյլու» և «Անատոլու» թերթերի այն հրապարակումներին, որոնցում հայերը մեղադրվում են տերության հանդեպ անհավատարիմ ընթաց-

քի, ապստամբական մտադրությունների և այլնի մեջ: Այս հանկերգը թուրքական մամուլը թարմացրեց նոր մոտիվներով, երբ Ռուսաստանը և Գերմանիան բանակցություններ էին սկսել բարեկարգումների շուրջ: Եթե 1879–1880 թթ. թուրքական մամուլը ժխտում էր «Հայաստան» աշխարհագրական տարածքը, այն փոխարինելով «Քրդստան» պիտակով, ապա 1912–1913-ին արդեն ժխտում էր նույնիսկ հայ ազգի գոյությունը՝ հայերին համարելով քրդեր: «Դաշինքը» քանիցս պետք է մերկացներ այդ կեղծիքը, որ մասնավորապես ճգնում էր հիմնավորել թուրքական «Բայրաքտար» թերթը՝ ի դեմս իր խմբագիր Ռիֆաթ Մեվլան զադեի: Ավոն իր «Հայաստան չկա եղեր... Հայերը քիւրտ են եղեր» խմբագրականում (1913, 23 հնվ.) մերկացնում էր նրա հորինած փաստարկները: Մեվլան զադեն վկայակոչում էր հայերի թվաքանակը աներևակայելիորեն նվազեցնող՝ սուլթան Համիդի փաստարկը, այն, որ 5–6 միլիոն քրդերի մեջ կա ընդամենը մի քանի հարյուր հազար հայ, իսկ այս դեպքում Քրդստանը չէր կարող Հայաստան դառնալ: Հայաստան անվանումը, չարունակում էր իր հերյուրանքները Մեվլան զադեն, իրականում հորինել է Անգլիան՝ Ռուսաստանի դեմ պատվարի դեր ունեցող պետություն ստեղծելու նպատակով:

«Դաշինքը» նկատում էր Բ. դռան կողմից քրդական խաղաթուղթը վերստին խաղարկելու դիվանագիտական նկատառումները: «Հայաստանի բարեկարգումների խնդիրը ձեռք առնուելու տեղ,- նկատում էր թերթը,- պէտք է եղեր Քիւրտիստանի համար գործադրուելիք օրէնքները նախ քիւրտերուն, ապա հայերուն տալ եւ թէ պէտք է եղեր, որ Բ. դրան խորհրդակցութեանց հայերուն հետ քիւրտ մտաւորականներն ալ մասնակցին» (ն. տ.):

«Դաշինքի» բողոքը, հիրավի, հրատապ նշանակություն ուներ. իրենց հակահայկական հրապարակումներում թուրքական թերթերը հաճախ բանը հասցնում էին անհեթեթության: Թուրքական ազդեցիկ «Սեբրեսթ» թերթը, օրինակ, ճգնում էր ապացուցել, որ հայերը առանձին ազգ չեն, այլ սերում են քրդերից (1913, 6 հնվ.): Այսպիսի հարձակումները հայերի դեմ անսքող ու անսանձ էին

դարձել 1913 թ. գարնանից, երբ այլևս, դարձյալ կասլված Հայկական հարցի միջազգային զարգացումների հետ, Կ. Պոլսի թուրքական թերթերը՝ «Թանին»-ը, «Թասվիր-ի էֆքյար»-ը, «Թերճեմանը հագըգաթ»-ը և մյուսները ուղղակի սպառնալիքներ էին տեղում հայերի վրա՝ ամեն կերպ ձգտելով խուժանին հրահրել նրանց դեմ: Ջարդի կոչերին համընթաց, նկատում էր «Դաչինքը», թուրքերն ու քրդերը զինվում են ոչ միայն Արևմտահայաստանում, այլև անդամ Ջմյուռնիայի շրջակայքում՝ Մեննեմնում, որի առջև աչք են փակում թուրքական թերթերը: Երզնկայում մոլլաները բացահայտորեն ջարդի կոչեր էին անում, իսկ Քղիում դեռևս 1913 թ. հունվարին հայերին բնաջնջելու դրավոր կոչեր էին փակցվում (1913, 13 հնվ.): Ավոն նշում էր, որ Կ. Պոլսում թուրքական մամուլը լեփ-լեցուն է հայերի դեմ ուղղված սպառնալիքներով, որի մի օրինակն է մեջբերում. «Եթէ գործը ծայրահեղութեան հասցնենք... բոլորդ մեծով պզտիկով կսպաննենք, և երնեկ կուտաք հին ջարդերուն» (1913, 14 նոյ.): Երիտթուրքական «Թասվիր-ի էֆքյարը» առաջարկում էր հայերին՝ ձեռք քաշել Հայկական հարցից, հակառակ դեպքում դրա «հետեւանքները ահաւոր և փոթորկալից պիտի ըլլան» (1913, 26 դկտ.): 1914 թ. «Դաչինքը» տագնապով արձանագրում էր, որ թուրքական մամուլի գրգռիչ հրապարակումներն առավել ազդեցիկ են գավառներում և որ այնտեղ կացութիյունը հետզհետե անկառավարելի է դառնում (1914, 1 հնվ.): «Դաչինքը» վկայակոչում էր «Ռուսսկոյե սլովո» թերթը, ըստ որի, երիտթուրքական կոմիտեն մեծ ջարդ է կազմակերպում և այս նպատակով հատուկ խմբեր է ուղարկում գավառներ. «Խնդիրը այնտեղ է հասեր,- գրում էր այդ թերթը,- որ երիտասարդ թուրքերու պատուիրակները կը շրջին Հայաստան և խորհուրդ կուտան բոլոր մահմէտականներուն՝ ձեռք բերել ճերմակ փաթիոց և ճերմակ փէսեր, որպէսզի անոնցմով միւսիւլմանները տարբերին ուրիշ կրօնի պատկանողներէն: Ջարդարարի գործուն դերը պիտի ստանձնեն քիւրտերը, որոնք վերջերս մեծաքանակ ղէնք են ստացել» (1914, 16 հնվ.):

Թուրքական թերթերը սպառնալիքների հետ միասին դործի էին դնում նաև հորդորական ոճը՝ բարենորոգումների հարցում հայերին ապակողմնորոշելու և զիջողամտություն ներշնչելու նպատակով: Բարենորոգումների շուրջ ռուս-գերմանական համաձայնագրի նախօրեին երիտթուրքերը փորձեցին Ռուսաստանի և մյուս տերությունների ուշադրությունը շեղել՝ հայերի հանդեպ իրենց կեղծ բարյացակամության ցույցերով, ներքին գործերի նախարար Թալեաթն ընդունել էր պատրիարքին և խոստացել, որ օսմանյան խորհրդարանում հայերին 20 տեղ կհատկացվի: Ինչ-որ չափով այս ամենը լավատեսական տրամադրություններ էր հաղորդում «Դաչինքին»: «Ազգային հորիզոնը կը պայծառանայ» խմբագրականում (1914, 14 փետ.) Ավոն հայտնում էր, որ հաջողությամբ են ավարտվել հայաբնակ վիլայեթների շուրջ բանակցությունները: Թերթը տպագրեց դրան համապատասխան ռուս-թուրքական համաձայնագրի տեքստը, որ ստորագրել էին մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշան և ռուս դիվանագետ Դուլկևիչը՝ 1914 թ. հունվարի 26-ին (փետրվարի 8-ին)[1]: Այս համաձայնագրով Արևմտյան Հայաստանը բաժանվում էր վարչական երկու շրջանների, յուրաքանչյուրում՝ Յ-ական նահանգ, գործելու էր Ազգային սահմանադրությունը, բարենորոգումներն իրականացվելու էին տերությունների առաջադրած կոմիսարներ Վեստենենկի և Հոֆի վերահսկողությամբ: Հայտնի է, որ թուրքերն իրենց ընդունած հրահանգներով ու գործնակերպի նորմերով փաստորեն վիժեցրին կոմիսարների ինքնուրույն գործելու ամեն մի հնարավորություն, որով վերջիններս պրեթե ամբողջովին պետք է դառնային երիտթուրքական կառավարության կամակատարները: Վրա հասած առաջին աշխարհամարտը (1914 թ. օգոստոսի 1) արձակեց Թուրքիայի ձեռքերը՝ արևմտահայության բնաջնջումն իրականացնելու համար: Սակայն մինչ

---

[1] Համաձայնագրի տեքստը՝ «Հայկական բարենորոգումները (Համաձայնագիր 1914 յունուարի 26-ի)» վերնագրով և «թարգմանուած պաշտօնական (ֆրանսերէն) բնագրէն», տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 60: Տե՛ս նաև Պողոսյան Ս., Պողոս Նուպար փաշա, Ազգային գործիչը, էջ 77:

այդ, 1914 թ. սկզբներից, «Դաշինքի» էջերում զգացվում են լավատեսական տրամադրություններ: Դրան չխանգարեցին անգամ այն խոչընդոտները, որոնց հետևանքով ռուս-գերմանական համաձայնագիրն այդպես էլ ի զորու չեղավ հիմք դառնալ բարենորոգումների համար: Միաժամանակ, «Դաշինքը» արտատպումներ է արել Զմյուռնիայի թուրքական մամուլից («Բյույուկ», «Անատոլու»), որտեղ արհամարհական բնութագրեր են տրվում համաձայնագրին և ընթերցողին թելադրում այն միտքը, որ Թուրքիան թույլ չի տա որևէ միջամտություն իր ներքին գործերին: Հատկապես «Անատոլուն» իր ստոր լրատվությունը հասցրել էր այնտեղ, որ զմյուռնացի քահանա Թահմիսյանին զրպարտել էր, թե նա, իբր, հայերին ու հույներին կոչ էր արել դասալքել (1914, 21 փետ.): Հերյուրանքը պարզելուց հետո քահանային ազատ էին արձակել, բայց սադրիչ թերթն արել էր իր գործը՝ հայերի ու հույների դեմ լարելով Զմյուռնիայի և շրջակայքի թուրքական ազգաբնակչությանը: Վերջինս, ի դեպ, վաղուց էր կուտակել իր ատելությունը նախ հույների, ապա հայերի դեմ առևտրական բոյկոտ իրականացնելով նրանց նկատմամբ: Իրադարձությունների ընթացքին հակամարտության և ապա օսմանահպատակ հույների դեմ ուղղված բացահայտ թշնամանքի բնույթ տվեցին Թուրք հունական լարված հարաբերությունները և ի վերջո, Բալկանյան պատերազմները: Դեռևս 1910 թ. սկզբներից սկսվելով և նախապես ուղղվելով կայսրության հույն առևտրականների դեմ, բոյկոտը լայն ծավալներ ստացավ հատկապես Զմյուռնիայում և կից տարածքներում, որտեղ առանձնապես զգալի էր հույների տնտեսական ազդեցիկ նշանակությունը: Հույների բողոքներին իշխանությունները պատասխանեցին կարուկ գործողություններով: Նույն թվականի հունիսին փակվեցին հույների դինետները, սրճարանները և գարեջրատները: Երկու ամսով բանտ նետվեց «Ամերո լիպտոս» հունական թերթի տնօրենը՝ «իշխանությունների դեմ ոչ վայելուչ լեզու գործածելու» մեղադրանքով (1910, 28 հնս.): Զմյուռնիայում իրականացվում էին բոյկոտի ձևերի ու մեթոդների մշակման և ուսուցման

եղանակներ, հրատարակվում էին գրքույկներ, կոչեր և այլն, ստեղծվել էին բոյկոտն ուղղորդող խմբեր, որոնք հսկում էին շուկաների առևտուրը: Վերջիններս, ի դեպ, ոչ քիչ դեպքերում ծնծուղարդ էին տալիս հույների հետ միասին, նաև հայերի ու այլ քրիստոնյաների հետ առևտուր անող թուրքերին: Այս կարգի միջոցառումներ արձանագրվեցին Զմյուռնիայում և Մենեմենում (1914, 14 մրտ.), որ 1914 թ. գարնան վերջին ու ամռանը վերաճեցին հույներին սպանելու, նրանց տները բռնագրավելու և բնակավայրերից արտաքսելու համատարած ելևէջների: 1914 թ. երիտթուրքերը Զմյուռնիայից և շրջակայքից աքսորեցին 40 հազար հույների՝ նրանց տներում տեղավորելով Մակեդոնիան լքած թուրքերին[1]: Դրանից հետո ևս թուրքական մամուլը շարունակում էր խրախուսել հույների տեղահանումը և բոյկոտի ընդլայնումը, դրանց իրականացման վայրագ մեթոդներն անվանելով «իսլամներու տնտեսական զարգացման և զարթնումին համար առնված միջոց մը» (1914, 14 մրտ.): Հունիսին թուրք ամբոխը հարձակվել էր Զմյուռնիայի, Եփեսոսի, Զիֆթլիկի, Ուլուճադի և այլ բնակավայրերի հույների տների վրա, կողոպտել կամ հրդեհել դրանք: Մեկ տասնյակից ավելի հունարենակ դյուղեր՝ Պերկի, Ալաչաթա, Պոյաճըդ և այլն, ամբողջովին թալանվել և վերածվել էին ավերակների: Դրանց բնակչությունը, մոտ 15 հազար մարդ, գաղթել էր Քիոս: 1914 թ. հունիսին 6 հազարի չափ հույն գաղթականներ էին կուտակվել Ենի Լիմանի շրջակայքում, Մենեմենում՝ 4 հազար: Միայն Զեշմեի շրջանակից գաղթող հույների թիվը, ըստ «Դաշինքի», հասնում էր շուրջ 49 հազարի, որից 6 հազարը սպասում էր նավերի՝ էգեյան կղզիներ մեկնելու համար (1914, 17 հնս.): Թալանածը կեղծավորաբար ցավակցություն էր հայտնում հունաց միտրոպոլիտին՝ խոստանալով ամենակարճ ժամկետներում վերահաստատել անդորրն ու կարգը Զմյուռնիայում և կից շրջաններում: Անհանգստանալով այս ամենի միջազգային արձագանքներից, Թա-

[1] Տե՛ս Կիրակոսյան Ա., ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և արևմտահայությունը (19-րդ դար –1914 թ.), էջ 360:

լևաթը ժամանել էր Զմյուռնիա՝ ինչ-որ չափով իրադրությունը կարգավորելու նպատակով (ն. տ.): Ցուցադրաբար դադարեցվեցին «Անատոլու» և «Ջյոյլու» թերթերը, ինչպես և չարդարարներին խրախուսող «Լա ռեֆորմ» ֆրանսերեն թերթը: Թուրքերն այս անգամ ևս, ինչպես լինում էր նման դեպքերում, ձերբակալեցին նաև ղոհերի՝ Բարա Սկալայում բնակվող մի քանի անմեղ հույների, որոնք ազատ արձակվեցին վալի Ռահմի բեյին ուղղված՝ միտրոպոլիտի համառ դիմումներից հետո (ն.տ.): «Դաչինքը» տեղեկացնում է, որ բոյկոտը տարածվում է նաև հայերի վրա, կանգ էր առել հայ խանութպանների առևտուրը, իսլամները դադարեցրել էին իրենց դնումներն այդ խանութներում: 1914 թ. սկզբներին Մանիսայում թուրքերը չրջափակեցին հայ մանուսայագործների արհեստն ու առևտուրը՝ արգելելով շուկայում վաճառել նրանց արտադրանքը (1914, 10 մրտ.): Բողոքներին իշխանությունները պատասխանեցին լռությամբ, իսկ «Անատոլու» թերթը՝ բողոքների իմաստը նենգափոխելով. «Պոլսոյ պատրիարքարանները,- մեջբերում էր «Դաչինքն» այդ թերթից,- իրենց չարունակական բողոքներու առանցքը ու կռուանը ընտրած են պոյքոթը ու այդ կերպիւ կը ջանան միշտ օսմանցի տարրերուն միջեւ երկպառակութիւն առաջ բերել» (1914, 15 հլս.): «Դաչինքի» էջերում (հատկապես «Նա»-ի՝ «Հայելիին մեջ» վերնագրով հրապարակումներում) կարևի է հանդիպել ատելության ու թշնամանքի այն մթնոլորտի նկարագրությանը, որ թուրք ազգաբնակչության մեջ հասցրել էր ստեղծել երիտթուրքական քարոզչությունը ընդդեմ հույների և հայերի:

*
* *

«Դաչինքը» բավական հարուստ նյութեր է պարունակում զմյուռնահայ իրականության, կրթական-մշակութային ու հասարակական կյանքի վերաբերյալ: Ուշագրավ տեղեկություններ կան ժամանակի պավառական վարչության, առաջնորդի ու նրա գոր-

ծունեութեան, կուսակցութիւնների ու դրանց փոխհարաբերութիւնների, կրթական ու բարեսիրական ընկերութիւնների և ազգային հաստատութիւնների մասին: «Ազգային անցուդարձ», «Տեղական լուրեր» և այլ խորագրերի ներքո թերթը ավելի կամ պակաս ծավալներով հաղորդում էր իր ընթերցողի հետաքրքրութիւնները: Տպագրվել են նաև առանձին վերլուծական հոդվածներ ազգային կառույցների մասին՝ քննադատական ուղղվածութեամբ: Թերթն առաջնորդվում էր այն ընդհանուր մտայնութեամբ, որ այդ կառույցները կոչված են նպաստելու զմյուռնահայերի սոցիալական ու մտավոր կյանքի զարգացմանը՝ նրանց միջև եղած հակասութիւնները մեղմացնելու կամ կանխելու միջոցով, ազգային համախմբվածութեան հիման վրա: «Դաշինքի» աշխատակից Հ. Զիլինկիրյանը կարևորում է զմյուռնահայ հարուստների ազգասիրական եռանդը՝ առաջին հերթին նկատի առնելով նրանց հնարավորութիւնները անապահով խավերին աշխատանք տրամադրելու հարցում: «Հայ արհեստաւորաց դասը» հոդվածում նա դժգոհում էր այն հայ հարուստներից, որոնք աշխատանքի են վարձում այլազգիներին՝ չատ ավելի էժան գնով, քան իրենց ազգակիցներին: Այս հեղինակը, նշրակացնում է, որ բուն Զմյուռնիայում, հայերի մեջ, ի տարբերութիւն հույների կամ հրեաների, պակասում է ազգասիրութիւնը, փոխօգնութեան զգացումը (1910, 20 ապր.): Գրեթե նույն խնդիրն է շոշափում Ս. Պարթևյանը, որը քննադատում է հայ հարուստների վերաբերմունքն ազգային դպրոցի հանդեպ: Բարեկեցիկ դասն իր զավակներին հայկական դպրոց չի տալիս, որի հետևանքով նրանք հայտնվում են օտար կրթօջախներում զուրկ մնալով ազգային դաստիարակութիւնից: Ս. Պարթևյանն առաջադրում է նոր ազգային դպրոցի գաղափարը, որը կպոհացներ հատկապես միջնակարգ դպրոցի ներկա պահանջները: Գավառացի երեխաների համար նա նախատեսում էր պիշերօթիկ վարժարան՝ նույն ծրագրի շրջանակներում (1910, 28 հլս.): Իրենք՝ զմյուռնահայ դպրոցները չէին կարող պարծենալ իրենց նյութական կարողութիւններով, որ չլաւում էր նրանց արդիականացմանը: 1911 թ.

Զմյուռնիայում գործում էին 1000-ից ավելի աշակերտով երկք վարժարաններ (որոնց մեծագույն մասը բաժին էր ընկնում Ս. Մեսրոպյան և Ս. Հուիփսիմյան ավանդական դպրոցներին): Սրանց տրվում էր ընդամենը 2 հազար ոսկի, մինչդեռ, թերթի հաշվարկներով, փոքրիշատե կանոնավոր ուսուցման համար անհրաժեշտ էր գոնե դրա կեսի չափ ևս (1911, 18 օգ.): Նոր դպրոցի հիմքում «Դաչինքը» դնում էր ոչ միայն նոր հանրակրթական առարկաները, այլև գործնական ուսուցումը զարգացնելու հարկը, բարոյաղաստիարակչական ծրագրերի յուրացումը, ձեռնհաս ուսուցիչներով դպրոցը համալրելու խնդիրը և այլն (1911, 27, 28 սպտ.): Թերթը կործանարար էր համարում կուսակցական կրքերի տեղափոխումը դպրոց, տեսուչների կամ ուսուցիչների աշխատանքի դնահատումը ըստ կուսակցական նախասիրությունների: Այս հանգամանքը, իրոք, մտահոգիչ էր 1910-ական թթ. զմյուռնահայ իրականության համար: Իր «Դաչինքի» և Դաշնակցության միջև ընթացող գաղափարական տարաձայնությունները, որոնք սրվում էին իշխանությունների հանդեպ վերաբերմունքի տարբերություններից, ինչպես և Կ. Պոլսի պատրիարքարանի գործունեության, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության հանդեպ տարբեր մոտեցումներից (թերթի գործիչները, ինչպես և սահմանադրական ռամկավարները, լիովին պաշտպանում էին այդ ընկերության ծրագիրն ու գործունեությունը), տարիների ընթացքում չէին գադարում: Զմյուռնիայի Ազգային ժողովում ևս սուր պայքար էր ընթանում այս կուսակցությունների միջև ընտրություններում հաղթելու համար: Սահմանադիր-ռամկավարները շատ ավելի ակտիվ դաշնակցականների հետ անախորժ միջադեպերն ու ընդհարումները[1]

[1] Կուսակցական կրքերը բորբոքվում էին հատկապես եկեղեցիներում կազմակերպված միտինգներում: Կարողիկոս Մ. Իզմիրլյանը իր՝ Թուրքիայի հայ եկեղեցիներում հանրահավաքներն ու ժողովները արգելելող իր կոնդակի առթիվ Կ. Պոլսի պատրիարք Ե. Դուրյանին ուղղած նամակում (1910, 11 նոյեմբերի) նշում էր դրանց ծանր հետևանքները: Հատկապես որ այդպիսի հավաքները ընդհարումների պատճառ են դառնում: Կատարվում են, գրում է կաթողիկոսը, անգամ «ապանուրիւնք, որպիսիքն են դառնադէտ մահք երկուց երիտասարդաց ի Զմիւռնիա»: Նման անկար-

կանխելու, և ոչ պակաս չափով իրենց դիրքերն ամրապնդելու նպատակով կազմակերպեցին «ժողովրդական միության ակումբը», որն իրեն անվաննց «Սահմանադրական-ռամկավար կուսակցության Իզմիրի մասնաճյուղ» (1910, 2 հնս.): Ըստ երևույթին, այդ կուսակցությանն այլ բան չէր մնում, քան համախմբվելը: 1910 թ. մայիսին դաշնակցականների ճնշման տակ իր պաշտոնից հրաժարվեց նրանց չգոհացնող Զմյուռնիայի առաջնորդական փոխանորդ Ա. Վեհունին, որ առաջացրնց «Դաշինքի», հատկապես Ս. Պարթևյանի խորին դժգոհությունը: Դրանից հետո էլ ավելի խորացավ միջկուսակցական նշված պայքարը: «Դաշինքը» տպագրնց արապկերցի ոմն Արշո Ուրախննցի սպառնալի նամակն ընդդեմ Թերթի խմբագիր Ավո Պեյլերյանի և տնօրեն Հ. Մամուրյանի՝ Դաշնակցության դեմ ուղղված հրապարակումները դադարեցնելու պահանջով (1911, 24 սեպտ.): Այս շրջանում սահմանադրական-ռամկավարները իրենց պաշտպանության տակ էին առել Դաշնակցության հակառակորդ բարձրաստիճան եկեղեցականներին՝ նախկին պատրիարք Մ. Օրմանյանին, Երեցյան արքեպիսկոպոսին և Մուշեղ եպիսկոպոսին՝ այս ամենը ուղղելով տեղի երևոյթական ժողովի ընտրություններում Դաշնակցությանը մնկուսացնելու նպատակին:

Կուսակցությունների համագործակցության հնռանկարը, այսուհանդերձ, չարունակում էր մտահոգել «Դաշինքի» գլխավորներին, հատկապես՝ կապված ժողովրդի ինքնապաշտպանության խնդիրների հետ: 1911 թ. ամռանը Տարոնում և Վասպուրականում Հայերի հանախտակոծ սպանությունները վերջ տալու համար հայ կուսակցությունները դիմել էին օսմանյան իշխանություններին՝ ստանալու քրդերին զսպող խմբերի կազմակերպման թույլտվություն: Իր «Ինքնապաշտպանություն» հոդվածում Ս. Պարթևյանը հայտնում է, որ կառավարությունը կտրականապես մերժել է նման

գությունները, հարում էր կարողիկոսը, «խանգարեսցէ վիշխանութիւն հայոց որ ի Թուրքիա և գեղիւնակութիւն նոցին նս և զառանձնաշնորհութիւնս ու զսահմանադրութիւն ազգին գխռվին» (ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 17):

խմբեր կազմելու գաղափարը: Պաշտոնապես ծանուցվել էր, որ կառավարությունը «պատրիարքարանը պատասխանատու պիտի բռնէն, եթէ մենք համարձակինք ինքնապաշտպան միջոցներ ձեռք առնել քիւրտ վայրագութիւնները կանխելու համար» (1911, 23 Հնս.): Իրողությունը ուշագրավ է նրանով, որ կարծեք արտացոլում է արևմտահայության փակուղային կացությունը ցեղասպանության նախօրեին: Երիտթուրքերի կողմից հայերի ինքնապաշտպանական միջոցների անվերապահ արգելանքը և մյուս կողմից, ազգային կուսակցությունների միջև թշնամանքի հասնող հակասությունները ու տարաձայնությունները չլատում էին ժողովրդի ուժերը՝ մոտալուտ արհավիրքներին դիմակայելու փոխարեն:

*

* *

«Դաշինքը» մշտապես հետևում էր գմյուռնահայ ընկերությունների գործունեությանը, հարկ եղած դեպքերում սատարում դրանց և միջամտում նպաստավոր հրապարակումներով: 1900-ական թթ. Զմյուռնիայում չարունակում էր գործել «Կրթասէր» ընկերությունը, որ հիմնել էին կանայք, ընականաբար, ունևոր ընտանիքներից (Ի. Գասպարյան, Մ. Ամիրյան, Խ. Վենյան): Ընկերությունն իր գործունեության նյութական կողմն ապահովում էր բարեգործական հանդեսների, համերգների և նման այլ միջոցառումների չնորհիվ: 1911 թ. այս ընկերությունը Քարափում (գմյուռնահայ հարուստների թաղամասը) բաց էր արել մանկապարտեզ՝ հոգալով չքավոր երեխաների օթևանի և դաստիարակության գործը (1911, 24 սեպտ.): Չքավորների խնամքով էր զբաղված «Աղքատախնամ» ընկերությունը ևս, իր խնամքի ոլորտն ընդգրկելով նաև Ազգային հիվանդանոցը: «Աղքատախնամը» «աղքատ հիւանդներու դնդ, սնունդ կը մատակարարէ, աղքատ ընտանիքներու օրապահիկը կը հայթհայթէ և պանդուխտներ իրենց հայրենիքը կամ այլուր կը ղրկէ»,- գրում է Թիրքը (1911, 1 Հնս.): «Դաշինքը» քանիցս հանդես է եկել ի նպաստ այս ընկերության նյութական միջոցների և ընդգ-

ծել նրա ազգանվեր ջանքերի կարևորությունը: Շատ ավելի վոգբ ծավալներով գործում էր «Հովիսեմեան ընկերասիրաց միութիւնը»՝ ըստ հնարավորին օգնելով աղքատներին: Ջմյուռնահայ կանանց բարեսիրական ջանքերի մասին էին վկայում նաև «Տիկնանց խնամակալութիւն» ընկերությունը, որի անդամներն էին ջմյուռնահայ վերնախավի կանայք՝ Թ. Սալարթալին, Կ. Արապյանը, Մ. Աղնավուրյանը և ուրիշներ: Այս ընկերությունը ևս ուներ իր մանակապարտեզը, որի վերակացուն 1911 թ. տիկ. Տեոեյանն էր՝ ջմյուռնացի հանրաճանաչ ընտանիքից: Ընկերությունը ստանձնել էր նաև ազգային երկսեռ վարժարանների, ինչպես և Ազգային հիվանդանոցի խնամակալությունը (1911, 10 ապր., 30 հնս.): Ջյուռնացի կանայք գործակցում էին Կ. Պոլսի իրենց հայրենակցուհիների հետ: 1911 թ. կազմվեց Կ. Պոլսի «Ազգանուէր հայուհեաց ընկերութեան» մասնաճյուղը, որը նպաստում էր աղջիկների կրթությանը (1913, 12 փետ., 1911, 23 մյս.): Գործում էր «Հայ բարեգործական ընդհանուր միութեան» Ջմյուռնիայի մասնաճյուղը՝ արժանանալով «Դաշինքի» խրախուսանքին և նպաստավոր հոդվածներին: Մտահոգված ՀԲԸՄ համազգային նշանակության խնդիրներով՝ թերթը տպագրել է այդ միության վարչության անդամ Ե. Աղաթոնի և ատենադպիր Վ. Մալեզյանի նյութերը, որտեղ պարզաբանվում են նրա նպատակները, գործելակերպը, դրամական միջոցներն ընդարձակելու հնարավորությունները և այլն: Ջյուռնահայ անվանի մտավորական Մ. Նուպարյանը 1911 թ. ՀԲԸՄ-ին էր կտակել Ջմյուռնիայում ունեցած իր խանութը՝ 500 օսմ. ոսկի արժողությամբ: «Դաշինքը» տպագրել է ՀԲԸՄ ատենապետ Պողոս Նուպարի շնորհակալական խոսքը և կտակի պայմանները կատարելուն ուղղված՝ Ջմյուռնիայի մասնաճյուղին տրված հրահանգները (1911, 4 հնվ.): «Դաշինքը» լուսաբանել է նաև Ջմյուռնիայի շրջակայքի հայաբնակ վայրերի ազգային ու հասարակական կյանքը: Դրա շնորհիվ այսօրվա պատմաբանը բավական լայն տեղեկություններ կարող է ստանալ Այդընի, Մանիսայի, Մննեմենի, Քրքաղաչի, Նազիլիի, Էյդեմիշի և այլ վայրերի հայ ոչ մեծ հա-

մայնքների տնտեսական, մտավոր ու ազգային իրականության վերաբերյալ: Արժեքավոր են հատկապես «Համպեր» ստորագրության «Տեղագրական» հոդվածները, որոնք բացահայտում են այդ միջավայրի հայերի կյանքի ու կենցաղի վերջին տասնամյակի պատմությունը: Մեջբերվում են վիճակագրական տվյալներ, օրինակ, 1910 թ. Մանիսայի 35 հազարանոց ընդհանուր բնակչության մեջ հայերը կազմում են թվով 500-ից ավելի ընտանիք (1910, 27 օգ.): Մանիսայի հայերը բնակվում էին, ինչպես և 17-րդ դարում, երկու թաղերում՝ Վերին և Ներքին Մանիսաներում (1910, 17 հլս.): Ուրվագծվում է նաև Մանիսայի հայության խամրող կյանքի պատկերը: Մանուսայագործությունը, որ տնտեսական գործոն էր տեղի հայերի համար, զրկվել էր արտադրանքի երբեմնի ծավալներից՝ օտար մրցակցության հետևանքով: Մանիսացիներին աշխատանքի հեռանկարով հրապուրում էր մերձակայքի ամենամեծ քաղաքը՝ Զմյուռնիան, որ և իր հերթին խարխլում էր Մանիսայի արհեստագործության հիմքերը: Նույն Համպերի «Այտընի նահանգը» հրապարակումը տեղեկացնում է, որ վիլայեթի հայերը զբաղված են գյուղատնտեսական արտադրությամբ, մշակում են խաղող, թուզ, ձիթոն, մասամբ ներգրավված են առևտրի մեջ (1910, 21–22 հլս.): Վիլայեթի կազաներում, սակայն, երիտթուրքական իշխանությունները այդպես էլ չկարողացան վերջ տալ հարյուրամյակների պատմություն ունեցող ավազակախմբերի գործունեությանը, որը քայքայում էր տեղի տնտեսական կյանքը: 1910-ական թթ. բանն այնտեղ էր հասել, որ ավազակների դեմ պինված ջոկատներ էին կազմում իրենք՝ զինված գյուղացիները, մանավանդ այն բանից հետո, երբ օսմանյան ոստիկանական ուժերն այս հարցում ցույց էին տվել իրենց ապիկարությունը: Համպերն ուրվագծում է նաև Նազիլլիի հայերի բավական անշուք ազգային կյանքը, եկեղեցին՝ խարխուլ, դպրոցը՝ ողորմելի պայմաններում, գերեզմանոցը՝ անտերունչ (1910, 29 հնս.): Այս հեղինակը մեայլ դույներով է ներկայացնում Մանիսայի, Այդընի, Քրքաղաճի, Սյոքեի ու Մեներմենի հայերի համայնքային կյանքը, որոնք «իլարու հետ կը մրցին

միշտ դէպի ետ երթալու համար» (ն. տ.): Նազիլիի հայերը, այսու-հանդերձ, պահպանում են իրենց երկսեռ դպրոցները, մանկապար-տեզը, հավանաբար, 1910-ական թթ. դեռևս գոյատևում էր դեռևս 19-րդ դ. վերջին տասնամյակին այստեղ կազմակերպված բարեսի-րական ընկերությունը (1911, 24 մրտ.): 1910-ական թթ. Նազիլիի համայնքի վերաբերյալ նոր տեղեկություններ է հայտնում Հրանտ վարդապետը, որի տվյալները ճիշտ են թվում. հայերն այստեղ են անցել 300 տարի առաջ Պարսկաստանից (ավելի ստույգ՝ 1600-ական թթ.՝ Շահ Աբասի ժամանակներից, Արևելյան Հայաստանից), այժմ ունեն 75 տուն, այն ամենը, ինչ մնացել է երբեմնի ավելի մարդաշատ համայնքից: Այստեղ ևս զգալի է Զմյուռնիա տեղա-փոխվելու միտումը, իսկ տեղում մնացածների մի մասը արհեստա-վոր են կամ մանր առևտրականներ (1914, 1 ապր.): Մենեմենի գաղթօջախում ևս գործում են Ս. Սարգիս եկեղեցին, Արամյան վարժարանը (1910, 13 ապր.): 1910-ականի սկզբներին Մենեմենի հայերը ոչ պակաս չափով կրեցին օսմանյան իշխանությունների կողմից հույների դեմ ուղղված բոյկոտի հետևանքները: 1913 թ. իշխանությունները առատորեն զենք էին տրամադրում Մենեմենի մահմեդականներին՝ հույների և հայերի հետ ենթադրվող բախում-ների դեպքում գործածության մեջ դնելու համար: Նույն տարվա փետրվար-մարտին Մենեմենի հայերը դիմեցին Զմյուռնիայի առաջնորդարան, բողոքելով, որ իշխանությունները զինում են թուրքերին, բայց իրենց արգելում են զենք պահել: Ակներև էր, որ ամեն ինչ նախապես մտածված կազմակերպել էին այդ նույն իշ-խանությունները, ուստի առաջնորդարանի հարցումից հետո Զմյուռնիայի վալիին այլ բան չէր մնում, եթե ոչ չքմեղանալ և խոստանալ այդ մասին տեղեկանալ Մենեմենի իշխանավորներից (1913, 5 մրտ.):

«Դաշինքը» անդրադարձել է նաև Զմյուռնիայի չրջանակի այլ հայաբնակ գյուղերի և ավանների (Բայանդըր, Քուշադա, Քարա-թաշ և այլն) կյանքին, որ բավական հիմքեր է տալիս նրանց դրության մասին եզրակացությունների հանգելու համար: Փաս-

տերը ցույց են տալիս, որ 20-րդ դարասկզբին հայերը հատուկենտ բնակավայրերում էին կարողացել պահպանել իրենց տնտեսական ու ազգային կայունությունը: Արհեստագործական արտադրության, անմրցունակ առևտրի, և որպես այս վերջինի անխուսափելի հետևանք՝ հողագործության ծավալների կրճատման իրողությունը հարկադրում էր այս բնակավայրերի հայերին՝ գաղթել Զմյուռնիա կամ այլ բարենպաստ վայրեր: 1910-ական թթ. ծայր առած Բալկանյան պատերազմները թշնամական բնույթ տվեցին բնակչության մեջ առաջատար թվաքանակ կազմող էթնիկական տարրերի՝ թուրքերի և հույների փոխհարաբերություններին: Սկսվեց վիլայեթի առևտրի ու տնտեսության մեջ տեսակարար լուրջ կշիռ ունեցող հույներին այս ոլորտներից դուրս մղելու երիտթուրքական քաղաքականության գործընթացը, որ, ինչպես տեսանք, տարածվելու էր նաև հայերի վրա: Հատկապես այն բանից հետո, երբ միջազգային դիվանագիտության մեջ վերստին սկսվեց արծարծվել հայկական բարենորոգումների հարցը: Բնակչության թուրքական տարրին զինելով հույների և հայերի դեմ, թուրք մամուլի հարձակողական հրապարակումների և կրոնավորների հրահրումների ուղեկցությամբ, իշխանությունները առաջին աշխարհամարտին էին դիմում Զմյուռնիայի և շրջակայքի էթնիկական խմբերի մեջ թշնամանք ու ատելություն կուտակելով, որ կարող էր պոռթկալ որևէ պահի:

«ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» (1911–1914)

«Հայ գրականությունը» Զմյուռնիայում լույս տեսած երկրորդ գրական պարբերականն է՝ «Արփի Արարատյանից» (1853–1855) հետո: Ամսագիրը խմբագրում էր Զարհ Դադազյանը, որն արևմտահայ ընթերցողին հայտնի էր նաև նույն ժամանակների արևմտահայ մամուլում[1] և Զմյուռնիայի «Դաշինք» օրաթերթում տպագրած իր գրական և հրապարակախոսական գործերով:

Ամսագիրն հիմնականում ընդգրկում էր գրական երեք բովանդակային կողմեր՝ ժամանակի հայ և եվրոպական գրողների երկեր, դրանք իմաստավորող գրաքննադատական հոդվածներ ու գրախոսականներ, ինչպես նաև գրական գեղագիտական բնույթի ինքնուրույն և թարգմանական ուսումնասիրություններ: Պարբերականին աշխատակցում էին արևմտահայ գրական ու հրապարակախոսական լավագույն ուժերը՝ Մ. Նուպարյանը, Զ.Փեշտեմալճյանը, Ռ. Սևակը, Արտ. Հարությունյանը, Զ. Եսայանը, Ս. Պարթևյանը, Հ. Մառքը, Հ. Նազարյանցը և ուրիշներ:

Ամսագրի գրաքննադատական նյութերը հագեցած են գրականության ազգային նկարագրի, այն բացահայտելու և ազգի կացության հետ փոխհարաբերվելու, քաղաքակրթության հախուռն ընթացքի մեջ հայ հանրության արժեքների պահպանության խորին մտահոգությամբ: Երիտթուրքական հույսեր չներշնչող կառավարումը, 1909 թ. Ադանայի կոտորածը և հայ հանրության հեղհեղուկ վիճակն ու դրանից ծնվող դրաման ամսագրի հեղինակներին մղում է գրականության քաղաքագիտական նշանակության նորովի գնահատմանը: 1900-ականի Համիդյան բռնապետության բևեռը թոթափած օսմանյան իրականությունը գրական այս սերնդի առջև պարզվում էր անկանխատեսելի բռնություններով հղի հեռանկարներով ու պոռթկումներով, և այստեղից՝ ամսագրի հեղինակների ներքին խոր տագնապը հայ անհատի ու հավաքականության մո-

[1] Տե՛ս Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. 1, էջ 213:

տալուստ ապագայի, իրականութեանը համարժեք հոգևոր որակներով պիմակայելու խնդիրը:

Ամսագրի հեղինակներին միավորում է գրականութեան ազգային հոգևոր նշանակութեան կարևորումը, ավելին, այն ազգի կեցութեան ձև համարելու գիտակցութիւնը, որն ընդունվում է իբրև գոյատևման պայման: «Գրականութիւնը ազգի մը գոյութեան հուրն արծարծող մեծագոյն ազդակ է անկասկած: Ազգ մը իր գիրքերէն ու գիրքերուն մէջ կապրի: Վերցուցեք աստնք, ամբողջ ազգային շէնքն է, որ կը խորտակուի ահագնաշառաչ ու անյարիր փլուզումով մը»,- գրում է Ս. Պարթևյանը (1911, թիվ 1, էջ 2):

Ամսագրում, սակայն, գրականութեան ազգային նշանակութիւնը միատեսակ չի գնահատվում և այստեղ է, որ իրար են հակադրվում ռևալիստական ու արդիական՝ դեկադենտական ըմբռնումները նրա էջերում: Առաջին ուղղութեան մոտեցումն էր արտահայտում Արտ. Հարությունյանը, երբ գրականութիւնը համարում էր իմացական գործունեութեան բարձրագույն դրսևորում, որ հնարավորութիւն էր տալիս ազգին՝ դիմակայելով ապրել օսմանյան հեղձուցիչ և այլասերված միջավայրում (1911, թիվ 3, էջ 26): Այսպիսի մոտեցումը հենթադրում է իրականութիւնը վերարտադրելու, այլև դրա վրա ներգործելու ռեալիստական սկզբունքը, միաժամանակ, կարևորելով գրականութեան բնութագիրը պայմանավորող ազգային կյանքը: Արևմտահայ գրականութեան համար նա այդպիսի գործոն է համարում Օսմանյան Թուրքիայի ոչ բարենպաստ քաղաքական նկարագիրը, որն իր կնիքն է դնում ժամանակակից գրականութեան ընթացքի վրա (1912, թիվ 8, էջ 23–26): Գրեթե նույն մոտեցումն է ուրվագծվում Ս. Պարթևյանի «Հայ գրականութիւն» հոդվածում (1911, թիվ 1, էջ 3): Ջգացվում է նրա խորին հիասթափութիւնը երիտթուրքական կառավարումից, որ հասցրեց Ադանայի սպանդին և որի հետևանքների հաղթահարումը նա ակնկալում է նաև գրականութեան «ապրեցնող» բարոյական արժեքներից: Քաղաքական տվյալ պայմաններում գրականութեան գործառույթի հնարավորութիւնների խնդիրը քննարկ-

վում է նաև Զ. Գազազյանի «Ցեղային բարգավաճում» հոդվածում (1911, թիվ 1, էջ 21–23): Նա գրականության զարգացման քաղաքական, տնտեսական ու բարոյական առավել բարենպաստ պայմաններ է տեսնում արևելահայ հատվածում («Բարոյական սկզբունք և մտաւորական ոյժ» հոդվածը) (1913, թիվ 12, էջ 1–3): Շոշափելով հասարակության և գրականության փոխհարաբերության խնդիրը, Զ. Գազազյանը առաջադրում է վերջինիս հասարակական նշանակալիության գաղափարը: Այս տեսակետից է նա առանձնացնում արևելահայ գրականության բարոյական ու մտավոր սկզբունքայնությունը՝ այդպիսիք համարելով «չինիչ հոսանք»: Զ. Գազազյանը, սակայն,չափազանց ընդգծում էր արևմտահայ գրականության հանդեպ իր քննադատական կեցվածքը, պնդելով, որ «չունի տակաւին ոևէ ուղղութիւն, եւ հետեւաբար, բարոյական ոչ սկզբունք, եւ ոչ ալ մտաւորական ոյժ» (1913, թիվ 12, էջ 2): Ժամանակի արևմտահայ գրականության նկատմամբ այսպիսի նիհիլիստական վերաբերմունքը միայն Զ. Գազազյանի մոտեցման արտյունքը չէր: Ենովք Արմենը ևս, դեռևս 1909 թ. նույն տեսակետն էր պաշտպանում, ինչպես նկատում է Լ. Մնացականյանը[1]: Հավանաբար, պատճառը պետք է որոնել հայ գրական չուկան ողողած արևմտյան գրական ուղղությունների հախուռն ազդեցությամբ, որոնց լիուլի տուրք էին տալիս ոչ այնքան տաղանդավոր ստեղծագործողները: Հախուռն նմանակությունը ենթադրում էր, իր հերթին, հախուռն քննադատություն և ընդհանրացումներ, որոնց մեջ, սակայն, լուծվում կամ անտեսվում էին նաև ճշմարիտ գրական արժեքները: Ուշագրավ է նաև, որ «Հայ գրականության» խմբագիրը ֆրանսիական գրողների երկերում, ինչպես և ռուս հեղինակների գործերում ամենաարժեքավորն է համարում այն բարոյական սկզբունքներն ու մտավոր ուժը, որոնք «կը բարեփոխեն իրենց ընկերական կեանքը, կը գօրացնեն անոր հիմերը» (Ն. տ.): Գրականության համամարդկային արժեքների մեջ նա հատկապես

[1] Մնացականյան Լ., Քսաներորդ դարասկզբի արևմտահայ գրական քննադատությունը, էջ 14-15:

բարձր է դնահատում մարդասիրությունը և այլասիրական որակները: Զ. Գազազյանը այս չափանիշներով է բնութագրում ֆրանսիացի նշանավոր բանաստեղծ Պ. Քիյարին, այն, որ այս նրբամիտ արվեստագետը «նզած է տառապեալ բովանդակ Հայութեան դուքի անբաժան հրնչտակը» և որ "Pro Armenia"-յի մարդասեր հեղինակը «հայ նզած է եւ տառապած է հայէ մ'աւելի» (1912, թիվ 9, էջ 3):

«Հայ գրականության» դրաքննադատների լուրջ մտահոգություններից մեկը գրական բարքերի վերանորոգման խնդիրն էր, հայ գրականությունը իր բարոյական բարձր չափանիշներին հասցնելը: Ժմյուռնիայի «Դաշինք» թերթում Զ. Գազազյանը գրում էր, հանրագումարի բերելով իր ամսագրի երեքուկես տարվա գործունեությունը, որ վերջինիս նպատակն էր «գրական եւ դեղարուեստական որոշ հոսանք մը ստեղծել՝ մտաւորական ընդհանուր գործունեութիւն եւ կենդանութիւն մը ապահովելու համար»[1], և որ գրականությունը հարկ է ազատել քաղաքական անհարկի ազդեցություններից: Կարծենք, կանխելով այս միտքը, ամսագրի հեղինակներից Զ. Կարապետն դրանից դեռևս երկու տարի առաջ գրում էր, որ գրական ամլությունը և ճաշակի ընդարմացումը գրականությունն ամփոփել են «ամենավտանգաւոր եւ մտահոգիչ չրջանի մէջ» (1912, թիվ 9, էջ 45): Այստեղ դրսևորված է նույն այն տեսակետը, որին անդրադարձանք քիչ առաջ: Կարելի է կարծել, որ խոսքն այստեղ վերաբերում էր արևմտյան սիմվոլիզմի ազդեցությանը, որ բավական տարբեր դրսևորումներ ունեցավ, ինչպես տեսանք, արևմտահայ դարասկզբի գրականության մեջ: «Հայ գրականությունը» այս չրջանի բնութագիրը տալիս էր ոչ միայն սոսկ գրաքննադատության չափանիշներով, այլև արևմտյան նորօրյա գրական արժեքների գրականագիտական գնահատումներով: Վերջին մոտեցումը առավել քան ակնհայտ է Հ. Քյուֆենճյանի հոդվածներում, որոնք վերաբերում են և՛ արևմտահայ, և՛ արևելահայ գրականությանը և նրա դեմքերին: Ելնելով «մաքուր արվեստի» գեղագիտական ընկալում-

[1] «Դաշինք», 1914, 20 փետ.:

ներից, այս հեղինակը պնդում է, որ գրական նորագույն սերունդը «կը հաւակնի ամէն հարարերականութենէ, ամէն կապերէ ազատել արուեստի հասկացողութիւնը: Ընդհանուր մչուշի մը մէջ հոգինեը կը փնտռէն բարձունքները փայլակող գերագոյն լոյսը» (1912, թիվ 5, 11):

Քյուֆենճյանը հակասական կարծիք ունի արևելահայ բանաստեղծության մասին, որը բխում է գրականության և իրականության փոխհարաբերության հանդևպ զուտ արվեստը արվեստի համար նրա ելակետից: Նա պնդում է, որ արվեստը, պոեզիան հուզականի սահմաններից այն կողմ չպետք է անցնեն: Արվեստը պետք է հեռու մնա հասարակական ճշմարտություններից, գրանք, ինչպես և քաղաքականությունը, արժեզրկում են գեղեցիկը, և ներխուժելով այս վերջինի մեջ, այն իջեցնում են միջակության աստիճանի: Հանճարը, պնդում էր Քյուֆենճյանը, ոչ այլ ինչ է, եթե ոչ հասարակականորեն ընդունված տեսակետներից ու սկզբունքներից չեղվող ինքնատիպություն, մինչդեռ հասարակական ճշմարտությունները կաշկանդում և միօրինակ են դարձնում արվեստը, զրկում այն ինքնատիպությունից: Դժվար չէ նկատել, որ Քյուֆենճյանը հետևում է գրականության մեջ իրականության զգայական և անհատական ընկալման տեսակետին, որ ձևակերպել էին սիմվոլիստները տասնամյակներ առաջ[1]*: Արևելահայ պոեզիան գնահատելիս Քյուֆենճյանը նոր խոսք չի ասում, նա վերահաստատում է դեռևս 1880-ական թթ. արևմտահայ գրաքննադատության մեջ տարածում գտած այն տեսակետը, որ արևելահայ գրողները առաջնությունը տալիս են գրականության սոցիալական բովանդակությանը՝ դրան ստորադասելով ձևը, արվեստը: Նորությունն այստեղ, թերևս, այն է, որ Քյուֆենճյանը արևելահայ գրականության սոցիալական ուղղվածությունը կամ ուտիլիտարիզմը հիմնավորում է ազգային գիտակցության զարթոնքը խթանելու նպատակադրմամբ: Մյուս կողմից, այս քննադատը կարծում է, որ նման*

[1] Տե՛ս Обломиевский Д., Французский символизм, с. 108.

նպատակադրումը չի կարող դրսևորվել այլ կերպ, քան «բարոյախոսի ծանր ծիրանիով», որը հենց ինքը՝ ձևի անկատարությունն է: Այս մեկնակետից է գնահատում Քյուֆեճյանը Ավ. Իսահակյանի պոեզիան, միաժամանակ, արժանին հատուցելով նրա՝ ժողովրդական երգի ոլիմպին, մեղեդայնությանն ու մաքուր զգացումներին, և մյուս կողմից, պիտղությունները աննելով Իսահակյանի արվեստի, բանաստեղծական տեխնիկայի, կառուցվածքային և այլ՝ իրեն չգոհացնող որակների (տաղաչափություն, հանգեր և այլն) մասին (1912, թիվ 11, էջ 32–33): Քյուֆեճյանը, որքան էլ բարձր գնահատի Իսահակյանի պոեզիայի «ժողովրդական թրթռումները, վառ անուշությունը», այնուամենայնիվ մնում է իր գեղագիտական ընկալումների պատանդը, երբ դասական կամ սալոնական նրբագեղություն է ակնկալում բանաստեղծի այդ նույն ժողովրդական ոճից: Նույն ոգով և միակողմանիությամբ նա գնահատում է «Գարուն» ալմանախի (Մոսկվա, 1912) մյուս հեղինակներին և գրաքննադատներին՝ հատկապես մերժելով վերջիններիս մոտեցումները պոեզիայի՝ իրականության անհրաժեշտ անդրադարձի վերաբերյալ:

Ձևի դնկադենտական պաշտամունքը, միաժամանակ, ենթադրում է բովանդակության վերացականություն, որչափով, դրա համեմատ, գրականությունը զերծ պետք է լինի հասարակական որոշակի գաղափարներից: Քյուֆեճյանը, ինչպես և ամսագրի այլ հեղինակներ, ակնհայտորեն տուրք էր տալիս «արվեստի բացարձակացման տեսությանը», որ ի հայտ էր գալիս ժամանակի հայ սիմվոլիստների գեղագիտական ընկալումներում[1]: Բայց Քյուֆեճյանը գրականությունը չի զրկում գաղափարայնությունից, հատկապես արձակի համար նա այն փոխարինում է «ազգային ոգի» հասկացությամբ և այս տեսակետից արժանին է հատուցում Ավ. Ահարոնյանին, նրա «Ազատության ճանապարհին» նոր գրքի կապակցությամբ: Նրա կարծիքով, Ահարոնյանի հերոսները կոնկրետ տիպարներ չեն, այլ բանաստեղծական աշխարհի ծնունդ, նրանք

[1] Սարինյան Ս., Հայոց գրականության երկու դարը, գիրք առաջին, էջ 223.

ազատ են միջավայրի, ժամանակի ու նույնիսկ ցեղի անմիջական ազդեցություններից (1912, թիվ 12, էջ 59): Ահարոնյանի և սիմվոլիստների միջև ուշագրավ համեմատությունների դեպքում ևս բավական զգալի է նրա մտայնության և «ցեղի հոգեբանության» փոխադարձ կապերի հաստատումը:

Քյուֆեճյանը գեղագիտական նույն չափանիշներով է մոտենում Դ. Վարուժանի պոեզիային՝ դարձյալ քամահրելով դրանում առկա գաղափարական «ուռուցիկ ոլորտները»՝ հասարակություն բարելավելու նրաղները («Մեքենաները», «Մայիս 1»): Վարուժանի բանաստեղծական պատկերները, դժգոհում է քննադատը, «այդ ուռուցիկությենան մէջ կը կոտրուին, կը փոքրանան» (1913, թիվ 4, էջ 16–17), տեղի տալով ռազմերգի թափին ու աղաղակին: Անտարակույս, քննադատին դուր չեն եկել Վարուժանի այդ բանաստեղծություններում առկա սոցիալական տրամադրությունները: Միաժամանակ, Քյուֆեճյանը Վարուժանի «Ցեղին սիրտը» և «Հեթանոս երգերը» համարում է հայ պոեզիայի զարդացման նոր որակներ, որ ներառում են ազգի բանաստեղծության նախընթաց չրջանների հարստությունը. «Ան դասական է, րոմանթիկ է, իրատեսական է»,- գրում է նա (1914, թիվ 5, էջ 31):

Դ. Վարուժանի ստեղծագործությանը նվիրված Քյուֆեճյանի հոդվածաշարը արժեքավոր է հատկապես նրանով, որ ոչ միայն ճշմարտացիորեն և ճաշակով է գնահատում նրա պոեզիայի պատկերավորման համակարգը, այլև առաջադրում է առհասարակ արևմտահայ գրականության փուլերի հաջորդայնության հիմնահարցը: Քյուֆեճյանը, եթե մի կողմ թողնենք նրա որոշ ծայրահեղությունները, անգամ նիհիլիստական սրացումները 19-րդ դ. արևմտահայ դրականության բնութագրում, համոզիչ կապեր է հայտնաբերում բանաստեղծության ընթացքի մեջ՝ Դուրյանից մինչև Մեծարենց («Մեծարենց Դուրեանը կը կապէ Վարուժանին»): Այս հեղինակը հետաքրքիր բնութագրեր է տալիս նաև Ա. Զոպանյանի, Սիամանթոյի, Արտ. Հարությունյանի, Ադ. Փանոսյանի և այլոց չափածոյին, ընդսմին, բանավիճելով «Շանթի» գրաքննադատների

հետ՝ հետևելով բանավեճի կուլտուրային և իր քննարկած խնդիրների մեջ հանդես բերելով կարգուկանոն և սկզբունքայնություն:

Վարուժանի ստեղծագործության հիմնավոր գնահատականին նպաստից նաև ամսագրում հաճախակի հանդես եկող Զ. Գազազյանը: Իր «Գրական վերլուծումներում» բանավիճելով «Շանթի» գրաքննադատի հետ, նա հատկապես կարևորում էր Վարուժանի ինքնատիպությունը, ուժի, գեղեցկության և կենսասիրության խորունկ զգացումների նրա արվեստը: Զ. Գազազյանը բանավիճում է նաև Շիրվանզադեի հետ, որը միագծորեն էր ընկալել Վարուժանին՝ մնալով 19-րդ դ. նեղդործնական ռեալիզմի ձևակերպումների ավանդական սահմաններում և մեծ բանաստեղծին որակել «մի ոմն պուռնկագիր» դարձվածով (1913, թիվ 2, էջ 31):

«Հայ գրականության» գրաքննադատների հիմնական թեմաներից է 19-րդ դ. 2-րդ կեսի ազգային գրականության արժևքավորումը: Այս կարգի հոդվածներում ավելի կամ պակաս չափով փորձեր են արվում բնութագրելու Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Հ. Պարոնյանի, Ե. Տեմիրճիպաշյանի և այլոց ստեղծագործություննեը, որոշելու նրանց տեղն ու նշանակությունը գրականության մեջ: Հակառակ դեկադենտ գրաքննադատների, ամսագրի հեղինակներից Հրանդը (Մ. Կյուրճյան) բարձր է գնահատում գրականության մեջ քաղաքացիական ուղղվածությունը՝ հանձինս Մ. Նալբանդյանի և «Հյուսիսափայլի» առաջավոր հեղինակների: Գրականության համազգային արժեքն այստեղ գնահատվում է հենց դաղափարայնության, ազգային ազատագրական ձգտումների տեսանկյունից և այս մոտեցմամբ էլ Հրանդը լուսաբանում է Մ. Նալբանդյանի դաղափարական պայքարը ազգային հետադիմության դեմ:

«Հայ գրականության» 1911–1912 թթ. թվահամարներում չարունակաբար տպագրված՝ Հրանդի այս հոդվածաշարը, թերևս, Ե. Տեմիրճիպաշյանի ստեղծագործությանն ու հրապարակախոսությանը նվիրված լավագույն ուսումնասիրություններից մեկն է:

Գրականության ազգային կենսունակության սկզբունքն է առաջադրում Ատրուշանը, երբ բնութագրում է Ե. Տեմիրճիպաշյանի ստեղծագործությունը: Նա վերհանում է Տեմիրճիպաշյանի պոեզիայի հղկված ձևերն ու արվեստը, սակայն հակասություն է նկատում նրա գերակշռող «հոգերանական վիճակի» և երևակայության միջև: Այս հակասականությունը հասցնում է նրան, որ աղարտվում է գրողի ստեղծած կամ ենթադրած դեղեցիկը:

Հ. Պարոնյանի երգիծանքի ճշմարիտ գնահատականն է տրված Ռ. Սամիկյանի մի հոդվածում: Ուշագրավ են Հ. Պարոնյանի և Հ. Ալփիարի (Քրիզանթեմ) համադրումը, մեծ դասականի և ժամանակակցի ուրվագծային, բայց և տպավորիչ ծաղրի միջև անցկացված զուգահեռները: Պարոնյանը, գրում է Սամիկյանը, «երգիծական թիթեր ստեղծած է, իր ժամանակին նշանաւոր դէմքերը հարուածած է՝ անոնց հոգին մերկացնելով ու մտքի կարողութեան վրայ ծիծաղելով, մինչդէռ Ալփիար ... հետեւած է ... պաճուճազարդ ու խաբուսիկ գրականութեան, որ սիկաւէթի մը լայն ծուխին պէս կը ցնդի: Բայց այս ծուխը մինչեւ որ անհետանայ, մեր աչքին առջեւ կը պարզէ ցնորական, ծաղրական եւ այլանդակ մարդասպատկերներուն ուրուագիծը» (1913, թիվ 4, էջ 25):

Հայ գրականության «ցեղային ոգին» ամրապնդելու որոնումները ամաագրում դրսևորվել են նաև «գավառական գրականության» կենսունակ շիթերը պահպանելու և զորացնելու մտահոգությամբ, որ սկիզբ էր առել դեռևս Ա. Արփիարյանի, նրա «Մասիս» շաբաթաթերթի (1880-ական թթ. վերջեր) ժամանակներից և առավել իմաստավորվել «Հայրենիքում» (1990-ական թթ.), 20-րդ դարասկզբի գրական «Մասիսում» և այլ պարբերականներում: Գրականության՝ դեպի գավառ դիմաշրջվելու տասնամյակներ ի վեր հասունացած խնդիրը ոչ այլ ինչ էր, բայց եթե «վաղվան գրականության»[1], գրականության ժողովրդայնացման, ի վերջո, նորօրյա դեմոկրատացման պահանջ: Արևմտահայաստանի հայ մարդուն

[1] Տե՛ս Մնացականյան Լ., Հոդվածներ, ուսումնասիրություններ, էջ 11-12:

գրականություն բերելը բխում էր անհատի և ազգի ինքնաճանաչության հիմնահարցից, որն արձակի դրամատիկ հարցադրումներից հետո չատ ավելի սուր և ողբերգական չեչտեր էր ստանալու 19-րդ դ. վերջի և 20-րդ դ. սկզբի պոեզիայի մեջ՝ կլքվելով Համիդյան, այնուհետև երիտուրքական չարդարարական իրողություններից:

«Հայ գրականությունը» գավառական կյանքին անդրադարձել է Ռ. Զարդարյանի, Թլկատինցու, Չիֆթե-Սարաֆի և այլոց արձակ գործերով, ինչը արժեքավորում էր Լ. Էսաճանյանը՝ Ե. Սրմաքեշխանլյանի (Երուխան) հետ բանավիճելիս: Նա կանգ է առնում գավառական գրական դեմքերի ինքնատիպության վրա՝ հետամտելով, անշուշտ, այդ ուղղության բազմազանությունը: Զարդարյանի գավառական հերոսները «գաւառին ծոցէն կուգան Թլկատինցիին նման, միայն թէ անոնք կը պարունակէն գրական անակնկալներ՝ արդիւնք արդի համաշխարհային հոսանքին և Թլկատինցի աւտր փոխարէն կքալեցնէ իր espiriti-ին»,- գրում է Լ. Էսաճանյանը (1913, թիվ 12, էջ 21):

Չիֆթե-Սարաֆի՝ ամսագրում տպագրած գործերը ունեն միևնույն «Գյուղական տեսարաններ» ընդհանուր խորագիրը: Այս հղինակը հատկապես ծանրանում է գյուղական միջավայրի, բնության գնդեցկություններն նկարագրության վրա, նրա գործերը ավելի չուտ մոտենում են դեղարվեստական ակնարկի ժանրին և սա ոչ թե ինքնանպատակ է, այլ հետամտում է բացահայտել հենց բնական միջավայրում ապրող և նրա մասնիկը կազմող մարդուն (թեև բնապատկերների հերթադայության մեջ գլխավորապես դրսևորվում են հեղինակային ապրումները՝ «Փոթորիկը», «Մովափը», «Դյութական լճակը» և այլն) (1911, թիվ 1, էջ 19, թիվ 2, էջ 20–22, թիվ 3, էջ 44–47): Չիֆթե-Սարաֆը գյուղական պատկերներն ամբողջացնում է մարդկանց և բնության նույնականությունը ցուցադրող նուրբ անցումներով՝ իր տեսարաններից մեկում նկարագրելով «հեռաւոր ու անշուք այն գիւղը, ուր ձկնորսներ, էսնաֆներ եւ իրենց նղովը տապկուող պարզ ու բարի հայեր կը բնակուին» (1912, թիվ 9, էջ 15):

Ավելացննենք, որ Զիֆթեն-Սարաֆը միջավայրի նկարագիրը կարևորում է ոչ միայն գավառական, այլև մեծ քաղաքի մարդկանց ճանաչելու իմաստով. «Պոլսական տեսարաններ» խորագրով ակնարկներում նա վերակենդանացնում է Կ. Պոլսի մեծ չուկան՝ բեզեստենը, երբեմն անցնում ուղղակի նկարագրությունների՝ մատնելով իր ռոմանտիկական տրամադրությունները (1912, թիվ 4, էջ 6–11, 1914, թիվ 5, էջ 12–14):

Եթե ամսագիրը գրականությունը կենսական ճշմարտություններով հարստացնելու միջոցներից մեկը որոնում էր գավառահայ իրականության գեղարվեստական պատկերման մեջ, ապա արևելահայ գրողների երկերում տեսնում էր դրա իրականացման օրինակները: Այս հարցում համամիտ են ամսագրի գրեթե բոլոր գրաքննադատները: Անգամ առավելությունը գրականության մեջ վերապահելով ձևին և չափազանց ընդգծելով այս մոտեցումը, Քյուֆեճյանը անվերապահորեն խոստովանում էր արևելահայ գրականության մեջ հայ կյանքի ճշմարտությունների լիարժեք արտացոլումը: Զ. Կարապետն հատկանշական դիտողություններ էր անում Գր. Մալխասին՝ նրա «Շիրուանզատէ եւ իր երկը» գրքին նվիրված գրախոսականում: Արևմտահայ գրականությանը, նշում էր նա, ի տարբերություն արևելահայկականի, հատուկ են այնպիսի պակասներ, ինչպիսիք են կյանքի ճշմարտապատում պատկերումը, ընտանեկան ու հասարակական հարաբերությունների ցուցադրումը (1911, թիվ 3, էջ1–4):

Անկասկած, Նալբանդյանի, Նազարյանցի, Թումանյանի, Իսահակյանի, Ահարոնյանի և արևելահայ գրական այլ դեմքերի վերհանումով «Հայ գրականությունը» հաջողությամբ փորձում էր ոչ միայն կենսական նոր հուն տալու արևմտահայ արձակին, այլև շարունակում էր ազգի երկու խոշոր հատվածների գրական ու մշակութային մերձեցման համազգային նշանակության գործը: Հետևելով այս ուղեգծին, «Հայ գրականությունը» ուշագրավ գնահատումներ է արել նաև Ղ. Աղայանի, Գ. Սունդուկյանի, Հովհ. Հովհաննիսյանի, Հովհ. Թումանյանի, Գր. Արծրունու և այլոց գործերի

մասին, տպագրել Վ. Փափազյանի, Ավ. Իսահակյանի, Շ. Կուրղինյանի և արևելահայ այլ գրողների երկերից: Ամսագիրը հետևում էր ժամանակի ռուս գրականության ղարգացումներին և գրական իրականությանը, դարձյալ նկատի առնելով, որ արևելահայ գրականությունը արդիական բարերար ազդեցություն է կրում ռուս գրականությունից: Այս տեսակետից հետաքրքիր է Վ. Փափազյանի «Հին արժեքները» հոդվածը (1914, թիվ 5, էջ 8–11), որտեղ հեղինակը գնահատում է Մ. Գորկու և ռուս նորագույն գրողների բանավեճը՝ չոշափելով նաև ռուսական թատերական իրականության խնդիրները: Նեմիրովիչ-Դանչենկոն, ինչպես հայտնում է Փափազյանը, «ռուսական ամենալավ թատրոնում բեմադրել է Դոստոևսկու «Դևերը», ծայրահեղ ծաղրանքով ու անարդար վիրավորանքներով լի մի թատերախաղ՝ ազատության և հեղափոխության դեմ կերտված» (ն. տ., 9): Վ. Փափազյանը չի թաքցնում իր համակրանքը Մ. Գորկու հանդեպ, երբ պաշտպանում է վերջինիս բողոքը՝ Դոստոևսկու պիեսը բեմադրելու դեմ: Այս առթիվ, հարում է նա, Գորկուն քննադատել էին զանազան գրողներ՝ նրան մեղադրելով որպես հետամնաց մեկի, որը չի ըմբռնում գեղարվեստի էությունը և արտահայտում է իր «բռնակալական ձգտումները»:

Տպագրելով այս հոդվածը, ամսագիրը մի կողմից իր ընթերցողին էր ծանոթացնում ռուս գրական իրողություններին և ընթացիկ հարցադրումներին, և մյուս կողմից՝ իր համամտությունն էր հայտնում արևելահայ գրողին, հատկապես նրա այն մտքին, որ հայ գրականությունը, ինչպես և ժամանակի ռուս գրականությունը ապրում է «հոգեկան աղքատության մի շրջան», տեսակետ, որ հայտնել էր Գորկին ռուս գրականության վերաբերյալ: Ի դեպ, սա այն կարծիքն էր նաև, որ սիմվոլիզմի և սյուրռեալիստական գրականության առատ տարատեսակություններ մասին հայտնում էին և՛ Զ. Գազազյանը, և՛ Ս. Պարթևյանը, և՛ Արտ. Հարությունյանը: Այդ գրականությունը նկատի ուներ վերջինս, երբ գրում էր, թե «գոհհիկ, չլմիկ, ոլորմնկի կամ տափակ արժէքներ կան, որոնց վայ-

բազ. ու կատաղի ուժգնությեամբ փարած է մարդկությիւնը» (1911, թիվ 3, էջ 25):

«Հայ դրականության» էջերում տպագրվել են ժամանակի արևմտահայ դրականության գրեթե բոլոր ճանաչված արձակագիրներն ու բանաստեղծները՝ Դ. Վարուժանը, Զ. Եսայանը, Միամանթոն, Վ. Թեքեյանը, Ռ. Սևակը, Հ. Ալփիարը, Հ. Մաւքը և ուրիշներ: Նրանց աշխատակցությունը պատիվ կբերեր հայկական ամեն մի հեղինակավոր հրատարակության: Ամսագրի գրական նյութերն առանձնանում են ոչ միայն ձևի, այլև գաղափարական պատկերացումների բազմազանությամբ, եվրոպական բանաստեղծական նորագույն ուղղություններին հետևող, բայց և 1880–1890-ական թթ. դրական ռեալիստական ավանդույթները զգալիորեն նախընտրող մտայնությամբ: Գեղարվեստական արձակը՝ նորավեպը, պատմվածքը, էսսեն, ուղեգրական և դիմանկարային ակնարկը, արձակ և չափածո բանաստեղծական գործերը կրում էին իրենց տաղանդավոր հեղինակների անհատականության կնիքը՝ բոլոր դեպքերում արտահայտելով օսմանյան հեղձուցիչ իրականության մեջ հայ գրականության առկա կացությունը, նրա որոնումները հայրենասիրության, մարդասիրության բարոյական բարձր արժեքների սեփական պատկերային ու մտավոր համակարգը ստեղծելու ճանապարհին: Դ. Վարուժանը, ում ստեղծագործությունը ևս «գրականության զարգացման կենսական խնդիրներ էր առաջադրում»[1], համարձակ չեչտեր էր մտցնում հայ ավանդական ուղեգրության մեջ՝ հատկապես ընդգծելով բռնության դիմակայող ուժի գեղեցկությունը: Կորֆու կղզում, գրում է նա, «Իսլամը ... մղկիթ չէ կառուցած բնաւ, գորֆուցիին հոգին խրոխտ է եւ սարկայում չի ճանչնար» («Դրուագ մը ճամբորդի հին հուշերէս») (1911, թիվ 2, էջ 11–13):

Ամսագիրը 1912 թ. թվահամարներում տպագրեց Դ. Վարուժանի «Կղեոպատրա», «Սպասում», և «Դարձ» բանաստեղծությունն-

---

[1] Մնացականյան Լ., Քսաներորդ դարասկզբի արևմտահայ գրական քննադատությունը, էջ 15:

րը՝ գրված նրան հատուկ էպիկական թափով և այն հարստացնող մեղմ քնարականությամբ: Սիամանթոն նույն ժամանակ այստեղ տպագրել է իր «Թաղման առավոտ մը» բանաստեղծությունը՝ կոտորածների դժնի պատկերներով և «անիրավված Արարատի» վիթխարի չափերին համապատասխան ուրվագծելով հոգևոր մնայուն արժեքները ստեղծած ժողովրդի խորունկ ողբերգությունը: Ռ. Սևակի բանաստեղծությունները (1911 թ. թվահամարներում) հագեցած են քնարականությամբ, սիրո դրամայից ծնվող նուրբ և ինքնատիպ ապրումներով, երբեմն՝ կարոտի էլեգիական վերհուշումներով («Մնաներգ ինձ համար», «Կարապի երգը», «Ցնծուն մահը» և այլն): Ռոմանտիկական զգացումներով են չնչում ամսագրում տպագրված՝ Զ. Եսայանի արձակ գործերը («Յաստիկները», «Աստուածային ժպիտը») իրենց նուրբ և թրթռուն տրամադրություններով գրեթե սպիտակ բանաստեղծություն են հիշեցնում, մինչդեռ նորավեպերում («Իտէալը», «Վարժապետը» և այլն) հեղինակը նախապատվությունը տալիս է իրական կյանքի պատկերներին: Զ. Եսայանը իր գործերում երևակում է կնոջ հոգևոր նրբության, իրականության յուրովի ընկալելու և դրա հանդեպ զրսևորած վերաբերմունքի ինքնատիպ կարողությունները: Հեղինակի մյուս արձակ գործերը առավել քան ռեալիստական ուղղվածություն ունեն և պատկերում են Համիդյան բռնապետության ժամանակների բարքերի անկումը, ինչպես և Բալկանյան պատերազմների մեջ խրված թուրք կառավարողների պատճառած չարիքներն իր իսկ՝ թուրք ժողովրդին:

Ինչպես միշտ, իր երգիծական գործերով ամսագրում հաճախակի հանդես է եկել երգիծաբան Հ. Ալփիարը: Ալփիարը գրում է երգիծական քրոնիկ հիշեցնող ժանրով, որոնք կարելի է նաև ֆելիետոն համարել, երգիծական պատմվածքներ, երգիծական մեծ ու փոքր պատումներ և այլն: Նրա գրիչը, սակայն, հավասար ուժգնությամբ չի տիրապետում երգիծական արվեստին, հաջող և դիպուկ ծաղրով պատկերված նրա հերոսների ու իրադրությունների կողքին ոչ քիչ դեպքերում կարելի է հանդիպել ինքնանպատակ և գրեթե ոչ ընկալելի հումորի, որի գործողության չառավիղները

դուրս չեն դալիս մտավորական խավերի նեղլիկ շրջանակներից: Իր չափի գգացումը հաղթահարող անհարկիորեն առատ փրանսաբանութիւնները (դարձվածներ, բառերի քմահաճ կիրառութիւններ և այլն), կարծենք, հայտնում են, որ նրդիծաբանը գրում է զուտ «գրական մարդոց» համար, որոնց միայն կարող է հասկանալի լինել չափազանց նրբացած և գրեթե աննկուլթ դարձած հումորը: Այսուհանդերձ, Ալփիարը կարողանում է խոցել միջավայրի և բարքերի ճղճիմութիւնը, երևույթի ձևախեղումը վերագրել հենց մարդու ներաշխարհի ձևախեղմանը, որ փաստորեն լ հայտ է բերում ժամանակակից մարդու արատներն ու թերութիւնները: Ալփիարը գրում է նաև նրդիծական դիմանկարի ժանրով՝ ավելի կամ պակաս հաջողութիւամբ:

Իր գրաքննադատական հմտալի հոդվածներից լացի, «Հայ գրականութեան» մեջ գեղարվեստական գործեր է տպագրել նրա խմբագիր Զ. Գազազյանը: Գազազյանի առաջին նորավեպերում առկա է նրա հակումը դեպի սենտիմենտալիզմը, այնուհետև դեկադանսը և միստիկական պատկերներից ծնվող բարոյախոսութիւնը («Ապրող սէրը», «Ոգեբնակ բլուրը» և այլն) (1912, թիվ 3, էջ 30–35, թիվ 12, էջ 16–20): Սակայն իր հետագա, հատկապես 1913 թ. տպագրած գործերում Գազազյանը կանգնում է իրական և հաստատուն գետնի վրա, ստեղծում միջավայրի և անհատի ուշագրավ պատկերներ, որոնք չարժման մեջ են դրվում հետաքրքիր սյուժետային զարգացումների միջոցով («Թիմեոնիկը», «Նեռումէն յետոյ», «Հասան չավուշ», «Ջաղացպանը» և այլն):

«Հայ գրականութեան» էջերում տեղ են գտել նաև նոր սերնդի բանաստեղծները, որոնց արտադրութիւններում տիրապետում են մեայլ տոնայնութիւնը և բանաստեղծական ձևի գերակայութիւնը (Հ. Ճ. Սիրունի, Է. Գոլանճյան, Ե. Մալեզյան, Հ. Նազարյանց և այլք): Այս ստեղծագործողների վրա ակնհայտորեն զգալի է արևմտյան գրական արդիական ուղղութիւնների ազդեցութիւնը: Նրանք աւտրեալական գրական արժեքը բարձրացնում են այն անխուսափելի լրջութիւամբ, որ արտահայտում են գրական նոր սերնդի

գործումներն ու տագնապները՝ ցեղասպանությանը ընդհուպ նախորդող արևմտահայ իրականության մեջ:

Ամսագիրը տպագրել է բազմաթիվ թարգմանական երկեր՝ հիմնականում ֆրանսիական և իտալական գրականությունից: Հարկ եղած դեպքում թարգմանիչները կամ այլ հեղինակներ հակիրճ տեղեկություններ են տալիս այս կամ այն եվրոպական գրողի մասին և բնութագրում նրա ստեղծագործությունը: 1912 թ. Ա. Զոպանյանը ընթերցողին է ներկայացրել ֆրանսիացի հեղինակ Պ. Ժորի պոեզիան՝ ժամանակի ֆրանսիական գրականության համապատկերում, ապա և նրա բանաստեղծությունները՝ իր թարգմանությամբ: Ֆրանսիական հնագույն ժանրի արդիական դրսևորումներն է վերլուծել վիպասաքան և գրող Ն. Ներսեսյանը՝ Գ. լը Բոնի ազորիզմների (պատգամանի) օրինակով և դրանց թարգմանությամբ (1913 թ. համարներում): Է. Գոլանճյանը վերլուծել է Ժ. դը Ներվալի, Է. Ռենանի և Մ. Ռոլինայի ստեղծագործությունները, իսկ Հ. Նազարյանցը՝ իտալացի բանաստեղծ Լ. Ալտոմարեի պոեզիան: Զ Կարապոն ծանոթություններ է տվել բուլղարական գրականության մասին՝ տպագրելով իր թարգմանած Ա. Կոնստանտինովի «Ժուժկալության ընկերությունը» պատմվածքը: Իր «Թերթոն» բաժնում ամսագիրը տպագրեց Հ. Սերաոյի «Հռոմի յալթանակը» վեպը, Վոլտերի, Լըկոնտ դը Լիլի, Միլվուայի, Ս. Պրյուդոմի, Գ. դ'Անունցիոյի, Կ. Համսունի և այլոց գործերի թարգմանությունները: Իր թարգմանական գրականության հարուստ ցանկով Զ. Դաղազյանը վարում էր գրական որոշակի քաղաքականություն՝ հետամտելով ընդլայնելու ազգային գրականության շփումները եվրոպական հին ու նոր գրական արժեքների հետ:

«Հայ գրականությունը» քիչ է անդրադարձել Զմյուռնիայի հայ հանրության մշակութային կյանքին: Այս տեսակետից բացառություն է Մ. Նուպարյանի «Իզմիրի հայ տպագրության պատմությունը» հոդվածը: Թեև հեղինակը դպրեվանքի վաղ անցյալի պատմության որոշ դրվագներում թույլ է տվել ինչ-ինչ փաստական անճշտություններ, սակայն արժեքավոր տեղեկություններ է

տալիս 19-րդ դ. 2-րդ կեսի զմյուռնահայ գրական և մշակութային իրականության մասին: «Հայ գրականությունը», որպես գրական ամսագիր, վկայում էր, որ զմյուռնահայ գրական միտքը իր պոյության վերջին տասնամյակին իսկ հանդես էր գալիս իբրև առաջավոր ուժերից մեկը հայ գրական անդաստանում:

«ՄԱՐՄՆԱՄԱՐԶ» (1911–1914)

Շավարշ Քրիսյանը ժամանակակից սպորտի և մարզական քաղաքակրթության ահռելիության է հայ իրականության մեջ: Ֆիզիկական մշակույթը հայության մեջ ժողովրդականացնելու գաղափարին իր անսահման նվիրվածությամբ, կազմակերպչական մեծ տաղանդով օժտված այս գործիչը խոր և մնայուն հետք թողեց հայ մարմնամարզական մշակույթի պատմության մեջ: Նրա անսպառ եռանդի շնորհիվ Արևմտահայաստանում և Կ. Պոլսում ստեղծվեցին վեց տասնյակից ավելի մարզական կազմակերպություններ, ակումբներ, որոնք միավորում էին հարյուրավոր մարզիկների[1]: Կ. Պոլսում նրա նախաձեռնությամբ 1911–1914 թթ. կազմակերպվեցին հայկական օլիմպիական չորս խաղեր: Արևմտահայ ամենայն խավերի մեջ մարմնամարզության գաղափարը դարձավ անհրաժեշտություն, և այս իրողությունն ամրապնդվում էր Շ. Քրիսյանի հրատարակած «Մարմնամարզ» մարզական պարբերականի եռանդուն քարոզչությամբ ու արդյունավետ աշխատանքով:

Շավարշ Քրիսյանը ծնվել է 1886 թ. հուլիսի 22-ին Կ. Պոլսի Պեշիկթաշ հայկական թաղամասում: Նախապես սովորել է Մաքրուհյան երկսեռ վարժարանում: 1897 թ. ընդունվել է Պարտիզակի ամերիկյան վարժարան, ապա վերադարձել Կ. Պոլիս և սովորել Սկյուտարի Պերպերյան վարժարանում: Կ. Պոլսում իր ուսումնառության շրջանը նա ավարտել է համբավավոր Ռոբերտ քոլեջում, որից հետո սկսվում է նրա ուսանողական կյանքի արտասահմանյան փուլը: 1906 թ. Քրիսյանը մեկնում է Փարիզ, ընդունվում Ժանսոնի լիցեյը: Արդեն ձևավորված և որոշակի նախասիրություններ մշակած երիտասարդը չի վարանում իր դժգոհությունը հայտնել լիցեյի ոչ ցանկալի կարգուկանոնից և դրա տնօրենից ու հեռանում է այդ հաստատությունից: Նա անցնում է Լոնդոն, որտեղ երկու և կես տարի աշակերտում է մարզիչ Սանդոյին: Պետք է

[1] Տե՛ս Խաչատուրեան Ա., Հայ մամուլի մատենագիտական գործեր, էջ 643-644:

կարծել, որ Քրիսյանը հենց նրա մոտ էլ ստացել է մարմնամարզական հիմնավոր պատրաստություն: Վերադառնալով Կ. Պոլիս՝ մի որոշ ժամանակ անց՝ 1911 թ. փետրվարին, նա հրատարակում է հայ մարզական առաջին ամսագիրը՝ «Մարմնամարզը»[1]: Շ. Քրիսյանն իր պարբերականը խմբագրեց մինչև 1914 թ., երբ երիտթուրքերն ամբողջ թափով արդեն նախապատրաստում էին հայերի ցեղասպանությունը: «Մարմնամարզը» իր ազդեցիկ ու գործնական հայրենասիրությամբ, հպատակ ազգերի դեմ ուղղված երիտթուրքական հալածական քաղաքականության քննադատությամբ չէր կարող վրիպել թուրքական իշխանությունների ուշադրությունից: 1914 թ. Քրիսյանը հասցրեց տպագրել «Մարմնամարզի» ընդամենը երկու համար, որից հետո այն չի հրատարակվել «իբրև հետևանք քաղաքական դեպքերու», ինչպես հայտնում է հետագայում նրա եղբորորդի Արարատ Քրիսյանը: Նա հայտնում է նաև, որ Առաջին աշխարհամարտը սկսվելուն պես Շ. Քրիսյանն իր մի քանի ընկերների հետ դիմել է Կ. Պոլսի ֆրանսիական դեսպանատուն՝ ֆրանսիական բանակին կամավոր գրվելու մտադրությամբ: Սակայն նրան խանգարում է իր առողջական վիճակը՝ հարկավոր էր կատարել «բժշկական մի փոքր գործողութիւն»: Հապաղումը ճակատագրական եղավ Քրիսյանի համար: Իշխանությունները, ամենայն հավանականությամբ, 1915 թ. ապրիլին, ձերբակալում են նրան և հայ մտավորականների մի խմբի հետ աքսորում Այաչ: Հենց այստեղ էլ դահիճները, հաշվեհարդար են տեսել նրա հետ: Շ. Քրիսյանից բացի, զոհ դարձան մարզական մշակույթին նվիրված հայրենասեր այլ մարզիկներ՝ Հայկ Ճոլոլյանը, Գ. Քերեստեճյանը, Վ. Յափուճյանը, Գ. Արխանյանը և ուրիշներ[2]:

---

[1] «Հայ սկաուտ» (Կ. Պոլիս), 1920, թիվ 12, էջ 189-191, Նագգաշեան Ա., Հայ մտավորականներու ձերբակալութիւնը և Այաշի բանտը, էջ 33, 90: Թէոդիկ, Յուշարձան նահատակ մտավորականութեան, էջ 46, 122: Սիրունի Հ., Ինքնակենսագրական նոթեր, էջ 190, 286:

[2] «Հայ սկաուտ», 1920, թիվ 12, էջ 194-199:

Շ. Քրիսյանն արևմտահայության, հատկապես պոլսահայ կյանքում մարզական մշակույթին մոտեցավ իր ժամանակի եվրոպական դործնական առաջադրումներով ու տեսական սկզբունքներով: Հայ ֆիզիկական կրթության ու դաստիարակության ասպարեզում Շ. Քրիսյանն ու նրա «Մարմնամարզը» առաջացրին իսկական հեղաշրջում:

Ի սկզբանե նկատենք, որ «մարմնամարզ» եզրույթը Շ. Քրիսյանի և նրա սերնդակիցների կողմից ենթադրվում է ոչ թե որպես թեթև աուլետիկայի մի ձև՝ մարմնամարզություն (գիմնաստիկա), այլ առհասարակ մարմնակրթանք, սպորտ՝ իր բոլոր ձևերով: Եվ իսկապես, Շ. Քրիսյանի պարբերականը ժողովրդականացրել է սպորտի այն ժամանակվա բազմաթիվ ձևեր՝ մարմնամարզություն, ֆուտբոլ, վազք, բարձրացատկ, գնդի հրում, ձողացատկ և այլն: Իր մարզական քարոզչությունը Քրիսյանն ուղղում է դեռահասներին, պատանիներին ու երիտասարդությանը և առհասարակ չափահասներին, ազգի հոգևոր առաջընթացը հիմնավորում նրա բոլոր անդամների ֆիզիկական առողջության նախապայմանով: Պատահական չէ, որ պարբերականն առաջին համարներից սկսած տպագրեց Շ. Քրիսյանի «Մարմնամարզական դասընթացք» հրահանգիչ աշխատությունը (1911, թիվ 1, էջ 22–28): Այն կազմված է տեսական և գործնական մասերից: Տեսականը ներկայացնում է ընդհանուր սկզբունքներ, որոնք ամրապնդվում են բուն վարժություններով (փորձեր): Դասերը նախատեսված են տարիքային որոշակի խմբի համար: Գործնական մասը հագեցած է մարզանքը պատկերող նկարներով և կից բացատրություններով: Շ. Քրիսյանը պատշաճ տեղ է հատկացնում կանանց մարմնակրթանքին՝ ի հնճուկս պահպանողականների դիմադրության, որոնք անբարոյականություն էին համարում կանանց ֆիզկուլտուրան: Դրան էր առարկում «Մարմնամարզի» դիրքորոշումը հակիրճ ձևակերպող՝ «Շաքե» ստորագրող հեղինակը. «Այր մը կրթելը միայն մարդ մը պատրաստել է, իսկ կին մը կրթելը՝ ամբողջ սերունդներ պատրաստել է»

(1911, թիվ 1, էջ 13): Ֆիզկուլտուրայի կարևորությունը գիտակցող մայրերի առկայությամբ էր ենթադրում «Մարմնամարզը» դրա ժողովրդականացումը հանրության մեջ: Նույն Շաքեն Ֆիզկուլտուրայի տարածումը սկսում էր հենց մայրերից, ի դեպ, նրանց գայթակղելով կնոջ բարեճաշակության վրա Ֆիզկուլտուրայի թողած դրական ազդեցությամբ (1911, թիվ 1, էջ 15): Այս հանդամանքն առավել խորությամբ է քննարկում Շ. Քրիսյանը «Հայ աղջկանց ֆիզիքական կրթութիւնը» հոդվածում: Ֆիզկուլտուրան, նրա համոզմունքով, մարմնական գեղեցկությունը վերհանելու և կատարելագործելու, մարմնի առողջությունը պահպանելու միջոց է, ուստի այն պարտադիր պետք է դարձնել աղջիկների վարժարաններում: «Եթե չենք ուզեր, որ Հայու կնիկ բառին այսքան տգեղ բացատրութիւնը իր գոյութիւնը պահէ, կարծեմ ժամանակ է, որ հայ վարժարաններու մէջ բոլոր հայ աղջկանց համար մարմնակրթանքը պարտաւորիչ ըլլայ՝ առանց կարևորութիւն տալու ծնողական դիտողութիւններու, որոցմով չեն ուզէր, որ իրենց աղջիկը համալ ըլլայ» (1912, թիվ 3, էջ 44: Ընդգծումը՝ բնագրից):

Ծնողական նշված կարծրամտությունն էր պատճառը, որ ամսագրի հեղինակներից Ա. Պետրոսյանը հորդորում էր կանանց մեջ Ֆիզկուլտուրան տարածել զգուշորեն՝ այն ներքին համոզմունք դարձնելով (1913, թիվ 4, էջ 70–71): Թարգմանական մի հոդվածում (ֆրանսերենից) կնոջ ընտանեկան ու հանրային դերի բարձրացումը կապվում է նրա գեղեցկության ու խելքի հետ, որոնց նպաստում է Ֆիզկուլտուրան (1911, թիվ 7,էջ 208): Կանանց մեջ Ֆիզկուլտուրայի քարոզչությունը Քրիսյանը մղում է ամենատարբեր կողմերից, տպագրում ինքնուրույն և թարգմանական բազմաթիվ նյութեր, հանդես գալիս գործնական առաջարկներով: 1913 թ. սկզբին «Մարմնամարզը» բացեց նոր խորագիր՝«Կանանց բաժին», նպատակ ունենալով իր շուրջ համախմբել եռանդուն անհատների, որոնք այս ասպարեզում «կարեւոր հիմը դնել կնոջական շարժումի մը» (1913, թիվ 2, էջ 32): Շ. Քրիսյանը հասավ այն բանին,

որ Կ. Պոլսի Նիկողոսյան աղջկանց վարժարանում հիմնվեց «Եռանդ» մարմնամարզական ակումբը՝ ինքն էլ ստանձնելով դրա մարզչի պարտականությունը (1913, թիվ 3, էջ 39): Առաջին ծիծեռնակներն արդեն հայտնվել էին. Էսայան սանուց միությունը ևս կազմակերպել էր կանանց մարմնամարզական ակումբ: Քրիսյանն առաջարկում էր աղջիկների մարզական զարգացման փուլը սկսել թաղերից՝ յուրաքանչյուր թաղում կազմակերպելով խմբեր: Թաղային մարզական կառույցները պետք է համագործակցեին թաղային վարժարանների հետ՝ ոչ միայն ֆիզկուլտուրան պարտադիր դարձնելու, այլև երիտասարդության մի մասի մեջ սպորտային՝ մարզական խավ առանձնացնելու իմաստով:

Ֆիզիկական կուլտուրայի ժողովրդականացման ընթացքը Շ. Քրիսյանը պատկերացնում էր այն ժողովրդի կենցաղում արմատավորելու, տարիքային տարբեր խմբերին (վաղ մանկական տարիք, դպրոցականներ, երիտասարդներ և այլն) հասցեագրված ծրագրերով: Այստեղից՝ մարմնակրթության անհրաժեշտության հիմնավորումը «Մարմնամարզի» էջերում՝ սկսած ֆիզիկական մշակույթի վաղնջական պատմությունից մինչև ժամանակակից Եվրոպական սպորտը, ամենատարբեր մարզաձևերը, մարզական ցուցանիշների մասին լրատվությունը և այլն: Հետաքրքիր են դպրոցական առողջասպահիկ պայմաններին, առողջ ապրելակերպի և առհասարակ կենսաբանական օրինաչափություններին սպորտի առնչությունների վերարերյալ հրապարակումները: «Մարմնակրթության պատմականը» վերնագրով իր հոդվածաշարում Շ. Քրիսյանը սպորտի կարևորությունն ընդգծում է անցյալի քաղաքակրթություններից օրինակով, որ ցույց է տալիս նրա լավատեղյակությունը ֆիզիկական մշակույթի պատմությանը: Առավել հանդամանորեն նա անդրադառնում է մարմնակրթության մշակույթի լայն ժողովրդականությանը Հին Հունաստանում, օլիմպիական խաղերին, ապա անցնում է Հռոմին, հատկապես հին հույների ազդեցությանը Հռոմեական մարզական մշակույթի վրա (1911, թիվ 2, էջ 38–39, թիվ 4, էջ 102–103): Ակներև է, որ խոր անցյալում ազգերի ու պետութ-

յունների հզորության նրաչխիքը Քրիսյանը մի հայտնի չափով որոնում է անհատների ու նրանցից դոյացող հասարակությունների ֆիզիկական հզորության մեջ: Այս մոտեցումը, ինչպես կտեսնենք քիչ անց, «Մարմնամարզի» խմբագրի մտասևեռ դաղափարն էր, փրկության միջոց, որին պետք է ապավիներ, նրա կարծիքով, ֆիզիկական կործանման եզրին հասած հայությունը: Նա նույն մեկնակետից էր բացատրում Հռոմի վնհության անկումը՝ քրիստոնեության հայտնությամբ մարմնական ուժի անառարկելի մերժումը, որ միանգամայն այդ վնհության փլուզման դատակնիքն էր լինելու: Իր պատմական ակնարկում Քրիսյանն այնուհետև անցնում է եվրոպական վերածննդին, ապա Ռուսսոյին, Պեստալոցցիին և այլոց, հետո ֆիզիկական մշակույթի աստիճանաբար ձևավորվող արդիական ուղղություններին: Այս վերջինների մեջ Շ. Քրիսյանը նախապատվությունը տալիս էր, ի դեպ, չվեդական մարմնամարզական համակարգին:

«Մարմնամարզը և իր անհրաժեշտությունը», «Ֆիզիկական գործունեությունը և երկարակեցությունը», «Մարզանքը և բժիշկները» ու բազմաթիվ այլ հոդվածներում Շ. Քրիսյանը շարունակում է ֆիզիկական մշակույթի քարոզչությունը՝ հայ հանրության մեջ այն համոզմունք դարձնելու համառ հետևողականությամբ: Իր համախոհների հետ (Հ. Քրիսյան, վ. Փաշազյան, Հ. Գարանֆիլյան, Հ. Հինդլյան և ուրիշներ) Շ. Քրիսյանը ձգտում էր վարժարաններում ֆիզկուլտուրայի պարտադիր ուսուցմանը: Այս տեսակետից «Մարմնամարզը» ընդօրինակելի էր համարում չվեդական դպրոցները, որտեղ ֆիզկուլտուրան իր տեղն ուներ պարտադիր առարկաների դասացանկում: վ. Փաշազյանն իր «Մարմնամարզը հայ աղգային վարժարաններէն ներս» հոդվածում նույնպես ընդգծում էր ֆիզկուլտուրայի ոչ ինքնաբավ նշանակությունը, մեծապես նպաստելը մանկան բարոյական առողջ նկարագրին ու մտավոր զարգացմանը և, ի վերջո, սերնդի բնականոն չարունակությանը (1912, թիվ 20, էջ 368): Առաջադրելով տարրական դպրոցից մարմնակրթանքը սկսելու խնդիրը, որ զգալի է հատկապես պարբե-

լական հրատարակության առաջին չրջանում, «Մարմնամարզը» տպագրից Հակոբ Քրիսյանի «Դպրոցական խաղեր» հոդվածաշարը՝ 1912 թ. համարներում: Այս բովանդակության նյութերը Շ. Քրիսյանը տպագրում էր որոշակի ծրագրով՝ վարժարաններում ֆիզկուլտուրայի ուսուցումը խմբավորելով ըստ տարրական, միջին և բարձրագույն դասընթացների: Յուրաքանչյուր դասընթաց, իր հերթին, նա տրոհում էր տկարների, միջակների և ուժեղների խմբերի՝ ելնելով սանների ֆիզիկական հնարավորություններից: Կար նաև սոցիալական բաժանումը. Շ. Քրիսյանն առաջարկում էր Կ. Պոլսի վարժարանները բաժանել Հարուստ, միջակ և աղքատ դասերի: Ընդհանուր՝ չորս ոսկի (դուրուշ) վարձի դեպքում աղքատները պետք է վճարեին ընդամենը մեկ ոսկի: Առաջարկը բխում էր նորակազմ «Հայ մարմնամարզական միության» ծրագրից և կոչված էր հաղթահարելու ֆիզկուլտուրայի ուսուցման հետ կապված նյութական դժվարությունները:

1912 թ. դրությամբ Կ. Պոլսի հայկական վարժարանների թիվը հասնում էր 43-ի՝ 6000-ի չափ երկսեռ աշակերտներով (1912, թիվ 19, էջ 349): Շատ վարժարաններում չկար ֆիզկուլտուրայի ուսուցում և այս հանդամանքը ցույց էր տալիս, որ «Մարմնամարզի» դործիչները պետք է կոտրեին նաև բարոյական առկա նախապաշարումները և, առաջին հերթին, պահպանողական կարծրամտությունը: Ի դեմս պահպանողականության, «Մարմնամարզը» նկատի ուներ ամենից առաջ թաղական խորհուրդների ազաներին, որոնք ճնշումներ էին գործադրում ուսումնական խորհրդի վրա՝ ֆիզկուլտուրայի առջև փակելու վարժարանների դռները:

Այս իրողությանն անդրադարձավ նաև հանրահայտ մարզիկ Վահրամ Փափազյանը, որի համար չվեդական պարտադիր ուսուցման սկզբունքը մնում էր ընդօրինակման խնդիր: Նա դրում էր, որ «Մարմնամարզական միության» նպատակների մեջ պետք է մտնի Արևմտահայաստան և դավառական այլ կինտրոններ մարզիկներ ուղարկելը՝ ֆիզկուլտուրան տարածելու համար (1912, թիվ 20, էջ 368–369): Ինքը՝ Վ. Փափազյանն առաջարկում էր իր անվճար

աշխատանքը որևէ վարժարանում և հորդորում էր հայրենասեր մարզիկներին՝ հետևել իր օրինակին: Կ. Ուշապլյանը նույնպես իր «Դէպի գաւառ» հոդվածում քննարկում էր գավառներում ֆիզկուլտուրան ժողովրդականացնելու հարցն ու ակնկալում, որ «յառաջիկայ մարմնամարզական համաժողովին մէջ նկատի առնուէր մասնաւորապէս գաւառը» (1912, թիվ 20, էջ 377):

Հարկավոր է առանձնացնել «Մարմնամարզի» չանքերը՝ հայ դպրոցում ֆիզիկական կուլտուրայի մուտքը նախապատրաստելու ուղղությամբ: Նրա էջերում քննարկվում են, և եվրոպական չափանիշներով, դպրոցական առողջապահության խնդիրները: «Անձնական առողջապահություն» հոդվածում Շ. Քրիսյանը հայտնում էր, որ «Մարմնամարզն» այսուհետև հետևելու է անձնական առողջապահիկ և հիգիենայի խնդիրներին (1912, թիվ 8, էջ 131–132): Ե. Համբարձումյանն իր հոդվածում՝ «Դպրոցը և առողջապահությունը» վերնագրով, բացատրում էր «գործնարանային» (գործնական) առողջապահության կարևոր նշանակությունը դպրոցում՝ նշելով դրա սերտ առնչությունները հոգեկան կամ բարոյական առողջապահության հետ: Առողջապահությունը, եզրակացնում է նա, մանկան ֆիզիկական և մտավոր առկա վիճակը հաստնում է բարձր աստիճանի: Դրա ապահովման կարևոր փուլերից մեկը նա համարում է ախտարդելական (պրոֆիլակտիկ) առողջապահությունը (1912, թիվ 8, էջ 135–136): Գրեթե նույն թեմաներն է շոշափում Մ. Ժամկոչյանը, որը դպրոցական միջավայրում քնական պայմանների ապահովումը դիտարկում է հիվանդությունների կանխարգելման տեսակետից (1912, թիվ 12, էջ 209–210):

Ֆիզկուլտուրան դպրոցում ամրապնդելու հիմնահարցերին է նվիրված Հ. Քրիսյանի «Մարմնամարզը մեր վարժարաններուն մէջ» ծրագրային հոդվածը: Այն ունի քննադատական ուղղվածություն: Հեղինակը բացահայտում է հայ վարժարաններում ֆիզկուլտուրայի հանդեպ անտարբերությունը, աշակերտների առողջ մարմնի անտեսումը՝ հակառակ Կ. Պոլսի եվրոպական և ամերիկյան վարժարանների: Անտեսվում է նաև հետագա սերունդների

ֆիզիկական դաստիարակությունը, որովհետև, ինչպես նկատում է հեղինակը, դպրոցական շենքերի նախագծերում չի նախատեսվում մարմնակրթանքը, խաղավայրերին տեղ հատկացնելու խնդիրը: Հակառակ դրան, Շ. Քրիսյանն առաջ է քաշում ոչ միայն բաց խաղավայրերի, այլև փակ սրահների կարևորությունը, որ ենթադրում էր շուրջտարյա մարմնամարզի ուսուցում: Այստեղ ևս նա չնչտում է, որ կողմնակից է դպրոցական ֆիզկուլտուրայի այն համակարդին, որը հետամտում է ոչ թե մասնակի՝ մկաններրի, այլ ամբողջ մարմնի ներդաշնակ զարգացմանը (1912, թիվ 5, էջ 74): Նույն՝ չվեդական դպրոցի սկզբունքներից ելնելով, Շ. Քրիսյանը դեռահասների տարիքային խմբի համար առաջարկում է մարզանքի տարբեր համալիրներ: «Մենք սխալ մը գործած կըլլանք,- գրում է նա,- եթէ մանկապարտէզի, նախակրթարանի և միջնակարգ վարժարանի աշակերտներուն միևնոյն մարզանքը ընել տանք: Կազմուածքները տարբեր ըլլալով՝ պէտք ունին տարբեր տեսակ չարժումներու» (1912, թիվ 5, էջ 74):

Շ. Քրիսյանն առաջադրում էր դպրոցներում ֆիզկուլտուրայի դասավանդման ծրագրի և մեթոդիկայի խնդիրներ, որոնք պետք է ապահովեին դասավանդման շարունակականությունը: Ամեն օր, դասերից առաջ, ըստ այդմ, աշակերտներին պետք է հավաքել մարզանքի՝ կես ժամ տևողությամբ: Այդ ժամանակը ևս պետք է բաժանել երկու մասի՝ 10 րոպե մարզանք և 20 րոպե խաղ՝ նախակրթարանի առաջին կարգի աշակերտների, իսկ նախակրթարանի բարձրագույն կարգի և միջնակարգի աշակերտների համար՝ 15-ական րոպե՝ մարզանքի և խաղերի համար (1912, թիվ 5, էջ 75):

Իր հակառակորդներին, իսկ այդպիսիք քիչ չէին, ֆիզկուլտուրայի անհրաժեշտությունն ապացուցելու նպատակով Շ. Քրիսյանը վկայակոչում էր օսմանյան կառավարության որոշումը՝ ֆիզկուլտուրայի ուսուցումը թուրքական վարժարաններում պարտադիր դարձնելու մասին: Ավելին, կառավարությունը Անգլիայից հատուկ մարզիչ էր հրավիրել՝ իսլամ վարժարաններում բոյսկաուտիզմը տարածելու համար: Նկատենք, որ դեռևս 1912 թ. հունիսին

պարբերականում Թ. Հինդլյանը «Հայ պոյսքաուդներ» հոդվածաշարում հանգամանորեն անդրադարձել էր իր «պզտիկ բարեկամներին»՝ իրենց բարքերում մոցնել բոյսկաուտական ոգին՝ «ազնուացնելու մեր ցեղը», որ նշանակում էր առողջ և առաքինի կենցաղը հիմք դարձնել բարոյական ըմբռնումների համար (1912, թիվ 12, էջ 203–205): Իսկապես, բոյսկաուտիզմը հայութեան մեջ տարածվում էր 1912 թ., որ վկայում է նաև «Մարմնամարզի» ամերիկահայ թղթակից Տ. Սիրամարդի «Ջինուոր տղաք» հոդվածը՝ բոյսկաուտական կազմակերպութեան կառուցվածքի, պատվիրանների, ավագութեան աստիճանների և այլնի մասին: Նա առաջարկում է հայերի մեջ ևս ծավալել այդ շարժումը, որին արդեն ձեռնամուխ էին եղել ամերիկահայերը (1912, թիվ 16, էջ 290–291): Բոյսկաուտական շարժման դրվատումը հայ մարզական պարբերականի էջերում ոչ թե ինքնանպատակ բնույթ ուներ, այլ կազմում էր նրա՝ ֆիզկուլտուրայի և սպորտի քարոզչութեան մի մասը: Իր մի հոդվածում Շ. Քրիսյանն ակնարկ է նետում Անգլիայում բոյսկաուտական շարժման պատմութեան վրա՝ սկսած 1908 թ. դրա սկզբնավորումից և նշելով, որ այն հիմնված է «ազգասիրութեան և բարոյականութեան առաջնորդող գաղափարներու վրայ» (1913, թիվ 1, էջ 13): Ակներև է, որ Քրիսյանը բոյսկաուտիզմը ևս ծառայեցնում է իսկական հայրենասիրութեան գաղափարին: Նրա ջանքերի շնորհիվ Կ. Պոլսում 1913 թ. ստեղծվեց Հայ սկաուտների կազմակերպությունը. այդ տարվա ապրիլին կազմված առժամյա ժողովի անդամ էր ընտրվել նաև Շ. Քրիսյանը (1913, թիվ 4, էջ 78):

Ֆիզկուլտուրայի և սպորտի ժողովրդականացումը «Մարմնամարզի» էջերում ուղեկցվում էր գործնական նշանակալի ձեռքբերումներով ու ամենից առաջ՝ այն կազմակերպական հունի մեջ դնելու, մարզական կառույցների ցանց ստեղծելու բնագավառում:

*
* *

1910-ական թվականներից մինչև Առաջին աշխարհամարտը Կ. Պոլսում գործում էին մեկուկես տասնյակից ավելի հայկական մար-

զական ակումբներ: Դրանց մի մասը կազմակերպվել էր «Մարմնամարզից» մի քանի տարի առաջ, հավանաբար, դարասկզբին: Պարբերականում մարզական ակումբներից հաճախակի են հիշատակվում Պեշիկթաշի «Ահարոնյան» և «Միածան» ակումբները, Կում կափուի «Արծիվ» և «Տորք», Բերայի «Արաքս», Նշանթաշի «Արարատ», Պալաթի «Սասուն», Սկյուտարի «Րաֆֆի», «Հայ մարմնամարզական միություն» և «Անդրանիկ», Պոյաճի գյուղի պատանեկան «Հայ առաջադիմական ակումբ», Դուրուչեշմեի «Արտավազդ» ակումբները: Ֆուտբոլի լայն տարածման պայմաններում իրենց թիմերն ունեին «Արագած», «Տորք», «Արծիվ», «Ահարոնյան», «Միածան», «Արաքս», «Րաֆֆի» և «Արտավազդ» ակումբները: Դժվար չէ նկատել, որ մարզական ակումբները կազմակերպվել էին ըստ թաղերի և որ հայաշատ թաղերը (Պեշիկթաշ, Սկյուտար, Կում կափու և այլն) ունեին մեկից ավելի ակումբներ: Ակումբների կողքին հիմնվում էին մարզական միություններ: Այսպես, 1913 թ. կեսին, ընդառաջելով Բերայի շրջանակի վարժարանների աշակերտների ցանկությանը, Շ. Քրիսյանը հայտնում էր, որ որոշել է այսուհետ կազմակերպել մարմնամարզական միություն, որ և հետագայում կարելի է վերածել մարմնամարզական ակումբի (1913, թիվ 5, էջ 86): Հետևաբար, մարզական ակումբներն ընդգրկում էին մեկից ավելի մարզաճևեր, իսկ միությունները հավանաբար՝ մեկ:

«Մարմնամարզի» հրատարակության տարիները հատկանշվում են հայ մարզական կառույցների կենտրոնացման գործընթացով: Պարբերականի գործիչները ձգտում էին կազմակերպորեն միավորել միություններն ու ակումբները մարզական մեկ ընդհանուր կառույցի մեջ, միավորելու և փոխհամաձայնեցնելու դրանց գործունեությունը՝ միաժամանակ ապահովելով տեղական (թաղական, գավառական) միավորների ինքնուրույնությունն ու նախաձեռնության հնարավորությունները: Կազմակերպական այդպիսի ուղղորդող միավոր պետք է դառնար Հայ մարզական միությունը, որին ձգտում էին պարբերականը և նրա խմբագիրը: 1912 թ. առաջին կնճին գործը մտավ նախապատրաստական փուլ, ննթադրվում

էր գումարել միության առաջին համաժողով՝ Հայ մարմնամարզական ընդհանուր միության (ՀՄԸՄ) ձևավորումը վավերացնելու համար: «ՀՄԸ Միությիւնը և նրա գործունեութիւնը» հոդվածում (1913, թիվ 5, էջ 83–86) Շ. Քրիսյանն այսպես էր չարադրում նրա նպատակը. «Հայ ցեղին ֆիզիքական և բարոյական ազնուացումը ձեռք բերել մարմնակրթութեամբ»: Այս գործում նա մեծ հույսեր էր կապում միության հետ, որի համապատասխին ծավալներով գործունեությունը տարածվելու էր ոչ միայն Օսմանյան Թուրքիայում, այլև հայաբնակ բոլոր վայրերում: Միությունը հետամտելու էր ֆիզկուլտուրայի պարտադիր ուսուցումը հայ վարժարաններում դասավանդման միօրինակ ծրագրերով, բայց ուսուցման մեթոդիկայում հաշվի առնելով տեղական պայմաններն ու կարողությունները: Շ. Քրիսյանը պաշտպանում էր միության ուղղահայաց, կենտրոնական կառուցվածքը՝ «վերէն վար»: Միության ստորաբաժանումներն էին կազմելու շրջանակային և տեղական դավառական միությունները, որոնք տեղերում իրականացնելու էին ակումբների ու դպրոցների հետ կատարվող գործնական աշխատանքները: Ղեկավար մարմինն իր հերթին կենտրոնացնելու էր ստորաբաժանումների աշխատանքը՝ կազմակերպելու էր համաժողովներ, նշանակելու էր մարզական մրցումների, օլիմպիական խաղերի տեղն ու ժամանակը, ընտրելու էր մարզական մասնախմբեր և այլն:

ՀՄԸՄ-ի համար Շ. Քրիսյանը կազմակերպական նախընտրելի ձև էր համարում ֆրանսիական մարզական դաշնության կառուցվածքը, որ ենթադրում էր ակումբների փոխադարձ կապերը կենտրոնի հետ և երկկողմանի ֆինանսավորումը կենտրոնից ակումբներին: Համաժողովի նախօրեին «Մարմնարկի» խմբագրությունն իր մշակած հարցարաններով դիմեց հայկական բոլոր ակումբներին՝ Թուրքիայում և արտասահմանում, խնդրելով պատասխանել մի շարք հարցերի (ակումբի անունը, հասցեն, հիմնվելու ժամանակը, անդամների թիվը, մարզական ձևերը, մրցանիշները, նյութական կացությունը և այլն)(1912, թիվ 20, էջ 220):

Համաժողովը, սակայն, հնարավոր չեղավ գումարել ոչ 1912 թ. հուլիսին, երբ այն հետաձգվեց կազմակերպական պատճառներով, և ոչ էլ օգոստոսին՝ «մամուլին մէկ մասին անտարբերութեան» հետևանքով (1912, 12, 219, 16, 300): Վրա հասած Բալկանյան պատերազմը, սակայն, համաժողովի գումարումն անհնարին դարձրեց տեսանելի ապագայում: Այսուհանդերձ, 1913 թ. ապրիլին, ոչ առանց «Մարմնամարզի» տպավորիչ ելույթների, միությունն արդեն կազմակերպված էր, որի մասին Շ. Քրիսյանը գրում է. «Անձնական համոզումներով և մեր անհատական նախաձեռնութեամբ ու դաշափարական համակիր անձերու օժանդակութեամբ հիմնած ենք հայ մարմնամարզական ընդհանուր միութիւն մը և հայ սքաուդներ անուն կազմակերպութիւն մը» (1913, թիվ 4, էջ 61): Ի դեպ, երկու կազմակերպություններն էլ առաջնորդվելու էին «ռամկավար գաղափարներով»:

«Մարմնամարզը» զգալի հաջողություններ ունեցավ ֆիզկուլտուրան և սպորտը Արևմտահայաստանում տարածելու ջանքերում: Պարբերականի էջերում հետաքրքիր տեղեկություններ են տրվում Արաբկիրի, Ամասիայի, Վանի, Մարզվանի, Սամսունի մարզական ակումբների և միությունների գործունեության մասին: «Մարզական կեանքը գաւառի մէջ» խորագրի տակ «Մարմնամարզը» տպագրում էր նորութային լուրեր և տեղեկատվություն՝ գավառական վարժարանների մարզահանդեսների, տեղական մարզիկների և այլնի վերաբերյալ: Ընթերցողն իրազեկվում էր նաև որոշ գավառներում ֆիզկուլտուրայի նկատմամբ կրոնական գործիչների սրտացավ վերաբերմունքի մասին: Նման վերաբերմունքը խրախուսելու նպատակով պարբերականը տպագրեց Արաբկիրի առաջնորդ Գարեգին վարդապետի նամակը, որում նա առաջարկում էր պարբերականին՝ ֆիզկուլտուրայի ուսուցիչ ուղարկել Արաբկիր (1913, թիվ 5, էջ 95): «Մարմնամարզի» խմբագիրն այս առաջարկը հասցեագրեց Կ. Պոլսի Ուսումնական խորհրդին՝ քննադատելով նրա անտարբերությունը արդիական դպրոցական կրթության հանդեպ: Պարբերականը դրվատում էր Զմյուռնիայի առաջնորդ Խ. Ին-

ջեյանին, ում աջակցությամբ տեղի երիտասարդությունը հիմնել էր «Century club» մարմնամարզական խումբը և որի կազմում էր «Հայ որսորդաց ակումբի» մի ճյուղը: Այս ակումբը հիմնվել էր 1908 թ., իսկ 1912 թ. արդեն ուներ շուրջ 200 անդամ, ֆուտբոլի երկու խումբ (1912, թիվ 6, էջ 81, 1911, թիվ 4, էջ 124–126): Զմյուռնահայերի մարզական ակումբի նախագահն էր նշանավոր իրավաբան և հրապարակախոս Գ. Պուպլին (1912, թիվ 6, էջ 82): Ընդգծելով զմյուռնահայերի քաղաքակիրթ վերաբերմունքը ֆիզկուլտուրայի և սպորտի նկատմամբ՝ «Մարմնամարզն» այդ բացատրում էր նաև նրանց անգլիական կրթությամբ, որ նպաստում էր կարծիքների նույնությանն այդ բնագավառում: Նույն կերպ, Շ. Քրիսյանը ողջունում էր Զավեն պատրիարքի ընտրությունը՝ նրան բնութագրելով որպես սպորտի ջատագովի, դեռևս այն ժամանակներից, երբ նա Տիգրանակերտի առաջնորդն էր:

Հայկական միջավայրում ֆիզկուլտուրայի և սպորտի ժողովրդականացման կարևոր հաջողություններից էր, անկասկած, հայկական օլիմպիական խաղերի կազմակերպումը «Մարմնամարզի» նախաձեռնությամբ: 1911–1914 թթ. Կ. Պոլսում կազմակերպվեցին հայկական չորս օլիմպիական խաղեր՝ Օսմանյան Թուրքիայի հայաբնակ շրջանների ակումբների և միությունների մասնակցությամբ: Հայկական խաղերը ևս բռնել էին ավանդականացման ուղին՝ համազգային կարդալիճակի ակնհայտ միտումով, և միայն Առաջին աշխարհամարտն ու դրան հետևած ցեղասպանությունը կասեցրին նշված ընթացքը:

1911 թ. Կ. Պոլսում հայկական ակումբների և միությունների քանակը, որ դոյացել էր հիմնականում 1908 թ. սահմանադրության հռչակումից հետո, թույլ էր տալիս անցկացնել մարզական ստուգատես՝ դյուրացնելով դրանց կազմակերպական միավորումը: Այս խնդիրը հաստնացել էր «Մարմնամարզի» չանախնդիր գործունեության չնորհիվ: Կար, բացի օլիմպիական միջազգային չարժումից, Կ. Պոլսի եվրոպական ու ամերիկյան քոլեջների ցանցում ֆիզկուլտուրայի մշակույթի յուրացման գործընթացը, ինչպես և տեղի

եվրոպացիների ու հույների մեջ օլիմպիական չարժման ըստ ամենայնի խրախուսանքը: Այս պայմաններում Շ. Քրիսյանը գործի էր դնելու իր տպագիր օրգանի բոլոր հնարավորությունները՝ 1911 թ. Կ. Պոլսում հայկական օլիմպիական խաղեր կազմակերպելու ուղղությամբ: 1911 թ. ապրիլին «Մարմնամարզի» խմբագրությունը տպագրեց «Հայկական ոլիմբիական» ծանուցումը՝ խաղեր անցկացնելու մասին (1911, թիվ 3, էջ 65–66): Դրան հետևեց պոլսահայ ակումբների կողմից կարգադիր մասնախմբի ընտրությունը, որի անդամներ դարձան Շ. Քրիսյանը, Մ. Գույումճյանը, Հ. Սավայանը և ուրիշներ: Կազմվել էր նաև խաղավարական ժյուրի: Խաղերի դատավոր նշանակվեց Շ. Քրիսյանը:

Հայկական Ա օլիմպիական խաղերն սկսվեցին և ավարտվեցին 1911 թ. մայիսի 1-ին: Մրցումները տեղի ունեցան Գատը դյուղի «Յունիոն քլաբ» մարզադաշտում: Մարզիկները մրցեցին վազքի տարատեսակ ձևերով, ձողացատկ, սկավառակի նետում, հեծանվավազք, բարձրացատկ, թռիչք երկարություն և այլն: Հաղթողները պարգևատրվեցին 1–3 մրցանակներով (1911, թիվ 4,էջ 117–119):

Հանրագումարի բերելով խաղերի արդյունքները՝ «Մարմնամարզի» խմբագրությունը վերստին առանձնացնում էր չարժման համազգային նպատակները՝ հայտնելով, որ «Պոլսոյ մէջ կազմակերպուելու վրայ եղող մարմնամարզական միութենան հետ պէտք է գաւառներու մէջ ալ կազմուին նմանօրինակ ակումբներ, միացած ոյժերով սկսին լուրջ աշխատանքի փորձեր... որպէսզի կարելի ըլլայ յաջորդ տարուան Հայկական երկրորդ Ողիմպիականը մէջտեղ հանել և համախմբուած ոյժերով, ընդհանուր մասնակցութեամբ և համազգային հանգամանքով» (1911, թիվ 4, էջ 122):

Ինչպես խմբագրությունն էր խոստացել, Հայկական Բ օլիմպիական խաղերը կայացան 1912 թ. հունիսի 3-ին (1912, թիվ 12, էջ 201–202): Այս անգամ ևս «Մարմնամարզը» կարևոր նշանակություն էր տալիս խաղերի համազգային ընդգրկումների նպատակին՝ միևնույն ժամանակ չեչտելով հայ երիտասարդության մեջ ազգային համերաշխության գաղափարը, որ պետք է հաղթահարեր

«անձնական կամ ընկերական դաշուձ հաշիւները» (1912, թիվ 8, էջ 121)։ Համեմատած նախորդի հետ՝ Բ օլիմպիական խաղերին ավելի շատ մարզիկներ էին մասնակցում, ամրագրվեցին ավելի բարձր մրցանիշներ։ Խմբագրությունը «գերազոյն հրճուանք» էր ապրում հատկապես խաղերին իրենց մասնակցությունը բերած հայ պահպանողականների, ընկերվարների ու ազատականների, արհեստավորների, հարուստների ու մտավորականների ազգային միասնության դրսևորումից։ «Մարմնամարզը» տպագրից ընդարձակ ռեպորտաժ՝ խաղերի ու դրանց ընթացքի մասին հանդամանորեն տեղեկացնելով հանրությանը։ Խաղերը սկսվել էին առավել հանդիսավորությամբ։ Կ. Պոլսի Մաքրիդյուղի «Տիտան» և Սամաթիայի «Վահագն» մարզական ակումբները Գր. Մերջանովի գլխավորությամբ ու նվագախմբի հնչյունների ներքո տողան էին կապմել և Գատըգյուղի նավամատույցից անցնելով գլխավոր փողոցներով՝ մտել «Յունիոն քլաբ» մարզադաշտ։ Առանձնացված էր կարգադիր մասնախումբը, օթյակ էր հատկացվել «օրուան թագուհուն» և նրան հարող երկու «պատուակալ օրիորդներուն» (ինչպես եղել էր նաև Ա օլիմպիական խաղերում), որոնք հանձնելու էին մրցանակները։ Մարզաձևերը գրեթե նույնն էին, ինչ նախորդ խաղերում։

Գ օլիմպիական խաղերը ևս անցկացվեցին նույն մարզադաշտում, 1913 թ. հունիսի 16-ին։ Խաղերի հայտարարում նշված էին մարզաձևերը՝ վազք տարբեր տարածություններով, բարձրացատակ, հեծանվավազք, գնդի հրում, սկավառակի նետում և այլն, գրեթե բոլորն էլ ատլետիկայից։ Խաղերը դրված էին պատրիարք Արշարունու «բարձր հովանավորությեան ներքև» (1913, թիվ 6, էջ 108), ներկա էր Կոմիտասը, ով մրցանակներ հանձնեց հաղթած մարզիկներին։

Դ օլիմպիական խաղերը ևս հնարավոր եղավ կազմակերպել՝ չնայած Թուրքիայի ներքին կյանքը բավական անորոշություններ ու հարցականներ էր առաջացնում Առաջին աշխարհամարտը սկսվելուց անմիջապես առաջ։ Խաղերն սկսվեցին և ավարտվեցին 1914 թ.

Հունիսի 1-ին նույն մարզադաշտում, դարձյալ պատրիարքի հովանավորության ներքո: Այս անգամ ևս մարզիկները մրցեցին թենիս, ատլետիկական մարզաձևերում, ինչպես նախորդ խաղերում: Շ. Քրիսյանը, Վ. Փափազյանը, Գ. Շահինը, Լ. Հակոբյանը և այլք ընդգրկվել էին կարդադիր մասնախմբում: «Մարմնամարզի» խմբագրությունը դոհունակությամբ էր հայտնում, որ ֆիզիկական մշակույթի նկատմամբ ազգային իշխանությունները որդեգրել են ղրական վերաբերմունք (1914, թիվ 2, էջ 52):

Կ. Պոլսում անցկացված հայկական օլիմպիական խաղերը զգալի ազդեցություն թողեցին արևմտահայության, այդ թվում և գավառաբնակ հայերի մեջ ֆիզիկական դաստիարակությունն արմատավորելու գործում: Թեև դրանց մասնակցում էին հիմնականում Կ. Պոլսի հայերի մարզական միությունները ու խմբերը, այսուհանդերձ չի կարելի անտեսել դրանց համազգային նշանակությունը թնկուզ և գավառում ֆիզկուլտուրան ու սպորտը ժողովրդականացնելու, դպրոցական դաստիարակության ընդգրկելու տեսակետից: Ավելացնենք, որ «Մարմնամարզը» չէր սահմանափակվում զուտ ազգային մարզահանդեսներով, այլ հանգամանորեն լուսաբանում էր նաև հույների, հայերի ու թուրքերի միջև անցկացվող մրցումները թենիս ատլետիկայից, ֆուտբոլից և այլն: 1913 թ. պարբերականն այս կերպ տեղեկություններ էր տալիս Կ. Պոլսի և Զմյուռնիայի ֆուտբոլի թիմերի (հայկական «Արաքսը», թուրքական «Կալաթասարա»-ն և «Ֆեներբահչե»-ն) մրցումների մասին, երբ մայրաքաղաքում հյուրընկալվել էր Զմյուռնիայի «Հայ որսորդաց ակումբի» թիմը:

Հայերի մեջ ֆիզկուլտուրան և սպորտը տարածելու հիմնահարցն ինքնանպատակ չէր Շ. Քրիսյանի և «Մարմնամարզի» համար: Մարզված մարմինը համադրելով կանոնավոր մտածողությանն ու հոգևոր-բարոյական ներաշխարհին՝ «Մարմնամարզի» խմբագիրը հետամտում էր հայության ինքնապաշտպանության գաղափարի իրականացումը: Դեռևս 1911 թ. Շ. Քրիսյանն առաջադրում էր մարմնակրթանքը դարձնել ազգային ինքնապաշտպա-

նուիրյան գործոն: 1908 թ. օսմանյան սահմանադրության կողմից հպատակ ազգերին տրված կարծեցյալ նրաշխիքներին՝ կայսրության մեջ նրանց ազատության և համերաշխության վերաբերյալ, Շ. Քրիսյանը նայում էր հույժ կասկածանքով և ընթերցողին էր հուշարկում 1890-ական թվականների կոտորածների վերսկսման վտանգը (1911, թիվ 8, էջ 242–244): Հայ օլիմպիական խաղերի մասնախմբի կոչի մեջ ևս ղգացվում է նրա այս մոտեցումը, որտեղ հստակ ակնարկ է արվում հնտագայի բռնուիրյուններին դիմադրելու այն հնարավորուիրյունների մասին, որ ընձեռում են ֆիզիկական դաստիարակուիրյունն ու սպորտը (1911, թիվ 9, էջ 262–263): Գավառներում մարզական միուիրյուններ կազմակերպելու հորդորները, որ քանիցս հնչում էին «Մարմնամարզի» էջերում, մի հայտնի չափով նշանակում էին Արևմտահայաստանի հայ բնակչուիրյանը գործնականում նախապատրաստել պանդվածային ինքնապաշտպանուիրյան: Դժվար է գտնել ժամանակի Կ. Պոլսում հրատարակվող հայկական որևէ պարբերական, որն այդքան հետևողականորեն նչեր մոտալուտ արհավիրքի և դրան նախապատրաստվելու խնդիրը, որքան «Մարմնամարզը»:

Իր մի հոդվածում Շ. Քրիսյանը վկայակոչում էր թուրքերի դեմ հերոսաբար մարտնչող սերբերի և բուլղարների դիմակայության գործում ֆիզկուլտուրայի ու սպորտի լուրջ նշանակուիրյունը (1912, թիվ 21–22, էջ 383–386): «Մարմնամարզի» նույն համարում նա դրվատում էր Կ. Պոլսի «Բյուզանդիոն» թերթը, որը մի խմբագրականում սերբերի հաջող պայքարն Ավստրիայի դեմ բացատրում էր այդ ժողովրդի նոր սերնդի՝ ֆիզիկական մշակուիրին հաղորդակցվելով և հայրենասիրուիրյամբ[1]:

1911 թ. Քրիսյանն այսպիսի տրամադրուիրյուններով արձագանքեց իթթիհատի կենտրոնական կոմիտեի մի որոշմանը, ըստ որի՝ Կ. Պոլսում և երկրի բոլոր վիլայեթներում պետք է կազմվեին ազգային պաշտպանուիրյան մարմիններ, որոնք ֆիզիկական դաս-

[1] «Բյուզանդիոն», 1912, 9 նոեմբերի:

սիարակութեան ընդարձակ ցանցի մէջ պետք է ընդգրկեին երիտասարդութեանը: Շ. Քրիսեանը նկատում է, որ այդ որոշումը պետք է վերաբերի նաև հալատակ մյուս ազգերին, այդ թվում և հայերին: Այդ նա հիմնավորում էր նրանով, որ հայերի ինքնապաշտպանութիւնը կզորանա իրենց ուժի գիտակցումից, որ այնքան անհրաժեշտ էր ոչ վաղ անցյալի հայկական կոտորածների տարինեերին: «Մարմնամարզին մեծ դերը» հոդվածում Քրիսեանը գրեթե ամբողջովին բաց է անում փակագծերը՝ առանց քողարկելու իր տագնապներն ու մտահոգութիւնները. «Այսօր Թիւրքիոյ բոլոր տարրերուն հետ բարեկամ ենք, բայց երբեք չենք կրնար վստահ ըլլալ, թէ միշտ այդպէս պիտի մնանք... Մենք այնպէս կը հաւատանք, թէ բարեկամին հետ բարեկամ, թշնամիին հետ թշնամի ըլլալու ժամանակը եկած է: Տակաւին կրնանք թշնամաբար կոտորուիլ, բայց երբեք բարեկամաբար:

Ու արդեն մեր ըսածը ուրիշ բան չէ, բայց եթէ անհատական պաշտպանութեան ընազդական ու տարրական իրաւունքին մէկ նրւոյթը: Այսօր հայ երիտասարդութիւնը պէտք է պատրաստուի օսմանեան ընդհանուր հայրենիքին պաշտպանութեան, բայց երբ իր դէմ կը տեսնէ երեկուան բարեկամները, որոնք այսօր կուզեն զինքը սպաննել, այս պարագային ոչ թէ ազգային, այլ պարզապէս բնազդական չարժումով մը պէտք է ինք զայն սպաննէ» (1911, թիվ 8, էջ 335):

Հնարավոր չէր ավելի բացահայտ ասել Ադանայի կոտորածներին հետևող երկու տարիներին հայերի դեմ Օսմանյան Թուրքիայում չարունակ պոռթկացող բռնութիւնների ու թշնամանքի առօրյայի մասին: Ավելացնենք, որ Քրիսյանը հանդես էր բերում ոչ միայն հայերի դեմ ուղղված թուրքական վտանգի բացառիկ զգացողութիւն, այլև ձևակերպում էր ազգային ինքնապաշտպանութիւն կազմակերպելու ու ֆիզիկական դաստիարակութեան միջոցով այն զորացնելու գաղափարը: Ազգային ինքնապաշտպանութեան այս հայեցակետն իր նպատակով, անշուշտ, ստանում է քաղաքական արժեք, ազգային միասնութեան ու համախմբման

նշանակություն: Այսպիսի մոտեցումն ուղղվում էր նաև ազգի երիտասարդության միջկուսակցական հակասություններին ու պառակտվածության դեմ, որ հիմքից խոկ մերժում էր Քրիսյանը: «Կը պնդենք,- գրում է նա,- որ ազգային ընդհանուր շահերու շուրջ ամենքս ալ ոևէ կուսակցության պատկանելէ առաջ հայեր ենք ու պարտաւոր ենք իրարու ձեռք կարկառել ու մեր ուսերը տրամադրել հայութեան» (1913, թիվ 4, էջ 66):

*
* *

Ֆիզկուլտուրայի և սպորտի համազգային նշանակության դիրքերից էր Շ. Քրիսյանը դնահատում Ստոկհոլմի V միջազգային օլիմպիական խաղերին (1912) հայերի մասնակցության հարցը: 1912 թ. հունվարին «Մարմնամարզը» հայտնում է, որ հայ վաղորդ Վահրամ Փափազյանը (Կ. Պոլսի «Արտավազդ» ակումբ) մտադիր է մասնակցել Ստոկհոլմի օլիմպիական խաղերին և այդ նպատակով եռանդով մարզվում է: Նրան աջակցելու կոչով պարբերականը դիմում է իր ընթերցողներին: Խմբագրությունը նաև հայտնում է, որ անհրաժեշտ գումարը կարելի է հայթայթել միայն հանգանակությամբ (1912, թիվ 8, էջ 139–140):

Վ. Փափազյանի հետ միասին Ստոկհոլմ մեկնեց նաև մեկ այլ մարզիկ՝ Մկրտիչ Մկրյանը (դնդի հրում): «Մարմնամարզը» հայ մարզիկների մասնակցությունը կարևորում էր օլիմպիական սպորտի սկզբունքներից ելնելով, բայց դրան էր միացնում նաև այդ իրողության ազգային նշանակությունը. «Մեզի համար Փափազյանին առաջին կամ վերջին գալը երկրորդական է, կարևորը մաս առնելն է, իբր հայ» (1912, թիվ 2, էջ 18): Պարբերականն առաջ էր քաշում ազգային արժանապատվության, այդ մասնակցության մեջ ազգի հոգևոր և ոչ թե սոսկ ֆիզիկական կարողությունների հանգամանքը. միջազգային այդ հանդեսին հայերը պետք է ներկայանային ոչ թե իբրև «արցունքի և արեան հոմանիշ», խղճահարություն հայցող, այլ հավասար՝ մրցակցության ասպարեզում:

Հասկանալի պատճառներով մարզական ավանդույթներն ու մշակույթը դեռևս նոր ձևավորող հայ հանրության պատվիրակները փոքր ի շատե նշանակալի տեղ չգրավեցին Ստոկհոլմի խաղերում: «Ու թէև այդ երկու երիտասարդները որևէ նշանակալի հաղթանակ չտարին խաղերուն մէջ, սակայն գոնէ ցոյց տուին, թէ հայն ալ սկսած է չարժիլ այս թմրած Արևելքին մէջ»,- գրում է «Մարմնամարզը» (1912, թիվ 14, էջ 242):

Հենց այս վերջին հայերի մասնակցության հանգամանքն էր անտեսում թուրքական մարզական հանդես «Թերբիյե»[1], երբ իր խմբագիր Սելիմ Սըրրիի բերանով հուսահատ դատողություններ էր անում այն մասին, թե իր ժամանակին Եվրոպայի առջև ազդեցիկ Օսմանյան կայսրությունը Ստոկհոլմում ոչ մի մարզիկ չէր ներկայացրել: Այդ խաղերին ներկա գտնված թուրք խմբագիրը ղւսցել էր հայտնելու, որ նույն Թուրքիայից դրանց մասնակցել էին երկու հայ ներկայացուցիչներ, թեև ընդարձակ տեղեկատվություն էր տալադրել մրցահանդեսի մասին: Այս առթիվ և թարգմանաբար տալադրելով Սըրրիի թղթակցությունը «Մարմնամարզի» խմբագրությունը դրան կցել է իր մեկնաբանությունը «Մեր պատասխանը» վերնագրով, որտեղ, փաստորեն, մերկացվում է երիտթուրքական իշխանությունների վերաբերմունքը հայերի նկատմամբ: Ստոկհոլմի խաղերին թուրքերի չմասնակցելու հարցը, սառը նկատում է խմբագրությունը, «Մեզի երբեք ցաւ չի պատճառեր, ընդհակառակն, մեզի ցաւ կը պատճառէ Սելիմ Սըրրիի այն մտայնութիւնը, որով տակաւին ան կը ճգնի տարբերութիւն մը դնել քրիստոնեայ օսմանցիին և թուրք օսմանցիին միջև» (1912, թիվ 20, էջ 366): Հիրավի, «Մարմնամարզի» խմբագիրը բավականաչափ հստակ պատկերացում ուներ «երեկուան բարեկամների», այդ

---

[1] Թուրքական այդ պարբերականը հրատարակվել է «Մարմնամարզից» հետո, մեարիփի (կրթական նախարարություն) պաշտոնյա Ս. Սըրրիի կողմից: «Մենք, ետք,- գրում է Քրիսյանը,- ինքն ալ իր կարգին սկսած է ֆիզիքական կրթութեան վերաբերեալ թերթ մը հրատարակել թուրքերէն լեզուով» (1912, թիվ 1,էջ 1):

թվում և Թուրք մտավորականության ազգայնական տրամադրությունների մասին:

«Մարմնամարզը» ևս ապրել է հայ մամուլի համար բնութագրական՝ նյութական դժվարությունները: 1911 թ. այն ամսագիր էր, 1912 թ.՝ կիսամսյա, 1913 թ.՝ դարձյալ ամսագիր: Չի տպագրվել 1914 թ. հունվար-ապրիլ ամիսներին (խմբագրի հիվանդության պատճառով), որից հետո լույս է տեսել երկու թվահամար՝ վերջնականապես դադարելով նույն տարվա հունիսին: Այսպես ավարտեց իր պատմությունը հայ մարզական անդրանիկ հրատարակությունը: Ինքը՝ Շ. Քրիսյանը կիսեց հայ մտավորականության եղերական ճակատագիրը: Նա ձերբակալվեց և աքսորվեց Այաչ և այս միջոցներին էլ դարձավ ցեղասպան դահիճների զոհ՝ մինչև վերջ պահպանելով աննկուն հայրենասերի ու մարզիկի ոգու ամրությունը[1]*:*

[1] «Հայ սկաուտ», 1920, թիվ 12, էջ 192-199:

ԳԼՈՒԽ II

ՄԱՄՈՒԼԸ 1918–1922 ԹԹ.

1. ՄԱՄՈՒԼԸ ՋԻՆԱԴԱԴԱՐԻՑ ՀԵՏՈ

Արևմտահայության ցեղասպանության տարիներին, հատկապես 1915–1917 թթ. և մինչև 1918 թ. աշուն, Կ. Պոլսում հայ մամուլը հոգևարք էր ապրում, պարբերականների մեծագույն մասը դադարել էր հրատարակվելուց: Հայ հանրությունը փաստորեն հայտարարված էր օրենքից դուրս, ինչը կործանարար հետևանքներ պետք է թողներ նրա մշակութային հաստատությունների, այդ թվում և մամուլի վրա:

Նոր պարբերականներ Կ. Պոլսում հայտնվեցին 1918 թ. աշնանը, Մուդրոսի զինադադարից (1918 թ. հոկտեմբերի 30) հետո, երբ արձանագրվեց առաջին աշխարհամարտում Օսմանյան Թուրքիայի պարտությունը: Առաջիններից մեկը, որքան մեզ հայտնի է, իր օրաթերթը վերահրատարակեց Հայ Հեղափոխական Դաշնակցությունը («Արդարամարտ», ապա «Արիամարտ» և «Ճակատամարտ» անուններով), որին մինչև տարեվերջ հետևեցին մի քանի նոր թերթեր («Ժողովուրդ», «Հնչակ Դավիթ», «Նոր կյանք» և այլն): Կարճ ժամանակ անց հայտնվեցին նոր պարբերականներ. եթե 1918 թ. Կ. Պոլսում լույս են տեսել յոթ նոր պարբերականներ, ապա 1919 թ. Կ. Պոլսում և Զմյուռնիայում դրանց թիվն արդեն անցնում էր երկու տասնյակից:

1918 թ. Կ. Պոլսում հրատարակված թերթերը, սակավ բացառություններով, կարճ կյանք են ունեցել և փակվել են մի քանի թվահամարից հետո: Պատերազմից հետո ստեղծված քաղաքական ու տնտեսական անորոշությունը, անկայունությունն ու սպասողական լարված իրավիճակը մայրաքաղաքում մամուլի (ինչպես և որևէ մշակութային հիմնարկի) հարատևման պայմաններ չէին կարող ապահովել: Համեմատաբար տևական ժամանակ հրատարակվեց Ե. Տեր-Անդրեասյանի «Նոր կյանք» (1918–1919) առավոտյան

օրաթերթը: Ե. Տեր-Անդրեասյանը հրապարակախոս-լրագրողի ուղին սկսել էր դեռևս 1880-ական թթ.՝ աշխատակցելով Կ. Պոլսի «Ընտանիք» և «Երկրագունտ» հանդեսներին, հետո «Մասիսին», «Փունջին», «Բյուզանդիոնին», «Արևելքին», «Մաղիկին» և «Մանզումեի էֆքյար»-ին[1]: Շուրջ մեկ տարի իր տնօրինությամբ հրատարակվող «Նոր կյանքում» (1918–1919) նա հաճախ է անդրադարձել ցեղասպանության ցնցող դրվագներին[2]: Այն քչերից, որոնց հաջողվեց համեմատաբար երկար ժամանակ հրատարակվել, «Խելոք Դավիթ» (1918–1919) երգիծաթերթն էր, որի արտոնատերն ու պատասխանատու տնօրենն էր Հ. Ազնավուրը: Դրան աշխատակցել են Հ. Ամիրենցը, Գր. Հ. Գալուստյանը, Լ. Շաթրյանը, Զ. Մոլրյանը, Ալփասլանը (Ադ. Փանոսյան) և ուրիշներ: «Անթել հետաքրքրներ», «Խելոք Դավիթին», «Խորոտ խապրիկներ» և այլ խորագրերով նյութերում շաբաթաթերթը բավական դիպուկ ծաղրել է երիտթուրքական կազմալուծված իշխանություններին և նրանց ոճրապարտ քաղաքականությունը հատկապես հայության նկատմամբ: «Մեծ կորուստ մը» հրապարակման մեջ «Խելոք Դավիթը» ծաղրել է օսմանյան երեսփոխանական ժողովը՝ ընդգծելով, որ այդ ժողովը արդարության ու ազատության դահիճն էր և ազգերի դեմ ուղղված հանցագործությունները հիմնավորողը (1917, թիվ 8): Այս թեմայով հաջողված երգիծական հարցազրույց է տպագրել Լ. Շաթրյանը՝ ուրվագծելով մի իթթիհատականի ցինիզմն ու վայրագ նկարագիրը: Նախկին իթթիհատականների մորթասպաշտական ճիգերին և ստոր կեցվածքին Լ. Շաթրյանն անդրադարձավ նաև մեկ այլ երգիծապատումով: Լսելով էնվերի, իբր, մոտալուտ վերադարձի մասին, նա այնքան է ոգևորվում, որ հրաժարվում է իրեն իթթիլյաֆական համարել, որին դիմել էր դատաստանից խուսափելու նպատակով: Իրեն վերստին իթթիհատական հռչակելուց հետո, երբ Կ. Պոլսում հանդիպում է ֆրանսիական զինվորներին, նորից փոխում է իր «համոզմունքները», գոռալով՝ «կեցցէ իթթիլյաֆը» (1919, թիվ

[1] Մնծարանք առ Երուանդ Տէր-Անդրէասեան, էջ 9:
[2] Նույն տեղում:

16): Շաբաթաթերթը երգիծական սուր հարձակումներ է գործել թուրքական մամուլի՝ «Ենի գյուն», «Վաքըթ», «Սաբահ», «Զաման», «Թասվիր-ի էֆքյար» և այլ թերթերի վրա, մերկացրել նրանց հուսահատական փաստարկները երիտթուրքերի քաղաքականությունն արդարացնելու գործում, չքմեղանալու նրանց ճիգերը:

Շաբաթաթերթին առանձնապես հետաքրքրել է երիտթուրքերին դատելու խնդիրը և այս առիթով փաստերով ցույց է տվել, որ թուրքական նոր կառավարությունն ամեն կերպ չանում է օգնել իթթիհատականներին՝ թաքնվելու առաջիկա դատավարությունից, որ դաշնակիցների ճնշումներով իրականացվելու էր Կ. Պոլսում (1919, թիվ 13): Ուշադրավ են այս թեմայով Ս. Դավիթյանի թուրքերեն երգիծական բանաստեղծությունները՝ ուղղված ֆրանսիացի թրքամոլ Պ. Լոթիին, որն ըստ ամենայնի ճգնում էր սատարել երիտթուրքական գործիչներին՝ մեղմացնելով կամ արդարացնելով նրանց կատարած վայրագությունները (1919, թիվ 36): Խարազանվում են Պ. Լոթիի «Թուրքերն ու հայերը» գրքի ակնհայտ կողմնակալ մտքերը՝ թուրքերի գործադրած ոճիրները աքողելու նպատակով (1919, թիվ 38):

«Ինելոք Դավիթը» տպագրել է ցեղասպանությունը վերապրածների վերհուշները, մշտապես աչքի առաջ պահելով համազգային ազետի մղձավանջները: Այլ հրապարակումներում բացահայտվում են երիտթուրքական կառավարման մեթոդների խայտառակ դրսևորումները, չարդարարական գրաքննության գործելակերպը հայ մամուլի նկատմամբ (1919, թիվ 12): Այս տեսակետից ուշագրավ է «Զուռնա» երգիծաթերթի (Կ. Պոլիս, 1910–1911 թթ.) երբեմնի տնօրեն Հ. Ամիրենցի (Ամիրյան) հոդվածը՝ այդ հրատարակությունը իթթիհատի կողմից արգելելու վերաբերյալ: Նրան կանչում են ռազմական ատյան՝ մի անհեթեթ պատճառով. մի հրապարակման մեջ «Զուռնան» գրել էր, թե ոմն մեկը անառակատուն էր գնացել (առանց որևէ անվան կամ պաշտոնի հիշատակման): Բայց այդքանն էլ բավական էր եղել, որ Պեյքոզի գայմագամը հրապարակումը համարի իրեն ուղղված ակնարկ և ամբաստանի «Զուռ-

նան» (1919, թիվ 12): Իր չոշափած խնդիրների վերաբերյալ շարաթաթերթը տպագրել է արտահայտիչ ծաղրանկարներ, աննկդոտներ, երգիծական կարճ բնութագրեր և այլն: Ընդամին, յուրաքանչյուր թվահամարում զետեղել է մեկ կամ երկու դլխավոր ծաղրանկարներ (Թալեաթի, Էնվերի և սրանց գործակիցների, Փարիզի հաշտության կոնֆերանսում թուրքերի չողոմքոր կեցվածքի և այլնի վերաբերյալ), որոնք զուգակցվում են նաև հպանցիկ և ուրվագծային ծաղրանկարներով: Նկատելի է «Խելոք Դավթի» համակրական վերաբերմունքը Հայաստանի Հանրապետության նկատմամբ (1919, թիվ 14): Շաբաթաթերթը պատերազմում հաղթանակած Համաձայնության պետություններից ակնկալել է երիտթուրքերի հետևողական դատապարտումն ու արդար դատաստանը նրանց նկատմամբ, ինչպես և Հայաստանի քաղաքական կացության կարդավորումը:

Պոլսահայ հետպատերազմյան շրջանի երգիծանքը շատ ավելի բարձր արվեստի և խորության հասավ Ե. Օտյանի խմբագրած «Իգնատ աղա» (1919–1920) երգիծական շաբաթաթերթում: Ժամանակի հայ իրականության, պոլսահայ կյանքի և Օսմանյան Թուրքիայի քաղաքական իրավիճակի երգիծական գնահատականը Ե. Օտյանը տվել է այս ժանրի լավագույն ավանդույթների ոգով և խոշոր արվեստագետին հատուկ նուրբ դիտողականությամբ: Շաբաթաթերթի նյութերը ընդհանուր երգիծական չառավղի և միևնույն հունի մեջ է ուղղորդում Իգնատ աղան՝ Ե. Օտյանի ստեղծած պերսոնաժը: Իգնատ աղան և՛ հեղինակի ամենատես և սրամիտ զլուցակիցն է, և՛ մյուս կողմից, իրադարձությունների ու անձանց հանդեպ նրա մտքերի ու վերաբերմունքի արտահայտիչը: Կերպարի երկակի այս բնույթը, որ արևմտահայ երգիծական մամուլին հայտնի էր դեռևս 1850–1860-ական թթ.՝ Հ. Սվաճյանի «Մեղվից» (ի դեմս Մեչուխեչայի), Օտյանին հնարավորություն է տվել երևույթները գնահատել բազմակողմանիորեն, ի հայտ բերել հակադիր կարծիքներ ու տեսակետներ: Իր հերոսի հետ միասին Օտյանը ուշադրություն է դարձնում պատերազմում պարտված Թուրքիայի նոր կառավարության ազգայնամոլության, իթթիհատի դեմ վարած կեղծ

պայքարի դրսևորումներին, արևմտահայության սպանդի իրողությունը թաքցնելու կամ խեղաթյուրելու նրա ջանքերին: «Իգնատ աղան» սատիրական սուր ծաղրով բացահայտում է թուրքական կառավարության՝ երկրի վերածնության վերաբերյալ երազանքները, այն է՝ վերադարձնել կայսրության երբեմնի հողերը, Մերձավոր Արևելքը, Սիրիան ու Միջագետքը: Ե. Օտյանը խորաթափանցորեն նկատում էր թուրքական կառավարության և միլլի (ազգայնական) շարժման փոխադարձ համակրանքները, ապա և դրա հետևում թաքնված համագործակցությունը (1919, թիվ 3, էջ 21, թիվ 5, էջ 76–77): Օտյանը հատկապես ծանակել է քեմալական շարժման ծայրահեղ ազգայնականությունը, կայսրության փլատակների մեջ վոքը ազգերին ճզմելու և ոչնչացնելու գնով նոր Թուրքիա ստեղծելու նրա ջանքերը: Ե. Օտյանը ի սկզբանե, 1919-ից սկսած, լավ էր նկատել միլլի շարժման հետադիմական բնույթը, որ վերջինս ժառանգել էր իթթիհատից[1]: Երգիծական հակադրությունների միջոցով Օտյանը ցույց է տալիս Քեմալի, որպես այդ շարժման պարագլխի ուղղորդող դերը կառավարության վարած քաղաքականության մեջ: Նա այնքան է զորացել, որ, իբրև ազգային ուժերի ընդհանուր հրամանատար, վերահսկում է կառավարության մեջ կատարվող փոփոխությունները, կուսակալների նշանակման գործը (1919, թիվ 5, էջ 40–41): Օտյանը բացահայտում է առհասարակ իթթիհատական և այլ ազգայնական տարրերի համախմբումը ոչ միայն Քեմալի շուրջ, այլև խորհրդարանում՝ հակառակ Թուրքիայի պարտության: Երգիծաբանը ծաղրում է թուրքական խորհրդարանի ընտրությունները, խաբեությամբ ու խայտառակությամբ լե-

[1] Միլլի շարժման բնութագիրը տե՛ս Սիմոնյան Հր. Ռ., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, էջ 498: 1919 թ. հուլիսին Էրզրումի, և ապա սեպտեմբերին՝ Սվասի համագումարներում Քեմալը իր հակահայկական և հակահունական հայեցակարգը ամբողջովին կառուցում էր հպատակ ազգերի իրավունքները ոտնահարելու սուլթանական հին քաղաքականության վրա (տե՛ս Միրակոսյան Ջ., Ընտրանի, էջ 180) և իր նպատակն էր համարում վերադարձը դեպի օսմանյան կայսրության օրենքներով սահմանված ազգային փոքրամասնությունների վայելած, իբր, իրավունքների և արտոնությունների համակարգը (տե՛ս Kaya O., Tanzimattan Lozana Azınlıklar, s. 146-150).

ցուն մի գործընթաց, որի արդյունքում այն լցվել է երբեմնի մարդասպաններով: Այս միջավայրում, ըստ նրա, հայտնի չէ, թե ինչ է անելու Կոնիայից երևափոխան ընտրված կին գրող Հալիդե Էդիպը (1919, թիվ 9, էջ 72–73, թիվ 4, էջ 28):

Թուրքիայի տագնապ ներշնչող իրադարձությունները Օտյանին մղում էին վերհանելու Անտանտի տերությունների՝ Հայկական հարցի հանդեպ չահադիտական վերաբերմունքի դրսևորումները: Շաբաթաթերթում երգիծվում է ամերիկյան գնդապետ Հաուզը, որը Հայկական հարցում իր աջակցությունն է խոստացել Նուպարին, բայց գործնականում ոչինչ չի անում (1919, թիվ 7, էջ 55): Ավելին, Օտյանը իրատեսական կասկածով էր համակված հայկական հնարավորությունների հարցում՝ դատելով թուրքերի հանդեպ եվրոպական երկրների հակասական դիրքորոշումների, Փարիզի հաշտության վեհաժողովում հայկական հարցը հետին բնագիծ մղելու և նման այլ իրողություններից: «Ջորքոտանիների մեջ» այլաբանական սյուժեում ցույց է տրվում, որ ոչխարներին ոչ ոք չի պաշտպանում գայլերից և սրանք անարգել ոչնչացնում են իրենց զոհերին: Հեռվից միայն շներն են հաչում, որպես օգնության հեռավոր և անօգուտ հիշեցում, բայց գայլերն այլևս չեն վախենում և անարգել կատարում են իրենց նախճիրը (1919, թիվ 2, 12–13): Այսպես է պատկերացնում «իգնատ աղան» հայկական հարցի լուծումը եվրոպական քաղաքականության մեջ, որի ճշմարտացիությունը, հիրավի, այսօր էլ հնարավոր չէ մերժել:

Առհասարակ Ե. Օտյանը հարում է այն մտավորականներին, որոնք կասկածով էին համակված Հայաստանի Հանրապետության՝ համազգային հայրենիք դառնալու հնարավորությունների հանդեպ: «Երևանի Հանրապետության» նկատմամբ Օտյանի այս դիրքորոշումը բացասական ուղղվածություն էր ստանում Հայ հեղափոխական դաշնակցության դեմ նրա վաղեմի քննադատական կեցվածքով, իսկ այդ կուսակցությունը ազդեցիկ ուժ էր ներկայացնում Հանրապետության կառավարության մեջ: Ի դեպ, Օտյանն ընդհանրապես քննադատական կտրուկ վերաբերմունք ուներ նաև

քաղաքական մյուս կուսակցությունների՝ հնչակների, ռամկավարների և մյուսների հանդեպ: «Հայաստանէն լուրեր», «Հայկական պատուանշան», «Մեր տեսակցութիւնները» և այլ ֆելիետոններում նա երգիծել է այդ կուսակցությունների միջև եղած հակասություններն ու վոխադարձ հակակրանքները: Հանրապետության հնդհնդուկ և անկայուն վարչական ու տնտեսական կացությունը ևս իր ուրվագծումն է գտել «Իգնատ աղայի» երգիծական նյութերում: Օտյանը ծաղրուծանակի թիրախ է դարձրել նաև ժամանակի պոլսահայ միջավայրի, ինչպես և մարդկանց փոխհարաբերությունների ստվերոտ կողմերը՝ հատկապես «Նոր ազգային ջոջեր» խորագրով դիմանկարներում: Այստեղ միմյանց հերթ չեն տալիս չաղակրատները, անսկզբունք երեսփոխանները, նշանավոր և կննդանի ազդային գործիչների մահախոսականները նախապես պատրաստած ճարպիկ լրագրողը և այլք (1919, թիվ 1, էջ 8, թիվ 3, էջ 22, թիվ 6, էջ 44–45): Օտյանի ծաղրը անվրեպ է և ոչնչացնող, մասնավորապես այն ժամանակ, երբ ուղղվում է կուսակցությունների մեջ ընթացող ազդասպառակիչ պայքարի դեմ: Այս չարաթաթիրթի էջերում էր , որ նա տպագրեց «Փառքի ետեւէ» համեմատաբար ծավալուն գործը:

1920 թ. փետրվարին «Իգնատ աղա» չարաթաթերթը միացել է Ե. Օտյանի խմբագրած մյուս՝ «Շավիղ» երգիծաթերթին և լույս է տեսել «Շավիղ-Իգնատ աղա» անվամբ[1]:

Կ. Պոլսում կազմակերպված «Հայ իրավագիտաց միությունը» 1919–1920 թթ. հրատարակում էր «Իրավունք» չաբաթաթերթը՝ Ա. Զարքյանի պատասխանատու տնօրինությամբ[2]: Շաբաթաթերթը պետք է իրականացներ ակումբի առջև դրված խնդիրները, մշակեր տեսական իրավագիտական հիմնահարցեր, նպաստեր դրանց ժո-

[1] Տե՛ս Հայոց պարբերական մամուլը: Լիակատար ցուցակ, էջ 103, 110:

[2] Ինչպես գրում է Հ. Սիրունին, Կ. Պոլսում կազմվում է «Հայ իրաւագէտներու» միութիւն մը, մէկը այն բազմաթիւ միութիւններէն, որոնք գինադադարին սունկի նման կը բուսնէին Պոլսոյ մէջ: Նոյն միութիւնը լոյս ընծայեց «Իրաւունք», յետոյ ալ «Օրէնք» պարբերականները, զորս ատեն մը խմբագրեցի ես» (Սիրունի Յ., Ինքնակենսագրական նոթեր, էջ 213):

ղովրդականացմանը, ինչպես նաև տնղայնացներ վերոհիշյալ հիմնահարցերը: «Իրավունքը» կազմակերպելու էր իրավունքի վերաբերյալ դասախոսություններ, բանավեճեր, օգներ՝ ստեղծելու իրավաբանական եղրույթի հայերեն համարժեքները, իրավագիտական մասնագիտական գրադարան և այլն: Արծարծում էր ընտրական իրավունքին, կրոնի և պետության փոխհարաբերություններին, փաստաբանական գործունեության, օրենքների մեկնաբանությունների վերաբերյալ խնդիրներ: Նույն բովանդակություն ուներ «Օրենք» ամսաթերթը, որը հրատարակում էր վերոհիշյալ միությունը՝ «Իրավունքից» հետո: «Օրենքը» լույս է տեսել 1921 թ., ընդամենը երեք համար՝ Ա. Սահատեթյանի պատասխանատու տնօրինությամբ և Լ. Գուլումճյանի արտոնատիրությամբ[1]: Աշխատակցում էին ակումբի անդամներ Ա. Զաբքլյանը, Ս. Ռշտունին, Վ. Զեյթունյանը, Գր. Հ. Գալուստյանը, Ստ. Գարայանը և ուրիշներ:

1919–1922 թթ. Կ. Պոլսում բավական աշխուժացում սպրեցին պատանեկան և մարզական հրատարակությունները: Առաջինը «Հայ սկաուտ» հանդեսն էր (1919–1920)՝ Հայ մարզական ընդհանուր միության հրատարակությունը: Խմբագիրն էր Կ. Պ. Ուշագլյանը, պատասխանատու տնօրենը՝ Հր. Տեր-Ներսեսյանը: Սկզբից իսկ այս կիսամսյա պարբերականը հանդես էր գալիս որպես Կ. Պոլսի ազգային կենտրոնական վարչության կողմից ճանաչված հրատարակություն, որը սկաուտական հայկական կազմակերպությունների պաշտոնաթերթը լինելով, իր մարզական ծրագրերն էր իրականացնելու Կ. Պոլսի թաղային և անհատական վարժարաններում (1919, թիվ 1, էջ 3): «Հայ սկաուտը», ի վկայություն այս ճանաչման, տպագրել է պատրիարք Զավենի ողջույնը (ն. տ., էջ 4): Այն ուներ որոշակի մարզական ծրագիր, որ իրականացնում էր իր համապատասխան՝ մարմնամշակություն (առողջապահություն), մարմնակրթություն (մարմնամարզություն, խաղեր), սկաուտություն (երևելի մարզիկների կենսագրականներ, մարզիկներին նվիրված դե-

[1] Տե՛ս Հայ պարբերական մամուլի մատենագիտություն, էջ 472:

զարվեստական երկեր), ՀՄՄ գործունեություն, մրցումի նյութերի և այլ բաժիններում: «Հայ սկաուտն» ի սկզբանե հանդես էր գալիս վերկուսակցական համազգային դիրքերից. «Մենք պաշտօնապէս ոևէ կուսակցութեան չենք հարած, մեր կազմակերպութիւնը հավաքաբար չզբաղիր քաղաքականութիւնով, իսկ անդամները անջատաբար ազատ են իրենց համոզումներուն մէջ» (ն. տ., էջ 3),- դրում էր շաբաթաթերթը: Նրա կարծիքով, հայերը մեծ պատասխանատվությամբ պետք է մոտենան սկաուտական մարզական շարժմանը, որ տարածվում է ամբողջ աշխարհում: Ակնկալելով հայ բեկորների մոտալուտ ներգաղթը և հայկական պետության ստեղծումն Արևմտահայաստանում, «Հայ սկաուտը» կոչ էր անում Հայաստանի Հանրապետությանը՝ մասնավոր հոգածություն դրսևորել ազգի մարզական մշակույթի զարգացման նկատմամբ: Պարբերականը բավական տեղեկություններ է տվել սկաուտական ու մարզական շարժման մասին: Գր. Մերջանովը, որը հայ մարզական առաջին պարբերականի՝ «Մարմնամարզի» ակտիվ գործիչներից մեկն էր եղել, «Հայ սկաուտում» իր տպավորություններն է պատմում Հայաստանի Հանրապետությունում մարզական կյանքի դրվածքի մասին: Շուրջ 20 հազար որբեր, հայտնում է հանդեսը, Հայաստանում զբաղվում են մարզանքի դասերով: Հայաստանի լուսավորության նախարարությունը, գրում է նա, գնահատելի ջանքեր է գործադրում կառավարությունից մարզական հատկացումներ ստանալու համար (1919, թիվ 2, էջ 17):

«Հայ սկաուտին» աշխատակցում էին Վ. Փափազյանը, Հ. Քրիսյանը, Հ. Հինդլյանը, Գր. Մերջանովը, Վարագը և ուրիշներ: Նրա էջերում զետեղվել են Կ. Պոլսի և գավառների մարզական իրադարձությունների վերաբերյալ լուրեր, մարզական միջոցառումների մասին ռեպորտաժներ, թղթակցություններ, մարզական արդյունքները հանրագումարի բերող հրապարակումներ և այլն: Հատկապես հարուստ է ֆուտբոլին վերաբերող նյութը, մի մարզաձևի, որ ամենասիրվածներից էր ոչ միայն այս պարբերականի, այլև նրա ընթեր-

ցողների համար: «Հայ սկաուտը» շարունակում էր «Մարմնամարզի» ավանդույթները՝ տպագրելով մարմնամարզին և սպորտին վերաբերող տեսական բնույթի նյութեր, ինչպես նաև մարմնակրթության բնախոսության, դրա կազմախոսական նշանակության, ֆիզիկական և մտավոր ներդաշնակ զարգացման մասին հետաքրքրական հոդվածներ: Իրենց հրատապ արժեքով աչքի են ընկնում շաբաթաթերթի թղթակցությունները ու ռեպորտաժները գավառի (Մարզվան, Ջմյուռնիա, Ադաբազար և այլն) մարզական կյանքի, մրցումների, դրանց արդյունքների մասին: Տպագրել է ընդարձակ նյութեր (թարգմանական և ինքնուրույն) եվրոպական և ամերիկյան մարզիկների, մարզաձևերի և այլնի վերաբերյալ: Հրապարակել է ուշագրավ մեթոդական ցուցումներ, ընթերցողի ուշադրությունը հրավիրել սպորտի նպատակի, անհատի բարոյական ձևավորման գործում ֆիզիկական պատրաստականության դերի մասին: Հետաքրքիր են հայ առաջին օլիմպիականների մարզական կյանքը լուսաբանող նյութերը: «Հայ սկաուտն» այս թեմայով տպագրեց Հաբեթ Փափազյանի (օլիմպիական մրցումներին մասնակցած առաջին հայ ատլետը՝ Աթենք, 1896), նրա եղբայր Վահրամ Փափազյանի և Մ. Մկրյանի (Ստոկհոլմ, V օլիմպիական խաղեր, 1912) համառոտ մարզական բնութագրերն ու լուսանկարները (1920, թիվ 10, էջ 165): «Հայ սկաուտն» անդրադարձել է արևմտահայերի մեջ մարզական մթնոլորտի ձևավորման շրջանին, դարասկզբի Կ. Պոլսի մարզական կյանքին: Այս առումով ճանաչողական նշանակություն ունի Վ. Փափազյանի հոդվածը՝ «Ինչպէս վազող եղայ» վերնագրով, որը վերաբերում է նշված ժամանակաշրջանին և նրա մարզական ուղուպատմությունն է: Շաբաթաթերթերը տպագրել է ցեղասպանությանը զոհ գնացած հայ մարզիկներ Գալուստ Արխանյանի, Հայկ Ճոլոլյանի, Գ. Քերեստեճյանի, Վ. Յափուճյանի և այլոց գործունեությունը ներկայացնող նյութեր: «Հայ սկաուտի» հետաքրքրական էջերից են հայ մարզական անդրանիկ պարբերական «Մարմնամարզի» խմբագիր Շ. Քրիսյանի մարզական ու խմբագրական գործունեությունը լուսաբանող նյութերը: Կ. Ուշապլյանի «Շաւարշ

Քրիսեան եւ իր «Մարմնամարզ» թերթը» հոդվածում բացահայտվում է Շ. Քրիսյանի տեղը հայ մարզական մամուլի ստեղծման գործում, այն, որ նրա նրախոհքը կայանում է արդեն հասունացած ազգային մարմնակրթական պատրաստի ուժերին ու կարողություններին մտավոր ընթացք տալու ու կազմակերպելու մեջ, մամուլի անդաստանում դրանց տեղն ապահովելը (1920, թիվ 12, էջ 186–189): Շ. Քրիսյանի եղբորորդի Ա. Քրիսյանը ևս չարադրել է նրա կենսագրությունը, ընդգծելով նրա կյանքում սպորտի ազգային հայրենասիրական նշանակությունը: Շ. Քրիսյանը, գրում է նա, «ըմբռնած է, որ մարմնակրթութիւնը անհատականէ աւելի ազգային բնոյթ մը ունի, կարող է հայ ազգին ազատագրմանը մէջ կարեւոր ազդակ մը ըլլալ» (ն. տ., էջ 189): Նշվում է նաև, որ Շ. Քրիսյանն է Կ.Պոլսում կազմակերպել Հայկական 1-ին օլիմպիական խաղերը, հիմնել սկաուտական (արիական) շարժումը: Այս, ինչպես և Պետուչի դրած հոդվածից պարզվում է, որ երիտթուրքերը չեն հանդուրժել Շ. Քրիսյանի հայրենասիրական կեցվածքը՝ նախապատրաստելով նրա ձերբակալությունն ու աքսորը (ն. տ.):

«Հայ սկաուտը» ձգտել է նպաստել կանանց մեջ ֆիզկուլտուրան և սպորտը ծավալելու շարժմանը, կարևորել դպրոցներում աղջիկների ֆիզիկական պատրաստականության հիմնահարցը: Այդ դաստիարակությունը ևս պետք է ընդգրկվեր միասնական դպրոցական մարզական ծրագրի մեջ, որի իրականացումն էր փափագում շաբաթաթերթը՝ Երևանում, Կ. Պոլսում, Զմյուռնիայում, ինչպես և Եգիպտոսի և այլ գաղթավայրերում: Այս նպատակը շաբաթաթերթն իր սպաս էր դնում հայրենիքի ակնկալվող մոտալուտ վերածնությանը: Իր գրեթե բոլոր համարների խմբագրականներում «Հայ սկաուտն» արծարծում էր ազգի զորացման մեջ սպորտի նշանակությունը: Մարզական հաջողությունները շաբաթաթերթի համար այդ կարևորության վկայությունն էին: Մարզվանի «Անատոլիա» քոլեջում հայ մարզիկների հաղթանակի առթիվ շաբաթաթերթը գրում էր, որ «բոլորը տեսան ու համաձայնուեցան, թէ հայ ցեղի մէջ կա ոգի մը, որ անմեռ է մնացած, կենսունակութիւն մը, որ

երեւան կուգայ անմիջապէս, ուր նպաստաւոր պայմաններ գտնէ» (1920, թիվ 7, էջ 113):

«Հայ սկաուտը» հատկապես մերձավոր կապեր էր հաստատել Զմյուռնիայի հայ արիների կազմակերպության հետ, տպագրել նրա անդամների հոդվածները և լրատվական նյութերը «Իզմիրի կեանք» մշտական խորագրի ներքո: Շարաթաթերթը փորձում էր ստեղծել սկաուտական կազմակերպությունների լայն ցանց: Զմյուռնիայից նրան թղթակցում էին Զ. Հարեթյանը և Մ. Յանըգյանը, Եգիպտոսից՝ Ստ. Ամիրյանը, Գ. Զոպանյանը և ուրիշներ:

Մասնագիտական հրատարակության առումով, նյութերի հագեցվածությամբ ու բազմակողմանիությամբ «Հայ սկաուտը» չափանիշ էր այն ավանդույթները, որոնց հիմքը դրել էր «Մարմնամարզ» պարբերականը՝ դեռևս 1911–1914 թվականներին:

Զմյուռնիայում համանման հրատարակություն էր տեղի սկաուտների «Պատրաստ» կիսամսյա պարբերականը՝ 1921–1922 թթ.: Արտոնատերն ու պատասխանատու տնօրենն էր Բ. Գույումճյանը, խմբագիրը՝ Զ. Հարեթյանը: Կիսամսյա այս հանդեսը հետամտում էր պատրաստել հայրենիքին ու եկեղեցուն հավատարիմ ու օգտակար հայ քաղաքացիներ, նրանց մեջ զարգացնել հատկապես հայրենասիրական զգացումներ: «Պատրաստը» տեղեկացնում է, որ Զմյուռնիայում կազմակերպվել է «Հայ պոյսքաուտներու միությունը» (ՀՊՍՄ), որը մաս է կազմում «Կ. Պոլսի և Իզմիրի հայ պոյսքաուտներու եղբայրութիւն և միութիւն» կազմակերպությանը: Ավելի սերտ դարձնելով իր գործակցությունը Կ. Պոլսի հայկական կազմակերպություններին, ՀՊՍՄ-ը կազմակերպորեն միավորվեց «Հայ մարմնակրթական ընդհանուր միության» (ՀՄԸՄ) հետ:

«Պատրաստին» աշխատակցում էին Թ. Մեծատուրյանը, Ա. Պերպերյանը, Պ. Պյորեքճյանը, Ե. Ուլիյուճյանը և ուրիշներ: Կիսամսյան ուներ «Սկաուտիզմը արտասահմանի մէջ», «Մարզաչխարհ», «Սկաուտական ներքին չարժում», «Ազգիկ սկաուտներու և մարզուհիներու աշխարհէն» և այլ խորագրեր, որոնց ներքո տպագրվում էին Զմյուռնիայի հայ պատանիներին հետաքրքրող ամե-

նատարբեր նյութեր, լուրեր արտերկրի մարզաշխարհից, սկաուտների առօրյայի, բանակումների և այլնի մասին: Պարբերականը քարոզում էր ամբողջ աշխարհի սկաուտների գործակցության ու համերաշխության գաղափարը՝ «Պատանիներու եղբայրակցութիւնը հետամտում է մարդկութեան եղբայրակցութիւնը» ձևակերպումով: «Պատրաստը» տպագրել է եվրոպական և ամերիկյան երկրների սկաուտների ողջույնի ուղերձները հայ հասակակիցներին, փորիզի միջազգային սկաուտական համաժողովին նվիրված նյութեր: Ուշադրավ են Զմյուռնիայի սկաուտների մարզական կյանքին, տեղացի հույների և եվրոպացիների հետ նրանց ֆուտբոլային և այլ մարզաձևերից մրցումների վերաբերյալ հրապարակումները: «Պատրաստը» հայ պատանու մեջ փորձում էր զարգացնել հոգևբանական արժեքավոր որակներ՝ մեծահոգություն մրցակցի հանդեպ, հորդորում պարտությունը կրել արժանապատվությամբ և նյութն ամրապնդում էր լուսանկարներով, մարզական կյանքի պատմությունից վերցրած դրվագներով և այլն (1922, թիվ 11, էջ 46): Հատկապես ուշադրության առարկա էր կիսամյայի էջերում աղջիկ սկաուտների մարզական կյանքի լուսաբանումը Թուրքիայում, Եվրոպայում և ԱՄՆ-ում, անգամ այնպիսի մարզաձևերի ընդգրկումով, ինչպիսին էր ավանդականորեն ոչ կանացի բռնցքամարտը: Ուշադրավ են Զմյուռնիայի հույների «Բանիոնիս» և «Հայկական խումբ» ֆուտբոլային թիմերի հանդիպման վերաբերյալ նյութերը: «Պատրաստն» իր համեստ նպաստն է բերել հայ մարզական լրագրության գարգացմանը՝ տպագրելով մարզական հոդվածներ, ռեպորտաժներ, հանրագումարի բերող հաշվետվություններ և այլն:

«Պատրաստի» վերջին թիվը լույս է տեսել 1922 թ. օգոստոսի 6-ին, Զմյուռնիայի աղետից մոտ մեկ ամիս առաջ, երբ թուրքական մոտալուտ հարձակման վտանգը կաթվածահար էր արել մշակութային հիմնարկների գործունեությունը:

Սկաուտական շարժման հետևորդն էր Կ. Պոլսում 1920–1922 թթ. հրատարակվող «Հայ պատանի» պատկերազարդ շաբաթաթերթը, սակայն, առավելապես գրական և մշակութային բովանդակութ-

յամբ: Այն 1919-1920 թթ. հրատարակված «Առավոտ նորահասնեբուս» շաբաթաթերթի շարունակությունն էր[1]: Պատասխանատու խմբագիրն էր Ֆ. Ռ. Մնքալըմը, տնօրեն-խմբագիրը՝ Գր. Հ. Գալուստյանը: «Հայ պատանին» ուներ ուսումնադաստիարակչական ուղղվածություն և սրանից բխող՝ բազմաժանր բնույթ: Տպագրում էր հեքիաթներ, ավանդություններ, զրույցներ, բարոյախրատական նյութեր, թարգմանական գործեր: Շաբաթաթերթում սկաուտական քարոզչությունը հիմնականում իրականացնում էր Ֆ. Մնքալըմը: Զ. Պեզճյանը (Թուրքիայի հայ բողոքականների ազդապետը) ևս խորհուրդ էր տալիս հայ պատանիներին՝ կարևորություն տալ ու զբաղվել մարմնամարզով և մարզական խաղերով (1921, թիվ 1, էջ 7–9): Ֆիզիկական պատրաստականությունը ներքին համոզմունք դարձնելու հարցում նա առաջարկում էր լուրջ ուշադրություն դարձնել բնագիտական առարկաներին՝ այս ամենը կապակցելով բարոյական առաքինությունների ձևավորմանը: «Զբոսանքի բաժին» խորագրով նյութերում տպագրվում էին հանելուկներ, բառախաղեր, թվաբանական ու տրամաբանական խնդիրներ և այլն: Ֆ. Մնքալըմի հեղինակած անգլիական պետական ու ռազմական նշանավոր գործիչների կենսագրականներին չարաթաթերթը դուդակցել է և շատ ավելի հաճախակի՝ ազգային բնույթի հրապարակումներ, հայրենիքի հանդեպ հետաքրքրություն և սեր արծարծող այլևայլ նյութեր: Ուշագրավ են և ճաշակով են ընտրված «Հայ ժողովրդական հեքիաթներ» խորագրի նյութերը՝ Շահենի և Սոս Վանիի մշակումներով (1921, թիվ 2, էջ 26, թիվ 3, էջ 39–41, թիվ 8, էջ 120–122, թիվ 5, էջ 72–75): Հատկապես աչքի են ընկնում Գր. Հ. Գալուստյանի պարզ և պատկերավոր բանաստեղծությունները, խրատական քառյակներն ու առակները՝ մանկան մեջ բարոյական ճիշտ կողմնորոշումներ սկզբնավորելու և խորացնելու ակնհայտորեն ուշադրություն հրավիրող հնարանքներով: Այս հեղինակը թարգմանել է Անդերսենի հեքիաթները: «Հայ պատանու» էջերում,

[1] Նույն տեղում, էջ 205:

իբրև թերթոն, տպագրվեց «Շեքսպիրյան պատմվածքներ» շարքը՝ անգլիացի դրամատուրգի սիևևների սյուժեների մատչելի շարադրանքը պատանիների համար, որ դարձյալ թարգմանել է Գր. Հ. Գալուստյանը և որի աշխատակցությունը բավական զգալի է այս շաբաթաթերթում:

Շաբաթաթերթի խրատական-բարոյախոսական բազմաթիվ նյութերում ամրապնդվում է բնության և մշակույթի արժեքների հանդեպ սիրո, բարոյական ազնիվ զգացումների գաղափարը: Խրատները երբեմն վերաբերում են պատանու անհատական, գործնական վարքագծին: Թարգմանական (անգլերենից) մի ոտանավոր պատանուն խորհուրդ է տալիս խուսափել անհարկի չատախոսությունից, այն շատ տպավորիչ է և հիշվող.

Աչք ունինք երկու	*Ականջներ՝ երկու*
Բայց մէկ հատ լեզու	*Բայց մէկ հատ լեզու*
Պատճառը գիտե՞ս	*Պատճառը գիտե՞ս*
- Դուն տես ամեն բան	*- Լսէ ամեն բան*
Մի խօսիր, սակայն:	*Մի խօսիր, սակայն (1921, թիվ 2, էջ 21):*

«Հայ պատանուն» աշխատակցում են Հ. Հինդլյանը, Կիլիկեցին, Գ. Մալաթյանը և ուրիշներ:

Հետպատերազմյան շրջանի արևմտահայ պարբերականներից քաղաքական ու հասարակական ընդգծված ուղղություն ուներ ազգային ու դրական «Հայ միտք» շաբաթաթերթը: Այն հրատարակվում էր Կ. Պոլսում 1919 թ., Հովհաննես Ասլետի (Օ. Զիֆթճի-Սարաֆ) խմբագրությամբ: Աշխատակցում էին Ե. Օտյանը, Ա. Ալպոյաճյանը, Վ. Թեքեյանը, Վ. Հարությունյանը և այլք: Շաբաթաթերթը արտացոլել է Կ. Պոլսի հայության ազգային ու հասարակական կացությունը, մշակութային ծիլեր արձակող երևույթները, ոչ վաղ անցյալի՝ ցեղասպանության իրադարձությունները: Ուներ ազատամիտ, ոամկավար ուղղություն: Շաբաթաթերթի խմբագրությունը հավատում էր Հայաստանի արևմտյան մասում ազգային պետականության վերականգնման մոտալուտ հեռանկարին՝ ակնկալելով նախ Անգլիայի, այնուհետև ԱՄՆ-ի էական օգնությունը:

Հետևել է Պողոս Նուպարի գործունեությանը Փարիզում գումարվող հաշտության կոնֆերանսի կապակցությամբ: «Լուսանցքին վրայ» խորագրով տպագրել է Ե. Օտյանի երգիծական անդրադարձները Կ. Պոլսի հայ հանրության՝ թուրքերի հետ ունեցած հարաբերությունների, թատերական կյանքի, հայ արվեստագետների, գրողների ու գրականության վիճակի վերաբերյալ: Ուշադրավ են Ա. Ալպոյաճյանի ակնարկը արևմտահայ մամուլի ու նրա գործիչների մասին, Կ. Պոլսի պատրիարքարանի գործունեության վերսկսման ու աշխուժացող մշակութային իրականության վերաբերյալ Վ. Թևքեյանի, Ե. Օտյանի, Հ. Ասպետի և այլոց հրապարակումները: «Հայ միտքը» տպագրել է Զ. Եսայանի, Ա. Զոպանյանի, Հ. Մնձուրու, Հ. Պողոսյանի և մյուսների չափածո և արձակ ստեղծագործությունները, թարգմանություններ ֆրանսիական գրականությունից: Մասնավոր ուշադրություն է դարձրել հայ գրականության առջև դրված խնդիրներին, ընդգծել դրանց գործնական նշանակությունն ու կարևորությունը ազգային վերածնության ասպարեզում:

Կանանց համար նախատեսված հրատարակություն էր «Հայ կին» կիսամսյա հանդեսը, որ լույս էր տեսնում Կ. Պոլսում, 1919–1933 թթ.՝ Հայկանուշ Մառքի խմբագրությամբ: Հանդեսի ծրագիրն ընդգրկում էր հայ կնոջ բարոյական ու հասարակական կացության, ընտանիքում և հասարակության մեջ նրա տեղի, նշանակության լուսաբանումը, տոհմիկ բարքերի ու ավանդույթների ու արդիականության զուգադրումը, կրթական, մշակութային կյանքում հայ կնոջ գործունեությունն ու դրանց առնչվող խնդիրները: Տպագրել է կանանց կենցաղային, առողջապահիկ հարցերին, արհեստագործության ասպարեզում հայ կնոջ ներդրումներին, հայ և օտար նշանավոր կանանց վերաբերող ամենատարբեր նյութեր: «Կանանց աչխարհէն», «Նորաձևութեան բաժին», «Տոհմիկ էջեր» և այլ խորագրերով հրապարակումներում հանդեսը շոշափել է հայ կնոջ հետաքրքրություններին ընդառաջող մտածված և հարուստ լրատվություն պարունակող հիմնահարցեր, որոշակի հակումներ ցուցաբերել ֆեմինիստական խնդիրների նկատմամբ: Աչխատակ-

ցել են Մ. Պերպերյանը, Անայիսը, Արշ. Թեոդիկը, Հռ. Արապյանը, Զ. Գալեմքյարյանը, Վ. Թորգոմյանը, Կ. Բասմաջյանը և ուրիշներ: Հանդեսում ուշագրավ տեղեկություններ կան Կ. Պոլսի «Հայ կանանց ընկերակցութեան», մարմնամարզում կանանց ներգրավելուն ուղղված նրա ջանքերի և ձեռնարկած այլ միջոցառումների մասին: Հոդվածները է նվիրել կնոջ ամուսնության, նրա տնտեսական պայքարի, դրանց հանդեպ վերաբերմունքի խնդիրներին, ցուցադրել ընտանիքում և հասարակության մեջ հայ կնոջ անազատ վիճակն ու կրավորական դերը, առաջադրել այդպիսիք մեղմելու պահանջներ (1920, թիվ 2, էջ 411–412, 1921, թիվ 3, էջ 817–818): Հոդվածների մի խումբ «Հայ կինը» նվիրել է սփյուռքահայ արվեստագետ կանանց և նրանց գործունեությանը՝ ամերիկահայ երգչուհի Զապել Փանոսյանին, դաշնակահարուհիներ Արփինե Ինայեթյանին, Լժենի Մելիքյանին (Ֆրանսիա) և այլոց, լուսաբանել ժամանակակից մշակույթի և դրականության մեջ կանանց արժեքավոր ներդրումները: Վ. Թորգոմյանը պատմական անդրադարձներ է արել հայ կնոջ հայրենասիրական և ազգօգուտ գործունեությանը: Զգուշով բազմակողմանիորեն նպաստել կնոջ մտավոր և հատկապես մշակութային զարգացման մղումներին, մշտապես լրատվական ու վերլուծական նյութեր է տպագրել Կ. Պոլսի հայ թատերական ու գրական կյանքի մասին, լուսաբանել տեղի «Հայ թատերական միութեան» գործունեությունը:

«Հայ կինը» տպագրել է Հայկանուշ Մառքի, Դ. Վարուժանի, Վ. Թևքեյանի, Լ. Գոլանճյանի, Ե. Դուրյանի, Անայիսի և այլոց արձակ ու չափածո գործերը, թարգմանական էջեր եվրոպական գրականությունից:

Ջմյուռնիայում նկատելի էր հասարակական կյանքի և մամուլի աչխուժացումը՝ կապված առաջին աշխարհամարտում Օսմանյան Թուրքիայի պարտության և իթթիհատականների՝ իշխանությունից հեռանալու հետ: այստեղ «Արևելյան մամուլ» թերթի հետ

հրատարակվում էին «Հորիզոն» օրաթերթը[1] (1919–1921) և «Ատրուշան» (1919) գրական, գիտական և գեղարվեստական կիսամսյան, որի տնօրեն-խմբագիրն էր Մ. Բարթիկյանը: Հանդեսը տպագրվել է ընդամենը մի քանի համար, սակայն իր կարճակեցությամբ մեջ իսկ ուշագրավ երևույթ էր Զմյուռնիայի մշակութային կյանքում: Անդրադարձել է հետեղեռնի շրջանի հայ դրականության խնդիրներին, հատկապես նշել օսմանյան միջավայրի կաշկանդող, այնուհետև կործանարար նշանակությունը հայ գրականության համար: «Ատրուշանի» աշխատակիցներից Մ. Պարսամյանն առաջադրում էր հայ գրականության խնդիրները արմատապես փոփոխված ազգային և քաղաքական իրադրության մեջ, փորձում տալ նոր գրական սերնդի բնութագիրը քառամյա պարտադրված լռությունից հետո: Այս հեղինակը նորերի գրական վարանումներին հանդիպադրել է նեռնին զոհ գնացած գրական մեծությունների ստեղծած արժեքները: Գր. Զոհրապին հատկապես մեծարել է Ս. Դավիթյանը, որը ուրվագծել է մեծ արվեստագետի, վաստակաբանի և հասարակական գործչի կերպարը (1919, թիվ 2, 18–27): Այստեղ ուշագրավ են Զոհրապի դասախոսական և իրավաբանական գործունեության քիչ ծանոթ, բայց և բնութագրական կողմերի լուսաբանումները: Ս. Դավիթյանը նկատում է, որ «քննադատողի և ընդդիմախոսի ոգին նույնքան բուռն էր իր էության մէջ, որ կեանքի պայքարին պատճառով ամբողջապէս հրապարակագրու-

---

[1] «Հորիզոնը» հրատարակվում էր Վ. Պարտիզպանյանի արտոնատիրությամբ, պատասխանատու տնօրենն էր Ս. Թորմաճյանը (տե՛ս Հայոց պարբերական մամուլը, էջ 101): Մեր տրամադրության տակ չկան «Հորիզոնի» բվահամարները՝ ավելին ասելու համար, մանավանդ, օրաթերթը ոչ քիչ տվյալներ կարող էր պարունակել զմյուռնահայ համայնքի վերջին երկու տարվա կյանքի մասին (տե՛ս Պարթեւեան Ս., Զմիւռնահայ տարեցոյցը, Ա տարի, էջ 91): Նույնը պետք է ասել 1920 թ. Զմյուռնիայում տպագրված «Գոյամարտ» օրաթերթի մասին (տե՛ս Հայոց պարբերական մամուլը, էջ 106): Հ. Սիրունու մի վկայությունը, սակայն, կասկած է հարուցում հայ մամուլի մատենագիտությունների այն անվերապահ տեղեկության նկատմամբ, որ «Գոյամարտը» Դաշնակցության օրաթերթն է եղել. Նա հայտնում է, որ 1920 թ. հիմնելով «Գոյամարտը», այն խմբագրել է մեկ շաբաթի չափ, ապա հանձնել Ս. Պարթևյանին, իսկ վերջինս, ինչպես հայտնի է, երբեք այդ կուսակցության անդամ չի եղել (տե՛ս Սիրունի Յ., Ինքնակենսագրական նոթեր, էջ 212):

թևան նուիրուելու անկարելիութիւնը իր մեծագոյն ցաւն էր, զոր հաճախ կը կրկնէր» (Ն. տ., 20): Նույնքան հետաքրքիր են հեղինակի դիտողությունները Զոհրապի՝ օսմանյան խորհրդարանում ունեցած գործունեության, բարբարոսական վարչակարգի պայմաններում մտածողի և հայրենասերի ապրած խորը դրամայի և ողբերգական վախճանի մասին: Ցույց են տրվում Զոհրապի ճեռնարկած՝ ազգային չահերի պաշտպանությունը օսմանյան խորհրդարանում, նրա համարձակ քննադատությունը՝ ուղղված Ջարդարար Բիրինջի-զադե Արիֆի բեյի մերուսական ընտրության վավերացման դեմ:

«Ատրուշանին» իր կյանքի վերջին ամիսներին աշխատակցել է զմյուռնացի հանրահայտ երգիծաբան Հ. Ալփիարը: Նրա մահից հետո հանդեսը տպագրեց Մ. Բարթիկյանի հոդվածը՝ նվիրված երգիծաբանի կենսագրությանն ու գրական գործունեությանը՝ հեղինակի լրջմիտ դիտարկումներով:

«Ատրուշանը» և նրա շուրջ խմբված մտավորականները հավատում էին ազգի վերածնությանը՝ ցեղասպանության արհավիրքներին հակառակ, ինչպես նաև Զմյուռնիայի հայ համայնքի ապագային: Անդրադառնալով Հովհ. Թումանյանի գործունեության հորելյանին, ինչպես և նշանակալի այլ միջոցառումների, իբրև ազգի և նրա մշակույթի հարատևման վկայություն, հանդեսն առաջարկում էր զմյուռնահայ համայնքում և առհասարակ հայության մեջ նշել նաև վաստակաշատ Մ. Նուպարյանի հոբելյանը, վեր բարձրացնել ազգային արժեքներն այդ դժվարին ժամանակներում: Այս լավատեսական տրամադրությունների հետ միասին, սակայն, «Ատրուշանի» պոեղիան համակված է ցեղասպանության ողբերգությունից ծնված մռայլ և թախծոտ զգացումներով ու պատկերներով: Հանդեսը տպագրել է Կ. Զարյանի, Է. Գոլանճյանի, Ա. Վտպյանդու, Մ. Պարսամյանի, Վահրամ Թաթուլի և այլոց բանաստեղծությունները, Մ. Բարթիկյանի, Ա. Կազելի, Ս. Ճիզմեճյանի և ուրիշների բանասիրական ու գրաքննադատական հոդվածները հայ և արտասահմանյան գրականության ու գրական դեմքերի

մասին: Զմյուռնիան հույների կողմից ազատագրելու առթիվ (1919, մայիսի 15) տպագրել է Ատրուշանի (Ա. Անտոնյան) «Պատմական օրը» ծանուցումը (1919, թիվ 6, էջ 88):

Կրոնական բովանդակություն ուներ Զմյուռնիայի «Դափնի» կիսամսյա հանդեսը, որ լույս է տեսել 1921–1922 թթ.: Արտոնատեր-պատասխանատու տնօրենն էր Հ. Չվանչիրը: Կրոնաթեմներթը հրատարակվում էր Զմյուռնիայի առաջնորդ Ղ. Դուրյանի նախաձեռնությամբ և թևարկությամբ[1]: Նպատակն էր լուսաբանել «Հայ եկեղեցուոյ տօներն, սրբութիւնները, ինչպէս և օրէնքները, կանոններն ու իրաւունքներն» (1921, թիվ 1, էջ 1): Տպագրում էր կրոնաբարոյական, խրատական, քրիստոնեական հոգևոր արժեքներին վերաբերող նյութեր, քարոզներ, կրոնադավանական ուղղվածության հրապարակումներ և այլն: Հենվում էր համապատասխան գրականության սյուժեներին և պատվիրաններին: «Դափնին» իր մի շարք հրապարակումներում բացատրում էր հայ եկեղեցու արարողությունների ու ծեսերի իմաստը, մեկնաբանում պատարագի, հոգեհանգստի, աղոթքի խորհուրդներն ու նշանակությունը հայ եկեղեցու դավանական ընկալումներում: Հրապարակումների մի այլ խումբ ստուգաբանում էր կրոնական հասկացությունների նշանակությունն ու արժեքը: «Դափնին» անդրադարձել է քրիստոնեական վարդապետության հարցերին, հակադրվել դավանաբանական սարաճայնություններին ու սխոլաստիկ վեճերին՝ նպատակ ունենալով ընդհանրական քրիստոնեական եկեղեցու մեկնակետից: Հավատի ընկալման խնդիրներում ցուցաբերել է լայնախոհություն՝ հետևելով Արմաշի դպրեվանքի (որի սաներից էր ինքը՝ Ղ. Դուրյանը) ավանդույթներին: «Դափնին» կարծում էր, որ տիեզերական ժողո-

---

[1] Ղ. Դուրյանը «Դափնին» հրատարակել է Զմյուռնիայի առաջնորդի պաշտոնը ստանձնելուց (1920) հետո, այսինքն 1921 թ., «գրեթէ իր անհատական նախաձեռնութեամբ» և «շարունակելով միևնոյն Իզմիրի գրաման չարաղէտ օրը» (Տէր-Միքայէլեան Գ., Ղևոնդ արք. Դուրեան. իր կեանքն ու գործը, էջ 36-37): Մ. Բարլոյանը ուղղել է հայ մամուլի մի շարք մատենագետների վրիպումը (որոնք «Դափնու» հրատարակման սկիզբն են համարում 1919 թ.)՝ իրավամբ նշելով 1921-1922 թթ. (տե՛ս Հայ պարբերական մամուլը, էջ139):

վի որոշումները պարտադիր չեն հավատացյալների համար և որ քրիստոնյան պետք է ազատ լինի իր կրոնաբարոյական ըմբռնումներում՝ առաջնորդվելով քրիստոնեական պատվիրաններով և առաքինությամբ (1921, թիվ 6, էջ 169–170): Հայ ազգային, վարչային և կրոնական դործերում անկարգությունների ու անկման պատճառները «Դափնին» որոնում էր «չարայոյզ նախանձի և թունալից մախանքի» մեջ (1921, թիվ 1, էջ 8–9): Բավական կտրուկ առաջադրում էր հայ եկեղեցու բարեփոխման հիմնահարցը՝ ցուցաբերելով փոփոխությունների հարցում իր ազատամիտ հակումները: Առաջադրել է քահանաների ձեռնադրության և նրանց կրկնամուսնության կանոնների հետ կապվող բարեփոխումների խնդիրը: Նույն ոգով «Դափնու» էջերում Ղ. Դուրյանը պաշտպանում էր «Ազատ եկեղեցի ազատ պետության մեջ սկզբունքը», հիմնավորելով քաղաքացիական իշխանությունից եկեղեցու անկախության սկզբունքը, որ դեռևս 1860-ական թթ., ի դեպ, Զմյուռնիայի «Մաղիկի» էջերում առաջ էր քաշել նրա խմբագիր Գր. Զիլինկիրյանը: Եկեղեցու և կրոնի ազդեցության նվազումը հանրության մեջ՝ Ղ. Դուրյանը համարում էր եկեղեցու և աշխարհիկ իշխանության անթույլատրելի սերտաճման հետևանք, քանի որ եկեղեցին հենվում էր հավատի, իսկ քաղաքացիական իշխանությունը՝ օրենքի վրա, որոնք կարող են ընդամենը լրացնել իրար, բայց երբեք չնույնանալ: Հետևաբար, կարծում է Ղ. Դուրյանը, «պէտք է բաժնել եկեղեցին քաղաքականութենէն, հաւատքը՝ օրէնքէ, խիղճը՝ բանականութենէն» (1921, թիվ 2, 57): Այս սկիզբների ներդաշնակության մեջ էր տեսնում «Դափնին» կրոնի և դիտության ոչ թե հակադրության, այլ դործակցության գաղափարը: Կրոնաթերթի բնաբանն էր՝ «Յառաջդիմութիւնը կրօնքով և գիտութիւնով», որ և ջանում էին ապացուցել «Դափնիի» աշխատակիցներ Վ.Բույրը և Ն. Ներսիսյանը, պնդելով կրոնի և դիտության լծակցված ու փոխհամաձայնեցված ընթացքի կարևորությունը (1921, թիվ 3, էջ 81, 1922, թիվ 2, էջ 36):

«Դափնին» անդրադարձել է ցեղասպանության իրողություններին և կրոնական մտայնությանը համապատասխան հիմնավորումներով դատապարտել է այն կազմակերպողներին: Զմյուռնահայ համայնքի ներքին կյանքը և առհասարակ ազգային գործերը «Դափնիի» էջերում արտացոլվել են հպանցիկ և ոչ հետևողական: Ճանաչողական նշանակություն ունեն կրոնաթերթի տպագրած հիշատակարանները և պատմական բնույթի այլ նյութերը, որոնք վերաբերում են Զմյուռնիայի հայ գաղթօջախի անցյալին, առաջնորդների գավազանագրքին, որ ընդգրկում է 17–18-րդ դարերը:

«Դափնին» տպագրել է Տ. եպ. Պալյանի, Ե. արք. Դուրյանի, Ն. Ներսեսյանի, Ղ. Դուրյանի, Հ. Մրմըրյանի, Գր. Գալեմքյարյանի, Գ. Խաչատրյանի և այլոց հոդվածներն ու հրապարակումները:

Ցեղասպանությունից հետո ընկած չրջանում ազգային արվեստի և մտավոր արժեքների շուրջ պոլսահայությանը համախմբելու նպատակ ուներ «Բարձրավանք» ամսագիրը, որ խմբագրում և հրատարակում էին Գ. Գավաֆյանը, Կ. Զարյանը, Վ. Թեքեյանը, Շ. Պերպերյանը և Հ. Օշականը: Ամսագիրը լույս էր տեսնում Կ.Պոլսում, 1922 թ.: Այս հրատարակությունը լուսաբանել է Կ.Պոլսի հայության մշակութային կյանքի իրողությունները, հոդվածներ է նվիրել նորակազմ դերասանական խմբին, ժամանակի ճանաչված նկարիչներ Վ. Մախոխյանի, Փ. Թերլեմեզյանի, Ս. Խաչատուրյանի, Ս. Քյուրքճյանի, Ե. Թադևոսյանի և այլոց արվեստին: «Օրուան նիշեր» խորագրի տակ ամսագիրն անդրադարձել է Կ. Պոլսի «Հայ արուեստի տուն» մխւթյանը (կազմակերպել էին մտավորականները՝ զինադադարից հետո), լրատվություն տվել նրա մշակութային ձեռնարկումների մասին: «Բարձրավանքը» ավանդապրպիստական քամահրանքով է գնահատել դարասկզբի հայ ռեալիստական դրականությունը՝ սկսած Տ. Արփիարյանի դրական «Մասիսից» և վերջացրած ռեալիստական թատրոնով ու Շիրվանզադեի դրամատուրգիայով: Հ. Օշականը՝ ոչ քիչ դեպքերում ծայրահեղ իր գնահատումներում, անկատար էր համարում Շիրվանզադեի դրամատուրգիական արվեստը, ինչպես և բանաստեղծական ոգին և լեզուն

(1922, թիվ Դ, էջ 95–101): «Բարձրավանքը» տեղ էր տալիս նույն կեցվածքը ընդօրինակած Գ. Ֆեներճյանին, որը ժխտում էր ոչ վաղ անցյալի ռեալիստներին ու նրանց ստեղծագործությունը (1922, թիվ Գ, 82–87): Փոխարենը «Բարձրավանքը» շատ ավելի լայնախոհ էր ազգային նրաժշտության գնահատումներում և ուշագրավ դիտարկումներ էր անում հայ ու եվրոպական նրաժշտական արվեստի արժեքավորման շուրջ: «Բարձրավանքը» անուղղակիորեն հղում էր նաև իր ներչնչման աղբյուրները՝ ծանոթություններ տալով արվեստների դասակարգման տեսություններին վերաբերյալ, որոնց այս կամ այն չափով հետևում էին նրա հեղինակները: Ամսագիրը ծանոթություններ էր տալիս որոշակի օրինակներով «Օտար դրականութիւն» խորագրի տակ տպագրած նյութերով, ներկայացնելով նաև օտարազիր հայ գրողներին (Տ. Գույումճյան, Մ. Արլեն)՝ իրենց ստեղծագործություններով: «Բարձրավանքն» ընդհանուր առմամբ արտահայտել է 1910-ական թթ. արևմտահայ մտավորականության գրական ու գեղագիտական ըմբռնումները: Տպագրել է Մ. Մնձարենցի, Վ. Թիքեյանի, Հ. Օշականի, Հ. Մնձուրու, Կ. Զարյանի և այլ գրողների ստեղծագործություններից:

Առավելապես հասարակական-քաղաքական բովանդակություն ուներ «Երկիր» երեկոյան օրաթերթը (1919–1922): Պատասխանատու անօրեններ էին Վ. Զեյթունյանը, Հր. Գալիկյանը, ապա Է. Զորուրյանը: Օրաթերթն ուներ հնչակյան ուղղություն և հայ իրականության մեջ միայն հնչակներին էր համարում «յեղափոխական, սթափենցնող կուսակցութիւն»: 1915 թ. կախաղան հանված քսան հնչակյան գործիչներին (Փարամազ, Ա. Աչըքպաշյան, Թ. Կարապետյան, Գ. Վանիկյան և այլք) բնութագրել է որպես «ազատ ու ինքնավար Հայաստանի նախակարապետների» և տպագրել նրանց լուսանկարներն ու հակիրճ դիմանկարային ակնարկները (1921, 18 Հնս.): «Երկիրը» համակրական վերաբերմունք ուներ Խորհրդային Հայաստանի նկատմամբ, որ սակավ բացառություններից մեկն էր ժամանակի պոլսահայ մամուլում: Ողջունում էր այնտեղ իրականացվող տնտեսական, քաղաքական ու մշակութա-

յին փոփոխությունները: Խորհրդային Հայաստանի կացության և զարգացման հեռանկարների շուրջ բանավիճել է ՀՅԴ կուսակցության, մասնավորապես Ս. Վրացյանի հետ: Կարսի խորհրդաժողովը (1921 թ. սեպտեմբեր 26 – հոկտեմբեր 13) որակել է իբրև խաղաղության ակտ՝ հայերի և թուրքերի միջև: «Երկիրը» դրվատում էր հայկական պատվիրակության «խաղաղասիրական ու չափավոր» գործելակերպը 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրից անմիջապես առաջ, անգիտանում հայկական կողմի վրա գործադրված ճնշումները խորհրդային ղեկավարության կողմից, և որ առավել աչքի է զարնում, թեթևամիտ վերաբերմունք ցուցաբերում տարածքային այն մեծ կորուստների հանդեպ, որ կրել էր խորհրդային Հայաստանն այդ պայմանագրի ուժով: «Երկիրը» ընդամենը նկատում էր, սակայն, որ Կարսի խորհրդաժողովը ոչ մի օգուտ չտվեց հայերին և ելնելով կուսակցական ուղղվածությունից՝ դրա պատճառներից մեկն էր համարում 1921 թ. փետրվարյան դեպքերը, որ կազմակերպել էին դաշնակցականները և որը, իբր, առիթ էր տվել թուրքերին՝ պահանջելու, որ հայկական պատվիրակությունը չմասնակցի Մոսկվայի խորհրդաժողովին (1921, 16 նոյ.): Սնանկ այս տեսակետը, որ, ի դեպ ունեին խորհրդամետ բոլոր անհատներն ու կազմակերպությունները արտերկրում, էլ չենք ասում Հնչակյան կուսակցության մասին, ազգային շահերի գիտակցումը սահմանափակում էին խորհրդային Ռուսաստանի քաղաքականության նկատմամբ անքննադատ ակնածանքով: Եթե Ռուսաստանը համաձայնել էր խորհրդային Հայաստանի տարածքները զիջել Թուրքիային, ապա դրա մեղավորը միայն Թուրքիան է, իսկ խորհրդային արտաքին քաղաքականությունը՝ ամենևին, ահա այս տեսակետի ողջ աղքատությունը: «Հայաստան» խորագրի ներքո տպագրված իր հրապարակումներում «Երկիրը» տպագրել է լրատվական նյութեր խորհրդային Հայաստանի իրականության, հարցազրույցներ նրա ղեկավարության հետ և այլն: Թերթը կոչ էր անում Կ. Պոլսի հայ համայնքին և գաղթօջախների ազգակիցներին՝ աստանալ խորհրդային Հայաստանի մշակութային ու տնտեսական դար-

պացմանը: Սրան է առնչվում այն, որ «Երկիրը» լուսաբանում էր ՀՕՄ-ի գործունեությունը, Հովհ. Թումանյանի և Ե. Թադիանոսյանի այցը Կ.Պոլիս, դրա նշանակությունը Կ. Պոլսի և Հայաստանի հայության կապերի զարգացման ասպարեզում: Թերթը տպագրեց ՀՕԿ-ի հայտարարությունը, մասնավորապես նշելով, որ նրա կանոնադրությունը հաստատել է Խորհրդային Հայաստանի կառավարությունը և որ այդ կառույցի նպատակն է Հայաստանին նյութական աջակցություն ցուցաբերել ու նպաստել նրա տնտեսական վերածնությանը: Միաժամանակ, «Երկիրը» հույսեր էր կապում Սևրի դաշնագրի միջազգային նշանակության հետ, ակնկալելով, որ այն հիմք պետք է դառնա Արևելյան հարցի լուծման համար՝ «արդի պահանջումներին համապատասխան փոփոխություններով» (1921, 27 մայս.): Հենց արևմուտքից էր սպասում «Երկիրը» թուրք-հելլենական պատերազմին միջամտելը, որը, նրա կարծիքով, կհասցներ Արևելյան հարցի վերարծարծմանը միջազգային քաղաքականության օրակարգում: Մյուս կողմից, խորհրդա-թուրքական հարաբերությունների կտրվածքով «Երկիրը» հույս ուներ, որ դրանց զարգացումը կհասցնի Արևելյան հարցի, ուրիմն և Հայկական հարցի վերակենդանացմանը և ի վերջո, թուրքական ներքին ու արտաքին քաղաքականության վերանայմանը: Քողարկված, բայց և նկատելիորեն տուրք տալով համաշխարհային հեղափոխության բոլշևիկյան տեսլականին, «Երկիրը» հնարավոր էր համարում, որ թուրքական պետությունը կենթարկվի հեղաշրջումների՝ «իր երկրի բացարձակ մեծամասնությունը կազմող դյուղացիական զանգուածներու դասակարգային շահերուն համապատասխան կարգուսարքով» կհրաժարվի իր ազգայնական նվաճողական քաղաքականությունից և Հարևան ժողովուրդներին կամովին կը վերադարձնի իրենց ազգային պատմական իրավունքները (1921, 17 նոյ.):

Հետաքրքիր են ժամանակի պոլսահայ կյանքին վերաբերող «Երկրի» հրապարակումները, այն ժամանակաշրջանի, երբ քեմալականությունն ապրում էր իր կայացման շրջանը՝ քաղաքագիտական նորահնար միջոցներով Թուրքիայի պարտության դառը հե-

տևանքների և Արևմուտքի ու Ռուսաստանի քաղաքական հակամարտությունների պայմաններում, ձգտելով իր օգտին ծառայեցնել նույն այդ հակասությունները: Պոլսահայ ողջ հանրությունն այս շրջանում ապրում էր սպասողական վիճակում՝ կապված վերը նշված հակասությունների այս կամ այն լուծման հեռանկարների հետ, որ և չէր կարող չհամակել «Երկրի» խմբագիրներին: Թերթն այս ոգով էլ արձանագրում է ազգային կյանքի տարընթացությունները Կ. Պոլսում, հորդորում է բարելավել ազգային հիվանդոցի, դպրոցների գործունեությունն ու վիճակը, կանոնավորել ազգային վարչության աշխատանքները: Ընդամին, «Երկիրն» ակնկալում էր, որ ազգային հաստատությունների ընթացքը կարելի է ուղղորդել այն հունով, որ դրանք «կարող ըլլան ոչ միայն օգտակար ըլլալ... համայնքին, այլ նաև մայր երկրին» (1921, 27 սպտ.):

«Երկիրը» քննադատական դիրք ուներ Կ. Պոլսի երեսփոխանական ժողովի անդամ հարուստ առևտրական ներկայացուցիչների հանդեպ, որոնք այդ ժողովում ապահովել են «անգոյն և համակերպող մեծամասնություն՝ միշտ պատրաստ մատները բարձրացնելու ի նպաստ վարչութեան» (1921, 10 նոյ.):

«Երկիրն» անդրադարձել է նաև Կ.Պոլսի հոգևոր ու մտավոր կյանքի իրողություններին, համայնքի կյանքի ընթացքից ակնկալել է նրա պատրաստվելն առաջիկա փոփոխություններին, որպիսիք պարբերականն առնչում էր դարձյալ միջազգային քաղաքականության զարգացումներին: Թերթը հետևում էր Կիլիկիայի հայության առօրյային, «Կիլիկիա» խորագրով նյութերում չոչափում Ադանայի հայության, այնտեղ գաղթած հայերի կացությանը կապվող խնդիրները: «Երկիրը» ոչ մի դրական հետևանք չէր սպասում ֆրանսիական բանակի՝ Կիլիկիան պարպելուց և այն թուրքերի վերահսկողությանը հանձնելու իրողությունից: «Թուրք մամուլ» խորագրի տակ «Երկիրը» քաղվածաբար տպագրել է Կ.Պոլսի թուրքական թերթերի նյութերը հայ-թուրքական հարաբերությունների, դրանցում հայերի վարքագծի և Թուրքիայի հանդեպ նրանց վերաբերմունքի մեկնաբանություններով: «Երկիրը» քննա-

դատեց «Իքդամ» թերթի արտոնատեր Ահմեդ Ջևդեթին՝ հայերի դեմ սպառնալի ու ամբարտավան լեզու բանեցնելու առթիվ, հատկապես չեշտելով այն, որ այս գործիչը չի՛ մոռացել իր երբեմնի չովինիստական ձգտումները (1921, 8 նոյ.): Թուրքական մամուլի և քաղաքականության անհանդուրժելի դարձող դիրքը ցուցադրելու համար «Երկիրը» «Իքդամից» արտատպել է հոդված, որտեղ հայտնվում է, թե թուրքերը «պէտք է տրամադրուեն մոռնալ այն դաւաճանութիւնները, որ կատարեցին այս երկրի կրօնական և ազգային փոքրամասնութիւնները ընդհ. պատերազմին և թէ Անատոլուի վերջին կռիվներու ժամանակ» (1921, 25 նոյ.): «Երկիրն» առաջ էր քաշում դրան տրամագծորեն տարբեր մոտեցում՝ թուրքերն իրենք պետք է գիտակցեն, որ փոքրամասնությունների հետ իրենց հարաբերությունները բարելավելու անհրաժեշտ հիմքը այն կլինի, որ թուրք ազգայնականությունը պետք է խոստովանի իր կործանարար մոլեռանդությունը, որ պոռթկաց վերջին տարիներին, և ապահովի փոքրամասնությունների «գէթ նուազագոյն իրաւունքները» (1921, 8 նոյ.): Թուրք-հունական պատերազմին անդրադառնալիս «Երկիրը» պահպանել է զգուշավորություն, թեև չի թաքցնում իր համակրանքը հունական բանակի հաջողությունների նկատմամբ: Պատերազմի սկզբում թուրքերի անհաջողությունները կոծկող և ապատեղեկատվություն տարածող թուրքական մամուլի քննադատությունը այդ վերաբերմունքի դրսևորումներից էր: Այս վերաբերմունքը, սակայն, տեղի տվեց թերթի սոցիալ-դեմոկրատական մտայնությանն այն իմաստով, որ 1921 թ. աշնանը նա արդեն պատապարտում էր երկուստեք կռվող կողմերին՝ «աւատապետական Թուրքիային» և «պուրժուազական Հունաստանին», որոնցից առաջինը եթե «մահամերձի չղաճգութեամբ որոշած է մինչև վերջ պատնեշին վրայ մնալ», ապա վերջինը կռվում է նոր շուկաների և իր տնտեսության զարգացման համար: Թերթը նկատում էր, որ այդ չի խրախուսվում չհատենչ արևմտյան կապիտալի երկրների կողմից, որոնք կարող են արգելակել Հունաստանի ռազմաքաղաքական զարգացումները (1921, 3 նոյ.): «Թուրքական

ազգայնականության» հուսահատ ջղաձգումները «Երկիրը» տես-
նում էր նաև Էնվեր փաշայի վերջին չրջանի գործունեության մեջ:
Առաջին աշխարհամարտում Թուրքիայի կրած պարտությունից և
իթթիհատական կառավարության կրախից հետո Էնվերը ոճրագոր-
ծի կարոտախտը միացրել էր քաղաքական բախտախնդրի դյուրա-
թեք կեցվածքին՝ ստեղծելով «Միություն և առաջադիմության ժո-
ղովրդական խորհուրդների կուսակցությունը» և դիմել Անկարայի
քեմալական կառավարությանը, որ այն ճանաչվի Թուրքիայի Ազ-
գային ժողովի կողմից: Էնվերը մերժում էր ստացել, սակայն, ինչ-
պես գրում է «Երկիրը», սովետներն ընդառաջել էին նախկին իթ-
թիհատականին՝ համաձայնելով, որ Ռուսաստանում գտնվող
թուրք գերիները մտնեն նրա կազմակերպության մեջ: Այդ, ակն-
հայտորեն ռազմական բնույթի կազմակերպության ձևավորմանն
էլ ձեռնամուխ էր եղել Էնվերը Կովկասում, որ և տագնապ էր
պատճառել Անկարայի կառավարությանը: Քեմալական կառավա-
րությունը ծանուցագիր էր հղել Կարսի խորհրդաժողովին մասնակ-
ցող Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի կառավարություննե-
րին՝ նախազգուշացնելով, որ իր հետ կնքած նրանց դաշնագրերը
չեղյալ կհայտարարվեն, եթե մեկ ամսվա ընթացքում վերջ չտան
Էնվերի գործունեությանը Կովկասում (1921, 14 նոյ.): Մի հոդվա-
ծում «Երկիրը» մերկացնում էր Էնվերին, որը ճգնում էր ոճրագոր-
ծի իր կերպարանքը քողարկել իբրև «Իթթիհատի ժողովրդային
խորհրդային կուսակցության» առաջնորդ: «Երկիրը» համաձայ-
նում էր թուրքական «Վաքըթ» թերթի այն մտքին, որ իթթիհատը
գոյության իրավունք չունի (1921, 2 նոյ.): Ինչ վերաբերում է
իրենց՝ քեմալականների ազգայնական քաղաքականության բնու-
թագրին, ապա «Երկիրը» լիովին կողմնակից էր եվրոպական կոմու-
նիստների՝ Քեմալի հանդեպ խորհրդային ղեկավարների անհետա-
քրքիր և օրախնդիր քաղաքականությունից տարբերվող տեսակետին:
Թարգմանված մի հոդվածում («Քեմալականության բնույթը, իր
արտաքին երևույթը և պատճառները»), որի հեղինակը ֆրանսիա-
կան կոմունիստ Մ. Մարքսն էր, նշվում է, որ Քեմալը ազգայնա-

կան է և ռազմական բռնապետ: Նա ընդդիմանում է Սևրի դաշնագրին, ձգտում է Թուրքիան ազատել կապիտուլյացիաներից և այլ հակակշիռներից ու ստեղծել իսլամական կայսրություն: Քեմալը, չարունակում է հոդվածագիրը, ընդունել է սովետների գաղափարը, որովհետև չէր կարող դիմանալ առանց նրանց զենք ու զինամթերքի, թեև, միաժամանակ, մերժել էր Կարմիր բանակի ուղղակի օգնությունը: Կոմունիզմը, ասվում է հոդվածում, Քեմալի համար ոչ նպատակ է, և ոչ էլ տեսլական, այլ մի պարզ միջոց, որի նպատակն ազդն իր շուրջ համախմբելն է: Սովետների գաղափարախոսությունը Քեմալը կարող է սահմանափակել կամ փոփոխել իր քաղաքականության մեջ, բայց անփոփոխ է մնալու նրա ազգայնականությունը (1921, 30 նոյ.): Հոդվածն ուշագրավ է Քեմալի և Խորհրդային Ռուսաստանի քաղաքական հարաբերությունները մի հայտնի չափով բնութագրելու տեսակետից, և ոչ պակաս ուշագրավ՝ «Երկիր» սոցիալ-դեմոկրատական հայացքները խնդրո առարկա փոխհարաբերություններն ընկալելու իմաստով:

«Երկիրը» տպագրել է դեղարվեստական արձակ ու չափածո ստեղծագործություններ, ընթերցողին ներկայացրել Գր. Զոհրապի, Բ. Քեչյանի, Կ. Ուլիյուճյանի, Ս. Պարթևյանի և այլոց դիմանկարները՝ Լ. Էսաճանյանի հեղինակությամբ: Թերթը հետևում էր ռուս դրականությանը, ուշադրություն է դարձրել հատկապես Ա. Բլոկի ստեղծագործությանը, և հեղափոխական չնչով համակված նրա «Տասներկուսը» պոեմին (1921, 19 նոյ.): Անդրադարձել է ժամանակի ռուս դրական երևույթներին ու տեղաշարժերին, բարձր է գնահատել Վ. Բրյուսովին, Ֆ. Սոլոգուբին, Պ. Զայցևին, Վ. Մայակովսկուն և ուրիշների: Դրականորեն է գնահատել ռուս ֆուտուրիստներին և «Պրոլետկուլտի» գրական ուղղվածությունը՝ հատկապես նշելով դրանց պայքարն անհատապաշտության դեմ: Թարգմանական նրկերից հետաքրքիր է Մ. Կրաֆորդի «Փրակայի կախարդուհին կամ հայ բժշկի մը սխրագործությունը» վիպակը, որ տպագրվեց «Երկրի» թերթոնի բաժնում՝ Մ. Խաչիկյանի թարգմանությամբ:

1921 թ. արդեն դգացնել էր տալիս պոլսահայ մամուլի զարգացմանը խոչընդոտող՝ իշխանությունների անգիջում կեցվածքը: Ընդամենը 2 համար հրատարակվեց «Ատամնաբուժը», իսկ «Շիրակ» չաբաթաթերթը և «Սկաուտ» կիսամսյան՝ Ց-ական համար, «Օրենքը»՝ 3 համար: 1922 թ. լույս տեսած երկք նոր պարբերականներից՝ «Բարձրավանք» (5 համար), «Երևակ» (2 համար) ամսագրերի կողքին միայն Ա. Գալփակճյանի «Վաստակ» առևտրատնտեսական չաբաթաթերթն էր, որ շարունակեց իր գոյությունը նաև հաջորդ տասնամյակին[1]: 1 համար միայն հրատարակվեց «Շա-«Շավիղը», ինչպես գրում է Լ. Թյությունճյանին՝ «Ժողովուրդի ձայն» օրաթերթի խմբագիր Ժ. Շիրակացին՝ 1922 թ. դեկտեմբերի 26-ին. «Թեև փոլձեցինք նոր թերթի մը արտօնութիւնը առնել, բայց շատ դժուար է, որովհետև խիստ քննութիւն կը կատարուի և էնկիւրիէն հրահանդի կը սպասուի հոն»[2],- հարում է նա:

1920-ական թթ. պոլսահայ մամուլի ակնառու տեղատվությունը, անշուշտ, գաղթօջախի ապրած նոր, սոցիալական ու հանրային ոչ բարենպաստ պայմանների և նվազած հնարավորությունների հետևանքն էր՝ ազդայնական Թուրքիայի պայմաններում:

[1] Տե՛ս Հայոց պարբ»րական մամուլը, էջ 112-113, 116-117, 119, 122:
[2] ՀԱԱ, ֆ. 413, ց. 1, գ. 899:

2. ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ Կ. ՊՈԼՍՈՒՄ ԵՎ ՋՄՅՈՒՌՆԻԱՅՈՒՄ

«ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐ» (1921–1922[1])

«Վերջին լուրը» Կ. Պոլսի հայկական ամենահեղինակավոր թերթերից էր, որն այդ համարումը ձեռք էր բերել իր բովանդակության բազմակողմանիության և խորության չնորհիվ: Թերթը լույս է տեսել 1914–1930 թթ. (1914 թ.՝«Բանբեր-Վերջին լուր»): Խնդրո առարկա տարիներին «Վերջին լուրի» արտոնատերն էր Հ. Տեր-Ներսեսյանը, մշտական կամ պլհավոր աշխատակիցները՝ Հովհ. Ասպետը, Ե. Օտյանը, Հ.Տեր-Հակոբյանը, Ա. Գալփակճյանը և Մ. Նաթանյանը: 1921–1922 թթ. «Վերջին լուրին» աշխատակցել են նաև Բ. Քևէյանը և Մ. Շամտանճյանը՝ երկուսն էլ վաստակաշատ հրապարակախոսներ, որոնք իրենց հերթին, ինչպես և մշտական աշխատակիցները, թերթին ավելցին պրոֆեսիոնալիզմ և հրապարակախոսական չուք: Մուդրոսի զինադադարից հետո (1918, հոկտեմբերի 30), երբ արձանագրվեց Օսմանյան Թուրքիայի պարտությունը առաջին աշխարհամարտում, պոլսահայությունը չարունակում էր կրել ցեղասպանության և Թուրքիայի կրած պարտության աղետալի հետևանքները: Տնտեսական ծանր կացությունը խորանում էր նաև Կիլիկիայի և Հայաստանի տարբեր շրջաններից Կ. Պոլիս հասած հայերին և հատկապես որբերին ապաստան տալու և խնամելու հետ կապված բարդություններով: Փոփոխությունները, այնուամենայնիվ, սկսեցին զգացնել տալ: 1919 թ. փետրվարին աքսորից վերադարձավ Զավեն պատրիարքը: Դրան հետևեց քաղաքական ու վարչական ժողովների վերակազմումը՝ թաղերի կողմից ընտրված նոր երեսփոխաններով հանդերձ և Ազգային խնամատարության հաս-

[1] Դիտարկվում է թերթի՝ վերագծում նշված տարիների բովանդակությունը:

տատումով (թաղային մասնաճյուղերով)[1]: Կենդանության նշաններ ցույց տվեցին սահմանադրական մարմինները, ազգային ժողովն իր քաղաքական ու կրոնական ժողովներով ու սրանց համապատասխան խորհուրդներով, որոնց կողքին հայտնվեց ծանր իրականության բերումով ստեղծված նոր կառույց՝ Որբերու վերկուքնան կենդրոնական մարմինը: Պատրիարքի և պատրիարքության գործունեությունը, այսպիսով, որքան էլ դրանք պրկված լինեին երբեմնի համազգային չափերից, դուրս էին գալիս զուտ պոլսական չրջանակներից: Կ. Պոլսում կազմակերպվեց համազգային ժողով՝ կազմված ազգային պատրիարքարանի, ինչպես և երկու հարանվանությունների հոգևոր գլուխներից ու երեսփոխանական ժողովներից, որոնք հետապնդում էին ազգային դատը: 1921 թ. համազգային ժողովը չարաթթական երկու անգամ գումարվում էր պատրիարքարանի՝ Բերայում գտնվող չննքում, որտեղ նույն հաճախականությամբ իրենց նիստերն էին անում վարչական ժողովներն ու հանձնաժողովները (1921, 27 հնս): Պոլսահայ համայնքի ներքին գործերը տնօրինում էր քաղաքական ժողովը, գործողության նեղ չառավղով և նվազագույն արդյունավետության համբ, հարցերն անընդհատ վերաքննարկելու հուսահատական գործնելակերպով: Ժողովը չարունակաբար իր օրակարգում էր պահում այսպես կոչված «Հայրենիքի տուրքը»[2] (նախատեսված էր կարոտյալ հայերի համար), թուրքերի կողմից բռնագրավված՝ հայերի գույքերի, իշխանությունների հետ համայնքի կյանքին առնչվող փոխհարաբերությունների և այլ հարցեր: Նշված տարիներին ազգային մարմինների գործունեությունը Կ. Պոլսում ուներ ամբողջովին կամ գրեթե ամբողջովին կուսակցականացված նկարագիր: Ազգային ժողովում (Ղալաթիո խորհրդարան) դրա համեմատ ծավալվում էր կուսակ-

---

[1] Զաւէն արքեպ., Պատրիարքական յուշերս. վաւերագիրներ և վկայութիւններ, էջ 277-278: Տե՛ս նաև Արզումանեան Զ., Ազգապատում, հ. Դ, Ա գիրք (1910-1930), էջ 215-216:

[2] Այդ տուրքի մասին օրենքը երեսփոխանական ժողովն ընդունել էր 1919 թ. սեպտեմբերին, որի համաձայն ամեն մի հայ անհատ իր կարողության չափով պետք է վճարեր որբերի և գաղթականների համար (տե՛ս Զաւէն արքեպ., նշվ. աշխ., էջ 280-282):

յական պայքարը, որի մեջ էին ներգրավված դաշնակցականները, հնչակյանները, ռամկավարները և «չեզոքները»՝ որպես հանրութ-յանը հուզող հարցերը անկոյծ թողնելու նախապայման: Հայաբ-նակ թաղերում գործում էին թաղական խորհուրդները: Հատկա-պես կուսակցականացված էր Պեշիկթաշի թաղական խորհուրդը, որտեղ տեղ էին գտել բոլոր կուսակցությունները՝ բացի ռամկա-վարներից (1921, 22 մրտ.): Նշված ներհակությունները խոչընդո-տում էին պոլսահայերին՝ լիարժեք մասնակցություն բերելու խորհրդային Հայաստանին ու նրա սովահար բնակչությանը նյու-թապես օգնելուն, ինչպես և ազդեցիկ գործոն դառնալու Եվրոպա-յում գործող հայկական պատվիրակություննների աշխատանքում: Թեև, չնայած դրան, պատրիարքարանն ու ազգային ժողովը մչտա-պես ուշադիր էին հայ դատին լծված պատվիրակությունների գոր-ծելակերպի նկատմամբ: Պոլսահայ իրականության հակասական ու հեղհեղուկ պայմաններում էր, որ իր ձայնը լսելի պետք է դարձներ «վերջին լուրը»: Թերթը չէր հարում ազգային կուսակցություննե-րից որևէ մեկին՝ հավատարիմ մնալով «ամենօրյա անկախ օրաթեր-թի» ուղղությանը: Այսուհանդերձ, զգացվում է թերթի ռամկավա-րական որոշ սկզբունքների առկայությունը, ինչպիսիք են ժողովր-դավարական քաղաքական կարգի պաշտպանությունը, ազգի բոլոր դասակարգերի շահերին հետամուտ լինելը և այլն: Թերթի գլխա-վոր աշխատակիցների մի մասը նախկին ռամկավարներ էին, որպի-սիք էին Հ. Ասպետը, Ա. Գալփակճյանը («Ժամանակի» նախկին խմբագրապետը), Հ. Հակոբյանը և Մ. Նաթանյանը: Օ. Չիֆթե-Սա-բաֆը ևս գրում էր, որ պատերազմից առաջ մի կարճ միջոց ռամ-կավար է եղել, բայց հետո հեռացել է այդ կուսակցությունից՝ մնալով իբրև «զուտ ռամկավար խաղաղապաշտ և բարեշրջական դաղափարներին հարած ազատական մը» (1921, 5 մրտ.): Ռամկա-վարներից չատ ավելի հստակ էր սահմանազատվում Ա. Գալփակճ-յանը, երբ կուսակցություններն ու կուսակցական կարգապահութ-յունը համարում էր բռնություն՝ անհատի վրա: Նա առաջարկում էր լուծարել բոլոր կուսակցությունները և առաջնորդվել միայն

ազգի չահերով (1921, 18 մրտ.): Հայ կուսակցությունները քանդում են «մեզի համար չինուելիք Ազգային տունը» տագնապում էր նա՝ նկատի առնելով Արևմտահայաստանում անկախ պետություն ստեղծելու՝ չրջանառվող գաղափարը (1921, 31 մրտ.): Հ. Ասպետը հակադրվում էր նաև «չեզոքներին»՝ ազգային ժողովի մի խումբ երեսփոխանների, նշելով, որ նրանց գործողություններում բացահայտորեն զգացվում է վնասակար դիմազրկությունը (Ն. տ.): Իսկ առհասարակ թերթը կոչ էր անում գործուն վերաբերմունք ցուցաբերել ազգային խնդիրների նկատմամբ և թույլ չտալ, որ «կուսակցությունները այս ազգին քիթէն բռնած տանին, ուր որ ուզեն» (1921, 18 մյս.): Հ. Ասպետը և Ե. Օտյանը «Վերջին լուրում» ընդհարվեցին ռամկավարների «Ժողովուրդին ձայնը» թերթի և Վ. Թեքեյանի հետ, որը «Վերջին լուրը» որակել էր որպես «անկախներու ինքնակոչ օրգան» (1921, 21 հնս.): Բայց խնդիրն այստեղ երբեմնի յուրայիններից հրաժարված հրապարակախոսներին չի վերաբերում: Կուսակցական արժեքները բացարձակացնելու և անփոփոխ թերություններ անտեսելու կեցվածքը կարծես թե հատուկ էր այս տարիներին կ. Պոլսում գործող ազգային կուսակցություններին: Հիասթափված այս ամենից, երես չրջելով և մեկից, և բոլորից, արևմտահայ մտավորականների մի ամբողջ խումբ ցնդաբանություններից հետո ապրում էր հոգևոր խորին տվայտանքներ՝ իր հերթին որոնելով աղետի պատճառները և դրանց մի մասը վերագրելով ազգի ներսում եղած կուսակցական պառակտումներին: Սակայն անկախների կողմից կուսակցությունների հաճախ արդարացի քննադատությունը ինքնանպատակ էր դառնում իրենց հախուռն ժխտումների մեջ. ազգային կուսակցությունները զրկելով դոյության իրավունքից, նրանք ազգը վերածում էին իրենց փառաբանած անհատների արհեստական հանրագումարի, անձև մի բազմության, որի մեջ չքանալու էր այդ նույն անհատներին համախմբող պազափարի ամեն մի մտայնություն: Եվ այս իմաստով անկախների դրական քննադատական լիցքերը պետք է պարպվեին առօրեական բանավեճերում՝ ի զորու չլինելով առաջարկել որևէ հիմնավորված

ազգային ծրագիր: Կար նաև մեկ այլ, ոչ պակաս լուրջ հանգամանք՝ անկախների հայտնության, այլև մի որոշ լսարանի ուշադրությունը գրավելու համար: Նկատի ունենք ազգի կացությունը վերապրող պոլսահայ հանրության հոգևոր ու նյութական վիճակը, Արևելյան Հայաստանում առաջին հանրապետության կործանումը և Խորհրդային Հայաստանի անկանխատեսելի ընթացքը, Հայկական ինքնորոշման օրավուր թոշնող դաղափարը եվրոպականատյաններում, որ դարձյալ անհուսության և չարիքների պատճառները ազգի մեջ որոնելու էր մղում անկախներին, ինչպես և, ի դեպ, ոչ միայն նրանց: Մտայնություն, որ պետք է գոյատևեր մինչև Հայկական հարցի հուղարկավորությունը Եվրոպայում, մինչև 1923 թ. Պոլսի ազգային ժողովում դաշնակցության, հնչակյաններին, ռամկավարների ու չեզոքների գործունեության քննադատությունը: Այս ամենով հանդերձ, թերթն իր էջերում մեկտեղում էր գաղափարապես ոչ միասնական գործիչների: Ա. Սալմասլյանը Փարիզից քննադատում էր նրանց, ովքեր մերժում են կուսակցությունները չհարող հայ պանգվածների չեզոքությունը, ասել կուզի՝ չեզոքներին: Մանակնով ՀՅԴ և հնչակյաններին՝ էկլեկտիզմին տուրք տալու համար, բաղմաչերտ ու ներհակ կողմնորոշումներ ունեցող մարդկանց միավորումն այդ կուսակցություններում, նա ռամկավարներին համարում է պահպանողական՝ հակառակ իրենց «ամոքրատիք ու ազատական հովերուն» (1921, 31 հկտ.): Իր հերթին, Հ. Ասպետը, չեզոքությունը որակում էր իբրև ազգային ինքնասպանություն (1921, 22 հկտ.) և հակադրվելով չեզոքների հակակուսակցական տեսակետին, առաջարկում էր կուսակցությունների արմատական բարեփոխման և ոչ թե լուծարման միջոցը: «Վերջին լուրին» Հ. Ասպետի աշխատակցությունը առանձնանում է բազմաթեմայնությամբ, ազգային ու հասարակական խնդիրների ամենատարբեր սրծարծումներով, որոնց մեջ երևում է խելամիտ դեմոկրատ հրապարակախոսը: Ակնառու է նրա հիմնավոր քննադատական կեցվածքը քեմալականների ազգային քաղաքականության դեմ: «Քաւիթիթիւլասիոն և փոքրամասնութիւն» հոդվածում նա

նկատում էր, որ քեմալականներին հնարավոր չէ զսպել առանց արտաքին ուժերի միջամտության, «առանց երաշխաւորութեան մասնաւոր և ազդու միջոցներու» (1922, 26 ապր.):

Հ. Ասպետի վերջին եզրակացությունը հենվում էր Մ. Քեմալի երկդիմի քաղաքականության փաստերի վրա. դրանից քիչ առաջ, Թիրքի աշխատակից Մ. Նաթանյանը վկայակոչում էր Քեմալի մի հայտարարություն Լոնդոնի վնհաժողովում, ըստ որի, ազգերի ինքնորոշման սկզբունքի համաձայն, Անկարայի կառավարությունը, իբր, բարնկամական հարաբերություններ է հաստատել հայերի հետ: Մ. Նաթանյանն այս առիթով բացահայտում էր այս հայտարարության ամբողջ կեղծիքը՝ ցույց տալով քեմալականների կողմից հայերի հանդեպ կիրառվող թշնամական գործողությունները: Հ. Ասպետը տագնապով էր արձանագրում ոչ միայն քեմալականների, այլև առհասարակ թուրքական իշխանությունների ու հասարակական կարծիքի վրա իթթիհատական ոճրագործների թողած հմայքն ու ազդեցությունը: Անդրադառնալով Թալեաթի տպագրված հուշերին, Հ. Ասպետն ուրվագծում էր նրա գազանաբարո նկարագրի մի հատկանշական կողմը՝ ամեն կերպ հիմնավորել իր գործողությունները՝ կեղծիքներ բարդելով հայերի վրա: Թալեաթը, մասնավորապես, առաջ էր քաշել հետևյալ հերյուրանքները, իբր, հայերը «գործիք եղան օտար էնթրիկներուն», «երջանիկ ու հարուստ էին այս երկրին մէջ», «պատմութիան արձանագրած ամենէն ապերախտ մարդիկը եղած են» և որ նրանք «որևէ ծառայութիւն մատուցած չեն այս երկրին (իմա՝ Օսմանյան Թուրքիային)» (1921, 24 դկտ.): Թալեաթի կեղծիքները, ի դեպ, այսօր էլ չրջանառվում են թուրքական պաշտոնական պատմագիտության և քարոզչության մեջ՝ կրկնվելով այս կամ այն տարբերակով. բացառությունն է կազմում վերջինը՝ չորրորդ կեղծիքը, թե, իբր, հայերը որևէ ծառայություն չեն մատուցել Թուրքիային: Արդի թուրքական նենգափոխողները, ընդհակառակն, խոստովանում են այդպիսի ծառայությունների բազմաթիվ փաստերը՝ օսմանների հոպածու խնամարկության ներքո, կանխակալ այն մտադրությով, սակայն,

որ հիմնավորեն նույն Թալեաթի երրորդ հերյուրանքը՝ հայերի «ապերախտության» մասին:

Հ. Ասպետը խորամուխ է եղել այն բանին, որ նշված հրեշավոր ստերը կարող էին հորինել հրեշավոր ոճրագործություն կատարած մարդիկ՝ «տեսակ մը ինքնարդարացումի» համար: Թալեաթի այդ ինքնարդարացման ճիգը, որ հատուկ է, ի դեպ, բոլոր հանցագործներին, լարվում էր այն մտավախությունից, որ իր իսկ ոճրագործ մասնակցության համար հետագայում պատասխանատվություն կկրի միայն ինքը, ուստի և միջոցներ էր ձեռնարկել այդ պատասխանատվությունը կոլեկտիվ դարձնելու համար[1]:

Երդիծաբանը մարգարեանում էր, երբ նշմարում էր Թալեաթի ցինիզմի կենսունակությունը նաև ապագայում. եթե այդ «չնական յիշատակները դրողը այլևս անցեալին կը վերաբերի, միջնադարեան ըմբռնումներով ու բարքերով այդ հասարակութիւնը կապրի ներկային և մենք միշտ գործ պիտի ունենանք ապագային մէջ անոր հետ, միշտ անուղղայ ու վտանգաւոր» (1921, 24 դեկտ.):

«Վերջին լուրի» մի այլ հեղինակ՝ Ա. Սուրենյանը «Թալէաթ փաշայի յիշատակներուն առթիւ» հոդվածում (1921, 16 դեկտ.) վերլուծում է հայերին բնաջնջելու երիտթուրքական քաղաքականությունը՝ պանթուրքական ծրագրերի համատեքստում: Նա բարոյաքաղաքական ժառանգական կապեր է հայտնաբերում երիտթուրքերի և ներկայի՝ Անկարայի կառավարությունների միջև: Անկարայի մեծ ժողովի որդեդրած սկզբունքով, նկատում է նա, «Թուրքիան ու իսլամը միլլէթը հաքիմէ (տիրող ժողովուրդ — Ա. Խ.) և քրիստոնեան՝ միլլէթ մահքյումէ (դատապարտված ժողովուրդ — Ա. Խ.) են»: Թերթի այս բնույթի նյութերը նպաստում էին ընթեր-

---

[1] Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), էջ 175-176: Հիրավի, մորթապաշտության նույն բնապոդով էր մղվում Թալեաթը, երբ իր հուշերում բացահայտորեն ստում էր, թե, իբր, ինքը դեմ է եղել հայերի տեղահանության վերաբերյալ օրենքին, որ պատրաստել էր գլխավոր շտաբը և որ պահանջել էր «ժողովրդին պաշտպանելու համար վիճվորական ջոկատներ ուղարկեն և... պատժեն ոճրագործներին» (Փափազյան Ավ., Հայերի ցեղասպանությունը թուրք քաղաքական գործիչների հուշագրություններում, էջ 99):

ցողի ճիշտ կողմնորոշմանը՝ ոչ վաղ անցյալի ողբերգության պատճառները գնահատելու հարցում:

Հ. Ասպետի հետ թերթում նույն ուղղությանն էր հետևում, սակայն այլ, երգիծական քրոնիկի ժանրով, Ե. Օտյանը: Թերթի գրեթե բոլոր համարներում այդ դործերը զետեղված են «Իրիկուան տոմսակ» խորագրի ներքո: Դրանք ունեն թեմատիկ լայն ընդգրկումներ ու բազմազանություն՝ ամեն դեպքում հրատապ խնդիրների արծարծումներով: Միշտ պահպանելով երգիծական ոճը, Ե. Օտյանն անդրադարձել է Կ. Պոլսի ազգային մարմիններին, կուսակցությունների գործունեությանը, պոլսահայ կրթական ու մշակութային հաստատություններին, Հայկական հարցի արծարծումներին, հայ որբերի հիմնահարցին, քեմալականների քաղաքականությանը և այլն: Ե. Օտյանն ամենից հաճախ երգիծել է պոլսահայ իրականության երևույթները՝ վերհանելով հասարակական հնչեղություն և հետևանքներ ունեցող հարցերը: Կ. Պոլսի ազգային ժողովի դանդաղաշարժությունն ու անպատասխանատվությունն է ծաղրում Օտյանն իր «Ազգային ժողովի օգտակարությունը», «Ձգտում» և այլ քրոնիկներում (1921, 19, 16 մյս.): Ազգային մարմինների անգործությունը նա իրավացիորեն վերագրում է ապաշնորհ պաշտոնյաներին, որոնք ղբաղված են ամենաստորբեր բնագավառներում՝ չհասցնելով որևէ օգուտ տալ և ոչ մեկին (1921, 28 հկտ.): Այդպիսի անգործության մյուս չերտն է հայտնաբերում երգիծաբանը՝ միջկուսակցական ընդհարումների հիմքում ընկած չահագիտական նկատառումները, այդ կուսակցությունների ճիդերը՝ ամեն գնով պաշտոններ ապահովել իրենց անդամների համար: Նույն մղումներով տարբեր կուսակցությունների մարդիկ, որ ամեն առավոտ իրար հայհոյելով ու մրոտելով են զբաղված, ըստ հարկին կամ հանկարծակի կարող են վերածվել «սիրակցորդ» գործընկերների՝«մեկ քանի աթոռ չահելու համար այն ժողովին մեջ, որուն գոյությիւնը անօգուտ, նոյնիսկ վնասակար կը դատեն»,- գրում է Օտյանը («Բերայի ընտրութիւնները», 1921, 6 ապր.): Հատկապես անդիջում է Օտյանը ռամկավարների և Դաշ-

նակցության հանդեպ: Այս կուսակցությունների ներհակությունները անհասկանալի են երգիծաբանին, այն դնպքում, երբ նրանք համամիտ են Հայկական հարցի լուծման խնդիրներում, մինչդեռ, անհաշտ են թաղական խորհրդի ընտրություններում, երբ «քիթեր կարիւնին, գլուխներ կը պատռին, թեւեր եւ սրունքներ կը վիրաւորուին» (1922, 13 մրտ.): Որոշ դրվագներում նա ծաղրում է ներհակությունները միևնույն կուսակցության ներսում. Օտյանը օրինակ է բերում այն փաստը, որ Պանտրմայի ռամկավարները դատ են բացել Կ. Պոլսի ռամկավարների օրգան «Ժողովուրդի ձայն» թերթի դեմ՝ ի պատասխան վերջինիս հասցրած վիրավորանքի (1921, 4 օգ.): Օտյանը հեգնանքով է նայում ռամկավարների ու ազատականների միավորմանը (1921, հկտ.)՝ չմոռանալով բաժին հանել նաև դաշնակցությանը և օգտագործելով Ս. Պարթևյանի երբեմնի մի դարձվածը՝ «Այո, միացեք ու ազգը փրկեք... ձենէ» (1921, 4 հկտ.): Ազնիների պատասխանատվությունը կուսակցությունները բարդում են միմյանց վրա, մինչդեռ որևէ «օգտակար ու չինարար» դործի դնպքում բոլոր կուսակցությունները «զայն իրենց կը սեփականեն»,- եզրակացնում է Օտյանը (1921, 11 հնս.):

Օտյանը ևս անդրադարձավ ազգային տան (կամ օջախի) գաղափարին: Այն առաջ էր քաշվել 1921 թ. մարտին բացված Լոնդոնի խորհրդաժողովում, որ ննթադրում էր Արևմտահայաստանում ստեղծել անկախ հայկական պետություն՝ Ազգերի լիգայի հովանու ներքո: Ազգային տան գաղափարն առաջ էր քաշվել և խրախուսվել Անգլիայի կողմից, որ փաստորեն նշանակելու էր հող նախապատրաստել՝ եվրոպական քաղաքականությունից հայկական հարցը վտարելու համար: Եվրոպան չհագրդռված էր վերանայելու իր հարաբերությունները Թուրքիայի հետ, նրան սիրաշահելով կանխել խորհրդային-թուրքական հետագա մերձեցումները: Անգլիացիները, ի դեպ, լիովին հաջողեցին իրենց իսկ առաջարկը անորոշության մշուշի մեջ թաղելու դործում: Սևրի դաշնագիրը (1920, օգոստոս) չէր վավերացվել ոչ արևմտյան երկրների, ոչ էլ Թուրքիայի կողմից և ի լրումն դրա, Հայաստանի Հանրապետություն

ներխուժած քեմալականներն արձանագրել էին նրա պարտությունը Ալեքսանդրապոլի պայմանագրով (1920 դեկտեմբերի 2): Եվ այս պայմաններում նույնիսկ հայտնի չէր, թե որ տարածքը պետք է զբաղեցնի հայերի ազգային տունը՝ Արևմտահայաստանի հայաբնակ վիլայեթներում, Կիլիկիայում, թե ինքնին խորհրդային Հայաստանում: Լոնդոնի խորհրդաժողովում հայկական երկու պատվիրակությունների (Պողոս Նուպարի և Ավ. Ահարոնյանի) ներկայացրած հուշագիրը որևէ ընթացք չստացավ: Քնրզոնը հայտնեց, որ դաշնակիցները ռազմական ուժ չեն կարող կիրառել՝ քեմալականներին հայկական վիլայեթներից վանելու համար: Այդ օրերին անգլիական «Դեյլի թելեգրաֆ» թերթը գրում էր, որ Հայկական հարցին խորհրդաժողովը անգամ երկրորդական նշանակություն չտվեց (1921, 21 մրտ.): Դաշնակիցներն անդրդվելի մնացին Նուպարի բերած վաստարկների առջև: Ըստ ամենայնի պայմանավորվելով Նուպարի ուղեգիծը, «Վերջին լուրի» աշխատակից Հ. Տեր-Հակոբյանը կարծում էր, որ Արևելյան Հայաստանը չի կարող լինել հայրենիքն այն ժողովրդի, որն այնքան զոհեր է տվել իր երկրում իր անկախության համար: Հետևաբար, հայերն իրավունք ունեն իրենց ազգային տունը ստեղծելու Թուրքիայի իրենց բնիկ տարածքներում. «Մենք թրքահայոց ազատագրութեան դաւն ունինք, և ոչ թէ Ռուսահայաստանի»,- պնդում էր նա՝ հակադրվելով Դաշնակցությանը, որն անգոսնում էր ազգային տան գաղափարը՝ հօգուտ միացյալ և անկախ Հայաստանի: Հ. Տեր-Հակոբյանը բանավիճում էր դաշնակցության օրգան «Ճակատամարտի» հետ, որն ազգային տունը համարում էր «թրքասէր» կամ «թրքական ազբիւրներէ» ծնունդ՝ ուղղված Սևրի դաշնագրի դեմ և որի ջատագովներն էին, ըստ այդ թերթի, Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեն, Արմենիա-Ամերիկա կոմիտեն (պրոֆ. Տ.Հակոբյանի դլխավորությամբ), ռամկավարները և այլք: «Ճակատամարտը» կարծում էր, որ «ազգային տան» ծրագրի հիմքում ընկած է հայ դատի և Հայաստանի անկախության ոչնչացման կամ Հայաստանն առհավետ երկու մասի բաժանելու գաղափարը: Հ. Տեր-Հակոբյանը

բաժանում էր Ռուսահայաստանի դատը արևմտահայ տարածքների խնդրից և «ազգային տունը» դիտում ժամանակավոր, անցումային մի փուլ՝ «յարմար րոպէին իր միացումը իրագործելու համար Երեւանեան Հանրապետութեան»,- գրում էր նա (1921, 18 հլս.): Հայ քաղաքական գործիչների մի մասը ակնհայտորեն չէ ցանկանում իրատես լինել՝ չըշանցնելով արևմուտքի ու Ռուսաստանի իրական հակասությունները, որոնցից յուրաքանչյուրն անցել էր Քեմալին ընդառաջելու քաղաքականության՝ ի հեճուկս մյուսի: Արևմուտքը, ի հակադրություն Ռուսաստան-Թուրքիա համաձայնեցված գործողությունների, 1921–1923 թթ. կտրուկ վերանայեց իր դիրքորոշումները Թուրքիայի նկատմամբ, որի վկայությունն էր ֆրանս-թուրքական պայմանագիրը[1] և որից առավելագույն օգուտներ էր կորզելու Քեմալը՝ հմտորեն մանևրելով Եվրոպայի ու Ռուսաստանի շահնամական հարաբերությունների միջև: Վերոհիշյալ Հ. Տեր-Հակոբյանն արդեն բացահայտորեն ձեռքը փրփուրներին էր դցում՝ «ազգային տան» հարցում քաղաքագիտական սառը հաշվարկը փոխարինելով Թուրքերից ունեցած իր ակնկալիքներով (1922, 18 ապր.): Թե ինչ աստիճանի էր հասել «Վերջին լուրի» «անկախների» բարեմտությունը ցանկալին իրականի տեղ պատկերացնելու հարցում, ցույց է տալիս թերթում նառանդ ցուցաբերող հին ազատամիտ Բյուզանդ Քեչյանի այն տեսակետը, թե, իբր, ազգային տուն հիմնելով Արևմտյան Հայաստանում, հայերը մեծապես կնպաստեն նաև թուրքական պետության տնտեսական ու քաղաքական հիմնահարցերի լուծմանը, ուստի թուրքերը պետք է շահագրգռված լինեն այդպիսի «տան» գաղափարով (1922, 13 մյս.): «Ազգային տան» խաբկանքը, այսպես թե այնպես շատ ավելի մեծ խաբկանքի՝ Սևրի դաշնագրի հիշողությամբ խանդավառ հայ քաղաքական ուժերի ինքնախաբեության հետևանքն էր, արևմուտքի և Թուրքիայի փոխհարաբերությունների իրական արժեքը չընկալող

[1] 1921 թ. հոկտեմբերի 20-ի պայմանագրով Ֆրանսիան Թուրքիային էր թողնում Կիլիկիան՝ հանելով իր զորքերն այնտեղից (տես Սահակյան Ռ., Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921 թթ., էջ 269):

մտայնության հետևանքը: Թերթի «անկախնները» հետևում էին այս մտայնությանը՝ տարուբերվելով սեփական ցանկություննների և միջազգային քաղաքականության երբևէ չհատվող տիրույթներում: «Ազգային տան» հանդեսը իր համակրանքը թերթին արտահայտում էր Փարիզի ազգային պատվիրակության նոր նախագահ Գ. Նորատունկյանի դրվատանքով, որը 1922 թ. կեսերին ջանքեր էր գործադրում նշված դաղափարի իրականացման համար[1]: Սթափ խոսքը այսուհանդերձ, պետք է ասվեր թերթի էջերում: Ե. Օտյանը հարազատ էր մնում հայ երիտթանքի ավանդականորեն հատուկ խորաթափանցությանը, երբ ծաղրուծանակի էր ենթարկում նույն այդ «ազգային տան» հայեցակարգը: Այդ տունը, գրում էր նա, պետք է հիմնել Հրատ (Արես), Երևակ (Սատուրն) կամ Արուսյակ մոլորակներից մեկի վրա, բայց թե հայերին ինչպես են այնտեղ տեղափոխելու, դժվար է ասել, ուստի «փոխադրութենան միջոցը կը թողու, որ գիտուննները գտնան» (1922, 13 ապր.): Ինքը՝ Ե. Օտյանը մերկացնում էր թուրքական դիվանագիտության ննջգմտությունները: Առարկելով Լոնդոնի խորհրդաժողովում մեծ վեզիր Թեվֆիք փաշայի այն պնդմանը, թե Թուրքիան ոչ մի խտրություն չի դնում իր այլազան հպատակների մեջ, Օտյանը ընդում է թուրքերի կատարած բռնի տաճկացման բազմաթիվ փաստեր (Փոքր Ասիայի հույներ, Սիրիա տարագրված հայեր, ալբանացիներ և այլն) (1921, 12 մրտ.): Ե. Օտյանը հայրդրպականության բազմաթիվ կապեր է հայտնաբերում երիտթուրքերի և ժամանակի թուրքական կառավարողների, հատկապես քեմալականների միջև: Թերթում նա տպագրեց «Իրիկուան տոմսակի» հերթական «1915 ապրիլի 11–12 յուշերը» հատվածը[2] հայ մտավորականության ձերբակալությունների մասին՝ ականատեսի ճշգրտությամբ և սկզբնաղբյուրի արժեքով: Ձերբակալվել էին Բարսեղ Շահպազը, Ն. Տաղավարյանը, Վ.

[1] ՀԱԱ, ֆ. 1301, ց. 1, գ. 58:

[2] Ե. Օտյանի այս շրջանի ամբողջական հուշերը հրատարակվեցին հետագայում (տե՛ս Օտեան Ե., Անիծեալ տարիներ, 1914-1919 (անձնական յիշատակներ), Թեհրան, 2005):

Թորգոմյանը, Վ. Թոլայանը, Ա. Անտոնյանը և ուրիշ չատերը. «Յետոյ հասկցանք, թէ դժոխային ծրագիրի մը, հայ ցեղի բնաջնջումին առաջին ահռելի դրուագն էր, որ տեղի կունենար»,- գրում է Օտյանը (1921, 25 մայր.)[1]:

Ցեղասպանությանն ու դրան առնչվող իրողություններին Ե. Օտյանը թերթում անդրադարձել է քանիցս: Շատ հետաքրքիր է նրա «Նահատակին թաղումը» պամֆլետը՝ Ս. Թեհլիրյանի ձեռքով սպանված Թալեաթի թաղման նկարագիրը՝ սատիրական մեկնաբանություններով (1921, 22 մայր.): «Վերջին լուրը» բավական սպառիչ լուսաբանել է իր՝ Ս. Թեհլիրյանի դատավարությունը: Անգլիական «Օրինենթըլ նյուզ»-ից թերթն արտատպեց ռևպորտաժ՝ դատարանի դահլիճից: Ընթերցողն այստեղ տեղեկացվում է, որ Թալեաթի կինը վարձել է չորս փաստաբան՝ Թեհլիրյանի դեմ մեղադրական դատավճիռ ապահովելու համար: Հայտնվում է, որ փաստաբաններին ծախսը ստանձնել էին երիտթուրքական ելմտական երբեմնի նախարար Ջավիդը և Տրապիզոնի նախկին կուսակալ Ջեմալ Ազմին (1921, 4 հնս.): «Վերջին լուրը» արդարության հաղթանակ է համարում Ս. Թեհլիրյանին արդարացնող դատավճիռը, «որով հզօրապէս ապացուցուած կըլլայ, թէ Պէրլինի մէջ դատաւորներ կան» (1921, 6 հնս.): Նույն կերպ, թերթը տեղեկատվություն է տվել Միսաք Թորլաքյանի դատավարության, նրա կողմից Բհհբութ խան Ջիվանշիրի ահաբեկման մասին: Ադրբեջանի ներքին գործերի այդ նախկին նախարարը, ինչպես հայտնի է, կազմակերպել էր Բաքվի հայ ազգաբնակչության կոտորածը, որ Կ. Պոլսի

---

[1] Ե. Օտյանի հուշագրական այս հատվածը թերթը տպագրել է ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա առթիվ: Ուշագրավ է, որ բուն իսկ՝ ցեղասպանության ամենամյա տարելիցը ապրիլի 24-ին նշելու գաղափարը հղացել էր պոլսահայ հանրությունը: Էջմիածնի կաթողիկոսը 1921 թ. հոկտեմբերի 30-ի հայրապետական կոնդակով հայտնում էր, որ համաձայն Կ. Պոլսի պատրիարքի խնդրանքի, վճռել է «յարգել վերջին համաշխարհային պատերազմի ընթացքում հայկական տարապրութեան, կոտորածի զոհերի և բիւրաւոր նահատակների յիշատակը, սահմանելով առ այն յատուկ օր՝ ապրիլ ամսի 11/24-ը՝ համապատասխան մեր արևմտահայ ժողովրդեան բուռն փափագին» և որ այդ օրը Հայաստանյայց բոլոր եկեղեցիներում պետք է մատուցվի հանդիսավոր պատարագ և կատարվի հոգեհանգիստ (ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 329):

անգլիական ռազմական դատարանում ըստ ամենայնի լուսաբանել էր Մ. Թորլաքյանի փաստաբան Խոսրովյանը: Ի դեպ, որպես վկա, դատարանում հանդես է եկել Ե. Օտյանը՝ իբրև ականատես վերարտադրելով հայերի տարագրության և բնաջնջման եղերական պատմությունը (1921, 5 հկտ.): Դատապաշտպան Խոսրովյանի մերկացումները վերաբերում էին նաև թուրք-ադրբեջանական ազգայնամոլների հայաջինջ քաղաքականության ծալքերին, մուսավաթի՝ իթթիհատի հետ ունեցած սերտ առնչություններին: Խոսրովյանը նշում էր, որ Ջիվանշիրը մուսավաթի գլխավոր լրտեսներից մեկն էր, իսկ նրա կուսակցությունը պատերազմի ժամանակ լիովին հետևում էր իթթիհատի քաղաքական ուղղությանը՝ Կովկասի մահմեդականության մեջ քայքայելով համաթուրանականության և համիսլամության գաղափարները (1921, 4–5 հկտ.):

Երիտթուրքերի պատուհասման թեման «վերջին լուրն» արծարծեց ամբողջ 1921–1922 թթ. ընթացքում: 1921 թ. դեկտեմբերին թերթը բանավիճում էր Կ. Պոլսի թուրքական մամուլի հետ, որը հերթական իթթիհատականի ամեն մի կորստից հետո (որ իրականացվում էր «Նեմեսիս» գործողության համաձայն) ամեն կերպ ճգնում էր մեղմացնել կամ արդարացնել երիտթուրքերի եղեռնագործ քաղաքականությունը: Սայիդ Հալիմի (Թուրքիայի մեծ վեզիրը առաջին աշխարհամարտի տարիներին) վրա հասած հատուցման առթիվ «վերջին լուրը» փաստորեն մերկացնում է անգլիացիների հանցավոր գործելակերպը ցեղասպան այլ իթթիհատական գործչի նկատմամբ: Կ. Պոլսի դրավումից հետո անգլիացիները նրան աքսորել էին Մալթա, ապա փոխանակել գերիների հետ, և նախկին մեծ վեզիրն ազատություն ստանալով՝ անցել էր Հռոմ: Հենց այստեղ էլ նրան հասնելու էր Արշավիր Շիրակյանի վրեժխնդիր ձեռքը (որ մնացել էր չբացահայտված): «Վերջին լուրը» հերքում էր թուրք մամուլի՝ այս առթիվ հայերի դեմ ուղղված փաստազուրկ մեղադրանքները (1921, 10 դկտ.):

1922 թ. «Վերջին լուրի» առավել զուսպ տեղեկատվության մեջ իրեն զգացնել է տալիս քեմալականների հարաճուն ազդե-

յուրյունը Կ. Պոլսում: Թերթն անգամ զգուշանում է սեփական խոսքն ասել այս հարցում՝ բավարարվելով թուրք մամուլի փաստական լրատվությամբ: Բայց այս պայմաններում իսկ թերթն ընտրում է այնպիսի նյութեր, որոնք ինչ-որ չափով տեղեկություններ են տալիս վրիժառության թիրախների հանցավոր գործունեության մասին: 1922 թ. ապրիլի 17-ին, երբ Բեռլինում Արշավիր Շիրակյանը և Արամ Երկանյանը իրականացրեցին ցեղասպանության սանձազերծած իթթիհատական պարագլուխներից Ջեմալ Ագմիլ և Բհահէդդին Շաքիրի («Թեշքիլյաթը մահսուսե» [«Հատուկ կազմակերպություն»] ոճրապարտ կառույցի ղեկավարը) նկատմամբ դործողությունը, «Վերջին լուրը» թուրքական «Թևվհիթի էֆքյար» թերթից արտատպեց իթթիհատական եղեռնագործներին դրվատող հոդվածներ, որտեղ, այնուամենայնիվ, ընթերցողն ինչ-որ չափով տեղեկանում էր նրանց սպանության պատճառներին: Այսպես, թուրքական թերթը բացահայտումներ էր անում Բհահէդդին Շաքիրի արյունալի անցյալից, երբ հայտնում էր, որ նա առաջինը «հայերու տեղահանութեան պէտքը զգացուց», և որ «ընդհ. հրամանատար էնվեր փաշային ալ տեսակ մը ներկայացուցիչը ըլլալով, իթթիհատի կեդրոնը համոզեց, թէ տեղահանութիւնը անհրաժեշտ է» (1922, 21 ապր.): «Վերջին լուրը», համենայն դեպս, մինչև 1922 թ. վերջերը ըստ հնարավորին հակադրվում էր օրավուր հանդգնացող թուրք մամուլի ծայրահեղություններին՝ երիտթուրքերին արդարացնելու ճիգերին, ինչպես և հույների դեմ փոքրասիական չրջաններում կուվող քեմալականներին հերոսացնելու ուղեգծին: Վերջին դեպքում ակնհայտորեն երևում է թերթի անվերապահ համակրանքը հույների նկատմամբ: Ե. Օտյանը ծաղրում էր թուրքական «Աքչամ» և «Իլերի» թերթերին, որոնք ամեն կերպ նսեմացնում էին հույների տարած հաղթանակները թուրքերի դեմ՝ ցուցադրելով թուրքական լրատվության ավանդական ստահակությունը: Ժամանակին Հ. Պարոնյանը, նկատում է Ե. Օտյանը, ծաղրում էր թուրքական թերթերի «ռազմագիտությունը», երբ գրում էր, որ Մոնտենեգրոյի և Սերբիայի զորքերը «այնչափ

ատեն, որ Հիքմէթ պէյ տպագրական տեսուչ է, ամենափոքր յայտնութիւն մը չեն կրնար ունենալ» (1921, 1 ապր.): Նույն «Աքշամ» թերթն առաջարկել էր դատի տալ Կ. Պոլսի հույն պատրիարքարանին՝ ի նպաստ հույն-թուրքական պատերազմի հույն վիրավորների հանգանակություն կազմակերպելու համար: Բայց այդ դեպքում, նկատում է Օտյանը, դավաճանական պետք է համարել «թուրք հանրմներուն կատարած յանգանակութիւնը»՝ հօգուտ քեմալականների (1921, 5 հկտ.):

1921 թ. ընթացքում քեմալականների զորանալու համեմատ, կարծնք, վերադառնում էին երիտթուրքերի ժամանակները, երբ սրանք իրենց կատարած ոճրագործությունները բարդում էին հայերի վրա[1]: Թերթը հայտնում է Նիկոմեդիայի շրջանի Քեբեմնեթ հայարնակ գյուղի՝ ցեղասպանությունից վրկված և վերադարձած հայ բնակորների նկատմամբ թուրքերի կատարած հաշվեհարդարի մասին: Աքսորված հայ բնակիչներից վերադարձել է ընդամենը 122 մարդ, իսկ տեղացի թուրքերն ու իշխանությունները չեն վերադարձնում նրանց գույքերն ու հողերը: Հափշտակիչներն այրում են ամբողջ գյուղը, իսկ բողոքող հայերի մի մասը դատապարտվում է տասն և ավելի տարվա բանտարկության: Քեբեմնեթցինները դիմում են «Վերջին լուրի» խմբագրությանը՝ բողոքելով պատրիարքարանի անտարբերությունից և օգնության ակնկալիքով (1921, 1 մրտ.):

Թուրքական դատարանների աչք ծակող կողմնակալությունը «Վերջին լուրը» ցույց էր տալիս նաև երիտթուրքական դործիչների դատավարությունների օրինակներով: 1921 թ. մայիսին Մալթայից արդեն տուն էր վերադարձել ազատված հանցագործներից երկու տասնյակի չափ մարդ: Իր մի քրոնիկում («Տեսակցութիւն մը մալթայադարձի մը հետ») Ե. Օտյանը ծանակում էր այդ պատիժը չկրած հանցագործներին, որոնք խոստովանում են, որ թեև օրը

[1] Դեռևս իր «Մանանա» երգիծաթերթում (1913-1914) Ե. Օտյանը բացահայտում էր երիտթուրքերի բնութագրական այդ գործելակերպը (Մանուկյան Ա., Երվանդ Օտյան, էջ 276):

չորս անգամ կերակրվել են աքսորավայրում, բայց խորապես դժգոհ են «փաթիճան տօլմասի ու միտիա թավասի» կերակրատեսակներից զրկվելու համար (1921, 21 մյս.):

Հայտնի է, որ երիտթուրքական պարագլուխների դատավարությունն ավարտվել էր 1919 թ. հուլիսի 5-ին և այս չորս հանցագործները հեռակա կարգով դատապարտվել էին մահվան[1]: Երիտթուրքական նվազ չափերի մյուս հանցագործների դատավարությունները շարունակվեցին նաև 1920–1921 թթ.: Եվ հենց այդ ընթացքում էլ Կ. Պոլսի ռազմական ատյանը շարունակաբար ցույց էր տալիս նրանց հանցագործությունները կոծկելու իր ռազմավարությունը, անշուշտ, անգլիացիների բարյացակամության պայմաններում և հատկապես այն բանից հետո, երբ նրանք 77 հոգու աքսորել էին Մալթա կղզի՝ կարճ ժամանակ անց նրանց ազատ արձակելու որոշմամբ: «Իրիկուան տոմսակի» նյութերից մեկում («Շահևկան տեսակցութիւն մը») Ե. Օտյանը ծաղրում է այդպիսի դատավարություններից մեկը: Դատարանը, նկատում է Օտյանը, քննել է 130 գործ և «գրեթէ բոլոր ամբաստանեալները անպարտ արձակած է»: Օտյանն ի ցույց է դնում այդ դատարանի անդամներից մեկին՝ Խուրշիդ փաշային, որի կարծիքով ամբաստանյալներին դատապարտելու համար հանցակազմ չի եղել, քանի որ չկան ոչ ականատեսներ, ոչ էլ վկաներ (1921, 18 ապր.): Իր մերկացումներում «Վերջին լուրն» ու արտահայտում էր ինչպես մայրաքաղաքի, այնպես էլ առհասարակ հայ հասարակության տրամադրությունները ու վրդովմունքը: Նկատի ունենալով իթթիհատական հանցագործների հանդեպ թուրքական արդարադատության հետևողականորեն կոլմնակալ վերաբերմունքը, Ջ. Կիրակոսյանը գրում է, որ դրանից դժգոհ հայ մամուլը «ռազմական դատարանի

---

[1] Տե՛ս Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի: Առաջաբանը, թարգմ. և ծանոթագրութ. Ավ. Փափազյանի): Տե՛ս նաև Судебный процесс Талаата паши. Стенографический отчет. Под ред. с предисл. и примеч. проф. Степанянa С. С. Դատավարության արձանագրությունները հրատարակվել են թուրքերեն՝ առանց որևէ ծանոթագրության կամ մեկնաբանության, իբրև վավերագիր (տե՛ս Doğan Akhanlı, Talat Paşanın Davası Tutanaklar):

գործունեությունն անվանեց «դատական խնդկատակություն», որովհետև հենց այսօր էլ հազարավոր ջարդարարներ ոչ միայն զբոսնում են ազատության մեջ, այլև մնում են իրենց պաշտոններում»[1]*:*

Թերթը հաճախակի ուշադրության կենտրոնում է պահում այս դատարանների օրավուր ինքնավստահ դարձող կամայական գործելակերպը: Նրա հրապարակումներում բազմաթիվ փաստերով ցույց են տրվում, որ տարադրությունից չվերադարձած հայերի գույքերին տիրանում են պատահական մարդիկ, որոնք երկու կեղծ վկայով և կաշառված մուխթարի (թաղի կամ գյուղի ավագը) տեղեկանքի հիման վրա դիմում են շերիի դատարան և ստանում սեփականատիրական իրավունք հաստատող դատավճիռ (1921, 23 ապր.): Անկարայի Ազգային մեծ ժողովը 1922 թ. ապրիլի 30-ին ընդունել էր լքված գույքերի մասին («Էմվալը մեթրուքե») օրենքը, որով կառավարությունը անտերունչ մնացած չարժական գույքը (հիմնականում՝ հայերի և հույների) վաճառելու իրավունք էր ստանում: Անշարժ սեփականությունները ևս հանձնվում էին իշխանությունների տնօրինությանը՝ դրանց եկամուտները պետական բյուջեին տրամադրելու պայմանով: Այս բացահայտ կողոպուտին ինչ-որ չափով արդարության տեսք տալու համար ենթադրվում էր, որ այդ եկամտից դուրսգրված դրամները կհանձնվեն իրենց տերերին, եթե նրանք վերադառնան (1922, 1 մայ.): Ըստ էության դա նշանակում էր, որ Քեմալի կառավարությունը բռնագրավում է վայրագ քաղաքականության զոհ դարձած հայերի և հույների սեփականությունը՝ չարունակելով և լրացնելով երիտթուրքերին: Եվ այս իմաստով լիովին ճիշտ էր որակում Թերթն այդ օրենքը, երբ գրում էր, որ այն «կը յիշեցնէ տեղահանութեան առթիւ հրատարակուած (երիտթուրքերի ժամանակ – Ա. Խ.) էմվալը մէթրուքէի օրենքը» (ն. տ.): Այստեղ ավելացնենք, որ հետագայում՝ Թուրքիան հանրապետություն հռչակելուց հետո ևս, թուրքա-

[1] **Киракосян Дж.**, Младотурки перед судом истории, с. 286.

կան կառավարությունն ազգային փոքրամասնությունների չարժական և անշարժ գույքի բռնագրավման վերաբերյալ մի քանի օրենքներ ընդունեց, որոնք ուղղվում էին նրանց կամ թրքացնելու կամ էլ երկրից հեռացնելու նպատակին: Հիմնահարցը հետազոտողն այս առթիվ իրավացիորեն եզրակացնում է, որ 1920-ական թթ. և հետագայում լքյալ գույքերի մասին թուրքական իշխանությունների ընդունած օրենքները նրանց «հնարավորություն տվեցին տիրանալու հայերի ողջ ունեցվածքին»[1]:

«Վերջին լուրը» ուշագրավ տեղեկություններ է տալիս Թուրքիայում ցեղասպանությունը վերապրած հայերի մասին: Թերթը հանդես է եկել ոչ միայն իր դիտարկումներով, այլև այլ թերթերից արած արտատպումներով: Այս վերջիններից է ամերիկյան «Մերձավոր Արևելքի նպաստամատույց կոմիտեի» տվյալների տպագրությունը: Դրա հաշվարկներով, պատերազմից հետո Թուրքիայի այն վիլայեթներում, որոնք Սևրի դաշնագրից առաջ կայսրության մաս էին կազմում, գոյատևում էին 624.900 հայեր: Կոմիտեի տեղեկագիրն այս թվին էր ավելացնում մոտ 20 հազար մարդու, որոնք հարկադրված մահմեդականություն էին ընդունել կամ ծալված սպրում էին տարբեր վայրերում (1921, 5 հնս.): Բուն Արևմտահայաստանը ոչնչացնող խորշակից հետո կամ լիովին հայաթափվել էր, կամ այնտեղ վերապրել էին չնչին քանակով հայեր, Էրզրումի վիլայեթում՝ 4500, Վանի՝ 500, Բիթլիսի՝ ոչ մի մարդ, Մալաթիայի՝ 200 և այլն: Թերթը տեղեկություններ է հաղորդում Խարբերդում կուտակված հայերի մասին. քաղաքում կար մոտ 10 հազար հայ, մեծ մասը՝ որբևայրիներ: Երկսեռ որբերի թիվը հասնում էր 6 հազարի, որոնք ապաստանել էին ամերիկյան և գերմանական որբանոցներում, 1000-ի չափ որբեր՝ հայկական որբանոցում, որը, ինչպես և գերմանական որբանոցը, խնամվում էր ամերիկացիների կողմից (1921, 22 սպր.):

---

[1] Աստոյան Ա., Դարի կողոպուտը. Հայերի ունեզրկումը, էջ 164:

Կ. Պոլսի հայ որբերի վերաբերյալ բավական հագեցած տվյալներ են պարունակում «Վերջին լուրի» աշխատակից Մ. Շամտանճյանի հոդվածները: Այս հեղինակը հայտնում է, որ 1919–1922 թթ. Կ. Պոլսում խնամվել են 15–22 տարեկան 3 հազարի չափ որբեր (1922, 11 մյս.): Գործում էին «Արհեստաւորներու տուն» որբանոցը (Կում կափու), 1921 թ. իր գործունեության 55 տարին լրացրած Գալֆայան որբանոցը (Խասգյուղ): Երեք որբանոցներ գործում էին Պալաթում, Պեշիկթաշում և Սկյուտարում, խնամատարության կեդրոնի ձևնտվության: Այս որբանոցները, բացի այդ, ունեին տեղի ազգայիններից կազմված խնամակալություն՝ անկախ կենտրոնից (1922, 16 մրտ.): Մ. Շամտանճյանի թղթակցություններում հանդամանալի փաստեր կան վերոհիշյալ որբանոցների որբերի քանակի, ծախսերի, կրթական գործի, զբաղմունքների (արհեստներ) և այլնի վերաբերյալ: Գուրուչնշմն-Առնավուտ գյուղ - Պեպեք միացյալ թաղի «Հայանվեր միություն» ևս ուներ իր որբանոցը (միությունը կազմվել էր զինադադարից անմիջապես հետո, երբ Կ. Պոլիս հասած որբերը բաժանվում էին թաղերի վրա (1922, 4 մյս.): 1921 թ. ապրիլին թերթը հայտնում էր, որ Նյույորքարնակ վաճառական Մ.Հրան Գարակյոզյանը, ի հիշատակ իր վաղամեռիկ զավակի, Կ. Պոլսում որոշել է հիմնել 100 որբերի համար նախատեսված որբանոց. ենթադրվում էր, որ այն հետագայում Հայաստան է փոխադրվելու (1921, 2 ապր.):

Հատկապես պետք է ընդգծել ամերիկյան Նպաստամատույցի կատարած լայնածավալ որբախնամ գործունեությունը Կ. Պոլսում. 1921 թ. մարտին այստեղ 13 և ավելի տարեկան 1438 որբերից միայն 323-ն էր արհեստ սովորում, որ և հետագայում պետք է ընդարձակեր Նպաստամատույցը՝ ձեռք բերելով շենքեր, սարքավորումներ, հումք և այլն (1921, 17 մրտ.): Նպաստամատույցի բացած խոշոր հաստատություններից էր Բեյլերբեյի արհեստանոց-որբանոցը, որը նախապես խնամում էր 80 որբերի՝ նոր շենքում այդ թիվը 222-ի հասցնելու ծրագրով: 1921 թ. վերջերին այդ որբանոցում

խնամված և կյանք մտած որբերի թիվը հասել էր 360-ի (1921, 21 նոյ.):

Պոլսահայությունն անում էր ամեն հնարավորը՝ իր սուղ միջոցների մի մասը հատկացնելով որբախնամ հաստատություններին, միևնույն ժամանակ ազգասիրաբար լծվելով համազգային տառապանքները թեթևացնելու գործին: Հատկապես դժվարին էր որբերին հավաքելու գործը: Նրանց մի զգալի մասը գտնվում էր թուրքերի տներում, որոնք անտերունչ և սովահար երեխաներին ձեռք էին բերել պարզապես Ստամբուլի փողոցներից: Դոկտ. Հ. Արթինյանը գրում էր, որ այդ տներում կան տասնյակ հազարավոր որբեր, որոնք օգտագործվում են որպես ստրուկ կամ ծառա: Շիշլի թաղամասում, հարում էր նա, ամեն առավոտ հանդիպում են «ոտքերնին մերկ, թախթախ (փայտե ոտնաման – Ա. Խ.) հագած, իրենց սրունքին վերին մասը հագիվ ծածկուած, գունատ չալիկով մը... բազմաթիւ որբեր» (1921, 28 փետ.): Թուրքերը կտրականապես արգելել էին այդ երեխաներին՝ հայտնել իրենց հայ լինելու մասին, որպեսզի հայերը նրանց որբանոցներ չտանեն: Հիրավի, Ազգային խնամատարությունը ստեղծել էր որբերին հավաքող «որբախույզ մարմին», որի գործունեությունը, սակայն, նույն Արթինյանի վկայությամբ, հեռու էր արդյունավետ լինելուց: Այդուհանդերձ, իր ամբողջության մեջ պոլսահայ որբախնամ մարմինների գործունեությունն այս ասպարեզում ունեցավ կարևոր նշանակություն:

1920 թվականից, քեմալականների զորանալու համեմատ, եվրոպական տերությունները վերանայում էին պատերազմում պարտված երեկվա թշնամու՝ Թուրքիայի հանդեպ իրենց քաղաքականությունը: Համառ և անդիջում պայքար էր ընթանում դաշնակիցների և Խորհրդային Ռուսաստանի միջև՝ Թուրքիային իրենց կողմը քաշելու, նրան հակառակորդ կողմի դեմ լարելու ուղղությամբ: Հույների դեմ պատերազմը վերսկսելուն նախապատրաստվելով, Քեմալն օգտագործեց այս հակամարտությունը: 1920 թ. ապրիլին նա դիմել էր Խորհրդային կառավարությանը՝ հայտնելով, որ ցանկանում է «կանոնավոր հարաբերություններ հաստատել

նրա հետ՝ մասնակցելու իմպերիալիզմի դեմ մղվող պայքարին»[1]: Մասնավորապես, Խորհրդային Ռուսաստանն օգնում էր քեմալականներին զենքով, ոսկով, իսկ նույն՝ 1921 թ. մարտի 16-ի Մոսկովյան համաձայնագրով բացառիկ զիջումներ արեց Թուրքիային՝ նրան հանձնելով, ի թիվս այլ զիջումների, Կարսի մարզը և Սուրմալուի գավառը, ինչպես և Ադրբեջանին տրվեց Նախիջևանի գավառը՝ Հայաստանի հաշվին[2]: Ռուսաստանից հետո չմնացին Ֆրանսիան և Իտալիան, որոնք ոտք դրեցին Թուրքիայի հետ քաղաքական-իրավական մերձեցումների ուղին: Հիրավի, Քեմալն առավելագույնս էր օգտվում Ռուսաստանի և Արևմուտքի քաղաքական անհաշտ հակամարտություններից[3]:

Դեռևս 1920 թ. վերջերին քեմալականները Ստամբուլի կառավարության բացահայտ և դաշնակիցների լուռ համակրանքի պայմաններում երկրով մեկ մտան իրենց իրավունքների մեջ: Նրանք սկսեցին զինվորագրել նաև հայերին՝ մեծ մասամբ որբանոցների չափահաս որբերի: Զորակոչի պատրվակով վարձկան բռչիբոզուկները մտնում էին անզամ ամերիկյան որբանոցներ հաստատություններ և տանում հայ պատանիներին «ամելե թաբուրու» (աշխատանքային դումարտակ) կազմելու համար: Այն նույն տխրահռչակ աշխատանքային դումարտակները, ուր 1915–1916 թթ. այդ պատանիների հայրերին ու ավագ եղբայրներին հավաքելով՝ զինաթափել ու ոչնչացրել էին երիտթուրքերը: 1921 թ. գարնանը բանը հասավ այնտեղ, որ ամերիկյան որբանոցներ էին մտնում թուրք պաշտոնյաները և տանում պատերազմի տարիներին իսլամացած հայ աղջիկներին: Դրության տերը դառնալու համեմատ՝ թուրքերն անցան Կ. Պոլսի և մերձակայքի հայերին ճնշելու ավանդական մեթոդներին: Յալովայի շրջանում նրանք հրկիզեցին մի չարք հայկական գյուղեր՝ հրձիգության մեջ մեղադրելով և ձերբակալելով

---

[1] **Nassibian A.**, Britain and the Armenian Guestion 1918-1923, p. 199.
[2] Հայոց պատմություն, h. 4, գիրք առաջին, էջ 333-334:
[3] Տես **Hovannisian R. G.**, Pontus and Armenia, 1916-1922. In: Armenian Pontus. The Trebizond-Black Sea Communities, p. 369.

իրենց՝ հայերին: Պատրիարքը դիմել էր իշխանություններին՝ հետաքննություն սկսելու և իսկական հանցագործներին հայտնաբերելու համար (1921, 4 հնս.): «Վերջին լուրը» բերել է թուրքերի ակտիվացման բազմաթիվ այլ օրինակներ ևս: 1921 թ. ապրիլին, հենվելով հույների դեմ ռազմական գործողությունների չրջանում (Պրուսա, Էսքիշեհիր, Սյոլյոզ և այլն) տարադրված ու չվերադարձած հայատակների (փաստորեն հայերի և հույների) հողերը վարձու տալու հրահանգի վրա, իշխանություններն անցան այդ հողերը վաճառելու գործընթացին: Քեմալականները պատրաստվում էին լայնամասշտաբ հարձակման՝ ոչ թուրք տարրերի դեմ:

*

* *

Ժամանակի կացությանն համապատասխան և հայությանը պատուհասած աղետի թեկադրանքով, Կ. Պոլսի հայ համայնքում կազմվեց համազգային ժողով, որ ընդգրկում էր ազգային պատրիարքարանը, հարանվանությունների հոգևոր գլուխներին և երեսփոխանական ժողովները, որոնք հետապնդելու էին ազգային դատը: 1921 թ. համազգային ժողովը չաբաթական երկու անգամ գումարվում էր պատրիարքարանի՝ Բերայում գտնվող չենքում, որտեղ գումարվում էին նաև վարչական ժողովներն ու հանձնաժողովները՝ նույն հաճախականությամբ: Որպես կանոն, այս ժողովներին մասնակցում էր պատրիարքը (1921, 27 հնս.): Պոլսահայ համայնքի ներքին գործերը տնօրինում էր քաղաքական ժողովը՝ նվազագույն արդյունավետությամբ՝ հարցեր քննարկելու և վերաքննարկելու ավանդական գործելակերպով: Այս ժողովը չարունակ օրակարգում էր պահում, ինչպես ասվեց, այսպես կոչված հայրենիքի տուրքի (առհասարակ կարոտյալ հայերի օգտին նախատեսված)» թուրքերի բռնագրաված գույքերի, իշխանությունների հետ համայնքի կյանքին առնչվող փոխհարաբերությունների և այլ հարցեր:

Իբրև անկախ թերթ, չհարելով կուսակցություններից որևէ մեկին, «Վերջին լուրը» քանիցս քննադատական կրակի տակ էր առնում ազգային ժողովի քիչ արդյունավետ նիստերը, հատկապես

այն խնդիրներում, որոնք ակնհայտորեն վեր էին դրանց իրավասությունից: Այդպիսիք էին ազգային ժողովի վերաբերմունքը հայ դատի, Փարիզում ազգային պատվիրակությունների (Պողոս Նուպարի և Ավ. Ահարոնյանի ղեկավորությամբ), ինչպես և Խորհրդային Հայաստանի կառավարության նկատմամբ: Այսուհանդերձ, իր ակնբախ թերությունների հետ միասին, Կ. Պոլսի ազգային ժողովը այս կարևոր հարցերի ու կնճիռների հանդեպ անդրադարձներով ոչ միայն արտացոլում էր հայ համայնքի մտահոգությունները, այլև կամքն ու ցանկությունը՝ նյութապես ու բարոյապես աջակցելու ցեղասպանության վերապրած հայրենակիցներին: Պոլսահայությունը չէր վարանում հանդանակություններ անել ի նպաստ նաև Խորհրդային Հայաստանի սովյալ բնակչության, նրանց հետ ինչ-ինչ կապեր հաստատելու ուղղությամբ և այլն: «Վերջին լուրում» արտացոլված են պոլսահայ համայնքի ակնկալիքները արևմտահայ որոշ տարածքների վրա անկախ պետություն ստեղծելու, հանրահայտ «Ազգային տունը» հիմնելու գործում: Եվ վերջապես, պատրիարքարանի և ազգային ժողովի նշանակությունը ավելի չոչափելի է դառնում բուն Կ. Պոլսում հայերի մտավոր ու մշակութային հաստատությունների աշխատանքի կենտրոնացման, դրանց գործունեությունը արդյունավետ դարձնելու տեսակետից: «Վերջին լուրն» այս ամենի հետ մեկտեղ արտահայտել է իր սեփական, ուրույն վերաբերմունքը, որի մեջ լայնախոհությունը նպաստում էր այդ թերթի՝ կուսակցական հակասականությունների զերծ լինելուն: Հարկ է նկատել նաև, որ ազգային հիմնախնդիրների, Խորհրդային Ռուսաստանի և հատկապես Խորհրդային Հայաստանի հանդեպ նրա դիրքորոշումները մի հայտնի չափով համընկնում էին չեզոքների և ռամկավարների հայացքներին, որքան էլ «Վերջին լուրը» քննադատեր և առաջիններին, և վերջիններին:

Զինադադարին հետևած ավելի քան մեկուկես տարվա ընթացքում վերոհիշյալ դժվարությունների առջև կանգնած պոլսահայությունը, այնուամենայնիվ, աստիճանաբար չոկում էր մեջքը:

Սկսեցին կազմակերպվել ընկերություններ, որբախնամ հաստատություններ, մասնագիտական միություններ, Արևմտահայաստանի պատառիկները ներկայացնող հայրենակցական միություններ: Իրենց գործունեությունն աշխուժացրեցին Ազգային հիվանդանոցի հոգաբարձությունը, ուսումնական խորհուրդն իր դպրոցներով, արվեստի, թատերական միությունները և այլն: Կ. Պոլսի եկեղեցիներում արվում էին համազգային բնույթի հանգանակություններ: Վերածնության նշանները ցույց տվեց երիտթուրքերի կառավարման պատերազմյան շրջանում գրեթե անշնչացած մամուլը: Հ. Ասլետը գրում էր, որ դինադադարից հետո Կ. Պոլսի լրագրական կյանքում հանկարծական ոգևորություն սկսվեց. «Հասարակութիւնը կարդալու, լսմանալու, հասկանալու բուռն փափաք մը ուներ: Խուլհամրութեան վիճակը սէտք եղածէն աւելի տևեր էր: Լեզուները սկսան բացուիլ» (1921, 2 մրտ.): Մամուլը, ըստ նրա, արթնանում էր հախուռն ու անպատրաստ, փորձառու հրապարակախոսների ու լրագրողների մեծագույն մասն անհետացել էր արհավիրքների ճանապարհներին՝ ասպարեզը թողնելով թերավարտ աշակերտներին, չուկայի մարդկանց և պատահական այլ անձանց, որոնք «սկսան արտայայտուիլ թափթփած ու խեղդուխնդաւ ձեւերով»: «Վերջին լուրի» մեկ այլ հրապարակախոս՝ Հ. Տեր-Հակոբյանը, հռետորաբեն էր բնութագրում զինադադարից հետո վերջին երեք տարիներին կազմակերպված հանրային ու մշակութային ձեռնարկները, երբ «բացի մասնակի միութիւններէ,որոնք մէկ օրը կը ծնին՝ յաջորդ օրը մեռնելու համար, ճախողութիւններ եղան մտաւորականներու, հայ խմբագիրներու և հայ թատրոնի միութեան ձեռնարկները» (1921, 19 դկտ.):

Այսուհանդերձ, դեռևս 1919-ի սկզբներից զգացվում էր մամուլի մեջ կատարվող բեկումը՝ հատկապես վաստակ ունեցող սակավաթիվ խմբագիր-տնօրենների ջանքերով: Ա. Զոպանյանին ուղղած իր մի նամակում (23 հունվարի, 1919) Ե. Օտյանը գրում էր. «Ժամանակի» արտօնատէրը (Ս. Գոչունյան- Ա. Խ.) կուզէ, որ թղթակից մը ունենանք Բարիզ, որ օրը օրէն տեղեկագրէ մեզի հա-

մար ինչ չահեկան որ տեղի ունենայ ու միևնոյն ատեն էնթերվիուներ ղրկէ մեզի»[1]:

1920-ականի սկզբներին, այսուհանդերձ, Կ. Պոլսում գործում էին մեկուկես տասնյակի չափ ընկերություններ ու միություններ, որոնց մի զգալի մասն իրականացնում էր իր ծրագրերը՝ այս կամ այն կերպ հաղթահարելով հասկանալի դժվարությունները: Քննադատական դիտողությունների մի հայտնի պաչարով «Վերջին լուրը» արձագանքում էր դրանց գործունեությանը, տպագրում տեղեկատվական ու վերլուծական հրապարակումներ: Կ. Պոլսում աշխուժանում էր նաև թատերական կյանքը, որ խթանվում էր պոլսաբնակ եվրոպացիների մշակութային ճեռնարկումների ազդեցությամբ: Զգալի աշխատանք էր կատարում Հայ թատերական մությունը, որը հիմնվեց բավական ուշ, 1921 թ. ապրիլին, մի խումբ թատերասերների նախաձեռնությամբ՝ նպատակ ունենալով «զարգացնել հայ բեմական գեղարուեստը ու թատերական գրականութիւնը և այդ կերպով նպաստել ժողովուրդի զարգացման» (1921, 29 ապր.): Միությունը գլխավորում էր վարչական ժողովը: Նրա խումբն իր ներկայացումները տալիս էր Պոլի չանի թատրոնում: Թերթն այս թատրոնի լավագույն բեմական ուժերն էր համարում կանանցից՝ Է. Գովան-Պիննեմեճյանին և Ալեքսանյանին, ճանաչված դերասաններ Շահխաթունուն և այլոց (1921, 4 հնս.): 1921 թ. այս թատրոնը բեմադրում էր և ինքնուրույն, և թարգմանական պիեսներ, որոնց մեջ՝ Շանթի «Հին աստվածները», Դյումա-որդու «Կամելիազարդ տիկինը», Ռ. Դըֆլերի և Քսավիեի «Տիկետ և մայրը» և այլն, որոնց թերթը թատերախոսականներ է նվիրել: Թատերախոսականներ կան նաև Պենլյան օպերետային խմբի մասին, որի հաջողությունները կապակցվում են երաժշտական ինքնատիպ կատարման հետ: Այս խումբը ներկայացրել է. ի թիվս այլոց, Տ. Զուհաճյանի «Լեբլեբիջի Հորհոր աղան» որի մասին դրվատական գրախոսական է դրել Հ. Ասպետը (1921, 2 նոյ.):

[1] ԳԱԹ, Ա. Չոպանյան ֆ., № 7996-Ի:

«Վերջին լուրը» լուրջ ուշադրություն է դարձնում թեմատրությունների ոչ միայն արվեստին, այլև գաղափարական համոզչությանը: Ե. Օտյանը քննադատում էր Հայ դրամատիկ խմբի կատարմամբ Լևոյի «Վարդանանք» պիեսը՝ դրանում ինտրիգի և կենդանության բացակայության, այլև այն նկատառումով, որ հեղինակը ձգտել է Վասակին արդարացնել՝ «անոր ընթացքը իբրև քաղաքական ճարտարամտություն հրամցնել» (1921, 11 մրտ.): Թերթի գրախոսները ավելի շատ ուշադրություն են դարձնում ինքնուրույն խաղացանկին, որ նրանք համարում են Կ. Պոլսում ազգային թատրոնի վերածնության դրսևորում: Իր «Իրիկուան տոմսակ»-ներում գրախոսականներով հաճախ հանդես եկող Ե. Օտյանը ամեն կերպ քաջալերում էր Հայ դրամատիկ ընկերությանը, որը գործում էր 1918-ից ի վեր:

1921–1922 թթ. Կ. Պոլսում գործում էին կանանց մի քանի ընկերություններ՝ «Դպրոցասէր տիկնանց ընկերությունը», «Հայ կանանց ընկերակցությունը» «Սկյուտարի տիկնանց ընկերակցությունը», «Հայ կիներու լիկան» և այլն: Այս ընկերությունները հիմնականում գբաղվում էին որբերի խնամքով և ուսուցման խնդիրներով, մասամբ՝ մշակութային գործունեությամբ: Գործում էին մասնագիտական ընկերություններ՝ «Հայ բժշկական միությունը», իրավաբանների միությունը և այլն, որոնք օգնություն էին ցուցաբերում գաղթականներին ու որբերին: Սամաթիայի «Ժողովուրդ» միությունը ևս դասախոսություններ էր կազմակերպում առողջապահական թեմաներով: Գաղաքում հանդրվանած գաղթականների օթևանի և ապրուստի խնդիրները թեթևացնելուն էին հետամուտ պինադարձից հետո կազմակերպված հայրենակցական միությունները՝ իրենց կենտրոնական վարչությամբ: Ըստ թերթի մի տեղեկության, 1921 թ. գարնանը պետք է վերակազմվեին Մարզվանի, Ամասիայի, Վասպուրականի, Սեբաստիայի, Օրդուի, Սղերդի, Կեսարիայի և այլ հայրենակցական միությունները: Նախատեսվում էր կազմակերպել նոր հայրենակցական միություններ (1921, 17 մրտ.): «Վերջին լուրը» տեղեկացնում էր նաև կովկասա-

հայերի և ռուսահայերի միության մասին, որոնց նպատակն էր պաշտպանել Կ. Պոլսում գտնվող հայրենակիցների իրավունքները և, ինչպես այս բնույթի մյուս միություննները, կապ հաստատել աստանդական հայերի ու նրանց հարազատների միջև: Այս միությունն ուներ իր առանձին գործադիր մարմինը (1921, 9 դկտ.):

Պոլսահայ այս ընկերությունները, բնականաբար, հավասարապես ուժով և նպատակասլացությամբ չէին կարող գործել, հաճախ դրանցում կարևորը անհատական նախաձեռնությունն էր՝ կախված այս կամ այն անձի կարողություններից կամ գործունակությունից, որ տևականություն չէր կարող ապահովել: Ազդեցիկ ընկերությունները, սակայն, սատարվելով պոլսահայ հանրության կողմից, զգալի օգնություն ցուցաբերեցին հատկապես որբախնամ գործունեության, դպրոցական գործին նյութական աջակցության, մշակութային կյանքի աշխուժացման ասպարեզներում:

*
* *

«Վերջին լուրը» հուզող մշտական թեմաներից մեկը Խորհրդային Հայաստանի և դրա հետ կապված՝ Խորհրդային Ռուսաստանի իրականությունն էր:

Խորհրդային Հայաստանի նկատմամբ «Վերջին լուրի» (և ոչ միայն նրա) համակրական վերաբերմունքի ձևավորմանը զգալիորեն պետք է նպաստեր Հայաստանից եկած պատվիրակությունների այցը Կ. Պոլիս: Նկատի ունենք Ա. Կարինյանի, այնուհետև Հովհ. Թումանյանի նախագահությամբ գործող ՀՕԿ-ի (Հայ օգնության կոմիտե) պատվիրակությունները, որոնք Կ. Պոլիս եկան 1921 թ. աշնանը: Պատվիրակությունների առջև խնդիր էր դրված ապահովել սփյուռքահայերի նյութական աջակցությունը Խորհրդային Հայաստանին, ինչպես և մշակութային կապեր ստեղծել նրանց միջև: Թերթը բավական տեղ է հատկացրել Ա. Կարինյանի գլխավորած պատվիրակության (որի կազմի մեջ էին Հայաստանի առևտրական ներկայացուցիչ Դ. Շահվերդյանը և Հայկոոպի նա-

խոգահ Ս. Փիրումյանը) առաքելության նպատակների լուսաբանմանը՝ սկսյուռքից, այդ թվում և Կ. Պոլսի համայնքից ակնկալվող օգնությանը՝ Հայաստանում ներդրումների, ազդաբնակչության տնտեսական կարիքների բարելավման և այլնի հարցում: Ա. Կարինյանը հատկապես ուշադրություն էր հրավիրում հատկապես Ալեքսանդրապոլում, Ղարաքիլիսայում և Շամշադնում գաղթականության ծանր վիճակի և նրանց օգնություն ցուցաբերելու հարցի վրա, որով, սակայն, խնդիրը դեռևս չէր սպառվում: Սպասվում էր Պարսկաստանից՝ Սալմաստից և Խոյից, ինչպես և 9 հազար հայերի գաղթը Մերձավոր Արևելքից (19, 22 հկտ.): Պատվիրակությունն ամրապնդում էր Հայրենիքի սովյալներին օգնելու՝ պոլսահայության գործնականությունը, որ դրանից առաջ ձեռնարկել էին պատրիարքությունը և անգամ տաերեայնորեն՝ առանձին կազմակերպություններ: Իր հուշերում Հ. Սիլունին գրում է, որ նշված պատվիրակությունների այցից շուրջ մեկ տարի առաջ, 1920 թ. հոկտեմբերին Կ. Պոլսում կազմվել էր Հայրենիքի օգնության մարմինը (ՀՕՄ)՝ միավորելով 43 միություններին, որոնք գործնական հենքի վրա էին դրել Հայաստանին նյութապես սատարելու գործը[1]: Իր հրապարակումներով թևրիզը ստեղծում էր համապատասխան հասարակական կարծիք՝ հօգուտ Խորհրդային Հայաստանի և նրա կարիքավոր ժողովրդի: Ա. Կարինյանի պատվիրակության կողքին պոլսահայ մտավորականությանը հանրածանոթ ՀՕԿ-ի ականավոր նախագահը առավել քան լայն գործունեություն ծավալեց պրականության և արվեստի ոլորտում հայրենի և պոլսահայ գործիչների մերձեցման, ընդհուպ մինչև կազմակերպական համագործակցության հասնելու խնդիրը:

Հովհ. Թումանյանին հաջողվեց իր անձնական հմայքի և մարդկանց համոզելու բացառիկ ջանքերի շնորհիվ, գլուխ բերել պոլսահայ ստեղծագործ մտավորականությանը միավորող և ինքնուրույն «Հայ արվեստի տունը», որը սկսեց գործել 1921 թ.

---

[1] Թումանյանը և հայոց պատմական ճակատագիրը, էջ 24-247:

դեկտեմբերին, երբ բանաստեղծն արդեն մեկնել էր Կ. Պոլսից[1]: Թեև որքան դժվար էր կազմակերպական միաձնուԹյուն ստեղծել պոլսահայ տարընԹաց և տարամիտող, այս կամ այն կուսակցուԹյունների հակասուԹյունները անձնական դործնկակերպի վերածած գրողների և առհասարակ արվեստի մարդկանց շրջանում, վկայում էր այն թերահավատուԹյունը, որ հայտնեց «Վերջին լուրի» խմբագիրներից մեկը՝ Հ. Տեր-Հակոբյանը. «Այս վերջին երեք տարուայ ընԹացքին, բացի մասնակի միուԹիւններէ, որոնք մեկ օրը կը ծնին յաջորդ օրը մեռնելու համար, ձախողուԹիւնները եղան մտաւորականներու, հայ խմբագիրներու և հայ Թատրոնի միուԹյան ձեռնարկները»,- գրում էր նա (1921, 19 դկտ.):

Առաջ ընկնելով ասենք, որ պոլսահայ մտավորականուԹյան հետագա տարամիտումներին՝ արդեն Արվեստի տան կազմակերպումից հետո, հիանալի ծաղրով անդրադարձավ Ե. Օտյանը «Վերջին լուրում» տպագրած իր «Իրիկուան տոմսակ»-ներից մեկում: «Հայարվեստի տան» վարչական ժողովի անդամները, որոնք հավաքվել են ռուսական ռեստորանում՝ քննարկելու իրենց գործերը և մի լավ խնջույք անելու, այդպես էլ չեն հասկանում միմյանց և հեռանում են՝ հավանաբար չվոխմտնելի պատճառով պակաս վճարելով սահմանված գումարից: Հաշվի մեծ մասը վճարում է բանաստեղծ Ե. Գոլանճյանը՝ նեղսրտած իր բաժակակիցների վրա. «Գոլանճեան կայր անմխիթար՝ ընդ չու 260 դահեկանաց», եզրափակում է Օտյանը («Թէ ինչպէս պ. Եդ. Գոլանճեան հիմնեց արուեստի տունը», 1921, 27 դկտ.):

Խորհրդային Հայաստանի կառավարուԹյան հանդեպ ինչ-ինչ վերապահումներով հանդերձ՝ «Վերջին լուրը» ողջունեց Թումանյանի առաքելուԹյունը. «Թէեւ մենք գիտէինք, Թէ Արարատի ստորոտէն եկած այս առաջարկը (արվեստի տուն ստեղծելու վերաբերյալ – Ա. Խ.) իր մէջ բրօքականտի դիծ մը կը պահէր և Հայաստանի այսօրուան խորհրդային վարիչները առով կը սիրէին ձեռք բերել

[1] Նույն տեղում, էջ 255:

պաղտնելու հայ մտաւորականութեան համակրանքը դնպի իրենց դործը և սակայն ձեռնարկը բարի է և արժանի քաջալերութեան» (ն. տ.):

Հովհ. Թումանեանն այցելեց «Վերջին լուր», «Ճակատամարտ», «Հայ կին», «Երկիր» և այլ պարբերականների խմբագրութիւնները՝ դրանց նվիրելով իր քառյակները, իսկ «Վերջին լուրին»՝ իր ինքնագիր քառյակով լուսանկարը[1]: Իրենց հերթին պոլսահայ պարբերականները բազմաթիվ նյութեր տպագրեցին Թումանյանի և նրա ստեղծագործության վերաբերյալ: «Հայ կինը» տպագրեց Լ. Էսաճանյանի չատ ուշագրավ՝ «Բանաստեղծ «Հովհաննես Թումանյան» հոդվածը՝ առանձնացնելով «Փարվանա» պոեմի դասական և իրապաշտ արվեստի նկարագիրը[2]: Մեծ բանաստեղծը նդաւ կեդրոնական, «Դպրոցասեր տիկնանց» որբանոցներում և ազդային այլ հաստատութիւններում իր հերթին ծանոթանալով պոլսահայ իրականության բազմաթիվ դժվարութիւններին:

Հովհ. Թումանյանի այցը ունեցավ որոշակի արդյունքներ, որպիսիք էին կապերի ամրապնդումը հայրենիքի և համայնքի միջև, պոլսահայ մտավորականության տարանջատ վիճակի եթե ոչ լրիվ վերացումը, ապա նվազադույնի հասնելը՝ հայրենիքի վերածնութեան միավորող դաղափարի հիման վրա:

Նկատենք, որ այդ անկախ օրաթերթը, ունենալով չնչուած հակադաշնակցական ուղղութիւն, ըստ հարկին հակադրվել է Առաջին Հանրապետութեանը՝ ՀՅԴ հանդեպ ունեցած վերաբերմունքը տարածելով նաև նրա վրա: Թերթի գործիչները հատկապես երկու բան չէին ներում այդ կուսակցութեանը՝ նրան մեղադրելով, նախ, 1919-ին «ազատ, անկախ և միացյալ Հայաստան» հռչակելու, և դրանով իսկ, իրենց կարծիքով, արևմտահայ դատից Եվրոպայի ու ԱՄՆ-ի ուշադրութիւնը չեղելու համար: Եվ երկրորդ՝ Արևելյան Հայաստանի չրջանները թուրքերին թողնելու հարցում: Ընդ

[1] Նույն տեղում, էջ 249:
[2] «Հայ կին», 1921, 8 նոյեմբեր:

որում, ՀՅԴ հանդեպ իր հակակրանքի մեջ թերթն այնքան առաջ էր գնում, որ Թուրքական ազրեսիվ գործողություններն անտեսելով, ամեն ինչի մեջ տեսնում էր այդ կուսակցության սխալ քաղաքականության հետևանքները: Եթե հանրապետության վարիչները հարևան մեծուփոքր ազգերի հետ բարեկամության դիրքորոշումը «որդեգրած ըլլային կանուխէն, այսօր Հայաստան ոչ թէ պզտիկ-ցած, այլ մեծցած պիտի ըլլար Թուրքելու իսկ համաձայնութեամբը»,- գրում էր «Վերջին լուրը» (1923, 1 հնվ.):

Նույն կերպ, թերթը քննադատական հախուռն կրքով էր դնահատում 1921 թ. փետրվարյան ասլստամբությունը (որ դլխավորել էին դաշնակցականները)՝ այն համարելով այդ կուսակցության կողմից մենիշխանությունը վերականգնելու առիթ (1921, 28 մրտ.): Ավելին, ըստ Հ. Տեր-Հակոբյանի, փետրվարյան հուդումները խանդարեցին հայ բոլշևիկներին այն բանում, որ նրանք կարողանան բարենպաստ պայմաններ ստեղծել Հայաստանի համար՝ այդ դեպքերին համաժամանակ ընթացող խորհրդային-թուրքական մոսկովյան բանակցություններում. «Անկասկած է, որ եթէ ոչ Կարսը ամբողջովին, դէթ մասամբ, ինչպէս նաև Նախիջևանի և այլ կողմերէն աւելի հող ու շահ պիտի կրնար ձեռք ձգել Հայաստան»,- գրում է նա (1921, 6 հնս.): Այս հնդինակն անդիտանում էր, որ խորհրդային-քեմալական հարաբերությունները շատ ավելի վիթխարի շահավիղների քաղաքականության հետ էին կապված, քան դրա վրա ազդելու համար ոչ էական՝ Հայաստանում ներքին իշխանափոխության խնդիրն էր 1921 թ. փետրվարին: Նկատենք, սակայն, որ այս մտայնությունը Հ. Տեր-Հակոբյանին էր փոխանցվել Ա. Մյասնիկյանի՝ խորհրդային Հայաստանի նոր կառավարության նախագահի այն ձևակերպումից, որ համակրանքով մեջբերում է թերթը. Թուրքերի հետ, հայտնել էր նա, նկատի առնելով 1921 թ. մարտի 16-ի պայմանագիրը, «ավելի հաջող դաշինք կարող էինք կապել: Բայց չարագործները խանգարեցին: Եթե չըլլար դաշնակցութեան վերջին արկածախնդրութիւնը, մենք այժմ ավելի լայն սահմաններ կունենայինք» (1921, 13 հնս.):

«Թշնամական իմպերիալիզմի» դիրքերն արևելքում թուլացնելու, համաշխարհային հեղափոխության հեռանկարից դևռևս չուշաբերված բոլշևիկյան ռազմավարությունը, ինչպես հայտնի է, այդ հեռանկարին էր ծառայեցնում քեմալական Թուրքիայի ենթադրյալ բարեկամությունը: Կար նաև իրական մերձեցման հիմքը՝ Արևմուտքի կողմից Թուրքիայի ամբողջականությանը սպառնացող Սևրի դաշնագիրը, որը թեև ղուտ թղթի վրա, այսուհանդերձ վտանգ էր ներշնչում թուրքերին՝ քաղաքական անսպասելի զարգացումների դնդքում, ճիշտ այնպես, ինչպես Մոսկվային, որը Սևրի մեջ տեսնում էր աշխարհի վերաբաժանման իմպերիալիստական ձգտումների եթե ոչ իրավական, ապա քաղաքական վավերացումը: Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի պայմանագիրը, ինչպես և դրան նախորդող՝ 1920 թ. հուլիս-օգոստոսի մոսկովյան կոնֆերանսը արտացոլում էր խորհրդային կողմի՝ քեմալականներին սատարելու իրողությունը՝ վերջիններիս և Արևմուտքի դիմակայության ասպարեզում: Անդրկովկասյան հանրապետությունների, հատկապես Հայաստանի հաշվին տարածական զիջումներ անելով Թուրքիային՝ Ռուսաստանը, ինչպես տեսանք, վող, զենք ու զինամթերք էր տրամադրում Թուրքիային՝ փաստորեն հօգուտ նրա արագացնելով ռազմական գործողությունների ընթացքը Հունաստանի դեմ մղվող պատերազմում: Ուշագրավ է սակայն, որ «Վերջին լուրը» կարսի մարզը և կից տարածքները Թուրքիային հանձնելը բացատրում է ոչ թե վերոհիշյալ, այլ դրան նախորդած՝ Ալեքսանդրապոլի պայմանագրով (1920, դեկտեմբերի 2), որ կնքել էր Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը և որը իր ազդեցությունը չէր կարող չթողնել Մոսկովյան պայմանագրի վրա: Առհասարակ «Վերջին լուրը» միանշանակ վերաբերմունք չունի Խորհրդային Հայաստանի հանդեպ: Մերժելով բոլշևիկյան դաղափարախոսությունը, թերթը, սակայն, կարողանում էր հաճախ հաղթահարել իր հակակրանքները՝ ելնելով Խորհրդային Հայաստանի ժողովրդի դժվարին տնտեսական կացությունից: Դրանով «Վերջին լուրն» ընդառաջում էր Խորհրդային Հայաստանի ժողովրդի հանդեպ պոլ-

սահայ համայնքի եղբայրական դպացումներին: Կաթողիկոս Գ-Լևորգ Ե-ին ուղղված մի դրության մեջ (սեպտեմբերի 29, 1921) հայտնվում էր, որ Կ. Պոլսում կազմվել է մասնավոր հանձնաժողով՝ երկրի սովյալ ժողովրդին օգնելու նպատակով, որի համար հայցվում է իր՝ կաթողիկոսի հովանավորությունը: Նույն թվականի հոկտեմբերի 14-ին կաթողիկոսը տվել էր իր համաձայնությունը[1]: Թերթի հրապարակախոսները կոչ են անում «վստահութեամբ նայիլ ներկայ կառավարութեան՝ ինչ որ ալ ըլլան իր դաւանանքները... այժ տալ անոր, նիւթական ու բարոյական ամէն աջակցութիւն կարելիութեան սահմանին մէջ ընելու» (1921, 2 Հնս.): Հետաքրքիր է, որ դիմաշրջվելով բոլշևիկյան գաղափարներից, թերթը, այսուհանդերձ, ապավինում էր ռուս ժողովրդի ազգային արժեքներին, նրա պարտաճանաչությանը, ինքնօգնության բնական զգացումին, դրվատում ընտանիքում ռուս կնոջ իրավահավասարությունը տղամարդուն և այլն: Խորհրդային Հայաստանի հանդեպ իր ընթերցողի հետաքրքրությունը բավարարելու համար 1921 թ. «Վերջին լուրը» արտատպումներ էր անում Թիֆլիսի կոմունիստական «Կարմիր աստղ» թերթից, ընդարձակ տեղեկատվություն տալիս Խորհրդային Ռուսաստանի մասին: Թերթը տպագրեց Խ. Խորունիի «Կեանքը Խորհրդային Ռուսիայի մէջ» խորագրով հոդվածաշարը, որտեղ առանձնացվում են բոլշևիկների հաղթանակները Կոլչակի, Յուդենիչի, Վրանգելի, Դենիկինի և այոց դեմ, ինչպես և այդ երկրի հեղինակության դործոնը միջազգային հարաբերություններում: Խ. Խորունիի հոդվածաշարը, անկախ հեղինակի որոշ էկղոտիկ ծայրահեղություններից, հիմնականում ճշմարտացի է վերարտադրում Խորհրդային Ռուսաստանի ներքին քաղաքականության ընթացքը, երկրի դժվարին առօրյան, իշխանությունների կազմակերպական ունակությունները և այլն: Այս հոդվածաշարն ունի ճանաչողական ակնառու արժեք և Ռուսաստանի իրականության իր բացահայտումներով նպաստել է այդ երկրի մասին իրատեսա-

[1] ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 308:

կան պատկերացման ձևավորմանը պոլսահայ հանրության մեջ: Այս տեսակետից ուշագրավ է, որ ՆԷՊ-ին անցնելու բոլշևիկյան քաղաքականությունը Հ. Հակոբյանը դնահատում է ոչ թե որպես նահանջ կոմունիզմից, այլ սոսկ ժամանակավորապես վերադարձ՝ «ընկերվարական բարեշրջական վարդապետութեանը»: Ռուսաստանի տնտեսական զարգացման նույն այդ նպատակով, նկատում է նա, Լենինը տրամադիր է «առանձնաշնորհումներ տալ օտար դրամագլուխներու»՝ երկրում արմատավորելու պետական կապիտալիզմը (1921, 14 հնս.): Ընդհանուր առմամբ «Վերջին լուրը» ճիշտ է պատկերացնում Ռուսաստանում ընթացող տնտեսական տեղաշարժերը: Սրան թերթը միացնում է Ռուսաստանի և Թուրքիայի համագործակցությունը: Այս վերջինը հաճախ ցույց է տրվում դործողության մեջ, ինչպես և այն, որ Ռուսաստանը Քեմալին նյութական և բարոյական աջակցություն է ցուցաբերում: Այսպես, թերթը հայտնում է, որ Նովոռոսիյսկից դեպի Տրապիզոն, Սամսուն և Իննեբոլու (Կաստամոնու) են լողում զինքով ու զինամթերքով բեռնված նավեր: Նովոռոսիյսկում գործում է առաքման քեմալական հանձնաժողովը՝ բինբաշի Վելի բեյի գլխավորությամբ (1921, 13 հնս.): Ըստ էության, թերթը հաղթահարում է իր դժգոհությունը այս ամենից, երբ ևզրակացնում է, որ «Խորհրդային Հայաստան պէտք է միշտ կրճնի Մոսկուայի և բարեկամ մնայ էնկլուրիի: Ահա իրական քաղաքականութիւնը» (1923, 1 հնվ.): Թերթը դեռևս հույսեր էր փայփայում Թուրքիայի տարածքներում ազգային տուն հիմնելու իր պատկերացումներում՝ ակնկալելով և մեկի, և մյուսի բարյացակամությունն այս հարցում:

Արժեքավոր են նաև «Վերջին լուրի» հրապարակումները Հյուսիսային Կովկասում ապաստանած արևմտահայ գաղթականների վերաբերյալ: Այստեղ տնտեսական ծանր կացության մեջ էին Սեբաստիայի ու Խարբերդի գաղթականները, որոնց հանդեպ անտարբեր վերաբերմունք ունեին տեղացի հայ մեծահարուստները: Մեզ արդեն ծանոթ Խ. Խորունին նշում էր, որ համեմատաբար տանելի վիճակում են Պյատիգորսկի և Վլադիկավկազի շրջաններում

տեղավորված հայերը (1921, 26 մյս.), որ նա բացատրում էր տնտեսական իրողություններով:

1921 թ. երկրորդ կեսին, կապված Զանգեզուրի դեմ ուղղված բոլշևիկյան ուժային քաղաքականության հետ, «Վերջին լուրը» փոխում է իր բարեմիտ վերաբերմունքը Խորհրդային Հայաստանի հանդեպ: Ավելին, ելնելով Ռուսաստանի տնտեսական ծանր կացությունից, թերթն ակնկալում էր բոլշևիկյան վարչակարգի մոտալուտ տապալումը, իբրև փաստարկ վկայակոչելով նաև կոմկուսի երկու թևերի (Լենին, Տրոցկի) ներհակությունները: ՆԷՊ-ը արդեն դիտվում է որպես սոցիալիստական կարգերի քայքայման դրսևորում: Թերթը ռուս սովյալների նպաստամատույցի (Ֆ. Նանսենի գլխավորությամբ) տեղեկագրից արտատպեց «Անդրկովկասի սովահար կացությունը» հատվածը (1922, 1 մրտ.): Այստեղ նշվում է, որ եթե անմիջապես նպաստ չհասցվի, ապա Վրաստանում սովին զոհ կգնան 60 հազար, իսկ Հայաստանում՝ 150 հազար մարդ:

Սովի պատճառների սթափ վերլուծությամբ հանդես եկավ Բ. Քնչյանը՝ «Արևելեան հայութիւնը» հոդվածով (1922, 18 մրտ.): Այս հրապարակախոսը կոչ էր անում օգնություն ցուցաբերել Խորհրդային Հայաստանի սովահար բնակչությանը՝ ամենից առաջ աշխատատեղեր ստեղծելու միջոցով: Տնտեսագիտությանը խորապես իրազեկ այս մտավորականը այդ սովի պատճառներն էր համարում բոլշևիկյան ծայրահեղ սոցիալիստական մեթոդները, որոնք հասցրել էին գյուղատնտեսության և արդյունաբերության քայքայմանը, բնակչության ունեցվածքի անողորմ կողոպուտը և առհասարակ բռնագրավումների ամայացնող քաղաքականությունը: 1922–1923 թթ. «Վերջին լուրը», ինչպես և արևմտյան երկրների հասարակական կարծիքը, ապաստղական դիրք էր բռնել Խորհրդային տնտեսության և կարգերի մոտալուտ փլուզման առջև: Այս ոգով են համակված նրա հրապարակախոսական մյուս անդրադարձներն ու հրապարակումները, որպիսիք առհասարակ զգացնել են տալիս Բ. Քնչյանի տնտեսագիտական հայացքների ազդեցությունը:

«Վերջին լուրի» էջերում բավական լայն քննարկումների առարկա են դարձել Կ. Պոլսի կրթական-դպրոցական հիմնահարցերը: Հիմնականում ուշադրություն է դարձվում բարոյական և ֆիզիկական դաստիարակության խնդիրներին, դպրոցական կառավարմանը, կրթական ծրագրերին և մանկավարժական կադրերի որակավարման բարձրացմանը: Դրանց առաջադրման և արծարծումների մեջ անխուսափելիորեն զգացնել է տալիս ցեղասպանության հետևանքների դիտակցումը: Նախ, դրա առաջացրած բարդույթը՝ հոգևոր ու բարոյական ավերումների հետևանքները նոր բարձրացող սերնդի ներաշխարհում: Հովհ. Ասպետն առաջարկում էր առավել ուշադրություն դարձնել «տղոց նկարագրի դաստիարակութենան, բարոյական առողջապահութեան» խնդրին, որի լուծողը դպրոցն ու ուսուցիչներն են լինելու (1921, 8 հնս.): Նա հատկապես կարևորում է կարգապահության դործոնը, անգամ ռազմական կարգապահության չափ՝ որոշակի և նպատակասլաց: Այս հարցն է քննարկում նաև Ռոզմերին, որը դպրոցի առջև դնում էր գաղթօջախի հետագա կենսագործունեությունն ապահովող հիմնահարցերի լուծումը՝ դրանց բարոյական, նյութական և իմացական հնարավորությունների ընդլայնումով (1921, 20 հնս.): Նրա հետագա առաջարկները՝ կրթական նոր ծրագրերի մշակում, ուսուցչական ընդհանուր ժողովների դումարում, ուսուցիչների վարձաքննություն, մանկավարժական հանդեսի հրատարակում և այլն, հետամտում էին պոլսահայ դպրոցի վերածնունդն ու արդիականացումը (1922, 17 մրտ.):

Թևրթի հեղինակները հատկապես ուշադրություն են դարձնում կեդրոնական վարժարանին՝ երբեմնի հեղինակավոր այդ դպրոցին, քննադատության թիրախ դարձնելով դրա ուսումնակրթական հիմքերը: Ե. Օտյանը ծանակում է կեդրոնականի բարքերը, ուսուցչական թուլլ կազմը (1921, 8 մրտ.): 1921 թ. այդ վարժարանն ուներ 310 աշակերտ՝ 35 ուսուցիչներով, և այս վերջիններիս մեջ քիչ չեն այնպիսիք, որոնց անձեռնհասության պատճառով վարժարանը «խիստ ողբալի վիճակի մը մէջ կը գտնուի» (1921, 19 մյս.):

Իր հերթին, Հովհ. Ասպետը բացահայտում էր վարժարանի ծրագրի միակողմանի, տեխնիկական հակվածությունը («աւելի մղում տուած է չափագիտական ուսումներու»): Այս առթիվ նա հիշում է կեդրոնականի երբևմնի տնօրէններ Զերագին, Մոստիչյանին, Պերպերյանին ու Զաքարյանին, որոնք կարևորում էին հումանիտար և բարոյական դաստիարակության խնդիրները և որոնք այժմ տեղի են տվել վարժարանում տեսչի աթոռը զբաղեցնելուն հետամուտ՝ կուսակցական նեղմտությանը (1921, 1 հնս.): Թերթի մեկ այլ հեղինակ՝ Խ. Գաբրիկյանը, հանգամանորեն քննում էր կեդրոնական վարժարանի ծրագիրը, դրա ոչ համամասնությունը առարկաների ընտրության, ուսուցման ծավալների ոչ նպատակահարմարության և այլ հարցերում: Հանրակրթական դպրոցի և իրականության պահանջները, նկատում էր նա, հակասում են միմյանց, իսկ ֆրանսիական ծրագրի հապճեպ ընդօրինակումը խանգարում է վարժարանի առջև դրված խնդիրների իրականացմանը (1921, 1 հլս.):

Թերթը քննարկման լայն ասպարեզ է տալիս պոլսահայ դպրոցներում ֆիզիկական դաստիարակության և առողջապահության խնդիրներին. հետաքրքիր է, որ նրա հեղինակներից Ա. Ճեպնեին վերջինիս բարելավումն առնչում էր հասարակական կարծիքի մշակմանը (1921, 13 սպտ.): Իսկ առհասարակ պոլսահայ դանդաղ ուշաբերվող վարժարանների կողքին «վերջին լուրն» առանձնացնում էր Պերպերյան նշանավոր վարժարանը (հիմնվել է 1886 թ.)՝ դրվատելով նրա պահպանած ավանդույթները: Մ. Շամտանճյանը դրանց էր միացնում վարժարանի սկաուտական կազմակերպության գործունեությունը՝ ի հաստատումն արդիական ֆիզիկական և բարոյական դաստիարակության միասնականության սկզբունքի: Այս հեղինակը, ի դեպ, ընթերցողին տեղեկացնում է, որ Ռ.Պերպերյանի մահվանից հետո (1907) այս վարժարանը ղեկավարում էին նրա «արժանաւոր հարազատները»՝ Հ. և Շ. Պերպերյանները: 1922 թ. վարժարանն ուներ 250 աշակերտ, այլ թվում և գիշերօթիկ: Ուսուցանվում էին նաև գործնական հմտություններ՝ արհեստներ և երկրագործություն (1922, 18 մյս.): Մ.

Շամտանճյանն անդրադառնում է նաև մյուս հուսադրող վարժարաններին՝ Պեշիկթաշի Մաքրուհյան երկսեռ դպրոցին (հիմնվել է 1868 թ.): 1922 թ. այս բարեկարգ վարժարանն ուներ 450 աշակերտ, որից 150-ը՝ ձրիավարժ (1922, 1 հնս.): Պերպերյան և Մաքրուհյան վարժարանները թերթը համարում է օրինակելի հաստատություններ, որոնց պետք է հետևեն պոլսահայ մյուս դպրոցները:

Դպրոցին և մանկավարժությանը նվիրված «Վերջին լուրի» հրապարակումները ցույց են տալիս, որ ցեղասպանությունից և առաջին աշխարհամարտից հետո պոլսահայ դպրոցներից շատերը, կորցնելով երիտթուրքերի հայասպան քաղաքականությանը զոհ գնացած իրենց մանկավարժներին, կորցրել էին նաև իրենց երբեմնի բարձր որակները: Այդ ի հայտ էր գալիս ուսուցչական կադրերի չգոյության և սրանից բխող՝ դպրոցական գործի կազմակերպական հիմքերի թուլացման պատճառով: Եվ մեկ, և մյուս դեպքերում թերթն ապավինում էր ազգային դպրոցի ավանդույթների վերածնությանը՝ ի դեմս այդ տարիներին սակավ բացառություններ կազմող և հույսեր ներշնչող մի քանի բարեկարգ վարժարանների:

*
* *

1921–1922 թթ. «Վերջին լուրը» գեղարվեստական գործեր քիչ է տպագրել: Նրա թերթոնի բաժնում, սակայն, գրական աչքի ընկնող երևույթ են Ե. Օտյանի «Կանանչ հովանոցով կինը կամ նոր խաչագողները (ժամանակակից պատմական վէպ)»-ը և դրան հաջորդած՝ նույն հեղինակի մյուս ծավալուն արձակ գործը՝ «Կավէ հերոսներ կամ մեր ազգայինճիները (արդիական մեծ վէպ պոլսահայ կյանքէ)» վերնագրով: Գեղարվեստական արժեք ունենն, անշուշտ, Ե. Օտյանի «Իրիկուան տոմսակ» խորագրի ներքո տպագրված անդրադարձները, որոնք մեծ մասամբ ունենալով քննադատական բնույթ, պատկանում են երգիծական քրոնիկի ժանրին և նշանավորում են այդ ժանրի զարգացման բարձրակետը արևմտահայ մամուլում՝ Հակոբ Պարոնյանից հետո: Այս խորագրով նյութե-

րում Օտյանն անդրադարձել է ամենատարբեր թեմաների՝ սկսած պոլսահայ կյանքի իրողություններից, կուսակցություններից, մշակութային ու բարեգործական ընկերություններից և Թուրքիայի տնտեսական ու քաղաքական կացությունից և վերջացրած Հայկական հարցին, Խորհրդային Հայաստանին ու քաղաքական ամենատարբեր հարցերին վերաբերող դիտարկումներով: Երգիծաբանի քրոնիկները, սրա հետ միասին, ունեն հրատապ նշանակություն և զգայուն արձագանքն են այն երևույթների, որոնք հուզում էին «Վերջին լուրի» ընթերցողներին: Ավելին, 1921–1922 թթ. տպագրվելով թերթի գրեթե յուրաքանչյուր համարում, Օտյանի այս քրոնիկները հանդես են գալիս որպես թերթի՝ օրվա առաջատար թեմայի յուրօրինակ լրատվական ու գեղարվեստական արձագանք: Նշված խորագրով նյութերը Օտյանը տպագրել է ամբողջ 1921 թ. ընթացքում և շարունակել մինչև 1922 թ. սեպտեմբերի 25-ը: Իսկ նույն թվականի հոկտեմբերի 16-ից «Վերջին լուրում» հայտնվում է երգիծական նույն բնույթի նյութեր ընդգրկող խորագիր՝ «Օրուան խօսքեր»-ը՝ «Կարմիր աքլոր» ստորագրությամբ (մինչև 1922 թ. նոյեմբերի 25-ը): Պետք է կարծել, որ «Օրուան խօսքերը» ևս (անստորագիր) պատկանում են Օտյանի գրչին. նույնն են մնում «Իրիկուան տոմսակի» և թեմաները, և երգիծական բարձրարվեստ ոճը, որպիսիք կարող էր չրջանառության մեջ դնել միայն Օտյանի նման երգիծանքի վարպետը: 1922 թ. դեկտեմբերի 24-ից «Վերջին լուրը» արդեն նոր խորագիր է հրամցնում՝ «Պուքրէչեան արձագանգ»-ը՝ «Երվանդ Օտյան» ստորագրությամբ:

«Վերջին լուրը» առանձնահատուկ արժեք ունի պոլսահայ գաղթօջախի պատմության էջերը բացահայտելու առաջարկում, որ չարունակվել է նրա հետագա հրատարակության ընթացքում՝ նաև 1930-ական թթ.: 1920-ականի սկզբներին թերթում այս թեմայով ուշագրավ աշխատություններ է տպագրել Հ. Մրմըրյանը: 1921 թ. մայիս-հունիս ամիսներին «Վերջին լուրն» իր թերթոնի բաժնում տպագրեց նրա «Հայք ի Կ. Պոլիս (պոլսահայ գաղութին պատմութիւնը 5-րդ դարէն 20-րդ դարը)» պատմական աշխատությունը,

որն ունի լայն և բազմակողմանի ընդգրկումներ՝ այդ գաղթօջախի ազգային հաստատությունների, եկեղեցու, աշխարհիկ և կրոնական գործիչների վերաբերյալ հագեցած տվյալներով: Հ. Մրմըրյանն իր շարադրանքը հասցրել է մինչև 1894–1896 թթ. հայկական կոտորածները: Դրան հետևեց այս հեղինակի մյուս աշխատությունը՝ «Վոսփորիկոն» վերնագրով, թերթի նույն թվականի հուլիսյան համարներում: Հաջորդ՝ 1922 թ. մարտից թերթը տպագրեց Մրմըրյանի մյուս աշխատությունը՝ «Արեւմտահայոց մէջ բողոքականութեան ծագումն ու պարագաները» վերնագրով: Նշված երեք գործերն էլ շարադրված են փաստական ամուր հենքի վրա և այսօր էլ պահպանել են իրենց տեղեկատվական ու հետազոտական նշանակությունը:

«ԱՐԱԳԱԾ» (1919–1920)

«Արագած» շաբաթաթերթը լույս էր տեսնում Կ. Պոլսում լրացնելով դինադադարից հետո օսմանյան մայրաքաղաքում մեկը մյուսից հետո հայտնված հայկական պարբերականների շարքը: Հրատարակվում էր «Ազգային ազատական կուսակցության» մեջ ընդգրկված վերակազմյալ հնչակյանների կողմից: Շաբաթաթերթի տնօրենը նախապես Գեղամն էր, այնուհետև, որպես տնր և տնօրեն, ստորագրել է Հ. Դարբինյանը, խմբագրապետն էր Վ. Շահրիմանը: Լույս տեսնելով 1919-ի հունվարի 26-ից, հրատարակվել է, հավանաբար, մինչև 1920 թ. հունվար: «Արագածը» տպագրել է «Ծրագիր ազգայնական ազատական կուսակցության» փաստաթուղթը՝ ժողովրդավարական բնույթի մի ծրագիր, որտեղ առանձնացված են այդ կուսակցության «քաղաքական, տնտեսական և քաղաքակրթական» սկզբունքները: Այստեղ ճանաչվում են միացյալ Հայաստանի ամբողջականությունը, հասարակության ապադասակարգային բնույթը, պետության հանրապետական ձևը, հասարակության և անհատների ժողովրդավարական ազատությունները և այլն (1919, թիվ 14, էջ 439–441): Շաբաթաթերթը նշում է, որ Ամերիկայի, Կ. Պոլսի և այլ վերակազմյալ հնչակյան շրջանակները ընդգրկում են «ազգայնական ու ազատական նպատակներ և ուղղութիւն մը», որի համաձայն պատրաստվել է նշված ծրագիրը: Առաջիկայում այն պետք է քննարկվեր կուսակցության ընդհանուր պատգամավորական ժողովում (ն. տ., էջ 441):

«Արագածին» աշխատակցում էին բավական կարող մտավորական ուժեր՝ Գր. Հ. Գալուստյանը, Հ. Պոնճուքյանը, Հ. Տեր-Սահակյանը, Ս. Եղբայրյանը, Ն. Պեշիկթաշլյանը, Բարունակ Ոսկին և ուրիշներ: «Մեր ազգայնականությունը» հոդվածում Վ. Շահրիմանը հայտնում էր, որ շաբաթաթերթի նպատակը «ազգին ինքնապահպանութիւնն ու վերաշինումն է», որին հասնելու համար պահանջվում է ազգային միասնություն (1919, թիվ 5, էջ 6–7): Խմբագիրը մեծագույն չարիք էր համարում ներազգային երկպառակությու-

ները, ժողովրդի անտարբերությունն իր ապագայի հանդեպ: Նույն ոգով «Արագածի» խմբագիրը քարոզում էր կուսակցությունների համերաշխություն և ողջունում էր Վերակազմյալ հնչակյանների ու ռամկավարների գործակցությունը Ադանայում՝ 1919 թ.(թիվ 14, էջ 20):

Փարիզի հաշտության վեհաժողովից առաջ և հետո Վ. Շահրիմանը եվրոպական տերություններից և ԱՄՆ-ից էր ակնկալում հայության անվտանգության նախադրյալները: Իր «Իթթիհատականները 1908-էն վերջը» հոդվածաշարում, որ տպագրվեց «Արագածի» 1919 թ. համարներում, Վ. Շահրիմանը իր ողջ հույսերն առնչում է Անգլիայի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Իտալիայի և Հունաստանի հայանպաստ դիրքի հետ, հայտնելով, որ նրանց «անկեղծութեանը վրայ տարակուսելու պատճառ մը չունինք» (1919, թիվ 8, էջ 119): Փարիզի հաշտության վեհաժողովը (1919 հունվ. 18 – 1920 հունվ. 21), որ մեկնարկել էր ամիսներ ի վեր, որևէ չոշափելի բան չէր արել (և չարից) այս հույսերի առարկայացման կամ իրական հիմքեր ստեղծելու համար: Իր ակնկալիքներում , սակայն, Վ. Շահրիմանը դրսևորում էր պոլսահայ (և ոչ միայն պոլսահայ) մտավորականության մեջ տիրապետող տրամադրությունները՝ անտեղյակ անդրկուլիսյան այն պայքարին, որ ծայր էր առել արևմտյան տերությունների միջև՝ հանուն սեփական շահերի: Մի հայտնի չափով այս տրամադրությունները սնուցվում էին արևմտյան հայանպաստ գործիչների սրտապնդիչ հլուլթներով, որոնք, ի դեպ, ոչ պակաս պատրանքային բնույթ ունեին, քան քաղաքական գործիչների հուսադրող դարձվածները՝ ուղղված ցեղասպանությունը վերապրած ժողովրդի բեկորներին: Ինչ ասել կուզի, «Արագածն» անվերապահորեն հավատում էր այս, մասամբ ևս քարոզչական բնույթի հավաստիացումներին: Միաժամանակ նա կարծում էր, որ իրենցից՝ հայերից է կախված «վտանգաւոր դրացնութիւններու» միջավայրում դոյատևելու հնարավորությունը (1919, թիվ 8, էջ 114–115): Խմբագրին խորապես հուզում էր այդ դոյատևման մի կարևոր նախապայմանը՝ ազգային համերաշխությունը: Փարիզի

հայկական պատվիրակությունների փոխհամաձայնեցված գործողություններին նախանձախնդիր «Արագածը» աշխուժորեն արձագանքեց Պողոս Նուպարի կոչին, որ նա ուղղել էր ամերիկահայերին և որը ստորագրել էր նաև Ավ. Ահարոնյանը: Կոչի հեղինակները հորդորում էին վերջ տալ երկպառակությունները և պահպանել ազգային միասնությունը: «Արագածն» այս առթիվ անդրադառնում էր պոլսահայ կյանքին հատկանշական դարձած ոչ պակաս հակառակություններին ու տարամիտումներին (1919, թիվ 28, էջ 357): Շաբաթաթերթը պաշտպանում էր հայերի «ճշմարիտ անկախության», իրենց հայրենիքում անկախ պետականություն ստեղծելու դաղափարը: «Արագածը» ազգի առաջնահերթ խնդիրներից էր համարում նրա մտավորականության համագործակցությունը, փորձում նրան սթափեցնել ցեղասպանության «կարմիր մղձաւանջից»: Վ. Շահրիմանը դատապետում էր «կրքի, քինախնդրութեան և ամուլ վէճերու մէջ» խրված մտավորականությանը, թաքնված բանավեճ մղում «Իդնաւո աղայի» և այլ հրատարակությունների դեմ, որոնք պայքարում են ազգային կուսակցությունների դեմ, մինչդեռ վերջիններիս դրոշի ներքո, նրա համոզումով, մարտնչում են «հազարաւոր հայ հայրենասէրներ» (1919, թիվ 15, էջ 201, 202): Շատ ուշագրավ մեկնաբանություններ էր տալիս Վ. Շահրիմանը Հայ հեղափոխական դաշնակցությունն - երիտթուրքեր հարաբերությունների՝ նկատի ունենալով 1908 թ. սահմանադրությունից անմիջապես առաջ և հետո ընկած ժամանակաշրջանը: Նրա կարծիքով, «անքաղաքագէտ եւ անխոհեմ» կլիներ, եթե հայերը մերժեին երիտթուրքական սահմանադրությունը, բայց և չպետք էր հավատալ երիտթուրքերի անկեղծությանը: Ազգի լայնախոհ ընթացքին, նրա կարծիքով, խանգարեցին քաղաքական մշակույթի պակասը, կուսակցական նեղմտությունն ու «հատուածական փոքրոգութիւնները» (1919, թիվ 14, էջ 20): Վ. Շահրիմանը չատ ավելի որոշակի է տեսնում 1914 թ. իթթիհատին զսպելու գործում թույլ տրված ճակատագրական սխալները, երբ կարելի էր, ըստ հնարավորին, ինչ-որ չափով կանխել մոտալուտ արհավիրքները: Հանրա-

դումարի բերելով այս չրջանում ազգի և նրա կուսակցությունների վիտխամտությունից ծնված սխալները, «Արագածի» խմբագիրը պնդում էր, որ «տարապայման յոյսերով ... եւ ինքնախաբեութեան արտակարգ հակումներով հանգիստ ու անվրդով ակնկալած ենք, որպէսզի ուրիշներ բերեն ու մեր բերանը դնեն մեր երազած բոլոր բարիքները... և որով յուսահատօրէն պատասխանատուներ միայն կորոնենք՝ առանց մեր իսկ պատասխանատուութեան բաժինը ճանչնալու» (ն. տ.):

Հետաքրքիր է չաւաթաթերթի վերաբերմունքը Հայաստանի Հանրապետության նկատմամբ: Մի տևական ժամանակ պարբերականը լռություն էր պահպանում՝ չրջանցելով այս թեման: Պատճառը, կարելի էր կարծել, նախ, Նուպար փաշայի և արևմտահայության մի ստվար մասի ակնկալիքներն էին Փարիզի հաշտության վեհաժողովից՝ Արևմտահայաստանում անկախ հայկական պետություն ստեղծելու հույսով: Արևելյան Հայաստանի տարածքում Հայաստանի Հանրապետության գոյությունը, մինչդեռ, այդ ակնկալիքներն ունեցողների կարծիքով, թուլացնում էին բնաշխարհի ընդարձակ տարածքներում ենթադրվող հայկական պետություն ստեղծելու հնարավորությունները և կուվանները[1]: Այնուհետև, «Արագածը» սկզբունքային առարկություններ ուներ ընկերվարների գաղափարախոսությանը, հակադրվելով հատկապես հայ ընկերվարներին, այդ թվում և դաշնակցությանը: «Ապագայ սերունդները պիտի զարմանան... պիտի սոսկան պարզապէս, երբ մեր յեղափոխական պատմութեան մէջ հանդիպին սա զժնդակ իրողութեան, թէ անոնք, որ այդ քաղաքականութեան վարիչները պիտի ըլլային, իրարու դէմ ելեր են եւ իրարու կը բզկտեն յանուն Քարլ Մարքսի, յանուն Պլէխանովի, յանուն Ժիլ Կէտի, յանուն Պէպելի՝ գիտակցութեան վհատեցուցիչ խաւարումով մը» (1919, թիվ 19, էջ 261),- գրում է «Արագածը»:

[1] Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, հ. 1, էջ 503, 517:

Հենց այս իմաստով էր առարկում «Արագածը» Դաշնակցության պաշտոնաթերթի «Ճակատամարտի» 1919 թ. հուլիս 5-ի թվահամարում տպագրված «Դրամագլուխ և աշխատանք» հոդվածի դրույթներին, որտեղ դուրս էր ցայտել ընկերվարական վարդեմի համակրանքը հայ աշխատավորության՝ «գիւղացի մշակին եւ բանուորին» հանդեպ: Սպանդի և անտանելի տառապանքների է ենթարկվել ողջ հայ ժողովուրդը, պնդում է շաբաթաթերթը, ուստի պետք է հոգալ նրա մասին՝ առանց սոցիալական որևէ նախապատվության (1919, թիվ 25, էջ 322): Համապատասխանաբար, իշխանությունը նույնպես պետք է պահպանի ամբողջ ժողովրդին և ոչ թե նրա այս կամ այն խավին կամ դասակարգին:

Ապագա (և ոչ ներկա) Հայաստանի վերաբերյալ «Արագածի» հույսերը ամրապնդվում էին անգլիացի հայտնի գործիչ Ջ. Բրայսի՝ Փարիզի վեհաժողովի նախաշեմին հուսադրող ելույթներով: Վ. Շահրիմանը թարգմանաբար տպագրից նրա «Հայաստանի ապագան» հոդվածը, որտեղ Բրայսը պնդում էր, որ թուրքական տիրապետությունը մեկընդմիշտ պետք է վերացվի այլակրոն ժողովուրդների վրայից և սահմանափակվի «Տաւրոս լեռներէն սնդին գտնուող արեւելեան երկրամասերու մէջ» (1919, թիվ 21, էջ 280): Այսուհանդերձ Ջ. Բրայսն առավել մտահոդված էր հայության ցիղասպանության ողջ մեղքը ոչ միայն թուրքերի, այլև Անատոլի երեկվա թշնամի Գերմանիայի վրա բարդելու խնդրով: Նա նույնպես պաշտպանում էր իր երկրի կառավարության ուղեգիծը՝ Հայաստանի խնամատարությունը (մանդատը) ԱՄՆ-ին հանձնելու հարցում (1919, թիվ 23, էջ 303–305):

Արևմտահայաստանի տարածքում անկախ ազգային պետություն ստեղծելու դաղափարը «Արագածը» հիմնավորում էր ազգային ազատագրական պայքարի, որպես ժողովրդի պատմական կամքի արտահայտության իրողությամբ և այս դիտանկյունով էս արժեքավորում ազգային հերոսներին: Հատկապես այս, ինչպես և ՀՅԴ ու Հայաստանի Հանրապետությանն ուղղված նրա առարկությունների տեսակետից ուշագրավ է Անդրանիկին տրված՝ «Արագածի» բա-

ցաւիլ բարձր գնահատականը: Անդրանիկը ազատագրական չարժման բաֆֆիական սերնդի չարունակողն է, ասւում է «Րաֆֆի և Անդրանիկ» հոդվածում, «գրական եւ յեղափոխական պատմութեան մէջ Րաֆֆին ու Անդրանիկը իրարու արժանի հայր ու որդի են նկրկայանում» (1919, թիվ 25, էջ 328):

Անդրանիկի կեանքի հերոսական դրվագներն են ցուցադրված Գ. Պետյանի «Հայ կամաւորական բանակը Կովկասի և Պարսկաստանի ճակատներուն վրայ» հուշերում, որ չարունակաբար տպագրեց «Արագածը» 1919 թ.: Նույն կերպ, Վ. Շահրիմանը դրվատում էր Անդրանիկի «Հայաստան» օրաթերթը՝ այն համարելով ազգային նպատակների ու դործողութեյան քարոզիչ, «հաւաքական համերաշխութեան մը, գործողութեան միաւորականութիւն մը» կազմակերպող դաղափարական ամբոխն: Շաբաթաթերթը մեջբերել է Անդրանիկի ազդը՝ «Հայաստանի» ուղղութեյան մասին, որտեղ նշվում է, որ օրաթերթը «բացառաբար նուիրուած է արեւմտահայ դաղթականական կարիքներուն» և որ այն իր ուժերին ներածին չափով «պիտի չանայ ընդառաջ երթալ արեւմուտքի հայերու ցաւերուն և դարմաններուն» (1919, թիվ 4, էջ 50): Ինքը՝ «Արագածը» ամբողջովին հետևում էր «Հայաստանի» ուղղութեյանը, երբ վկայակոչում էր Անդրանիկի ազդը՝ «թերթը կը մնայ բոլորովին անկուսակցական հողի վրայ՝ հետապնդելով վերաշինութեան սրբազան գործը» (ն. տ.):

«Արագածը» հավելում է, որ Արմավիրում մի հանգանակութեյամբ հավաքված 16.000 ռ. գումարը, որ տրամադրվել էր բացառապես Անդրանիկին՝ իր անձնական ծախսերի համար, վերջինս հատկացրել է «Հայաստան» թերթին և մյուս մասը՝ սասունցի գաղթականներին (ն. տ.):

Թաքցնելով իր սրտնեղութեյունը Երևանի կառավարութեյան կողմից Միացյալ Հայաստանի հռչակման առթիվ, «Արագածը» կարծում էր, որ առավել նպատակահարմար կլիներ կազմել Միացյալ Հայաստանի ժամանակավոր կառավարութեյուն՝ ընտրված Երևանի և Փարիզի հայկական պատվիրակութեյան (Պողոս Նուպա-

րի) կողմից: Այն պետք է դործներ, մինչև կորոշվեին Միացյալ Հայաստանի սահմանները, տարագրյալների վերադարձը, որին կհետևեր ազգի բնականոն կյանքի ընթացքը, ինչպես պատկերացնում էր «Արագածը»:

«Արագածը» դժկամությամբ էր ընդունել Հայաստանի Հանրապետության կողմից 1919 թ. մայիսի 28-ին հռչակած Միացյալ Հայաստանի անկախությունը[1], որով Հանրապետության խորհրդարանը հայտարարվում էր ողջ Հայաստանի բարձրագույն օրենսդիր և դործադիր իշխանություն: «Երևանի խորհրդարանի այս անակնկալ քայլը,- դրում էր չաբաթաթերթը,- կարելի է հարուցած մը նկատել՝ ուղղուած Բարիզի Հայկ. պատուիրակութենան, որ ցարդ կը դործեր յանուն ամբողջ Հայութենան եւ յանուն Միացեալ Հայաստանի» (1919, թիվ 23, էջ 308):

Արևմտահայության հայրենիքի տարածքը «Արագածը» համարում էր Արևմտահայաստանն ու Կիլիկիան, առանց որի «Միացյալ Հայաստանի» դաղափարը գրկվում էր իրական հողից և ստեղծում այդպիսի Հայաստանի երևութական պատկերը:

Ամերիկյան խնամատարության հիմնավորումն է տրված Հ. Գրիգորյանի «Հայաստանի հոգատարութիւնը» հոդվածում (1919, թիվ 31, էջ 397–399, թիվ 32, էջ 408–410): Ամերիկյան մանդատն այստեղ համարվում է Հայաստանի անկախության անհրաժեշտ դործոն, միակ ուղին, որով հնարավոր է իրագործել «հայկական իտէալը»: Իբրև դրա փաստարկ, հեղինակը վկայակոչում է ԱՄՆ-ում չուրջ 100.000-անոց հայկական համայնքը, ամերիկյան միսիոներների միջոցով հայ-ամերիկյան քաղաքակրթական կապերի առկայությունը և այլն:

«Արագածն» անդրադառնում էր ամերիկյան մանդատի հետ կապված կարևոր քաղաքական խնդիրներին, առարկում այն անհնարին համարող տեսակետներին: Շաբաթաթերթը հերքում էր Կ. Պոլիս եկած ԱՄՆ պատվիրակությանը քրդական կոմիտեի ներկա-

[1] Տես Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 505-510:

յայտած այն պնդումները, թե իսլամները բացարձակ մեծամասնություն են կազմում Թուրքիայի արևելյան նահանգներում, ուստի և, իբր, անկարելի է այնտեղ հայկական պետություն ստեղծել: «Արագածն» առաջարկում էր այս դեպքում հայերի թվաքանակը հաշվել 1913 թ.՝ նախապատերազմական վերջին շրջանի տվյալներով, ընդգծում էր նրանց քաղաքակրթիչ դերը, հայրենիք ունենալու իրավունքը և այլն (1919, թիվ 29, էջ 369)[1]:

«Արագածը» չէր թաքցնում իր մտահոգությունները հատկապես հայ բնակչության սոցիալական ծանր կացության, համաճարակների, պարենային դժվարությունների հանդեպ: Հատկանշական է, որ չաբաթաթերթն ուներ «Բժշկական» խորագիրը, որտեղ մեծ մասամբ հանդես էր գալիս Բարունակ Ոսկին: «Հայաստանի առողջապահական պահանջները», «Թոքախտ և անոր դէմ նախազդուշական միջոցներ», «Վէներախտը» (1919, թիվ 13, էջ 185–186, թիվ 16, էջ 220–221, թիվ 6, էջ 92–94) հոդվածները գործնական նշանակություն ունեին հայ բնակչության առողջապահական վիճակը բարելավելու և հիվանդությունները կանխելու տեսակետից:

Թուրքիայում ազգայնականության զորացումը «Արագածին» տագնապով էր համակում հատկապես Հայաստանի անկախության վերաբերյալ պատկերացումներում: Շաբաթաթերթն ընթերցողին հայտնում էր Քեմալի տենդագին պատրաստվածության, կողմնակիցների թիվը համալրելու և նրանց զինելու մասին: Հույժ կասկածելի էր, մասնավորապես թուրքական կառավարության ցուցադրական ու չինծու ճիգը՝ Քեմալի դեմ պայքարելու հարցում: Կառավարությունը, նկատում էր «Արագածը», հրաման է արձակել ձերբակալելու Քեմալին և նախկին ծովային նախարար Ռաուֆ բեյին, սակայն արդեն ամբողջ Ամասիայի շրջանը լեփ-լեցուն է Քեմալի

[1] Ըստ Կ. Պոլսի պատրիարքարանի 1913 թ. վիճակագրական տեղեկության, Արևմտահայաստանի վեց վիլայեթներում (Էրզրում, Վան, Բաղեշ, Խարբերդ, Դիարբեքիր, Սեբաստիա) հայ ազգաբնակչությունը մեծամասնություն էր կազմում թուրքերի և քրդերի համեմատությամբ (հայեր՝ 1 մլն 18.000, քրդեր՝ 424.000, թուրքեր՝ 666.000, տոկոսային հարաբերությամբ համապատասխանաբար՝ 38,6, 25,4 և 16,3), (ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 399):

չեթեական կազմակերպություններով, որոնց ցանցը տարածված է ամբողջ արևելյան նահանգներում, մինչև Կարին՝ առանց որևէ պաշտոնական արգելքի: Իթթիհատական ջարդարարները վերատին պաշտոնի են կոչվում, ինչպես Ֆերիդին օղլու Թոփալ Օսմանը, որը կարգվել է Կիրասոնի քաղաքապետ (1919, թիվ 28, էջ 367): Շարաթաթերերը ճշմարտացի, վաստերի վրա հիմնված վերլուծում էր քաղաքական խառնակ իրավիճակը և տալիս իրատեսական գնահատականներ:

Վերոհիշյալ պայմաններում, քաղաքական անորոշության ճակատագրական պահերին «Արագածը» ավելի, քան երբևէ, կարևորագույն հիմնահարց էր համարում հայության միասնական քաղաքական կամքն ու գործնելակերպը: Պարբերականն արձագանքից Պողոս Նուպարի և Ավ. Ահարոնյանի կոչին՝ ուղղված ամերիկահայերին, վերջ տալու ներքին (կուսակցական) երկպառակություններին և պահպանելու ազգային միասնականությունը: Բայց, ինչպես նկատում է «Արագածը», պատկերը նույնն է նաև Կ. Պոլսում, որտեղ «ողբալի մտայնութիւններով մեկզմեկ կը ջլատենք մենք հոս, մինչ անդին, Ամասիայից մինչև Էրզրում, տաճիկ բռնութիւնը կը շարժի, կը կինուի ու կը զինէ մոլեգնօրէն՝ խոյանալու համար մնացորդ հայերուն վրայ» (1919, թիվ 28, էջ 357):

«Արագածն» իր «Արձագանք» բաժնում զետեղել է հրատապ կամ կարևոր նորույթներ ազգային և արտաքսահմանի քաղաքական իրականության վերաբերյալ: Այստեղ հետաքրքիր տեղեկություններ կան 1919 թ. Կիլիկիայում ստեղծված իրադրության, Ադանայում կուտակված հայ գաղթականության,[1] վերջինիս խնամելու համար տեղի Ազգային մխության գործադրած ջանքերի մասին: Շաբաթաթերերը հաճախ է անդրադարձել Կիլիկիայում հայ գաղթականության կացությանը, լավատեսական տրամադրություններ-

[1] 1919 թ. Կիլիկիա էին վերադարձել 150-160 հազար հայեր՝ հավատ ընծայելով Ֆրանսիայի կողմից իրենց տրված ապահովության կեղծ խոստումներին: Նույն թվականի դեկտեմբերի 5-6-ի ֆրանս-թուրքական բանակցություններին հետևած՝ 1920 թ. Զինադադարով Ֆրանսիան սկսեց Կիլիկիան թուրքերին հանձնելու գործընթացը (տես Գասպարյան Ռ., Հոդվածների և հրապարակումների ժողովածու, էջ 62, 64-65):

րով մուտեցել նրա ապագային՝ հատկապես 1919 թ., պատերազմում Թուրքիայի պարտությունից մի քանի ամիս հետո: «Արագածը» հայտնում էր, որ՛ի նպաստ այդպիսի տրամադրությունների, Ադանայի ոստիկանությունը կազմված է հայերից, որոնք այդուհետև ենթարկվելու են անգլիական ոստիկանությանը: Վ. Շահրիմանին լավատեսություն էր ներշնչում հատկապես այն, որ կիլիկիայի ազատագրման գործում հայերն ունեցել են իրենց ներդրումը՝ դաշնակիցներին ի նպաստ մասնակցելով Արարայի ճակատամարտին (1918, սեպտեմբերի 19)՝ Արևելյան լեգեոնի կազմում: Անդրադարձել է նաև ԱՄՆ-ում հայ լեգեոներների համախմբման պատմությանը (թիվ 18, էջ 171–172), ինչպես և վերոհիշյալ ճակատամարտի մասնակից հայ հայ լեգեոնականների՝ ֆրանսիացիների կողմից պարգևատրմանը ռազմական խաչով: Շաբաթաթերթի նյութերի մի մասը տեղեկություններ է տալիս դատարանին հանձնված կամ դատի տրված լիթիհատականների եղեռնագործ անցյալի մասին: Այդպիսի մի հրապարակման մեջ նշվում է, որ դատի տրված՝ Եղնսիայի երբեմնի կառավարիչ Նուսրեթ բեյը այն «անանուն» հրեշներից է, որ Բաբերդի գայմագամ եղած ժամանակ 20 հազար հայ էր ոչնչացրել, Արղնում կազմակերպել Կարինից ու Մուշից բերված աքսորականների ջարդը: Մերկացնող և դատաստանի համար բացահայտող նշանակություն ունի շաբաթաթերթի այն տեղեկությունը, որ Յոզղատի ջարդարարներից ոմն Քեմալ խելագար է ձևացել՝ կախաղանից խուսափելու նպատակով (թիվ 11, էջ 163–164): «Արձագանքի» մեկ այլ լրատվության համաձայն, Ջանղըրի իթթիհատի պատասխանատու քարտուղար Ջեմալ Ուղուզը, որ դվխավոր դերակատարն էր «Վարուժանի, տոքթ. Սեւակի եւ անոնց ընկերներուն չարչարալից սպանումին», ձերբակալված է և պետք է դատվի մոտ ժամանակներում: Այդ մարդասպանը, որ մինչ իր պաշտոն ստանձնելը գրեթե չքավոր էր, սպանված հայերի կարողությունը զավթելով, տիրացել է անհավատալիորեն վիթխարի գրամագլխի և ձեռնարկել առևտրական մեծ գործերի (թիվ 16, էջ 224):

«Արագածը» միաժամանակ մերկացնում էր դահիճներին որևէ կերպ արդարացնելուն ուղղված՝ թուրքական գործող կառավարության ջանքերը, ակնհայտ միտումը՝ հիմնավորելու նաև հայերի մեղսակցության առասպելը:

Նույն կերպ «Արագածը» հայտնում էր ընթերցողին ապպայնական «Թուրք ազգային համաժողովի» հրատարակած «Թրքո-հայկական հարցը» խորագրով դրքույկի մասին, ուրտեղ թուրքերը ներկայացվում են իբրև «զոհեր», իսկ հայերը՝ «դահիճներ»[1]: «Արագածը» մերկացնում էր նաև թուրք մամուլի բուռն ջանքերը՝ հայերի բնաջնջման հրեշավոր արարքը ամեն գնով նվազեցնելու կամ կոծկելու ուղղությամբ: Այդպիսին էր «Սաբահ» թերթի կեղծուպատիր դատողությունն այն մասին, թե, իբր, «անհրաժեշտ է թուրք ազգը ամբաստանել՝ անոր ծոցէն ըղխած աննշան խմբակի մը (իթթիհատի – Ա. խ.) գործած դէշութիւններուն համար» (թիվ 23, էջ 297): Հայերի ձեռքով թուրքերին կոստրելու հրեշավոր պրպատուրյունը, որը մեր օրերում անգամ հաճախ պոռթկում է հայերի ցեղասպանության միջազգային ճանաչմանը զուգահեռ, հետևաբար, նոր բան չէ և ձևավորվել է իթթիհատական թուրքիայի վլատակների տակ ծվարած թուրքական անցումային կառավարության շրջանում՝ զուտ քաղաքական ապակողմնորոշման նկատառումներով: Արևմտահայերի բնաջնջման պատճառների մեջ տնտեսական գործոնի նշանակությունը, որ առաջ քաշվեց 1918–1920 թթ. հայ մամուլում և սրա միջոցով հանրային մտայնության մեջ, իր արձագանքն է գտել նաև «Արագածի» էջերում: Այս տեսակետից ուշագրավ է Վ. Շահրիմանի «Իթթիհատական եղբայրակցությունը: Թուրք կառավարությունը եւ ժողովուրդը Ատանայի ջարդէն վերջ» հոդ-

[1] Թուրքական կեղծարարությունը սկսվել էր 1917 և 1918 թթ., որի մերկացմամբ հանդես էր եկել նշանավոր հասարակական քաղաքական գործիչ Տիգրան Հովհաննիսյանը՝ իր փաստականորեն հագեցած հմտալի հրապարակումներում՝ Թիֆլիսի «Հառաջ» թերթի 1919 թ. փետրվար-մարտի համարներում (տե՛ս S. Հովհաննիսյան, Տաճիկ կառավարությունը և իթթիհադ մարդկության դատարանի առաջ, կազմ. և հրատ. պատրաստեց Զաքարյան Ա., Ե., 2007):

վածը (թիվ 2, էջ 25–27): Կիլիկիայի հայերի ջարդերին անդրադառնալիս նա վկայակոչում է Տարսոնի ամերիկյան քոլեջի տնօրեն դոկտ. Քրիստիին, որը հայտնել էր. «Հայոց յանցանքը իրենց աշխատասիրութիւնն ու հարստութիւնն է: Առանայի երկրագործութեան, վաճառականութեան եւ ճարտարարուեստի ձեռնարկներուն 85%-ը հայոց կը պատկանէր: Քսանըեօթն տարի Կիլիկիա ապրած եմ, տեղական լեզուն ու բարքերը դիտեմ, կը տեսնէի ու կը լսէի թէ՛ իսլամները, որոնք առհասարակ աղքատ են իրենց ծուլութեան հետեւանքով, ինչպէս ակռայ կը կրճտէին, կը նախանձէին ու առիթ կը փնտռէին այդ հարստութիւնը առանց աշխատանքի ձեռք անցընելու» (նշ. տ., էջ 25):

Հետաքրքիր լրատվություն էր տպագրում «Արագածը» պատերազմում կրած սարտուությունից ուշաբերվելու պայմաններում թուրքական իրականության մեջ երիտթուրքական գործիչների կացության բարվոքման վերաբերյալ: Իթթիհատականների հանդեպ թուրքական դատարանների կողմնակալ վերաբերմունքը, աչք փակելը նրանց կատարած չարագործությունների հանդեպ՝ պարբերականին մղում էին ոչ մի արդարություն չակնկալելու այդ դատարաններից: «Արագածը» միաժամանակ կշտամբում էր «կարգ մը հայոց», որոնք միամտություն ունեին արդար դատավճիռներ սպասելու (թիվ 4, էջ 60): «Արագածը» մատնանշում էր նաև երիտթուրքական գործիչների համատեղ ջանքերը՝ արտաքսահմանում իրենց համար բարենպաստ հասարակական կարծիք ստեղծելու ուղղությամբ: Այս առիթով «Արագածն» ուշադրություն է հրավիրում Թուրքիայում կազմակերպված «Ուիլսոնյան ընկերության» վրա, որի նպատակը ԱՄՆ-ում թուրքանպաստ հոսանք ստեղծելն էր (թիվ 25, էջ 331):

Փաստական տվյալներով են հագեցած «Արագածի» այն նյութերը, որոնք վերաբերում են Կ.Պոլսի հայ իրականությանը, վերադարձած տարագրյալների խնամքի և ապաստանի հարցերով զբաղված պատրիարքարանի և հնամատուրության խորհրդի գործու-

նեութեյանը, սրանց տարաձայնութիւններին և այլն: Շարաթաթերթը մասնաւոր ուշադրութիւն է դարձրել հատկապես լքված գույքերի խնդրին և պաշտպանել հայերի անհատական ու ազգային իրաւունքները: Համաձայն օսմանյան գործող օրենքի, լքված կամ անժառանգ մնացած սեփականութեյան իրաւունքն անցնում էր պետութեյանը, որին և հիմնաւորապես առարկում էր «Արագածի» հեղինակներից փաստաբան Թ. Տեր-Սահակյանը: Ժառանգորդ լինելու համար, գրում էր նա, պետութեյունը նախ պետք է ապահովի իր հպատակի անվտանգութեյունը, մինչդեռ այդ պետութեյունը լնաջնջել է հայերին: Շերիով իսկ, հավելում էր նա, որդեսպան հայրը զրկվում է որդու ժառանգութեյունից և նույնն են ենթադրում իրցճի, արդարութեյան և միջազգային օրենքի սկզբունքները: Անժառանգ հայկական գույքերի օրինական տերը, ուրեմն, միայն հայ ազգը կարող է լինել, պնդում է այս հեղինակը (թիվ 5, էջ 69–70):

Հոդվածն ուներ հրատապ նշանակութեյուն, քանի որ Կ. Պոլսում և հատկապես գավառներում թուրքական դատարանները կտրուկ մերժում էին իրենց գույքերը վերադարձնելու վերաբերյալ եղեռնը վերապրողների հայցերը: 1919 թ. սկզբներին Ադաբազարի դատարանը մերժել էր այդպիսի մի հայց, այդ հիմնավորելով նրանով, որ հայցողը իր գույքին տիրանալու իրավունքից զրկվել է վաղեմութեյան ժամկետի պատճառով (թիվ 13, էջ 188):

«Արագածը» բավական լուրջ ուշադրութեյուն է դարձրել պոլսահայ իրականութեյանը, դրա առջև ծառացած խնդիրներին: Վ. Շահրիմանը կոչ էր անում Ազգային խնամատար մարմնին՝ կազմակերպված հուն տալ այնպիսի համազգային խնդիրների, ինչպիսիք էին Կ. Պոլիսը հեղեղած տարագրյալներին աջակցելը կենցաղում, նրանց օթևան և կանոնավորապես նպաստ տրամադրելը, կանխելու չարաշահումները այս առնչութեյամբ և այլն (1919, թիվ 9, էջ 129–131): Այս տեսակետից և առհասարակ պոլսահայ համայնքի կյանքի հետպատերազմյան իրողութեյունները կարգավորելու մտահոգութեյամբ՝ «Արագածի» խմագիրը կարևորում էր Ազգա-

յին վարչության գործունեությունը՝ ի հայտ բերելով այն չլատող թերությունները: Այդ վարչությունը սոսկ անվանապես ունի այնքան անհրաժեշտ խորհրդակցական ժողով՝ կազմված ազգի ներկայացուցիչներից (հարանվանություններ, կուսակցություններ): Այդ ժողովի պատակտումը, ըստ Շահրիմանի, կանխել չի հաջողվել: Իրենց գործն են արել «ճղճիմ ու աննշան անձերը», կաթոլիկ հայերը հեռացել են ժողովից: Կ. Պոլսում գործում են հայկական մշակութային, բարեսիրական և այլ ընկերություններ, որոնց գործունեության արդյունավետությունը չէր գոհացնում Շահրիմանին: Պարբերականը կարծում էր, որ ազգային միաբանությունը կարող է գոտևորվել ու կայանալ միայն համոզմունքով, որի հիմքում պետք է ընկած լինի Հայ դատի գերակայությունը ամեն մի կուսակցականության և անհատական նախապատվության նկատմամբ (1919, թիվ 3, էջ 33–35):

Ազգային կորուստների մեջ «Արագածն» առանձնացնում էր մշակույթին հասցված ահռելի հարվածը՝ հայ մտավորականության դիմաադումը իթթիհատի ձեռքով: Շաբաթաթերթն այս թեմայով տպագրեց Ս. Եղբայրյանի հոդվածաշարը՝ նվիրված Դ. Վարուժանին, Ռ. Սևակին, Գր. Զոհրապի, Սիամանթոյի, Տ. Քելեկյանի և այլոց կյանքին ու ստեղծագործությանը: Շաբաթաթերթն իրավացիորեն խիստ խոսքեր էր ուղղում եղեռնը վերապրած մտավորականության հակատագրի նկատմամբ անտարբեր ազգակիցներին: Անդրադառնալով Հիվանդ Կոմիտասին, «Արագածը» ընդգծում էր նրա մնծ երախտիքը հայ մշակույթին և ի դիմաց դրա՝ այդ «յուզարկաւոր ժողովուրդի» անհոգությունը: «Մուրացկանութեան մէջ տեսնել կը սիրենք մեր ամենէն տաղանդաւոր հոգիները, որոնք կապրին և որոնց մեռնելուն կը սպասենք, որպէսզի ճառ խոսինք ու գովեստներ շռայլենք»,- գրում է շաբաթաթերթի հեղինակներից մեկը (1919, թիվ 8, էջ 127):

«Արագածի» գեղարվեստական գրականության մեջ առաջատարը չափածոն է: Բանաստեղծություններում ակնհայտորեն

զգացնել է տալիս թեմայի միօրինակությունը, և դա հասկանալի է, երբ մնծագույն կորստի բանաստեղծական հանրագումարը չարունակում էր իր ձևավորման գործընթացը՝ երբեմն երբեմն հագեցնելով վերապրումի լավատեսական տրամադրություններով: Այս թեմայով «Արագածը» տպագրեց Ե. Գոլանճյանի, Լ. Էսաճանյանի, Հ. Պողոսյանի, Ն. Պեշիկթաշլյանի, Վահե-Հայկի, Կիլիկեցու և այլոց բանաստեղծությունները: Տրամադրությունների այս միօրինակությունը «Արագածը» կարողացավ խախտել երգիծական, հումորային բնույթի հետաքրքիր ու սրամիտ գործերով, որոնք տպագրվում էին «Զուարթ սիւնակ» խորագրով: Այստեղ են տպագրվել Գր. Հ. Գալուստյանի, Գր. Զվարթախոհի գավեշտական բնույթի բանաստեղծությունները, թարգմանական երգիծական չափածոն:

Շաբաթաթերթի արձակը ևս ներծծված է պահի ազգային-քաղաքական տրամադրություններով, սակայն, ի տարբերություն չափածոյի, այստեղ գերիշխում են պայքարի, ապրելու կամքի և ազգի վերածնության մոտիվները: Արձակ էջերը հիմնականում պատկանում են պատմվածքի կամ նովելի ժանրին, որի հեղինակներն են Վ. Շահրիմանը, Մ. Երվանդը, Մինաս Զերտալը, Հ. Դարբինյանը և այլք: «Արագածի» ազգային բովանդակությունն ու հասարակական հագեցվածությանը առանձնահատուկ երանգով են օժտում Կ. Պոլսի հայ համայնքի 17–18-րդ դարերի պատմությանը նվիրված էջերը՝ Վ. Թորգոմյանի հեղինակությամբ, որոնք վերաբերում են Կ.Պոլսի հայոց պատրիարքության, նրա գործունեության ուշագրավ շրջաններին, Ազգային հիվանդանոցի հիմնադրմանը, Օսմանյան Թուրքիայում հայ մեծահարուստների հեղհեղուկ կացությանը և այլն: Ժամանակի Կ. Պոլսում հրատարակվող հայ պարբերականների մեջ «Արագածն» առհասարակ աչքի է ընկնում հարուստ բովանդակությամբ, առաջադեմ հայացքներով ու ընթերցողների մեջ ունեցած ազդեցությամբ: Նրա նյութերում խտացած դրամատիկ լարվածությունն արտացոլում է պոլսահայ, այլև համազգային իրական տրամադրությունները, որով էլ պայմանավորված է նրա ճանաչողական անուրանալի արժեքը:



Երուխան



Արտ. Հարությունյան



Արտ. Գալփաքճյան



Հ. Սիրունի



Օ. Չիֆթէ Սարաֆ



Շ. Քրիսյան



Մ. Շամտանճյան



Ռ. Զարդարյան



Մ. Գոչունյան



Ադանայի ջարդերը հետաքննող հանձնաժողովի անդամ Հակոբ Պապիկյան



Աղ. Փանոսյան (Ալփասլան)



Հ. Մամուրյան



Թեոդիկ



Վ. Փափազյան (Էիլա)




Զապել Եսայան



Վ. Թոշիկյան



Հայկանուշ Մառք



Մեծ քառյակը Փարիզի հաշտության կոնֆերանսում (1919)
Ձախից աջ Վ. Վիլսոն (ԱՄՆ), Ժ. Կլեմանսո (Ֆրանսիա), Վ. Օռլանդո (Իտալիա), Լլոյդ Ջորջ (Անգլիա)



Թեոդիկ



Վ. Փափազյան (Լիլա)



Չապել Եսայան



Վ. Թոշիկյան



Հայկանուշ Մառք

Պոլսահայ մամուլ

















Հարություն Ալփիար
(Քրիզանթեմ)



Ժիրայր Շիրակացի



Բ. Լոռեցյան



Ժ. Սայաթալյան



Հունական բանակի մուտքը Զմյուռնիա (1919, մայիս)



Փախստական քրիստոնյա ազգաբնակչությունը
Զմյուռնիայի նավահանգստում (1922, մայիս)

«ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԱՄՈՒԼ» ԹԵՐԹԸ (1919–1922)

«Արևելյան մամուլը» հաջորդել է «Դաշինք» թերթին՝ 1919 թ. վերատանալով Մամուրյան-Հոր վաղեմի հրատարակության անունը և լույս տեսնելով որդու՝ Հրանտ Մամուրյանի խմբագրությամբ: «Դաշինքը» վերակոչվել է «Արևելյան մամուլ»՝ վերահրատարակվելով 1919 թ. հունիսին: Այդ մասին է վկայում Ս. Պարթևյանի հայտնի տարեցույցը. «Գրեթէ հնգամեայ դադարէ մը յետոյ, զինադադարին հետ կը վերսկսեր (Հ. Մամուրյանը – Ա. Խ.) իր թերթը՝ «Դաշինքը», զոր «Արեւելեան մամուլ» անուանափոխութեան ենթարկեց վերջացող տարուան յունիսին»[1]:

Ուրեմն, «Դաշինքը» պետք է դադարած լիներ դրանից հինգ տարի առաջ՝ 1914 թ.:

Տեղեկությունը պետք է ստույգ համարել, որչափով ամբողջ 1915 թ. իշխանությունների կողմից հալածված և նույն թվականի նոյեմբերին ու 1916 թ. հոկտեմբերին մասնակի տեղահանության ենթարկված զմյուռնահայերը[2] հազիվ թե կարողանային որևէ թերթ հրատարակել և կամ էլ հրատարակվելուց հետո՝ կանոնավոր լիներ: ՀՀ Ազգային գրադարանում պահվում են այդ թերթի միայն 1920–1922 թթ. հավաքածուները:

Ինչպես «Դաշինքը», «Արևելյան մամուլը» ևս չլինելով ռամկավարների պաշտոնական հրատարակություն, հետևել է նրանց գաղափարախոսությանը: Թերթը ողջունեց Կ. Պոլսում կայացած՝ ռամկավարների (Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության) Գ ընդհանուր պատգամավորական ժողովի որոշումը, ըստ որի, այդ կուսակցությունը միանալու էր Ազգային ազատական և ժողովրդական կուսակցությունների հետ, ուստի այդ նպատակով

---

[1] Պարթեւեան Ս., Ձմիւռնահայ տարեցոյցը, Ա տարի, Իզմիր, 1920, էջ 90:

[2] Մ. Մաշտոցի անվ. հին ձեռագրերի ինստիտուտ (Մատենադարան), Ա. Ալպոյաճյանի ֆոնդ, թղթ. 8, վավ. 213, 218:

ընտրել էր լիազորներ (1920, 17 դկտ.)[1]: Ռամկավարների հանդեպ իր համակրանքը «Արևելյան մամուլը» հիմնավորում էր նրանով, որ նրանց կուսակցությունը չի ծառայում հեղափոխական-դավադրական նպատակի, որ աղետաբեր կլիներ ազգային կյանքի համար: Հեղափոխության հետևանքով է, պնդում էր թերթը, որ Հայերն անկախության հասան անհամեմատ շատ ավելի մեծ զոհերի գնով, քան վրացիները, ազերի-թուրքերը, լեհերը և այլն: Ազատականների և ժողովրդական կուսակցության հետ ռամկավարների միավորման լուրջ հիմքը Հ. Մամուրյանը համարում էր նրանց ծրագրերի բովանդակային ընդհանրությունները:

Քեմալականների և հույների առճակատման ու պատերազմի պայմաններում՝ 1921–1922 թթ. սեպտեմբեր, զմյուռնահայ դաղթօջախն ապրում էր տագնապալի, բայց և Համաձայնության երկրներից ու Հունաստանից ակնկալվող հույսերով: Գործում էին պավառական վարչության քաղաքական ժողովը՝ իր խորհուրդներով, ազգային հաստատությունները՝ ինչպես բուն Զմյուռնիայում, այնպես էլ շրջակա բնակավայրերում: Այս ժամանակաշրջանի «Արևելյան մամուլի» նյութերը կարևոր վավերագրեր են դառնում ոչ միայն դաղթօջախի դարավոր պատմության վերջին շրջանի, այլև լրագրության բովանդակության, նրա լրատվական պատկերասցումների ու հնարավորությունների վերաբերյալ: Թերթը լուսաբանում էր ազգային հիմնարկների գործունեությունը՝ վարժարանների, կրթական-որբախնամ ընկերությունների, շրջակայքի հայության առօրյան, ազգային կյանքի իրողությունները և այլն: Ուշադրավ է, որ 1918–1922 թթ. զմյուռնահայ իրականությունը շատ կոլմիրով հիշեցնում է Կ. Պոլսի հայության կյանքը՝ մտահոգված գաղթականներին ու որբերին ապաստան տալու և նրանց ապրուստը հոգալու խնդիրներով, քաղաքական իրազարձությունների սուր

[1] Իրականում, սակայն, 1921 թ. հոկտեմբերին միավորվեցին Հայ սահմանադրական ռամկավար և Վերակազմյալ հնչակյան («Ազատական») կուսակցությունները, և հոկտեմբերի 25-ին Կ. Պոլսում հայտարարվեց Ռամկավար ազատական կուսակցության (ՌԱԿ) ստեղծման մասին (տե՛ս Ղազարյան Վ., Ռամկավար ազատական կուսակցություն. Ուղեցույց և համառոտ պատմություն, էջ 82):

ընկալումներով ու Հայկական հարցի մոտալուտ լուծման սպասումներով, տնտեսական ու հոգևոր կյանքի բարելավման, առօրեական խնդիրներով և այլն: Անշուշտ, զմյուռնահայ լրագրության էջերը իրենց յուրահատուկ կնիքն էին դնում Թուրք-հունական հակամարտությունը, այնուհետև պատերազմը, ռազմական իրադարձությունների խառնարանում գտնվելու առանձնահատկությունները: Այսուհանդերձ, գաղթօջախն ապրում էր ազգային եթե ոչ անկաշկանդ, ապա դրան հետամուտ տրամադրություններով հատկանշվող կյանքով:

Թերթի խմբագիր Հ. Մամուրյանը, ինչպես «Դաշինքում», այստեղ ևս ղրաղվում էր ռամկավարական դաղափարախոսության քարոզչությամբ: Այդ նշանակում էր նաև ՀԲԸՄ գործունեության լուսաբանում՝ դրվատելով նրա ազդօդուտ ջանքերը հայության առջև ծառացած բոլոր կարևոր խնդիրներում: Ուշագրավ է ՀԲԸՄ վարչության փոխ-ատենապետ Ե. Աղաթոնի «Գեղեցիկ ձեռնարկ մը» հոդվածը, որտեղ բացահայտվում են միության նպատակները և առաջնայինը դրանց մեջ՝ թեթևացնել հայ ազգի տառապանքները, օգնելով բաղում դաղթականներին ու որբերին: Դրանց իրականացման հրատչի նյութական պահանջները նկատի առնելով, Աղաթոնն առաջարկում էր յուրաքանչյուր հայրենասեր հայի՝ անդամագրվել ՀԲԸՄ-ին, ըստ կարելվույն օգնել հատկապես կարիքավորներին, որպիսիք էին այդ պահին Կիլիկիայից հկած փախստականները (1920, 18 դկտ.):

«Արևելյան մամուլում» ոչ միայն արտացոլվել են ՀԲԸՄ և ՀՅԴ հին հակասությունները, այլև այս թերթի անվերապահ աջակցությունը առաջինին՝ այդ հակամարտության դրեթե բոլոր հանդրվաններում: Այս տեսակետից ուշագրավ է բարեգործական միության անվերապահ պաշտպանությունը թերթում, որտեղ քննադատվում են «ուխտեալ հակառակորդների» պայքարի արատավոր մեթոդները: Առավել ուշագրավը ՀԲԸՄ կենսունակության ու գործունեության ծավալները բացահայտող վիճակագրական տվյալներն են, ըստ որոնց, գործում են միության 215 մաս-

նաճյուղեր՝ ավելի քան 17 հազար անդամներով և որ նրա նկատմամբ 1914 թ. վերջին միության ունեցած 8988 եգիպտական չափով հաստատը 1919 թ. վերջին հասել էր 59124-ի (1919, 22 ապր.):

«Արևելյան մամուլի» հիշյալ ռամկավարական համակրանքը ՀԲԸՄ նկատմամբ չարունակվեց մինչև թերթի պատմության ավարտը՝ դրան նախորդող Հայկական հարցի բոլոր զարգացումներում: Այդպիսիք էին հույժ քննադատական, անգամ ժխտական վերաբերմունքը Հայաստանի առաջին հանրապետության, ինչպես և Խորհրդային Ռուսաստանի հանդեպ, ակնկալիքները Սևրի դաշնագրից, հուսախաբությունները արևմտյան տերություններից՝ Հայկական հարցը լուծելու նրանց քաղաքականության անստահելի շրջադարձի պայմաններում, երբ սրանք, և առաջիններից մեկը՝ Իտալիան ու Ֆրանսիան[1], բանակցություններ սկսեցին քեմալականների հետ՝ յուրաքանչյուրը սեփական շահերը հետամտող մղումներով: Նկատենք, որ արդեն 1918 թ. վերջերին, երբ առակավին չէր չորացել Մուդրոսի զինադադարի ստորագրության թանաքը, շոշափելի էին դարձել թուրք-ֆրանսիական մերձեցման փորձերը: 1919 թ. հունվարի 4-ի իր մի հեռագրում՝ ուղղված Ֆրանսիայում ԱՄՆ դեսպան Շարփին, Կ. Պոլսում ԱՄՆ կոմիսար Հենքը հայտնում էր, որ «Այժմ թուրքերը ձգտում են տարաձայնություններ առաջացնել բրիտանացիների և ֆրանսիացիների միջև՝ դովաբանելով առաջիններին և քննադատելով երկրորդներին՝ յուրաքանչյուր պատեհ դեպքում: Սակայն որոշակի շրջաններ նկատի են առնում ֆրանսիական մեծ ներդրումներ և նյութական շահեր այդ երկրում, որպեսզի ապահովեն ֆրանսիական ազդեցությունը ապագա անկախ թուրքական կառավարության»[2]: 1922 թ. «Արևելյան մամուլի» հուսո վերջին հանգրվանը չարունակում էր մնալ Անգլիան, որը դեռևս չէր դլանում խոստումներ տալ

---

[1] Տե՛ս Սահակյան Ռ., Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921 թթ., էջ 269:

[2] Армениян в документах государственного департамента США 1917-1920 гг.. с. 40.

Փարիզի հայկական պատվիրակությանը՝ հակառակ Հայկական հարցից հրաժարվելու իր ակնհայտ քաղաքականության:

Առանց բացառության, այս և սրան առնչվող բոլոր խնդիրներում «Արևելյան մամուլը» կանգնած էր ռամկավարական դիրքերում՝ հանդես գալով որպես նվիրյալ քարոզիչ: Հայ կյանքին ու իրականությանը խորթ համարելով հեղափոխություններն ու սոցիալական սլոգիկումները, թերթը, ինչպես իր համակրած կուսակցությունը, կրակն ուղղում էր հեղափոխական կուսակցություններին՝ ՀՅԴ և հնչակյանների վրա: «Ես» ստորագրությամբ «Արևելյան մամուլի» առաջատար հրապարակախոսը՝ նույն Հ. Մամուրյանը, շատ ավելի հաշտվողական ու լայնախոհ վերաբերմունք ցուցաբերեց խորհրդային Հայաստանի նկատմամբ՝ այն բանից հետո, երբ արտգործնախարար Ա. Բեկզադյանը ռադիոյով դիմել էր Անկարայի կառավարությանը՝ անընդունելի համարել դաշնակցական կառավարության կնքած Ալեքսանդրապոլի դաշնագիրը (1920 թ. դեկտեմբերի 2): «Արևելյան մամուլը» համոզված էր, որ հայ իրականության մեջ ասելիք ունեն միայն ռամկավարները և Հայ ժողովրդական կուսակցությունը՝ վկայակոչելով դրանց ծրագրերի նույնությունը և ուրեմն, միավորվելու անհրաժեշտությունը: Հ. Մամուրյանը այս և էլի մի քանի հարցերում կանխում էր ռամկավարների մտադրությունները: Անհանդուրժելի համարելով «Արևելյան մամուլի» ինքնուրույն, ռամկավարներից տարբերվող որոշ հայացքների առկայությունը, Կահիրեի մի շաբաթաթերթում հանդես էր եկել ռամկավարների ղեկավարներից մեկը՝ Լ. Մկրտիչյանը՝ իր անհամաձայնությունը հայտնելով թերթի մի խմբագրականին: Իր հերթին, «Ես»-ը գրում էր, որ իր թերթը դեռևս Ջմյուռնիայում «ռամկավար կուսակցութիւն չեղած»՝ հետևել է ռամկավարության սկզբունքներին, կուսակցությանը շատ ավելի մեծ ծառայություններ մատուցելով, քան դրա որևէ պարբերական օրգան: Սրանով հանդերձ, և կարելի է կարծել՝ ցանկանալով ընդգծել իր անկախությունը, «Ես»-ը հայտնում էր, թե «Արևելեան մամուլը» ռամկավար կուսակցութեան հետ ոևէ պաշտօնական կամ կիսապաշտօն

առնչութիւն մը ունեցած չէ» (1921, 20 օգ.): Այս ամենով հանդերձ, «Արևելյան մամուլը» հավատարիմ էր մնում ռամկավար գաղափարախոսությանը՝ քարոզելով նրա արժեքները թե տեսական և թե ընթացիկ հարցերում: Ռամկավար հրատարակությունների հետ միաժամանակ Հ. Մամուրյանի թերթն առաջիններից մեկն էր, որ տագնապ հնչեցրեց Հայկական հարցի լուծումից տերությունների հրաժարվելու քաղաքական դրսևորումների առթիվ Արևմուտք-Թուրքիա հարաբերությունների ջերմացման հեռանկարը դնահատելիս: Թերթը չէր թաքցնում իր հիասթափությունները հատկապես Իտալիայից ու Ֆրանսիայից, որոնք Թուրքիայի հանդեպ իրենց վերաբերմունքի քաղաքականությունը սկսեցին Սևրի դաշնագրի հանդեպ նոր, բացասական վերաբերմունքի հիմնավորումներով: Համաձայնության երկրների դաշինքը Թուրքիայի հանդեպ քաղաքականության հարցերում չոչափելի ճեղքեր էր տվել դեռևս 1919 թ., Մուդրոսի զինադադարից կարճ ժամանակ անց, որի հիմքում ընկած էին նախ Անգլիայի ու Ֆրանսիայի տնտեսական ու քաղաքական շահերի բախումը Մերձավոր ու Միջին Արևելքում, քամալականների և սուլթանական կառավարության միջև[1], և մյուս կողմից՝ Իտալիայի և Անգլիայի միջև հակասությունները, որոնք ի հայտ եկան Թուրքիայի հանդեպ նրանց վերաբերմունքի կտրուկ փոփոխությունների պայմաններում: Իրենց կարևոր նշանակությունն ունեցան նաև 1919–1920 թթ. ընթացքում միլլի շարժման՝ քաղաքական գործոնի վերածվելը և Թուրք-խորհրդային մերձեցումները, որպիսիք խորին տագնապ էին պատճառում երևկվա բոլոր դաշնակիցներին և զուտ երևութական դարձնում Թուրքիան բաժանելու վերաբերյալ կոալիցիայի երբեմնի մտադրությունների իրականացման ամեն մի հնարավորություն: 1920 թ. վերջերին արդեն ակնհայտ դարձած այս տեղաշարժերը մեծ անհանգստությամբ դնահատվեցին «Արևելյան մամուլի» էջերում: Սևրի դաշնագրին,

[1] Տե՛ս Տերճոն Ի., Անպատժելիություն, վրեժ և ժխտում. հայկական ցեղասպանությունը միջազգային ատյանների առջև, «Պատմա-բանասիրական հանդես», 2001, № 1, էջ 30-31:

թերթի կարծիքով, հավատարիմ է մնում միայն Անգլիան (որը սատարում էր սուլթանական կառավարությանը): Թերթը Ֆրանսիայի շրջադարձն արձանագրելիս վկայակոչում էր ֆրանսիական քաղաքական գործիչ Ֆրանկլին Բույոնին, որի կարծիքով, Սևրի դաշնագիրը պաշտպանելը կնշանակեր մերձենցնել Քեմալին և Ռուսաստանը, ուստի և հարկ է քեմալականների հետ մտնել բանակցային հարաբերությունների մեջ և համաձայնության հող նախապատրաստել (1920, 11 դկտ.):

1921 թ. «Արևելյան մամուլը» նույնիսկ մի պահ հավատում էր, որ ֆրանսիական վարչապետ Բրիանը կվերադառնա նախկին՝ Թուրքիան Համաձայնության տերությունների կողմից բաժանելու քաղաքականությանը, ընդամին, վկայակոչելով այնպիսի մի թույլ փաստարկ, որպիսին էր դեռևս Սևրի դաշնագիրը պաշտպանող Անգլիայի հետ հակասությունները հաղթահարելու նրա ձգտումը (1921, 29 հնվ.): Կարճ ժամանակ անց, սակայն, Հ. Մամուրյանը պետք է խոստովաներ Ֆրանսիայի անշրջելի դարձած արևելյան քաղաքականության փաստը՝ ի հերքումն իր բարեմիտ ակնկալիքների:

Ինչ-որ տեղ Ֆրանսիայի նոր դիրքորոշումը թերթին մղում էր սթափ դնահատանքի՝ Ազգերի լիգայի աշխարհաքաղաքական առաջնահերթությունները ճիշտ դնահատելու իմաստով: Ազատ, անկախ և միացյալ Հայաստանի հետապատկերին դեռևս կապված ռամկավարների և նրանց համակիր գործիչների համար առավել ընդունելին, դոնե ճանաչողության տեսակետից, մնում էր Անգլիան: Վերջինս, մի կողմից, արդեն թաղել էր Թուրքիան տրոհելու իր երբեմնի ձգտումների վերջին նշույլները՝ փորձելով համաձայնությունը պահպանել սուլթանական կառավարության հետ, բայց և արդեն հաշվի առնելով քեմալական գործոնի աճող ազդեցությունը, բայց և մյուս կողմից, չարունակում էր պահպանել իր երկդիմի կեցվածքը՝ հույներին խոստանալով ընդամենը բարոյական դորակցություն: 1921 թ. թերթը գրում էր, որ Ազգերի լիգան ժնևի համաժողովում գլացել է իր օգնությունը Հայաստանին և

«մարդասպան տէրութեան հետ մտել է սակարկութեան մէջ», բայց դեռևս հակված էր խաբվելու համաժողովում անդլիական պատվիրակ լորդ Սեսիլի այն սնամէջ հայտարարություններից, թե, իբր, Ազգերի լիգան «իր բարոյական նշանակութիւնը պիտի ստանայ Հայաստանի հարցը լուծելով» (1920, դկտ. 14): Այս նույն ժամանակներում Ժնևի համաժողովի առավել իրատեսական բնութագրին էր տալիս Հ. Մամուրյանը, երբ վիճաստում էր նոր աշխարհաքաղաքական իրողություններն Արևմուտքում, նշելով, որ միջպետական հարաբերությունների մեջ ամրագրվել է զինաթափությունից հրաժարվելու և սպառազինությունների նպատակային քաղաքականության որդեգրումը: Միաժամանակ, «Ջուտ քաղաքական կուսակցութեանց դերը» խմբագրականում (ն. տ.) Հ. Մամուրյանը դեռևս հույսեր էր կապում իրենց դիվանագիտական գործողություններով Սևրի դաշնագրից սառչող Եվրոպայի հետ և այս հիման վրա կողմ էր Փարիզի ազգային պատվիրակության դորացմանը՝ արևմտահայության անջատ դատը պաշտպանելու համար: Ժամանակաշրջանն ինքնին անորոշ ու տարտամ էր թվում Հ. Մամուրյանին՝ հատկապես 1920 թ. վերջին և 1921 թ. սկզբներին՝ հատուկ եզրակացությունների հանգելու համար: Ռուսաստանի և քեմալական Փոքր Ասիայի հնդհեղուկ կացությունը, այսուհանդերձ, տապնապով էր լցնում «Արևելյան մամուլի» էջերը՝ Սևրի դաշնագրին Արևմուտքի վերադառնալու հնարավորության տեսակետից: Բայց և խորհրդային Ռուսաստանի կացությունը չատ ավելի կայունացող էր թվում թերթի խմբագրին. «Եթէ ճշմարտութիւն մը կայ, այն է, որ մեծամասնական Ռուսիոյ անկումը կարելի չէ նախատեսել», գրում է նա (1921, հնվ. 1): Խորհրդային Ռուսաստանի և Քեմալի ռազմաքաղաքական մերձեցման մեջ Հ. Մամուրյանը նկատում էր առաջինի ծավալապաշտական վաղեմի քաղաքականության մի նոր տարբերակը: Հ. Մամուրյանը հաշվի էր առնում նաև Քեմալի բավական կտրուկ քայլերը Ռուսաստանի հետ հարաբերությունները փչացնելու հարցում: Նա հավանաբար, կռահում էր Քեմալի հակախորհրդային քաղաքականության զարգացումները: Նույն՝ 1921 թ.

հունվարին Անկարայի առաջնորդի հրամանով պատժիչ միջոցառումներ գործադրվեցին կոմունիստների դեմ, որ անկասկած, առաջացնելու էր Ռուսաստանի դժգոհությունը: Ռամկավարական տրամադրություններով համակված «Արևելյան մամուլը» հակակրական դիրքորոշում ուներ Խորհրդային Ռուսաստանի հանդեպ, որ դաշափարական անհամատեղելիությունից զատ, անուցվում էր Արևմուտքի հետ Խորհրդային Ռուսաստանի քաղաքական սուր հակադրությունների իրողությունից: Բոլշևիկյան հեղափոխությունը թերթին թվում էր ժողովուրդներին ու աշխարհին սպառնացող մի հրդեհ, որ սպառնում էր ճարակելու քաղաքակրթական արժեքները: Բոլշևիկյան իշխանությունը, ըստ այդմ, նրան պատկերանում էր իբրև Եվրոպայի անդորրը խառնակելու կոչված մի բռնատիրություն, որի մոտալուտ հավակնությունն է Արևելքում կլանել Կովկասը, Փոքր Ասիան, Պարսկաստանը, Արևմուտքում Արևելյան Եվրոպայի երկրները և այլն: Խորհրդային Ռուսաստան-քեմալականներ մերձեցման մեջ Հ. Մամուրյանը տեսնում էր ռուսական ծավալապաշտության ռազմավարական հին ուղեգծի ընթացիկ, բայց ամենևին էլ ոչ նպատակի փոփոխությունները: Հ. Մամուրյանն առարկում էր դաշտնի պայմանագրերն ու ծածուկ դիվանագիտությունը մերժող բոլշևիկյան ձևակերպումներին, դրանք համարում անմիտ դարձվածներ, որ կոչված էին սքողելու աշխարհակալական հետին մտքեր փայփայող դաշափարախոսությունը:

Միջազգային քաղաքականության հակասականությունը, որ բխում էր տերությունների երեկվա դաշինքի փլուզումներից, Հ. Մամուրյանին մղում էր ցանկալին իրականություն ներկայացնող պատկերացումների: 1921թ. Լոնդոնում գումարվելիք տերությունների համաժողովից նա ակնկալում էր Սևրի դաշնագրով և Վիլսոնի սահմանագծումներով կազմվելիք Հայաստանին տրված իրավունքները վերահաստատելու որոշումներ (1921, փետ. 2): Հ. Մամուրյանը, ի դեպ, չզլացավ խիստ քննադատելու Փարիզի հայկական պատվիրակության մաս կազմող Ա. Ահարոնյանին՝ պնդելով, որ նա իրավունք չունի մասնակցելու Լոնդոնի վեհաժողովին, քա-

նի որ ոչ մի պետություն չի ներկայացնում: Նա փաստում էր, որ Ահարոնյանի կուսակցությունն ու կառավարությունն էր, որ ստորագրել էր Ալեքսանդրապոլի դաշնագիրը, հետևաբար և դրանից ներկայացուցիչը չի կարող առաջ քաշել Սևրի դաշնագրի իրականացման հարցը:

Լոնդոնի կոնֆերանսը (1921 թ. փետրվարի 21-մարտի 14), որ փաստորեն ցուցադրեց Սևրի պայմանագրից հրաժարվելու՝ դաշնակիցների մտադրությունները, սառը ջուր պետք է մաղեր «Արևելյան մամուլի» հույսերի վրա, սակայն թերթը դեռևս պահպանում էր Անգլիայից ունեցած իր սպասելիքները: Այս տեսակետից հետաքրքիր է անգլիական «Դեյլի թելեգրաֆ» թերթից «Արևելյան մամուլի» արտատպած մի հոդվածը «Յունաստան պիտի չքաշուի Անատոլուէն» վերնագրով, որով փափուկ բարձ էր դրվում Հունաստանի գլխի տակ՝ հավաստիացնելով նրա նկատմամբ Անգլիայի, աներևը համակրանքը, որի շնորհիվ, իբր, «Յունաստանի համար Անատոլուի տիրացումը պարզապէս ժամանակի խնդիր է» (1922, 17 փետ.): Ըստ այդ հոդվածի, թուրքերն ի վիճակի չեն հույների դեմ նոր հարձակումներ կազմակերպելու, «հակառակ այն ամէն աջակցութեանց, զորն Ֆրանսա կը շռայլէ թուրքերուն»: Սպրիչ հոդվածը նպատակ ուներ ապակողմնորոշել և Հունաստանին, և նրա հաղթանակների հետ հույսեր կապող փոքրասիական ու Պոնտոսի չրջանների հույն և հայ ազգաբնակչությանը՝ միաժամանակ վարկաբեկելով նրանց աչքին Մերձավոր ու Միջին Արևելքում Անգլիայի ախոյան Ֆրանսիային: «Արևելյան մամուլը» 1922 թ. սկզբներին դեռևս հավատում էր Անգլիայի հակաթուրքական, ավելի չուտ՝ հակաքեմալական կեցվածքին, չնկատելով, որ այդ երկիրն իր քաղաքական շահախնդրությունները առնչում է Կ. Պոլսի կառավարությանը՝ ի հակակշիռ Անկարայի: Այս է պատճառը, որ 1921–1922 թթ. Արևմուտքի դեմ թերթի հույսները մեծ մասամբ ուղղված են դեպի Ֆրանս-թուրքական հարաբերությունները: «Կծիկը կը քակուի» հոդվածում Հ. Մամուրյանը նկատում էր, որ ֆրանսիական սենատում հայտնի է դարձել Բեմալին 7 մլն ֆրան-

կի պնդք ու պինամթերք հանձնելը, որի մեջ մեղադրվում էր Ֆրանսիական կառավարությունը: Ֆրանսիան, գրում է նա, այդ գործարքը պատրաստի էր պահել իր դաշնակից Անգլիայից (1922, 16 փետ.): 1922 թ. մայիսին, հիասթափված Ջենովայի համաժողովի (1922 թ. ապրիլի 10-մայիսի 19) ընթացքից, որի օրակարգում չկային ոչ Հայկական հարցը և ոչ էլ Լոնդոնի համաժողովում հավուր պատշաճի հիշված «Հայկական տան» տխրահռչակ խայծը, Հ. Մամուրյանն իր հայացքն ուղղում էր մերթ դեպի անգլո-հունական անդո համագործակցությունը և մերթ էլ նույնքան անիրականալի անգլո-խորհրդային դաշինքի հնարավորությունը:

«Արևելյան մամուլում» թեև ցածր, բայց և լսելի են հայկական ավանդական դյուրահավատության նոտանները Ֆրանսիայի կողմից իր նախապատերազմական դիրքին վերադառնալու, քեմալականների հետ կապերը խզելու հնարավորության վերաբերյալ: Թերթի մի հեղինակ հենց այդպես էր պատկերացնում այն ուղին, որով ընթանալով և Կիլիկիան վերագրավելով, Ֆրանսիան պետք է սրբի իր ճակատի «մուրը, որ փակցուեցաւ Պույեօնի, Պրիանի, Կուրօի կենսախանձ մատներով» (1922, 17 մյս.):

Որքան էլ զարմանալի է, ինչ-որ տեղ այս անհիմն մտայնությանը տեղի տվեց նաև Հ. Մամուրյանը, որը եվրոպական երկրների և Ռուսաստանի միջև հակամարտությունների ակնհայտ խորացումը սթափ դիտարկելով հանդերձ, կտրուկ անցնում էր ցանկալիի բնապատումին, իր հերթին ակնկալելով, որ Ֆրանսիան մի կողմ կթողնի իր թուրքասիրական նախասիրությունները և կմիանա Անգլիայի ողջամիտ քաղաքականությանը՝ ընդդեմ Թուրքիայի (1922, 19 մյս.):

«Արևելյան մամուլը» հանգամանալի քննության է առել հայ մամուլը զբաղեցնող առանցքային խնդիրներից մեկը՝ Կիլիկիայի հայության հարցը: Այս թեման թերթին հուզում էր ընդհուպ մինչև 1922 թ. աշուն՝ զմյուռնահայ համայնքի վերջին օրերը, որովհետև Կիլիկիայի զարգացումները նախանշում էին և առաջին հերթին իրենց ողբերգական լարվածությամբ՝ Հայկական հարցի

վիակուղին: Ֆրանսիական քաղաքական ու իրավական նահանջը և ապա նրա ռազմական ուժերի հեռացումը Կիլիկիայից, նշանակում էր եվրոպական քաղաքական օրակարգում Հայկական հարցի սառեցման սկիզբ, Սևրից տերությունների հրաժարման գործնական քայլ, որ հուսահատության էր մատնելու հայ ազգային քաղաքական կուսակցություններին, նրանց պաշտոնական, թե անպաշտոն հրատարակությունները: Ցեղասպանության ենթարկված ու ավերված Արևմտահայաստանը վերստին հայաբնակ դարձնելու, ժողովրդին այնտեղ կենտրոնացնելու ազգային հեռանկարը դառնում էր առավել անիրական ու անրջային՝ 1918-ի վերջերից և 1919-ի սկզբներից ի վեր՝ Կիլիկիայում համախմբվելու փորձող հայության նոր արհավիրքներով, կոտորածներով ու վոչիացմամբ: 1920 թ. վերջերին «Կիլիկեան լուրեր» խորագրի ներքո «Արեւելյան մամուլը» պարբերաբար տեղեկատվություն էր տալիս թուրքերի հետ Կիլիկիայում հայերի դինված ընդհարումների, տարածաշրջանը թուրքերին հանձնելու հակամետ ֆրանսիական ռազմական իշխանությունների գործողությունների[1], Կիլիկիայում քեմալականների հարաճուն բռնությունների և այլնի մասին: Թուրքական իշխանությունները ֆրանսիացիների՝ Մարաշը թողնելուց հետո, 1920 թ. սկզբին ուժեղացրին ճնշումները նաև զեյթունցիների վրա՝ մեկուսացնելով նրանց փոքրաքանակ ուժերը[2]: Քեմալական անհամեմատ ուժերի դեմ ութ ամիս հերոսաբար մարտնչող հաճընցիները դատապարտված էին ողբերգական կործանման[3]:

---

[1] 1919 թ. աշնանից սկսած, ֆրանսիական հրամանատարությունը այդպիսի գործողություններ ձեռնարկեց Մարաշում, որտեղ վերադարձել էին 25 հազարի չափ հայեր: Ֆրանսիացիներն արգելում էին լեգիոնական հայերին՝ պաշտպանելու իրենց հայրենակիցներին քեմալականների հարձակումներից (տես Martyrdrom and Rebirth Fateful Years in Recent Armenian History, p. 51): Ֆրանսիացիների կողմից Մարաշը լքելը և տեղի հայ հերոսական ինքնապաշտպանությունը պարտության դատապարտելը, ինչպես նկատում է լավատեղյակ հեղափոխողը, «պայմանավորված էր Ֆրանսիայի՝ Կիլիկիան Թուրքիային վիջելու և Սիրիան պահելու դրդապատճառով» (Գասպարյան Ռ., նշվ. աշխ., էջ 97):

[2] Պողոսյան Հ. Մ., Զեյթունի պատմությունը, էջ 412:

[3] Սահակյան Ռ., Ցեղասպանության պատմությունից, էջ 207:

«Արևելյան մամուլն» ընթերցողին տեղյակ էր պահում Կիլիկիայի զանազան անկյուններում՝ Մերսինում, Սուետիայում, Ադանայում և այլուր հայ բնակչության հույժ դժվարին կենցաղի, հիվանդությունների և այլնի մասին՝ մշտապես ուշադրության կենտրոնում պահելով նրա ազգային իրավիճակը, քեմալական իշխանությունների և սրանց խաղալիք թուրքական ամբոխի վերաբերմունքը հայերի նկատմամբ: 1921 թ. ապրիլին Կիլիկեցին նկատում էր («Կիլիկեան արձագանգ» խորագրով) ֆրանսիացիների դատապարտելի անտարբերությունը Ադանայի հայերի հանդեպ, երբ նրանց քթի տակ թուրքական իշխանություններն ու ջարդարարները ընդլայնում էին քաղաքը հայաթափ անելու գործողությունները: Թերթը հայտնում էր, որ ֆրանսիացիները պաշտոնապես իրազեկել են Ադանան, Տարսոնը, Մերսինը, Այնթապը, Ուրֆան և Դյորթ Յոլը թողնելու մասին: Հանդամանալի տեղեկություններ են տրվում Մերսինի իրադարձությունների վերաբերյալ, երբ նախքան քեմալական չեթեների մուտքը քաղաքում «կարգ մը թուրքեր կը լրտեսէն յոյներու ու հայերու չարժումները և կը տեղեկագրեն չեթէներու» (1921, 30 ապր.): «Կիլիկեան արձագանգում» նշվում է, որ 1921 թ. հունիսին թուրքերը մտել են Զեյթունն, իսկ զեյթունցիները՝ թվով 1200 մարդ, քաշվել էին բնակավայրից և ապաստանել շրջակա լեռներում: Հաճընից, Ամանոսից, Մարաշից ու Սսից հետո հերթը հասել էր Զեյթունին և տակավին դիմադրող այդ բեկորները «Կիլիկեան կեդրոն մը փոխադրելու համար» (1921, 22 հլս.):

Զեյթունի ողբերգության մասին, ի դեպ, ջերմ հոդված էր տպագրել Զմյուռնիայի հունական «Թելեգրաֆոս» թերթը, որի համար նրան իր չնորհակալությունն էր հայտնել Մ. Սվազլըն (1921, 7 օգ.): Ճանաչողական որակներ ունեն, մանավանդ, «Արևելյան մամուլի» թղթակցությունները Զեյթունի վերջին տարիների (1919–1921) կացության մասին, որոնք բացահայտում են թուրքերի, քրդերի, չերքեզների և ավշարների դեմ զեյթունցի հայերի մղած համառ պայքարի վերջին դրվագները: Թերթն այս իրադարձությունների հետնախորքում տեսնում էր Քեմալի հանդեպ

Ֆրանսիական նոր դիրքորոշման քաղաքական շարժառիթները և ամենից առաջ այն, որ Ֆրանսիան «ջատագով կը կանգնի Թուրքիոյ հողային ամբողջականութեան, անոր վերադարձնել վախճանելով Կիլիկիան, Իզմիրը և Թրակիան ալ», որպեսզի ապահովի իր դիրքերը Սիրիայում (1921, 16 դկտ.): Թևրթը խորին անբավականութեամբ է ներկայացնում ֆրանսիական պեներալ Դյուֆոյի այն հայտարարութիւնը, որ նա արել էր Կիլիկիայի տարբեր վայրերից Ադանա եկած հայ ներկայացուցիչներին, ըստ որի, իբր, գալթելու պատճառ չկա, քանի որ իրենք մինչև 1922 թ. հունվարի 4-ը վերահսկելու են իրադրութիւնը: Շանթահար ժողովրդին այլ բան չէր մնում, քան լքել Կիլիկիան (1921, 14 դկտ.): Նույն օրերին Կիլիկիան թուրքերին հանձնելու որոշումը լիովին արտահայտվեց ֆրանսիական զորահրամանատար Գուրոյի հայտարարութիւններում: Գուրոն «մեծ զորավար» էր հռչակում Քեմալին (ակնհայտ բար, սրան դեռևս հակակրող անգլիացիներին խոցելու համար) և հայտնում էր, թե նրա կառավարութիւնը խոստացել է կյանքի, ինչքի և ազատութեան երաշխիքներ Կիլիկիայի բոլոր բնակիչներին, ուստի պետք է նրան վստահել և մնալ տեղերում (ն. տ.): Այս դեներալն, ի դեպ, մերժում էր առհասարակ հայերի հավակնութիւնները Կիլիկիայում: Ժամանակին նա առաջարկել էր Հայկական լեգիոնը վերակազմել Արևելյան լեգիոնի, որ կընդգրկեր Թուրքիայում բնակվող բոլոր ազգութիւններին[1]*:*

Կիլիկիայում դեպքերի ընթացքին ուշադիր հետևող «Արևելյան մամուլն» անդրադառնում էր ոչ վաղ անցյալի դեպքերին ևս՝ հանրագումարի բերելով հարցի պատմութիւնը: Այդպիսին էր Վ. Կյուրքճյանի ընդարձակ հոդվածաշարը՝ «Ֆրանքօ-քէմալական համաձայնագիրն ու կիլիկեցիք» վերնագրով, որ տպագրվեց Թևրթի 1921 թ. դեկտեմբերի – 1922 թ. հունվարի թվահամարներում: Հետևինակի հետ միասին Թևրթը եզրակացնում էր, որ Կիլիկիայի

[1] **Ованнисян Р. Г.**, Международные отношения Республики Армения 1918-1920 гг., с. 322.

դժբախտությունը թուրք-ֆրանսիական չահարկումների արդյունքն է:

Այդուհետև թերթը հետևում էր Կիլիկիայից հայերի գաղթին. տեղի 120 հազարանոց հայ բնակչությունը գաղթել էր Հունաստան, ԱՄՆ, Եգիպտոս, Կ. Պոլիս, Զմյուռնիա և այլուր (1922, 2 փետ.)[1]: Միայն Մերսինից Հունաստան էին տեղափոխվել 4000 հայ, հույն և սիրիացի փախստականներ, որոնցից 2400-ը՝ հայեր: Հ. Մամուրյանը գրում էր, որ Հոնիականի վրա այսօր ապրում է 30 հազարից ավելի հայություն, որոնց մեջ նկատելի է կիլիկեցիների հոծ զանգվածը (1922, 9 փետ.): Թերթը երախտագիտությամբ էր գնահատում Զմյուռնիայում հունական իշխանությունների, հատկապես կոմիսար Սթևլեադիսի մարդասիրական վերաբերմունքը հայերի հանդեպ, նրանց հոգածությունը գաղթականներին տեղավորելու և աշխատանքով ապահովելու գործում (1922, 19 հնվ.): Զմյուռնահայերին էլ «Արևելյան մամուլը» կոչ էր անում հոգատարությամբ շրջապատել գաղթականներին, նրանց աշխատանք տրամադրել, նշելով, որ պատվախնդիր կիլիկեցիք ամենից առաջ այդ են ցանկանում՝ տեղի բնակչության վրա բեռ չդառնալու համար (ն. տ.): Իր հետագա հրապարակումներում էլ թերթը իր ուշադրության կենտրոնում է պահում գաղթականների դժվարին վիճակի հետ կապվող խնդիրները, իսկ այդպիսիք շատ էին Մերսինից, Դյորթ Յոլից և այլ բնակավայրերից եկածների համար: Նրանց օգնությամբ զբաղվում էին ամերիկյան Նպաստամատույցը, Կարմիր խաչը, Սկաուտների միությունը և այլ կազմակերպություններ ու անհատներ: Ամերիկյան Նպաստամատույցը, ի դեպ, սկսել էր իրականացնել իր ծրագիրը Զմյուռնիայում արհեստանոց հիմնելով որբերի և կիլիկեցի գաղթականների համար: Կանայք ներգրավվել էին Այնթափի ասեղնագործական արտադրության մեջ: Զմյուռնիայում Նպաստամատույցի ներկայացուցիչ Քեյչըլը դործակցում

---

[1] 1920 թ. սկզբներին, Մարաշի ջարդի նախօրեին, 120 հազար հայ ապրում էր միայն Այնթափի վիլայեթում, իսկ ամբողջ Կիլիկիայում նրանց թիվը հասնում էր 150 հազարի (տե՛ս Սահակյան Ռ., նշվ. աշխ., էջ 110-111):

էր Ազգային որբանոցի վարչության հետ (1922, 5 փետ.): Զմյուռնահայությունը ևս ջանքեր չէր խնայում գաղթականներին ծածկի տակ տեղավորելու համար, տեղի քաղաքական ժողովից բացի, գործում էին նաև անհատները: Վաճառական Վ. Պալեոլյանը գաղթականներին էր տրամադրել իր ընդարձակ մթերանոցը, իսկ դրամատեր Զ. Պաքրճյանը ձեռնարկել էր տաղավարներ կառուցել՝ նույն նպատակներով: Բավական թվով կիլիկեցիներ օթևան գտան զմյուռնահայերի հատկացրած բնակարաններում (1921, 14 դկտ.): Այստեղ ստեղծվել էր Գաղթականաց առաքման հանձնախումբ, որը նպաստում էր Զմյուռնիայից մեկնել ցանկացողներին:

Սթափ վերաբերմունք ունեին զմյուռնահայ համայնքը և նրա մտավորականությունը քաղաքում հունական բանակի ներկայության հանդեպ, որին համարում էին օսմանյան տիրապետությունից ազատվելու, Հայկական հարցի լուծման երաշխիք՝ այն բանից հետո, երբ 1919 թ. մայիսի 16-ին նշված բանակն ափհանվել էր Էգեյանի այդ նավահանգստում[1]: Հ. Մամուրյանի՝ ոչ առանց հիմնավորված կարծիքի, հունական զրավումը ևնթադրում էր Թուրքիան բաժան-բաժան անելուն ուղղված Արևմտյան տերությունների ծրագրի իրականացման գործընթացի սկիզբ: Ավելին, հունական բանակը հենց կայսրության քրիստոնյաներին թվում էր նրաշխիք այն բանի, որ Փոքր Ասիայի արևմտյան հատվածում կվերջվեն քեմալական հավակնությունները թուրքական տիրապետությունն այդտեղ վերականգնելու ուղղությամբ: Հունաստանի և հայության ձգտումների համերաշխության դաղափարով էր համակված նաև «Արևելյան մամուլի» տպագրած՝ ժնևի համալսարանի դասախոս Էվդոքիմո Դուրմուշի «Հայկական եւ յունական իրաւունքները Արեւելքի մէջ» վերնագրով հրապարակումը՝ ուղղված Ազգերի լիգայում ֆրանսիական պատվիրակ Վիվիանիին (1920, 24 դկտ.): Դուրմուշը նկատում էր, որ Հունաստանը ստանձնել է Արևելքում քաղաքակրթության տարածողի դերակատարությունը և Ազգերի

[1] Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, հ. 1, էջ 472:

լիդայլին խնդրում էր աջակցել հունական բանակին՝ քեմալականների չարժումը չախչախելու համար: Միայն այդ դեպքում հնարավոր կլինի «Արեւելքի վերջնական անդորրութիւնը եւ միեւնոյն ատեն դժբախտ ու մարտիրոս Հայաստանի ազատութիւնը ապահովել»,- եզրափակում էր հեղինակը:

Վերջին դիտողությունը համահունչ էր Արևմտյան Հայաստանի տարածքներում հայկական պետություն ստեղծելու՝ «Արևելյան մամուլի» ոչ միայն բաղձանքներին, այլև տագնապներին՝ Ազգերի լիգայի ցուցարերած այդպիսի հետանկարի հանդեպ որոշակիորեն նկատելի անտարբերության պայմաններում: 1920-ի վերջերին այս ոգով տպագրված քննադատական հրապարակումները՝ ուղղված Ազգերի լիգայի կողմից թուրքերին սիրաշահելու քաղաքականության դեմ, ցույց են տալիս, որ Հ. Մամուրյանը դրանից դեռևս առաջ ընկալել էր Սևրից հրաժարվելու արևմտյան դիրքորոշումը: «Նա» ստորագրությամբ իր քրոնիկներից մեկում Հ. Մամուրյանը Ազգերի լիգան արդեն որակում է որպես «կատարեալ անանկութիւն մը»՝ նկատի առնելով տերությունների ոչ միայն այդպիսի կեցվածքը, այլև Սևրի դաշնագրով իր ստանձնած պարտականությունները կատարող Հունաստանին միայնակ թողնելու նրանց քաղաքականությունը (1920, 25 դկտ.): Նույն ոգով «Արեւելյան մամուլը» տպագրեց Հունաստանի նախկին վարչապետ Վենիզելոսի հայտարարությունը՝ Արևելքում առանց Սևրի դաշնագրի խաղաղության անհնարինության մասին: Հունական անցուդարձերին, բանակին ու ռազմական գործիչներին թերթի հաճախակի անդրադարձները ևս ցույց են տալիս, որ Հ. Մամուրյանը էգեյանի առափնյա տարածքներում և Թրակիայում հունական ներկայությունը համարում է վտանգված, ճիշտ այնպես, ինչպես կասկածով էր լցված ապագա Հայաստանի հարցում տերությունների բարի մտադրությունների նկատմամբ: Սակայն այս պայմաններում իսկ «Արևելյան մամուլը» կիսում էր հունական պատրանքները Անգլիայի և Լլոյդ Ջորջի հանդեպ: 1920 թ. վերջերին թերթը հաճախ էր վկայակոչում անգլո-հունական մերձեցումները և այս նույն

մղումներով Անգլիային էր վերապահում հայոց միակ բարեկամի դերը՝ խաբվելով Սևրը պաշտպանող բրիտանական հավատիացումներից: Ինչ-որ չափով թերթը պետք է հրաժարվեր նաև իր այս վերջին սպասելիքներից՝ արդեն 1921 թ. կեսերին, երբ ակնհայտ էր դարձել, որ Թուրքիայի ամենաազդեցիկ քաղաքական դեմքը Քեմալն է: Հ. Մամուրյանն այս օրերին արդեն մեղադրում է, թեկուզ և հետին թվով, Վերսալի պայմանագիրը կնքող տերություններին, որոնք երկրորդական խնդիր համարելով Արևելյան հարցը՝ անտեսելով այն իրողությունը, որ «Փոքր Ասիոյ մէջ կը կազմակերպուէր թիւրք ազգայնական չարժումը՝ մեղսակցութեամբ Պոլսոյ կեդրոնական կառավարութեան» (1921, 23 Հնս.):[1]

Հ. Մամուրյանն իր հիասթափությունն էր հայտնում Հունաստանը մեկուսացնող տերությունների քաղաքականությունից, որով նրանք թուրքերին էին հանձնում փոքրասիական հույն և հայ ազգաբնակչության ճակատագիրը՝ հանուն իրենց անմիտական շահերի: Եվրոպական տերությունների և սրանց ու ԱՄՆ-ի միջև եղած հակասություններն էին, իրավացիորեն մակաբերում էր Հ. Մամուրյանը, որ Քեմալին թույլ տվեցին 1921 թ. մարտին Անկարայի ազգային ժողովում հայտարարելու, որ այլևս Սևրի դաշնագիրը գոյություն չունի, այն արդեն Թուրքիային կարող են պարտադրել միայն ուժի միջոցով և որ «այն ազգերը, որոնք 1918-ին ստորագրեցին զինադադարը, անոնց մէջ միայն Թիւրքիան է, որ յաղթական հանդիսացաւ պարտուած ազգերու չարքին մէջ» (նշ. տ.):

Այս պայմաններում մնում էր միայն Հունաստանը, որը վճռորեն միայնակ էր մնացել Թուրքիայի հետ դեռևմարտում և որի դրական ելքի հետ էր կապում «Արևելյան մամուլը» տարածաշրջանի հայ և հույն բնակչության ապագան: Եվ թերթը տպագրում է այս երկու ազգերի համագործակցության թեմաներով նյութեր՝

---

[1] Կ. Պոլսի կենտրոնական և Անկարայի կառավարությունները 1921 թ. Լոնդոնի կոնֆերանսում Արևմուտքին արդեն ցուցադրում էին իրենց փոխհամաձայնեցված գործողությունները՝ հանդես գալով միասնաբար: Կոնֆերանսը փակվեց առանց Հունաստանի և Թուրքիայի միջև հաշտության համամաձայնության, որին հետևեց նրանց վերսկսված պատերազմը (տե՛ս Ататюрк К., Избранные речи и выступления, с. 419).

փորձելով լավատեսությամբ համակել ընթերցողին: «Հայերը բանակին մէջ» հոդվածում տեղեկություններ են տրվում այն մասին, որ Ռոդոստոյի շրջանում հայերը համալրում են հունական բանակի շարքերը: Հ. Մամուրյանը կարևորում է Փոքր Ասիայում հույն-հայկական դաշինքը՝ հիմնված փոխադարձ շահերի վրա: Թրակիայի հայերին զորակոչելու մասին հունական կառավարության որոշման առթիվ նա իր դոհունակությունն էր հայտնում այդ համագործակցության գործնական ընթացքի համար՝ նկատելով, որ «հիմայ Յունաստան կը բաղձայ դաշնակից մը Ասիոյ մէջ՝ չէզոքացնելու համար թուրանական ցեղերու արշաւները» (1921, 8 օգ.): Ամյուռնահայությունը իր դգալի աջակցությունն էր բերում քաղաքի հունական իշխանություններին՝ հունական բանակի զինվորներին նյութական ու բարոյական օգնություն ցույց տալով: Ամյուռնացի հայ կանայք տեղի հելլենուհիների հետ միասին կազմակերպել էին «Զինուորին քոյրը» հանձնախումբը, որը զինվորների համար դրամ, սպիտակեղեն և այլ անհրաժեշտ ապրանքներ էր հայթայթում (1921, 7 օգ.): 1921 թ. կեսերին թերթը լավատեսությամբ էր համակված հույների ռազմական հաջողությունների նկատմամբ, մանավանդ Քյոթահիայի և Էսքիշեհիրի մոտ նրանց հաղթանակների շրջանում: Սակայն նույն թվականի վերջերին՝ թուրքական լուրջ դիմակայության պայմաններում թերթի լավատեսությունը դառնում է շատ ավելի զուսպ, նրա լրատվության մեջ աւանձնանում են քեմալականների կողմից վերահսկվող տարածքներում հայ բնակչության ծանր կացության վերաբերյալ տեղեկությունները: Սեբաստիայից տեղահանվել էին 15 հազար հույնը՝ քշվելով երկրի խորքերը, իսկ Սամսունի շրջակայքում քեմալականներն ավերել էին հունական գյուղերը, որի ընթացքում նրանք նույնպիսի բռնություններ էին գործադրում հայերի նկատմամբ: Թուրքական իշխանություններն ամերիկյան Նպաստամատույցին կտրականապես արգելել էին որևէ օգնություն ցույց տալ հույներին և հայերին: Ամասիայում գործում էր քեմալական ռազմական դատարանը, որը կեղծ վկայություններով տեղի հայերին ու

հույներին ոչնչացնող վճիռներ էր արձակում: «Արևելյան մամուլը» հայտնում էր, որ այդ քաղաքի «ատեանը վերջերս 155 հայ եւ յոյն ամբաստանեալներ կախաղան բարձրացուց» (1921, 14 դկտ.): Թերթը չէր զսպում իր հիասթափությունն այն բանից հետո, երբ եվրոպական տերությունները Հունաստանին առաջարկեցին թողնել գրավված փոքրասիական տարածքները: Դա նշանակում էր մահացու վտանգի առջև կանգնեցնել այդ վայրերի հույն և հայ ազգաբնակչությանը, որն իրեն ապահով էր զգում միայն հունական վարչության պայմաններում: Ավելին, Թերթի դատողություններում արդեն 1921 թ. վերջերին զգացվում են հուսահատական տրամադրություններ. Իսկ եթե հունական բանակը պետք է նահանջի, ապա հարկ է նախ փոխադրամիջոցներ բերել Զմյուռնիայի նավահանգիստ, «քրիստոնեայ ժողովուրդը ապահով վայր մը փոխադրել եւ յետոյ բարբարոսին յանձնել երկիրը» (1921, 17 դկտ.): Այս առթիվ Թերթն անդրադառնում էր Զմյուռնիայում ապաստանած հայ գաղթականներին, որոնց օգնում են հունական իշխանությունները՝ կոմիսար Սթերնադիսը և մյուսները:

«Արևելյան մամուլը» ողջունեց 1922 թ. մայիսին Հունաստանի կառավարության որոշումը՝ ինքնավարություն շնորհել Հոնիական շրջանի, այդ թվում և Զմյուռնիայի բնակչությանը: Մայիսի 28-ին Զմյուռնիայի հայոց առաջնորդարան էր այցելել հունական վարչության ընդհանուր քարտուղար Կանարակիսը, որը շնչեց էր այն, որ տերությունների հավանությամբ Զմյուռնիան ու նրա շրջակայքը գրաված Հունաստանը հետամուտ չեղավ իրեն միացնելու այդ տարածքները և այժմ, մտահոգված տեղի բնակչության ապահովությամբ, ինքնավար է հռչակում այդ տարածքները (1922, 30 հլս.): Ինքնավար հույն, հայ և թուրք հանրությունների համար հռչակվում էր լիակատար իրավահավասարություն, որի պայմաններում նրանցից յուրաքանչյուրն ունենալու էր իր ներքին վարչությունը:

Ակներև էր, որ Հունաստանը Քեմալի դեմ դնում էր իր վերջին՝ բարոյական պատվարը, բարի կամքի դրսևորումը տեղարնակ ազ-

ղերի հանդեպ, և մյուս կողմից, Եվրոպայի առջև ցուցադրում էր իր հավատարմությունը եվրոպական արժեքներին: Բայց դա նշանակում էր նաև ռազմավարական ծրագրի ձախողման խոստովանություն: Հույն բարձրաստիճան պաշտոնյան թեև հավատացնում էր, թե հունական բանակն այստեղից չպետք է մեկնի, մինչև որ քեմալական վտանգը չվերանա, սակայն և հավելում էր, որ ինքնավար «նորակազմ կառավարությունը անդորրությունը եւ խաղաղությունը հաստատելուն պէս՝ հելլէն բանակը պիտի ցրուէ» (Ն. տ.):

«Արևելյան մամուլին» այլ բան չէր մնում, քան դրականապես գնահատելու ինքնավարության վերաբերյալ հասկանալի տագնապները ծնող այդ որոշումը:

Հունական ռազմական իշխանությունների կողմից բնակչության հանդեպ ցուցաբերած մարդասիրական վերաբերմունքը ըստ ամենայնի արտահայտում էր 1921-ի գարնանը Զմյուռնիայում գտնվող ռամկավար գործիչ Միհրան Սվազլըն: «Արևելյան մամուլն» արտատպել է նրա տված հարցազրույցը ամերիկյան «Դեյլի թելեգրաֆ» թերթին, որտեղ Մ. Սվազլըն դրվատում էր հունական հրամանատարության արդարացի և դեմոկրատական կեցվածքը տեղական բնակչության, այդ թվում և թուրքերի հանդեպ: Զմյուռնիայի կառավարիչ Սթերեադիսի իսկապես զուսպ և հավասարակշիռ գործունեությունը դրականորեն էր անդրադառնում հակասություններով լեցուն քաղաքի բնակչության վարքագծի վրա[1]: Սթերեադիսը, հայտնում էր նա, «ամէն դասակարգերուն հանդէպ արդարութեան բարձր ոգով տոգորուած է: Հակառակ որ իրեն տիզթաթորական իրաւասութիւնները տրուած են, ան նահապետական ձեւի մը վերածած է զանոնք և ըստ այնմ կը կառավարէ» (1922, 29 ապր.): Մ. Սվազլըն կանխում էր իրադարձությունների ընթացքը, երբ անդրադառնում էր Զմյուռնիան Քեմալին հանձնելու հնարավոր աղետին: Պրուսայի և Ուշաքի մեջ, նշում էր նա, կան ավելի քան 60.000 հայեր, որոնք գտնվում են հունական

[1] Milton G., Paradise Lost. Smyrna 1922: The Destruction of Islams City of Tolerance, p. 166-168.

դրավման գոտում: Նրանք չեն գոյատևի, եթե հույները հետ քաշվեն, իսկ նրանք այն տարրն են, որ ներկայացնում են քաղաքակրթության օրրանը: Ինչ-որ տեղ Սվազլըն կարծում էր, որ քաղաքակրթիչ այդ ժողովրդին կարելի է պահպանել՝ բաժանելով տարածաշրջանը հունական և հայկական գոտիների, արևմտյան հոգածության ներքո (1922, 30 ապր.):

Թալեաթի սպանության առթիվ Զմյուռնիայի ֆրանսիական «Լա ռևֆորմ» թերթին[1] տված իր մեկնաբանություններում Սվազլըն հայտնում էր, որ Ս. Թեհլիրյանը ոչ թե վրիժառու է, այլ արդարադատություն իրականացնող անհատ՝ գործելով Սևրի դաշնագրի համեմատ, որի վճռով Թուրքիան պարտավոր էր դաշնակիցներին հանձնել և դատել հայերի բնաջնջման պլխավոր կազմակերպիչներին: Մինչդեռ այդ որոշումը ոտնահարվել է, և «ցեղի մը գոյութեան դէմ» նետված ճիվաղները անպատիժ մնացել են Քեմալի հրոսախմբերին և չարունակում են երկրի ոչ թուրք տարրերը «վճացնելու» քաղաքականությունը և որոնց ներկայացուցիչները այսօր «ընդունուած են Լոնտոնի մէջ և ի պատիւ իրենց թնյասեղան տրուած է» (1921, 23 մրտ.):

Անտարակույս, Մ. Սվազլըն ներկայացնում էր Համաձայնության երկրների՝ Թուրքիայի հանդեպ հաշտվողական քաղաքականությունից խորապես դժգոհ ռամկավարների տրամադրությունները, որ նրա հետ լիուլի կիսում էր «Արևելյան մամուլի» խմբագիրը:

Հոնիականի ինքնավարության հռչակման առթիվ թերթը տպագրեց Հունաստանի կառավարության հրամանագիրը՝ վարչապետ Պրոպոպապատակիսի և կառավարության անդամների առարգրությամբ: Հրամանագրով ինքնավարության վարչական կազմակերպումը հանձնարարվում էր Զմյուռնիայի գերագույն կոմիսար Սթերեադիսին (նույն տեղում): Թե ինչպես է հետևել «Արևելյան մամուլը» ինքնավարության կազմավորմանն ուղղված՝ հետագա ամիսների ընթացքը, չենք կարող ասել, որովհետև մեր տրա-

[1] Հիմնել է Ստ. Ոսկանյանը 1869-ին և խմբագրել մինչև իր մահը՝ 1901 թ.:

մարդության տակ եղած թնրթի հավաքածուն ավարտվում է նույն՝ 1922 թ. հուլիսի 30-ի թվահամարով, որտեղ ծանուցվում է ինքնավարության հռչակման մասին: Ասենք, ինքնավարությունն էլ կարճակեցության էր դատապարտված. Հունական բանակը Զմյուռնիան լքեց օգոստոսի վերջերին, իսկ հաշվված օրեր անց քաղաք մտավ քեմալական բանակը[1]: Վրա հասավ Զմյուռնիայի աղետը՝ թուրքերի ձեռքով այրվեց Հայնոց թաղը իր ազգային բոլոր հաստատություններով: Կոտորվեց հույն և հայ ազգաբնակչության մեծ մասը, իսկ մնացյալ բեկորները հունական նավերով հեռացան կործանված քաղաքից:

*
* *

«Արևելյան մամուլը» չարունակում էր «Դաշինքի» ուղեգիծը մշտական բանակռիվը Դաշնակցության դեմ և որպես դրա տրամաբանական չարունակություն՝ նույն վերաբերմունքի տարածումը Հայաստանի Հանրապետության, նրա կառավարության և ապա իշխանությունից հեռացած այդ կուսակցության նկատմամբ: «Արևելյան մամուլը» գաղափարական տարաձայնությունները հաճախ հանդեցնում էր կրքի՝ Դաշնակցությանը մեղադրելով գրեթե ամեն ինչում, սկսած արևմտահայ կյանքին անտեղյակությունից մինչև համաձայնությունը իթթիհատի հետ, Հայաստանի Հանրապետության ստեղծումից մինչև հայ-վրացական ու հայ-ազերիական բախումները, անգամ ղարաբաղյան հիմնահարցի արծարծումը և այլն: Այսպիսի ժխտական վերաբերմունքը խորանում էր Հայաստանի Հանրապետության բուն իսկ գոյությամբ, որովհետև Հ. Մամուրյանի և նրա համախոհների կարծիքով, հենց իր գոյությամբ Հանրապետությունը հավակնում էր հանդես գալ որպես Արևմուտքի կողմից հայության տառապանքներին տրված փոխ-

[1] Զմյուռնիայի ողբերգական անցքերի պատմական անդրադարձը տե՛ս Houscpian M., The Smyrna Affair, New York, 1971. **Hovannisian R. G.**, Armenian Smyrna. In: Armenian Smyrna|Izmir. The Aegean Communities, pp. 2-4.

հատուցում, վերջինիս համար որպես հայրենիք նմանակող մի տարածք: Եվ այս հանգամանքը Եվրոպային ու ԱՄՆ-ին համոզմունքով էր համակելու, որ Հայկական հարցն այլևս լուծված է՝ այդպիսով վտանգի ենթարկելով Արևմտահայաստանի (և Կիլիկիայի) տարածքներում խոստացված, իսկ ավելի ուշ՝ Սևրի դաշնագրով ծրված Հայաստանի ստեղծման գործը: «Արևելյան մամուլի» այս համոզումն ավելի ամրապնդվեց Հայաստանի Հանրապետության Միացյալ և Անկախ Հռչակումից հետո՝ 1919 թ. մայիսին, Հանրապետության անկախության տարեգարձին: Ռ. Հովհաննիսյանն այս առթիվ իրավացիորեն նկատում է, որ «Հռչակագիրը, որ հղացված էր իբրև միասնության գաղափարի դրսևորում, իրականում սրնց տարաձայնությունները արևմտահայերի և արևելահայերի, ինչպես նաև դաշնակցական ու հակադաշնակցական ղեկավարների միջև»[1]: միջև»[1]:

Իր հերթին, Հ. Մամուրյանը նախ քննադատում էր Դաշնակցության «գրէթէ միանձնեայ» կառավարումը, որ նրան, իբր, կամայականության է դրդել. Այդ կուսակցության ղեկավարները «ռուսահայ դատին չպիտի կյէին թրքահայոց դատը, որ դարաւոր հանգամանք մը ունէր եւ երբէք պէտք չէր չփոթել Ռուսիոյ մէջ դէպքերու եւ դիպուածներու բերմամբ կազմուած հայկական հանրապետութեան մը կեղակարծ գոյութեան հետ» (1920, 28 դեկ.): Հ. Մամուրյանն այս հարցի վերաբերյալ շատ ավելի պարզ արտահայտվից փոքր-ինչ ավելի ուշ. «Եթէ այդ հայրենիքը (իմա՝ Հայաստանի Հանրապետությունը — Ա. Խ.) կերտուած չըլլար, հայութեան հայրենիքը այլուր պիտի կրնար հիմնուիլ եւ լիուլի գոհացում տալ թշուառ հայութեան» (1921, 1 հնվ.):

Հռչակագիրը բավական ազմուկ և հակասական տրամադրություններ էր բորբոքել նաև Կ. Պոլսում: «Արևելյան մամուլն» այս դիպքում վկայակոչում էր իր համախոհներին՝ լռության մատնելով Հռչակագրի կողմնակիցներին: Թերթի թղթակից Արգամ Անգեղա-

[1] Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, հ. 1, էջ 510-511:

ցին իր «Պոլսական նամականիում» բավականութեամբ էր հիշում Կ. Պոլսի Համազգային ժողովում (հարանվանութիւնների հետ միասին) այն միջադեպը, երբ քննարկվել էր Հայաստանի Հանրապետության նոր կարգախոսի հանդեպ վերաբերմունքը և Էսայան սանուց միութեան վարժարանի տնօրեն Խոճասարյանի կողմից «Դաշնակցութեան վրայ յարձակում մը եղեր էր» (1920, 29 դկտ.): Դաշնակցութեան դեմ բանավիճելիս թերթը վկայակոչում էր նույնիսկ մի այնպիսի թուլլ փաստարկ, որպիսին Անգլիայի կառավարող չրջանների, իբր, կասկածանքով համակված վերաբերմունքն էր այդ կուսակցութեան հանդեպ, այն դեպքում, երբ «Հայութիւնը Անգլիայէ կը սպասէ իր հայրենիքի վերահաստատումը» (1921, 2 հնվ.): Այս և այլ առիթներով «Արևելյան մամուլը» քանիցս բանավեճի մեջ է մտել Զմյուռնիայում հրատարակվող «Գոյամարտի» հետ:

ՀՀ ֆինանսական քաղաքականութիւնը ևս ղերծ չմնաց թերթի քննադատական հարձակումներից, հատկապես այն ժամանակ, երբ Ա. Խատիսյանը 1920 թ. սեպտեմբերին ժամանել էր Զմյուռնիա՝ ըստ երևույթին, ՀՀ կառավարութեյան կողմից արտասահմանում 20 մլն դոլարի փոխառութեյան ծրագիրը փութացնելու նպատակով[1]: Հայաստանի կառավարութիւնը, ոչ առանց չարախնդութեյան դատում էր Հ. Մամուրյանը՝ հավատարիմ վերջինիս հանդեպ իր վերաբերմունքին, եթե փոխառութեյան հարցում չհաջողի, ապա ինքը կմնա ձախողման պատասխանատուն, իսկ եթե հաջողութեյան հասնի, ապա այդ պետք է վերագրել արտասահմանի հայութեյան բարյացակամութեյանը (1920, 3 սպտ.): Այսուհանդերձ, նա լայնախոհութեյուն ունեցավ տպագրելու Զմյուռնիայի հունական

[1] Տե՛ս Դալլաքյան Կ., Ռամկավար ազատական կուսակցության պատմություն (1921-1940), գիրք 1,Ե., 1990, էջ 7: Ա. Խատիսյանը, ոչ առանց ճանաչողական հիմքերի, կարծում էր, որ անկախ Հայաստանի հանդեպ զմյուռնահայ համայնքը համակված է համակրական զգացումներով՝ անկախ այն բանից, որ նյութական դժվարություններ ուներ՝ հյուրընկալելով Զմյուռնիայում ապաստանած բազմաթիվ հայ գաղթականներին (տե՛ս Georgelin H., Armenian Inter-Community Relations on late Ottoman Smyrna. In: Armenian Smyrna/Izmir. The Aegean Communities, pp. 189-190).

«Թարոս», «Թելեգրաֆոս», «Ամալթիա» և այլ թերթերի բարեկամական անդրադարձները հայերի մասին՝ Խատիսյանի այդի առթիվ:

Նույն կերպ, «Արևելյան մամուլը» չէր զսպում իր հակակրանքը Փարիզում գործող Ա. Ահարոնյանի պատվիրակության նկատմամբ, հատկապես Հայաստանի խորհրդայնացումից հետո՝ այլևս անիմաստ համարելով նրա գոյությունը: Հ. Մամուրյանն օրինական էր համարում միայն Պողոս Նուբարի պատվիրակությունը՝ իբրև ազգի միակ ներկայացուցչի և այս առթիվ ևս չափազանցումներ էր թույլ տալիս Դաշնակցությանը տված իր որակումներում՝ պնդելով, որ վերջինս փորձել է բովանդակազրկել Նուբարի գործունեությունը Փարիզում: Հ. Մամուրյանն առհասարակ անտեսում էր հայկական գույդ պատվիրակությունների մի հայտնի չափով համագործակցությունը՝ բանը հասցնելով խորապես սխալ և ձախողակ այն մտքին, թե, իբր, «ռուսահայությունը միշտ արհամարհած ու իբր խորթ եղբայր մը նայած է թրքահայությեան, և որ այդ է ցույց տալիս նաև «ռուսահայ ժողովուրդին եւ ինտելիկէնտ դասակարգին վերաբերումը տաճկահայ խեղճ գաղթական ժողովուրդին հանդէպ» (1920, 7 դկտ.):

Արևմտահայերի անջատ դատի պաշտպանությունը «Արևելյան մամուլի» համար դարձել էր սևեռուն գաղափար՝ իր ամբողջ միակողմանիությամբ հանդերձ, որ կամա թե ակամա, վերածվում էր հատվածական նեղմտության, և որին տուրք էր տալիս տվյալ դեպքում այդ թերթի խմբագիրը: Եվ դարձյալ, այդ մտայնության տրվելով, Հ. Մամուրյանը իր «Ընդդիմուելիք քաղաքականութիւնը» հոդվածում պնդում էր, որ անորոշ ժամանակով պետք է լքել Ռուսահայաստանի դատը (եթե երբևէ այդպիսի դատ եղել է, հարցում էր նա) և ամբողջովին նվիրվել արևմտահայերի դատին (1921, 23 հնվ.): Վերջինս կապել արևելահայության հետ՝ կնշանակեր վտանգի ենթարկել այն և հրաժարվել Սևրի դաշնագրից, որին և հետամտում է Դաշնակցությունը, եզրափակում էր Հ. Մամուրյանը: Այդ կուսակցության քաղաքական գործունեությունը արտահայտելու նպատակով նա առաջարկում էր Բել-

զիայի, Չեռնոգորիայի և Սերբիայի օրինակով կազմել հայկական վոտարանդի կառավարություն՝ վարչապետ նշանակելով Պողոս Նուպարին, որի գլխավորած պատվիրակությունը դեռ գործում էր Փարիզում (նույն տեղում): Հայութիյանը նա կոչ էր անում իմբվել այս գաղափարի չուրջ, որի իրականացումը, նրա կարծիքով, վերջ կտար «ռուսահայոց և թրքահայոց» դատի չուրջ անհիմն դարձող վիճաբանութիյուններին:

Իրականութիյունը, սակայն, այս իմաստով հերքում էր թերթի չսպասվող սպասելիքները և Սևրի դաշնագրի վերարծարծումից, և Արևմտահայաստանի մանդատի, անգամ գաղափարի առարկայացումից: Կահիրեի «Արևից» արտատպած՝ Խ. Գուրյանի «Ուղեւորութիւն Կովկաս եւ Հայաստան» վերնագրով հոդվածում, խորին հիասթափութիյամբ ցույց է տրվում, որ ամերիկյան գեներալ Հարբորդը ԱՄՆ-ի կողմից ստանձնելիք մանդատի հարցում սև գործ է արել՝ չափազանցրած թվերով ներկայացնելով Հայաստանի «հոգածութիյան» (մանդատի) գինը, որ պետք է արժենար ԱՄՆ-ին 750 մլն դոլար, 60 հազարանոց բանակ՝ Հայաստանի սահմանները պաշտպանելու համար: Խ. Գուրյանը եզրակացնում էր, որ Հարբորդը, ի տես այդ վիթխարի ծախսերի, խրտնեցրել է ամերիկյան սենատին ու ժողովրդին (1920, 12 դկտ.):

*
* *

«Արևելյան մամուլը» հակակրական դիրքորոշում ուներ Խորհրդային Ռուսաստանի հանդեպ, որ գաղափարական անհամատեղելիութիյունից զատ, սնուցվում էր Արևմտահայաստանից ռուսական զորքերը հանելու, Արևմուտքի հետ Խորհրդային Ռուսաստանի քաղաքական սուր հակադրութիյունների իրողութիյունից: Բոլշևիկյան հեղափոխութիյունը թերթին թվում էր ժողովուրդներին ու աշխարհին սպառնացող մի հրդեհ, որ պատրաստ էր ճարակելու քաղաքակրթական արժեքները: Բոլշևիկյան իշխանութիյունը, ըստ այդմ, նրան պատկերանում էր իբրև Եվրոպայի անդորրը խաուսա-

կելու կոչված մի բանաիրություն, որի մոտալուտ հավակնությունն է Արևելքում կլանել Կովկասը, Փոքր Ասիան, Պարսկաստանը, Արևմուտքում՝ Արևելյան Եվրոպայի երկրները և այլն: Խորհրդային Ռուսաստան-քեմալականները մերձեցման մեջ Հ. Մամուրյանը տեսնում էր սոսկ ռուսական ծավալապաշտության ոգիմամարական հին ուղեգծի ընթացիկ փոփոխությունները, այն, որ բոլշևիկները պատրաստվում են Պետրոս Մեծի կտակն իրականացնել, «սա տարբերությամբ, որ փոխանակ Դանուբէն դիմելու նեղուցներ, այս անգամ Փոքր Ասիոյ մէջէն ճամբան յարդարել կը միտի» (1921, 1 հնվ.): Հ. Մամուրյանն առարկում էր գաղտնի պայմանագրերն ու ծածուկ դիվանագիտությունը մերժող բոլշևիկյան ձևակերպումներին, դրանք համարում անմիտ դարձված՝ աշխարհակալական հետին մտքեր փայփայող գաղափարախոսության համար:

1919–1920 թթ. Քեմալի և եվրոպական որոշ երկրների միջև քաղաքական տարաձայնությունների կարգավորման միտումները՝ համաձայնությունների տնօրով, Համաձայնության երկրների՝ Թուրքիայի հանդեպ ակնհայտորեն մեղմացած նրանց քաղաքականության դրսևորումները «Արևելյան մամուլին» հուշարկում էին, որ Քեմալը կռահել է բոլշևիկյան վերոհիշյալ քաղաքական ծրագրերը, ուստի հրաժարվել է Ռուսաստանի հանդեպ ունեցած երևմնի խանդաղատանքից: Մինչև 1921 թ. կեսերը թերթը գանվում էր Հայաստանի խորհրդայնացմանն ուղեկցող դեպքերի՝ բանութիյունների, Դաշնակցության և նրա գործիչների հանդեպ կիրառած անողորմ գործողությունների ծանր տպավորության տակ: Թերթի այս վերաբերմունքի մեջ, սակայն, տեղ գտած մեղմացումը երևում է 1921-ի աշնանը: Ուշադրավ է, որ «Արևելյան մամուլը» Կ. Պոլսի «Առավոտ» թերթից (վերակազմյալ հնչակյանների օրգանը) արտատպել է նկարիչ Սարգիս Խաչատուրյանի՝ խորհրդային Հայաստանից ստացած տպավորությունները ներկայացնող լրատվությունը: Այստեղ բնութագրվում են Հայաստանի կառավարության քաղաքականությունը, տնտեսությունն ու հատկապես կառավարության կազմը: Դրվատվում է Ալ. Մյասնիկյանի լայնախոհ դոր-

ծնլակերպը, որի շնորհիվ ժողովուրդը վստահում է նրան: Ս. Խաչատրյանը հայտնում է, որ «Միասնիկեան կրցաւ վերջակէտ դնել երիտասարդ քոմիւնիստներու եռանդին», և որ այժմ վերացել են Կասյանի օրերի սարսափները՝ հիմք տալով ասելու, թե «Երևանի կառավարութեան ներկայ պետերը հայ հայրենիքի և հայ ժողովուրդին լաւագոյն շահերովը խորապես տարուած եւ լուրջ մտածումի տէր մարդեր են» (1921, 4 հկտ.):

Խորհրդային Հայաստանի նկատմամբ Թերթի վերաբերմունքի այս փոփոխությանը բավականաչափ նպաստեց այն հանգամանքը, որ ՀՅԴ-ն և իշխանության եկած հայ բոլշևիկները հայտնվեցին թշնամական բարիկադների երկու կողմերում[1]: Իր վաղեմի հակառակորդների մասին Թերթը գրում էր, որ նրանք կատարում են համաձայնության երկրների կամքը՝ հակադրվելով Ռուսաստանին և որ Արևմուտքը ձգտում է նրանց միջոցով Հայաստանը դարձնել ռազմական հենակետ՝ ընդդեմ Ռուսաստանի (1920, 14 դկտ.): Սա հենց այն ժամանակն էր, որ «Արևելյան մամուլը» ձերբազատվում էր Արևմուտքի հանդեպ իր ունեցած պատրանքներից և մնում էր մտավոր այս դրամայի տրամաբանական չարունակությունը՝ բոլշևիկյան պետության հանդեպ երբեմնի վերաբերմունքի վերանայումը, որ տակավ առ տակավ պետք է զգացնել տար «Արևելյան մամուլի» հրապարակումներում: Այդուհետև ևս Թերթը հետևում էր Ռուսաստանի հանդեպ հարգալիր դիրքորոշման տեսակետին: Հայությունը, նկատում էր Թերթը, մերժում է հակառուսական կեցվածքը, որի հակառակն է ներկայացնում Ա. Ահարոնյանի՝ Փարիզում դտնվող պատվիրակությունը: Այստեղից ևս «Արևելյան մամուլի» քննադատական նոր չեչտաղրումները այդ պատվիրակության ու ՀՅԴ դեմ: Միաժամանակ նկատելի է Թերթի որոշ հրապարակումներում, հատկապես Զմյուռնիայի հունական մամուլից ար-

[1] Խորհրդային Հայաստանի հանդեպ «Արևելյան մամուլի» (և ոչ միայն նրա) հետևյալ ուրվագծվող հետաքրքրությունը սկիզբն էր այն իրողության, որ 1922-1923 թթ. պետք է վերաճեր առանցքային հարցի՝ սփյուռքահայ քաղաքական ուժերի և մամուլի համար (տե՛ս Դալլաքյան Կ., Ակնարկներ սփյուռքահայ հասարակական մտքի պատմության, էջ 5):

ված արտաքսումներում, մի հայտնի չափով հակաբոլշևիկյան ուղղվածությունը: Հունական մամուլի դիրքորոշումը հասկանալի էր՝ հատկապես Խորհրդային Ռուսաստանի կողմից Քեմալին ռազմական ու նյութական օգնություն ցուցաբերելու հետնախորքի վրա: Բայց և հասկանալի էր Զմյուռնիայում տեղակայված հունական զորքի ու ռազմական իշխանությունների հանդեպ տեղի հայերի խորապես համակրական վերաբերմունքը, որ չէր կարող չդրսևորվել նաև նրանց մտահոգություններին արձագանքելու ձևով: 1921–1922 թթ. «Արևելյան մամուլը» կարող էր ի հայտ բերել իր հակաբոլշևիկյան, բայց ամենևին էլ ոչ հակառուսական կողմնորոշումը: Այս իմաստով հետաքրքիր է Հ. Մամուրյանի «Երկու ճամբաները» վերնագրով հոդվածը, որտեղ հենվելով ռուս-թուրքական հին հակամարտությունների և ռուսական ծավալապաշտական պատկերացումների վրա (և որոնք զգալի էին դառնում Արևմուտքի հանդեպ իր հիասթափությունների խորացման համեմատ), նա չփոթում էր ենթադրյալն ու իրականը: Խորհրդային Հայաստանից նա ակնկալում էր սերտ համագործակցություն Խորհրդային Ռուսաստանի հետ, Վրաստանի ու Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորում, ուժեղ և մարտունակ բանակի ստեղծում, որ թույլ կտար «Ռուսիոյ օգնութեամբ և օժանդակութեամբ պրաւել Թրքահայաստանի նահանգները և հոնկէ վտարել Մուսթաֆա Քեմալներու հորդաները» (1920, 15 դկտ.): Եվ դարձյալ, դեռևս հավատարիմ մնալով անգլիամետ իր պատկերացումներին, Հ. Մամուրյանն ավելի էր կորվում իրականությունից, երբ կարծում էր, որ վերոհիշյալ պայմաններում Սևրի դաշնագիրը ստորագրած Անգլիան, հակառակ քեմալականների հետ բանակցող իր դաշնակիցների, գործելու ազատություն կտապահովի Խորհրդային Ռուսաստանին ու հայերին (1920, 16 դկտ.): Երկու օր անց թերթում տպագրած մեկ այլ հոդվածում Հ. Մամուրյանը Սևրի անեւևութացող դաշնագիրը փորձում էր չոշափելի դարձնել արդեն գուտ նևևութական մի այլ տեսակետով, ըստ որի, նախագահ Վիլսոնի քարտեզը դատա-

պարտված է թղթի վրա մնալու, եթե դրան չնպաստեն Անգլիան, Ռուսաստանը և Հունաստանը (1920, 18 դկտ.):

Ջմյուռնահայ վերջին թերթի խմբագիրը ցավալիորեն ընկնում էր հակասությունների մեջ՝ մի կողմից սնանկ ու անհեռանկար հռչակելով խորհրդային վարչակարգը, և մյուս կողմից՝ նրա քաղաքականությունից ակնկալելով իր ազգային երազանքների իրականացումը, մի կողմից նկատելով խորհրդային Ռուսաստանի և Արևմուտքի միջև առկա հակամարտությունները և մյուս կողմից ենթադրելով Անգլիայի հնարավոր դաշնակցությունը Ռուսաստանի հետ՝ հանուն Արևմտահայաստանի ազատագրության: Քաղաքագիտական մտածողությունն այստեղ տեղի էր տալիս բանասիրական պատկերացումներին՝ ազգային աղետներից հուսաբեկ խմբագրի հայեցության մեջ և այսօր, գրեթե հարյուրամյա հեռավորությունից, նրան քննադատելուց ոչ պակաս չափով, պետք է հաշվի առնել նաև այդպիսի պատկերացումներ ծնող քաղաքական բարդ ու խճճված պայմանները:

Իր հրատարակության վերջին ամիսներին «Արևելյան մամուլը» ազգային քաղաքական դատողությունների հիմնական առանցք էր դարձնում Հունաստանն ու հունական բանակը: Վրա էին հասել հուսախաբությունների խորացման նոր դործոններ. Ջենովայի համաժողովի (1922 ապրիլի 10-մայիսի 19) օրակարգում չկար Հայկական հարցը, անդամ Հայկական տան խնդիրը, որով չուրջ մեկ տարի առաջ հայերին սիրաշահել էին Լոնդոնի կոնֆերանսում: Եվ չիոթահար թերթը պնդում էր, որ Ազգերի լիգան չունի այս խնդիրները լուծելու իրավասություններ: Հայկական օջախի հարցը, պնդում էր թերթը, կարող է լուծել միայն հունական բանակը, եթե ստանա Անգլիայի աջակցությունը (1922, 12 մյս.): Հայկական հարցն ու Հունական հարցը (իմա՝ Թուրքիայի հետ պատերազմի խնդիրը) լծորդված են միմյանց, հարում էր Հ. Մամուրյանը, և այդ ճշմարիտ էր այնքանով, որքանով եվրոպական երկրների ու քեմալականների արդեն փոխհամաձայնեցված

քաղաքականության դալարներում ընդամենը մի քանի ամիս անց պետք է խեղդվեին և մեկը, և մյուսը:

*
* *

Իրև օրաթերթ, «Արևելյան մամուլը» լայն տեղեկատվություն է տվել Զմյուռնիայի և մասամբ՝ նրա շրջակայքի հայ բնակչության հասարակական կյանքի մասին: Գաղթօջախը, ընդհուպ նրա ոչնչացումը քեմալականների կողմից, ապրում էր ազգային սահմանադրությանը համապատասխան ընտրված ազգային կառույցներով (դավառական վարչություն, տնտեսական ու քաղաքական ժողովներ՝ իրենց խորհուրդներով, առաջնորդարան), դպրոցներով, բարեսիրական ու մշակութային հաստատություններով: 1919 թ. մայիսի կեսերին, երբ հունական զորքը մտավ Զմյուռնիա և դրան հետևեցին Կիլիկիայից այստեղ տեղափոխված որբերի ու փախստականների խմբերը, համայնքի առջև դրվեց նրանց ապաստան տալու խնդիրը, որով կարևորվեց քաղաքական և տնտեսական ժողովների նշանակությունը: 1921–1922 թթ. առաջին կեսին հույների ռազմական անհաջողություններից հետո զգալիորեն ուժեղացավ նաև շրջակայքի հայերի հոսքը Զմյուռնիա[1]: Եվ այս պայմաններում առաջացան բազմաթիվ անհապաղահարելի դժվարություններ՝ վերոհիշյալ ազգային կառույցների համար: Այսուհանդերձ, մինչև 1922 թ. մարտ-ապրիլ, երբ արդեն հայտնի էր դարձել, որ հույները թողնելու են Թրակիան ու Զմյուռնիան, սահմանադրական մարմինները շարունակում էին գործել սովորական կարգուկանոնով: Տնտեսական խորհուրդը լծված էր ազգային հիմնարկնե-

---

[1] Հունական զորքի նահանջի պայմաններում՝ 1922 թ. օգոստոսին այրվեցին Զմյուռնիայի կից մի քանի հայաբնակ բնակավայրեր, ինչպիսիք էին Ալաչեհիրը, Նազիլլին, Գասապան, իրդեհվել էին Կարահիսարից մինչև Մանիսա ընկած և հունական բանակի կողմից պարպված քաղաքներն ու գյուղերը՝ կարծեք նախանշելու Զմյուռնիայի մոտալուտ աղետը: Խումբապահար քրիստոնյա բնակչությունը լցվում էր Զմյուռնիա (տե՛ս Տօքտ. Կարապետ Խաչերեանի օրագիրը. Զմիւռնիական արկածներս 1922-ին, էջ 4-5):

րի մատակարարման գործին՝ չարունակ իրենց զգացնել տվող անբավարար նյութական պայմաններում: Համայնքին պատկանող տները, վարձով տրված չինուԹյուններն ու այլ կալվածքները նոր իրադրուԹյան մեջ չէին կարող գոհացնել անգամ առկա նվազադույն պահանջները:

«Արևելյան մամուլի» էջերում արտացոլվել են տնտեսական կյանքի այս սուր խնդիրները, որպիսիք մեղմելուն էին հետամուտ ԹերԹի հորդորական կամ քննադատական բնույԹի հրապարակումները՝ ազդակիցների ծանր վիճակը ինչ-որ չափով Թեթևացնելուն մտահոգուԹյամբ: Գրեթե ոչ մի նշանակուԹյուն չունեցավ քաղաքական ժողովի սահմանած «Հայրենիքի տուրքը»՝ հօգուտ որբերի, որոնց Թիվը 1921 Թ. գարնանը Զմյուռնիայում հասնում էր 500-ի (1921, 8 ապր.): Հ. Մամուրյանը, ելնելով տուրքի ձախողումից, կարծում էր, որ մասամբ մեղավորը դրա անունն է, քանի որ ժողովուրդը չգիտի, Թե իր վճարած դրամը ինչին է հատկացվելու: Նա առաջարկում էր այն վերանվանել «որբանոցի տուրք»՝ մատչելի չափերով (1922, 14 փետ.): Առաջարկը, սակայն, ուշացած էր՝ քաղաքի հայուԹյան տագնապների, մոտալուտ աղետների սրված զգացողուԹյան պայմաններում: Դժգոհելով տուրքի անբավարար արդյունավետուԹյունից, Հ. Մամուրյանը կոչ էր անում այս գործը դնել կազմակերպված հունի մեջ, ստեղծել հանգանակուԹյան կենտրոն և այստեղ ուղղել տարբեր կարիքների համար անհրաժեշտ դրամները: Զմյուռնիայում, հիրավի, գործում էին մի քանի բարեսիրական ու որբախնամ ընկերուԹյուններ՝ «Կանանց աղքատախնամը», «Հովիտսիմեան կրԹասէրը» և Կորդելիոյի[1] «Տիկնանց խնամակալուԹիւնը»: Այս կարուցյալների կյանքը Թեթևացնելուն էին հետամտում նաև կարմիր խաչի հանձնախմբի և սկաուտների միուԹյան ջանքերը: Որոշ չափով որբերի խնամքն իրականացվում էր համայնքի միջոցներով ու անհատական նվիրատվուԹյուններ-

[1] Կորդելիո, Զմյուռնիայի արվարձան, որի անունը տրվել է ի հիշատակ 1189-1199 թթ. գահակալած անգլիական թագավոր Ռիչարդ Առյուծասրտի (Coeur de Lion), (տես Ատաթուրք Կ., նշվ. աշխ., էջ 421):

րով, առանց որի չէին կարող գործել ոչ ազգային կեդրոնական որբանոցը և ոչ էլ աղջկանց որբանոցը՝ իրենց խնամակալությունների: Վերջինիս խնամակալությունը հանձնվել էր տիկին Մազլեն Նալյանին, որին աջակցում էին տիկիններ Մ. Գուլումճյանը, Բ. Կյուզելյանը և Հ. Շահումյանը (1920, 2 դկտ.): Ամերիկյան «Նպաստամատույցը» իր հերթին ծրագրել էր Զմյուռնիայում որբերի և գաղթական կիլիկեցիների համար ստեղծել արհեստանոց՝ սկսելով հյուսնությունից ու կահագործությունից և հետագայում արհեստների ուսուցման ընդլայնումով: Ամերիկացիները գործակցում էին Կեդրոնական որբանոցի վարչության հետ (1922, 5 փետ.): Որբերի ու գաղթականների կարիքները հոգալուն էին ուղղվում նաև Զմյուռնիայում ՀԲԸՄ-ի տպավորիչ գործողությունները: 1921 թ. մասնաժողովի արձանագրած մուտքը կազմել էր 2451.74.50 ոսկի, որ գոյացել էր տուրքերից, անդամավճարներից և նվիրատվություններից (1922, 16 մյս.):

Որբերի և գաղթականների գործոնը 1919-ից ի վեր դարձել էր մշտական իրողություն, որ անմիջականորեն անդրադառնում էր զմյուռնահայ բոլոր հաստատությունների կենսագործունեության վրա: 1920 թ. օգոստոսին ուսումնական խորհուրդը առարկում էր վարժարաններին ընդամենը 19 հազար ոսկի հատկացնելու որոշմանը՝ հույժ անբավարար համարելով այն: Խորհուրդն առաջարկում էր կամ առանձին դպրոց ստեղծել որբերի համար և կամ էլ առանձին բյուջե տրամադրել նրանց (1920, 28 օգ.): Հ. Մամուրյանը գրում էր, որ իրականում դպրոցներին հատկացվում է 16 հազար ոսկի՝ շուրջ 1600 երկսեռ աշակերտության (Ս. Մնսրոպյան արական դպրոցում՝ 500, Ս. Հռիփսիմյան իգական վարժարանում՝ 400, Պաքըրճյան մանկապարտեզում՝ 500 և Պատսպարանում՝ 150 աշակերտներ) համար: 43 ուսուցիչ ուսուցչուհիները և 50 այլ ծառայողները ստանում էին 15–75 ոսկի, ըստ Թերթի, մի խղճալի գումար՝ նպատակները Թեկուզ մեկնակետից սկսելու համար (1921, 16 հլս.): Պաքըրճյան նղբայրների միջոցներով էր գործում, համանուն

մանկապարտեզը, որի սանների մի զգալի մասը գարձյալ որբեր էին (1922, 30 հլս.):

Ջմյուռնահայ հանրության համար արվեստի կենտրոն էր «Հայ ակումբը», որը կազմակերպում էր երեկույթներ ու հանդեսներ: Ակումբն ուներ իր «Թատերասիրաց ճյուղը», որում ներգրավված սիրողական ուժերով տրվում էին ներկայացումներ: 1921 թ. մայիսի սկզբներին այս կերպ բեմադրվեց Շիրվանզադեի «Կործանվածը» դրաման: Թևրթի թատերախոսը բավական հաջող վերլուծեց և գնահատեց դերասանների խաղն ու բեմական կեցվածքը (1921, 15 մյս.): «Ռէժիսէօռ» ստորագրող հեղինակը ևս թատերախոսական է տպագրել տեղի հայ թատերական խմբերի գործունեության մասին: Այդ խմբերից մեկը հավանաբար «Հայ ակումբում» 1921 թ. սեպտեմբերի վերջերին ներկայացրել է պիես՝ Սողոմոն Թեհլիրյանի՝ Բհուլինում կատարած վրեժխնդրական գործողության մասին (1921, 4 հկտ.): Ջմյուռնիայի «Նեոնֆալերոն» (Կորղելիո Թաղամասում) թատրոնում 1922 թ. փետրվարին Հովհ. Աբելյանը սիրողական խմբի հետ հանդիսատեսի դատին է հանձնել Շիրվանզադեի «Նամուսը»: Հետաքրքիր է, որ գրախոս Թորգոմին չեն գոհացնում պիեսի ռեալիզմն ու կերպարների հոգեբանական նկարագրերը, նա որոշակիությունից նախընտրելի է համարում «կեանքի խտացումը՝ գերագրուած ձևով» (1922, 15 փետ.): Թորգոմը, սակայն, դրվատում է Աբելյանի, ինչպես և սիրողների խաղը:

Գաղթօջախի վերջին տարիներին հանրաճանաչ էր նաև «Արտաւազդ թատերասիրաց միութիւնը», որն իր գործունեության ու հաջողությունների համար պարտական էր ՀՅԴ աջակցությանը: 1921 թ. դեկտեմբերի 25-ին «Արտաւազդի» և «Հայ ակումբի» ուժերով և դարձյալ Հ. Աբելյանի մասնակցությամբ ներկայացվել է «Տրիլբի»-ն: Նշանավոր վարպետը հյուրախաղերի ընթացքում ներկայացրել է նաև Շիրվանզադեի «Պատվի համարը» (1921, 29 դկտ.):

Մինչև գաղթօջախի վերջին օրերը հրապարակային դասախոսություններ էր կազմակերպում «Զարթօնք լսարանական միութիւնը» (բժշկաառողջապահական և հանրությանը հուզող այլ

թեմաներով)[1]: 1922 թ. մայիսին բժիշկ Գ. Ամատյանն այստեղ շաբաթնակել է իր դասախոսություններով շարքը (1922, 17 մյս.):

«Արևելյան մամուլը» քիչ է անդրադարձել Զմյուռնիայի շրջակայքի հայաբնակ բնակավայրերի կյանքին, հավանաբար այն պատճառով, որ դեռևս 1915–1918 թթ. երիտթուրքերի ցեղասպանության քաղաքականությունը այս կամ այն չափով փլուզել էր այդ շրջանների երբեմնի ազգային ու սոցիալական կայունությունը՝ տեղական թուրքական բնակչության ճնշումների պայմաններում հայ բնակիչներին հարկադրել կամ լքել իրենց հայրենի վայրերը և կամ էլ ապրել կտրված՝ Զմյուռնիայի իրենց հայրենակիցներից: Բավական երկար թափուր մնացած Զմյուռնիայի առաջնորդական աթոռը միայն 1920 թ. դեկտեմբերին զբաղեցրեց Ղ. եպ. Դուրյանը (1920, 17 դեկ.), որը դժվարությունների առջև էր կանգնած շրջակայքի սակավամարդ թեմերի հետ հարաբերությունները վերահաստատելու հարցում: Մյուս կողմից, շրջակայքի հայ բնակչության մի զգալի մասը տեղափոխվում էր Զմյուռնիա՝ նվազեցնելով նշված բնակավայրերում ապրող ազգակիցների թվաքանակը: Համեմատ դեպս, «Արևելյան մամուլի» էջերից որոշ տեղեկություններ կարելի է քաղել հայաբնակ շրջակայքի մասին: Այսպես, 1921 թ. վերջին Վերին Մանիսայում նախորդ տարիների՝ հայերի 125 տնից մնացել էր ընդամենը 25-ը. տների մեծ մասը յուրացրել կամ քանդել էին թուրքերը: Համեմատաբար բարվոք վիճակում էր Վարի Մանիսան, որտեղ նույն թվականին գործում էին երկսեռ վարժարաններ (1921, 21 հլս.): Հայեր էին մնացել նաև Պերկամայում, որտեղ գործում էր թաղական խորհուրդը (1921, 7 հնվ.): Երիտթուրքերը, որոնք դեռևս 1915 թ. փորձեցին տեղահանել Զմյուռնիայի և շրջակայքի հայերին, և սակայն, չհանդգնեցին այն իրագործել (Համաձայնության պետությունների դատաստանի հեռապատկերի և պերմանական դաշնակիցների զգուշավոր ու զսպող

[1] 1920 թ. Ս. Պարթևյանի «Զմյուռնահայ տարեցույցը» հայտնում էր (էջ 91), որ «Զարթօնք լսարանական միութիւնը» բեմադրել է Շիրվանզադեի «Չար ոգին» և «Ավերակների վրա» պիեսները:

դիրքորոշման պատճառով), այսուհանդերձ չարունակել էին իրենց գործը անաղմուկ՝ հայաթափելով խնդրո առարկա ավաններն ու գյուղերը: Ճիշտ նույն գործելակերպով, ինչ Կ. Պոլսում, որտեղից 1915–1916 թթ. տարագրվել էր 10.000 հայ[1]: Ավելացնենք, որ իրենք՝ բուն Ջմյուռնիայում ապրող հայերը 1915–1918 թթ. ապրում էին մշտական ահարևկումների մթնոլորտում: Այս տեսակետից բավական պերճախոս է Հ. Մամուրյանի թարմ վերհուշը այդ տարինների գմյուռնահայերի իրական կացության մասին, երբ նա հարկադրված էր եղել ոչնչացնել իր հոր՝ Մ. Մամուրյանից մնացած նամակները. «Այդ թղթակցութիւններէն (Մ. Մամուրյանի նամակագրությունը Գր. Օտյանի, Հ. Այվազովսկու, Ռ. Պատկանյանի, Ներսես պատրիարքի, Զ. Բրայսի և այլոց հետ — Ա. Խ.) մաս մը համիտեան չրջանին բոցերու ճարակ տալ հարկադրուեցանք, իսկ պատերազմի պահուն այլևս յուսահատ եւ տեղէ տեղ փախցընելէն ու պահելէն պարտասած՝ այդ վերջին թանկագին մնացորդներն ալ յանձնեցինք անողորմ բոցերուն» (1922, 11 փետ.):

Բացի սովորական լրատվությունից, «Արևելյան մամուլը» գրեթե միշտ ընթերցողին տեղյակ էր պահում Կ. Պոլսի Հայության ազգային իրականության, նրա բազմաթիվ հոգսերի ու դժվարությունների մասին: Կ. Պոլսի ազգային մարմինների գործունեությունը թերթում հիմնականում բնութագրվում էր այնպիսի իրողությունների հենքի վրա, ինչպիսիք էին Կիլիկիայից և այլ վայրերից քաղաք լցված բազմաթիվ որբերն ու դաղթականները, կուսակցությունների գործունեությունը ազգային ժողովում, պատրիարքի և այդ ժողովի գործունեությունը տեղական ու համազգային խնդիրների առաջարեգում և այլն: Այս թեմաներով հանդես են եկել Հ. Մամուրյանը և Արգամ Անգեղացին: Այս յուրահատուկ ռամկավար թերթի համար, իսկապես, կարևորը ոչ թե կուսակցականությունն էր, այլ գաղափարը, որ, ի դեպ, մտքի ազատություն էր ապահովում նրա համար, քան կարող էր ունենալ որևէ կուսակ-

[1] Տե՛ս Լեփսիոա Յո., Գաղտնի տեղեկագիրը. հայ ժողովրդի ջարդերը, էջ 134:

ցուքյան ձայնաւորը: Անկախ իր տատանումներից ու հակասութ-
յուններից, զմյուռնահայ վերջին թերթը ճեղքում էր կուսակցական
նեղմտությունը և հանդես էր գալիս որպես իր մայրամուտն ապ-
րող գաղութահայ հանրության տագնապներն ապրող հրապարա-
կախոսական անկեղծ ամբիոն:

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

20-րդ դ. առաջին քառորդի արևմտահայ չնզոք մամուլը արտացոլում է այդ ժամանակաշրջանի Օսմանյան Թուրքիայի տարածքում բնակվող արևմտահայության ազգային, քաղաքական ու մշակութային կյանքը: Այն փաստորեն արևմտահայ մամուլի պատմության վերջին փուլն էր, որ վերարտադրում է ոչ միայն Թուրքիայի հայ դաղթօջախների, այլև բնաշխարհում Արևմտյան Հայաստանում ապրող հայ ազգաբնակչության իրական կացությունը՝ մինչև հայերի ցեղասպանությունն իր հայրենիքում: Արևմտյան Հայաստանի հայաթափ լինելուց և Առաջին աշխարհամարտի ավարտից հետո (1918) Կ. Պոլսում և Զմյուռնիայում հրատարակվող հայ մամուլը զրկվում է բնաշխարհի իր երբեմնի ազգային և հոգևոր հիմքերից և դործածում է իբրև Կ. Պոլսի և Զմյուռնիայի (իսկ 1922 թ. Զմյուռնիայի աղետից հետո՝ միայն Կ. Պոլսի) հայության հոգևոր բնաղավառ և լրատվամիջոց:

Խնդրո առարկա մամուլը հրատարակվել է քաղաքական տարբեր նկարագրի երեք ժամանակաշրջաններում՝ արդուլհամիդյան (1900–1908), երիտթուրքերի կառավարման (1908–1918) և դինադադարից մինչև քեմալականների իշխանության տարիներ (1918–1923): Ըստ այդմ, մամուլը փոխել է իր ազգային քաղաքական ուղղվածությունը՝ բովանդակության կենտրոնում ունենալով ազդի առջև ծառացած կարևոր խնդիրները: Եթե դարասկզբին՝ Աբդուլ Համիդի բռնակալության տարիներին մամուլի էջերից գրեթե ամբողջովին չքացել էին ազգային ինքնորոշման տրամադրությունները, ապա երիտթուրքերի տիրապետության շրջանում մամուլի հետաքրքրությունները կտրուկ փոփոխվում են և նրա էջերում առաջնահերթ հիմնախնդիրներ են դառնում անասելի ճնշումների ու կեղեքումների ենթարկվող արևմտահայության վիճակի ցուցադրումը, նրա անհատական ու ազգային իրավունքների պաշտպանությունը, որ ուղեկցվում էր երիտթուրքական իշխանությունների քննադատությամբ: Նույն այս ժամանակաշրջանում մամուլի եռան-

դուն քննարկումների առարկա է դառնում Արևմտահայաստանի բարենորոգման խնդիրը (1913–1914), որն իր ավարտն է գտնում Առաջին աշխարհամարտին Թուրքիայի մասնակցելու իրողությամբ:

Արևմտահայ մամուլի այս ուղղվածության հետ զուգընթաց և միաժամանակ, որակական վոփոխություններ է ենթարկվում նրա ժանրային նկարագիրը: 1900–1914 թթ. Կ. Պոլսում և Զմյուռնիայում հրատարակվող թերթերում և հանդեսներում սիրապետող է դառնում լրատվությունը, որը երկրորդական բնագիծ է մղում հրապարակախոսությանը: Այս ընթացքն արտահայտվեց հատկապես 1908–1914 թթ. Արևմտահայաստանի հայ բնակչության վերաբերյալ տեղեկատվական-առարկայական որոշակի յուցադրումներով, նրա ազգային անտնտեսական ու մշակութային կացության մասին հանգամանալի լրատվությամբ: Իր ընթերցողներին մամուլն իրազեկում էր ոչ միայն Թուրքիայի հայկական գաղթօջախների, այլև Արևելյան Հայաստանում և Ռուսաստանում, Եվրոպայի, Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներում և ԱՄՆ-ում բնակվող հայերի վերաբերյալ հետաքրքիր նյութերով: Ավելացնենք, որ լրատվական հուսալիությունը դառնում է չեզոք մամուլին հետաքրքրող կարևոր խնդիրներից մեկը, և որ այդ ճնռք էր բերվում իրականության լայն ու բազմակողմանի անդրադարձների շնորհիվ: Այս պայմաններում, հասկանալի վերապահումներով, նշված մամուլը ստանում է սկզբնաղբյուրի նշանակություն՝ իր ժամանակաշրջանի իրական պատկերը վերհանելու, դրա բնութագրական, նաև ածանցյալ կողմերը բացահայտելու տեսակետից: Այս իմաստով արժեքավոր նշանակություն ունեն «Բյուզանդիոնի», «Հանրագիտակի», «Սուրհանդակի», «Արևելյան մամուլի», «Ծաղիկի», «Դաշինքի» և այլ պարբերականների պարունակած բազմահարուստ լրատվական նյութերն ու հրապարակումները:

Երիտթուրքական կառավարության ծայրահեղորեն հետադիմական, պանթուրքական քաղաքականության ուղղվածությունը

հայ մամուլին հայտնի դարձավ Ադանայի ջարդերի ժամանակ, որոնց զոհ գնաց 30.000 հայ: 1909 թ. այդ արյունոտ օրերը ճանաչողական նշանակություն ունեցան մամուլի համար, որի էջերում քողարկվում է երիտթուրքական կառավարողների կեղծ հայրհնակցական հավաստիացումներն ու բարձրագոչ քարոզչության սատապատիր ընույթը: Ադանայի դեպքերը իրենց ողբերգականությամբ հանդերձ, մամուլը հագեցրին ազգային իրավունքների պաշտպանության նոր տրամադրություններով և երիտթուրքական կոմիտեի ու կառավարության հանդեպ քննադատական վերաբերմունքով: Ջեզոք մամուլը Ադանայի կրկնությունների այլընտրանքը տեսնում էր Արևմտյան Հայաստանի բարենորոգումների իրականացման մեջ: Ամենևին պատահական չէ, որ վերստին միջազգային դիվանագիտության մակարդակ բարձրացած բարենորոգումների թեման դարձավ հայ մամուլը զբաղեցնող առանցքային հիմնահարց՝ ընդհուպ մինչև աշխարհամարտի մեջ Թուրքիայի մտնելը, երբ այն պետք է դուրս դար քաղաքական օրակարգից:

Մեզ հետաքրքրող պարբերականները 1900–1914 թթ. մեծապես նպաստեցին հայ դեղարվեստական գրականության զարգացմանը՝ շարունակելով դրա ազգային ավանդույթները և միաժամանակ յուրահատկորեն արձագանքելով արևմտյան նորահայտ գրական ուղղություններին: Դրա էջերում հանդես եկան ժամանակի երևելի գրական դեմքերը՝ Մ. Մեծարենցը, Դ. Վարուժանը, Ռ. Զարդարյանը, Արտ. Հարությունյանը, Թլկատինցին, Ռ. Սևակը, Օ. Չիֆթե-Սարաֆը, Զ. Եսայանը, Տ. Զոկյուրյանը և ուրիշներ՝ առաջ մղելով հայ դեղարվեստական գրականությունն ու դեղագիտական-գրաքննադատական միտքը:

1915–1918 թթ. Օսմանյան Թուրքիայում հայերի ցեղասպանության տարիներին հայ մամուլը ոչնչացվեց Արևմտյան Հայաստանում և հայաբնակ մյուս գավառներում: Կ. Պոլսի հայ մամուլը հայտնվեց դրեթե խեղդամահ վիճակում. մինչև 1914 թ. այստեղ հրատարակված ավելի քան երեք տասնյակի չափ պարբերականներից չորջ 25-ը դադարեցին՝ օսմանյան ռազմական գրաքննության հա-

լածանքի ու հետապնդման պայմաններում: 1915 թ. երիտթուրքերը հրապարակի վրա թողնելին ընդամենը 4 ազգային թերթ՝ «Բյուզանդիոնը», «Ժամանակը», «Վերջին լուրը» և հայատառ թուրքերեն «Ճերիտեի շարդիյե»-ն, որոնք լույս էին տեսնում մեծապես նվազեցրած ծավալներով, զուրկ՝ լրագրական ամեն մի ինքնուրույնությունից: Դժվարանում ենք ասել՝ արդյոք այդ տարիներին Զմյուռնիայում (որի հայ բնակչությունը, ինչպես և Կ. Պոլսինը, զերծ էր մնացել ամբողջական տեղահանությունից և աքսորից) կարող էր որևէ հայկական պարբերական հրատարակվել, համենայն դեպս, մեզ հայտնի չէ հակառակը վկայող փաստ կամ տվյալ: Հայ մամուլը Թուրքիայում բաժանում էր ցեղասպանության դատապարտված ժողովրդի ճակատագիրը:

Հայ մամուլի վերոհիշյալ վիճակը Կ. Պոլսում անփոփոխ մնաց մինչև Մուդրոսի զինադադարը՝ 1918 թ. հոկտեմբեր: Դրան հաջորդած ամիսներին, երբ պոլսահայության կյանքը մասամ խաղաղ հուն, աստիճանաբար կենդանության նշանները ցույց տվեցին հայ համայնքի ազգային հաստատությունները, այդ թվում և մամուլը:

1918–1919 թթ. Կ. Պոլսում հրատարակված նոր թերթերը (հիմնականում՝ շաբաթաթերթեր) համեմատաբար կարճ կյանք ունեցան, որ բացատրվում է պատերազմից հետո Թուրքիայում ստեղծված քաղաքական ու տնտեսական անորոշության և երկրի կայունացումը ենթադրող ժամանակի անհրաժեշտությամբ: Հին թերթերից, որոնք անցել էին երիտթուրքական հալածանքների և վայրենի կամայականության սահանքները, մի կերպ պահպանեցին իրենց դոյությունը, որոնց մեջ որակյալ լրատվությամբ առանձնանում էին «Ժամանակը» և «Վերջին լուրը»: Այս շրջանում մի որոշ աշխուժացում է ապրում երգիծական մամուլը, հրատարակվում են «Խելոք Դավիթ», «Իգնատ աղա» և «Շավիղ» (հետագայում միացել է նախորդին և կոչվել «Շավիղ-Իգնատ աղա») պարբերականները (վերջին երկուսը՝ Ե. Օտյանի խմբագրությամբ): Արժեքավոր է դրանց քաղաքական երգիծանքը, որտեղ պիպուկ մեկնաբանությունների առարկա են դառնում երիտթուրքական կազմալուծված կուսակ-

ցությունն ու իշխանությունները, սրանց ոճրագործ քաղաքականությունը հայերի հանդեպ, թուրքական նոր կառավարության ազգայնամոլ հակումները, Փարիզի հաշտության համաժողովում թուրքական պատվիրակության երեսպաշտական կեցվածքը և այլն: Երդիծական մամուլի էջերում ժանրին հատուկ միջոցներով ծաղրի սլաքն ուղղվում է թուրքական այն հրատարակությունների դեմ, որոնց քարոզչությունը չանք ու ճիգ չէր խնայում թաքցնելու երիտթուրքերի հանցավոր գործունեության հետքերը: Քաղաքական մնծ լիցք են պարունակում Ե. Օտյանի խմբագրած պարբերականները, որոնք ցուցադրում են քեմալական շարժման ծայրահեղ ազգայնական բնույթը, հետպատերազմյան շրջանի թուրքական կառավարության և քեմալականների փոխադարձ համակրանքները՝ ձևական հակադրության քողի ներքո:

1919–1920 թթ, նկատվում է նոր երևույթ՝ մասնագիտական հրատարակությունների աճը, որ բացատրվում է պատերազմի ավարտից հետո Կ. Պոլսում հայտնված բազմաթիվ ազգային միությունների առկայությամբ: Գործում էին բժշկական, իրավաբանական, մարզական, թատերական, կանանց և այլ նպատակներ հետամտող ընկերություններ, որոնց մի մասը ձեռնարկեց իր նախասիրություններից բխող պարբերականների հրատարակությանը («Օրենք», «Հայ բժիշկ», «Հայ կին», «Հայ սկաուտ», «Հայ պատանի» և այլն): 1919–1922 թթ. հրատարակված այս պարբերականները հիմնականում գոյատևում էին այնքան, որքան իրենց հիմնադիր միությունները, որոնք, որպես կանոն կարճատև գոյություն ունեցան: Անկախ մասնագիտական պարբերականների առատությունից, մամուլի, որպես հասարակական ու հոգևոր բնագավառների առաջատարները մնում էին ազգային բովանդակության պարբերականները: Սրանց էջերում էին պարփակված ցեղասպանության բեկորների ազգային բաղձանքները, ակնկալիքները միջազգային քաղաքականությունից՝ ազգային ինքնորոշման, հայկական հարցի լուծման և հայրենիքի վերածնության վերաբերյալ:

«Ժամանակ», «Վերջին լուր», «Ժողովուրդի ձայնը», «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ» և այլ թերթերում դրսևորվեցին Հայկական հարցի զարգացումների, միջազգային հանրության կողմից դրա գնահատման և ի վերջո, անտեսման հետ կապվող ազգային հույսերն ու հիասթափությունները: 1920-ականի սկզբներին հրատարակված այս մամուլը, դրան համապատասխան, զրաղեցնում էին Կիլիկիայի, Հայաստանի առաջին և երկրորդ հանրապետությունների և արևելահայության կացության ու ճակատագրի հարցերը: Քննարկվող հիմնահարցերի բազմազանության մեջ որակ էին կազմում պոլսահայերի ազգային վարչության, նրանց իրավական, մտավոր ու տնտեսական դրության կապվող քննարկումները: Դրանք անդրադարձնում էին պոլսահայ հանրության կյանքի գրեթե բոլոր բնագավառները՝ ներկայացնելով այդ օրերի գաղթօջախի իրական դիմագիծն ու պատմությունը: Նշված թերթերին աշխատակցում էին, նոր ուժերի հետ միասին, լրագրական ու հրապարակախոսական հարուստ կենսափորձ ունեցող և ցեղասպանությունը վերապրած մտավորականներ Ե. Օտյանը, Վ. Թևքելյանը, Բ. Քեչյանը, Մ. Շամտանճյանը, Օ. Զիֆթե-Սարաֆը, Թեոդիկը, Գ. Գալուստյանը և ուրիշներ:

1919–1922 թթ. ևս, մինչև քեմալականների ներխուժումը Զմյուռնիա և տեղի հայ գաղթօջախի կործանումը, ազգային մյուս հաստատությունների հետ իր ուրույն, լրատվական դործառույթն էր իրականացնում մամուլը: Հրատարակվում էին «Արևելյան մամուլ», «Ատրուշան», «Դափնի», «Պատրաստ» թերթերն ու մյուս պարբերականները: Զմյուռնահայ մամուլի վերջին մոհիկանները արտացոլում էին վաղեմի գաղթօջախի ազգային իրականությունը՝ արծարծելով հայության համար այդ դժվարագույն և աղետներով լեցուն ժամանակաշրջանի համազգային նշանակության խնդիրներ:

1922 թ. Կ. Պոլսում հրատարակվող հայ մամուլը աստիճանաբար կորցնում է իր հակաքեմալական ուղղվածությունը: Ակնհայտ էր Թուրքական իշխանությունների նոր, արդեն դործնականի վերածվող և անհանդուրժող վերաբերմունքը հայկական հրատարա-

կություններրի նկատմամբ: Անկարայի կառավարութիւնը վերահսկողութիւն էր հաստատել մամուլի վրա՝ խոչընդոտելով նոր պարբերականներրի հրատարակութեանը: 1923 թ. հետո գոյատևելու էին ընդամենը հայկական մի քանի պարբերականներ: Փաստորեն 1922 թվականով ավարտվում է արևմտահայ մամուլի ավելի քան 80-ամյա պատմութիւնը, որ սկիզբ էր առել 1832 թ.՝ Կ. Պոլսի «Լրոյ պիր» թերթով: 1923-ից առ այսօր Ստամբուլում (Կ. Պոլիս) հրատարակվող հայ մամուլը, ինչպես ընդունված է համարել, մտնում է այլ՝ սփյուռքահայ մամուլի պատմութեան չրջափուլ:

THE DECLINE OF THE WESTERN ARMENIAN PRESS

ALBERT KHARATYAN

Western Armenian neutral press of the first quarter of the XX century displayed the ethnic, political and cultural life of Western Armenians, residing in the territory of the Ottoman Empire. It was almost the last period of the history of Western Armenian print that manifested not only the reality of the Armenian colonies in Turkey, but also the real entity of the population of Western Armenia until the Armenian Genocide in their homeland. After the First World War and the expulsion of Armenians from Western Armenia, Armenian press that was published in Smyrna and Constantinople, lost its national and psychological bases that it ever had and began to function as a psychological sphere and a means of information for the Armenians of Constantinople and Smyrna (in 1992 only for Constantinople after the disaster of Smyrna).

The press, as a subject of study, was published in three periods of different political descriptions: during the reign of Abdul Hamid (1900-1908), during the reign of the Young Turks (1908-1918) and during the period of the cease-fire until the arrival of the Kemalists to power (1918-1923). For this reason, the press changed its national and politcal orientation, and the main challenges facing the nation became its gist. While at the beginning of the century, during the autocracy of Abdul Hamid, the moods of self-determination almost completely disappeared from the pages of the press (print), the period of Young Turks' reign was characterized by the changes of interests in the press, when the priority problems were the serious demonstration of the state of Western Armenians, forced to indescribable enforcements and servitude, the protection of its personal and national rights, accompanied by criticism of the Young Turks' government.

In the same period, the problem of the reform of Western Armenia (1913-1914) became the subject of a hot discussion, which terminated with

the end of the First World War with the participation of Turkey. In parallel, at the same time with the direction of West-printing the style of Western press also changed. Between 1900-1904 in editions of newspapers and magazines published in Constantinople and Smyrna journalism became dominant, and so the opinion journalism was overshadowed.

This process was inherent in the period between 1908-1914 in the definite information material sources about the Armenian population, which also contained thorough information about the economic and cultural life of the nation. From the pages of print, readers learned not only about the Armenian communities in Turkey, but also about the interesting facts about the Armenians living in Eastern Armenia, Russia, Europe, the USA, in the Middle East. To add to the above mentioned, the accuracy of that information became one of the most important problems in which the press was interested, which was reached due to the comprehensive and across-the-board plays of the reality. In these conditions the press became the fountainhead which was aimed to display the real picture of this period, and disclose its typical and derived sides. In this sense, some valuable materials and publications were published in such periodicals as the "Byzantium", the "Encyclopedist", the "Messenger", the "Eastern press", the "Flower", the "Union" and others.

The Armenian press revealed the Young Turks' radically esxtremistic direction of policy during the massacres of Adana, when 30.000 Armenians were killed. Those bloody days of the 1909s had some cognitive meaning for the Armenian press, whose pages were filled with some pseudo patriotic beliefs and stentorian agitation of leading Young Turks. Tragical occasions of Adana enriched the press with new national rights protection moods, and with a critical attitude towards the Young Turks' government and committee. The neutral press of Adana saw the alternative of reiterations in the reforms of Western Armenia. It is not incidental that the theme of the reforms that again reached the diplomatic level became the main problem of the Armenian press until Turkey's accession to the First World War, when it shoud have been out of the political agenda. The periodicals of the 1900-

1914, in which we are interested in, influenced the development of the Armenian literature, continuing its national traditions and simultaneously speaking about Western Armenian new literary trends. On its pages some famous literary persons of that time came forward: M. Metsarents, D. Varujan, R. Zardaryan, A. Harutyunyan, Tlkatinci, P. Sevak, O. Chifte-Saraf, Z. Esayan, T. Chokuryan and others, who promoted the Armenian literature and literary critical mind.

Between 1915-1918 during the Armenian Genocide in the Ottoman Empire the Armenian press in Western Armenia and other Armenian-populated regions were abolished. Armenian press of Constantinople turned out to be in an almost suffocative condition. As a result of persecutions of the Ottoman military censor until the 1914, 25 of more than 30 periodicals ceased to exist. In 1915, the Young Turks left in the arena only 4 national newspapers: the "Byzantium", the "Time", the "News", and the "East magazine" newspaper, issued in the Armenian language with the Turkish transcription which were published in predominantly reduced scale, and didn't have any information autonomy. It is hard to say whether it was possible for any Armenian edition to be issued in Smyrna in those years; at least we don't have any material or a fact to the contrary. Armenian press in Turkey shared the faith of the Armenian people doomed to genocide.

The above-mentioned position of the Armenian press in Constantinople remained unchanged until the ceasefire in Mudros in October 1918. In the following months when the life of the Armenians of Constantinople entered the moderate mainstream, some national institutions, as well as the press of the Armenain community, gradually started to recover. Between 1918-1919, the new magazines published in Constantinople had a comparably short life due to the political and economic destabilization in Turkey and the nessecity of a stabilization of the country. Among all the newspapers that suffered from persecutions and the despotism of the Young Turks, only the "Time" and the "Last news", which were based on the qualitative information, were saved. During that period there was some recovery in the humorous press. Such periodicals as

the "Clever David", the "Agha Ignat", the "Shavigh" (which hereafter integrated with the previous edition and was called the "Shavigh-Ignat Agha") were published (the last 2 editions were published under the editorship of Otyan. The humour of the above-mentioned editions in which the authorities and the defunct party of the Young Turks, the crucial policy towards the Armenians, extremistic trends of the new Turkish government, the treacherous position of Turkey at Paris Peace Conference, became the objects of some clear revelations, seemed quite valuable.

On the pages of comic press corresponding to the style of the genre, the arrow of satire was directed against the Turkish media, the purpose of which was the promotion of everything that could conceal criminal activity of the Young Turks. The publications edited by E. Otyan contained a big political potential that demonstrated the national character of extremistic Kemalist's movement, mutual sympathy of the Kemalists and the Turkish government of the postwar years under the guise of a formal coercion.

Between 1919-1920 a new trend was noticed: the number of specialized publications significantly increased, which can be explained by the emergence of various national associations in connection with the termination of the war. Medical, legal, sports, theater, women's and other communities with different goals began to function, some of which published books, according to their own preferences (the "Law", the "Armenian Physician", the "Armenian Woman", the "Armenian Scout", the "Armenian Youth" and others). Despite the huge number of specialized publications, the publications with their distinctive national character remained advanced in the social and spiritual spheres of the press. From the pages of these publications the pieces of the national ideals came out, which survived the genocide of Constantinople and Western Armenia, the issues, related to the international policy towards the Armenian issue, the national self-determination and the national liberation. The newspapers the "Time", the "News", the "Voice of the People", the "The Voice of the People-Time" and others featured the dynamics of the development of the Armenian issue,

the attitude of the international community, and at last the national hopes and disappointments that were ignored.

In the early 1920s, most of the press publications dealed with the issues related to the fate and existence of Eastern Armenians of Cilicia, the Armenian orphans, the First and the Second Republics of Armenia. By the quality of the issues discussed in their diversity there were discussions related to the legal, intellectual and economic situation of the Armenians of Constantinople, as well as the issues related to the national treatment. These discussions concerned almost all the aspects of life of the Armenians of Constantinople, thereby presenting the true face and the history of the colonies of those days. These papers collaborated with the new forces, thinkers, who survived the genocide, who had rich journalistic and publicistic experience, such as E. Otyan, V. Tekeyan, B. Kechyan M. Shamtanchyan, O. Chifte-Saraf, Teodik G. Galustyan and others.

Also between 1919-1922 before the invasion of the Kemalists in Smyrna and the collapse of the colony of local Armenians, the press did its special informative function together with the other national agencies. The newspapers "Atrushan", "Daphne", "Ready" and others were published. The last of the Mohicans of Smyrna's press reflected the national reality of the former colonies, disclosing the questions and the essence of the national character of a hard and complete period of Armenians full with disasters.

In the 1922s, the press publshed in Constantinople gradually lost its antikemalistic focus. A new, almost practiced, negative attitude of the Turkish authorities towards the Armenian media was obvious. Ankara's government oversaw the press, thereby preventing new publications. After 1923, only a few Armenian publications had to keep their existence.

In fact, the 1922s completes the history of Western Armenian press which is more than 80 years old, the beginning of which is considered to be the 1832, related to the release of the newspaper the "Lro Gere" in Constantinople. From 1923 to this day, the Armenian press that has been published in Istanbul, as is commonly believed, has entered another stage of history of the press of the Armenian Diaspora.

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՑԱՆԿ

1. Արխիվային նյութեր, այլ սկզբնաղբյուրներ

1. Հայաստանի Հանրապետության ազգային արխիվ (ՀԱԱ) ֆ. 57, ց. 1, գ. 399, ց. 3, գ. 329, 308, ց. 5, գ. 60, թ. 8, գ. 43, ց. 5, գ. 17: Ֆ. 413, ց. 1, գ. 899: Ֆ. 130, c. 1, գ. 58:
2. Ե. Չարենցի անվ. Գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ) Ա. Չոպանյանի ֆ., N7996-I:
3. Մ. Մաշտոցի անվ. Մատենադարան (Մ), Ա. Ալպոյաճյանի ֆ., թղթ. 8., վավ. 218:
4. Գերմանիան և Հայաստանը 1914-1918: Դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հ. 1, հրատարակութ. և ներածութ. դոկտ. Յո. Լեփսիուսի, Ե., 2006.
5. Զաւէն արքեպս., Պատրիարքական յուշերս. Վաւերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրէ, 1947:
6. Թեոդիկ Ա., Ամիս մը ի Կիլիկիա, Կ. Պոլիս, 1910:
7. Թոլայեան Ն., 35 տարուայ թատերախմբագրական յիշողութիւններ, Ն., 2008:
8. Լեփսիուս Յո., Գաղտնի տեղեկագրեր, հայ ժողովրդի ջարդերը, Ե., 2003:
9. Կանոնագիր հայոց կաթողիկոսութեան եւ պատրիարքութեան, Երուսաղէմ, 1917:
10. Հայկանուշ Մառք, Կեանքն ու գործը, Իսթանպուլ, 1959:
11. Մակարոֆ Ն., Դեյր էզ-Զորի աքսորյալը, Ե., 2001:
12. Պարթեւեան Ս., Զմիւռնահայ տարեցոյցը, Ա տարի, Իզմիր, 1920:
13. Սիրունի Յ. Ճ., Ինքնակենսագրական նոթեր, Ե., 2006:
14. Տօքտ. Կարապետ Խաչերեանի օրագիրը, Զմիւռնական արկածներ 1922-ին, Մոնրեալ, 1977:
15. Փափազյան Ավ., Հայերի ցեղասպանությունը ըստ եղիտթուլքերի պատավարության փաստաթղթերի, Ե., 1988:

16. Փափազյան Ավ., Հայերի ցեղասպանությունը թուրք քաղաքական գործիչների հուշագրություններում, Ե., 2001:
17. Օտեան Ե., Անիծեալ տարիներ, 1914-1919 (անձնական յիշատակներ), Թեհրան, 2005:
18. Армения в документах Государственного департамента США 1917-1920 гг. Сост. Махмурян Г., Ер., 2011.
19. Ататюрк К. Избранные речи и выступления. М., 1966.
20. Геноцид армян в Османской империи. Сб. документов и материалов под ред. Нерсисяна М. Г. II доп. изд. Е., 1983.
21. Судебный процесс Талаата-паши. Стенографический отчет. Под ред. С предисл. и примеч. проф. Степаняна С. С. Ер., 2007.
22. Ahmet Şerif. Anadoluda Tanin. I Cilt. Hazırlayan Bőrekci M. Ç. Ankara, 1999.
23. Akhanlı D. Talat paşa Davası 2-3 Haziran 1921. Tutanaklar. Kitap I., Istanbul, 2003.

2. Գրքեր, մենագրություններ

1. Ազատեան Թ., «Ժամանակ» քառասնամեայ յիշատակարան 1908-1948.Կ. Պոլիս, 1948:
2. Աղաբաբյան Ս., Եղիշե Չարենց, գիրք առաջին, Ե., 1973:
3. Աստոյան Ա., Դարի կողոպուտը, Ե., 2013:
4. Արամեան Հ., Մեծ եղեռնի պատգամ. Հայոց Տաճիքական, Պէյրութ, 1970:
5. Արզումանեան Զ., Ազգապատում, հ. Դ, Ա գիրք (1910-1930), Նիւ Եորք, 1995:
6. Գաբրիելյան Վ., Արևմտահայ բանաստեղծներ, Ե., 1971:
7. Գասպարյան Ռ., Հոդվածների և հրապարակումների ժողովածու, Ե., 2013:

8. Գրիգոր Զոհրապը ժամանակակիցների յուշերում եւ վկայութիւններում: Աշխատութեամբ Ա. Շարուրեանի: Ե., 2006:
9. Դալլաքյան Կ., Ակնարկներ սփյուռքահայ հասարակական մտքի պատմության (1920-ական թվականներ) Ե., 1994:
10. Դալլաքյան Կ., Ռամկավար ազատական կուսակցության պատմություն (1921-1940), գիրք 1, Ե., 1990:
11. Ենովք Արմէնի, Թրքահայ գրականութիւնը մամուլի ազատութեան թուականին. Կ. Պոլիս, 1909:
12. Զոհրապ Գ.ր., Գրականության մասին: Առաջաբ. և ծանոթագրութ. Հյուսյան Մ., Ե.,1973:
13. Զոհրապ Գ.ր., Երկեր, հ. Ա: Աշխատասիրութեամբ Ա. Շարուրեանի, Ե., 2001:
14. Թամրազյան Հ., Բանաստեղծության հազարամյա խորհուրդը, Ե., 1986:
15. Թէոդիկ, Ամէնուն տարեցոյցը 1916-1920: Կ. Պոլիս, 1920:
16. Թէոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Ե., 1985:
17. Թէոդիկ, Տիպ ու տառ, Կ. Պոլիս, 1912:
18. Թովմասյան Ն., Թամրազյան Հ., Պապիկյան Գ., Հայ տնտեսագիտական մտքի պատմության ուրվագծեր, Ե., 1988:
19. Խաչատուրեան Ա., Հայ մամուլի մատենագիտական գործեր, Պէյրութ, 2014:
20. Կիրակոսյան Ա., ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և արևմտահայությունը (19-րդ դ.-1914), Ե., 2014:
21. Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առջև, հ. 2, Ե., 1982:
22. Կիրակոսյան Ջ., Ընտրանի (կազմ., խմբագր. և առաջաբ. հեղինակ՝ պրոֆ. Կիրակոսյան Ա.): Ե., 2014:
23. Հայ պարբերական մամուլը. Մատենագիտական համահավաք ցանկ 1794-1980: Կազմ. Բաբլոյան Մ., Ե., 1986:
24. Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967). համահավաք ցանկ: Կազմ. Կիրակոսյան Ա.: Ե., 1970:

25. Հայոց պարբերական մամուլը. լիակատար ցուցակ հայ լրագրության (1794-1934): Առաջաբ., ներածութ., ծանոթ. և աղյուս. կազմ. Լևոնյան Գ.: Ե., 1934:
26. Հայ պարբերական մամուլի պատմություն, հ. 1, XVIII-XIX դարեր: ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Գահիրէ, 2006:
27. Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 9, Ե., 1983:
28. Հայոց պատմություն, հ. 4, գիրք առաջին: ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Ե., 2010:
29. Հատտէճեան Ռ., Պտոյտ հայ գրականութեան քուլիսներուն մէջ, հ. Ա: Սթանպուլ, 2008:
30. Հովակիմյան Բ., Հայոց ծածկանունների բառարան, Ե., 2005:
31. Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, հ. 1, Ե., 2006:
32. Հովհաննիսյան Տ., Տաճիկ կառավարությունը և իթթիհաքը մարդկության դատարանի առաջ, կազմ. և հրատ. պատրաստեց Ջաքարյան Ա., Ե., 2007:
33. Ղազարյան Վ., Ռամկավար Ազատական Կուսակցություն. Ուղեցույց և համառոտ պատմություն, Ե., 1991:
34. Մալէզեան Վ., Ճամբուս ծայրը, հ. Բ, Փարիզ, 1955:
35. Մանուկյան Ա., Երվանդ Օտյան, Ե., 1997:
36. Մեծարանք առ Երուանդ Տէր Անդրեասեան (խմբ. Նարդունի Շ.), Փարիզ, անթվակիր:
37. Մնացականյան Լ., Գրական քննադատությունը «Նավասարդ» և «Մեհյան» պարբերականներում, Ե., 1988:
38. Մնացականյան Լ., Հոդվածներ, ուսումնասիրություններ, Ե., 2007:
39. Մնացականյան Լ., Քսաներորդ դարասկզբի գրական քննադատությունը, Ե., 1990:
40. Մուրադյան Ս., Երվանդ Օտյան, Ե., 2012:
41. Նագգաշեան Ա., Հայ մտաւորականներու ձերբակալութիւնը և Այաշի բանտը, Պէյրութ, 1969:
42. Շարուրյան Ա., Միսաք Մեծարենց, Ե., 1983:

43. Պետրոսյան Դ., Գրական բանավեճերը դարասկզբի հայ մամուլում, Ե., 2007:
44. Պողոսյան Հ., Զեյթունի պատմությունը, Ե., 1969:
45. Պողոսյան Ս., Պողոս Նուպար փաշա. ազգային գործիչը, Ե., 2004:
46. Սահակյան Ռ., Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1915-1921 թթ., Ե., 1970:
47. Սահակյան Ռ., Ցեղասպանության պատմությունից, Ե., 1990:
48. Սարինյան Ս., Հայոց գրականության երկու դարը, գիրք I-II, Ե., 1988-1989:
49. Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն, ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Ե., 2009:
50. Սիմոնյան Հր., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարախոսությունը և քաղաքականությունը, Ե., 1986:
51. Սիմոնյան Հր. Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Ե., 1991:
52. Սիմոնյան Հր., Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ), Ե., 2009:
53. Սողոմոնյան Գ., Նոր լուսագրությունը Կ. Պոլսում 19-րդ դարի 80-ական թթ., Ե., 2009:
54. Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. 1, Ե., 1972:
55. Ստեփանյան Գ., Հայատառ թուրքերեն հայ մամուլը, «Հայ պարբերական մամուլի պատմությունից», հ. 1, Ե., 1963:
56. Ստեփանյան Հ., Հայատառ թուրքերեն պարբերական մամուլը, Ե., 1987:
57. Տէր Սիքայէլեան Գ., Ղեւոնդ արք. Դուրեան, իր կեանքն ու գործը, Գահիրէ, 1934:
58. Տերճոն Ի., Անպատժելիություն, վրեժ և ժխտում. Հայկական ցեղասպանությունը միջազգային ատյանների առջև, «Պատմա-բանասիրական հանդես», 1999, N1, էջ 123-129:
59. Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, Ե., 1991:

60. Քասիմ. Միսաք Գոչունեան, Օրուան մտածումներ (1908-1913), Աշխատասիրութեամբ Ս. Տէյիրմենճեանի, Ի. Չիթճեանի առաջաբանով, Իսթանպուլ, 2014:
61. Օտյան Ե., Երկերի ժողովածու, հ. 4, Ե., 1962:
62. Дадрян В. Н. История армянского геноцида. Этнический конфликт от Балкан до Анатолии и Кавказа. Е., 2007.
63. Желтяков А. Д. Печать в общественно-политической и культурной жизни Турции. М., 1972.
64. Киракосян Дж. Младотурки перед судом истории. Е., 1989.
65. Обломиевский Д. А. Французский символизм. М., 1979.
66. Ованнисян Р. Г. Международные отношения Республики Армения 1918-1920 гг. Е., 2007.
67. Петросян Ю. А. Младотурецкое движение. М., 1973.
68. Georgelin H. Armenian Inter-Community Relations on Late Ottoman Smyrna. In: Armenian Smyrna|Izmir. The Aegean Communities. Edited by Hovannisian R. G. California, 2012, pp. 177-190.
69. Housepian M. The Smyrna Affair, New York, 1971.
70. Hovannisian R. G. Armenian Smyrna. In: Armenian Smyrna| Izmir. The Aegean Communities. Edited by Hovannisian R. G.California 2012, pp. 1-9.
71. Hovannisian R. G. Pontus and Armenia 1916-1922. In: Armenian Pontus. The Trabizond-Black Sea Communities. Edited by Hovannisian R. G. California, 2009, pp. 355-370.
72. Martyrdrom and Rebirth Fateful Years in Recent Armenian History. Preface by Gooch G. R., New York, 1965.
73. Milton G. Paradise Lost. Smyrna 1922. The Destruction of Islams City of Tolerance. London, 2009.

74. Nassibian A. Britain and the Armenian Guestion 1918-1923. New York, 1984.
75. Çetinoğlu S. Exterminators yok Ediciler ve Erdemli Müslümanlar. Istanbul, 2011.
76. Kaya O. Tanzimattan Lozana Azınlıklar. Istanbul, 2004.
77. Kevorkian R. Soykırımın ikinci Safhası. Istanbul, 2011.
78. Natanian B. Sivas 1877. Yayına Hazırlayan Yarman A. Istanbul, 2008.
79. Pamukciyan K. Istanbul Yazıları. Cilt I, Istanbul, 2002.

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Աբդուլ Կադիր 297

Աբդուլ Համիդ 23, 28, 50, 60, 68, 70, 72, 73, 81, 129, 134, 153, 157, 159, 242, 245, 285, 483

Աբելյան Հովհ. 479

Աբիմելեք 93

Աբովյան Խ. 327

Ագապի 96

Աղամյան Պ. 47, 131, 240

Ազատյան Թ. 10, 15, 17, 18, 133

Ազնավուր Հ. 360

Ազնավուրյան Մ. 316

Ալաճաճյան Ս. 17

Ալաշեհիր 476

Ալեքսանյան 414

Ալի 300

Ալի Րիզա 154

Ալպոյաճյան Ա. 60, 68, 69, 74, 109, 111, 170, 180, 186, 187, 212, 239, 240, 373, 374

Ալտոմարե Լ. 335

Ալփիար Հ. (Քրիզանթեմ) 25, 93, 98, 100-102, 104, 109, 123, 128, 144, 145, 162, 168, 173-175, 178, 180, 185, 186, 195, 218-222, 224, 244, 270, 328, 332-334, 377

Ակնունի Ս. 140

Ահարոնյան Ավ. 48, 151, 325, 330, 398, 412, 432, 438, 453-454, 470, 473

Ահմեդ Շերիֆ բեյ 254

Ահմեդ Ջեվդեթ 385

Ահմեդ Րեսիմ 130

Ահմեդ Րիզա բեյ 246, 247, 249, 285, 286, 292

Աղաբաբյան Ս. 205

Աղաբեկյան Մ. 234

Աղաթոն Ե. 316, 447

Աղայան Ղ. 330

Աղանուր Վ. 47

Աճեմյան Հ. 151

Աճեմյան Մ. 104, 176, 195, 217

Ամատյան Գ. 480

Ամբակում 93

Ամիրայան Ս. 240

Ամիրենց Հ. 361

Ամիրյան Մ. 315

Ամիրյան Ստ. 370

Այվազյան Ա. 170, 279
Այվազյան Գ. 95, 145
Այվազովսկի Հ. 234, 238, 269, 481
Անայիս 38, 47, 80, 375
Անդերսեն Հ. 92
Անդրանիկ (Օզանյան) 434, 435
Անդրեասյան Գ. 33, 34
Անդրեասյան Ե. 90, 141, 144, 147, 230
Անդրեասյան Հ. 38
Անդրեև Լ. 228
Անտոն Ալիք 240
Անտոնյան Ա. 6, 17, 19, 20, 25, 29-31, 34, 36, 37, 44-48, 97, 116, 117, 122-124, 126, 128, 132-134, 141, 143, 149, 151, 153, 176, 180, 190, 192, 193, 241, 244, 269, 270, 401
Աշըգյան Գ. 138
Աշոտ (Քեչյան) 63,
Աչըքպաշյան Ա. 381
Ապրսամ (Մամուրյան Մ.) 236
Ասուպ (Թեքեյան Վ.) 259
Ավո 282, 283, 288, 289, 298, 299, 300, 306-308
Սմիթ Ա. 113
Ատոմ 32, 164
Ատրուշան (Անտոնյան Ա.) 378
Արամ Ատիլ բեյ 153
Արամյան Հ. 11, 12, 20
Արապյան Կ. 316
Արապյան Հո. 117, 120, 375
Քրիսյան Ա. 338
Արգամ Անգեղացի 468-469-481
Արթինյան Հ. 409
Արլեն Մ. 381
Արխանյան Գ. 338, 368
Արծրունի Գր. 330
Արմեն Գարո (Գ. Փաստրմաճյան) 278
Արշակ (Քեչյան) 60, 63
Արշակյան Հ. 43, 47
Արշակուհի Թեոդիկ 71, 211, 213
Շիրակյան Ա. 402
Արփիարյան Ա. 180, 199, 216, 271, 286, 328
Արփիարյան Տ. 6, 25, 31, 48, 144, 180-182, 184, 187, 193, 199, 211, 214, 219, 220, 234, 235, 237-241, 270, 380

Բաբազյան Գ. 58, 164
Բաբլոյան Մ. 29, 133, 271
Բագրատունի Հ. 135
Բալզակ 127, 128, 143, 191, 228
Բահաթրյանց Ա. 34
Բայրոն 228, 229, 232, 233, 270
Բառնի Գ. 126
Բասմաջյան Կ. 375
Բարասկոս 37
Բարդուղիմեոս 93
Բարթիկյան Մ. 376, 377
Բարսեղ Շահպազ 20, 400
Բարսեղյան Գ. 119, 128
Բարունակ Ոսկի 430, 437
Բեկզադյան Ա. 449
Բեհաէդդին Շաքիր 403
Բեհբութ խան Ջիվանշիր 401
Բերնար Ս. 177
Բերնարդակիս 37
Բիզե 43
Բիրինջի-զադե Արիֆի բեյ 377
Բլոկ Ա. 387
Բոդլեր Շ. 232, 281
Բոլատ Ղ. 36, 81, 82
Բույոն Ֆ. 451
Բուսնար Լ. 35
Բուրժե Պ. 130, 147, 227
Բրադել Ժ. 35
Բրայենդ Վ. 234
Բրայս Ջ. 434, 481
Բրիան 451
Բրյուսով Վ. 387
Գ. լը Բոն 335
Գաբամաճյան Ս. 90
Գաբիկյան Խ. 426
Գազազյան Զ. 320, 322, 323, 327, 331, 334, 335
Գազանճյան Հ. 6, 25, 134, 143, 162, 177, 178, 180, 188, 190, 220, 230, 271
Գազանճյան Ս. 300
Գալեմքյարյան Գր. 380
Գալեմքյարյան Զ. 271, 375
Գալիկյան Հր. 381
Գալուստյան Գր. Հ. 40, 360, 366, 372, 373, 430, 444, 488
Գալփակճյան Ա. 17, 135, 244, 257, 270, 388, 389, 391,
Գամեր (Արփիարյան Տ.) 211, 225

Գայսերյան Հովհ. 41, 133, 153
Գասարճյան եղբայրներ 296
Գասպարյան Ի. 315
Գավաֆյան Գ. 380
Գարագաշյան քույրեր 47
Գարակյոզյան Մ. 408
Գարսյան Ստ. 366
Գարսնֆիլյան Հ. 56, 342
Գափամաճյան Մ. 271
Գեղամ 430
Գերեն Շ. 200
Գևորգ Ե, կաթողիկոս 257, 422
Գևորգյան Ռ. 9
Գոլանճյան Ե. 44, 46, 104, 105, 123, 217, 204, 228, 334, 335, 375, 377, 418, 444
Գոնկուր եղբայրներ 228, 230, 231
Գոչունյան Մ. (Քասիմ) 6, 18, 25, 36, 38, 93, 97, 103, 104, 133, 142-144, 146, 151, 170, 197, 198, 133, 242-247, 253, 270
Գոչունյան Ս. 133, 242, 243
Գովան-Պիննեմեճյան Է. 414
Գորկի Մ. 177, 228, 331
Գուլկևիչ 308
Գույումճյան Լ. 366
Գույումճյան Մ. 351, 478
Գույումճյան Տ. 381
Գուրյան Խ. 471
Գուրո 455, 458
Գրասեր 193
Գրիգորյան Հ. 436
Դ'Ալամբեր 82
Դանիելյան Ն. վարդ. 40
Դ'Անունցիո Գ. 335
Դավթյան Ս. 92, 101, 107, 169
Դավթյան Սեր. 301
Դավիթյան Գ. 59
Դավիթյան Ս. 361, 376
Դարբինյան Հ. 430, 444
Դեժարդեն 147
Դելակրուա 38
Դենիկին 422
Դըլանե Բ. 126
Դըֆլեր Ռ. 414
Դիդրո 82
Դիկկենս Չ. 92, 107
Դիտող 103
Դյումա Ա. 35, 281, 191

Դյումա-որդի 185, 414
Դյուֆո 458
Դոդե Ա. 92, 105, 107, 130
Դոստոևսկի 331
Դուրմուշ Է. 460
Դուրյան Ե. արք. 40, 156, 304, 305, 313, 375, 380
Դուրյան Ղ. եպ. 378-380, 480
Դուրյան Պ. 48, 91, 147, 238, 326
Ելքենճյան Տ. 228, 232-233
Եկավյան Ն. 268
Եղբայրյան Ստ. 430, 443
Ենովք Արմեն 16-18, 34, 37, 132, 180, 181, 204, 205, 209-212, 214, 215, 220, 226, 228, 230, 233, 322
Եսայան Զ. 25, 38, 48, 128, 162, 175, 177, 180, 197-199, 211, 212, 207, 208, 225-227, 244, 270, 320, 332, 333, 374, 485,
Եսայան Մ. 478
Եվտերպե 47
Ետան (Տեր-Անդրեասյան Ե.) 270
Երեցյան արքեպ. 314
Երկանյան Ա. 403
Երկանյան Կ. 136
Երկանյան Ստ. 100, 142
Երմոգ 103
Երվանդ Մ. 444
Զազա 103
Զայցև Պ. 387
Զապել Ասատուր 140
Զավեն պատրիարք 10, 79, 366
Զարդարյան Ռ. 5, 34, 36, 109, 115, 147, 162, 171, 172, 177, 180, 188, 209, 244, 248, 249, 250, 253, 270, 329, 485
Զարմայր 111, 112, 121, 127, 130
Զարյան Կ. 377, 380, 381
Զաքարյան 426
Զաքարյան Ա. 440
Զեյթունյան Վ. 366, 381
Զեվակո Մ. 270
Զեքի պեյ 288
Զեքի փաշա 153, 154
Զիյվեր պեյ 244
Զոլա Է. 101, 105, 127, 128, 130, 143, 147, 151, 177, 178, 231
Զոհրապ Գր. 33, 44, 46, 47, 55, 61, 101, 128, 132, 145, 157, 158,

171, 180, 183, 184, 185-187, 195, 197, 199, 200, 214, 216, 222-224, 218, 244, 245, 250-253, 270, 304, 376, 377, 387, 443
Զվարթախոհ Գր. 444
Էբյուզիա Թեվֆիք 261
Էլմասյան եղբայրներ 136
Էմերսըն 234
Էնժեաւ 103
Էնո Լ. 35
Էնվեր 289, 360, 362, 386, 403
Էնքսերճյան Ի. 41, 42
Էսաճանյան Լ. 200, 329, 387, 444
Էքշյան Ստ. 148
Էքսերճյան Ի. 139
Էքսերճյան Հ., քահ. 238
Թադևոսյան Ե. 380
Թալեաթ 27, 287, 289, 298, 308, 310, 311, 362, 394, 395, 401, 466
Թահմիսյան, քահ. 309
Թահսին 153
Թաղիաևոսյան Ե. 382
Թասլաջյան Ս. 130, 131
Թավշանճյան Հ. 128, 219, 220
Թեհլիրյան Ս. 401, 466, 479
Թեն Ի. 232
Թենիսոն 229
Թենսոյ Լ. 228
Թեոդիկ 10, 11, 14, 18, 19, 34, 104, 105, 133, 134, 143, 148, 244, 488
Թեոդիկ Արշ. 38, 270, 375
Թեորիե Ա. 227
Թեվֆիկ փաշա 400
Թերզյան Թ. 176, 195
Թերլեմեզյան Փ. 380
Թեքեյան Վ. 73, 80, 149, 244, 258-260, 270, 271, 276, 278-280, 332, 373, 374, 375, 380, 381, 488
Թլկատինցին 6, 36, 38, 47, 50, 124, 162, 172, 191, 211, 225, 329, 485,
Թղլյան Ս. 90, 131
Թյությունճյան Լ. 388
Թյությունճյան Ս. 47
Թոթովենց Վ. 38
Թոթովիկ 103
Թոլայան Ե. (Կավոռշ) 14, 19, 20, 63, 93, 97-102, 104, 109, 123, 126, 134, 149, 150

Թոլայան Վ. 401
Թոշիկյան Վ. 56, 170, 282
Թորգոմ 479
Թորգոմ վարդ. 40
Թորգոմյան Վ. 20, 239, 375, 401, 444
Թորլաքյան Մ. 401, 402,
Թորոսյան Գր. 100, 101, 149, 150
Թորոսյան Ն. 90
Թուղլաճյան Գ. 140
Թումայան Կ. 77, 78, 80
Թումանյան Հովհ. 330, 377, 382, 416, 417-419
Թուրյան Մ. 92, 107
Թոփալյան Մ. 56
Թոքմաճյան Ս. 376
Թրյանց Դ. 148
Ժամկոչյան Մ. 344
Ժիբ 140,
Ժիրայր Շիրակացի (Չոմլեքճյան Ս.) 17, 169, 170, 244, 388
Իբրանոսյան եղբայրներ 86, 120
Իզզեթ փաշա 153
Իզմիրլյան Մ. 313
Ինայեթյան Ա. 375
Ինկիլիզյան Հ. 136
Ինջեյան Խ. 350
Իսահակյան Ավ. 325, 330, 331
Լամարտին 105, 232
Լապուլե 105
Լենին Վ. 423, 424
Լեո 415
Լեսինգ 228
Լերմոնտով Մ. 228
Լևոնյան Գ. 29, 133, 271
Լեփսիուս Յո. 8
Լիլ Լ. 205, 216, 335,
Լիմոնճյան 240
Լլոյդ Ջ. 461
Լոթի Պ. 131, 227, 361
Լոնգֆելլո 232, 233, 234
Լուսինյան Ա. 81, 83
Խաժակ Ջ. 43
Խալիդ Զիյա 130
Խանդամուր Հայկազն (Ակյուլինե) 87, 92, 107
Խանճյան Գ. 195
Խաչատրյան Գ. 380
Խաչատուրյան Ս. 380, 472, 473

Խաչիկյան Մ. 387
Խաչկոնց Դ. 170
Խատիսյան Ա. 469, 470
Խոսրովյան 402
Խորունի Խ. 422
Խունկյան Ե. 41
Խուրշիդ փաշա 405
Խտշյան Ն. 34
Խրիմյան Մ. 50, 291
Ծիածան Շ. (Մեծարենց Մ.) 199
Կազել Ա. 377
Կամսարական Տ. 199, 216, 231
Կանարակիս 464
Կասյան Ա. 473
Կարապետ Ս. 116
Կարապետյան Թ. 381
Կարապետյան Պ. 91
Կարապո Զ. 323, 330, 335
Կարինյան Ա. 416, 417
Կարնեգի Է. 66
Կարպիս 64
Կետ (Գեղ) 2, 433
Կերեն Շ. 229
Կիլիկեցի 373, 444, 457
Կիրակոս 93
Կիրակոսյան Ա. 133
Կիրակոսյան Զ. 300, 405
Կյոզյուրյան Զ. 14
Կյուզելյան Բ. 478
Կյուլեսերյան Բ. վարդ. 39, 56, 80, 169, 198
Կյուլպենկյան Գ. 35
Կյուլպենկյան Պ. 87, 255
Կյուրճյան Մ. 10-11, 327
Կյուրքճյան Վ. 458
Կոբե Ֆ. 227
Կոլչակ 422
Կոկ Պ. 150
Կոմիտաս 352
Կոնան Դոյլ Ա. 126
Կոնստանտինով Ա. 335
Կոնտ Օ. 285
Կոպե Ֆ. 107
Կոստանդյան Գ. 168
Կորյուն վարդ. 39, 40
Կուտմոն (Գուրմոն) Ռ. 176, 205, 206
Կուրղինյան Շ. 331
Կրաֆորդ Մ. 387
Հաբեթյան Զ. 370

Հազարապետյան Ճ. 90
Հալիդե Էդիպ 364
Հակոբ Գուրգեն 90
Հակոբ Ոսկան 238
Հակոբյան Լ. 353
Հակոբյան Հ. 8, 141, 391, 423
Հակոբյան Մ. 148
Հակոբյան Տ. 398
Հաճյան Հ. 104, 234, 239
Համբարձում 93
Համբարձումյան Ե. 344
Համբիկյան Գր. 118
Համիդ 306
Համպեր 317
Համսուն Կ. 335
Հայգե 228
Հայկանուշ Մառք 20, 36, 41, 42, 44, 56-58, 93, 104, 105, 178, 195, 282, 320, 332, 374, 375
Հայկունի Ա. 47, 91, 239
Հաուզ 364
Հասան փաշա 255, 256
Հասան, շեյխ 155
Հարբորդ 471
Հարդեն 100
Հարենց Ն. 164
Հարությունյան Արտ. 6, 25, 36, 38, 128, 162, 168, 175-177, 180, 191, 200, 201, 203, 205-207, 217, 226, 229, 320, 321, 326, 331, 485
Հարությունյան Ս. 211
Հարությունյան Վ. 373
Հերեքե 268
Հեք, կոմիսար 448
Հեքիմյան Ս. 131
Հինդլյան Թ. 346
Հինդլյան Հ. 342, 367, 373
Հիքմեթ պեյ 404
Հյուզո Վ. 92, 105, 125, 183, 231
Հյուսեին Հիլմի փաշա 161, 250, 272, 289
Հյուսեին Ռահմի 130
Հովասափյան Հ. 14
Հովհաննես Ալթըն 269
Հովհաննես Ասպետ (Չիֆթե-Սարաֆ Օ.) 373, 374, 389, 391-396, 413, 414, 425-426
Հովհաննիսյան Հովի. 330
Հովհաննիսյան Մառի (Պարսամյան Մ.) 186

Հովհաննիսյան Ռ. 468
Հովհաննիսյան Տ. 440
Հովսեփ Էմին 148
Հովսեփ Վարդան փաշա (Վարդանյան Հ.) 240
Հուիթըր 234
Հոֆ 12, 79, 308
Հոֆման 106
Հոիփսիմե 127, 128
Հրանդ 327
Հրանտ Ասատուր 38, 44, 90, 93, 134, 195, 238
Հրանտ վարդ. 318
Հրաչյա 131
Ղևոնդ վարդ. 39
Ղևոնդյան Ա. 41
Ճանկուլյան Հ. 157
Ճեզայիրլյան Կ. 149
Ճեպել Ա. 426
Ճերմակյան Թ. 56
Ճիզմեճյան Ա. 292, 293, 377
Ճիվելեկյան Տիգրան 108, 240
Ճոլոլյան Հայկ 196, 338, 368
Մալաթյան Գ. 373
Մալարմե 147, 205, 208
Մալեզյան Ե. 334
Մալեզյան Վ. 169, 189, 202, 234, 303, 305, 316
Մալխաս Գր. 34, 191, 231, 230, 330
Մախոխյան Վ. 380
Մահմուդ Շեվքեթ փաշա 133, - 262, 289
Մաղաքյան Պ. 131, 148
Մամին-Սիբիրյակ Դ. 228
Մամուրյան Հրանտ 6, 13, 25, 165, 176, 162, 163, 171, 179, 282, 299, 301, 314, 446, 447-450, 452-455, 459-463, 467-470, 472, 481
Մամուրյան Մ. 146, 162, 168, 169, 173, 177, 234, 235, 236, 238, 239, 446, 474, 475, 477, 478, 481
Մայակովսկի Վ. 387
Մանուկյան Ա. 41
Մաոկոհթ 103
Մար Ժ. 35
Մարա (Անտոնյան Ա.) 176
Մարգարիտ Գոթիե 185
Մարիանե Տամատ 211, 213
Մարիո Մ. 151

Մարկ Տվեն 126
Մարմիե Ք. 92, 107
Մարմոնտել 107
Մարուքե 93
Մարքս Կ. 433
Մարքս Մ. 386
Մեդեսի Գ. 203
Մելանիա (Տեմիրճիպաշյան Ե.) 188
Մելանիգրոս Ա. 37
Մելիքյան Է. 375
Մեծատուրյան Թ. 370
Մեծարենց Մ. (Մեծատուրյան Մ.) 5, 36, 38, 44, 47, 48, 97, 104, 105, 147, 178, 180, 195, 196, 199, 200, 202, 204, 205, 210, 214, 215, 228, 326, 381, 485,
Մեհմեդ բեկ 295,
Մեհմեդ Լ. 72
Մեննիշյան Գ. 31
Մեսյայան Ե. 183, 200, 229
Մեսրոպ վարդ. 39
Մետերլինկ Մ. 205
Մետերնիխ, դեսպան 8
Մերիմե Պ. 43
Մերջանով Գր. 352, 367
Մերսետես (Անտոնյան Ա.) 238
Մեքալըմ Ֆ. Ու. 372
Միլվուա 335
Միհրան Սվազլը 465
Մինաս Չերազ 78, 444
Մինասյան Ի. 211, 213
Միսաքյան Շ. 117, 128, 149,
Միրբո Օ. 128, 228, 229
Մյունիր փաշա 286
Մկրյան Հ. քահ. 279
Մկրյան Մ. 356, 368
Մկրտիչյան Լ. 36, 80, 282, 283, 302, 305
Մկրտչյան Ա. 14
Մյասնիկյան Ա. 420, 472
Մյուբահյաճյան Ա. 19
Մյուհենտիսյան Հ. 69
Մյուսե Ա. 229
Մնակյան Մ. 131, 148
Մնացականյան Լ. 127, 322
Մնձուրի Հ. 374, 381
Մոլիեր 125, 227
Մոկլե Ք. 126
Մոմճյան Մ. 69

Մոյրյան Զ. 360
Մոնե Հ. 151.
Մոնտեսքյո 114
Մոպսւսան 105, 130, 151
Մոստիչյան 426
Մոստիչյան Հ. 78
Մորեաս 203, 205
Մուշեղ եպիսկոպոս 54, 167, 244, 287, 314
Մուսուաֆա 245
Մուրադ Դ 270
Մուրատյան Տ. 113
Մսերյան Գր. 169
Մլմըրյան Հ. 65, 380, 428, 429
Յաղո՛ւպ Արթին փաշա 78
Յանըգյան Մ. 370
Յափուճյան Վ. 338, 368
Յուդենիչ 422
Յուսսակ (Նաթանյան Մ.) 29, 31
Յուսուֆյան Զ. 29
Յուսուֆյան Պ. 239
Յուսուֆյան Տ. 69
Նազարյան Հ. 228
Նազարյան Տ. 217
Նազարյանց Հ. 320, 330, 334, 335
Նաթանյան Մ. 29, 31, 389, 391, 394
Նալպանտյան Մ. 144, 330, 327
Նաղաշ Հովնաթան 225
Նանսեն Ֆ. 424
Նավասարդ Կ. 282
Նավասարդյան Ա. 117
Նավարյան Ա. 177, 178
Նարեկացի 151, 243
Նեմիրովիչ-Դանչենկո Վ. 331
Նեմլիզադե 246
Նեմցե Զ. 34
Ներշապուհ 103
Ներսես վարդ. 54
Ներսեսյան Ն. 335, 379, 380
Ներվալ Ժ. 335
Նինէճանեան Մ. 32
Նորատունկյան Գ. 278, 400
Նորատունկյան Հ. 276
Նորդաու Մ. 185
Նորման Ժ. 227
Նորվենս Լ. 126
Նուպարյան Մ. 56, 150, 167, 168, 169, 282, 316, 320, 335, 377
Նուսրեթ բեյ 439

Նուրանիա (Տեմիրճիպաշյան Ե.) 188,
Նուրհան (Մամուրյան Հ.) 166, 167
Շաթրյան Լ. 104, 105, 123, 143, 151, 360
Շահ Աբաս 318
Շահեն 372
Շահին Գ. 353
Շահինյան Գ. 104, 168
Շահխաթունի 414
Շահնազար Հ. 273-276, 278, 279
Շահնուրի բարեկամը 169, 170
Շահումյան Հ. 478
Շահվերդյան Դ. 416,
Շահրիկյան Հ. Ատոմ 169
Շահրիման Վ. 430-432, 434, 435, 439, 440-444
Շամտանճյան Մ. 6, 19, 25, 36, 244, 389, 408, 426, 427, 488
Շանթ 414
Շավասպ Ծիածան (Մեծարենց Մ.) 196
Շատոբրիան 105
Շարուրյան Ա. 129
Շարպ Ու. 187
. Շարփ, դեսպան 448
Շելլի 228, 232
Շենիե Ա. 281
Շեքսպիր 183, 270
Շիլլեր 105
Շիդայ 145
Շիրակյան Արշ. 403
Շիրվանզադե 327, 380, 479, 480
Շոպենհաուեր 206
Շուշան 145
Շվաբ 228
Շրայնըր Օ. 126
Ոսկանյան Ստ. 47, 193, 234, 236, 237, 238, 239, 466
Որբերյան Մ. 90
Որբերյան Ռ. 36, 47, 48, 50, 106, 162, 172, 173, 180, 189, 235
Չամուռճյան Հովի. 234, 235, 241
Չանղըր 439
Չարքչյան Ա. 364, 366
Չափրաստ (Չափրաստճյան) 132, 148, 414
Չելեպյան Ա. 165
Չեխով Ա. 228

Չերազ 286, 426
Չերքեզ Մեհմեդ 153
Չիլինկիրյան Գր. 47, 169, 379
Չիլինկիրյան Հ. 312
Չիլճյան Մ. 42
Չիֆթե-Սարաֆ Օ. (Աբիսողոմ-
յան Հովի.) 6, 25, 47, 72, 75, 76, 80,
97, 109, 128, 145, 162, 180, 188,
189, 197, 199, 224, 225, 228, 229,
320, 329, 330, 373, 389, 391, 485,
488
Չյոկյուրյան Տ. 6, 36, 38, 48, 50,
180, 201, 202, 232, 485
Չոբուրյան Է. 381
Չոպանյան Ա. 281, 286, 326, 374,
413
Չոպանյան Գ. 370
Չոսեր 228, 232
Չուխաճյան (Չուհաճյան) Տ. 236,
414
Չրաքյան Տ. (Ինտրա) 36, 46, 50,
92, 97, 104, 105, 197, 202-204
Պալղազարյան Ղ. 234, 239
Պալեոզյան Վ. 460
Պալյան Տ. եպ. 40, 380
Պալյաններ 269
Պաղտատյան Կ. 268
Պանայոտիս 37
Պապիկյան Հ. 53, 54, 280, 281
Պապոնյան Մ. 81, 84, 94
Պասմաճյան 238
Պատկանյան Ռ. 481
Պարթևյան Ս. 71, 73, 80, 244,
282, 283, 285, 286, 288, 297, 298,
301-305, 312, 314, 320, 321, 331
376, 387, 397, 446, 480
Պարոնյան Հ. 43, 47, 93-96, 99,
104, 124, 125, 126, 145, 146, 149,
150, 174, 185, 186, 234, 238, 239,
253, 327, 328, 328, 403, 427
Պարսամյան Մ. 46, 97, 128, 129,
178, 186-188, 200, 202, 204, 215,
216, 221, 222, 228, 229, 376, 377
Պարտիզակցի Վ. վարդ. 39-41
Պարտիզպանյան Վ. 376
Պարույր (Քեչյան) 63
Պաքրճյան Զ. 460
Պեզճյան Զ. 372
Պելիսիե Ժ. 178
Պեյզատ Ռումետ Հովի. 38

Պեյլերյան Ա. 282, 314
Պենլյան 148
Պեշիկթաշլյան Ն. 430, 444
Պեպերյան Ռ. 426
Պեստալոցցի 342
Պետյան Գ. 435
Պետրոս Մեծ 472
Պետրոսյան Ա. 340
Պետրոսյան Դ. 198
Պերպերյան Ա. 370
Պերպերյան Մ. 375,
Պերպերյան Ն. 85, 89, 92
Պերպերյան Շ. 380, 426
Պերպերյան Ռ. 90, 105, 106, 141, 143, 144, 150, 180, 223, 228, 230, 231
Պեպել (Բեբել Ա.) 433
Պիննեմեճյան 131
Պլեխանով (Վ.Գ.) 433
Պյորեքճյան Պ. 370
Պոզաճյան Բ. 81, 84, 87, 170
Պողոս Նուբար փաշա 28, 77, 257, 316, 364, 374, 398, 412, 432, 433, 435, 438, 470, 471
Պողոսյան Հ. 374, 444
Պո Է. 233, 234
Պոյաճյան Ա. 89
Պոյաճյան Գ. 29
Պոնճուքյան Հ. 430
Պույեօն (Բույոն) 455
Պուպլի Գ. 150, 163, 164, 236, 286, 292, 350
Պրեվո Մ. 131, 228
Պրիան (Բրիան) 455
Պրյուդոմ Ս. 228, 230, 335
Պրոպոպապատակիս 466
Պոտլեո (Բողլեր) 201
Ջեմալ Ազմի 401, 403
Ջեմալ Ուղուզ 439
Ջեվադ բեյ 72
Ջեքս, միսիոներ 8
Ջիվանշիր 402
Ջվանշիր Հ. 378
Ռահմի բեյ 311
Ռամո Ժ. 227
Ռաուֆ բեյ 437
Ռեմբո 147
Ռեյնալ 114
Ռենան Է. 232, 335
Ռենիե Հ. 126, 203, 205

Ռիբո Ժ. 202
Ռիշ 35
Ռիշբեն 227
Ռիչարդ Առյուծասիրտ 477
Ռիֆաթ Մ. 249
Ռիֆաթ Մեվլան զադե 306
Ռշտունի Գ. 47
Ռշտունի Ս. 366
Ռոզեզր 228
Ռոզմերի 425
Ռոիդիս Է. 37
Ռոլինա Մ. 228, 335
Ռոմանոս 103
Ռուսինյան Ն. 239
Ռուսսո 114, 342
Սաատեթյան Ա. 366
Սաբահէդդին, իշխան 152
Սազի Լ. 151
Սալմասյան Ա. 393
Սամիկյան Ռ. (Տոմինո) 193, 194, 203, 206, 207, 208, 211, 220-221, 226, 228, 229, 328
Սայիդ փաշա 77
Սայիդ Հալիմ փաշա 308, 402
Սանդ Ժ. 191
Սանդո 337
Սառա Բ. 98
Սավայան Հ. 351
Սարգսյան Ա. 138
Սեթ 169
Սելիմ Սըրրի 357
Սենկևիչ Հ. 147
Սենտ-Բյով 232
Սեսիլ, լորդ 452
Սետեֆճյան Ռ. 148
Սերաո Հ. 335
Սերոբյան Վ. 263
Սևակ Ռ. (Չիլինկիրյան) 6, 47, 48, 50, 180, 216, 217, 320, 332, 333, 439, 443, 485
Սթերեադիս, կոմիսար 459, 464, 466
Սիամանթո (Յարճանյան Ա.) 48-50, 147, 151, 326, 332, 333, 443
Սիմեոն ծերունի 103
Սիմոնյան 136
Սիպիլ 25, 36, 34, 93, 104, 105, 168, 176, 178, 189, 200, 234
Սիսակ (Մամուրյան Մ.) 236
Սիսակ Ֆերիտ բեյ 153

Սիրամարգ Տ. 346
Սիրանույշ 131, 148
Սիրունի Հ. Ճ. (Ճոլոյան Հ.) 20, 334, 364, 376, 417
Սմբատ 64
Սմբատ Բյուրատ 34, 133, 151
Սյուլլի Մ. 177
Սյուրմեյան Տ. 48, 49
Սոլոգուբ Ֆ. 387
Սոս Վանի 372
Սուզիկյան Ե. 261
Սուձո 37
Սունդուկյան Գ. 330
Սուրենյան Ա. 50, 52, 53, 54, 55, 395
Սպարթալի 165
Սպարթալի Թ. 316
Սպարթալյան Մ. 116
Սպարթալյան Ս. 75
Սվազլը Մ. 457, 465, 466
Սվաճյան Հ. 69, 95, 145, 185, 186, 222, 239, 362
Ստեփանյան Գ. Խ. 240
Ստեփանյան Կ. 157, 171, 184
Ստիվենսոն Ռ. 126
Սրապյան Լ. 32, 92, 107
Սրապյան Մ. 211, 212
Սրմաքեշխանյան Ե. (Երուխան) 29, 35, 329
Սրմքեշյան Գ. 91
Վագներ Շ. 228
Վահե-Հայկ 444
Վահրամ Թաթուլ 204, 377
Վաղինակ 169, 170
Վաղինակ (Փափազյան Վաղինակ) 103
Վանիկյան Գ. 381
Վասակ 415
Վարազ 46, 149, 150
Վարդանյան Հ. 240
Վարժապետյան Ն. 291
Վարուժան Դ. 6, 326, 327, 332, 375, 439, 443, 485
Վարպետյան Ղ. 236
Վելի բեյ 423
Վեհունի Ա. 314
Վեմյան Խ. 315
Վենիզելոս 461
Վեռլեն 201, 202, 205
Վեռն Ժ. 35, 92, 107, 151, 228

Վեստենենկ 12, 79, 308
Վէրհառն 203
Վիլսոն Վ. 453, 474
Վիվիանի 460
Վոլտեր 114, 235, 335
Վտարանդի Ա. 377
Վրանգել 422
Վրացյան Մ. 382
Վրույր 379
Տալոբ 114
Տաղավարյան Ն. 7, 6, 20, 75, 400
Տեմիրճիպաշյան Ե. 38, 47, 134, 146, 150, 151, 176, 180, 182, 188, 197, 200, 216, 217, 218, 231, 327, 328
Տեվեճյան Գ. 83
Տեվլեթյան Ե. 90
Տետեյան Տ. Հ. 168, 169
Տեր-Անդրեասյան Ե. 81, 84, 133, 134, 151, 157, 161, 170, 244, 250, 251, 253, 270, 359, 360
Տեր-Բարթող Ս. 41
Տեր-Հակոբյան Հ. 36, 133, 140, 142, 148, 151, 244, 282, 389, 398, 399, 413, 418, 420
Տեր-Ներսեսյան Հ. 366, 389
Տերոյենց Հ. 170
Տեր-Սահակյան Թ. 442
Տեր-Սահակյան Հ. 430
Տիգրան Զավեն 11
Տիգրանյան Մ. վարդ. 69
Տյուսաբ Ս. 186, 190, 191, 193, 212, 223
Տոլստոյ Լ. 177
Տոնճյան 245
Տոտոմյանց, պրոֆ. 67
Տրդատ եպ. 297
Տրոցկի 424
Րաղըպ 153
Րաֆֆի 35, 291, 292, 435
Ուայլդ Օ. 228
Ուելս Հ. 126
Ութուճյան Գ. 78
Ութուճյան Ե. 370
Ութուճյան Կ. 150, 180, 189, 234, 235, 237, 387
Ութուրաք Ալի 300
Ուլանդ 228
Ուտուրյան Մ. 109, 121, 123, 191, 194, 213, 217

Ուշագլյան Կ. Պ. 344, 366, 369
Ուրախենց Արշո 314
Փանոսյան Աղ. (Ալփասլան) 38, 47, 92, 93, 104, 105, 107, 109, 176, 180, 189, 195, 218, 219, 234, 244, 247, 270, 326, 360
Փանոսյան Կ. 133, 134, 234, 240, 241, 243
Փանոսյան Զ. 375
Փարամազ 381
Փափազյան Ա. 193
Փափազյան Ավ. 12
Փափազյան Հ. 368
Փափազյան Մ. 41, 42
Փափազյան Վ. 17, 81, 84, 93-97, 99, 101, 103, 123, 331, 342, 343, 353, 367
Փափազյան Վահ. 356, 368
Փիրումյան Ս. 417
Քասիմդուխտ (Գոչունյան Մ.) 243
Քելեկյան Տ. 443
Քեմալ (Մուստաֆա) 363, 387, 386, 399, 406, 409, 410, 423, 437, 439, 452-454, 457, 458, 462, 464, 465, 466, 472, 474
Քեյչըլ 459
Քեշիշյան Բ. 55, 282
Քեշիշյան Խ. 169, 184, 185
Քեշիշյան Մ. 113
Քեչյան Բ. 6, 19, 25, 60-68, 71, 75, 76, 78, 97, 157, 170, 177, 253, 387, 389, 399, 424, 488
Քերեստեճյան Գ. 338, 368
Քերզոն 398
Քիթապճյան Ա. 121
Քիյար Պ. 322
Քիրիթլի Ահմեդ 249
Քիրիշճյան Լ. 80
Քյամիլ փաշա 77, 153, 154, 255, 289
Քյուրքճյան Մ. 38
Քյուրքճյան Ս. 380
Քյուֆեճյան Հ. 323-326, 330
Քոպռա 103
Քսավիե 414
Քրիսթի Թ. 272
Քրիսյան Հ. 342-344, 367

Քրիսյան Շ. 337-342, 344-346, 348-351, 353-356, 368, 369,
Քրիսյան Ա. 369
Օբլոմիևսկի Դ. 202
Օշական Հ. 380, 381
Օսման Նուրի 12
Օսման փաշա 255
Օտապաշյան Ս. 119
Օտյան Գր. 481
Օտյան Ե. 10, 19, 20, 25, 29, 34-36, 185, 186, 244, 255- 257, 270, 271, 276, 278, 279 305, 362-364, 373, 374, 389, 396, 392, 397, 400-405, 413, 415, 418, 425, 427, 428, 486-488
Օրմանյան Մ. 39, 61, 62, 73, 156, 157, 314
Ֆակե Է. 206, 207
Ֆասուլյաճյան Թ. 148
Ֆարհատ Ա. 106
Ֆարհատ Նորիս 169, 177
Ֆեթհի պեյ 289
Ֆեհիմ բեյ 153
Ֆեներ 90, 105, 106
Ֆեներճյան Գ. 381
Ֆերիդին օղլու Թոփալ Օսման 438
Ֆիլդ Է. 38
Ֆիքրեթ Թ. 130
Ֆիքրի Ի. 71
Ֆիքրի Լ. 256
Ֆլոբեր 143, 231, 237
Ֆյուլե Ա. 236
Ֆոս Ռ. 151
Ֆոր Պ. 335
Ֆորժե Հ. 126
Ֆրայիլգրաղ 106
Ֆրանս Ա. 228

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Աղաբազար 92, 368, 442
Աղանա 6, 7, 26, 35, 53–55, 69–73, 137, 158, 159, 178, 179, 254, 264, 267, 268, 271–274, 277, 280, 284, 285, 287, 290, 297, 298, 301, 320, 321, 355, 438, 439, 457, 458, 459, - 485
Աղրբեջան 387, 402, 411, 475
Աղրիանուպոլիս 66, 115, 119
Աթենք 63
Ալաչաթա 310
Ալեքսանդրեթ 179
Ալեքսանդրիա 63
Ալեքսանդրապոլ 398, 417, 421, 449, 454
Աղթամար 9
Ամանոս 457
Ամասիա 86, 92, 120, 349, 415, 437, 463
Ամերիկա (ԱՄՆ) 56, 62, 64, 118, 172, 370, 371, 418, 430, 433, 435, 438, 440, 447, 458, 461, 467, 471, 483
Այաշ 337, 357
Այդըն 115, 316, 317
Այնթապ 456
Անատոլու 385, 454
Անգլիա 86, 142, 306, 345, 373, 397, 431, 448, 450, 451, 454, 455, 461, 462, 469, 474, 475
Անդրկովկաս 67
Անդրկովկասյան հանրապետություններ 421
Անկարա (Էնկյուրի) 386 388, 394, 395, 406, 423, 449, 453, 454, 462, 462, 489
Առնավուտ գյուղ 408
Ասիա 463
Ավինյոն 270
Ավստրիա 118, 354
Ատանա 441
Արաբկիր 64, 349
Արարա 439
Արևելյան Եվրոպա 453, 472
Արևելյան Հայաստան (Ռուսահայաստան) 318, 393, 398, 399, 419, 433, 484
Արևմտահայաստան (Արևմտյան Հայաստան, Թուրքահայաստան) 5, 6, 7, 10, 11, 13, 14, 21, 23, 26, 27, 28, 29, 30, 39, 50, 56, 61, 62, 63, 66, 67, 76–79, 86, 89, 92, 112, 114 118, 129, 134-136, 138, 155, 161, 172, 181, 208, 247, 248, 256, 259, 263,

266, 269, 284, 290, 291, 294–296, 307, 308, 328, 337, 343, 349, 354, 367, 392, 397–399, 407, 413, 434–437, 456, 461, 468, 471, 474, 475, 483, 484
Արդն 440
Արմաշ 31, 39, 116
Արմաւիր 435
Արսլանբեկ 263
Բաբա Սկալա 311
Բաբերդ 439
Բագարջըք 118, 119
Բալկաններ 258, 261, 263, 265, 289, 309, 319, 333, 349
Բալու 40, 254
Բաղդադ 10, 78
Բաղեշ 118, 155, 437
Բայանդըր 318
Բայաս 179
Բանկալթի թաղամաս 31
Բասրա 78
Բարիզ 413
Բաքու 401
Բելգիա 470-471
Բեյլերբեյ 408
Բեռլին 77, 401, 403, 479
Բերա 97, 98, 102, 148, 347, 390, 411
Բիթլիս 249, 257, 265, 407
Բոսնիա 258
Բուլղարիա 62, 118
Բուխարեստ 64
Բուրգաս 63, 118
Գասապա 66
Գատը գյուղ 102, 351, 352
Գելիբոլու 9
Գերմանիա 8, 12, 258, 296, 306, 434
Գնըք 58
Գոսովա (Կոսովո) 255
Գուրուչեշմե 347, 408
Դանուբ 472
Դարդանել 8, 9
Դիարբեքիր (Տիգրանակերտ) 62, 69, 118, 246, 257, 265, 350, 437
Դյորթ Յոլ 54, 179, 457, 459
Եգիպտոս 62, 64, 369, 459
Եղեսիա 439
Եդիգուլե 262
Ենի Լիման 310
Եվդոկիա 275
Եվրոպա 33, 41, 62, 77, 86, 110, 177, 185, 190, 260, 261, 276, 371, 391, 393, 397, 399, 419, 452, 453, 465, 468, 471, 484
Երևան 33, 369, 435, 473
Երզնկա 14, 154, 265, 307
Երիզա 135

Երուսաղեմ 9, 169, 170, 278, 303
Եփեսոս 310
Զանգեզուր 424
Զեյթուն 34, 240, 270, 298, 457
Զմյուռնիա (Իզմիր) 7, 13, 14, 21, 23, 25, 29, 32, 55-58, 66, 72, 81, 92, 100, 109-112, 136, 142, 150, 162-167, 173, 220, 236, 239, 243, 264, 275, 282, 285, 287, 289, 294, 301, 303-307, 309-321, 335, 349, 353, 359, 368, 370-371, 375-380, 446, 449, 457, 458-460, 464, 466-467, 469, 473, 474, 476-481, 483-484, 486, 488
Էգեյան ծով 461
Էգեյան կղզիներ 310
Էյդեմիշ 58, 59, 112, 316
Էնկյուրի 86
Էջմիածին 10, 28, 39, 401
Էսքիշեհիր 411, 463
Էրզրում (Կարին) 13, 92, 118, 257, 407, 437-439
Թեոդոսիա 38
Թիրե 115
Թիֆլիս 33, 87, 421
Թոքատ 13
Թրակիա 458, 461, 463, 476
Ժնև 452, 460
Ինեբոլու (Կաստամոնու) 423
Իտալիա 410, 431, 448, 450
Լա Հե 73
Լիվերպուլ 110
Լոնդոն 337, 394, 397, 398, 400, 453, 454, 455, 462, 466, 475
Խասգյուղ 121, 408
Խարբերդ 13, 62, 64, 118, 246, 257, 295, 423, 437
Խիզան 116, 296
Խոյ 418
Խոտորջուր 13
Խորհրդային Հայաստան 381, 382, 383, 391, 393, 398, 412, 416, 417, 418, 420-424, 428, 449, 472, 473, 474
Խորհրդային Ռուսաստան 387, 409, 410, 412, 416, 422, 448, 452, 453, 471, 472, 474, 475
Կ. Պոլիս (Ստամբուլ) 7-9, 11-15, 17-21, 23, 25, 28, 29, 31, 33, 38, 39, 48-50, 55, 56, 60-64, 66, 69, 75, 79-81, 89, 91, 96-98, 100, 101, 108, 109, 111, 117, 119, 123, 127, 133, 134, 140, 149, 154-156, 159, 160, 162, 169, 173, 180, 181, 190, 195, 213, 238, 242-244, 259, 267, 271, 274, 278, 281, 282, 297, 304, 305, 307, 313, 314, 316, 330, 337, 338, 341, 343, 344, 346, 349-356, 359-

361, 365, 366-372, 374, 375, 380, 382, 383, 384, 389, 390, 392, 393, 396, 397, 401-405, 408, 410-418, 422, 425, 428, 430, 436, 437, 441-448, 454, 459, 462, 468, 469, 472, 481, 483-489
Կահիրե 449, 471
Կարաբունար 112
Կարաթաշ 318
Կարահիսար 476
Կարճկան 116
Կարս 382, 386, 410, 420, 421
Կեսարիա 24, 40, 92, 295, 296, 415
Կերմենճիք 112
Կիլիկիա 6, 24, 35, 50, 51, 54, 70, 71, 83, 160, 250, 254, 264, 272, 295, 297, 298, 384, 389, 398, 399, 436, 438, 439, 441, 447, 455-459, 468, 476, 481, 488
Կիրասոն 86, 298, 438
Կյուրին 110, 111
Կոնիա 137, 364
Կովկաս 67, 293, 386, 402, 435, 453, 471, 472
Կորդելիա 477-479
Կորֆու 332
Կում Կափու 153, 347, 408
Հալքի 148
Հաճըն 54, 264, 298, 300, 457
Համշեն 34
Հայաստան 82, 255, 257, 306, 307, 362, 367, 373, 381-383, 386, 389, 398, 410, 417, 420, 421, 424, 430, 434, 436, 437, 451-453, 461, 468-473, 475, 488
Հայաստանի Հանրապետություն 362, 364, 367, 397, 421, 433, 434, 436, 467, 468, 469
Հայկոոպ 416
Հայնոց թաղ 165, 467
Հասան Բեյլի 298
Հասանբեկ 69
Հերեքե 268
Հյուսիսային Կովկաս 33, 423
Հռոմ 341, 342, 402
Հունաստան 27, 341, 421, 431, 446, 454, 459, 460, 461, 462, 463, 464, 466, 475,
Ղալաթիա 262, 390
Ղարաքիլիսա 417
Ղրիմ 33
Մալաթիա 246, 407
Մալթա 402, 404, 405
Մալկարա 64
Մակեդոնիա 310

Մանիսա 58, 59, 83, 115, 136, 311, 316, 317, 476
Մանչեստր 86, 113
Մարաշ 298, 456, 457, 459
Մարզվան 349, 368, 369, 415
Մարսել 63
Մաքրիզյուղ 352
Մենեմեն 58, 59, 310, 316, 317, 318
Մերձավոր Արևելք 363, 417, 450, 454, 484
Մերսին 71, 137, 179, 249, 264, 298, 457, 459
Միջագետք 363
Միջին Արևելք 450, 454, 484
Մոնտենեգրո 403
Մոսկվա 33, 325, 382, 410, 421, 423
Մոսուլ 10
Մուդրոս 15, 16, 359, 389, 448, 450, 486
Մուշ 155, 254, 295, 439
Յլդըզ, պալատ 247, 258
Յոզղատ 439
Նազիլլի 112, 316, 317, 318, 476
Նախիջևան 410
Նանսի 271
Նիկոմեդիա 14, 51, 86, 265, 263, 404
Նյու Յորք 87
Նովոռոսիյսկ 423
Նորտուզ 116
Շամշադին 417
Շապին Գարահիսար 245, 246
Շատախ 116, 296
Շիշլի 135
Շումլա 63
Չանաքկալե 9
Չարսանճագ 254
Չեշմե 310
Չեռնոգորիա 471
Չիֆթլիկ 310
Չոք Մարզվան 70, 179
Չրաղանի պալատ 269
Պալաթ, թաղ 38, 408
Պախչե 298
Պանտրմա 397
Պարսկաստան 87, 318, 417, 435, 472
Պարտիզակ 14
Պենկազի 256
Պեշիկթաշ 347, 391, 408
Պեպեք 148, 408
Պետերբուրգ 67
Պերկամա 58, 480
Պերկի 310
Պլովդիվ 64
Պյատիգորսկ 423

Պոյաճը գյուղ 347
Պոնտոս 454
Պովաճըզ 310
Պրուսա 51, 64, 135, 268, 411, 465
Ջենովա 455, 475
Ռոդոստո 80, 463
Ռումելի 148, 294
Ռումինիա 62, 118
Ռուսաստան (Ռուսիա) 28, 33, 62, 78, 296, 299, 306, 308, 382, 384, 386, 399, 410, 421-424, 451-455, 468, 472, 473, 475, 484,
Ռուսչուկ 63, 118, 119
Սալիհլի 115, 136
Սալմաստ 417
Սալոնիկ (Սելանիկ) 66, 70, 79, 148, 179
Սամաթիա 91, 415
Սամսոն (Սամսուն) 137, 148, 349, 423, 463
Սասուն 172
Սեբաստիա (Սվաս) 13, 86, 118, 265, 363, 415, 423, 437, 463
Սերբիա 403, 471
Սեր 383, 387, 397, 398, 399, 407, 421, 448, 450-453, 456, 461, 462, 466, 468, 470, 471, 474
Սիս 9, 457
Սիրիա 268, 363, 400, 456, 458
Սկյուպ (Սկոպլե) 149
Սկյուտար 337, 347, 408
Սղերդ 32, 299, 415
Սյոլյոզ 411
Սյոքե 58, 59, 112, 317
Սոֆիա 118
Ստոկհոլմ 356, 357, 368
Սուեդիա 457
Սուչավա 118
Սուրմալու 410
Վան 13, 32, 62, 64, 116, 118, 137, 154, 257, 265, 295, 299, 349, 407, 437
Վառնա 64
Վասպուրական 288, 314, 415
Վարագա 367
Վարի (Ներքին) Մանիսա 317, 480
Վերի(ն) Մանիսա 52, 317, 480
Վերսալ 462
Վլադիկավկազ 423
Վրաստան 386, 424, 474
Տարենտե 92
Տարոն 288, 314
Տարսոն 264, 441, 457
Տարսուս 179, 272
Տրապիզոն 14, 86, 137, 148, 246, 423
Տրիեստ 239

Ուլուճագ 310
Ուշաք 465
Ուրֆա 64, 195, 457
Փարիզ 78, 82, 148, 236, 285, 286, 337, 362, 364, 371, 374, 393, 400, 412, 431, 433-436, 449, 452, 453, 470, 471, 473, 487
Փոքր Ասիա 30, 64, 67, 400, 452, 453, 460, 462, 463, 472
Քարակոմրուկ 38
Քարափ 165, 315
Քերեմեթ 404
Քիոս 310
Քղի 32
Քյոթահիա 57, 463
Քրդաստան (Քուրդիստան) 69, 306,
Քրքաղաչ 58, 316, 317
Քուշադա 58, 318
Օսմանյան Թուրքիա (Թուրքիա, Տաճկաստան) 5-8, 10-14, 19, 23, 24, 27, 39, 60, 63, 65-67, 74, 78, 79, 86-88, 108-111, 113-115, 129, 134, 136, 137, 148, 149, 152, 155, 158, 161, 239, 242, 243, 248, 250-254, 258, 261, 267-269, 273, 276, 284, 287, 291, 299, 308, 309, 313, 314, 321, 348, 350, 352, 355, 357, 359, 362-364, 371, 372, 375, 382-389, 394, 395, 397, 398, 399, 400, 402, 406, 409, 410, 421, 423, 437, 439-441, 444, 450, 451, 455, 456, 458, 460, 462, 466, 472, 475, 483-486
Օրդու 415
Ֆեներ 148
Ֆիլիպե 64, 118
Ֆլորենցիա 224
Ֆրանսիա 62, 140, 142, 270, 287, 375, 431, 399, 410, 438, 448, 450, 451, 454-456, 458

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

«Ազատամարտ» 12-14, 30, 55, 159, 253, 276, 277, 278
«Ազդարար» 16
«Ալեմդար» («Դրոշակակիր») 267
«Ահեկ» («Համաձայնություն») 296
«Ամալթիա» 470
«Ամերո լիպտոս» 309
«Ամէնուն տարեցոյց» 10, 18
«Անատոլու» 305, 309, 311
«Աշխատանք» 13, 23
«Առավոտ» 13, 14, 23, 472
«Ավետաբեր» 25
«Ատամնաբույժ» 388
«Ատրուշան» 376, 377, 488
«Արագած» 430-444
«Արդարամարտ» 14, 359
«Արև» 471
«Արևելյան ակումբ» 164
«Արևելյան մամուլ» (հանդես) 5, 7, 55, 81, 100, 157, 162-169, 171, 172, 174, 175, 177-179, 219, 235, 243, 275, 282, 290,
«Արևելյան մամուլ» (թերթ) 13, 375, 445-462, 464-477, 480, 481, 484, 488,
«Արևելք» 5, 7, 13, 24, 29-36, 108, 129, 153, 159, 164, 188, 208, 216, 231, 237, 243, 305, 360
«Արիամարտ» 359
«Արձագանք» 23, 29, 282
«Արշալույս Արարատյան» 81, 239
«Արշալույս» 23, 29, 55, 56, 57-59, 282
«Արփի Արարատյան» 320
«Աքշամ» («Երեկո») 403, 404
«Բազմավեպ» 49, 238
«Բայրաքտար» («Դրոշակակիր») 306
«Բանբեր» 13
«Բանբեր-վերջին լուր» 389
«Բարձրավանք» 380, 388
«Բեյան» («Հայտարարություններ») 78
«Բյուզանդիոն» 5, 7, 13, 17, 18, 19, 24, 60-64, 66-82, 157, 159, 219, 230, 243, 253, 354, 360, 484, 486,
«Բյուրակն» 17
«Բուրաստան մանկանց» 92, 107
«Գարուն» 325
«Գոյամարտ» 376, 469

«Դաշինք» 13, 23, 29, 282-285, 287-292, 294-316, 318, 320, 323, 445, 447, 467, 484,
«Դափնի» 378, 379, 380, 488
«Դեյլի թելեգրաֆ» 398, 454, 465
«Դրոշակ» 152, 156
«Ենի գյուն» («Նոր օր») 361
«Երևակ» 170, 388
«Երկիր» 11, 381-387, 419
«Երկրագունտ» 146, 360
«Երկրի ձայն» 11, 23
«Եփրատ» 104
«Զաման» («Ժամանակ») 361
«Զիկ-զակ» 25
«Զմյուռնահայ տարեցոյցը» 480
«Զուռնա» 25, 361, 362
«Ընտանիք» 360
«Թանին» («Աղմուկ») 30, 53, 74, 78, 244, 254, 278, 307,
«Թասվիր-ի էֆքյար» («Մտքերի արտացոլում») 12, 71, 124, 307, 362, 440
«Թատրոն» 146
«Թարոս» 470
«Թարսուս» 264
«Թաքվիմ-ի վեքայի» («Լրագիր») 9
«Թելեգրաֆոս» 457, 470
«Թեշքիլյաթը մահսուսե»
«Թեվհիթի էֆքյար» («Համեմատություն») 403
«Թերբիյե» («Դաստիարակություն») 357,
«Թերճեմանը էֆքյար» («Կարծիքների թարգման») 108, 240
«Թերճեմանը հազրզաթ» («Ճշմարտության թարգմնւն») 307
«Թունուս» 296
«Ժամանակ» 7, 10, 11, 13, 15, 18, 19, 23, 25, 29, 133, 159, 242-248, 250-270, 391, 413, 486, 488
«Ժողովուրդ» 11, 18, 29, 359
«Ժողովուրդին ձայն» 18, 242, 388, 392, 488,
«Ժողովուրդի ձայնը-Ժամանակ» («Համեմատություն») 488
«Իգնատ աղա» 362-365, 486,
«Իթիտալ» («Չափավորություն») 71
«Իլերի» («Առաջ») 403
«Իրավունք» 365, 366
«Իքդամ» («Առաջադիմություն») 62, 78, 156, 246, 385, 440
«Իֆհամ» («Պարզաբանում») 266, 267
«Լա ռեֆորմ» 311, 466

«Լա ֆյամ» 168
«Լա ֆյամիյլ» 213
«Լեվընդ հերալդ» 213
«Լը թան» 236
«Լիլա» 25
«Լրաբեր» 29
«Լույս» 17, 23, 25, 29, 33, 39, 40, 41, 42, 43, 44, 45, 46, 47, 48, 239
«Լուսաբեր-Արև» 36
«Լուսարձակ» 13
«Լուսին» 29
«Խարազան» 25
«Խելոյ Դավիթ» 359, 360-362, 486
«Խըդմեթ» («Ծառայություն») 72
«Ծաղիկ» 5, 23, 25, 29, 33, 36, 37, 38, 41, 104, 243, 360, 379, 484
«Ծիանան» 50-55, 202, 205, 215
«Կաթողիկե արձագանգ» 25
«Կառափնատ» 23, 25
«Կավոռշ» 14, 23, 25
«Կարմիր աստղ» 422
«Կիկո» 23
«Կոհակ» 23
«Կուրֆեր դ'Իտալիա» 158
«Հայ բժիշկ» 487
«Հայ գրականություն» 23, 320, 322, 323, 327, 329, 330, 332, 334, 335, 336
«Հայ կին» 374, 375, 419, 487
«Հայ միտք» 373, 374
«Հայ պատանի» 371, 372, 373, 487
«Հայ սկաուտ» 366, 367, 368, 369, 370, 338, 487
«Հայաստան» 435
«Հայրենիք» 13, 14, 29, 108, 159, 243, 253, 271-279, 281, 328
«Հայրենիքի քնար» 48, 49,
«Հանրագիտակ» 5, 17, 23, 29, 33, 81-95, 97, 99, 100-107, 484
«Հեռաձայն» 242, 264
«Հյուսիսափայլ» 327
«Հորիզոն» 376
«Հույս» 170
«Հուրուրը ումումիյե» («Հանրային իրավունք») 244, 250
«Ճակատամարտ» 14, 359, 398, 419, 434
«Ճերիտեի շարգիյե» («Արևելյան հանդես») 13, 19, 108, 124, 146, 240, 243, 486
«Մամուլ» 95, 145, 146
«Մանանա» 404
«Մանզումեի էֆքյար» («Կարծիքների շարք») 7, 13, 18, 22, 24, 29,133-140, 142-157, 159-161, 171, 198, 230, 241, 243, 282, 360

«Մասիս» 16, 17, 23, 24, 29, 33, 34, 68, 144, 180-202, 205, 207-209, 211-220, 222-228, 230-239, 241, 243, 328, 360
«Մատեն» 54, 100
«Մարմնամարզ» 23, 337-344, 346-354, 356-358, 367-370,
«Մեթին» («Տեքստ») 156
«Մեհյան» 23, 230
«Մեճմուայը հավատիս» («Լրագիր») 240
«Մեշվերեթ» («Քննարկում») 285
«Միմոս» 104
«Մյունատիի Էրճիաս» («Արզեոսի մունետիկ») 240
«Մոզայիք» 104
«Մոծակ» 25
«Մոտա» 14
«Մտրակ» 152
«Նավասարդ» 230
«Նեջաթ» («Փրկություն») 53, 272
«Նյութ» 29
«Նոր աշխարհ» 13
«Նոր դար» 243
«Նոր կյանք» 359, 360
«Շանթ» 23, 326, 327
«Շառիվառի» 104
«Շավիղ» 365, 388, 486
«Շավիղ-Իգնատ աղա» 365, 486
«Շիրակ» 388
«Ոստան» 23
«Չեզոք» 29
«Պայքար» 29
«Պատրաստ» 370, 371, 488
«Ռեֆորմ» 150
«Ռուսսկոյե սլովո» 307
«Սաբահ» («Առավոտ») 70, 158, 159, 361, 440
«Սասուն» 23, 49, 50
«Սերբեսթ» «Ազատ» 306
«Սերվեթ-ի ֆյունուն» («Մշակութային հարստություն») 130
«Սիոն» 170
«Սկաուտ» 388
«Ստամբուլ» 213
«Սուրհանդակ» 5, 18, 23, 29, 108-121, 123, 124-132, 484
«Վաստակ» 388
«Վարազ» 149
«Վաքըթ» («Ժամանակ») 361, 386
«Վերջին լուր» 11-13, 19, 22, 389-393, 395, 398, 399, 401- 405, 407, 408-416, 418-428, 486, 488
«Տաճար մանկանց» («Մշակութային հարստություն») 25
«Տաճար» 14, 25
«Փունջ» 17, 241, 360

«Քյոյլու» («Գյուղացի») 264 287, 305, 309, 311
«Քնար» 13
«Օրենք» 365, 366, 388, 487
«Օրիենթըլ նյուզ» 401
«Օրվան նիշեր» 380, 381
«Ֆեյզը հյուրրիեթ» («Ազատության գինը»)155
«Ֆոնոկրաֆ» 29
«Ֆորվերթս» 11
«Ֆրու-ֆրու» 25
“Pro Armenia” 323

Ա. Ա. ԽԱՌԱՏՅԱՆ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՄԱՄՈՒԼՆ ԻՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԻՆ (1900–1922)

ALBERT KHARATYAN

THE DECLINE OF THE WESTERN ARMENIAN PRESS

Համակարգչային ձևավորումը՝ Ն. Աղամյանի
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Ստորագրված է տպագրության 07.08.2015 թ.
Տպաքանակը՝ 200 օրինակ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshal Baghramyan ave., 0019, Yerevan
http://www.academhistory.am

ԳԱԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.

Ա I 05494

ԱԼԲԵՐՏ ԱՐՄԵՆԱԿԻ ԽԱՌԱՏՅԱՆ



Ծնվել է 1939 թ. սեպտեմբերի 24-ին, Երևանում, ծառայողի ընտանիքում: 1964 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը և 1964-1966 թթ. աշխատել որպես ուսուցիչ: 1967-1972 թթ. խմբագիր՝ Հայկական Սովետական Հանրագիտարանի խմբագրությունում: 1973-1985 թթ. աշխատել է ՀՀ ԳԱԱ Հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնում, որպես բաժնի վարիչ, իսկ 1985-ից ցօրս՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում, որտեղ 1992-ից սկսած կատարում է Հայ հասարակական մտքի և մամուլի բաժնի վարիչի պարտականությունը: Միաժամանակ, 1986-ից ի վեր՝ ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսի գլխավոր խմբագիր: 1972 թ. ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի (թեման՝ «Զմյուռնիայի հայ մամուլը 1960-ական թթ.»), 1986-ին՝ պատմական գիտությունների դոկտորի (թեման՝ «Հասարակական միտքը Զմյուռնիայի հայ պարբերական մամուլում 1840-1900 թթ.») գիտական աստիճաններ: 2009-ին ստացել է պրոֆեսորի կոչում, 2010-ից՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ: Գիտահետազոտական ուղղությունները՝ հայ հասարակական մտքի և մամուլի պատմություն, Օսմանյան Թուրքիայի հայ գաղթօջախների պատմություն: Գրել է հետևյալ մենագրությունները ու գրքերը.

1. «Արևելյան մամուլ» հանդեսի մատենագիտություն (1871-1909), Ե., 1976:
2. Արևմտահայ հասարակական մտքի և հրապարակախոսության պատմությունից, Ե., 1980:
3. Օսմանյան գրաքննությունը և արևմտահայ մամուլը. Վավերագրական նյութեր և ծանոթագրություններ, Ե., 1984:
4. Արևմտահայ մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում (1857-1908), Ե., 1989:
5. Հասարակական միտքը Զմյուռնիայի հայ մամուլում (1840-1900), Ե., 1995:
6. «Մեղու» հանդեսի մատենագիտություն (1856-1865), Ե., 2003:
7. Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը XV-XVII դդ., Ե., 2007:

Համահեղինակ է ՀՀ ԳԱԱ հրատ. «Հայ գաղթաշխարհի պատմություն» (Կ. Պոլիս, XV-XVII դդ. և Զմյուռնիա, XIV-XX դ.), Ե., 2003, Հայոց պատմություն, հ. II, գիրք II, Ե., 2014, հ. III, գիրք I, Ե., 2010 կոլեկտիվ աշխատությունների: Հրատարակել է ավելի քան 150 հոդված՝ վերոհիշյալ թեմաներով: «Հայ պարբերական մամուլի պատմություն. XVIII-XIX դարեր», հ. 1, Կահիրե, 2007 հրատարակության համահեղինակ է և խմբագիրներից մեկը: